ՀՏԴ 008 + 902/904+800
ԳՄԴ 71+63. 4+80
Գ 602

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝
Ս. Հայրապետյան
Ս. Հարությունյան
Ս. Պետրոսյան
Ֆ. Տեր-Մարտիրոսով

Խմբագրությամբ՝ Ս.Հայրապետյանի

Գ 602 Գիտական աշխատություններ. 3,
Գյումրի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն,
2000, 228 էջ:

Գ $\frac{4400000000}{703(02)\text{-}2001}$ 2001 ԳՄԴ 71+63.4+80

ISBN 5-8080-04 86-1

© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2000

Публикуется по решению Ученого совета Института археологии и этнографии НАН РА

Редакционная коллегия:
С. Айрапетян
С. Арутюнян
С. Петросян
Ф. Тер-Мартиросов

Под редакцией С. Айрапетяна

Published by arrangement of the Scientific Council At the institute of Archeologi and Ethnograpy NAS RA

Editing stuff:
S. Hairapetian
S. Harutiunian
S. Petrossian
F. Ter-Martirossov

Edited by S. Hairapetian

Հրաչյա ՄՄՐՅԱՆ

ՀՅՈՒՍԻՍ- ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՇ ԲՐՈՆԶԻ ԵՎ ԵՐԿԱԹԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՄԵՏԱՂՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Հյուսիս-արևմտյան Հայաստանի ուշ բրոնզի և երկաթի դարաշրջանների մետալագործության ուսումնասիրության առարկա են աշխատանքային գործիքները, որոնք ի տարբերություն զենքի և զարդերի, ավելի քիչ են:

Կենցաղում և արհեստների մեջ կիրառված մետաղյա գործիքների մեծ խումբ են կազմում դանակները՝ տարբեր կիրառական նշանակությամբ: Մեզ հետաքրքրող տարածաշրջանից հայտնաբերված բրոնզե և երկաթե դանակները բաժանվում են երեք տիպի, որոնք էլ իրենց հերթին՝ ենթատիպերի:

1-ին տիպ. *դանակ-ածելիներ.* Այս դանակներն անեն դեպի վեր կլորացող ծայրով աշխատաբերան: Սրանց մեջքը հաստ է, իսկ աշխատաբերանը՝ շատ բարակ և սուր: Կտրվածքում ունեն սեպաձև տեսք: Այս դանակներն ունեն լեզվակ՝ փայտե կամ ոսկրե բռնակի ամրացման համար: Որոշ օրինակների մոտ լեզվակների վրա անցք է արված՝ բռնակն ավելի ամուր ամրացնելու համար: Մեր կողմից ներկայացվող դանակները հայտնաբերվել են Լենինականի Սսի կոմբինատի տարածքից, Քեթիի թիվ 40 դամբարանից: Սրանք առանձնանում են շեղբերի վրա արված երկու անցքերով: Լենինականի դանակի (նկ. 1) լեզվակը հանդիսանում է մեջքի շարունակությունը: Աշխատաբերանը մաշված է: Երկարությունը 9,5 սմ է: Թվագրվում է մ. թ. ա. 2-րդ հազարամյակի վերջով[1]: Քեթիի թիվ 40 դամբարանից հայտնաբերված դանակի լեզվակը ձևավորվել է մեջքի և աշխատաբերանի հավասարաչափ նեղանալու շնորհիվ, փաստորեն լեզվակն անցնում է դանակի կենտրոնով: Դանակի երկարությունը 6 սմ է: Թվագրվում է մ. թ. ա. 10-9-րդ դարերով[2]: Լենինականի և Քեթիի դանակների շեղբերի վրա երկու անցքերի առկայությունը նրանց մոտեցնում է Օշականի մ. թ. ա. 9-8-րդ դարերով թվագրվող թիվ 101 դամբարանի դանակին[3]: Հայաստանի այլ վայրերից նմանօրինակ դանակներ չեն հայտնաբերվել, բայց շատ են դանակ-ածելիները (առանց շեղբերի վրա անցքերի): Հայտնի են Սևանի ավազանից, Խոջալիից, Սյրիվանքից, Օրդուխից, Ջարխեչից, Շուշիից և այլ համաժամանակյա հուշարձաններից[4]: Նմանատիպ դանակներ մինչ այժմ էլ օգտագործում են մսագործները՝ հիմնականում մորթված անասուններին մաշկելու նպատակով: Սա մեզ հնարավորություն է տալիս ենթադրել, որ դանակ-ածելիների այս խումբը, որ շեղբին անցքեր ունի, օգտագործվել է նույն նպատակով:

2-րդ տիպ. *Կեռ դանակներ.* Մ. թ. ա. 1-ին հազարամյակի սկզբից Հայաստանում սկսում է հանդես գալ երկաթե դանակների նոր տիպ: Դրանք ունեն լեզվակ, որից սկսվում է կեռ շեղբը: Վերջիններս հաճախ ունեն մանգաղաձև տեսք: Այս դանակների լեզվակների վրա հաճախ հանդիպում են պահպանված գամերը, որանցով ամրացվել է փայտե կամ ոսկրե բռնակը: Սրանց մեջ հզակի է Կիրովականի թան-զարանում պահվող բրոնզե դանակը (նկ. 2): Սրա երկարությունը 18,5 սմ է, լեզվակինը՝ 3 սմ: Ի տարբերություն նմանատիպ երկաթե դանակների՝ սրա աշխատաբերանը արտաքին կողմից է, ինչպես դանակ-ածելիներինը: Այս դանակը չունի իր զուգահեռները Հայաս-

---

[1] *Հ. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն, Ուշ բրոնզիդարյան դամբարաններն ու ..., աղ. 5 նկ. 8:*

[2] *Л. П е т р о с я н, Раскопки памятников Кети и Воскеаска, стр. 68, таб. 58 рис. 1.*

[3] *С. Е с а я н, А. К а л а н т а р я н, Ошакан, I, Ер.,1988, стр. 98-101, табл. CVI, рис. 3.*

[4] *Ե. Լ ա լ ա յ ա ն, Նշվ. աշխ., նկ. 111,248: К. Кушнарева, Ходжалийский могильник, ՊԲՀ, 1970, 3, նկ. 8: Հ. Մարտիրոսյան, Ուշ բրոնզիդարյան դամբարաններն ու .... աղ. 5:*

տանում և Անդրկովկասում: Նմանատիպ երկաթե դանակները, ըստ կառուցվածքային առանձնահատկությունների, բաժանվում են երեք տարբերակի.

ա) դանակներ, որոնց տափակ լեզվակների վրա պահպանվել են գամերը՝ փայտե կամ ոսկրե բռնակի ամրացման համար: Նմանօրինակ դանակներ հայտնաբերվել են Ախուրյանի շրջանի Բայանդուր գյուղից (ՇԵԹ. ինվ. 1772), (նկ. 4), Քեթիի թիվ 44 և 45 դամբարաններից, Կիրովականի Դիմաց թաղամասից, Մակարաշենից: Բայանդուրից գտնված դանակը բացառիկ է նրանով. որ կոթին դուրգամված ոսկորե բռնակը պահպանվել է ամբողջությամբ: Դանակը խիստ քայքայված է, պահպանված երկու հատվածների երկարությունն է 19,5 սմ+10,5 սմ: Բռնակի երկարությունը՝ 10 սմ է: Կիրովականի դանակը թվագրվում է մ.թ.ա. 9-8-րդ դարերով[5], իսկ Մակարաշենի և Քեթիի դանակները թվագրվում են մ.թ.ա. 7-6-րդ դարերով[6]: Այս տարբերակի դանակների իրենց զուգահեռներն ունեն Լոռի-Բերդում, Խրատանոցում, Գոլովինոյում, Արգիշտիխինիլիում, Բերդում[7]: Հայտնաբերվել են նաև Կոլխիդայից, Մինգեչաուրից[8]:

բ) դանակներ, որոնք ունեն գլանաձև կոթ: Վերջինս, հիմքի մասում թեթևակի լայնանալով, ձևավորում է յուրատեսակ դաստապան՝ միջանցիկ անցքով: Նման դանակ հայտնի է միայն Շիրակավանի թիվ 5 դամբարանից և թվագրվում է մ.թ.ա. 7-6-րդ դդ.[9]:

գ) դանակներ, որոնք ունեն շրջանակավոր կոթառ: Այս տարբերակին պատկանում են Շիրակավանից հայտնաբերված երկու դանակները: Ի դեպ, Շիրակավանի դանակների շրջանակավոր կոթառի մեջ պահպանվել են փոքրիկ մեխերով ամրացված փայտե ներդիրների մնացորդները: Սրանք իրենց հերթին բաժանվում են երկու խմբի. առաջին խմբի դանակները պատրաստված են երկաթի ամբողջական կտորից, իսկ երկրորդ խմբի դանակի շեղբը պատրաստվել է առանձին և տեղադրվել է կոթի հիմքում արված երկժանու ձևի ճեղքվածքում : Այս դանակը ևս եզակի է: Այս տարբերակին պատկանող դանակներ հայտնաբերվել են Վանից, Կարմիր-Բլուրից, Սասունիկի թիվ 17, Նորադուզի թիվ 18 դամբարաններից և թվագրվում են մ.թ.ա. 8-7-րդ դդ.[10], նաև Վրաստանի Ռկինիս Կալո հնավայրից և դարձյալ թվագրվում է մ. թ. ա. 8-7-րդ դդ.[11]:

3-րդ տիպ. *Սրածայր դանակներ.* Սրանք մեկ բրոնզե և երկաթե այն դանակներն են, որոնք ունեն հաստ մեջք և մեկ սայրանի աշխատաբերան, նեղանում են դեպի սայրերը և կտրվածքում սեպաձև են: Ունեն կարճ լեզվակներ՝ փայտե կամ ոսկրե կոթստի ամրացման համար: Նման դանակներ հայտնի են Լենինականի Մսի կոմբինատի տարածքից (նկարներ 5, 6, 7), Ոսկեհասկի թիվ 4 և 5, Քեթիից և Արթիկի թիվ 208,217, 417, 431, 631 դամբարաններից:

Լենինականի դանակը (ՇԵԹ, ինվ. 2128) հայտնաբերվել է պատահականորեն: Այն բրոնզից է, ունի մաշված աշխատաբերան, իսկ ծայրը կոտրված է: Երկարությունը 11,5 սմ է, շեղբինը՝ 10 սմ, իսկ լայնությունը՝ լեզվակի մոտ 2 սմ, ծայրի մոտ՝ 1,5 սմ: Այս դանակըս քիչ մոտ է Բակուրայայից հայտնաբերված դանակը[12]:

---

[5] *А. М а р т и р о с я н, Армения в эпоху бронзы и раннего железа, стр. 213, таб. 21,рис. I.*

[6] *А. М а р т и р о с я н, նշված աշխատություն, էջ 281; Л. Петросян, նշվ.աշխ., էջ 83:*

[7] *С. Д е н е д ж я н, Лори-Берд, 1, Ер.,1981, стр. 62, табл. 23, рис. 3, 5;Б. Пиотровский, Археология Закавказья, Л., 1949, стр. 64; А. Мартиросян, Раскопки в Головино, Ер., 1954, табл. 3; А. Мнацаканян, О раскопках у села Головино, КСИИМК, 1952, стр. 67, рис. 14; С. Есаян, Могильники раннеармянского времени в поселке Берд Шамшадинского района; Պատմաբանասիրական հանդես, 1969, 4, աղ. 2, նկ. 1-3:*

[8] *Т. М и к е л а д з е, Д. Х а х у т а й ш в и л и, Полевые археологические исследования в 1979г., Тбилиси, 1982, табл. LXIII, рис. 3; О. Гамбашидзе, К. Квижинадзе, Полевые археологические исследования в 1979г., табл. XXXIX, рис. 106-107; С. Казиев, Археологические раскопки в Мингечауре, МКА, т. 1, Баку, 1949, стр. 15.*

[9] *Օ. Խ ն կ ի կ յ ա ն, Շիրակավանի մ. թ. ա. 7-6-րդ դդ. դամբարանները, ՀՀ ԳԱԱ, ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, Գյումրի, 1999, 2, էջ 25:*

[10] *Б. П и о т р о в с к и й, История и культура Урарту, Ер., 1944, стр. 83-85, рис. 47.*

[11] *Л. К о в а н д з е, Археологические памятники Иверского ущелья II, Могильник Ркинис Кало Тбилиси 1978, стр. 71-73, табл. 11, рис. 20, табл. 21, рис. 15.*

[12] *Հ. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն, նշվ. աշխ., աղ. 5, նկ. 12; Т. Хачатрян, Древняя культура..., стр. 182-183.*

Լենինականի երկրորդ դանակը (ՇԵԹ, ինվ. 2128) երկաթից է, հայտնաբերվել է նույն տարածքից: Պահպանված մասի վրա կա կոթառի ամրացման համար նախատեսված դուրգամը: Սրա երկարությունը 11,5 սմ է, լայնությունը՝ բռնակի մոտ 1,5 սմ, իսկ ծայրի մոտ՝ 1,2 սմ: Երրորդ դանակը ևս երկաթից է (ՇԵԹ, ինվ. 1706) գտնվել է Անի կոմբինատի տարածքից պատահականորեն: Դանակը խիստ քայքայված է և թերի: Պահպանված մասի երկարությունը 7,5 սմ է, շեղբի լայնությունը՝ 1,5 սմ: Արթիկի և Ոսկեհասկի դանակները թվագրվում են մ.թ.ա. 9-8-րդ դդ., իսկ Քեթիի թիվ 39 դամբարանինը՝ մ.թ.ա. 10-9-րդ դդ.[13]: Այս տիպին բնորոշ դանակներ հայտնաբերվել են Մալխանից, Ռեդկին-Լագերից, Նորադուզից, Այրիվանքից, Օշականից (թվագրվում են մ. թ. ա. 10-8-րդ դդ.)[14], նաև Կոլխիդայից, Սցխետիից[15]:

Ներկայացվող գործիքների մյուս խումբը խոսում է մեզ հետաքրքրող տարածաշրջանում ատաղձագործության զարգացման մասին: Այս արհեստի բնագավառում օգտագործվող բազմաթիվ գործիքներ են հայտնաբերվել: Բացառիկ է Արթիկի թիվ 90 դամբարանը, ուր հայտնաբերվել են սակր, տապար, սղոց և պոչուկավոր քառանիստ դուրեր: Սակրերի մասին մենք խոսել ենք զենքի հետ կապված, իսկ մյուս գործիքները կներկայացնենք այլ հուշարձաններից հայտնաբերված գտածոների հետ համապատասխան խմբերում:

Հայտնաբերվել են բազմաթիվ տապարներ կամ տապար-կացիններ: Սրանք, իրենց կառուցվածքային առանձնահատկություններով բաժանել ենք երկու տիպի. *1-ին տիպին* պատկանում են այն տապարները, որոնք ունեն լայն, գրեթե կիսաշրջանաձև աշխատաբերան, բավական նեղ և գոգավոր իրան: Իրանը, վեր բարձրանալով, աստիճանաբար ծեռք է բերում որոշ կլորություն և, ձևավորելով ուղիղ կամ կլորավուն ուսիկներ, միանում է կոթին, որին էլ ամրացվել է ռիայտե բռնակ: Մեզ հետաքրքրող տարածաշրջանում նմանատիպ տապարներ հայտնաբերվել են Արթիկի թիվ 90 դամբարանից, որը թվագրվում է մ. թ. ա. 14-13-րդ դարերով[16], Ախուրյանի շրջանի Այնիկ գյուղից և թվագրվում է մ. թ. ա. 2-րդ հազարամյակի վերջով[17], Լենինականից, որը թվագրվում է մ. թ. ա. 12-11-րդ դարերով[18]: Լենինականի առաջին տապարին շատ նման մի տապար՝ 1934 թվականին կրկին Լենինականից գտնված, պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում (ինվ. 1177/33), որը Հ. Մարտիրոսյանի ենթադրությամբ նույն կաղապարով է ձուլված[19]: Վարդաքարից հայտնաբերվածը թվագրվում է մ.թ.ա. 2-1-ին հազարամյակով[20], իսկ Կիրովականինը՝ մ.թ.ա. 11-10-րդ դդ.[21]: Այս տիպի տապարներ հայտնաբերվել են Լճաշենից Սխթալայից, Լցենից, Կվիշարիից, Քվեմո-Սասիրեթիից, Սուրմուշից, Օբշկվիտիից[22]:

2-րդ տիպին պատկանում են այն տապարները, որոնք ունեն սեգմենտաձև աշխատաբերան, բավական նեղ և գոգավոր իրան, որը վեր բարձրանալով՝ ձևավորում է ուղիղ, սեղանաձև ուսիկներ և միանում է կոթին: Սրա կոթն ունի քառակուսի

---

[13] Т. Х а ч а т р я н, Древняя культура..., стр. 237: А. Петросян, Раскопки памятников Кети и Воскеаска, стр. 75-76; 68.

[14] А. М а р т и р о с я н, Армения в эпоху бронзы и раннего железа, стр. 196: А. Мнацаканян, Археологические раскопки на осушенной территории озера Севан, СА, вып. XXIII, стр. 195: Т. Хачатрян, Орудие труда..., ЭП. 53.

[15] Т. М и к е л а д з е, Полевые археологические исследования в 1980г, Тбилиси 1982, стр. 32, табл. XLVIII, рис. 1: О. Гамбашидзе, К. Квижинадзе, Полевые археологические исследования в 1979г., стр. 60, табл. XXXVIII, рис. 117.

[16] Т. Х а ч а т р я н, Древняя культура..., стр.182-183.

[17] Հ. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն, նշվ. աշխ., աղ. 11, նկ. 14:

[18] А. М а р т и р о с я н, Армения в эпоху бронзы и раннего железа, стр. 122-125.

[19] А. М а р т и р о с я н, նշվ. աշխ., էջ 123:

[20] Т. Х а ч а т р я н, Комплекс бронзовых предметов из селения Вардакар, стр. 69.

[21] А. М а р т и р о с я н, նշվ. աշխ., էջ 143:

[22] А. М н а ц а к а н я н, Раскопки курганов на побережье озера Севан, СА, 1957,2, стр. 185: А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 116; Հ. Մարտիրոսյան, նշվ. աշխ., աղ. 2, նկ. 19; Г. Ниорадзе, Археологические находки в селе Квишари, СА, вып. XI, стр. 189. О. Джапаридзе, Бронзовые топоры Западной Грузии, стр. 286-287.

պահունակ: Այս տիպի տապար, ըստ մեր տվյալների, հայտնաբերվել է միայն Կիրովականի Դիմաց թաղամասից և թվագրվում է մ.թ. ա. 11-10-րդ դարերով[23]:

Տապարների գործառական նշանակության հետ կապված՝ կան բազմաթիվ կարծիքներ: Այսպես՝ Թ. Խաչատրյանը տապարները դիտարկում է որպես աշխատանքային գործիքներ՝ կիրառված կաշեգործության մեջ[24]. Գ. Արեշյանը, հիմք ընդունելով Արթիկի «ատաղձագործի» թիվ 90 դամբարանի նյութերը, գտնում է, որ տապարները (նա անվանում է կացնիկ-ուրագ) ոչ այլ ինչ են, եթե ոչ ատաղձագործական գործիք, և որ Արթիկի վերահիշյալ տապարը ծուլվել է միակտոր կաղապարի մեջ[25]: Թ. Խաչատրյանի առաջ քաշած կարծիքը, որ տապարները եղել են կաշեգործության մեջ կիրառվող գործիքներ, չի բացառվում: Դրա խոսուն վկան է Եգիպտոսի 18-րդ դինաստիայի ժամանակաշրջանի հարթաքանդակը, որի վրա պատկերված կաշեգործական արհեստանոցի աշխատանքային գործիքների շարքում կա նման տապար[26]: Իսկ Եգիպտոսի Ռեկմարա դամբարանի ռելիեֆի վրա պատկերված կաշեգործների ձեռքին կա տապարին շատ նման գործիք: Անտիկ Հռոմում այսօրինակ տապարները օգտագործել են կաշվի հարդարման համար[27]: Շատ հետաքրքիր է Կերչից գտնված տապարը, որի վրա պատկերված է կոտոշավոր սափրագված կենդանի[28]: Բացի այդ Գ. Նիորաձեն, պնդելով տապարների կաշեգործական գործիք լինելու փաստը, նշում է, որ դրանք մինչև 20-րդ դ. քառասնական թթ. Վրաստանի մի շարք շրջաններում ծառայել են նույն նպատակին[29]: Հայաստանում տապարի՝ կաշեգործական գործիք լինելու հանգամանքը մենք չենք կարող պնդել, քանզի չկան լրացուցիչ փաստարկներ: Հակված ենք այն կարծիքին, որ Հայաստանում տապարները օգտագործվել են հիմնականում իբրև ատաղձագործական գործիք: Դա է փաստում Արթիկի թիվ 90 դամբարանը, որտեղ ի թիվս այլ գործիքների (դուրեր, սղոց, սակր) հայտնաբերվել է նաև տապարը:

Ատաղձագործության բնագավառում լայն տարածում են ունեցել դուրերը: Մեզ հետաքրքրող տարածաշրջանից հայտնաբերվել է 11 դուր, որոնք իրենց ձևերից ելնելով՝ բաժանել ենք երեք տիպի.

1-ին տիպը կազմում են քառանիստ պոչուկավոր դուրերը, որոնք ունեն նեղ, լայն կամ սուր աշխատաբերան և կարճ պոչուկ՝ բռնակի ամրացման համար: Հայտնաբերվել են Արթիկի թիվ 3, 90 և 578 դամբարաններից: Սրանք իրենց հերթին բաժանվում են տարբերակների.

Ա տարբերակին պատկանում է Արթիկի թիվ 3 դամբարանից հայտնաբերված դուրը: Այն բավական մեծ է՝ 28 սմ երկարությամբ: Պոչուկը կարճ է և քառանիստ, իսկ աշխատաբերանը փոքր-ինչ լայնանում է՝ ստանալով կիսակլոր տեսք: Ունի իր զուգահեռները Հայաստանում և Անդրկովկասում:

Բ տարբերակին պատկանում են Արթիկի թիվ 90 և թիվ 578 դամբարաններից հայտնաբերված դուրերը: Դրանք վերը նկարագրվածի համեմատ փոքր չափերի են և տարբերվում են բրգաձև ավելի կարճ պոչուկով և ավելի նեղ աշխատաբերանով: Թիվ 90 դամբարանի գտածոները կտրվածքում գրեթե քառակուսի են:

Գ տարբերակին պատկանում է Արթիկի թիվ 90 դամբարանի դուրը, որը Բ տարբերակի դուրերից տարբերվում է սուր աշխատաբերանով:

---

23 *А. Мартиросян, նշվ. աշխ., էջ 144:*

24 *Т. Хачатрян, Комплекс бронзовых предметов из селения Вардакар, стр. 58.*

25 *Г. Арешян, Орудие труда Артикского могильника; ՊԲՀ, 1970, 3, էջ 255:*

26 *И. Лирье, К. Ляпунов, М. Матье, Б. Пиотровский, Н. Флинтер, Очерки по истории техники древнего Востока, Москва-Ленинград, 1940, стр. 218, рис. 104.*

27 *Н. Трубникова, К вопросу о назначении "кобанских сечек", КСИИМК, вып. 18, 1947, стр. 49-53.*

28 *Б. Куфтин, Урартский "колумбарий" у подошвы Арарата и куро-аракский энеолит, Вестник гос. музея Грузии XIII- В, Тбилиси 1944, стр. 30.*

29 *Г. Ниорадзе, Археологические находки в селе Квишари, стр. 189-190.*

Վերոհիշյալ բոլոր գանձերն էլ թվագրվում են մ. թ. ա. 14-13-րդ դարերով, միայն թիվ 578 դամբարանի դուրն է, որ թվագրվում է 12-11-րդ դարերով[30]:

Դուրերն, իրենց աշխատաբերանների ձևերից ելնելով, անեցել են տարբեր գործառական նշանակություն: Հ. Մարտիրոսյանը գանում է, որ այս դուրերը հանդես են եկել էնեոլիթյան և միջին բրոնզեդարյան քառանիստ բիզերի տիպից[31]: Անդրկովկասում այս տիպի դուրերին նմանվում են Մինգեչաուրի դուրերը, որոնք գանվել են աշ բրոնզեդարյան նյութերի հետ[32]:Սրանց մոտ են Սաչխերիի ավելի փոք շրջանի օրինակները[33]: Նմանօրինակ դուրեր գանվել են Բիթլուսից, Ալիշարից ու դրանք թվագրվել են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսով[34]: Նշված դուրերին շատ մոտ է Հառիճի թիվ 78 դամբարանի գտածոն, որը թվագրվում է մ.թ.ա. 17-16-րդ դդ[35]: Սա հնարավորություն է տալիս պնդելու, որ Շիրակը եղել է զարգացած տաղձագործության շրջան, ուր նմանատիպ գործերը կան դեռևս միջին բրոնզիդարում:

2-րդ տիպը կազմում են այն դուրերը, որոնք ունեն խաղովակաձև կոթառ՝ նախատեսված բռնակի ամրացման համար, լայն կամ նեղ աշխատաբերան: Սրանք բաժանվում են հետևյալ տարբերակների.

Ա տարբերակին պատկանող դուրերն իրենցից ներկայացնում են մի ամբողջական խողովակ, որոնք կոթառում լայնանում են, իսկ ներքևում՝ նեղանում՝ վերածվելով աշխատաբերանի: Նմանօրինակ դուրեր հայտնաբերվել են Կիրովականի Դիմաց թաղամասից (ԿԵԹ, հնվ. 229/4)՝ և Վարդաքարից: Ի տարբերություն Կիրովականից գտնված դուրի, Վարդաքարինը ավելի նուրբ է և փոքր, նեղ աշխատաբերանով: Այս փաստը հնարավորություն է տալիս մեզ ենթադրելու, որ Վարդաքարի դուրն օգտագործվել է ավելի նուրբ գործերի համար: Այն թվագրվում է մ. թ. ա. 11-10-րդ դդ.[36]: Կիրովականի դուրի երկարությունը 13 սմ է, իսկ աշխատաբերանի երկարությունը՝ 1,6 սմ:

Բ տարբերակին պատկանում են այն դուրերը, որոնք ունեն վերը նշված տարբերակին բնորոշ գծերը, բայց տարբերվում են նրանով, որ աշխատաբերանի մոտ կտրվածքում քառանկյուն են: Հայտնաբերվել են Կիրովականից, Ոսկեհասկից և Մարմաշենից (նկարներ 8,9): Կիրովականի դուրը թվագրվում է մ. թ. ա. 11-10-րդ դդ.[37]: Ոսկեհասկից հայտնաբերված դուրը (ՇԵԹ, հնվ. 1742) ունի 10 սմ երկարություն, աշխատաբերանի լայնությունը 1 սմ է: Մարմաշենից գտնվածը (ՇԵԹ, հնվ. 2345) ունի 8,5 սմ երկարություն, աշխատաբերանի լայնությունը 0,9 մմ է: Նմանատիպ դուրեր հայտնաբերվել են Լճաշենից[38], Կվիշարիից[39], Սուրմուշից, Օրչկվիաիից[40]:

3-րդ տիպին պատկանում է Կիրովականի Դիմաց թաղամասից հայտնաբերված ինքնատիպ դուրը, որը չունի իր զուգահեռները ոչ Հայաստանում և ոչ էլ Անդրկովկասում: Այն թվագրվում է մ. թ. ա. 2-րդ հազարամյակի վերջով[41]: Այն իրենից ներկայացնում է վերևում լայնացող մի խողովակ: Վերջինս վերևի մասում լրացված է պինդ գանգվածով: Փոքր անցքի մեջ հագցվում է հարթ սնկաձև գլխիկը: Կոթառն ունի անցք, որը ծառայում է գլխիկը խողովակի վրա ավելի ամուր ամրացնելու համար: Գլխիկի վրա երևում են հարվածի հետքերը: Գլխիկը աշխատանքի ընթացքում մաշվելուց

---

[30] *Т. Х а ч а т р я н, Материальная культура древнего Артика, Ер., 1963, стр. 63-64; Նույնի Древняя культура..., էջ 208:*

[31] *А. М а р т и р о с я н, նշվ. աշխ., էջ 108:*

[32] *Г. А с л а н о в, Р. В а н д о в, Г. И о н е; նշվ. աշխ., էջ 77, նկ. 64:*

[33] *Б. Куфтин, Археологические раскопки в Триалети, стр. 13.*

[34] *F. S c h a e f f e r, Stratigraphie Comparee et Chronologie de l'Asie occdentale, London 1948, page 59-60; 323-324.*

[35] *Т. Х а ч а т р я н, Древняя культура...; стр.214.*

[36] *Т. Х а ч а т р я н, Տեղեկագիր, ՀՍՍՌ, ԳԱ 1961, 3,էջ 59-60:*

[37] *А. М а р т и р о с я н ,նշվ. աշխ., էջ 144:*

[38] *А. М а р т и р о с я н, նշվ. աշխ., աղ. 9 նկ.4:*

[39] *Г. Н и о р а д з е, СА, вып. XI, стр. 189.*

[40] *О. Д ж а п а р и д з е, Бронзовые топоры Западной Грузии, СА, вып. XVIII, стр. 286, 297.*

[41] *Т. Х а ч а т р я н, Աշխատություններ, ՀՊՊԾ, 1955, Հ 5, էջ 247-248:*

հետո, հավտնաբար փոխվել է: Առաջացած անցքի մեջ ըստ ամենայնի անցկացրել են սյահանջված չափի և ձևի ծայրապիրներ:

Ատաղձագործության զարգացումն են փաստում նաև Արթիկի (թիվ 90) ատաղձագործի դամբարանից և Լենինականի մսի կոմբինատի տարածքից գտնված սղոցները, որոնք ևս նախատեսված են եղել նուրբ աշխատանքներ կատարելու համար:

Սրանք բաժանվում են երկու տեսակի.

Ա տարբերակին պատկանում է Արթիկի սղոցը: Այն պատրաստված է սառը կռփման միջոցով: Սղոցն ունի լեզվակ, որի վրա անցք կա բռնակի ամրացման համար: Սրա երկու կողմերում էլ կտրն սուր, մանր ատամներ, որոնք խիստ մաշված են, իսկ այդ փաստը վկայում է նրա տևական օգտագործման մասին: Սղոցի երկարությունը 24 սմ է, լայնությունը՝ 6,5 սմ: Սղոցը թվագրվում է մ. թ. ա. 14-13-րդ դարերով[42]: Նույն տարբերակին է պատկանում նաև Լենինականի սղոցը (ՇԵԹ, ինվ. 384, նկ 3), որի ատամները միայն մի կողմում են: Սա ևս ունի լեզվակ՝ անցքով, փայտե բռնակի համար: Երկարությունը 28 սմ է, իսկ լայնությունը կոթառի մոտ 5 սմ, ներքևում՝ 2,5 սմ: Երկու սղոցներն էլ եզակի են ոչ միայն Հայաստանում, այլև Անդրկովկասում: Ըստ իս՝ այս սղոցները սկզբում եղել են դաշույններ, հետագայում շեղբերի վրա հավանաբար հարվածների միջոցով մանր ատամներ են արել որպես սղոց գործածելու նպատակով:

Իր ձևով և նշանակությամբ եզակի և յուրահատուկ է Արթիկի թիվ 578 դամբարանից հայտնաբերված տաշուրագը (վերը նշված ղուրի հետ), որը ևս օգտագործվել է ատաղձագործության մեջ: Այն շատ նուրբ է, պատրաստված է բրոնզե թիթեղից, ունի սեգմենտաձև աշխատանքերան: Իր ընդհանուր տեսքով այն նման է սեղանի: Թվագրվում է մ.թ.ա. 12-11-րդ դարերով[43]: Հավանաբար այս գործիքն օգտագործել են նախշազարդման, դրվագազարդման կամ ւիորագրման համար: Ցավոք, մեզ հետաքրքրող տարածաշրջանից չկա այս փաստը հավաստող փայտից պատրաստված այնպիսի գաածոներ, ինչպիսիք են Ադիամանի թիվ 17 կուրգանից հայտնաբերված զելեցիկ զարդանախշված սայլակառքը[44]: Սրա զարդանախշերը ռելիեֆային են, հիմնականում՝ երկրաչափական բնույթի: Կամ Լճաշենի տոեմային առաջնորդների հարուստ կուրգաններից հայտնաբերված սայլակառքերը, մահվան փայտյա մահիճները և այլ իրեր, որոնց պատրաստման ժամանակ անպատճառ կիրառվել են վերը նշված գործիքները:

Աշխատանքային գործիքների ուսումնասիրության առումով հետաքրքիր են դերձակության և կաշեգործության մեջ օգտագործված բիզերը: Հայտնաբերվել են միայն Արթիկի դամբարանադաշտից (թիվ 17,288,474, 504,541,589,633): Դրանք բոլորն էլ պոչուկավոր, քառանիստ և սրածայր են: Թիվ 17 դամբարանից հայտնաբերվել է միայն մեկ ամբողջական օրինակ, որն ունի 7 սմ երկարություն: Արթիկի բոլոր բիզերն էլ թվագրվում են մ.թ.ա. 12-11-րդ դարերով[45]: Այս գործիքները մեծամասամբ օգտագործվել են կաշի, մորթի, կոպիտ բրդյա կտորներ ծակելու: Բ. Տեխովը հավանական է համարում սրանց միջոցով ոսկրե իրերի վրա զարդեր անելը[46]: Հիշյալ ժամանակաշրջանով թվագրվող և նույնօրինակ բիզեր Հայաստանում, ըստ մեր ունեցած տվյալների, չկա: Արթիկի բիզերին նման հայտնաբերվել է Թլիի թիվ 2; 48 դամբարաններից, Աթիրվազյան կրամլեխներից, որ թվագրվում են մ. թ. ա. 14-13-րդ դարերով[47]: Ի դեպ քառանիստ բրոնզե բիզեր, որոնք իրենց տեսքով և ձևով շատ նման են Արթիկի օրինակներին, հայտնի են դեռևս միջին բրոնզի դարաշրջանում՝ Կիզիլ-Վանքից[48], Չեչեն-Ինգուշեթիայից, Դաղստանից[49]:

---

[42] Т. Х а ч а т р я н, Культура древнего Артика, стр.64.

[43] .Т. Х а ч а т р я н, Древняя культура..., стр.208.

[44] Ե. Լ ա լ ա յ ա ն, նշվ. աշխ., էջ 194:

[45] .Т. Х а ч а т р я н, Артикский некрополь, каталог, 1979, 121, 233, 321, 334, 349, 375,399.

[46] Б.Т е х о в, նշվ. աշխ., стр. 34.

[47] Б. Т е х о в, Очерки древней истории и археологии Юго-Осетии, Тбилиси 1971, стр. 137, 145, նշվ. աշխ., рис. 36/1,2:

[48] А. М.а р т и р о с я н, Армения в эпоху...., стр. 51, 55, рис. 20ш

[49] Е. К р у п н о в, Археологические работы в Грозненской области в 1946г., КСИИМК, вып. 20, М., 1948, стр. 67-73; В. Котович, Верхнегунибское поселение-

Դերձակության և կաշեգործության մեջ լայնորեն կիրառվել են ասեղները (նկարներ 11-15): Դրանք պատրաստված են բրոնզալարից, հատվածքում կլոր են, ունեն սուր ծայր, իսկ վերևում աննշան հաստացող հատվածում կա օվալաձև անցք՝ թելն անցկացնելու համար: Մեզ հետաքրքրող տարածաշրջանից ասեղներ հայտնաբերվել են Արթիկի դամբարանադաշտից, Ոսկեհասկի թիվ 6 դամբարանից, Շիրակավանից, Հացիկի դամբարանից: Սրանք բաժանվում են հետևյալ տարբերակների.

ա) ասեղներ, որոնք պատրաստված են բարակ, կտրվածքում կլորավուն բրոնզալարից: Սրանք ունեն սուր ծայր, իսկ վերևի մասում աննշան հաստանում են և ունեն օվալաձև անցք թելի անցկացման համար: Նմանօրինակ ասեղներ հայտնաբերվել են Արթիկի թիվ 334; 572, 206 դամբարաններից, Շիրակավանից և Հացիկի դամբարանից (նկարներ 14,15): Թիվ 572 և 334 դամբարանների գտածոները թվագրվում են մ. թ. ա. 12-11-րդ դարերով, թիվ 206 դամբարանինը՝ մ. թ. ա. 10-9-րդ դդ.[50],Շիրակավանը գտածոն թվագրվում է մ. թ. ա. 12-11-րդ դարերով, իսկ Հացիկինը՝ մ. թ. ա. 8-7-րդ դդ.[51]:

բ) ասեղներ, որոնք Ա տարբերակի օրինակներից տարբերվում են նրանով, որ սրանց վերևի մասը գնդաձև է: Հայտնաբերվել են Ոսկեհասկի թիվ 6 դամբարանից և թվագրվում են մ.թ.ա. 9-8-րդ դդ.[52] (նկ. 13):

գ) ասեղներ, որոնց անցքը ոչ թե վերին հատվածում՝ ծայրի մոտ է, այլև վերին ծայրից բավական ներքև (նկ. 12): Նման ասեղներ հայտնաբերվել են Արթիկի թիվ 416; 423; 446; 557 և 610 դամբարաններից և բոլորն էլ թվագրվում են մ. թ. ա. 12-11-րդ դդ[53]: Վերը ներկայացված ասեղներից հայտնաբերվել են նաև Էլառի, Լոռի-Բերդի, Օշականի ուշ բրոնզի և վաղ երկաթի դամբարաններից, Պակերից և այլ հուշարձաններից[54]: Հայտ-նաբերվել են նաև Թրիից, Մցխետայից, Մինգեչաուրից, Ուզերլիկ-Թեփեից[55]:

Մետաղագործության բնագավառում օգտագործված աշխատանքային ստրգիքները են Կիրովականի Դիմաց թաղամասից հայտնաբերված երկու մուրճերը[56], որոնք Թ. Խաչատրյանի կողմից մանրամասն չեն ներկայացվել (ԿԵԹ, ինվ. 228/7; 8): Հայտնաբերված գործիքները բաժանվում են երկու տիպի.

1-ին տիպը կազմող մուրճիկները ունեն համեմատաբար մեծ չափեր (12-16 սմ) և բաժանվում են երկու տարբերակի.

ա) մուրճիկներ, որոնց մի կողմը կլորացված է, իսկ մյուսը՝ սրածայր: Իրանի մեջտեղում կա ուղղանկյուն անցք՝ նախատեսված բռնակի ամրացման համար: Կիրովականի մուրճիկը կոտրված է և քայքայված, իսկ սուր ծայրը շատ է աշխատած: Երկարությունը 12,5 սմ է, ուղղանկյունի անցքի չափերն են 3 սմ 2 մմ x 1 սմ 2 մմ: Այս տարբերակին պատկանող մուրճիկներ շատ են Էջմիածնի թանգարանում[57]:

բ) մուրճիկներ, որոնք վերը նշված տարբերակի նման ունեն ուղղանկյուն անցք: Վերջինիս վրա կան երկու միջանցիկ անցքեր, որոնց նպատակն է փայտե բռնակների

памятник эпохи бронзы Горного Дагестана, Махачкала 1965, стр. 122-123, рис. 48, 1-3.

[50] *Т. Х а ч а т р я н, Артикский некрополь, каталог, стр.14-17.*

[51] *Հ. Մ ի ր յ ա ն, ՇԵԹ-ում պահվող ուշբրոնզիդարյան պատահական գտածոները, Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված հանրապետական երկրորդ գիտաժողով, Գյումրի, 1996, էջ 9: Հ. Խաչատրյան, Լ. Եգանյան, Հ. Միրյան, Շիրակի նորահայտ հուշարձաններ, ՇՊՄԺ երրորդ հանրապետական գիտաժողովի թեզիսներ, Գյումրի, 1998:*

[52] *Л. П е т р о с я н, նշվ. աշխ., էջ 76, տբ. 68, նկ. 6-8:*

[53] *Т. Х а ч а т р я н, Артикский некрополь, каталог, стр.15.*

[54] *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն, Էլառ-Դարանի, Երևան 1979, տբ. 20, նկ. 8, С. Деведжян, նշվ. աշխ., տբ. XIX, նկ. 3, տբ. XXV, նկ. 2: С. Есаян, А. Калантарян, նշվ. աշխ., տբ. LXXII, նկ. 11, LXXIX, նկ. 9, տբ. LXXXII, նկ. 5, 7, տբ. XCIV, նկ. 2:*

[55] *Б. Т е х о в, նշվ. աշխ., նկ. 91/4: Т. Чубинишвили, Древнейшие археологические памятники Мцхета, Тбилиси, 1957, на грузинском языке, стр. 68, 183;Г. Асланов, Р. Вандов, Г. Ионе, Древний Мингечаур, стр. 77, рис. 64; К. Кушнарева, Поселение эпохи бронзы на холме Узерлик-Тепе около Агдама, МИА, 67, М.-Л. 1959, рис. 21.*

[56] *Т. Х а ч а т р я н, , նշվ. աշխ.,ՀՊՊԹ, 1955, Հ 5, էջ 252-254, նկ. 60/3, 61/3:*

[57] *Т. Х а ч а т р я н, նշվ. աշխ., նկ. 60:*

ավելի ամար ամրացամբ: Այս մուրճիկներն ունեն աղեղի անցք:Կիրովականի մարճիկի աղեղի երկարությունը 16 սմ է, կնքառի երկարությունը՝ 3 սմ 6 մմ (աղ. 5 նկ. 13): Նմանօրինակ մուրճիկներ հայտնաբերվել են Նոր Բայազետից[58]:

2-րդ տիպը կազմող մուրճիկները ունեն շատ փոքր չափեր (3,5 սմ): Սրանք իրանի վրա ունեն ուղղանկյուն կամ օվալաձև անցք, որոնց վրա բացված են մեկական միջանցիկ անցքեր՝ փայտե բռնակն ավելի ամուր պահելու համար: Սրանցից առաջինը (աղ. 5 նկ. 14, ԿԵԹ, ինվ. 228/8) ունի 3,5 սմ երկարություն: Սրա անցքը ուղղանկյունաձև է հետևյալ չափերով. 7 մմ x 4 մմ: Երկրորդ մուրճիկի երկարությունը 5 սմ է, իսկ օվալաձև անցքի երկարությանը՝ 1 սմ 7 մմ: Նմանօրինակ մուրճիկներ հայտնի են Էջմիածնի թանգարանից[59]: Այս մուրճիկների կիրառական նշանակության հետ կապված՝ համակարծիք ենք Թ. Խաչատրյանի այն մտքի հետ, որ դրանք կիրառվել են ոսկերչության բնագավառում: Ավելացնենք նաև, որ այդ մարճիկներով ոսկյա և մետաղյա բազմաթիվ իրերի վրա կատարել են նուրբ և բարձրարվեստ պատկերներ:

Ներկայացվելիք աշխատանքային գործիքների կիրառական նշանակության մասին կան բազմաթիվ կարծիքներ:Դրանք երեք ունելիներն են՝ Արթիկից և Ոսկեհասկից[60] և պատրաստված են նույն տեխնիկայով՝ բրոնզի մեկ ամբողջական կտորից:

Արթիկի թիվ 217 և 390 դամբարաններից գտնված ունելիները, ի տարբերություն Ոսկեհասկի օրինակների, ունեն ներքևում լայնացող և ուղիղ թիաթերաններ: Սրանք թվագրվում են մ. թ. ա. 11-10-րդ դարերով. Ոսկեհասկի թիվ 6 դամբարանից գտնված ունելիի թիաթերանները կսկիկ թեքված են ներս այնպես, որ երկու թիաթերանների սեղմման դեպքում, իրենց ամբողջ երկարությամբ, կիպ սեղմվում են իրար: Ոսկեհասկի ունելին թվագրվում է մ. թ. ա. 9-8-րդ դարերով: Նմանօրինակ ունելիներ հայտնաբերվել են Օշականի թիվ 102 դամբարանից, Նորաշենից, Խրամնոցից, Աստղի-Բլուրից[61], ինչպես նաև զարդարված թիաթերաններով ունելիներ Լոռի-Բերդի թիվ 2 դամբարանից, Սանահինից, Խաչսարակից, Գոլովինոյից, Թլիից, Մինգեչաուրից[62]:

Ա. Լուկինը դրանք դիտում է որպես վիրահատական գործիքներ՝ կիրառված ժողովրդական հեքիմների կամ գոցե հեքիմ-քրմերի աշխատանքում[63], Վ. Կրուգլովը գտնում է, որ ունելիները հանդիսացել են մետաղյա մանր իրերի, հատկապես ուլունքների, պատրաստման ժամանակ օգտագործվող գործեք[64]:Ըստ Բ. Կուֆտինի,Ա. Կալանաձեի դրանք ծառայել են մազերի հեռացման համար[65]: Եվ վերջապես Վ. Կոզենկովան գտնում է, որ ունելիները պատկանել են դարբնի աշխատանքային գործիքների շարքին[66]: Մեր կարծիքով ուսումնասիրվող շրջանից հայտնաբերված ունելիները, որոնք զուրկ են որևէ զարդարանքից, կարելի է վերագրել են դարբնությանը: Հավանաբար դրանով բռնել են աքցելները կամ էլ մետաղագործության մեջ օգտագործել են նյութեր կրակ խառնելու:

[58] *Т. Х а ч а т р я н, նշվ. աշխ., նկ. 61:*

[59] *Т. Х а ч а т р я н, նշվ. աշխ., նկ. 60:*

[60] *Т. Х а ч а т р я н, Артикский некрополь, каталог, стр.198, 280; Л. Петросян; նշվ. աշխ., էջ 76, աղ. 68, նկ. 4:*

[61] *С. Е с а я н, А. К а л а н т а р я н, նշվ. աշխ., աղ. CVI, նկ. 8, էջ 94: С. Есаян, Культура племен...; աղ. 63, նկ. 12, աղ. 117, նկ. 5, աղ. 140, նկ. 13:*

[62] *С. Д е в е д ж я н, նշվ. աշխ., աղ. XXV, նկ. 12: А. Мартиросян, Армения в эпоху..., стр 274,. 107/5, Ս. Եսայան, Հ. Հովհաննիսյան, Կասալոզ Դիլիջանի երկրագիտական թանգարանի, Եր., 1969, աղ. XXXIII, նկ. 7, աղ. XLV, նկ. 5: Հ. Մանանդյան, Աշխատություններ, ՀՊՊԹ, Եր., 1959, էջ 13, նկ. 3-5: Б. Техов; նշվ. աշխ., էջ 121,նկ. 94: Г. Асланов, Р. Ваидов, Г. Ионе, Древний Мингечаур, стр. 93, табл. XXXVIII/2:*

[63] *А. Л у к и н, Ешерская находка, труды Абхазского НИИЯЛИ имени Д. Гулия, вып. XXVII, Сухуми, 1956, стр. 131.*

[64] *А. К р у г л о в, Северо-Восточный Кавказ во 2-1 тысячелетиях до н. э., М-Л, 1958, (МИА, 68), стр. 83.*

[65] *Б. К у ф т и н, Материалы к археологии Колхиды, I, Тбилиси 1949, стр. 152; А. Каланадзе, Памятники эпохи поздней бронзы и раннего железа в Восточной Грузии, Археология Грузии, Тбилиси, 1959, (на груз. яз.), стр. 186.*

[66] *В. К о з е н к о в а, Металообработка у племен эпохи раннего железа на территории Чечено-Ингушетии, Археолого-этнографический сборник, т. II, Грозный, 1968, стр. 21.*



Շատ հետաքրքիր և եզակի իր է 1989 թվականին Լենինականի Մսի կոմբինատի տարածքից Հ. Խաչատրյանի կողմից հայտնաբերված բրոնզե իրը: Գտնվել է (նկ. 10) հետախուզական աշխատանքների ժամանակ և պահվում է ՇԵԹ-ի ֆոնդերում (ինվ.

3646)[67]: Գլանաձև է, երկարությունը 16,5 սմ, տրամագիծը 0,4 սմ: Վերին մասը կողքերից սեղմված է (հատվածքում ուղղանկյուն), իսկ գլխի մոտ հարվածից խիստ տափակել է: Ներքևում՝ հավասարաչափ հաստանում է բրոնզե երիզով, տակը՝ կենտրոնում, ունի կլապգնդաձև ելուստ: Գործիքն, ըստ իս, օգտագործվել է պղնձագործության մեջ: Հավանաբար այդ ելուստն որոշ ժամանակ ունեցել է ավելի մասսիվ տեսք, բայց ներկա վիճակում աշխատելուց այն ուղղվել է դարձել: Կարևոր փաստարկ է նաև այն, որ գլխամասին ցայտուն երևում են հարվածի հետքերը: Այս գործիքը կիրառել են հավանաբար մետաղյա թիթեղի վրա դրվագումներ կատարելու համար:

Այս ուսումնասիրությունները մեզ հիմք են տալիս եզրակացնելու, որ մ. թ. ա. 2-րդ հազարամյակի վերջում և 1-ին հազարամյակի սկզբներին տարածաշրջանում զարգացած էին երկրագործությունը, անասնապահությունը և արհեստները: Տնտեսության այս ճյուղերն իրար հետ սերտ կապի մեջ են եղել, և զարգացած արհեստավորական արտադրանքն առաջ է բերել գործիքների պատրաստման խիստ մասնագիտացում:

Հյուսիս-Արևմտյան Հայաստանից հայտնաբերված աշխատանքային գործիքներն ունեն իրենց զուգահեռներն ինչպես Հայաստանի, այնպես էլ Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի և Առաջավոր Ասիայի համաժամանակյա հուշարձաններում: Ընդ որում, որոշ դեպքերում նրանց ձևերը կապվում են առաջավորասիական մետաղագործության հետ, սակայն այդ աշխատանքային գործիքները հետագայում ձևափոխվում են և կազմում յուրօրինակ տեղական աշխատանքային գործիքների խումբ՝ պատրաստված Հայաստանում:

ОРУДИЯ ТРУДА ЭПОХИ ПОЗДНЕЙ БРОНЗЫ И ЖЕЛЕЗА СЕВЕРО-ЗАПАДНОЙ АРМЕНИИ

Резюме *Г. Мсрян*

Из памятников и могильников эпохи поздней бронзы и железа северо-западной Армении раскопано большое количество орудий труда, в том числе: ножи, топорики, молотки, дротики, пилы и т. д. На основе богатого материала Армении, их параллелей в Закавказье, на Северном Кавказе и Передней Азии рассматриваемого периода делается попытка типологии и классификации орудий труда данного региона Армении.

---

[67] Հ. Մ ս ր յ ա ն, ՇԵԹ-ում պահվող ուշբրոնզիդարյան պատահական գտածոները, Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված հանրապետական երկրորդ գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1996, էջ 9:

Феликс ТЕР- МАРТИРОСОВ

ТИПОЛОГИЯ КОЛОННЫХ СООРУЖЕНИЙ АРМЕНИИ АХЕМЕНИДСКОГО ПЕРИОДА

Архитектура ахеменидской империи известна в основном по постройкам дворцовых сооружений Ирана, центральным ядром которых выступают большие многоколонные залы квадратной формы-ападаны. Поэтому обнаружение в Армении памятников ахеменидского периода (Армавир, Эрсбуни, Драсханакерт, Ошакан), в которых имеются разнотипные сооружения с колоннами, представляет несомненный интерес. Памятники эти разновременны, и поэтому более целесообразно рассмотрение их в хронологическом расположении.

Ошакан. **Памятник расположен на северной окраине араратской долины на берегу реки Касах. Раскопки памятника проводились в середине 80-х годов С.Есаяном и А.Калантаряном. Результаты опубликованы в 1988г. Памятник состоит из двух комплексов сооружений, из которых для нашей темы интерес представляет дворцовый комплекс, расположенный под холмом. Комплекс этот датируется исследователями памятника периодом с 7 по 4вв до н.э., то есть полностью охватывает предахеменидский и ахеменидский периоды истории культуры Армении. Архитектура комплекса сохранилась хорошо. В восточной части комплеса раскопками было открыто помещение №27 прямоугольной формы. Вдоль одной из продольных стен помещения имеется вымостка пола из каменных плит,а в центральной части на глинобитном полу вдоль вымостки расположенны каменные базы цилиндрической формы из-под деревянных колонн. Комплекс находок из помещения, в число которых входил очаг, идолы и другой материал, позволил исследователям определить данное помещение как святилище[1](рис.1).**

Архитектурные конструкции этой формы неизвестны для урартских и ахеменндских комплексов. В тоже время для памятников Армении ахеменидского (Драсханакерт) и эллинистического периодов характерно обнаружение сооружений с вымостками и колоннами вдоль них. Сохранение их значения для культовых комплексов наиболее отчетливо прослеживается по материалам храмового поселения Ширакаван, в котором в помещениях с вымостками полов и колоннами вдоль них обнаружены алтари и культовые предметы в виде идолов и статуарных изображений фаллуса и ктеиса.В то же время такие же вымостки с колоннами вдоль них найдены и в комплексах светского назначения Ширакавана и, в последствии, в других памятниках Армении[2]. Это заставляет рассматривать сооружении с вымосткой пола и с колоннами как показатель престижного значения для архитектурных помещений в армянской культуре ахеменидского и эллинистического периодов. Возможно, что комплексы колонных сооружений с вымостками были присущи местной локальной культуре урартского времени, но пока они не обнаружены.

Армавир. **Памятник расположен на высоком холме в центральной части Араратской долины и в древности, вплоть до 3в.дон.э., омывался водами реки Аракс. В урартский период Армавир, как цитадель с культовыми сооружениями, входил в состав города Аргиштихинили. Армавир, как один из древних центров**

---

[1] С. Е с а я н, А. К а л а н т а р я н.Ошакан 1.Основные результаты раскопок 1971-1983гг., Ер.,1988,стр.29,115.

[2]Ф.Т е р-М а р т и р о с о в, Г.К а р а х а н я н. Раскопки античного Ширакавана. Ширак1., Гюмри 1997, стр.32-49.

армянского государства, упоминается Мовсесом Хоренаци[3]. Раскопки памятника ведутся с 1964г. под руководством Б.Аракеляна (до1971г), Г.Тирацяна (до1991г), с 1992 г. И.Карапетян[4]. Были выявлены комплексы урартского и эллинистического периодов. Сложнее дело обстоит с культурным слоем ахеменидского периода. Несмотря на обнаружение на памятнике целого ряда предметов, в том числе и золотой пекторали, ритона и керамических сосудов, определенных как изделия ахеменидской культуры, наличие на холме культурного слоя ахеменидского времени отрицалось[5]. Особый интерес представляет открытие в западной части армавирского холма 21 колонной залы, перекрывавшей урартские постройки. Однако, по мнению Г.Тирацяна, данное колонное сооружение относилось к позднеурартскому времени[6]. Стратиграфический анализ культурных слоев армавирского холма, проведенный нами, показал, что к архитектурным постройкам ахеменидского периода относится зала с 21-ой колоннами в западной части цитадели[7](рис.2). Найденные здесь базы колонн делятся на две группы. Первая- это базы урартского типа из базальта с необработанной в нижней части глыбой камня, закапываемой в землю, и находящейся над поверхностью цилиндрической частью базы. Второй тип-базы из туфа усеченно конической формы.По своим пропорциям 21 колонный комплекс аналогичен колонному залу в Чивин-тепе, который, по мнению Д.Суммера, являлся центром XIII армянской сатрапии[8]. Попытке отнести сооружение колонной залы к позднеурартскому периоду противоречит как общая ситуация, прослеживаемая на территории города Аргиштихинили,так и топография построек армавирского холма. Однако, архитектор А.Канецян на конференции в Афинах выдвинула предположение о возможности наличия в позднеурартское время на западной части армавирского холма колонного зала с 5-ю или 6-ю рядами колонн. По мнению А. Канецян данный зал послужил прототипом для построек колонных зал типа ападаны в ахеменидской архитектуре. Отмечу однако, что археологических данных, подтверждающих предположение о существовании в древности в 21 колонной зале еще 2 или 3 рядов колонн, не существует. Кроме того сильный уклон поверхности в западную сторону в данной части крепости, создающий большую разницу уровня между первым восточпым рядом баз колонн и предполагаемым 5-6 рядами в западной стороне,исключают возможность создания единого колонного строения, охватывавшего всю данную территорию.

Исследование А.Мартиросяном западной, урартской части города показало, что в последний период жизни все население города стремилось укрыться под защитой крепостных стен. При этом даже дворцовые постройки перестраивались в небольшие жилые комплексы[9]. Исходя из вышесказанного представляется весьма спорным предположение,что единственный вход в восточную цитадель города был перестроен в этот период в громадный колонный

---

[3] *М о в с е с Х о р е н а ц и.История Армении.1,12; 2,8.*

[4] *Б А р а к е л я н.Основные результаты раскопок древнего Армавира,ИФЖ 4,1969; Г.Тирацян, Материальная культура древней Армении.6в.до н.э.-4в.н.э.; И.Карапетян, Результаты раскопок Армавира в 1991-1992гг. Тезисы докладов конфенеции ин-та археологии.Ер.,1994г., стр.29-30.;Она же,Ассуарий из Аргиштихинили. Тезисы докладов конфенеции ин-та археологии,Ер.1996г.,стр.35-36;Она же,Погребение молодой урартки. там же,стр.36-37.;Она же,Результаты археологических раскопок Армавира в 1996-97гг.Тезисы докладов конфенеции ин-та археологии. Ер.,1998г.,стр.35-36.*

[5] *Г. Т и р а ц я н, указ.соч. стр.22.*

[6] *Г.Т и р а ц я н, указ.соч., стр.83-84.*

[7] *Ф.Т е р –М а р т и р о с о в,Стратиграфия армавирского холма,Вестник общественны наук АН Арм ССР,1,1974, стр.62-63.*

[8] *S u m m e r,Archaeological Evidence for achemenian Period in eastern Turkey. Anatolian Studie V.XLIII,1993,p.96.*

[9] *А. М а р т и р о с я н. Аргиштихинили, Ер.,1974, стр.34,135.*

зал. Более естественным представляется отнесение его сооружения к ахеменидскому периоду. Находка здесь таблеток с клинописью на эламском языке полностью опровергает существовавшее предположение о прекращении жизни на холме в ахеменидский период. При разности чтения текста таблеток филологи сходятся на датировке их концом 6 - первой четвертью 5 века до н.э.[10] По видимому, в это время у входа в крепость был сооружен колонный зал. Материалы этого времени позволяют предположить, что Армавир в начале 5в до н.э. являлся крупным административным центром, возможно даже, единой сатрапии Армения.

Эребуни. Расположен в араратской долине,на большом холме Арин- берд у окраины города Ереван. Раскопки памятника начались в 1951г. под руководством К.Оганесяна. Обнаружение в 1958г в ходе раскопок строительной надписи урартского царя Аргищти 1 (786-764) об основании города Ирипуни-Эребуни, название которого, по мнению ряда ученых, связано с именем города Ереван, послужило поводом для проведения на памятнике больших реставрационных работ в 1966-68.В 1982г. археологическое исследование памятника прекратилось. Материалы раскопок опубликованы суммарно, с уделением особого внимания архитектуре памятника. Во всех публикациях памятник представлен как комплекс крепости урартского города в котором имеются три постройки более позднего ахеменидского периода[11]. В 1998-2000 гг. автором были проведены небольшого масштаба археологические, разведовательного плана раскопки в центре и на периферии памятника. Удалось уточнить стратиграфию слоев, выявить фортификационные сооружения ахеменидского времени, сохранившиеся до 2 метров в высоту, проследить наличие ахеменидского культурного слоя, имеющего в ряде мест толщину более одного метра, и определить территорию площадью около 3 га, незатронутую предыдущими раскопками, где сохранились архитектурные комплексы, в том числе и фортификационные, урартского и ахеменидского времени. Несмотря на малый масштаб проведенных работ, их результаты позволяют принципиально пересмотреть восприятие памятника, который теперь предстает как комплекс строений укреплённого ахеменидского центра, возведенного на месте урартской крепости с перестройкой части ее древних сооружений. Материалы подготовлены к печати.

Особый интерес вызывает обнаружение на памятнике архитектурного комплекса 30 колонной залы-ападаны. Открытие ападаны явилось основанием для верного определения Эребуни как центра XYIII сатрапии[12]. Предпологалось,что на месте ападаны первоначально находился 12 колонной портик урартского храма Халди. Предпологалось также, что в V веке к урартскому портику была пристроена зала с 18 колоннами,образовав таким образом ападану[13]. Проведенная в 1999г. шурфовка прилегающей к ападане территории выявила здесь более сложную ситуацию. Урартский культурный слой залегает более глубоко,и уровень пола урартских сооружений находится на 120см глубже, чем уровень пола 12 колонной галереи. Исследование архитектурных напластований дало следующую картину. Урартский культурный слой был перекрыт на высоте 40 см. от урартского пола новым глинобитным полом.Раскопками здесь открыта часть вымостки из каменных плит, уходящих под стену 12

---

[10] *Heidemarie Koch, Elamisches Gilgames-Epos oder doch Verwaltungs-tafelchen?Zeitschrift fur Assyriologie. Band83.II.Halband. s.236.Berlin 1993.; F:Vellqt; CNRS; La lettre elamite d'Armenie. Nouvelles Assyrioloquie/ Breves et Utilitaires.46, Paris 1995,p.9.*

[11] *К.О г а н е с я н , Крепость Эребуни, Ер., 1980; С.Ходжаш, Н. Трухтанова, К.Оганесян, Эребуни, М., 1979; Մ. Իսրայելյան, Էրեբունի բերդ- քաղաքի պատմություն, Եր., 1971:*

[12] *Г.Т и р а ц я н ,Колонный зал на Арин-берде и вопрос о сатрапских центрах на Армянском нагорье .ИАНОН, 1960, 7-8 ,(на арм.яз.).*

[13] *К.О г а н е с я н. Крепость Эребуни.Ер.,1980,стр.61-64,93-96.*

колонного портика и три большие, цилиндрической формы, базы колонн, стоящие вдоль вымостки. Впоследствии данное сооружение было перекрыто еще одним новым глинобитным полом и на нем был возведены стены 12 колонного портика. И лишь в последствии к нему была пристроены стены ападаны (рис.3). Таким образом, на данном участке вначале существовал урартский храм Халди, затем, по видимому, в VI веке около храма была возведена постройка с вымосткой и колоннами. В дальнейшем здесь был сооружен 12 колонный портик. Как представляется, возведение 12 колонного портика в Эребуни также связано с превращением данного памятника в центр XVIII сатрапии в Vв.до н.э..Сооружение ападаны, которое произошло путем пристройки к портику новых колонн (К.Оганесян), следует датировать серединой 1Vв. до н.э.


рис. 1

рис. 2


рис.3

Драсханакерт. Памятник расположен на северо-востоке республики в исторической провинции Ширак, в 10 км южнее г.Гюмри. Раскопки начались в 1989г. Памятник занимает обширную территорию-около 80га. В древности памятник являлся дастакертом-частным владением правителя Ширака.На вершине центрального холма раскопками раскрыто основание большого дворца прямоугольной формы[14]. Дворец был основан в Vв. до н.э. В дальнейшем он подвергался многократным перестрокам и просуществовал вплоть рубежа эпох, о чем свидетельствуют найденные здесь монеты Августа. Для нашей темы наибольший интерес представляет первоначальная планировка дворца.На начальном этапе дворец имел пропорции, близкие к квадрату-28х28м. Основания стен каменные, на них возвышались стены из сырцового кирпича, украшенные плоскими пилястрами. По своей планировке здание представляет собой расположенные в центральной части два больших квадратных помещения, окруженных прямоугольными помещениями. В здании обнаружены два входа с южной стороны. По функциональному характеру это- комплекс, сочетающий культовые помещения в восточной части и помещения светского характера в западной части. Восточное центральное помещение,судя по найденным здесь курильницам и протоме в форме головы крупного рогатого животного с символом женского лона на лбу, имело культовое назначение. У восточной стены помещения был сооружен хлев, с яслями, тщательно изготовленной вымосткой из тесаных плит и сложенной из плит канавкой для стока нечистот. Хлев предназначался, вероятно, для священных телок. Севернее святилища было открыто помещение с колоннами, которое можно определить как дарохранилище. Отделенная стеной без прохода западная часть, по видимому, имела дворцовое назначение. Здесь была найдена база колонны лотосовидной формы с канелюрами. База изготовлена из черного туфа и имеет диаметр 70см (рис.4[а]). Основное количество баз колонн было найдено в другой части здания. Большинство из них по форме торовидные базы (рис.4[б]). Особый интерес представляет база из черного туфа, напоминающая по орнамен-

---

[14] *Ф.Т е р-М а р т и р о с о в, Памятник классической античности Армении, Вестник Ереванского Гос. Универститета,Ер.,1993,1,стр.59-72;Он.же Ширак в эпоху классической античности,Научные труды арменоведческого центра Ширака,2,Гюмри,1999,стр32-49, рис.33;*

тацни персепольскне,но отличающаяся от них по форме. Она имеет низкий квадратный плинт, над которым возвышается большой округлый тор, украшенный рельефно высеченными, крупными стилизированными лепестками. Над ним расположен еще один более плоский тор, с обозначенной круглой площадкой под колонну (рис.4[а]). Вероятно, что данная база представлет собой продукт воздействия культур Малой Азии и Ирана. В тоже время рельефно выступающие в виде гладкого валика края лепестков орнамента вазы характерны для построек времен Артаксеркся I, т. е. середины Vв. до н.э. Поэтому данная база служит датирующим для нашего здания элементом. Произведенные в постахеменидское время перестройки дворца послужили причиной перестановок баз и уничтожению ряда из них. Судя по числу сохранившихся в целости баз и по количеству фрагментов, в древности в здании было 8 или 10 колонн. Сами колонны были из дерева. Исходя из расположения найденных in situ баз колонн и характера последующих перестроек, планировка здания и рассположение в них колонн представляются следующим образом. Две торовидные базы находились в самом святилище. Они распологались вдоль вымостки и, возможно, еще две базы находились в центре святилища. Расположение баз вдоль вымостки дается в сопоставлении с материалами античного Ширакавана, где четко засвидетельствовано расположение баз вдоль вымостки и расположение алтаря между двумя колоннами. В центральной части дарохранилища находились 4 базы. Еще 2 базы распологались в центральной части дворцового помещения. (рис.5)





рис. 4[а] рис. 4[б] рис. 4[в]

Следует подчеркнуть, что расположение баз и их число в том или ином помещении не зависит от размеров помещений. Это хорошо прослеживается не только в архитектурных комплексах ахеменидского времени, но и в комплексах эллинистического времени Армении. Поэтому возникает предположение, что в Армение наличие колонн в помещениях и их количество в древности обозначали определенную систему престижности того или иного помещения, связанную со статусом обитавшего в здании лица. Однако можно предположить, что это же явление было характерно и для ахеменидской культуры. В этом плане вызывает интерес предположение о памятнике Чивин-Тепе как центре XIII сатрапии и Эребуни как центре XVIII сатрапии и наличие на них, как и в Армавире, раннем ахеменидском административном центре, колонных залов. Перестройка на Эребуни 12 колонной постройки в ападану лишь подтверждает данное предположение. Подчеркну, что ападаной следует именовать не просто колонные залы,а, судя по ападане Дария I, колонные залы квадратной формы. Следует отметить, что в настоящее время ападана в Эребуни, является единственной известной нам постройкой этого типа, обнаруженной за пределами Ирана. Как

представляется, факт этот не случаен и связан с определенной исторической личностью-Оронтом, сыном Артасира, мужем дочери ахеменидского царя Артаксеркса, бывшего в конце V-начале IVвека сатрапом в Армении. Рассмотрение ритонов, найденных у подножья холма Эребуни, позволило с уверенностью говорить, что на ритоне с всадником изображен Оронт[15]. Как известно, Оронт возглавил восстание сатрапов и даже начал чеканить золотую монету, что являлось царской прерогативой. Поэтому можно предположить, что именно со стремлением Оронта подчеркнуть свое право на царские прерогативы и была произведена перестройка 12 колонного портика, обозначавшего сатрапский статус, на ападану, символизировавшую принадлежность к царскому дому.



рис. 5

Интересно, что при раскопках ападаны Эребуни был обнаружен алтарь, прилегающий к южной стене. Поэтому можно предпологать, что ападана являлась не просто строением, символизировавшим высшую власть, но и служило помещением, связанным с культом ахеменидского царя. Говоря о статусе строения типа ападаны, появившихся в Иране лишь с образованием ахеменидской империи, можно предположить, что именно ападаны, связанные с царским культом и символизировавшие царский статус, являлись теми постройками ayadana, в разрушении которых Дарий I обвинял Бардию-Гаумату и восстановление которых он ставил своей заслугой.

Возможно,что Бардия, подчеркивая свою приверженность к древним, доимперским традициям, действительно разрушил постройки ayadana-ападаны, которые в то время связывались не с культом рода ахеменидов, а культом новой имперской формы царской власти, отраженой в титулатуре Дарня I: царь великий, царь царей, царь Персии, царь всех стран.

Таким образом, рассмотрение архитектурных построек Армении представляет интерес для понимания характера развития культуры не только самой Армении, но и всей ахеменидской империи.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՔԵՄԵՆՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՍՅՈՒՆԱԶԱՐԴ-ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

------ Ամփոփում ------ *------ Ֆ. Տեր- Մարտիրոսով ------*

Աքեմենյան պետության ճարտարապետությունը հիմնականում հայտնի է Իրանի պալատական կառույցներով, որոնց միջակն են հանդիսանում մեծ, քառակուսի հատակագծով բազմասյուն դահլիճները՝ ապադանները: Հայաստանի աքեմենյան ժամանակաշրջանին վերաբերող հուշարձանները՝ Արմավիր, Էրեբունի, Դրասխանակերտ, Օշական, նույնպես ունեն սյունազարդ դահլիճներ, որոնք կառուցված լինելով տարբեր ժամանակահատվածներում, ունեն հատակագծային և տիպաբանական տարբերություններ:

[15] *J.H a r m a t t a. Royal Power and Immortality. Acta Antiqua.Budapest 1979, t. XXVII, p. 309;Ter-Martirossov. Corne-rhyton au cqvqlier en costume Mede : Oronte 1-er. Armenie. Tresors de l ' Armenie ancienne.Dobree 1996, p.197-200.*

Իրանի և Հայաստանի սյունազարդ կառույցների տիպաբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրել, որ այս կառույցներում առկա սյուների քանակը և դրանց տեղադրությունը ուղղակիորեն պայմանավորված չեն դահլիճի չափերով, այլ ավելի շուտ կոչված են շեշտելու շենքի և նրա պատկանելության կարգավիճակը: Ապադանները, որ ի հայտ են գալիս աքեմենյան կայսրության ծևավորումից հետո, խորհրդանշել են արքայի կարգավիճակը և կապվում են արքայի պաշտամունքի հետ:

Հայաստանի աքեմենյան ժամանակաշրջանի սյունազարդ հուշարձանների ուսումնասիրությունը օգնում է հասկանալ ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ Աքեմենյան կայսրության մշակույթի զարգացման բնույթն ու առանձնահատկությունները:

Գայանե ՔՈՉԱՐՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ Ա ԲԱՐԻՆ ՈՐՊԵՍ ՀԶՈՐ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԵՐՏՈՂ
(Կերպարային դիմանկարի վերականգնման փորձ)

Երվանդունիների երկրորդ թագավորությունը՝ մ.թ.ա. 3-րդ դարի 70-ական թվականներից սկսած, բոլոր ուղղություններում տարածքներ զիջելով հետզհետե հզորացող հարևաններին, դարավերջին, ներքաղաքական կյանքի բարոյահոգեբանական անկայունության պարագայում, անկարող եղավ պահպանել դեռևս մեկ դար առաջ Հայկական լեռնաշխարհն ընդգրկող երկրի անկախությունը, և Մեծ Հայքը դարձավ Սելևկյանների ստրատեգիաներից մեկը: Տարածաշրջանում իր գերիշխանությունը վերահաստատած Սելևկյանների և օրըստօրե զորեղացող Հռոմեական հանրապետության ռազմական բախման նախօրեին, պատմական անհրաժեշտությամբ, քաղաքական ասպարեզում հայտնվեց կամային անուրանալի հատկություններով օժտված մի քաջակորով անհատականություն՝ հայ պետականությունը վերականգնելու, նոր և հզոր արքայատոհմ հիմնելու առաքելությամբ, որն իրեն հետագայում պիտի կոչեր «Արտաշես արքա, Երվանդական, որդի Զարեհի, Բարի, Թագակիր»:

Եվ, այսպես, ո՞վ էր Արտաշեսը, ի՞նչ առանձնահատուկ գծերով է բնութագրվում նրա բացառիկ անհատականությունը: Արտաշես Ա-ի կերպարը մեզ ներկայանում է միջնորդավորված տեղեկատվությամբ: Այն ամփոփված է Արտաշես Ա-ի գործունեության առանձին դրվագների մասին անտիկ և վաղ միջնադարյան հեղինակների հաղորդումների ենթատեքստում: Մեր խնդիրն է, դրվագաբար ներկայացված գործողությունների դրդապատճառների ու նպատակների բացահայտմամբ, փորձել վերականգնել որոշակի հատկությունների ու հատկանիշների բացառիկ ամբողջություն կրող պետական գործչի կերպարային դիմանկարը:

Արտաշես Ա-ն հաջորդեց Երվանդունիների արքայատոհմին. արքայատոհմ, որը տարածաշրջանի գերհզոր տերությունների՝ իր իսկ զորակցությամբ Մարաստանի լուծը թոթափած Աքեմենյանների և, սրանց պատմության ասպարեզից արտաքսած Ալեքսանդր Մակեդոնացու ժառանգորդ Սելևկյանների դեմ պայքարելով՝ գոյատևեց շուրջ չորս դար և փոփոխակի հաջողությամբ պահպանեց երկրի լիակատար կամ մասնակի անկախությունն ու ամբողջականությունը[1]: Երվանդունիների պայքարը գոյատևման պայքար էր: Եվ այդ ժամանակաշրջանի ռազմաքաղաքական իրադրության պարագայում Երվանդունիների գոյատևումը նախ հաղթանակ էր, ապա և՝ նախապայման Արտաշես Ա-ի գործունեության համար:

Արտաշեսի վարքի շուրջ հյուսված, առասպելականացված վիպաշուք պատումը, որ նրա մահից ավելի քան կես հազարամյակ անց, Մովսես Խորենացու օրերում, դեռ հնչում էր Գողթան երգիչների շուրթերին, բանասիրության ուսումնասիրության նյութ է: Այսուհանդերձ, արքային փառաբանող, երաժշտական մեկնաբանությամբ հնչող երկի և՛ կերտումը, և՛ տևական պահպանումը, ամեն ինչից առաջ, խոսում են արքայի և նախնիների պաշտամունքի մասին: Սա ևս հատուկ քննության հարց է:

Այժմ փորձենք, Արտաշես Ա-ի գործունեության մասին գրավոր սկզբնաղբյուրներում պահպանված տեղեկատվության քննական ուսումնասիրության և հնագիտական նյութի տվյալների համեմատական վերլուծությամբ՝ վերականգնել նրա բնութագրի հիմնական գծերը, ամբողջացնել պետական գործչի կերպարը:

---

[1] *Երվանդունիների թագավորության տարածքային փոփոխությունների մասին տես Գ. Տիրացյան, Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դար), Պատմա-բանասիրական հանդես, 4 (1980), էջ 84 – 95. նույնի, Երվանդյան Հայաստանի տարածքը (մ.թ.ա. VI դ. վերջ - III դ. վերջ), Պատմա-բանասիրական հանդես, 2 (1981), էջ 68 – 84:*

Սելևկյան պետության համար կործանարար եղավ Մագնեսիայում մ.թ.ա.190 թ. խռմեացիներից կրած պարտությունը: Սրոչ այդ երկու ստրատեգիաների բաժանված Հայաստանում, Անտիոքոս Գ Մեծի կողմից ստրատեգոս՝ ռազմավարչական կառավարիչ, նշանակված Արտաշեսը (Մեծ Հայքում) և Զարեհը (Ծոփքում)՝ «հաղթելով հռոմեացիներին՝ իշխեցին իրենք ինքնուրույն և թագավոր հայտարարվեցին»[2]:

Արտաշես Ա-ը՝ Սելևկյան պետության երբեմնի ստրատեգոսը, զորավարի ու վարչապետի իր փորձառությունը շահեկանորեն կիրառեց՝ քառակողմ նվաճումներով երկիրը վերամիավորելիս, վարչաքաղաքական բարեփոխումներ իրականացնելիս: Արտաշես Ա-ը տեսակնորեն վարում էր հակասելևկյան քաղաքականություն՝ համագործակցելով հռոմեամետ Ծոփքի, Պերգամոնի և Կապադովկիայի հետ՝ արևմուտքում, կամ դաշնակցելով, մ.թ.ա. 160-162 թթ. ապստամբած, Բաբելոնիայի և Մեդիայի սատրապ Տիմարքոսի հետ՝ հարավում (եմմտ. Արտաշեսի ընդգրկվելը մ.թ.ա. 179 թ. Կապադովկիա-Պոնտական բազմակողմ պայմանագրի մեջ, նրա դաշինքը Տիմարքոսի հետ)[3]: Այսուամենայնիվ, երկրե վերամիավորման գլխնոդիրն իրականացնելիս, Ծոփքի գահի թափուր մնալու պահն՝ օգտագործելու գայթակղությունն ունենալով հանդերձ, նա ի վերջո զիջակցեց, որ իր ուռնձգությունը կգրգռեր նույն գահին հավակնող Կապադովկիայի հովանավոր Հռոմին և խոհեմորեն հետաձգեց Ծոփքի միացումը Մեծ Հայքին:

Հմուտ քաղաքագետի դիվանագիտական խուսավարումները դյուրացրին հատկապես երկրի արևմտյան տարածքների վերամիավորումը: Իսկ հարավային ուղղությամբ դեպի Տմորիք Արտաշեսն արշավեց Սելևկյանների Եգիպտական արշավանքով զբաղված պահին: Նրա հրամանով Տմորիքում բնակություն հաստատած, հարավային զորքերի հրամանատար Սմբատը բազմաթիվ գերիներ է վերաբնակեցնում[5] դեպի Միջնաշխարհ տանող, Կրերաց լեռնացքը պսպղտպանալ Ալկի ամրոցում: Դրանով Արտաշեսն ամրապնդում է ռազմափարակւսն կւսրևորաքյան սահմանային երկրամասը՝ քաջ զիաակցեով Սելևկյունների հետ ռազմական բախման անխուսափելիությունը: Եվ իրոք, ընդամենը երեք տարի անց, մ.թ. ա. 165 թ. Անտիոքոս Դ Էպիփանեսն իր արևելյան արշավանքի ընթացքում մարտնչեց Արտաշեսի դեմ, սակայն անարդյունք[6]: Նա նվաճեց Աեղիան, մինչդեռ Մեծ Հայքը, Արտաշեսի հմուտ և հեռատես քաղաքականության շնորհիվ, պահպանեց իր անկախությունը: Արտաշես Ա-ի վարած արշավանքները, ըստ էության, ազատագրական էին: Ստրաբոնը նրա կողմից Հայաստանին միացրած տարածքները թվելուց հետո նշում է. «բոլորը միալեզու են»[7], այսինքն Արտաշես Ա-ը վերամիավորում էր հայարնակ տարածքներ՝ ազատագրում օտարների զավթածը, վերականգնում երկրի տարածքային ամբողջականությունը:

Երկրի վերամիավորումը զուգընթաց Արտաշես Ա-ը ձեռնամուխ է լինում լայնածավալ բարենորոգումների՝ նպատակ ունենալով ստեղծել պետական եզոր համակարգ, կանոնակարգված իշխանություն, կազմակերպված անտեսություն:

Առաջնահերթ էր նորաստեղծ պետության սահմանների պաշտպանության կազմակերպումը: Արտաշեսը զորքի իշխանությունը բաժանում է չորս մասի (արևելյան, արևմտյան, հյուսիսյան, հարավային) իր զավակների և իր դայակ, զորավար Սմբատի հրամանատարության ներքո[8]:

Արտաշեսը իշխանությունը նվաճելիս իրեն օժանդակած, կամ գոնե չդիմադրած իշխանավորների արքունական հիմնակազմը համալրում է (Դիմաքսյան,

---

2 *S t r a b o , XI, 14, 15.*

3 *P o l y b., XXVI, 6, 1 – 12. Diod., XXXI. 27a. Սրանց քննական ուսումնասիրությունը տե՛ս Գ. Սարգսյան, Հայաստանի միավորումը և հզորացումը Արտաշես Ա - ի օրոք, Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Եր., 1971, էջ 544 – 546, էջ 550 – 551:*

4 *Տե՛ս նույն տեղում, էջ 549 – 550:*

5 *Մ. Խ ո ր ե ն ա ց ի, Հայոց պատմություն (Թարգմ., ներած. և ծանոթ. Ստ. Մալխասյանի, խմբ.՝ Գ. Սարգսյանի), Եր., 1990, II, ԾԳ:*

6 *Հարցի լուսաբանումը տե՛ս Գ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 546 – 549:*

7 *S t r a b o , XI, 14, 5.*

8 *Մ. Խ ո ր ե ն ա ց ի, Հայոց պատմություն, II, ԾԳ:*

Տրունիք)[9] երիտասարդ, անպասկած, վստահելի մարդկանցով՝ ապահովելով քաղաքական հուսալի հենարան և միաժամանակ իրականացնելով, Ն. Ադոնցի արտահայտությամբ, «երկրի ազնվականացում»:

Արտաշեսը, «Բոլոր գործերի իշխանության», «Արքունական սան բոլոր գործերի», «Արամազդի կուռքի քրմապետ», «Թագակապ ասպետի», «Երկրորդական գահի»[10] պատասխանատու պաշտոնները շնորհելով արքայական և մեծատոհմիկ ընտանիքների անդամներին, փաստորեն, կերտում է կենտրոնացված իշխանության պետական կառույց: «Արտաշեսի ժամանակ բազում գործեր կատարվեցին» վերստավորված «միալեզու» երկրում, զարգացան *համազգային մշակույթն ու գիտությունը*, տնտեսությունն ու հաղորդակցության (ցամաքային ու ջրային) ուղիները, վերականգնվեցին «հին թագավորների» հաստատած «կարգք ու սովորութիւնք գեղեցիկք», սահմանվեց համազգային օգտագործման տոմար, քանզի մինչ այդ տարանջատված տարբեր աշխարհներում «գործ էին ածում ուրիշ ազգերինը»[11], որպես հետևանք քաղաքական ենթակայության:

Արտաշես Ա-ի ձեռնարկած տնտեսական բարեփոխումների անկյունաքարը՝ հողայինն էր: Նոր հողեր ձեռք բերած, «երկիրը բազմամարդացրած» Արտաշես Ա-ի հրամանով որոշվեցին «գյուղերի (համայնական հողերի) և ագարակների (մասնատիրական հողերի) սահմանները ...»[12]: Նրա իրականացրած հողային բարեփոխումների նյութական վկայությունն են «Արտաշիսյան սահմանաքարերը»[13]: Սահմանաքարերի վրա արամեերեն լեզվով կնքված արքայական պարգևագրի բանաձևը վերծանվում է. «Արտաշես արքա, Երվանդական, որդի Զարեհի, Բարի, Թագակիր, բաժանեց հողը ... միջև ...»[14]: Քանի որ «Երվանդական» բառը, առհմանուն լինելուց զատ, նշանակում է նաև «Աստվածային»[15], ուստի Արտաշես Երվանդականի՝ երկրի օրինական ժառանգորդի ձեռամբ, աստվածային կամքով նշված սահմանները սրբագործված են, արդար և անխախտելի: Արքան ագրարային իր հստակ քաղաքականությամբ՝ պահպանում է համայնքի՝ հարկատու միավորի ամբողջականությունը, նորոգում պետական հարկային համակարգը, օրինականացնում, հատկապես, նորընծա ռազմավարչական ազնվականության արագորեն ընդարձակվող հողատիրույթները,

---

9 *Նույն տեղում, II, ԽԷ:*

10 *Նույն տեղում, II, ԾԹ:*

11 *Նույն տեղում, II, ԾԹ:*

12 *Նույն տեղում, II, ԾԶ:*

13 *«Արտաշիսյան սահմանաքարեր»՝ արամեերեն արձանագրությամբ, պատահականորեն գտնվել են Գեղարքունիքում (Սևանի ավազանի հարավ-արևմտյան հատվածում՝ 6), Սյունիքում (Իշխանասարի ստորոտում՝ 1), Վարաժնունիքում (Թեղուտ գյուղից հտաես՝ 2), Վերին Տաշիրում (Սպիտակում՝ 1) և առանց գրի, պեղումների ժամանակ՝ Շիրավում (Բենիամինում՝ 2, Շիրակավանում՝ 2): Սահմանաքարերի մասին տես Գ.Տիրացյան. Արտաշես I-ի ևս մեկ նորագյուտ արամեական արձանագրություն, Պատմա-բանասիրական հանդես, 4 (1977), էջ 254 – 259,* ***Ф. Тер-Мартиросов, Памятник классической античности Армении,*** *Բանբեր Երևանի համալսարանի, 3(1993), էջ 66: Սահմանաքարերով հողաբաժանման ավանդույթի գոյությունը Հայկական լեռնաշխարհում հաստատվում է Թեյշեբաինիի (Կարմիր բլուր) արքունի անտիկական արխիվի կավե աղյուսակի սեպագիր արձանագրությամբ, ըստ որի, Ռուսա II-ի որդի Սարդուր III-ի (645 – 635) հրամանով, Կուղունիի բնակավայրի եղերի (կամ եղամասի) վերադարձը նախկին տիրոջը ուղեկցվել է սահմանաքարի հաստատումով (տես Ն.Հարությունյան, Կարմիր բլուրի սեպագիր աղյուսակը, Պատմա-բանասիրական հանդես, 3(1958), էջ 201-213:*

14 *Գ. Տիրացյան. Արտաշես I-ի ևս մեկ նորագյուտ արամեական արձանագրություն, էջ 257 – 259 (ըստ հեղինակի՝ սահմանաքարերի արձանագրություններում «արամեերենի օգտագործումը հունականություն պարտադրող Սելևկյան տերությանը հակադրվելու միջոց էր») :*

15 *Ս. Պետրոսյան, «Վահագնի երգի» ակրոստիքոսների վերականգնման և վերծանման փորձ, Լրաբեր հասարակական գիտությունների, 4 (1981), էջ 84: Ս.Հարությունյան, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան. էջ 103–112:*

արդյունքում՝ ստեղծում կենտրոնական իշխանության համար սոցիալական ամուր հենարան[16]: Սրանով նա փաստորեն ընդգրկեց հասարակության բոլոր շերտերը, կազմակերպեց լուրջ սապվարագույն եկամուտ ապահովող անտեսություն, որի արդյունքում՝ «Արտաշսի ժամանակ մեր Հայոց աշխարհում անմշակ հող չմնաց, ո՛չ լեռնային և ո՛չ դաշտային, այնքան շենացել էր երկիրը»[17]:

Մեծ Հայքի Միջնաշխարհում Արտաշես Ա-ի կառուցած քաղաքների (Արտաշատ, երեք Զարեհավան, երկու Զարիշատ, Արքաթա, Արտամատ)[18] տեղադրման բնույթի մասին Ա. Զարյանը այսպես է խորաթափանց մեկնաբանություն. «Արտաշեսյան [քաղաքաշինական] համակարգը տարածական է, ... համապատասխանում է Հայկական պետության սահմանները յորս ուղղություններով ընդարձակելու՝ Արտաշես Ա-ի տարած քաղաքականությանը»[19]: Արտաշեսը նոր մայրաքաղաքը՝ «լավ համաբնակեցված» Արտաշատը[20] հիմնադրեց Երասխ և Մեծամոր գետերի կրազմված թերակղզու բլրաշարի վրա: Արտաշատի պարիսպը պատելով բլուրների լանջերով, նա միաժամանակ և՛ շրջափակեց քաղաքը, և՛ առանձնացրեց նրա ֆունկցիոնալ գոտիները՝ արքունի-վարչական, պաշտամունքային, առևտրական, բնակելի և սրանց միջև ամրաշինական հանգույցներ դրեց[21]: Նա արքայատոհմի հովանավոր աստվածների արձանները ու հայրենական կուռքերը Բագարանից բերեց[22] և կանգնեցրեց Արտաշատի պաշտամունքային հատվածում: Այս հնարամիտ քայլով նա միաժամանակ և՛ կենտրոնացրեց աշխարհիկ ու հոգևոր իշխանությունները, և՛ ընդմիջարկեց պարսպով ու ամրաշինական հանգույցով: Պետականության ամրապնդման համար նրան անհրաժեշտ էր սահղծել կենտրոնացված իշխանության ուղղածիգ կառույց, բայց և ավելորդ չհամարեց հետևել իր նախորդ Երվանդ Վերջինի զգուշավորությանը: Արտաշեսը, փաստորեն, զարգացրեց Արմավիր > Երվանդաշատ + Բագարան՝ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների առանձնացման գաղափարը՝ ապահովելով երկրի հզորացման համար այնքան կարևոր կենտրոնացումը[23]: Ա.Զարյանի գնահատմամբ՝ «Արտաշատը դարաշրջանի քաղաքաշինությանը հատուկ լեզվական համընդհանրություններով գործառնված *եզակի երևույթ է*: Արտաշատը հարկ է դասել *արտաշեսյան քաղաքաշինության համակարգում* (ընդգծումն իմն է - Գ. Ք.) [24]:

Արտաշես Ա-ն իր քաղաքաշինական տարածական համակարգով համալրեց ու սքբագբեց Հայկական լեռնաշխարհով անցնող միջազգային մայրուղիների ցանցը՝ կարևորելով սրա տնտեսական ու ռազմավարական նշանակությունը: Այսպես, Արտաշատ-Բագրևանդի Զարեհավան-Աղիովիտի Զարիշատ արքայաշեն քաղաքներով անցնող ճանապարհը նախանշեց Տիգրան Բ Մեծի լայնածավալ տերության երեք՝ Արտաշատ-Տիգրանակերտ-Անտիոք մայրաքաղաքներն իրար միացնող «Արքունի պողոտայի» հիմնական ուղղությունը: Երասխի հովտով, Արտաշատից Իրանական աշխարհ և Արևելքի միջազգային առևտրի կենտրոններ տանող մայրուղու վրա կառու-

---

[16] *Խնդրի լուսաբանումը տե՛ս Գ.Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Եր., 1966, էջ 194 – 197:*

[17] *Մ. Խ ո ր ե ն ա ց ի, Հայոց պատմություն, II ԾԶ:*

[18] *Արտամատ (այժմ Արտամետ)՝ նույնացվում է Երվանդունիք գավառի մաս կազմող «Արտաշիսեան, որ Արտավանեան գավառի» կենտրոն Արտաշիսեան ավանի հետ (տե՛ս Թովմայի Վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն Տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, I, Է (էջ 94), I, Ը (էջ 99), Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի» - ի (Փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Եր., 1963, էջ 41, էջ 51):*

[19] *Ա. Զ ա ր յ ա ն, Ակնարկներ հին և միջնադարյան Հայաստանի քաղաքաշինության պատմության, Եր., 1986, էջ 27:*

[20] ***S t r a b o, XI, 14, 6.***

[21] *Արտաշատի ֆունկցիոնալ գոտիների մասին տե՛ս (**А. Тоникян, Архитектура жилых домов Арташата, автореферат канд. диссертации, Ереван, 1987, с. 7**):*

[22] *Մ. Խ ո ր ե ն ա ց ի, Հայոց պատմություն, II, ԽԹ*

[23] *Արքայանիստ քաղաքների երկրևեռ միակենտրոն և բազմակենտրոն համակարգերի մասին տե՛ս Գ.Քոչարյան, Բարոյահոգեբանական իրադրության դրսևորումը Հայաստանի արքայանիստ քաղաքների համակարգերում, Իրան – Նամէ, 6 (1996) – 1(1997), էջ 53 – 56:*

[24] *Ա. Զ ա ր յ ա ն, Նշվ. աշխ., էջ 34:*

ցած Արքատան ու Նոր Շիրականի Զարեհավանը կարևորում են այս մայրուղու տնտեսական նշանակությունը, իսկ Օղլան-կալա ամրոցի հետ նույնացվող Արքատան, դրանից զատ, նաև համալրում է Արարատյան հովտի արևելյան մուտքը տնկատնորեն հսկող ամրոցների Նախճավանի պաշտպանական խումբը[25]: Եվ ի լրումն արվածի, Արտաշեսը, սահմանելով «ի ծովակս աշխարհիս նաւագնացութիւնք» և «ի վերայ գետոց ճանապարհորդութիւնք»[26], ընդարձակեց երկրի փոխադրելիության հնարավորությունները: Այսինքն՝ Արտաշես Ա-ը կերտեց «ճանապարհների ու քաղաքների համակարգ» (արտահայտությունը Ա. Զարյանինն է), այն է՝ քաղաքայնացրեց երկիրը:

Արտաշես Ա-ի քաղաքաշինական բազմաբնույթ գործունեության շարքին, թերևս կարելի է (ելնելով Վաղարշակ=Արտաշես Ա նույնացումից)[27] դասել նաև, արքայական իշխանության հզորությունն ու վեհությունն ընդգծող, «արքունի ծառազարդ ապարանքի» կերտումը Հայքի Կող գավառում: Նա Պարխար լեռների սառցոտում «անտառախիտ սահարակները իրենց լեռներով հանդերձ վերածում է երկու գոմի, դարձնում որսերի տեղ, և Կողի ջերմությունը մեղմացնում է այգիներով ու բուրաստաններով»[28], ներդաշնակելով բնականն ու արհեստականորեն սանեղծվածը՝ «ի վայելչություն իւրոյ թագաւորութեանն», կերտեց բնապատկերային ճարտարապետական արվեստով մշակված կիսաչապատ տարածք՝ պարահզապուրակային վեհաշուք համալիր, որտեղ արքայական հանգստավայրի նորատունկ այգիներն ու բնական որսատեղերը հաղորդակից էին միմյանց: Այս համալիրը, դեռևս մ.թ. ա. I հազարամյակի սկզբից Հայկական լեռնաշխարհում վկայված «արքունի ծառազարդ» (=paradeisos)[29] մշակույթի զարգացման ընթացքը համալրող կարևորագույն օղակներից մեկն էր: Այն հաջորդեց Երվանդ Վերջինի Երվանդակերտ – Ծննդոց անտառ համալիրին և նախօրինակ հանդիսացավ Տիգրան Մեծի Տիգրանակերտի արվարձանային սրալատակսն շքեղ համալիրի համար:

Արտաշես Ա-ը, հունականություն պարտադրող Սելևկյաններին ռազմաքաղաքական հարցերում հետևողականորեն հակադրվելով հանդերձ, հակված էր Հայկական լեռնաշխարհին հարող տարածաշրջանում՝ ողջ Առաջավոր Ասիայում իշխող հելլենիստական աշխարհայեցողությանը: Այդ սկզբունքային գործիչն տկնհայտ հանդուրժողականություն ցուցաբերեց դիցարանական ու գեղագիտական արժեքների ներմուծման նկատմամբ: Նա ավյալ ժամանակահատվածին բնորոշ սինկրետիկ խառնաշփոթի պարագայում հայրենի աստվածությունների հետ նույնացվող հունական դիցարանի աստվածների արձաններ բերեց ու տեղադրեց մեր սրբավայրերում[30]:

Արտաշես Ա-ը, Միջնաշխարհում կառուցած քաղաքներից հինգն իր հոր անվամբ կոչելով, վերահաստատեց արքայատոհմի նախնիների պաշտամունքը և այն

---

[25] Գ. Քոչարեան, Անահիկ Դուինը Արտաշատի պաշտպանական համակարգում, «Հանդէս ամսօրեայ», 1-12(1996), էջ 343: Նոր Շիրականի Զարեհավանը, գտնվելով ազգամավարական նշանակության սահմանային կարևոր հանգույցում, հավանաբար, նույնպես ունեցել է պաշտպանական գործառույթ:

[26] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց (Աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան), Տփղիս, 1913, գիրք երկրորդ, ԾԹ:

[27] А. Периханян, Древнеармянские востаники, Вестник древней истории, 2 (1956), стр. 52-53.

[28] Մ. Խորենացի, Հայոց պատմության, II, Ձ:

[29] Գ. Քոչարյան, «Արքունի ծառազարդ ապարանքը» Երվանդակերտից առաջ և հետո, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի Գիտական աշխատություններ, II, Գյումրի, 1999, էջ 120 – 125:

[30] Մ. Խորենացի, Հայոց պատմություն, II, ԺԲ, Ռ, ԽԹ: Անառարկելի է, որ անահիկ շրջանում դիցարանական ու գեղագիտական ոլորտում եղած ազդեցությունը, սկսված լինելով Արտաշեսից առաջ դեռևս Երվանդունիների օրոք և անելով մինչև Հայոց դարձը, հակառակ հզոր հարևանների անական ջանքերին, սահմանափակվել է զուտ արտաքին շերտով՝ արտահայտչամիջոցների ձևարանական բնույթով կամ դիցանունների պարզ զուգորդումներով, առանց խարարելու հայ դիցարանի աստվածությունների առասպելաբանական կերպարների ինքնությունը և, մանավանդ, հայ առասպելաբանական հայեցողության համար իմաստասիրական հիմնաքար, աշխարհընկալման ելակետ հանդիսացող մոնիստական մտածողությունը:

տարածելով, վերածեց *համերկրային պաշտամունքի:* Արքայական տիտղոսաշարում իրեն «Երվանդական» կոչելը, ըստ Գ. Տիրացյանի պայմանավորված էր իր ծուգումը Երվանդունիների միջոցով Աքեմենյանների հետ կապելու ձգտմամբ[31]: Անշուշտ, բայց ավելին կա Արտաշես Ա-ի արամեերեն արձանագրության արքայական տիտղոսաշարում: Եթե համադրենք «Երվանդական» առեմանվան, ըստ Ս.Պետրոսյանի և Ս.Հարությունյանի, «Աստվածային»[32] և «Բարի» թարգմանված պատվատիտղոսի, ըստ Գ.Սարգսյանի, «Բարեպաշտ»[33] իմաստները և տիտղոսաշարը դիտենք ամբողջությամբ՝ «Արտաշես արքա, Երվանդական, որդի Զարեհի, Բարի, Թագակիր», ապա ակնհայտ կդառնա ժամանակաշրջանին բնորոշ՝ արքայատոհմի նախնիների պաշտամունքի ամրապնդման, ապյող արքայի աստվածացման միտում, ինչպես նաև «Արքա» և «Թագակիր» հոմանիշ զույգով իր ինքնիշխան, անկախ միապետի կարգավիճակը անառարկելիորեն շեշտելու ձգտում:Արտաշես Ա-ը «Երվանդական» = «Աստվածային» տիտղոսով սահղծել է գաղափարական նախապայման իր թոռան՝ Տիգրան Բ Մեծի համար, որը կես դար անց իրեն «Θεός»= «Աստված»[34] պիտի հռչակեր:

Այսպիսով, Արտաշես Ա-ի «բոլոր առաջինական գործերից և բարեկարգություններից»[35]հառնում է *«համահայկական միասնության քաղաքականություն»*[36] վարող ողջամիտ քաղաքագետի, խոհեմ բարենորոգչի, հմուտ տնտեսագետի, ճարտար քաղաքաշինարարի, լայնախոհ պետական գործչի լուսավոր կերպարը: Երկհարյուրամյա արքայատոհմ հիմնած, Հայաստանի քաղաքական անկախությունն ու տարածքային ամբողջականությունը վերականգնած Արտաշես Առաջինի գործունեությամբ կերտվեց հզոր պետական կառույց, զարգացան համազգային մշակույթն ու գիտությունը, տնտեսությունն ու հաղորդակցության ուղիները,արդյունքում՝ ստեղծվեցին անհրաժեշտ նախապայմաններ Տիգրան Բ Մեծի միջազգային ասպարեզում ունենալիք նշանակալի դերի և, որ ամենակարևորն է, հայ պետականության գոյատևման համար:

АРТАШЕС I (БЛАГОЙ) СОЗДАТЕЛЬ МОЩНОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ

Резюме — *Г. Кочарян*

Анализом сведений античных и средневековых авторов о деятельности царя Великой Армении Арташеса I Благого, основоположника двухвековой династии Арташесидов, реконструируется образный портрет феноменального государственного деятеля, оставившего глубокий след в армянской действительности, восстановившего политическую независимость и территориальную целостность Армении, ведущего политику общеармянского объединения, осуществлявшего урбанизацию страны, развивавшего экономику и пути сообщения, общенациональную культуру и науку, и тем самым создавшего предпосылки для исполнения значительной роли на международной арене внука-Тиграна Великого и,что самое главное, для дальнейшего существования армянской государственности.

[31] *Գ. Տ ի ր ա ց յ ա ն, Արտաշես I - ի ևս մեկ նորագյուտ արամեական արձանագրություն, էջ 257–258:*

[32] *Տե՛ս հղում 15:*

[33] *Գ. Ս ա ր գ ս յ ա ն, Հայաստանի միավորումը և հզորացումը Արտաշես Ա-ի օրոք, էջ 538:*

[34] *Գ. Սա ր գ ս յ ա ն, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին,էջ48-51:*

[35] *Մ. Խ ո ր ե ն ա ց ի, Հայոց պատմություն, II, ԾԶ:*

[36] *Ա. Զ ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 35:*

Համազասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԲԵՆԻԱՄԻՆԻ ԱՆՏԻԿ ԴԱՍՏԱԿԵՐՏԻ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (մաս II)[*]

Առաջին շերտին վերաբերող մի քանի կառույցներ կամ դրանց մնացորդներ են հայտնաբերվել 1-ին տեղամասի նաև այլ հատվածներում: Այսպես՝ 1-ին շերտի առաջին շինարարական հորիզոնին է պատկանում մոնումենտալ կառույցի հյուսիս-արևմտյան կողմում գտնվող մեծ սրահը (նկ 1), որն ունի 10,5մ երկարություն և մոտ 8մ լայնություն: Սրահի իսկական լայնքը դեռևս հայտնի չէ: Ռելիեֆի թեքության պատճառով այն մոտ 1,2մ ցածր է մոնումենտալ կառույցից և նրա հյուսիսային կողմում գտնվող նույն շինարարական շրջանին պատկանող մի այլ մեծ շինության պահպանված սալահատակից: Նշված սրահի արևելյան կողմում, նույնպես այլ առանցքով, կառուցվել է մի հզոր պատ, որի հիմքը սրահի հատակից մոտ 1,1մ ավելի բարձր է: Սրահի արևմտյան պատի ամբողջ երկայնքով կառուցված է քարաշար մսուր, որին հարում է 2,3մ լայնությամբ, մեծ ու հարթ քարերով սալահատակը: Հյուսիս-հարավ առանցքով, սալահատակից փոքր-ինչ հեռու իրենց տեղերում պահպանվել են սյուների 4 խարիսխներ, որոնց կոպիտ տաշվածքով տրված է կլորավուն ձև: Հյուսիսային և հարավային պատերից առաջին խարիսխների հեռավորությունը 1,6մ է, հաջորդ սյուների քայլը՝ 2,4մ: Ամենայն հավանականությամբ սրան զուգահեռ եղել է երկրորդ սյունաշար, որի խարիսխները կամ չեն պահպանվել, կամ գտնվում են հետագայում կառուցված հզոր պա-



նկ. 1

տի տակ գտնվող չպեղված հատվածում:

Այս սրահը ամենայն հավանականությամբ եղել է գոմ: Նման ենթադրության հիմք են տալիս սալահատակի եզրային մասում երկու տեղ քարերի զույգավոր շարվածքները, որոնք սովորաբար պատրաստվել են գոմաղբը մաքրելու նպատակով: Բացի այդ, ի տարբերություն այլ բնակելի կառույցների սալահատակների, այս սալահատակը կավով ողողված և տափանված չէ, ու քարերը երկար ժամանակ անասունների ոտքի տակ լինելու հետևանքով դարձել են ողորկ և փայլուն:

Այս գոմից արևելք, ավելի բարձր մակարդակ ունեցող 14,2մx8,7մ սալահատակով շինության պատերը ժամանակին ամբողջովին հեռացվել են, և հողով ծածկված սալահատակի վրա արդեն այլ առանցքով կառուցվել են ուրիշ շինության պատեր, որոնց հիմքերը սալահատակից մոտ 0,4մ ավելի բարձր են: Պեղավայրի արևելյան հատ-

---

* *Հոդվածի առաջին մասը տե՛ս ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, II, Գյումրի, 1999, էջ 47-59:*

վածում կառուցապատումը կատարվել է ասաիճանաձև բարձրացող արհեստական դարավանդների վրա: Լանջն ի վեր սրանց տարբերությունը միմյանց նկատմամբ 0,7-1մ է: Այս հատվածում սկզբնական կառույցները հետագայում կատարված վերակառուցումների և մեծ խառնությամբ կատարված թալանների պատճառով համարյա չեն պահպանվել: Միայն բլրալանջի ստորոտի մասում հայտնաբերվեցին երկու սենյակներ՝ հյուսիսայինը 6,5մx5,8մ, հարավայինը՝ 6,5x3,9մ չափերով(նկ.2) :


նկ. 2

Սկզբնական շրջանում սրանք հաղորդակցվել են, սակայն հետագայում մուտքը փակվել է քարե շարվածքով և հյուսիսային սենյակի արևելյան պատի մեջ, հյուսիս-արևելյան հատվածում բացվել է այլ մուտք: Հարավային սենյակի արևելյան կողմում՝ դրսում, մուտքի դիմաց սալարկված փոքր հրապարակում, իրարից 1,3մ հեռավորությամբ դրված էին երկու տորաձև խարիսխներ, որոնք ամենայն հավանականությամբ զոհասեղաններ են: Սրանցից արևելք այլ կառույցներ չկան: Այստեղ հայտնաբերվեցին մոտ 2մ խորությամբ չորս կենցաղային հորեր, որոնք լցված էին մոխրով, խեցեղենի բեկորներով և կենդանիների ոսկորներով: Հորերից մեկում կատարված էր ստանց որոշակի ծիսակարգի զույգ թաղում:

Հյուսիսային սենյակի հյուսիսային պատի ամբողջ երկայնքով պատրաստված է քարաշար նստարան, իսկ արևելյան պատի երկայնքով կառուցված նստարանը սկսվում է հարավային անկյունից և ունի 2,5մ երկարություն: Սենյակի ամբողջ հատակը սալարկված է մեծ և միջին չափերի սալերով: Սալահատակի մեջ, արևելյան պատից 2,9մ հեռավորությամբ, հյուսիս-հարավ առանցքով դրված են քառակուսի երկու տուֆաքարեր, որոնք ծառայել են որպես սյուների խարիսխներ: Սրանց հեռավորությունը հյուսիսային և հարավային պատերից մոտ 1,6մ է, իսկ միջսյունային թռիչքը 2,4մ: Հյուսիսային սենյակի արևմտյան պատի հարավային ծայրում կա 1,1մ լայնքով խորշ, որը կարող էր անցում լինել դեպի հաջորդ դարավանդի վրա գտնվող շինությունը:

Հարավային սենյակի մուտքը արևելյան պատի հարավային ծայրում է և ունի 1,1մ լայնություն: Սենյակի արևմտյան կողմը սալահատակված է: Սալահատակի մեջ՝ արևմտյան պատի մոտ, կիս կոպիտ տաշվածքով: կլորավուն անսք ունեցող 0,8մ տրամագծով սև տուֆից սյան խարիսխ: Արևելք-արևմուտք առանցքով 2,4մ հեռավորությամբ հատակի մեջ թաղված է կարմրավուն տուֆից խնամքով պատրաստված երկրորդ խարիսխը, որն ունի էլիպսի ձև: Խարիսխի տրամագիծը 0,5մ է: Կենտրոնական մասում այն ունի մոտ 3սմ բարձրության 0,3մ տրամագծով նույն ձևի բարձ: Այս երկու սենյակներից հայտնաբերված առաջին շերտին վերաբերող որոշ նյութեր՝ արևի պատկերմամբ կավե վահանակը (տախտակ 1, նկ.3), կենդանակերպ աբձանիկի ոտքը (տախտակ 1, նկ.5), դրսում՝ արևելյան կողմում գտնվող երկու խարիսխ - զոհասեղանները, չորս կենցաղային հորերը և այլ նյութեր հիմք են տալիս եզրակացնելու, որ այս կից սենյակները սկզբնական շրջանում պատկանել են պաշտամունքային կառույցի:

Բնակավայրում, ըստ հայտնաբերված նյութերի (սրանց մանրամասն դիտարկումը առանձնակի ուսումնասիրության նյութ է), մ.թ.ա. I-ին դարի կեսերին տեղի է ունենում մեծ հրդեհ: Հրդեհի պատճառները պարզ չեն, սակայն ռազմական գործողությունների հետքեր՝ զենքեր, նետասլաքներ, մարդկային մնացորդներ և այլն չեն հայտնաբերվել: Հրդեհը տարածվել է ամբողջ բնակավայրով: շուրջ 3000$մ^2$ պեղված տարածքում առկա

է այս շինարարական հորիզոնի հատակներին նստած մոտ 1մ հաստությամբ մոխրով, սրով և փայտածխով հագեցած շերտ:



նկ. 3

Հրդեհից հետո բնակավայրում որոշ ժամանակ կյանքը դադարել է, այնուհետև սկսվել է նոր կառուցապատում: Այրված կառույցները մեծ մասամբ չեն վերականգնվել, այլ դրանց փլատակների վրա կառուցվել են նորերը, ինչպես օրինակ՝ աղյուսաշեն պատերով սենյակում, ուր թափված աղյուսների կույտերի վրա պատրաստվել էր նոր հատակ (նկ.3): Լավագույն դեպքում օգտագործվել են վաղ կառույցների կանգուն մնացած պատերը, որոնք ամրացվել են նոր շարքերով: Կանգուն մնացած որոշ սենյակներ միջնորմներով բաժանվել են մասերի, ինչպես օրինակ արևելյան կողմի հիշատակված պաշտամունքային կառույցը, ուր երկու սենյակները հաղորդակցող մուտքը փակվել է, իսկ հարավային սենյակում էլիպսաձև խարիսխի կողքին կառուցվել է 2,8մ երկարությամբ միջնապատ, որը սենյակը բաժանում է երկու մասի:

Հրդեհը ոչնչացրել է նաև մոնումենտալ կառույցը:[1] Սյունազարդ դահլիճից երկու խարիսխներ հանվել և տեղափոխվել են, իսկ հարավային երկու խարիսխները գտնվում էին թեքված դիրքում: Հնարավոր է՝ սրանք նույնպես հանվել էին տեղափոխելու նպատակով:

Հրդեհից հետո բնակավայրում կյանքը առ ժամանակ ընդհատվել է, սակայն քիչ անց ամբողջ տարածքում սկսվել է նոր կառուցապատում: Մոնումենտալ համալիրի արևմտյան կողմում, օգտագործելով համալիրի արևմտյան պատը, ավելացվել է մի այլ կառույց, որի պատերը նախկին պատերից ավելի հաստ են (նկ. 3):

Այն բաղկացած է 11,5մx6,5մ սրահից և սրան հարավային կողմից հաղորդակցվող 4,2մx6,5մ սենյակից: Սրահի արևմտյան և արևելյան պատերի առկ կառուցված են քարաշար մույթեր: Սրանցից առաջինը սկսվում է հարավ-արևմտյան անկյունից 1,5մ հեռավորությամբ և ունի 6մ երկարություն: Երկրորդը՝ հարավ-արևելյան անկյունից և ունի 7,5մ երկարություն: Սրանց առջև հատակը սալարկված է մեծ և միջին չափի սալերով և քարերով: Արևելյան սալահատակը ավելի որակյալ է, ունի հստակ ուղղանկյան ձև: Սալահատակի եզրին երկու տեղ քարերն ունեն զգուշաձև շարվածք, ինչը զոհարքի մաքրման համար է: Այս շինությունը ամենայն հավանականությամբ զոհ է: Արևելյան սալահատակի եզրը համապատասխանում է զոհի երկայնակի կենտրոնական առանցքին: Այստեղ սյուների խարիսխներ չեն հայտնաբերվել, սակայն սալահատակի եզրային վերջին քարը սյան քառակուսի խարիսխ է: Սրա հեռավորությունը հյուսիսային պատից մոտ 5մ է: Նկատի ունենալով, որ բացի սյունազարդ դահլիճից, մնացած սյունաշարերի թռիչքը 2,4 կամ 1,6 մետր է, պարզ է դառնում, որ այստեղ ևս օգտագործվել է միջսյունային 2,4մ թռիչքը: Հյուսիսային պատի և սալահատակի եզրային խարիսխի միջև առանձին դրված սյան խարիսխ չի հայտնաբերվել, սակայն սալահատակի երկայնակի եզրի ևս երկու քարեր նույն թռիչքի հաշվարկով ծառայել են որպես խարիսխներ: Զոհին հարավից հարող սենյակի հարավային և արևելյան պատերը քանդվել են հետագայում այստեղ կատարված նոր շինարարության պատճառով:

---

[1] Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, *Բենիամինի անտիկ դաստակերտի հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությունը (մասն I), ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, II, Գյումրի, 1999, նկ. 5:*

Ինչպես նշվեց վերևում, հրդեհից հետո բնակավայրի տարածքում կատարվում է նոր կառուցապատում, սակայն որոշ հատվածներ մնում են բաց: Մասնավորապես՝ սյունազարդ դահլիճի տարածքը վեր է ածվում բակի, (այստեղ մոխրաշերտին հաջորդում էր սևահողը): Աղյուսաշար պատերով կառույցի տեղում և նրան հյուսիսից հարող ամբարներով տնտեսական կառույցի հատվածում նոր շինություններ չեն կառուցվում: Դա ակնառու է r-11 քառակուսու նորակառույց սենյակի օրինակով, որի հյուսիսային և հարավային պատերը կառուցված էին քարերի մեկ շարքով: Նման պատերը կայուն էին կանգուն լինել միայն այն դեպքում, եթե դրանց հանում հողի լիցք լիներ[2]: Այս սենյակի հատակը և հիշատակված պատերի հիմքերը առաջին շրջանի հատակից մոտ 1 մետրով ավելի բարձր են: Առանձնահատուկ ուշադրության է արժանի սենյակի հարավային պատին հարող եռանկյունաձև կառույցը (նկ.4): Այն



Նկ. 4

պատրաստված է հատակի վրա, 75սմ երկարությամբ և 20-25սմ լայնությամբ եբկաւական առւֆե սալեթից, որոնք հիմքում միմյանցից ունեն մոտ 0,5մ հեռավորություն: Չնայած հակվածությանը, վերին մասում դրանք չեն միանում և ամրացված են եղել մանր քարերով ու կավով: Սրա մեջ հայտնաբերված մոխրի չնչին քանակությունը կասկածի տակ է դնում կառույցի օջախ, կամ կրակարան լինելը: Այն իր ձևով կրկնում է առաջին շերտից հայտնաբերված կրաքարե կուռքին[3] ու եռանկյունաձև ծիթաճրագներին (տախտակ 1, նկ. 12) և նույնպես կարող էր պաշտամունքային նշանակություն ունենալ:

Ըստ հայտնաբերված նյութերի՝ բնակավայրը կարճ ժամանակում սկսել է նոր վերելք ապրել: Թվում է առել է կառուցապատման նոր շրջան, որը բնորոշվում է երկրորդ շրջանի որոշ կառույցների ընդարձակմամբ և նախկին կառույցների առանցքից մոտ 45° շեղված առանցքով նոր կառույցների շինարարությամբ: Քանի որ երկրորդ և երրորդ շինարարական շրջանները շերտագրական առումով հստակ չեն տարանջատվում, ուստի դրանց ժամանակագրական հաջորդականությունը հնարավոր է դիտարկել միայն շինարարական հորիզոնների, վերակառուցումների և տարբեր խորություններից հայտնաբերված նյութերի համալիր բաղդատմամբ: Խնդիրը բարդացնում է այն հանգամանքը, որ երրորդ՝ վերին շերտը տեղամասի տարբեր հատվածներում ունի 0-0,5մ հզորություն և դուրս է գալիս մակերես: Երրորդ շերտը խիստ խաթարվել է հողաբարելավման աշխատանքների և պեղված հատվածում կուտարված բավականին խիտ թաղումների պատճառով:

[2] Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, նույն տեղում, նկ. 1:
[3] Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն. նույն տեղում, նկ.9:

Երկրորդ և երրորդ շերտերից պահպանվել են մի քանի սալարկված սենյակներ, սակայն որևէ սան ամբողջական պատկեր դեռևս չկա: Փոխվում է սալահատակների ձևը՝ եռնայնակի պատերին հարող սալահատակները ուղիղ անկյամբ շարունակվում են նաև կից պատերից մեկի երկայնքով կամ մի քանի վերակառուցումների արդյունքում սալարկվում է ամբողջ հատակը:

Նկ. 4

Սալահատակների եզրային քարերի շարքը դառնում է սալահատակի ընդհանուր մակերեսից ավելի բարձր: Հանդես են գալիս ճարտարապետական նոր մանրամասներ, որոնցից են՝ քառակուսի, վրան ավելի փոքր նույնատիպ բարձ ունեցող և խորանարդաձև, վերևում շրջանագիծ առանձնացնող ելուստակով վերին անկյունները կլորացված սալքված խարիսխները: Փոխվում են նաև պարենային ամբարների շարվածքների ձևերը: Խոշոր և միջին քարերով շարված կեղծ թաղով ամբարներին փոխարինում են մանր՝ բոնցքաչափ և փոքր-ինչ մեծ քարերից շարված առանց կեղծ թաղի ամբարները: Սրանք ևս խնամքով սվաղված են կավով և դուրս են գալիս հատակի մակերես:

Երկրորդ շրջանում կառուցված և հետագայում վերակառուցմամբ ընդարձակված շինության ակնառու օրինակ է պեղավայրի կենտրոնական մասում, g-t 9-10 քառակուսիներում գտնվող 12,5մ երկարությամբ և 6մ լայնությամբ սրահը[4]: Սրահի արևմտյան պատի երկայնքով քարաշար նստարան կա, որին հարում է 11,5մ երկարությամբ և 2,2մ լայնությամբ սալահատակը: Սալահատակը ուղիղ անկյամբ և արդեն 2,4մ լայնությամբ շարունակվում է կից՝ հյուսիսային պատի երկայնքով: Հյուսիսային պատից 4,8մ հեռավորությամբ երկայնակի առանցքով, սալահատակին կից դրված է սև տուֆից պատրաստված, 0,5մx0,5մ ներքնատակով և 0,48մ սռի տրամագծով տորաձև խարիսխ: Այս սրահում հայտնաբերվեցին արդեն մեր թվարկության 2-4-րդ դարերում կատարված 17 սալարկված դամբարաններ, որոնց կառուցման ժամանակ, հավանաբար է, մյուս խարիսխները կորսվել են:

Ինչպես տեսնում ենք, երկրորդ շրջանում նույնպես միջսյունային 1,6մ, և 2,4մ, կամ դրանց մի քանի պատիկը կազմող թռիչքի չափը պահպանվում է:

Այս սրահի արևմտյան պատի ներքին շարքը պատկանում է առաջին շրջանին, իսկ նույն պատի արտաքին շարքը և արևելյան պատը կառուցված են երդեհից հետո: Սրահը հյուսիսային և հարավային կողմերում հաղորդակցվում է նույն առանցքով շարունակվող այլ կառույցների հետ: Հարավային կողմում հստակ տեսանելի են առաջին և երկրորդ շինարարական հորիզոնները և երրորդ շրջանում կատարված վերակառուցումը: Հատկապես սենյակն արդեն երրորդ շրջանում կառուցված շինություն է, քանի որ սրա հյուսիսային պատը դրված է արդեն երկրորդ շրջանին բնորոշ, բոնցքաչափ քարերով կառուցված ամբարի վրա, որի հատակը համապատասխանում է առաջին շրջանի հատակներին, իսկ բերանը պետք է բացվեր մակերեսին մոտ:

Երրորդ շրջանի արդեն մոտ 45° ատտիճան շեղված առանցքով կառույցներ են պեղավայրի հարավային կողմում գտնվող k-i 11-12 քառակուսիների ու f-g 6 քառակուսիների սենյակները: Առանձնապես հետաքրքիր է երկրորդ կառույցը: Այն ունի մոտ 10մ երկարություն և մոտ 5,5մ լայնություն: Սրահի արևելյան պատի երկայնքով կառուցված է մոտ 0,8մ լայնությամբ քարաշար նստարան: Սենյակի հատակն ամբողջությամբ սալարկված է: Սալահատակը ծեփված էր կավի 5-7սմ սա-

[4] *Տե՛ս. ծան. 3:*

փանվսծ շերտով: Կավի շերտը հեռացնելուց հետո ակնառու դարձան սալահատակի վերակառուցման հետքերը: Սկզբնական շրջանում սալարկված է եղել սրահի միայն արևելյան կեսը, հետագայում սալարկվել է ամբողջ սրահը: Սրահի հյուսիսային պատի մեջ, հյուսիս-արևմտյան անկյունում եղել է անցում դեպի մոնումենտալ համալիրի արևմտյան կողմում կառուցված գոմը: Սրահի սալահատակի մեջ իրենց բարձրությամբ և քառակուսի ձևով առանձնանում են չորս սալաքարեր, որոնք ծառայել են որպես սյուների խարիսխներ: Երկայնակի առանցքով հյուսիսային և հարավային պատերից խարիսխների հեռավորությունը 3,2մ է, միմյանցից՝ 3,4մ: Լայնակի առանցքով՝ 1,65մ-2,1մ-1,65մ: Սյուների ոչ հավասարաչափ տեղաբաշխումը սրահի կենտրոնական մասում հուշում է, որ այստեղ կարող էր հազարաշեն ծածկ լինել: Երրորդ շինարարական շրջանում նս պահպանվում է նախորդ շինարարական հորիզոններից մեզ հայտնի մոտ 1,6մ և 2,4մ միջսյունային թռիչքը, որի հիմքում կարող էր 0,8 մետրին մոտ մոդուլ լինել: Այս չափը մոտ է փիլիտերյան կամ եգիպտական համակարգի՝ 1 քայլ = 6 ոտ = 1,575մ (1,59մ),[5] 6 կամ 3 ոտ չափին:

Ակնառու է մոնումենտալ կառույցի սյունազարդ դահլիճի և մնացած շարքային կառույցների մոդուլների տարբերությունը:

Բնակավայրի շերտագրական և շինարարական հորիզոնների դիտարկման արդյունքների համադրումը տարբեր շերտերից հայտնաբերված հսասակ թվագրվող նյութերի հետ թույլ է տալիս թվագրել նաև ճարտարապետական կառույցները և վերականգնել բնակավայրի այս հատվածի հիմնման, զարգացման և անկման փուլերը:

Խնդիր չունենալով ներկայացնել խեցեղենի բոլոր տեսակներն ու առանձնահատկությունները, թվագրման նպատակով հոդվածում կանդրադառնանք դրանցից միայն մի քանիսին:

Առաջին՝ ստորին շերտի խեցեղենը հանդես է գալիս կտրուկ կամ սահուն ռելիեֆային անցումով թաս-փիալաներով և ըմպանակներով, տափակ նստուկով ասիմետրաբար լայնացող իրանով, հարթ, հորիզոնական կամ ներս հակված շուրթով թասերով և պնակներով, (աղյուսակ 1, նկ 7,8) վորքր իարությամբ, փռված շուրթի եզրը փոքր-ինչ ցած կախված ափսեներով, հարթ նստուկով, ուռուցիկ իրանով, կարճ վզով, երեքնուկաձև շուրթով, ուսից շուրթին միացող կանթ ունեցող կժերով (աղյուսակ 1, նկ 13) և այլն: Առաջին շերտի գունազարդ խեցեղենի մեջ մեծ թիվ են կազմում կիսագնդաձև ու կիսաձվաձև թասերը, ըմպանակները, սափորները, տարբեր ձևի թասերը, ափսեները: Կիսագնդաձև թասերի մեջ գերակշռում են ցածր և փռված ձև ունեցողները, որոնց դեղին ներկված արտաքին կողմը զարդանախշված է սևով և կարմրով հաջորդաբար արված զիգզագներով, ծաղկաշղթաներով և այլ նախշերով (աղյուսակ 1, նկ 16): Որպես կանոն՝ նման ձև և զարդանախշ ունեցող թասերի ստորին մասը ավարտվում է օղակի մեջ վերցված խաչի պատկերով: Ներսի կողմում, այսօրինակ թասերը փոքր-ինչ ուռուցիկ շուրթի տակ ակոսագոտի ունեն: Թասերի ներսի սատառը ներկված է մուգ կարմիր գույնով, որի վրա սևով արված են բուսական կամ երկրաչափական բնույթի նախշեր: Այս թասերի աքաաքին ճոխ զարդանախշումը, և հատկապես կոնաձև նստուկի վրա եղած խաչի պատկերը, որը թասը ուղիղ դիրքով դնելու կամ ձեռքի մեջ պահելու դեպքում տեսանելի չէ, ցույց են տալիս, որ դրանք սովորաբար դրվել են բերանքսիվայր:

Առաջին շերտի գունազարդ խեցեղենի առանձին խումբ են սափորները: Այս շերտի սափորներին հատուկ են համեմատաբար տափակ ձևը և կարվածքում ուղղանկյունաձև կանթերը (աղյուսակ 1, նկ 1): Սրանք որպես կանոն ունեն բաց գույնի անգոբով պատված մակերեսին կարմիրով կամ այլ գույնով արված համակենտրոն շրջանագծերի տեսքով զարդանախշ, որի կենտրոնում քառաթև խաչի կամ բազմաթև աստղի պատկեր է:

Գունազարդման մեջ տարբեր համադրությամբ օգտագործված են սև, շագանակագույն, կարմիր, դեղին և սպիտակ գույները: Կարմիր դաշտի վրա նախշազարդումը կատարված է սևով, դեղին դաշտի վրա՝ սև և կարմիր գույներով, բաց- շագանակագույնի վրա՝ մուգ կարմիր, սրճագույն և սպիտակ երանգներով: Բաց ամանների (փոքր

---

[5] *Ռ. Վ ա ր դ ա ն յ ա ն, Հայաստանի չափերն ու կշիռները, Երևան, 1989, էջ107:*

թասեր, ափսեներ և այլն) փայլեցված աստառի վրա, կենտրոնում պատկերված են սև եզրագիծ ունեցող կարմիր կամ բաց-շագանակագույն խաչեր, որոնց թևերը շարունակվում են մինչև շուրթը: Եթե անոթների հիմնական զարդանախշումը կատարվել է ներքին կողմում, ապա արտաքին կողմում բավարարվել են միայն շուրթի մասի ժապավենաձև զունազարդմամբ, որի վրա այլ գույնով արվել են պարզ, կրկնվող զարդանախշեր՝ թեք գծեր, եռանկյունիներ և այլն (տախտակ 1, նկ 11):



Տախտակ 1

Զարդամոտիվները (երկրաչափական տարբեր պատկերներ, բուսանախշեր, զիգզագ և ալիքաձև, հաճախ բեկբեկվող գծեր, ծաղկաշղթաներ և այլն) իրենց կոմպոզի-

ցլտե լուծումներով համապատասխանեցվել են ամանների ձևերին, և դրանց ընտրության մեջ կա որոշակի օրինաչափություն:

Առաջին շերտի անոթների բազմերանգ զարդանախշումը հիմնականում կատարված է անփույթ, գծերն ունեն տարբեր հաստություն, զիգզագները անհամաչափ են և այլն: Առաջին շերտի խեցեղենի թվարկված յուրահատկությունները բնորոշ են Հայաստանի մ.թ.ա. 1-ին դարի խեցեղենին[6] և թույլ են տալիս առաջին շերտը և առաջին շինարարական հորիզոնը թվագրել մ.թ.ա. 1-ին դարի սկզբով և առաջին կեսով:

Երկրորդ շերտից, որը համապատասխանում է երդեհին հաջորդող կառուցապատման շրջանին, հայտնաբերված խեցեղենի մեջ դիտվում են ձևերի և գունազարդման փոփոխություններ: Կիսագնդաձև և կիսաձվաձև թասերը դառնում են ավելի հալաք: Արտաքին բազմերանգ գունազարդումը իր տեղը զիջում է միայն շուրթի մասում արված կարմիր ժապավենին: Թասերի ներսի աստառը հիմնականում գունազարդված է մուգ կարմիրով, որի վրա զարդանախշումը կատարվում է միայն սև գույնով (տախտակ 1, նկ 4): Ավելանում է չներկված աստառի վրա պարզ և անփույթ զարդանախշ ունեցող անոթների թիվը (տախտակ 1, նկ 6,15): Սրանց կողքին մեծ թիվ են կազմում նաև առանց նախշազարդման, ամբողջությամբ կամ միայն շուրթի մասում բաց-կարմրով ներկված անոթները: Նման գունազարդում ունեն նախորդ շերտում չհանդիպող, տափակ նստուկով, աղեղաձիգ լայնացող իրանից ցածր, դեպի ուղղահայաց կտրը ռելիեֆային անցումով պնակները (տախտակ 1, նկ 9): Տափաշշերը դառնում են հաստապատ և ավելի ուռուցիկ: Տափաշշերի կտրվածքում ուղղանկյունաձև, սավակ կտնթերը փոխարինվում են կլորավուն կանթերով: Համակենտրոն շրջանագծերը դառնում են ավելի հաստ և անփույթ արված (տախտակ 1, նկ 2): Այս երևույթները բնորոշ են Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի բոլոր հուշարձանների խեցեղենին,[7] և դրանց համադրումը թույլ է տալիս երդեհին հաջորդող շերտն ու կառուցապատման երկրորդ շրջանը թվագրել մ.թ.ա. 1-ին դարի երկրորդ կեսով և վերջով:

Երրորդ շերտից, որը համապատասխանում է շինարարական երկրորդ շրջանի շինությունների վերակառուցված հատվածներին և 45° շեղված առանցքով շինություններին, հայտնաբերված խեցեղենի մեջ դիտվում են ձևերի փոփոխություն ու նոր ձևերի առաջացում: Գունազարդ խեցեղենը դառնում է հազվադեպ, տափաշշերի բեկորների մեջ էլ հայտ են գալիս կարկատանի անցքերով բազմաթիվ բեկորներ, ինչը խոսում է դրանց արտադրության նվազման մասին: Շատանում են օղակաձև ոտքով անոթները և այլն: Ավելի վաղ շերտերում չհանդիպող խեցեղենի նոր տեսակներից են հարթ նստուկից դեպի պսակը ուղղագիծ լայնացող սևափայլ, մեծ գավաթը, որի իրանի միջին մասում ունեցել է տափակ ժապավենաձև կանթ, իսկ ներսի կողմում, շուրթից փոքր ինչ ներքև, ունի ակոսազարդ և այլն (տախտակ 1,նկ 14)[8]:

Երրորդ շերտի նյութերն, ըստ Հայաստանի և Անդրկովկասի համաժամանակյա հուշարձանների համանման նյութերի թվագրման, վերաբերում են մ.թ. 1-ին դարին[9]: Նույն թվագրումն ունի նաև ներմուծված, հռոմեական ծագում ունեցող կարմիր լաքապատ գավաթը:[10] (տախտակ 1, նկ 10) :

Բնակավայրի պեղված հատվածում կյանքը գոյատևել է մ.թ.ա. 1-ին դարի սկզբից մ.թ. 1-ին դարի վերջը: Մ.թ.ա. 1-ին դարի սկզբներին այստեղ կառուցվում է սյունազարդ, մեծ մոնումենտալ համալիր, որն ամենայն հավանականությամբ գալիս է փոխարինելու 2-րդ տեղամասի մ.թ.ա. 5-2-դարերի պալատական շենքին: Մ.թ.ա. 1-ին դարի կեսերին բնակավայրում տեղի է ունենում մեծ հրդեհ, որից հետո կյանքը կարճ ժամանակով ընդհատվում է: Մ.թ.ա. 1-ին դարի կեսերից բնակավայրը նոր վերելք է ապրում: Չնայած մոնումենտալ համալիրը չի վերականգնվում, սակայն հրդեհից

---

[6] *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Արտաշատ II, Երևան, 1981, էջ 100:*
[7] *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, նույն տեղում, էջ 121-123:*
[8] *Նման գավաթների բեկորներ կան անտիկ Շիրակավանի մ.թ. 1-ին դարի շերտից: Նյութերը հրատարակված չեն, տրամադրել է Ֆ. Տեր-Մարտիրոսովը, ինչի համար շնորհակալ ենք:*
[9] *Г. Т о р а ц я н, Культура древней Армении, Ереван, 1988, стр.179-181.*
[10] *M a r i e-H é l è n e et J a c u e s S a n t r o t, Céramiques communes Gallo-Romaines d'Aquitaine, Paris 1979, forme 105.*

անմիջապես հետո կառուցված որոշ համալիրներ նկատելի կերպով ընդարձակվում են, վերջ ինչ այլ առանձքով կառուցվում են նոր շինություններ: Մ.թ. 1-ին դարի սկզբներից բնակավայրը սկսվում է անկում ապրել:

Բենիամինի դաստակերտի հելլենիստական ժամանակաշրջանի կառույցների ճարտարապետության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մ.թ.ա. 1-ին դարում Հայաստանում կառուցվում էին եռանավ սյունազարդ դահլիճներ: Մոտ մեկ ու կես դար շարունակված կառուցապատման գործընթացի փուլային դիտարկման արդյունքում բացահայտվում են տարբեր գործառնության շենքերի հատակագծման սկզբունքների, շինարարական տեխնիկայի, ճարտարապետական մանրամասների զարգացման և ձևափոխման բազմաթիվ հարցեր: Ակնառու է, որ մ.թ.ա. 1-ին-մ.թ.1-ին դարերում շենքերի հատակագծման հիմքում ընկած են չափարանական որոշակի մոդուլներ, որոնք մոնումենտալ և շարքային կառույցների համար տարբեր են եղել:

АРХИТЕКТУРА ЭЛЛИНИСТИЧЕСКОГО ПЕРИОДА АНТИЧНОГО БЕНИАМИНА (часть II)

----Резюме ---- *----А. Хачатрян----*

В половине I века до н.э. в поселении происходит большой пожар, в результате которого уничтожаются монументальный комплекс с колонным залом, жилые и хозяйственные строения. После короткого перерыва жизнь в поселении возобновляется и начинается новый подьем, который продолжается до половины I века н.э.

По материалам раскопок установлено, что в основе планировки дворцовых и рядовых сооружений лежали две различные модули, которые соответствуют маршу колон.

Сопоставление изменений в планировке, в строительной технике и в архитектурных деталях разных периодов дает картину нринцыпов развития архитектуры и строительного дела античной Армении.

Жорес ХАЧАТРЯН

ОТРАЖЕНИЕ АХЕМЕНИДСКИХ ТРАДИЦИЙ В ЭЛЛИНИСТИЧЕСКОМ И ПОЗДНЕАНТИЧНОМ ПЕРИОДАХ

В середине VI в. до н. э. Киром было создано Ахсменидскос государство. Во времена Камбиса и Дария это государство расширилось и усилилось, превратившись в могущественную империю, в состав которой вошли многие страны Древнего Востока, в том числе и Армения. Но в начале царствования Дария Армения восстала против него и, по надписи Дария на Бехистунской скале, только после пяти тяжелых сражений 522-521 гг. до н. э. Армения снова была покорена[1]. По сообщению Геродота (III, 93, 94), Армения входила в XIII и XVIII сатрапии этого государства. Но в надписях ахеменидских царей эти сатрапии не упоминаются, и Армянское нагорье выступает как единая страна под названием Армина или Урашту[2].

До VI в. до н. э. история Армении была неразделима с Малой Азией, Ассирией, Ми444тапией. Население Армянского нагорья и Ирана имели общие древневосточные корни и истоки. Известно, что Ассирия и образованное на Армянском нагорье Урарту сыграли большую роль в формировании ахеменидской культуры,что подробно изложено у Р. Фрайа, Тирацяна и у других исследователей.

В течении более двухсотлетнего периода Ахеменидской империи происходила синкретизация в культуре и религии различных народов, входивших в состав государства. Этот процесс особенно активно шел в западном Иране. Политика, проводимая Ахеменидами, привела к созданию "единого мира", единой культуры и единого имперского придворного искусства, канонизация которого способствовала стандартизации и унификации произведений. Для этого уже Ассирией и Урарту была подготовлена почва.

Как отмечает И.М. Дьяконов "Ахсменидская государственно-административная практика оказала глубочайшее воздействие на все народы, вовлеченные в орбиту действия Ахеменидского государства. Лексика даже высокоразвитых, имевших старые государственные традиции, арамеев Месопотамии, Сирии и Палестины наводнена самой разнообразной ахеменидской терминологией, даже вовсе не административной; много ахеменидских заимствований, например, в греческом. В самом Иране ахеменидская административная терминология широко применялась парфянами"[3].

В Ахеменидский период началась "иранизация" армянской культуры, которая охватила разные сферы жизни страны. Влияние Ахеменидов па культуру Армении происходило в основном через мидийцев, особенно через атропатийцев. Этому способствовало соседство и тесные контакты, совместное проживание, смешанные браки, сходство быта и обычаев, о которых часто говорится в античных источниках. Мидийские и персидские племена начали проникать па Армянское нагорье еще с урартского времени, особенно VII-VI вв. до н. э. в связи с усилением Мидийского государства. Этот процесс продолжался и в дальнейшем. В VI в. до н. э. мидийцы захватили центральную часть Урарту и довольно долго оставались там. В результате в Армении оказалось довольно большое количество мидийцев и персов. Некоторые нахарарские (княжеские) дома, по Мовсесу Хоренаци (I, 30), имеют иранское происхождение[4]. К этому надо

---

[1] *Хрестоматия по истории древнего Востока. М., 1963, стр. 385-364; М. Дандамаев, Политическая история Археменидской державы. М., 1985, стр.92.*

[2] *И. Д ь я к о н о в, История Мидии. М.-Л., 1956, стр. 347-348; История армянского народа, Ер., 1971, стр.452.*

[3] *И. Д ь я к о н о в, Восточный Иран до Кира, История Иранского государства и культуры, М., 1971, стр.141.*

[4] *Н. А д о н ц , Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, стр. 320-321, 419-420; И.Дьяконов, История Мидии, М.-Л., 1956, стр.353.*

добавить, что правящая верхушка во главе с сатрапом и знатью Армении[5] были теснейшими узами связана с ахеменидской верхушкой. Страбоп сообщает: “Обычаи мидийцев большей частью те же, что и у армян, по причине сходства их стран. Мидийцы, однако, как говорят, являются родоначальниками обычаев армян и еще раньше персов, их владык и преемников господства в Азии... Что это верно, яснее всего видно на примере их одежды: тиара, китара, войлочная шапка, хитоны с рукавами и штаны, эта одежда удобна для ношения в таких холодных и северных странах, как Мидийские. ... Однако обычаи повежденного парода показались поведителям столь достойными уважения и подходящими для царской пышности[6],

Табл. I



После витвы при Гаугамеле (331-330 гг. до н. э.) Армения восстановила свою независимость. В Армении начался процесс эллинизации, который не препятствовал продолжению ахеменидских традиций. Сатрап Ервандд (Оронт), провозгласив себя независимым, одновременно принял официальный культ ахеменидов, почитаемую триаду – Ахурамазда, Анахиты и Митры, которые уже с середины IV в. до н. э. были синкретизированы с армянскими вожествами: Митра с местным вогом Арегом (Солнце), Анахит – с Лусин (Луна). Эта почитаемая триада в начале II в. до н. э. выла принята

[5] *Г. Тирацян, Древнеармянская культура: итоги изучения. В.сб., Культурное наследие Востока, Л. 1985, стр.122.*

[6] *Стравон, География в 17 книгах (пер., статья и комментарии Г. Страновского), Л., 1964, XI, XIII, 9.*

Арташесидами, а в дальнейшем и Аршакидами до официального ирипятия христиапства государственной религией в Армении (301 г.).

Известно, что ахеменидскне цари, осовспно Ксеркс I (486-465 гг. до н. э.), для обеспсчения единства и могущества государства, проводили ряд реформ, в том числе религиозного характера Это известные нам "антидэвовские" надписи Ксеркса на персепольских каменных табличках.

Строительная надись высечена Ксерксом в Армении, на Ванской скале[7] (привлизительпо 480-ые годы до н.э.). По Стравопу[8] "Мидийцы и армяне почитают все священные овряды персов. В особом почете культ Аиахиты у армян". В итоге, армянские воги дошли до нас в основном с иранскими именами.

В Армения существовал ряд храмов, посвященных Апахите – Арташатский, в овласти Екеляц в поселении Ерез и храм в овласти Тарон – Аштишатс; они входили в число восьми известных культовых мест, где цари Великой Армении совершали жертвоприношения. Имепем Анахит выла названа овласть -Анаитакан, а имепем Михра в армянском языке называется "храм" - "Mehean"[9].

Анахит выла покровительницей страны и столицы Армении Арташата, а Митра - покровитель армянских царей. Культ Митры и легенда, связанная с пим, отражаются и в эпосе армянского народа, Mher - это Митра.

На юго-западном углу террасы Персеполя выли найдены алтари из песчаника, которые увенчивались двумя каменными священными рогами.[10] Такие же известковые рога выли найдены в Арташате (тавл. II, 2), ввлизи VI холма Хор Вирапа, где до принятия христианства выл храм Анахит.

Табл. II



---

[7] *R. Kent, Old Persian. Grammer. Texts lexion, New Haven, 1953, p. 152-153; Ж. Хачатрян, К вопросу ов Ирано-Армянских культовых контактах "Вестник общест. наук" АН Арм ССР, 1981. 2, стр.54-56.*

[8] *Strabo, XI, XIV, 16.*

[9] *Гр.Ачарян, Этимологический коренной словарь армянского языка., т. III, Ер., 1977, стр.296.*

[10] *М. Дандамаев, В. Луконин, Культура и экономика древнего Ирана, М., 1980, стр.335-338; см. так же: Т. Златковская, У истоков европейской культуры, М., 1961, стр.107, рис.29; М. Мильчик, Б.Боренко. Город Крылатых выков, М., 1967, стр.107, "Сокровищница Атрея" XIII в. до н.э.*

Изображения Анахит[11] и Митры[12]" на глиняных статуэтках даются в нескольких композиционных вариантах. Анахит представлена как Великая богиня-мать, богиня плодородия. Митра изображен как вог-всадник (тавл. I, 2-4; II, 5) или стоящий мужчина с широко расставленными ногами, в обоих случаях без оружия. В одном варианте-это всадник, восседающий на несущемся в галопе или вздыбившимся коне, в другом варианте кони изображены спокойно стоящими с приподнятой левой ногой, как нередко можно встретить в древневосточных культовых сценах. В качестве примеров можно назвать рельефы Пальмиры (сцена жертвоприношения перед алтарем)[13], монеты Фрахата и Готарза"[14] (конец I в. до н.э. - I в. до н.э.) и т.д.

Все варианты Митры изображены с остроконечными головными уборами как изображены воги и предки Антиоха I коммагенского в Нимруд-даге и в Иране. Вышеупомянутые терракоты Армении, повидимому, свободно варьируют официальные культовые образы Анахит и Митры, не дошедших до нас в монументальной скульптуре.

Интересно отметить, что всадники на терракотовых статуэтках представлены в длинной, опоясанной одежде с повязанной веревкой, проходящей между ногами (тавл. I, 2, 3; II, 5). Такая одежда наблюдается в скульптурных изоовражениях Коммагены - в Нимруд-даге и Арсамее-на-Нимфее, Антиоха I и Митры(тавл. I, 1; II, 3), а также иа рельефе храма Бела в Пальмире- воги Агливол и Малаквел"[15], что подтверждает их ахеменидское происхождение. Они в пору существования парфянского государства выходят из употребления[16].

Ввиду того, что Коммагена и Софена Ервандидов (70-ые годы III в. до н. э.) создали объединенное царство[17], то считалось, что они носили одинаковую одежду. Поэтому для изучения армянской одежды приводились примеры изображений коммагенской скульптуры[18]. Находки статуэток Митры, как в овразе всадника, так и в образе стоящего мужчины, подтверждают факт существования такой одежды в Армении.

В западном Иране найден овлом верхней половины мужской терракотовой статуэтки с поднятыми над головой сомкнутыми вместе руками (тавл.III, 1). Р. Гиршман считает, что эта статуэтка представляет плакальщика и повторяет Луристанские бронзовые статуэтки[19]. В точно такой же позе глиняная статуэтка бородатого мужчины (верхняя часть) найдена в Арташате (I в.н.э.) (тавл.III,2). Обычно считается, что мужские статуэтки в такой позе изображают танцующих азиатов. Надо полагать, что статуэтки этих мужчин в такой позе и в пышной одежде представляют жрецов, которые исполняют траурные танцы во время культовых церемоний[20]. Как выше выло сказано, по Страбону, религиозные верования и обряды одинаковы у персов, мидян и армян. Официальный канцелярский язык Ахеменидов-арамейский, выл одновременно официальным языком сатрапа Оронта -Ерванда.

---

[11] *Ж. Х а ч а т р я н, Культ и иконография вогини Анахит в Армении и его контакты с эллинистическим миром, историко-филологический журнал (ИФЖ), 1985, 1, стр. 123-134.*

[12] *Ж. Х а ч а т р я н, К вопросу об ирано-армянских культовных контактах, стр. 54-73; Ж. Хачатрян, о трех группах терарктовых статуэток. Историко-культурное наследие Ширака. I Республиканский симпозиум. Тезисы докладов, Гюмри, 1994, стр. 34-35.*

[13] *E. S t r o m m e n g e r, M. H e r m e r. Fünf yahrtausende Mesopotamien, Mьnchen, 1962, s.269,273.*

[14] *J. de M o r g a n. Manuel de numismatique oriental, I, Paris, 1923-1936, p. 143, fig 143. 58.*

[15] *Д. Ш л ю м в е р ж е, Эллинизированный Восток, М.,1985., с.168-70, рис. 14.*

[16] *М.М а с с о н, Г. П у г а ч е н к о в а, Оттиски парфянских печатей из Нисы. Вестник древней и истории ВДИ,М., 1954, 4, стр.162.*

[17] *Г. Т и р а ц я н, Территория Ерваидидской Армении (конец VI-конец III вв. до н.э.), ИФЖ. 1981, 2, стр.83.*

[18] *Г. Т и р а ц я н, Заметки ов армянской одежде эллинистического времени, "Известия" АН Арм ССР (общ.н.), 1959.,11-12, стр. 97-101.*

[19] *R. G h i r s h m a n, Iran, Parthian and Sassanians, Tamcs and Hudson, 1962, P.104, fig.105.*

[20] *Ж. Х а ч а т р я н, О трех группах терракотовых статуэток, стр. .35.*

Приняв независимость, Ервандиды, а в дальнейшем и Арташесиды, продолжают традицию арамейского официального языка. Об этом свидетельствуют найденные на территории Армении арамейские надписи на межевых камнях, оставленных Арташесом I (190 - 160 гг. до н. э.)

Табл. III

1

2

3

4

В середине III в. до н.э. греческий язык уже проник в Армению (армавирские надписи). В эллинистический период делопроизводство в Армении, как и в других эллинистических государствах, велось как на арамейском, так и на греческом языках. Существовали как царские, так и провинциальные канцелярии.[21] Найденная в крепости

---

[21] *История армянского народа, I, стр.907-910; Г. Саркисян, О провинциях и провинциальных канцеляриях древней Армении, Древний Восток и мировая культура, М.,1981, стр.98-102.*

Гарни арамейская надпись, датируемая второй половиной II в. – началом III в., говорит о живучести этой традиции[22] в эпоху Аршакидов.

Известно, что многие малоазиатские династии вели свою генеалогию от ахеменидских царей или представителей их ближайшего окружения (Каппадокии, Понта, Коммагены и др.). Ервандиды также имели родственные связи с Ахеменидами, о которых сообщают Страбон[23] и греческие надписи Антиоха I Коммагенского[24]. В арамейской надписи, найденной па о. Севан, Арташес I севя называет Ервандидом, связывая тем самым себя с ахеменидами. Свою надпись Арташес I составляет по ахеменидским официальным канонам, в конце отмечая свое происхождение. Так ахеменидские надписи гласят "Дарий, великий царь, царь царей, царь стран, царь па этой земле, сын Гистаспа, Ахеменид". "Арташес, царь, сын Зареха, Ервандид"[25].

Портреты иа монетах армянских царей - Тиграна II (тавл.IV, 1), Артавазда II, Арташеса II и др. изображены с чуть конусообразной высокой тиарой, с четырьмя-пятью острыми зувцами, а также с боковыми висящими лентами и с затылочным покрывалом. Тот же рисунок головного увора царя мы встречаем па арташатских оттисках печати изображающих царя-всадника во время охоты(тавл. IV, 2). Рисунок этой тиары давно привлекал внимание исследователей[26], так как он идентичен тиаре ахменидских царей. По всей вероятности, получив независимость, такую же тиару носил и Ерванд. Подобную тиару носили коммагенские цари Митридат I (99 - 70 гг.до н.э.) и Антиох I (69 - 34 гг.до н.э. (тавл. I, 1, II, 3). Эти тиары армянских и коммагенских царей своим рисунком напоминают ахеменидские, с некоторой свободной интерпретацией.

Особый интерес представляет изображение орлов па короне арташесидов. Здесь орлы с наклонными головами расположены по ове стороны изображения солнца.

Орлы, как известно, с глубокой древности являлись самыми распространенными и почитаемым символом иева. В мифологии различных народов орлы являлись символом богов, их вестниками, связывающими их с космологическими представлениями. На Древнем Востоке изображение орлов широко распространено в искусстве и геральдике.

В урартский период на территории Армении изображения орлов встречается вокруг древа жизни, в геральдической позе, стоящих друг против друга[27] (Адельджеваз).

Орел у ахеменидских царей являлся штандартом. Согласно Элиапу основатель династии Ахемен выл вскормлен орлом.[28] "Говоряг, вудто там видели царский штандарт - золотого орла, насаженного на древко копья" сообщает Ксеяофонт[29]. Царь Коммагены Антиох I (69-34 до н.э.) в Нимруд-даге на скульптуре Дария I украсил его тиару ленточным поясом с изображениями орлов[30].

---

[22] *А.Перихаиян, Арамейская надпись из Гарни, ИФЖ, 1964, 3, стр.123-138.*
[23] *С т р а б о н, XI, XIV, 15.*
[24] *K. H u m a n n, O.Puchstein, Reisen in Kleinasien und Nordsyrien, Berlin, 1890, p.283, 304.*
[25] *Г. Т и р а ц я н, Новонайденная надпись Арташеса I, царя Армении, Вестник древней Истории, 1959, 1, стр.90.*
[26] *K.H u m a n n, O.Puchstein, Ук.соч., тавл. XXXVI, 2; XXXVIII, 2; XXXIX, 1,2; F.K. Dorner. Th.Goell, Arsameia am Nymphaios. Berlin, 1963, Taf. 48, 49A; J.H. Young. Commagenian Tiaras: Royal and Divine. American Journal of Archaeology, 68, 1964, 1, p.31; Г. Тирацян, Армянская тиара. Опыт культурно-исторической интерпритации, ВДИ, 1982, 2, стр.90-95, рис.I; Д. Шлюмберже, Эллинизированный Восток, М.,1985, стр.156, рис.140.*
[27] *E. B i l g i ç, B.O g ü n, Ehcavations at Kef Kalesi of Adilgevaz, 1964, "Anatolia", 1965, vol.8, fig.2; А.Демирханян, К мифопоэтическим истокам геральдических композиций (в связи с интерпретацией урартского рельефа из Кеф-калеси), Культурное наследие Востока, Л., 1985, стр.137-138, рис.4.*
[28] *Г.Т и р а ц я н, Культура древней Армении VI в. до н.э. - III в.н.э. (по археологическим данным), Ер., 1988, стр.53*
[29] *К с е н о ф о н т, Анавасис, I,X,12 (перевод, статья и примечание М. Максимовой), М.,-Л., 1951; см. также Ксенофонт, Киропедия, VII,1,4 (перевод Э.Фролова), М., 1976.*
[30] *R o m a n G h i r s h m a n, ук.соч., рис.78.*

В этом смысле интересен найденный в Эребуни ритон"[31] с иротомой всадника (выс.42 см.), который, вероятно, изображал армянского сатрапа Ерванда (Ж.Хармата). На головном уборе всадника с двух сторон изображены стоящие орлы с распростертыми крыльями и широко расставленными ногами. Нижняя округлая часть головного убора украшена четырьмя рядами спиралевидных и одним рядом волнообразным поясами. На воку у всадника изображен акинак. (табл.II, 1) Интересен ковер (чепрак), покрывавший синну коня, который в задней части оканчивается трехступенчатым выступом, очень характерным для ахеменидского искусства.

Аналогичный орнамент ковров встречается в ахеменидский период в Иране[32] (Маку, Персеполь, Пазырык и т.д.), на расписных сосудах в виде коня. На поверхности эребунийского ковра изображены рисунки сидящих друг против друга козла и быка.

На персепольских рельефах одежда сатрапа и высокопоставленных мидийских вельмож не имеет какой-либо орнаментации, что является обычным для парфянского и сасанидского периода[33]. Головные же уборы этих высокопоставленных вельмож украшались семейными и родовыми эмблемами. Вышеописанные изображения украшений на одежде и эмблемы головного убора у всадника - Ерванда на ритоне, датируемые первой половиной IVв. до н.э.,являются самыми древними проявлениями этих обычаев.

Таким образом, после падения ахеменидской империи, во времена независимого армянского царя Ерванда, на основе ахеменидской тиары был создан головной убор и геральдика Ервандидов[34]. В дальнейшем они были наследованы Арташесидами, так как Арташес I себя объявил Ервандидом. Он себя считал законным наследником и продолжателем армянского престола.

К ахеменидским (иранским) традициям восходит также создание пригородных заповедников - парадисов, парков с дикими зверями. озерами для охоты, отдыха и местами для увеселений[35]. Эта традиция широко применялась эллинистическими правителями Востока. в том числе армянскими царями при строительстве своих престольных городов.[36] Парадисы на территории Армении имелись при Ервандашате-столице Армении, построенной Ервандом. По сообщению М.Хоренаци: "Насадил он обширный лес с северной стороны реки и, огородив его стенами, собрал в нем быстроногих серн, стада ланей и оленей, онагров и кабанов. Размножились они и заполнили лес и служили забавой царю в дни охоты... Лесу он дал название Цниндоц"[37]. Аппиан[38] сообщает о парадисе при Тигранакерте: "В предместье города он возводит дворец с большими парками, охотничьими ловами и озерами". Об арташатском парадисе сообщают Фавстос Бузанд (III.18) и Мовсес Хоренаци (111,8). Царь Хосров насаждал лес от крепости Гарни до северной части Арташата, лес этот он назвал Хосровакерт.

Хазарапет - хилиарх, тысяченачальник - термин военный, перенесенный в гражданскую область еще при ахеменидах[39]. Он "занимал второе место после царя во всем

---

[31] *Б.А р а к е л я н, Очерки по истории искусства древней Армении (VI в. до н.э.-III в.н.э.), Ер., 1976, стр.42-43, табл. LVI, LVII.*

[32] *D. S t r o n a c h. Achemenid Village I at Susa and the Persian Migration to Fars, Iraq, XXXVI, 1974, p.244, pl. LIII 1-4.*

[33] *Р. Ф р а й, Наследие Ирана, М., 1972, стр.154.*

[34] *Ժ.. Խ ա չ ա տ ր յ ա ն, Հայկական թագը և զինանշանը, "Հայաստանի հրաշալիքները", Եր., 2000, էջ 29:*

[35] *К с е н о ф о н т, Киропедия, I, III, 14, VIII, I, 38; VIII, VI, 12 (Пер. В. Борухович и Э. Фролов), М.1976; Ксенофонт, Анабасис, I, 2, 7; Diod., XIV, 80, 2.*

[36] *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն , Հելլենիստական քաղաքաշինության որոշ ավանդույթների, Երվանդունյաց վայրի և Դվին քաղաքի հիմնադրման մասին, ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հաս. գիտ., 1987, 2, էջ 53-56:*

[37] *М. Х о р е н а ц и, История Армении, II, 41 (Пер. с древнеармянского языка, введение и примечания Г. Саркисяна), Ер., 1990.*

[38] *App., M i t h r., 84; Я. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен. Ер., 1954, стр.71, 72.*

[39] *История Армении Фавстоса Бузанда, Ер., 1953 г., ссылка 22.*

государстве и вез его согласия никто к царю не допускался."[40] В армянских источниках, у Мовсеса Хоренаци и Фавстоса Бузанда (III,XII), имеются упоминания хазарапета при Арташесидах и при Аршакидах.[41] Мовсес Хоренаци сообщает:"...Арташес назначает (из них) Вруйра, мужа мудрого и поэта, тысяченачальником и вверяет ему управление всеми делами царского дома.[42] С уверенностью можно сказать, что хазарапетство существовало еще и при первых Ервандидах (330-ые годы до н.э.).

Табл. IV

1 2 3

Большой интерес представляют особенно находки каменных гемм – из оникса, халцедона, горного хрусталя, сардиопа, в виде многогранника и скаравеоида. Все они овнаружены в памятниках и погребениях эллинистического времени – Сисианская гробница, Ошакан, Двин, Армавир и др. Сюжеты этих гемм стандартны – едниоборство всадника с пешим воином, ворьба царя со львом, медведем, кананом или чудовищем, ворьба перса с греком за которым стоит медведь, лев, нападающий на оленя и т.д.. Все они повторения излювленных тем ахеменидского искусства и так называемой "греко-персидской" глиптики. Эти сюжеты повторяются на стеклянных многогранниках и скаравеоидах I в. до н.э.[43]

Интересен тот факт, что часть ахеменидских гемм остались в употреблении даже во II-I вв. до н.э.. Ов этом свидетельствуют глиняные оттиски печатей, найденных в Арташате. Они имеют цилиндрическую форму и изображают различные сцены - пленников, царя на колеснице, охотившимся за львом, разные сцены охоты царя, ворьбу всадника с пешим (на всех характерные сатрапские, мидийские шапки). Также геммы

[40] *М. Дандамаев, В. Луконин, ук.соч., стр.123.*

[41] *С. Кркяшарян, Нахарары и нахарарства в древней Армении, Вестник общ. наук, 1978, 11, стр6-67.*

[42] *М. Хоренаци, II, 53, см.также II, 82.*

[43] *Ж. Хачатрян, Многогранные печати, найденные в Армении, ИФЖ, 1965,1, рис.2-5; Ж.Хачатрян, Замечание о глиптике Армении эллинистического периода. Вестник общ.наук, 1974, 7, стр. 97-104, рис.1-6; Г.Тирацян, Культура древней Армении, стр. 66-68, табл. XV-XVI; С.Есаян, А.Калантарян, Античный некрополь Ошакана, Вестник общ.наук. 1976, 12. стр.37-38, табл. IV,2,10,II.*

изображающие грифонов, сфинксов, горных козлов по сторонам "древа жизни", изображения других животных, инвеститурные сцены и т.д.[44]

В памятниках эллинистического времени Армении - Армавира[45], Арташата, Гарни, Гегадира, Нагорного Карабаха[46] и в других местах- найдены в большом количестве каменные изделия, ступки и пестики, вазы на ножках, шкатулки и другие предметы из гранодиорита, конгломерата, порфирита. – серо-зеленоватого или же сине-серого цветов. Все эти каменные изделия, как по своей форме, так и по материалу исполнения находят свои аналогии в ахеменидских памятниках – Персеполя,Суз и др..

В Арташате обнаружен амфороидный керамический сосуд с двумя ручками, удлиненной вытянутой формы, датируемый I в. н.э.. Нижняя часть сосуда оформлена двумя оленьими головами с отверстиями (табл. IV,3). Этот сосуд напоминает ритон ахеменидского времени Мингечаура[47].

Все вышеприведенные примеры свидетельствуют о стойкости ахеменидских традиций в постахемендский период в Армении.

ԱՔԵՄԵՆՅԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՇ ԱՆՏԻԿ ՇՐՋԱՆՈՒՄ

-----Ամփոփում ----- *----Ժ. Խաչատրյան -----*

Մ.թ.ա. VIդ. Կյուրոսի կողմից սաեղծված աքեմենյան պետությունը Կամբիսի և Դարեհի օրոք ընդարձակվեց ու վերածվեց եսկայածավալ եզոր կայսրության:

Նրա մեջ մտնում էին հին արևելքի շատ երկրներ, այդ թվում նաև Հայաստանը: Երկուհարյուրամյա տիրապետության ընթացքում տեղի ունեցավ կայսրության մեջ մտնող ժողովուրդների մշակույթների միաձուլում, որը բերեց «միասնական աշխարհի», միասնական մշակույթի և միասնական արքունական արվեստի ստեղծմանը:

Հոդվածում ցույց է արվում այդ շրջանում սաեղծված ավանդույթների կենսունակությունը Հայաստանում, հելլենիստական և ուշ անտիկ շրջանի նոգևոր և նյութական մշակույթի տարբեր ընագավառներում: Այն չխանգարեց նոր, հելլենիստական մշակույթի թափանցմանը Հայաստան:

---

[44] *Ж. Х а ч а т р я н. Армян-иранские культурные связи по оттискам печатей Арташата. VII республиканская научная конференция по армянскому искусству, тезисы докладов, Ер., 1995, стр. 27-28; Arménie Trésors de l'Arménie, ancienne des origines au IVe siecle. Nantes, 1996, 210a, b; 211a,b; 212, 213, 216, 224; J.D. Khatchatrian, "The Archives of sealings found at Artachat (Artaxata)", Bulletin de Correspondence hellenique, Suppl.29, 1996, p.365-370.*

[45] *Б.А р а к е л я н, О некоторых результатах археологического изучения древнего Армавира, ИФЖ, 1969, 4, стр.171, рис.15.*

[46] *Ж. Х а ч а т р я н, Археологические находки в Гехадире, Вестник общ.наук, 1966, 1, стр. 84-87, рис.2,3; Ж. Хачатрян, А. Канецян, Стратиграфия VIII-го холма Арташата, Вестник общ. наук, 1974, 9, стр.79.*

[47] *Т.Г о л у б к и н а, О зооморфной керамике из Мингечаура, Материальная культура Азербайджана, II, Баку, 1951, стр.117-118, 126, рис. 15,16,25,26; E. Haerinck, Twinspouted vessels and their distribution in the Near East from the Achaemenian to the Sasanian periods. Iran, XVIII, 1980, London, p.43, Fig.2:1 (of silver amphorae), Fig. 3:7, 3:6, 3:3 (of pottery), p.45-47; R. Ghirschman' Notes Iraniennes XI. Le Rhyton en Iran. Artibus Asiae, vol. 25, 1962, 1, p.79, fig.32 (Asie Mineure-argent).*

Լարիսա ԵԳԱՆՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ԱՆՏԻԿ ԹԱՂՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Վերջին տասնամյակների ընթացքում Շիրակում պեղվել են անտիկ ժամանակաշրջանի մի քանի դամբարանադաշտեր. Շիրակավան, Կարմրաքար, Առափի, Վարդբաղ և Բենիամին*: 1989-2000թ.թ. պեղվել է ավելի քան 300 դամբարան: ** Նույն ժամանակահատվածում Շիրակի մի շարք բնակավայրերում հողային և շինարարական տարբեր աշխատանքների ժամանակ բացվել են մի քանի թաղումներ: Կուտակվել է բավականին հարուստ նյութ, որը հնարավորություն է տալիս ընդհանրացված ձևով ներկայացնել Շիրակի մ.թ.ա. I- մթ 4-5-րդ դարերի թաղման ձևերը և ժամանակի ընթացքում դրանց կրած ձևափոխությունները ու զարգացումը:

Շիրակում անտիկ շրջանում կատարվել են հիմնահողային, կարասային, սալարկղային և քարարկղային թաղումներ: Նշված ձևերից յուրաքանչյուրն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնց ընդհանուր հատկանիշները թույլ են տալիս դրանք խմբավորել որպես թաղման հիմնական ձևի տարատեսակներ կամ ենթաձևեր:

Անկախ դամբարանների կառուցվածքային տարբերություններից և թաղման ձևից, անտիկ շրջանում Շիրակում կատարվել է միայն դիակդյամ:

ՀԻՄՆԱՀՈՂԱՅԻՆ ԹԱՂՈՒՄՆԵՐ. Շիրակի անտիկ դամբարանադաշտերում հիմնահողային թաղումներ հայտնի են Բենիամինից, Առափիից, Կարմրաքարից և Անուշավանից[1]: Հիմնահողային թաղումները չունեն հաստատուն կողմնորոշում: Բենիամինում հանդիպում են հարավ-հյուսիս (թիվ 43բ,90,129...),հյուսիս-հարավ (թիվ 10,16,30...), արևելք-արևմուտք (թիվ 121,127,177...) և հյուսիս արևմուտք-հարավ արևելք (թիվ 71 դամբ.), ինչպես նաև հարավ արևմուտք-հյուսիս արևելք (թիվ129) կողմնորոշմամբ թաղումներ: Առափիի թիվ 4 հիմնահողային թաղումն ունի հարավ-հյուսիս կողմնորոշում: Կարմրաքարի և Անուշավանի հիմնահողային թաղումներն ունեն արևելք-արևմուտք կողմնորոշում:

Թաղումների մեծ մասը կատարվել է հողի շերտի մեջ, աջ կամ ձախ կողքին կծկված դիրքով (նկ.1): Այսօրինակ թաղումներ բացվել են Բենիամինի առաջին աեղամասում՝ բնակելի հատվածում (16,30,43բ,126,149,189...):

Կծկված դիրքով մանկական մի թաղում (թիվ 127) բացվել է բնակավայրում՝ բազմագործառական մի շինության մեջ՝ տափանված հատակի տակ: Թաղումը վերա-

---

* *1977-1983թ.թ. Ֆ.Տեր-Մարտիրոսովը անտրյ դամբարաններ է պեղել Շիրակավանում: Տե՛ս Ф.Тер-Мартиросов, Раскопки у села Ширакаван. Орхеологические открытия 1977года. М.,1978; Ф.Тер-Мартиросов, Г.Караханян, Раскопки поселения и некрополя античного Ширакавана. ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ Գիտական Աշխատություններ, I, Գյումրի, 1998, էջ 17-29:*

Ա.Կանեցյանը կարասային մի քանի թաղումներ է պեղել Ջրափիում: Տե՛ս Ա.Կանեցյան, Հին Ջրափիի պեղումները. ՀԱԻ դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզիսներ, Եր.,1981. էջ 32-33:

1992թ. Կարմրաքարի դամբարանադաշտը պեղել է Հ.Հակոբյանը: Տե՛ս Հակոբյան Հ. Կարմրաքարի դամբարանադաշտի 1992թ. պեղումները. ՀՀ 1991-1992թ.թ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Եր., 1994,էջ 41-43:

1990թ. Վարդբաղի դամբարանադաշտը պեղել է Սա.Տեր-Սարգսյանը: Տե՛ս Սա. Տեր-Սարգսյան, Կումայրիի « Վարդբաղ» սարահարթի անտիկ դամբարանադաշտի պեղումները. ՀՀ ԳԱԱ ՀԱԻ 1989-90թ.թ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Եր., 1991, էջ 95:

*** Ներկա հոդվածում հիմնվել ենք դամբարանադաշտերի մեր կողմից կատարված պեղումների արդյունքների վրա (Կարմրաքար 1987թ., պեղումների ղեկ .Ս.Հարությունյան, Առափի 1989թ., պեղումների ղեկ. Հ. Խաչատրյան,Վարդբաղ 1989թ. պեղումների ղեկ՝. Հ.Խաչատրյան, և Բենիամին 1989-2000թ.թ.պեղումների ղեկ՝. Ֆ.Տեր-Մարտիրոսով):*

[1] *Եգանյան Լ. Դրասխանակերտի անտիկ դամբարանադաշտի հիմնահողային թաղումները. ՇՊՄԺ հանրապետական 2-րդ գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1996, էջ 20-21:*



Նկ. 1

բերում է բնակավայրի կենսագործունեության ժամանակաշրջանին և թվագրվում է մ. թ. ա.1-ին դար: Անտիկ ժամանակաշրջանում ընդունված էր բնակարանում թաղում կատարելը: Հատակի տակ կատարված հիմնահողային թաղումներ հայտնի են Արտաշատից,[2] Դվինից [3] և Շիրակավանից:[4] Ինչպես և Բենիամինում, Շիրակավանի և Արտաշատի 1,7,8 բլուրների թաղումները մանկական են: Նմանատիպ թաղումներ հայտնի են նաև Վրաստանից:[5] Շիրակավանում հատակի տակ կատարված թաղումները Ֆ.Տեր-Մարտիրոսովին հանգեցրել են այն կարծիքին, որ այսպես թաղվել են համայնքի ոչ լիիրավ անդամները և ստրուկները, որոնց ընդհանուր գերեզմանոցում չէին թաղում, այլ այն տարածքում, ուր նրանք ապրում էին [6]:

Բենիամինում թիվ 127-ը միակ թաղումն է, որ բացվել է սյունազարդ դահլիճի տափանված հատակի տակ: Շինությունը բազմագործառույթային բնույթ ունի, և բացառված չէ նրա պաշտամունքային լինելը:[7] Համաձայնելով Ֆ.Տեր-Մարտիրոսովի վերը բերված կարծիքին և ելնելով այն հանգամանքից, որ թաղումը բացվել է նշված կառույցի հատակի տակ, հնարավոր է, այստեղ թաղվել է տաճարային ստրուկներից մեկը:

Կան հիմնահողային թաղումներ, որտեղ կմախքն ունի ուղիղ, մեջքի վրա դիրք (Կարմրաքար, թիվ 20,21,22): Նման մի թաղում բացվել է Առաիիում (թիվ 4), ուր աջ ձեռքը դրված է իրանի երկարությամբ, իսկ ձախը արմունկից ծալված է դեպի դուրս: Իրանի ուղիղ դիրքով թաղումներ հայտնի են Արտաշատից[8] և Շիրակավանից[9] և Վարդբաղից (Սա.Տեր-Մարգարյանի պեղումներ)[10]:Հիմնահողային թաղումների մեջ հանդիպում են նաև զույգ թաղումներ: Բենիամինի թիվ 121-ը իրար վրա կատարված, կմախքների կծկված դիրքով զույգ թաղում է: Տղամարդը կծկված է աջ, կինը՝ ձախ կողքին:Այս թաղումները գուցե իրենց մեջ կրում են այր և կնոջ մեկ մարմին լինելու գաղափարը[11], որն այն աշխարհում ևս ենթադրում է միասնականություն պահպանում:

Ելնելով հիմնահողային թաղումներին բնորոշ՝ վերը բերված ծեսերի տարատեսակ դրսևորումներից, կատարել ենք խմբավորում՝ ըստ միավորող հատկանիշների:

Նստած դիրքով թաղումներ. Ի տարբերություն թաղման մյուս ձևերի, նստած դիրքով կատարված թաղումների նախնական դիրքը չի պահպանվում,և մկանունքի քայքայումից հետո, կմախքն ընդունում է տարբեր դիրքեր: Բենիամինում պեղվել են մի քանի թաղումներ, որոնք բացելիս ունեին ընդանքսիվայր դիրք, սակայն ակներև է, որ նախապես ունեցել են նստած դիրք (թիվ 71, 125, 217): Թիվ 71 թաղումը բացվել է

---

[2] *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն ,Արտաշատ II. Եր., 1981. էջ 23:*

[3] *Գ. Ք ո չ ա ր յ ա ն ,Դվինը անտիկ ժամանակաշրջանում. Եր., 1991. էջ 31:*

[4] *Ф.Т е р –М а р т и р о с о в Г.К а р а х а н я н, նշվ. աշխ.. էջ 44:*

[5] *Ю. Г а г о ш и д з е, Памятники эллинистической времени из Самадло. ВГ МГ XXVII-B. Тбилиси 1967, табл. 1/24.*

[6] *Ф.Т е р –М а р т и р о с о в. Г. К а р а х а н я н, նշվ.աշխ. ,էջ 44:*

[7] *Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն ,Բենիամինի դասասկերտի հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությունը. Գիտական աշխատություններ II, Գյումրի, 1999, էջ 55:*

[8] *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 26:*

[9] *Ф.Т е р–М а р т и р о с о в, Г.К а р а х а н я н, Раскопки поселения и некрополя античного Ширакавана, ԳԱԱ ՇՀՀԿ Գիտական Աշխատություններ I,Գյումրի 1998, էջ 44:*

[10] *Սա.Տ ե ր –Մ ա ր գ ա ր յ ա ն, Կումայրիի « Վարդբաղ» սարաձքի անտիկ դամբարանադաշտի պեղումները. ԳԱԱ ՀԱԻ 1989-90թ.թ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Եր., 1991, էջ 96:*

[11] *Աստվածաշունչ, Գիրք Ծննդոց, 1922, Կ.Պոլիս, էջ 1347:*

ամբարի բերանին: Նստած դիրքից կմախքն առաջ է ընկել և ստացել բիրտնքսիվայր ձև: Թիվ 125-ը ծալապատիկ նստած թաղում է, որը նույնպես հետագայում ստացել է բերանքսիվայր դիրք: Այս թաղումը բացվել է 3-րդ տեղամասում, մ.թ.ա. 1-ին դարի շերտում: Կմախքի կողքին պահպանվել են խզեհացի հետքերը: Ոտքերի տակ հաստ մոխրաշերտի վրա դրված քարը մոտ 25սմ երկարություն ու լայնություն ունի և հավանաբար ծառայել է որպես զոհասեղան: Այստեղ պահպանվել է խոզի, ոչխարի ոսկորների խառնակույտը, ինչպես նաև կոկիչ: Կմախքի տակ գտնվել են մետաղյա իր, կավոլյա ապակուց եռոտիք: Այս թաղումների նախնական ձևը ենթադրելի է ոտքերի դիրքից. աճյունը նստեցրել են կամ ծալապատիկ, կամ ծնկները դեպի վեր կծկած ձևով (թիվ 10 և թիվ 177): Այսպես, թիվ 10 թաղումը, որ բացվել է մոնումենտալ համալիրի 2-րդ սենյակի արևմտյան պատի տակ, սալահատակի վրա, ունեցել է նստած դիրք, հետագայում տափաբար սահել է դեպի ետ, իսկ դեպի վեր կծկված ծնկները մնացել են սկզբնական դիրքում (նկ.2): Թիվ 177 թաղումն ունի իրանի ուղիղ, մեջքի վրա դիրք, իսկ ոտքերը ծնկներից ծալված են վեր: Այս թաղումները թվագրվում են մ.թ.ա.1-մ.թ. 1-ին դարերով:

Ծնկաչոք նստած դիրքով մեկ այլ թաղում բացվել է 1-ին տեղամասում, ամրոտրանադաշտի արևելյան հատվածում (թիվ 217): Ոտնաթաթերը ետ են ծալված: Ձախ ձեռքը 45 աստիճան անկյան տակ ծալված է հա: Կմախքն ընկած է քարակույտի վրա: Աճյունը ամփոփվել է հատակի տակ, որի վրա 20սմ մոխրաշերտ է: Թաղումը վերաբերում է մ.թ. 1-ին դարին: Բենիամինի թիվ 218 թաղումը մեջքի վրա է, ոտքերը ծնկներից ծալված վերև: Ակներև է, որ դիրքը իրանը ետ ընկնելու արդյունք է:

Շիրակի հիմնահողային թաղումների ձևերի քննությունը ցույց է տալիս, որ հողի շերտի մեջ, աջ կամ ձախ կողքին կծկված կամ նստած դիրքով, ինչպես նաև սենյակների ամփոփված հատակների տակ կատարված թաղումներն իրենց զուգահեռներն ունեն Հայաստանի և հարևան երկրների համաժամանակյա հուշարձաններում և թվագրվում են մ.թ.ա.1-մ.թ.1-ին դարերով:

ԱՄԲԱՐՆԵՐԻ ԵՎ ՀՈՐԵՐԻ ՄԵՋ ԿԱՏԱՐՎԱԾ ԹԱՂՈՒՄՆԵՐ. Բենիամինում թաղումներ են բացվել նաև ամբարների 7 հորերի մեջ: Ամբարները մանր կամ միջին մեծության քարաշար պատերով, կեղծ թաղով շինություններ են, որոնց հատակին կատարվել են թաղումները (թիվ 79, 90,129): Թիվ 79 թաղումը բացվել է 1-ին տեղամասի բնակելի հատվածի տնտեսական մասում: Ամբարը, որի բերանը բացվում է մ.թ.ա. 1-ին դարի հատակի վրա, կիսավեր է, կեղծ թաղը չի պահպանվել: Մանր քարերի շարվածքով պատերի վրա տեղ-տեղ պահպանվել են ծեփի մնացորդներ: Ամբարը բավականին մեծ է. (հատակի տրամ. 140սմ է, պահպանված հատվածի խոր. 170սմ): Թաղումը կատարվել է ամբարի հատակին: Կմախքն ունի աջ կողքին կծկված դիրք, ծալված ձեռքերը իրար միացած դիրքով հանգչում են կրծքին: Նույնպիսի մի թաղում բացվել է 3մ հեռավորությամբ բացված նույն ժամանակաշրջանի մի այլ ամբարի մեջ: Այս ամբարը ավելի փոքր է (հատակի տրամ. 90 սմ է, խոր.104սմ), կեղծ թաղն ավարտվում է 35x35սմ չափերի սալաքարով փակված բերանով: Թաղումը կատարվել է ամբարի հատակին, աջ կողքին կծկված դիրքով:Ծալված ոտքերը սեղմվել են կրծքին, իսկ արմունկներից ծալված ձեռքերը ծնոտի տակ իրար են միացել: Տարածքը, որտեղ բացվել են թիվ 79 և թիվ 90 ամբարային թաղումները, բնակելի համալիրի տնտեսական մասն է: Թաղումներն այստեղ կատարվել են մ.թ.ա. 1-ին դարում՝ բնակելի համալիրի կենսագործունեության ժամանակ, երբ ամբարներն կորցրել էին իրենց նախնական դերը, բայց ամբողջությամբ (թիվ 90), կամ մասամբ (թիվ 79) պահպանված էին:

Ամբարի մեջ կատարված մեկ այլ թաղում է բացվել երկրորդ տեղամասում՝ պալատական համալիրի բլրի ստորոտում, ուր մելիորացիայի հետևանքով մշակութային շերտը հեռացվել է ընդհուպ մինչև մ.թ.ա. 1-ին դարի կառույցների հատակների մակարդակը:[12] Այս ամբարը ևս կեղծ թաղով շինություն է, որի վերին չորս քարով ավարտվող մասը կազմում է 40x35սմ չափերի բացվածքով բերանը (նկ.3): Պատերն ունեն կանոնավոր շարվածք. խորությունը 265սմ է, հատակի տրամագիծը՝ 190սմ: Ամբարի հատակին շարված են հում աղյուսից 12 սալիկներ, որոնք իրենց ձևով երկրա-

[12] Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն , նշված աշխ., էջ 47:

փակյան սեղան են, ունեն միևնույն երկարությունը՝ 70սմ, լայնաթյունները տարբեր

Նկ 2



Նկ. 3

են՝ 35-45սմ: Սալիկների շարվածքը շրջանաձև վարդյակ է, որի կենտրոնում ընկած մի քանի անկանոն քարերի վրա էլ կատարվել է ձախ կայքին կծկված դիրքով: Գանգը ուղղված է հարավ արևելք, աջ ձեռքը ձգված է իրանի երկարությամբ, ձախը՝ ծնոտի մոտ: Կմախքի դիրքը (հատկապես ոտքերի և ձեռքերի պրկվածությունը) հուշում է, որ այն կարող է մահվան պահին ստացած ձև լինել: Ըստ մարդաբանականավյալների (Ա. Խուդավերդյան), թաղվել է 20-30 տարեկան կին: Թաղումը վերաբերում է մ.թ.ա.1-ին դարին: Բոլոր այս թաղումներում ուղեկցող նյութը բացակայում է:

Ամբարների մեջ կատարված թաղումներ հայտնի են Ծամիրամից և Կոշից[13]: Այս թաղումները դիտվում են որպես ջրեորանման դամբարաններ, որոնք կլոր կամ կլորավուն, ներքև մասում լայնացող և 1,20մ-1,50մ խորությամբ փոսեր են: Փոսերն ունեն միջին մեծության քարերի շարվածքով, լավ մշակված արտաքին մակերեսով պատեր: Թաղումները կատարվել են փոսի խորության մեջնամասում՝ հատակին շարված թաղման գույքի վրա, ավելի հաճախ՝ բեկորներով կամ խեցեղենով հագեցած քարահողային լիցքի վրա: Կմախքների դիրքերը տարբեր են: Հանդիպում են կողքի, կծկված, մեջքի վրա, ծալված ոտքերով, նստած և այլ դիրքեր:Աղքատիկ նյութ ունեցող այս թաղումները կատարվել են բնակավայրի պաշտպանական ճակատային պատից դուրս, անտիկ ժամանակաշրջանի բնակեցման առաջին շրջանում, վաղ երկաթիդարյան կառույցների մեջ:[14]

Ծամիրամի թաղումների մանրամասն նկարագրությունից պարզ է դառնում, որ ջրեորանման փոսերը մասամբ լցված ամբարներ են (դեպի ներքև լայնացող ձև, քարերով շարված պատեր): Կմախքների դիրքը (կծկված, մեջքի վրա, ոտքերը ծալված և այլն), ուղեկցող նյութերի բնույթը (բեկորային խեցեղեն, որը ավելի հաճախ քարի և հողի լիցք է) հիմք է տալիս ենթադրելու, որ այստեղ ևս թաղումները կատարվել իրենց դերը կորցրած, բայց մասամբ նախնական ձևը և տեսքը պահպանած ամբարներում:

Բենիամինում թաղումներ են բացվել նաև հորերի մեջ: Հորերն, ի տարբերություն ամբարների, հողի շերտի մեջ փորված, կենցաղային նշանակության կոնաձև կամ գլանաձև փոսեր են: Այս թաղումները բացելիս կենցաղային բազմազոն և տարաժամանակյա խառը նյութերը հաստատում են դրանց բնույթը: Բենիամինի հորերի մեջ կատարված հիմնահողային թաղումներից (թիվ 146, 194, 207) հետաքրքրական է թիվ 207-ը, որտեղ զույգ թաղում է՝ 30-40 տարեկան կին և 40-50 տղամարդ:Հողի մոտ 30սմ շերտով իրարից անջրպետված երկու կմախք, որոնք նրկսւսն էլ կծկված դիրք ունեն, տղամարդը՝ աջ, կինը՝ ձախ կողքին: Առաջինն ունի արևելք-արևմուտք, իսկ երկրորդը՝ հարավ-հյուսիս կողմնորոշում: Առաջին կմախքն ընկած է քարի վրա, իսկ գանգի տակ կենդանական ոսկորներ են: Երկրորդ կմախքի ոտքերի մոտ գտնվել են լյութերիայի բեկորներ և թասի շուրթի մաս: Նման մեկ այլ թաղում (թիվ 221), բացվեց բնակավայրի արևելյան մասում, փոքր սրբարանի մոտ հայտնաբերված երեք հորերից հարավայինի մեջ: Առաջին անյունն ունեցել է ծալապատիկ նստած դիրք: Կմախքը ծածկված էր խճի մոտ 10 սանտիմետրանոց շերտով, որի վրա կատարվել էր ձախ կողքին կծկված

[13] *О. О г а н я н, Культура Античных поселений Армении. Автореферат дисс. на сопск. уч. степ. канд. ист. наук. Ер., 1990, стр. 16-17.*

[14] *Նույն տեղում:*

դիրքով երկրորդ թաղումը: Նման պատկեր ունեն նաև հորերի մեջ կատարված մյուս թաղումները (թիվ 146,194...):

Եվ ամրարների, և՛ հորերի մեջ կատարված թաղումներում ակնհայտ է սոցիալական տարբերակումը (նյութի բացակայություն, թաղման համար լքված փոսերի օգտագործում): Եթե Շիրակի ամբարային թաղումները իրենց զուգահեռներն ունեն Շամիրամում, ապա հորերի մեջ կատարված թաղումները մնում են որպես Բենիամինին բնորոշ և յուրօրինակ ձև:

ԿԱՐԱՍԱՅԻՆ ԹԱՂՈՒՄՆԵՐ. Շիրակի անտիկ դամբարանադաշտերից կարասային թաղումներ բացվել են Շիրակավանում, Ջրափիում և Բենիամինում[15]: Կարասային թաղումները գալիս են ուրարտական շրջանից, և նրանց ծագումը կապվում է հայկական լեռնաշխարհից հարավ, Միջագետքի հետ[16]: Վաղ հայկական կարասային թաղումները հայտնի են Արգիշտիխինիլիից[17]: Թաղման այս ձևը լայն տարածում է ստանում մ.թ.ա. 3-1-ին դարերում և մ.թ.ա. 1-ին դարում կրում համատարած բնույթ: [18] Կարասային թաղումներ հայտնի են Գառնիից,[19] Օշականից,[20] Արտաշատից,[21] Դվինից[22]: Բենիամինի կարասային առաջին թաղումները բացվել են բնակավայրի բնակելի հատվածում՝ հատակի տակ և վերաբերում են մ.թ.ա. 1-ին դարին:Որպես թաղման անոթ օգտագործել են ինչպես կարասներ, այնպես էլ կճուճներ: Վերջիններս ծառայել են մանկական թաղումների համար: Թաղման անոթները դրվել են կամ ուղղահայաց (թիվ 35, 36, 39...) կամ կիսապառկած (թիվ 9,17,28), կամ էլ հորիզոնական դիրքով (թիվ 40, 43ա, 43բ...): Թաղումների մի մասը կատարվել է անոթի իրանը կտրելով: Դիակը տեղավորելուց հետո կիսապառկած և հորիզոնական դիրքով դրված կարասների բեկորները վերաշարվել են իրենց տեղում (թիվ 9,17, 28): Կարասների բերանները ուղղված են կամ հյուսիս (թիվ 9,17, 28...), կամ արևելք (թիվ 98,150), կամ էլ՝ արևմուտք (183, 190):

Ուղղահայաց դիրքով կարասային թաղումներում կարասներն ամբողջական են: Սրանք մանկական թաղումներ են, և դիակը տեղավորելու համար կարասը կտրելու անհրաժեշտություն չի եղել (թիվ 35, 36, 138, 206): Թիվ 105 թաղման կարասի ուղիղ դիրքն ապահովելու համար նախապես բերանքսիվայր դրվել է մեկ այլ մեծ կարասի բերան, որի մեջ կանգնեցվել է թաղման կարասը, ապա ամրացվել մանր քարերի շարվածքով (նկ.4):



Նկ. 4

Ուղղահայաց դիրքով դրված կարասային թաղման ժամանակ կարասի դիրքն ամուր պահելու համար նստուկի մոտ շարել են քարեր, որոնց մեջ նաև սրաքարեր և կոկիչներ կան (թիվ 39): Այս դիրքով դրված կարասներից մեկի բերանը փակվել է լայնաբերան քրեղանով (թիվ 105), երկու այլ դեպքերում՝ լայնաբերան ծորակավոր ամանով (թիվ 28,150), իսկ թիվ 39կարասի բերանը փակվել է քարերով: Բոլորն կարասներն էլ նախապես անտեսության մեջ օգտագործված են, նույնիսկ վերանորոգված (թիվ 9, 36,) 39, 43ա, 150 (և վերականգնելուց հետո էլ միշտ չէ, որ ամբողջական տեսք են ստանում (թիվ 36, 43ա, 150, 183): Մեծ կարասների մեջ սննդամթերքը երկարատև պահելու և օդափոխության ապահովման անհրաժեշտությունից

---

[15] *Լ. Ե գ ա ն յ ա ն, Բենիամինի անտիկ դամբարանադաշտի պեղումները 1991-1992թ.թ. << 1991-1992թ.թ. դաշտային հնագիտական պեղումների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Եր.,1994, էջ 30-32:*

[16] ***А.М а р т и р о с я н, Город Аргиштихинили. Ер., 1974, стр. 50-53.***

[17] *А. М а р т и р о с я н, նշվ. աշխ., էջ 55:*

[18] *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 32:*

[19] ***Ж. Х а ч а т р я н,. Гарни V. Античный некрополь. Ер., 1976, стр. 7-20.***

[20] ***С.Е с а я н, А. К а л а н т а р я н, Ошакан I, Ер., 1988г. стр. 55-56.***

[21] *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 8-20:*

[22] *Գ. Ք ո չ ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 25-29:*

ելնելով՝ նստուկներին անցքեր են արվել: Սանկական թաղման անոթներն, ի տարբերություն մեծ կարասների, նստուկների վրա անցք չունեն: Հատուկ թաղման համար պատրաստված անոթներ չկան: Այն կարծիքը, թե անցքերն արվել են հոգին դուրս գալու համար, գոնե Բենիամինում չի արդարացվում այն պատճառով, որ այդ դեպքում անցքեր պիտի ունենային նաև կճուճները, որոնց մեջ մանկական թաղումներն են:

Կարասային թաղումներում երբեմն օգտագործել են նաև կարասի լայնակի կտրված բեկորներ: Սալարկղի մեջ դրված, կարասի ժապավենների վրա կատարված թաղում է մ.թ.ա I-ին դարով թվագրվող Բենիամինի թիվ 183 դամբարանը: Թիվ 43ա թաղումը նույնպես կատարվել է կարասի լայնակի կտրված ժապավենների վրա, որոնք կազմում են կարասի բերանից իրան հատվածը: Բնակավայրի արդեն հողի հաստ շերտով ծածկված ավերակների մեջ կատարված թաղումը թվագրվում է մ.թ.1-ին դար: Կարասային թաղումներում աճյունը ծածկվել է հողով: Երկու դեպքում (թիվ 105, 206) կմախքի մոտ նստած է միայն 2-3մմ հաստությամբ փոշին: Այս թաղումները վերաբերում են մ.թ. 1-ին դարին: Արտաշատի Նոր Կյանքի արևելյան դամբարանադաշտում ևս կան կարասներ, որոնց մեջ հայ չր լցված:[23]

Կարասային թաղումներում կմախքն ունի կծկված դիրք, ոտքերը ծալված են և հակված դեպի կուրծքը: Ձեռքերը արմունկներից ծալված են և կրծքի վրա կամ ծնոտի տակ միանում են խաչ: Սանկական այն թաղումներում, որտեղ կարասներն ունեն ուղղահայաց դիրք, ննջեցյալի նախնական դիրքն անհայտ է, քանի որ ոսկորները սահել են ցած և կուտակվել կարասի նստուկին: Կարասային մի քանի թաղումների մոտ ակնհայտ են պահպանված հոգեհացի մնացորդները. մոխրաշերտ, ինչպես նաև կրակի մեջ նետված կենդանիների ոսկորներ ու կավանոթների բեկորներ (թիվ 17,28): Այս թաղումների մոտ հողը հագեցած է վառված ճրագի մնացորդներով:

Բենիամինի կարասային թաղումները հիմնականում կրկնում են Հայաստանի համաժամանակյա այլ հուշարձաններին բնորոշ ծեսերը (Արտաշատ,[24] Դվին,[25] Գառնի,[26] Օշական)[27]: Բացվել են նաև մի քանի թաղումներ, որոնք լինելով կարասային, որոշակի յուրահատկություններ անեն: Ելնելով դրանից՝ թաղման այս ծեսերը նույնպես բաժանել ենք որոշակի հատկանիշներով միավորվող ենթածեսերի:

Ձվածիրի մեջ կատարված կարասային թաղում. Թիվ 190 դամբարանում թաղումը կատարվել է մանր քարերով շարված ձվածիրի մեջ: Ձվածիրի արևմտյան կողմում գանվել է աղորիքի բեկոր: Կարասի դիրքը հորիզոնական է: Այս ձևում ևս թաղման ժամանակ կարասի ուսերը կոտրել են: Այստեղ թաղման տարածքը մինչ ծիսակարգն ավարտելը քարերով եզրագծվել է (թաղման մակարդակի վրա): Այսօրինակ թաղումներ հայտնի են Օշականից:[28]

Սալարկղի մեջ կատարված կարասային թաղում. Կարասային թաղման հետաքրքիր տարբերակ է մ.թ.ա. 1-ին դարով թվագրվող թիվ 183 դամբարանը, որը կարելի է դիտել որպես սալարկղի մեջ կատարված կարասային թաղում: Թաղումը կատարվել է աջ կողմում 60x 80սմ չափերով երկու տափակ սալերով, իսկ ձախում՝ մանր քարերի շարվածքով կազմված ուղղանկյուն սալարկղի մեջ, 20սմ լայնությամբ կարասի լայնակի կտրված ժապավենների նավաձև շարվածքի վրա: Թիվ 183 դամբարանը կարելի է դիտել նաև որպես սալարկղային՝ նկատի ունենալով արտաքին կողմը: Կարծում ենք, ավելի շատ սալարկղի մեջ դրված կարասային թաղում է, քանի որ կմախքն անմիջապես կարասի վրա է: Ննջեցյալն անեցել է մեջքի վրա կիսապառկած դիրք: Ձեռքերը դրված են իրանի երկարությամբ:Կարասային թաղման նման տարբերակներ հայտնի են Օշականից, որտեղ թիվ 19, 87,41 թաղումները կարասային են՝ դրված արկղի մեջ: Օշականի թիվ 38 դամբարանը ևս կարասային է՝ դրված արկղի մեջ, որի շուրջբոլորն ու վրան քարեր են շարված[29]: Բենիամինի թիվ 183 դամբարանը բացվել է

[23] Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 31:
[24] Նույն տեղում:
[25] Գ.Ք ո չ ա ր յ ա ն , նշվ. աշխ., էջ 29-30:
[26] Ж.Х а ч а т р я н, նշվ. աշխ., էջ 23-28:
[27] С.Е с а я н, А. К а л а н т а р я н, նշվ. աշխ.,էջ 51-66:
[28] С. Е с а я н, А. К а л а н т а р я н , նշվ. աշխ.,էջ 59:
[29]Նույն տեղում:

առաի մեջ, մաեերեսից 20սմ խորության վրա, և ի տարբերություն Օշականի նմանատիպ թաղումների, առանց ծածկասալի է, որը հավանաբար հեռացվել է գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ:

Կրոմլեխի մեջ կատարված կարասային թաղում. Կարասային թաղման հետաքրքիր օրինակներ են Բենիամինի թիվ 40 և 123 դամբարանները, որոնք ուղեկցվել են շների և ձիու զոհաբերությամբ[30]: Թիվ 123-ը մանկական թաղում է՝ բացված քառաշար պատերով հսկա ամբարի բերանին: Թաղումը կատարվել է բերանքսիվայր դիրքով դրված կարասի բեկորների տակ՝ բնակավայրի այս հատվածի մ.թ.ա. 1-ին դարով թվագրվող շերտում: Կմախքի կոնքին գտնվել են շան երկատված ծնոտի իրար հակադիր դրված երկու մասերը: Շան զոհաբերության ուղեկցությամբ թաղման առավել հետաքրքրական օրինակ է թիվ 40 դամբարանը, որտեղ բացի շներից, զոհաբերվել է և թաղվել է նաև ձի: Թաղումը կատարվել է բնակավայրի պանեպանված հատվածում, նույն միջանցքի մեջ բացվող սենյակներից ամենամեծում՝ 3մ տրամագծով քառաշար շրջանի կենտրոնում: Կարասը դրվել է հորիզոնական դիրքով՝ բերանն ուղղված հյուսիս: Թաղումն ուղեկցվել է երկու ամբողջական և երկու մասնատված շների (իրանից երկու կես արված) և ձիու զոհաբերությամբ: Դամբարանը դեռևս հնում թալանված է եղել: Այդ են վկայում ավելի ուշ՝ 4-րդ դարի շերտում ուղեկցող տարաբնույթ նյութերի բեկորների ու ամբողջական իրերի առկայությունը ցաքուցրիվ վիճակում: Բերված փաստակներին հակառակ իր կռվաններն է ներկայացնում Հ.Խաչատրյանը: Ներկայացնելով Բենիամինի անտիկ դաստակերտի հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությունը «չժխտելով թաղման և զանձազողության հնարավորությունը», և ելնելով նրանից, որ «կրոմլեխի շրջագիծը կառուցված է քարերի մի քանի շարքով», Հ.Խաչատրյանը գտնում է, որ կրոմլեխը «ավելի շուտ կարող էր լինել շրջանաձև հարթակի կամ կոնաձև ինչ-որ շինվածքի հիմնապատ» :[31]

Անտիկ ժամանակաշրջանով թվագրվող կրոմլեխի մեջ ուղղահայաց դիրքով կարասային թաղում Ի. Կարապետյանը պեղել է Կարճաղբյուրում[32]:

Բենիամինի կարասային թաղումները կատարվել են բնակավայրի կենսագործունեության ժամանակ բնակելի մասում՝ հատակի տակ (թիվ 134), ինչպես նաև բնակավայրի ծայր արևելյան հատվածում՝ բնակեցված մասից դուրս: Կարասային թաղումները մեծավ մասամբ ունեն նաև ուղեկցող նյութեր, որոնք հնարավորություն են տալիս ստույգորեն թվագրել դրանք:

Շիրակի կարասային թաղումները վերաբերում են մ.թ.ա.1-մ.թ.1-ին դարերին և, հիմնականում կրկնելով Հայաստանի համաժամանակյա հուշարձաններին բնորոշ ձևերը, միաժամանակ ունեն նաև տեղական յուրահատուկ գծեր:

ՍԱԼԱՐԿՂԱՅԻՆ ԹԱՂՈՒՄՆԵՐ. Շիրակի անտիկ դամբարանադաշտերում սալարկղային թաղումները ամենատարածված ձևն են, բացվել են բոլոր դամբարանադաշտերում: Կա կարծիք, որ թաղման այս ձևը օտար ծագում ունի[33], սակայն սալարկղային թաղումները Հայկական լեռնաշխարհում թաղման հիմնական ձևերից մեկն էին դեռևս բրոնզիդարում:[34] Յուրօրինակ սալարկղային թաղումներ են հելլենիստական ժամանակաշրջանի հնգանկյուն կամ վեցանկյուն, կոպտատաշ քարերից կառուցված դամբարանները, որ գտնվել են Կարմիր բլուրում՝ Թեյշեբաինի ուրարտական քաղաքի ավերակներում[35]: Շիրակի սալարկղային թաղումները հիմնականում ունեն արևելք-

---

[30] Լ. Եգանյան, Շունը և ձին անտիկ Բենիամինի թաղման ծիսակարգում. ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, I, Գյումրի, 1998, էջ 43-56:

31.Հ. Խաչատրյան,Բենիամինի անտիկ դաստակերտի հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությունը. ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, II. Գյումրի 1999,էջ 57:

[32] С. Есаян, А. Калантарян, նշվ. աշխ., էջ 59:

[33] И. Алиев,В. Алиев. О сармато-аланских памятниках на территории Нахичеванской АССР, СА, 1976, 181.

[34] Г.Тирацян, Древняя культура Армении. Եр., 1988, стр.102.

[35] А. Вайман, Г. Тирацян, Кармирблурский некрополь эллинистического времени. ВОНАН, 1974,8, табл.1:

արևմուտք կողմնորոշում[36]: Բացառություն են կազմում Բենիամինի թիվ 154, Առափիի թիվ 9 դամբարանները,որտեղ թաղումը կատարվել է հարավ արևելք - հյուսիս արևմուտք կողմնորոշմամբ և Առաիիի թիվ 5 դամբարանը, որտեղ թաղումը կատարվել է հյուսիս արևելք-հարավ արևմուտք կողմնորոշմամբ: Բենիամինի թիվ 171 դամբարանն, ունի հյուսիս-հարավ կամ հարավ-հյուսիս կողմնորոշում: Երբեմն արևելք-արևմուտք կողմնորոշման մասնակի շեղումներ են նկատվում, որոնք կապված են տարվա տարբեր եղանակներին արևի ունեցած դիրքի հետ:

Բենիամինի սալարկղային թաղումները հիմնականում մեկ կամ երկու քարից ծածկասալեր ունեն, որոնք մշակված (թիվ 7,14,15...) կամ անմշակ, անկանոն քարեր են (27,29,74...), հանդիպում են նաև երեքից հինգ անկանոն, անմշակ քարերից ծածկասալեր (թիվ 176, 180, 181....): Վարդբաղում նույնպես ծածկասալերը մեկական ամբողջական քարերից են, որոնք լավ մշակված, կլորացված անկյուններով ուղղանկյուններ են: Երբեմն ծածկասալի կողքերին շարված են մանր քարեր, որոնք ամրացնում են դամբարանը և նրան տալիս կրոմլեխի ձև (Բենիամինի թիվ 25,54, 60, 82.....Վարդբաղի թիվ 7 և թիվ 10): Նման թաղումներ հայտնի են նաև Շիրակավանից[37]: Երբեմն ծածկասալերն ունեն նաև յուրահատուկ միջանցիկ անցքեր (թիվ 172, 176), որոնք համապատասխանում են կմախքի կրծքի հատվածին: Անցքերն արված են կողք-կողքի, 8-10սմ տրամագծով: Ծածկասալերի նման մշակումներ հայտնի են նաև Շիրակի մյուս անտիկ հուշարձաններից: Առաիիում (թիվ 11) ծածկասալի գլխամասում արված է 10սմ տրամագծով միջանցիկ անցք, որից սկսվող նույն լայնությամբ ակոսը շարունակվում է մինչև սալի եզրը (նկ.5): Միջանցիկ անցքով ծածկասալ հայտնի է Շիրակավանի պեղումներից, որտեղ բացի գանգի դիմաց արված անցքից, մի անցք էլ արված է կենտրոնում: [38]



Նկ. 5

Վարդբաղի թիվ 2 դամբարանի ծածկասալի վրա եզրից սկսվող ակոս է արված (լայն. 6սմ, երկ. 20սմ, խոր.2,5սմ) և համապատասխանում է կմախքի դիմային մասին: Նման մի ծածկասալ բացվել է Վարդբաղում Ս.Տեր-Սարգսյանի պեղումների ժամանակ:[39] Որպես ծածկասալ Բենիամինում օգտագործել են նաև նախապես այլ նպատակի համար ծառայած քարեր: Այսպես, թիվ 8 դամբարանի համար որպես ծածկասալ օգտագործել են երկանքաքարը, որի մի կողմը ուղիղ կտրել են հավանաբար ծածկասալի մյուս քարերին հավասարեցնելու համար:

Այսպիսին են Բենիամինի թիվ 1, 4, 5, 18..., Առաիիի թիվ 7,8,9, 10,12..., Վարդբաղի թիվ 19,Կարմրաքարի թիվ 9,10 դամբարանները: Սալարկղերի ուղղանկյունը կազմվել է կողասալերով, որոնք 1-5 քարերից են: Բենիամինում կողասալերի քանակը 2-5 է, Առափիում՝ 1-2, Վարդբաղում և Կարմրաքարում 1-2: Բենիամինում կան դամբարաններ, որտեղ աջ և ձախ կողասալերի քանակը տարբեր է. աջը երկու, ձախը՝ երեք (թիվ 52,187,188), աջը երեք, ձախը՝ երկու (թիվ 95, 142,186....): Հանդիպում են նաև աջ և ձախ կողասալերի քանակական այլ հարաբերակցություններ: Բենիամինում որպես կողասալեր հիմնականում օգտագործել են լայնարերան հաստիչով մշակված ուղղանկյուն քարեր, որոնք երբեմն էլ այնքան կիպ են դրված, որ միացման կարերը երևում են

---

[36] *Լ. Եգանյան ,Բենիամինի անտիկ դամբարանադաշտի պեղումները. ՀՀ 1989-1990թ.թ. դաշտային հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան. զեկուցումների թեզիսներ, Եր., 1991, էջ 92-94:*

[37] *Ф.Тер-Мартиросов, Г.Караханян նշվ. աշխ., էջ 27:*

[38] *Նույն տեղում:*

[39] *Սա. Տեր-Մարգարյան, նշվ. աշխ., էջ 95:*

միայն յալ մաքրելուց հետո: Որպես կողասալեր օգտագործել են նաև անմշակ քարեր (թիվ 145.155.167): Կան նաև սալարկղային թաղումներ, որտեղ որպես կողասալ օգտագործել են բնակատեղիի պատը (թիվ 30,153,157): Բենիամինի թիվ 8 դամբարանում, ուր եռկանքաքարը ծառայել է ծածկասալ, նույնանման մշակմամբ մեկ այլ երկանքաքար օգտագործել են նաև որպես կողասալ: Ակներև է քարի վրա եղած անցքի ծիսական իմաստը, այլապես ավերակների վերածված բնակավայրի տարածքում անհրաժեշտություն չէր լինի վերաձևավորել երկանքաքարը: Բենիամինում երկանքաքարերը օգտագործել են զուտ ծիսական նշանակությամբ՝ կուրևորելով ունեցած անցքերը:

Կողասալերի յուրահատկություններով հետաքրքիր է Բենիամինի թիվ 6 դամբարանը, որտեղ զույգ կողասալերն էլ (հյուսիսային և հարավային) փորվածքներ ունեն: Լավ մշակված կողասալի վրա, դամբարանի ներսի կողմում՝ կմախքի կոնքի ուղղությամբ, արված են 15սմ աբամագծով փորվածքներ: Բացառված չէ եթկտ քարերի նախապես այլ նպատակով օգտագործված լինելը: Հավանական է նաև ծիսական իմաստի առկայությունը: Նման փորվածքով դամբարաններ հայտնի են Առափից (թիվ 11), որտեղ հյուսիսային կողասալը միջանցիկ անցք ունի, որը համապատասխանում է կմախքի գանգի հատվածին: Կողասալերի նման մշակումներ հայտնի են նաև Շիրակավանից[40]: Ձախ կողասալի վրա արված միջանցիկ անցքով կիսավեր և թալանված մի դամբարան մեր կողմից գտնվել է Ջրաձորում: Յուրահատկություններ ունեն նաև որոշ սալարկղերի գլխի կողմի կողաքարերը: Բենիամինի թիվ 131,132 և Վարդբաղի թիվ 6 դամբարանների նշված քարերը պայտաձև մշակում ունեն:Շիրակի անտիկ դամբարանադաշտերում հանդիպում են նաև կից սալարկղային թաղումներ՝ մեկ ընդհանուր կողասալով (Բենիամին, թիվ 132 և 133, Առափի,17 և 18, Կարմրաքար, թիվ 28, 29):

Շիրակի սալարկղային թաղումների մեծ մասին բնորոշ է կմախքի ուղիղ, մեջքի վրա դիրքը: Ձեռքերը հանգչում են կրծքին, կամ որովայնին, իսկ որոշ դեպքերում ձգված են իրանի երկարությամբ: Սալարկղային թաղումներում ահսակարգն ավարտվել է հանգուցյալի աճյունը հողով ծածկելով: Սակայն հանդիպում են նաև սալարկղային թաղումներ առանց հողի լիցքի (Բենիամին՝ թիվ 67): Արդյո՞ք այն ծիսական կոնկրետ բովանդակություն ունի: Բացառված չէ, որ թաղումը կարող էր նաև պատահված լինել: Վարդբաղի թիվ 16 և 17 դամբարաններում (Ս.Տեր-Սարգսյանի պեղումներ) նույնպես թաղումները կատարվել են աճյունները մասամբ հողով ծածկելով: [41]

Ծվածիրի մեջ կատարված թաղումներ. Բենիամինում հանդիպում են 2-3 շարք կճաքարերով շարված ծվածիրի մեջ կատարված թաղումներ (թիվ 83,184, 195, 209): Մի դեպքում թաղումը կատարվել է ձախ կողքին կծկված դիրքով (թիվ 83), մյուս դեպքում՝ նստած (թիվ 184), երրորդը ուղիղ, մեջքի վրա (թիվ 195): Վերջին թաղումն ունի իրանի ուղիղ դիրք, ոտքերը ծալված են դեպի որովայնը (թիվ 209), որը հավանաբար նստած դիրքից իրանը ետ ընկնելու հետևանք է: Թիվ 209 դամբարանի հատակը, ի տարբերություն նախորդների, կճաքարերով սալարկված է: Թիվ 184 դամբարանի կառուցման ժամանակ օգտագործվել է թիվ 183 դամբարանի արևելյան կողասալը՝ կճաքարերով լրացնելով: Նշված երկու թաղումները հնարավոր է կատարվել են միաժամանակ: Թիվ 195 դամբարանում զույգ թաղում է՝ մանկահասակ աղա և աղջիկ: Այս թաղումները բացվել են բնակավայրի ծայր արևելյան հատվածում, ունեն ուղեկցող նյութեր և թվագրվում են մ.թ.ա.1-ին մ.թ.1-ին դարերով: Նմանատիպ թաղումներ բացվել են Կարճաղբյուրի հելլենիստական բնակավայրում[42]:

Փայտյա դագաղի մեջ կատարված թաղում. Կարմրաքարի թիվ 12 դամբարանը Շիրակում միակն է, որտեղ բացվել է սալարկղի մեջ դրված փայտե դագաղով թաղում: Դագաղը փայտի ուղղանկյուն կտորներից արկղ է, որի կողերն ամրացնող գամեր չեն գտնվել թերևս նաև այն պատճառով, որ դամբարանը դեռևս հնում թալանված է եղել:

Անտիկ ժամանակաշրջանին վերաբերող փայտյա դագաղի մեջ կատարված թաղումներ են բացվել Արտաշատում[43]: Գրավոր աղբյուրներում փայտյա դագաղի մեջ թաղում կատարելու մասին վկայում է Ագաթանգեղոսը՝ պատմելով Հռիփսիմեի և Գա-

---

[40] *Ф.Т е р – М.а р т и р о с о в, Г. К а р а х а н я н նշվ. աշխ., էջ 27:*
[41] *Ստ. Տ ե ր – Մ ա ր գ ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 95:*
[42] *И. К а р а п е т я н, Раскопки Карчахпюра, АО 1977г., М.,1978, стр. 523:*
[43] *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն, նշվ. աշխ., 19-22:*

յանեի թաղման մասին. «Եւ հրամայեաց մեն մի խրաքանչիւր արկղագործ, տախտակամած, մայրափայտեայ, ընեռապինդ, հաստահեղույս, երիցագամ տապան գործել»:[44]

Շիրակի անտիկ թաղումներին բնորոշ է նաև վերաթաղումը (Բենիամին, թիվ 33, 61,144, 231, Կարմրաքար, թիվ 20): Վարդբաղի թիվ 17 դամբարանում նույնպես վերաթաղում է կատարվել [45] (Ս.Տեր-Սարգսյանի պեղումներ):Վարդբաղում բացվել է մի սալարկղ (թիվ 18), որտեղ թաղում չի կատարվել: Դամբարանի կողքին բացվել է մոխրաշերտ, որը հավանաբար մնացել է հոգեհացի կրակից:

Ինչպես տեսանք, Շիրակի սալարկղային թաղումները թվագրվում են մ.թ.2-4-րդ դարեր և ունեն թաղման ծեսի որոշակի յուրահատկություններ:

ՔԱՐԱՐԿՂԱՅԻՆ ԹԱՂՈՒՄՆԵՐ (ՍԱՐԿՈՖԱԳՆԵՐ). Շիրակում անտիկ ժամանակաշրջանի քարարկղեր պեղվել են Վարդբաղում[46] և Կարմրաքարում[47]: Քարակղերն, ըստ Գ. Տիրացյանի, կարող են ունենալ ուրարտական ծագում, քանի որ Արգիշտիխինիլիի պեղումների ժամանակ գտնվել է առւֆից քարարկղ:[48] Շիրակի քարարկղերում թաղումները կատարվել են արևելք-արևմուտք կողմնորոշմամբ:

Շիրակի քարարկղային դամբարանները երկու տիպի են: Առաջինը արտաքինից և ներսից մշակված, ուղղանկյուն արկղեր են, ունեն 17-20սմ (Վարդբաղ, թիվ 3) կամ 20-25 սմ) Վարդբաղ, թիվ 4 (նկ.6) հաստությամբ պատեր: Վարդբաղի թիվ 3 քարարկղը կոնքի հատվածում ավելի լայն է (70սմ), քան գլխի մասում (57սմ), իսկ թիվ 1 դամբարանում գլխի մոտ ավելի նեղ է (35սմ), քան ոտքերի մոտ (40սմ): Սա արդյունք է ժայռի, գույնի և բնական ճեղքվածքի: Այս քարարկղերն ունեն մոտ 30սմ խորություն:


Նկ.6

Երկրորդ տեսակը ժայռի մեջ փորված, կլորացված անկյուններով, ուղղանկյուն քարարկղերն են:Վարդբաղում նման երեք քարարկղ է բացվել: Թիվ 16քարարկղի հյուսիսային կողմում ժայռի պակասը լրացվել է հարթ մշակված մի քարի հավելումով: Վարդբաղի մեկ այլ քարարկղ (թիվ 1), որ նույնպես փորվել է ժայռի մեջ, դամբարանի երկայնքով ճեղքվածք ունի:

Ժայռաբեկորի մեջ փորված մեկ այլ քարարկղ ընկած է դամբարանադաշտից հյուսիս: Այն 3մ երկարություն ունի, 1,65մ լայնություն, 95սմ բարձրություն, ներսից ունի 2մ երկարություն: Քարակղը գլխի մասում ավելի լայն է (75սմ), քան ոտքերի մասում (60սմ), հատակը անհավասարաչափ է մշակված և գլխի մասում ավելի բարձր է: Կարմրաքարից գտնված միակ քարարկղը (թիվ 10) մշակված է և՛ ներսից, և՛ դրսից, սակայն, ի տարբերություն Վարդբաղի քարարկղերի, գլխի մասում պայտաձև է և ավելի լայն (70սմ), քան ոտքերի մասում (50սմ):

Քարարկղերի համար որպես ծածկասալ ծառայել են մեկական ամբողջական, լավ մշակված քարեր, որոնք ունեն 135-250սմ երկարություն, 95-110սմ լայնություն, 15-20սմ հաստություն: Այս թաղումներում ևս հանդիպում են միջանցիկ անցքերով ծածկասալեր: Վարդբաղի թիվ 3 դամբարանի ծածկասալի վրա, ուղիղ գանգի դիմաց արված է միջանցիկ անցք, որը դրսի կողմից ունի 6սմ տրամագիծ, սակի մասից՝ 10սմ: Մյուս քարարկղը (թիվ 16) նույնպես ունի միջանցիկ անցք, որն համապատասխանում է ոտքերի հատվածին: Անցքը փորված է արտաքուստ 8սմ տրամագծով,սակից՝ 5սմ: Վարդբաղի թիվ 3 քարարկղի ծածկասալի տակ, ոտքերի հատվածում դրվել է 32x32սմ մակերեսով, 2-2,5սմ հաստությամբ մի քար, որն հավանաբար դրվել է ծածկասալի ուղիղ նիրքն ապահովելու համար: Նույնպիսի մի քար, քիչ ավելի փոքր չափերի, դրվել է կրծքի մասում:

[44] *Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Եր., 1983, ճԴ:*
[45] *Ստ. Տեր – Մարգարյան, նշվ. աշխ., էջ 95:*
[46] *Հ.Խաչատրյան, Լ.Եգանյան, նշվ. աշխ. էջ 85,Ստ. Տեր-Մարգարյան, նշվ. աշխ., էջ 95:*
[47] *Լ. Եգանյան, նշվ. աշխ., էջ 37:*
[48] *Г. Тирацян, նշվ. աշխ., էջ 104:*

Քարարկղային թաղումներում ևս կմախքն ունի ուղիղ, մեջքի վրա դիրքը, իսկ ձեռքերը նոծքին են: Ծիսակարգն ավարտվել է աճյունը դամբարանն ողջ պարունակությամբ եղով ծածկելով: Վարդբաղի թիվ 3 քարարկղում եղը փոշիացման է ենթարկվոր է, որ լցվել է մաղելուց հետո: Եթե չլինեին անմիջապես ծածկասալի տակ՝ կրծքի և ոտքերի հատվածում դրված երկու հարթ քարերը, կարելի էր մտածել, թե թաղումը կատարվել է աճյունը առանց եղով ծածկելու:

Այսպիսով, Շիրակի անտիկ դամբարանադաշտերի պեղումները ցույց են տալիս, որ այստեղ առկա են Հայաստանի անտիկ ժամանակաշրջանին բնորոշ թաղման կառուցվածքների բոլոր ձևերը: Սալարկղային և հիմնահողային թաղումներն բնորոշ են պեղված բոլոր դամբարանադաշտերին, կարասային թաղումներ բացվել են Շիրակավանում, Ջրափիում և Բենիամինում, իսկ քարարկղային թաղումներ՝ Վարդբաղում, Կարմրաքարում: Ամբարների և հորերի մեջ կատարված թաղումներ բացվել են միայն Բենիամինում: Թաղման տարբեր ձևերում երբեմն կան նաև զուտ տեղական, միայն Շիրակին, կամ մեկ առանձին հուշարձանին բնորոշ հատկանիշներ:

Թաղման տարբեր ձևերի, ինչպես նաև ապրանեսակ յուրահատկությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թաղման ձևերի փոփոխությունը մ.թ.ա. 1-մ.թ. 4-5դ.դ. ընթացքում ուրվագծում է հետևյալ պատկերը.

Մ.թ.ա.1- մ.թ. 1-ին դարերի թաղումներում գերակշռող ձևերը հիմնահողային և կարասային են, կա նաև սալարկղի մեջ կատարված կարասային թաղում: Այս դամբարաններում ուղեկցող նյութը առավել հաճախ է հանդիպում և բազմազան է:

Մ.թ. 2-րդ դարից թաղման հիմնահողային և կարասային ձևերը աստիճանաբար իրենց տեղը զիջում են սալարկղային ձևին: Կմախքի դիրքը դառնում է ուղիղ, մեջքի վրա, ձեռքերը հանգչում են կամ որովայնին կամ կրծքին: Ուղեկցող նյութը կորցնում է բազմազանությունը, դառնում է մեկ կամ երկու իր: Մ.թ.3-րդ - 5-րդ դարերում համատարած սալարկղային թաղումների մեջ կա նաև սալարկղի մեջ դրված փայտե դագաղով թաղում:Մ.թ. 3-րդ-4-րդ դարում սալարկղային թաղումներին զուգահեռ հայտնվում են քարարկղային թաղումները: Այս թաղումներն ի տարբերություն սալարկղայինների, շատ քիչ են, սակայն ուղեկցող նյութն ավելի հաճախ է հանդիպում: Վերջինս հավանաբար սոցիալական հիմք ունի:

Կարմրաքարի. Առափիի, Վարդբաղի և Բենիամինի դամբարանադաշտերի թաղման ձևերի վերլուծությամբ ի հայտ են գալիս թաղման ձևերի բազմազան տարբերակներ, որոնք կարևոր նյութ են ոչ միայն Շիրակի, այլև Հայաստանի անտիկ ժամանակաշրջանի մշակույթի ուսումնասիրման համար:

ФОРМЫ ЗАХОРОНЕНИЙ АНТИЧНОГО ШИРАКА

Резюме — *Л.Еганян*

Археологическое изучение античного Ширака началось в 1977г. раскопками поселения и некрополя Ширакавана. В последующие десятилетия были раскопаны античные могильники Кармракара в 1987и в 1992г.г. Арапи в 1989г., Вардбага в 1989, 1990г.г. и Бениамина с 1989 по 2000 гг.

Раскопано приблизительно 300 грунтовых и карасных захоронений, а также, захоронения в каменных ящиках и саркофагах.

Результаты раскопок некрополей, датируемых I в. до н. э.- 4-5 в. н. э, показывают, что в основном формы захоронений идентичны с формами захоронений античной Армении. Одновременно есть захоронения, датируемые I в. до н. э. –I в. н.э., которые редкость не только для Ширака, но и Армении в целом: захоронения в хозяйственных ямах. А захоронения в бытовых ямах не имеют аналогов.

Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ԵՐԵՔ ԱՐՔԱՅԱԶՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայոց պատմության վիճահարույց շրջաններից մեկի՝ մ.թ.ա. VI դ. առաջին կեսի իրադարձությունների լուսաբանման գործում առանձնահատուկ դեր է վիճակված ինչպես Մ. Խորենացու «Հայոց պատմությանը», այնպես էլ Քսենոփոնի «Կյուրոպեդիա» աշխատությանը: Նրանց հաղորդած և Հայաստանին վերաբերող տեղեկությունները քաջ հայտնի են և մանրազնին ուսումնասիրված: Այսուհանդերձ, դրանք կարիք են զգում նոր անդրադարձի՝ հասարակության տեսանկյունից դիտարկման:

Դասային բաժանման և պետական կառավարման համակարգերը հին Հայաստանում և հին Իրանում սերտ կապի մեջ էին: Հայտնի է, որ հին իրանական հասարակությունը տեսականորեն բաժանվում էր երեք արտոնյալ դասերի՝ քրմեր, զինվորներ և արտադրողներ (նյութական բարիքներ ստեղծողներ)[1]: Այս դասերի առաջացումը հին իրանական ավանդությունները առնչում էին Զրադաշտ մարգարեի երեք որդիներին: Հնդեվրոպական միասնության ժամանակաշրջանից եկող այս սկզբունքը այնքան կենսունակ էր, որ անգամ Vդ. պարսից մեծ հազարապետ, ախրահռչակ Միհրներսեհը իր որդիներին կրթել ու դաստիարակել էր դրա հետևությամբ: Նրա որդիներից մեկը դառնալու էր քուրմ և օրենսգիր, մյուսը՝ զորավար և ռազմական վարչության պետ, իսկ երրորդը՝ երկրի գլխավոր տնտես և հողագործների դատավոր[2]: Ներքոշարադրյալը գալիս է ցույց տալու, որ շատ ավելի վաղ այս նույն սկզբունքը կիրառության մեջ է եղել նաև հին Հայաստանում:

Ինչպես ժամանակին ապացուցել է Ժ. Դյումեզիլը, հնդեվրոպական միասնության դարաշրջանից եկող հասարակության եռադասությունը իրենով պայմանավորել էր նաև հին հնդեվրոպացիների գլխավոր աստվածների եռյակներով դասակարգումը: Ըստ այդմ, դիցական եռյակի անդամները իրենց տիեզերական ֆունկցիաների հետ միասին ձեռք էին բերել նաև սոցիալական ֆունկցիաներ, ներկայացնելով հասարակության այս կամ այն դասի շահերը[3]: Դիցական եռյակի առաջին անդամը օժտված լինելով մոգական և իրավական ֆունկցիաներով, անօրինում էր քրմերի գործունեության ոլորտը կազմող բոլոր երևույթները: Եռյակի երկրորդ անդամը, հանդես գալով որպես երկնային զորավար, հովանավորն էր զինվորների դասի: Եռյակի երրորդ անդամը, անձնավորելով բերրիությունը, հանդես է եկել արտադրողների դասի հովանավոր աստծու դերում[4]: Հայ իրականության մեջ ժամանակին կիրառված եռադասության և գլխավոր աստվածների եռյակների մեջ միավորելու սկզբունքները ունեցել են իրենց բազմաթիվ ու բազմազան դրսևորումները և իրենց արտացոլումներն են գտել, օրինակ, «Վիպասանքում» ու «Սասնա ծռերում»[5]:

Մ.թ. ա. VIդ. առաջին կեսին վերաբերող և Մ. Խորենացու երկում առկա բանահյուսական մի հատվածում հանդես են գալիս բացահայտ առասպելաբանական ծագում ունեցող երեք եղբայրներ: Քնից սարսափահար արթնացած մարաց Աժդահակ

---

[1] *G. D u m e ' z i l, L ' ide'ologie tripartite des Indo-Europe'ens, Bruxelles, 1958,p.9.,և հաջորդ,H.Bailey, Zoroastrian problems, Oxford, 1943, p.18, И. Брагинский, Л.Лелеков, Иранская мифология,"Мифы народов мира", т.I, М., 1980,стр.563*

[2] *Н. П и г у л е в с к а я, Византия и Иран на рубеже VI-VII веков,М.-Л., 1946, стр. 207.*

[3] *В. А н т о н о в а, Заметки к солярной интерпретации мифологии ведийского Индры, "Литература и культура древней и средневековой Индии", М., 1979,стр. 89-90.*

[4] *G. D u m e z i l, Les dieux des Indo- Europe'ens, Paris,1952,p. 5 և հաջորդ., նույնի, La religion Romaine archaique, Paris 1966,p.65-69, նույնի, Mythe et e'pope'e. Types e'piques Indo-Europe'ens: un he'ros, un sorcier, un roi, Paris, 1971,p. 336-347.*

[5] *Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն, «Սասնա ծռերի» երեք եղբայրները և նրանց վիպասանական զուգահեռները, Լրաբեր հասարակական գիտությունների, 1975, 9, էջ 71- 77:*

թագավորը կանչում է իր խորհրդականներին և նրանց պատմում հեանյալը. «Էր ինձ, ասէ, ո՛վ սիրելիք, լինել այսօր յերկրի անծանօթում, մերձ ի լեառն մի երկար յերկրէ բարձրութեամբ, որոյ զգագաթնն սաստկութեամբ սառնամանեաց թուէր պատեալ.եւ ասէին զոզցես յերկրին Հայկազանց զայս լինել: Եւ ի նայել իմ յերկարագոյնս ի լեառնն՝ կին ոմն ծիրանազգեստ, երկնագոյն ունելով զիւրեաւ աեռ, նառեալ երեւեցաւ ի ծայրի այնպիսայ բարձրութեան, աչեղ, բարձրահասակ եւ կարմրայտ, երկւանց ընրռնեալ ցաւովք: Եւ ի յերկարագոյնս նայել իմ յայնպիսի երեւումն եւ եհացման լինել՝ ծնաւ յանկարծ կինն ելիս կատարեալս ի դիւացազանց հասակաւ եւ բնութեամբ: Առաջինն զերամնան ածեալ ի վերայ առիւծու սլանայր յարեւմուտս, եւ երկրորդն ի վերայ ընձու՝ ի հիւսիւսի հայելով. ինկ երրորդն գվիշապ անարի սանձեալ՝ ի մերոյս վերայ շահատակեալ յարձակէր տէրութեանս... Զայն որ ի վերայ վիշապին հեծեալ էր այր, արծտոյ իմն արդարեւ սլացեալ թեւովք աեսի յարձակել... Բայց զր՚ աչ օգուտ ինձ եւ խօսիցս երկարութիւն. զի փսխման զործոյն՝ իմն էր կործանումն»[6]:

Որ դյուցազնածին այս գեղեցկուհին Հայաստանի («Հայկազանց երկրի») մայր դիցուհին էր, պարզվում է մասնափուապես նրա հանդերձանքի նկարագրությունից: Ուշադրություն դարձնենք, որ նրա ծիրանի զգեստը և երկնագույն քողվերարկուն համընկնում են քրիստոնեական Աստվածամոր նույն տեսակի և գույնի հանդերձների հետ միջնադարյան պատկերագրության մեջ: Իսկ որ նրա ծնած դյուցազունների (աստվածությունների) եռյակը ուղղակի կապի մեջ է եղել հին հայ հասարակության երեք դասերի և դրանց իրական պարագլուխների հետ, վկայում են ինչպես հնդեվրոպական ժողովուրդների համեմատական ստաստելաբանության, այնպես էլ հայ իրականության տարբեր ընագավառներին վերաբերող ավյալները: Ապացուցված է, որ հնդեվրոպական միասնության գոյության վերջին փուլում հնդեվրոպական ցեղերի դիցարանները ունեին հետևյալ երեք գլխավոր աստվածները.

1. Պարզ երկնքի և արևի աստվածություն, որի հասարակական ֆունկցիաները զուգադիպում են քրմական դասի ֆունկցիաներին:

2. Ամպրոպի և կայծակի, երկնամերձ լեռան աստվածություն, որի հասարակական ֆունկցիաները համընկնում են զինվորական դասի ֆունկցիաների հետ:

3.Տնտեսական գործունեությունն եովանավորող և բերրիությունն անձնավորող աստվածություն, որի հասարակական ֆունկցիաները համընկնում են նյութական բարիքներ ստեղծողների ֆունկցիաներին (համեմատաբար ուշ ձևավորված այս աստվածության ֆունկցիաները ավելի վաղ հատկացված էր նախորդ աստվածություններին)[7]:

Ինչպես Տիգրան Երվանդյանի մասին վիպերգի մաս բերված այս առասպելում, ինչպես տեսանք, նորածին դյուցազուններից մեկը՝ առյուծ սանձածը,սլանում էր արևմուտք: Արևելք- արևմուտք շարժման ուղղությունը արևի օրական շարժման ուղղությունն է՝ արևելքում ծագող արևը մայր է մանում արևմուտքում: Այս դյուցազնի արևի անձնավորումը լինելու հանգամանքը փաստվում է նաև հայկական ավանդություններից մեկի օգնությամբ: Ըստ այդ ավանդության, «Արևը առյուծի մեջքին նստած սլանում է երկնակամարի վրայով և երեկոյան գնում հանգստանում է մոր գրկում: Առյուծն իր վիթխարի թրով պաշտպանում է նրան քաջքերից»[8]: Անկասկած, արևի անձնավորում այս դյուցազնը լինելու է հնդեվրոպական «Պարզ երկնքի և արևի աստվածության» ժառանգորդը, որի հասարակական ֆունկցիաները զուգադիպում էին քրմական դասի ֆունկցիաներին:

Մայր դիցուհու ծնած երկրորդ դյուցազնը՝ ընձառյուծ սանձածը և հյուսիս արշավողը, անձնավորումն է գարնան և բնության զարթոնքի, որովհետև նրա շարժման ուղղությունը (հարավից հյուսիս) հենց գարնան շարժման ուղղությունն է հասարակածից հյուսիս ընկած բոլոր երկրներում: Նույն այդ ուղղությամբ են հետ չվում գարնան ավետաբեր թռչունները՝ արագիլը և ծիծեռնակը: Քանի որ գարունն ու բնության

6 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. Եր., 1981,Ա, իզ:
7 Т. Гамкрелидзе, Вяч. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, т.II, Тбилиси,1984,стр. 793-796.
8 Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Եր., 1969, էջ 4

զարթոնքն անձնավորող աստվածությունները նաև մեռնող - հառնող աստվածներ են, ապա ակամայից հիշում ենք փոքրասիական ծագմամբ հունական Դիոնիսոս աստծուն, որը ևս պատկերվում էր ընձառյուծ հեծած: Ըստ այսմ, մեր այս դյուցազնը ժառանգորդն էր լինելու հնդեվրոպական «տնտեսական գործունեությունն հովանավորող և բերրիություն անձնավորող աստվածության», որի հասարակական ֆունկցիաները համընկնում էին արտադրողների դասի ֆունկցիաներին:

Մույր ռիցուհու ծնած երրորդ դյուցազնը՝ վիշապ սանձածը, արծվաքթիչը և Աժդահակի մահաբերը, որը վիպերգում նույնացված է եղել Տիգրան Երվանդյանի հետ, լինելու էր ժառանգորդը հնդեվրոպական «ամպրոպի և կայծակի, երկնամերձ լեռան աստվածության», որի հասարակական ֆունկցիաները համընկնում են զինվորական դասի ֆունկցիաների հետ:

Աժդահակի երգի այս երեք դյուցազուններն են, որ հանդես գալով որպես հին հայերի երեք դասերի երկնային դասապետներ, նույնացված են եղել այդ նույն դասերի երեք իրական դասապետների հետ: Վերջիններս եղել են Քսենոփոնի «Կյուրոպեդիայում» հիշատակված այքայորդիներ Տիգրանեսը, Սաբարիսը և զորավար (հետևակազորի հրամանատար) Էմրասը[9]: Դեռևս Մ. Չամչյանցն էր ցույց ավել, որ Քսենոփոնի հիշատակած արքայազն Տիգրանեսը Խորենացու երկից քաջ հայտնի Տիգրան Երվանդյանն է[10]: Այսուհանդերձ, պետք է ի նկատի առնել, որ Տիգրան Երվանդյանը վիպական կերպար է՝ պահպանած ինչպես իր պատմական նախատիպ նույնանուն անձանց, այնպես էլ նրանց հետ նույնացված հին հայոց ամպրոպի աստծուն բնորոշ գծեր: Ի դեպ, երկրնույթ է նաև նրա հակառակորդ Աժդահակի կերպարը, որի մեջ միաձուլված են թե՛ Մարաստանի Աստիագես թագավորին (մ.թ.ա. 625-585թթ.), թե՛ իրանական առասպելների Աժի - Դահակային («Օձ-Դահակ») բնորոշ գծեր[11]: Տիգրան Երվանդյանի կերպարի ամպրոպային գծերի առնչությամբ Մ. Աբեղյանը գրում է. «Ամպրոպային առասպելի մեջ ամպրոպի աստծու քրոջը կամ կնոջը հափշտակում է վիշապը և արգելում իր բուրգում: Բայց աստվածը հաղթելով վիշապին՝ ազատում է քրոջը կամ կնոջը: Մեր առասպելի մեջ Տիգրանն է հին նույն դերն է կատարում: Աժդահակը, ամպրոպային վիշապը, հափշտակում է Տիգրանից (=սկզբնապես ամպրոպային աստծուց) նրա քրոջը և պահում իր մոտ: Բայց Տիգրանը հարձակվում է իր թշնամի վիշապի վրա, սպանում է նրան, ազատում քրոջը... »[12]:

Տիգրան Երվանդյանի մասին վիպերգի բաղկացուցիչ մաս դարձած քննարկվող առասպելը, ըստ երևույթին, նախապես բաղկացուցիչ մասն էր լինելու սարեմսի թաահրականացված արարողակարգի: Հետևենք դյուցազունների ծննդի հերթականությանը: Նախ ծնվում է առյուծ սանձած արևն անձնավորողը: Սա սարեմսուան էր խորհրդանշում՝ գարնանային գիշերահավասարը (մարտ 21-22): Ապա ծնվում է ընձառյուծ հեծած, գարնան անձնավորում դյուցազնը: Նա խորհրդանշում է ձմեռային ծանր նիրհից արթնացող բնությունը: Վերջապես ծնվում է օձավիշապ Աժդահակի մահաբերը՝ վիշապ սանձած արծվաքթիչ դյուցազնը, ամպրոպի և կայծակի անձնավորումը: Նրա ծնունդը խորհրդանշում է գարնանային օդերևույթների բուռն զարթոնքը, երբ երկնքում, բարձր լեռների կատարներին կուտակված ամպրոպալից ամպերն սկսում են որոտալ և կայծակել, տեղում են առաջին անձրևները: Առասպելաբանական մտածողությամբ այս ամենն ընկալվելու էր նաև որպես տիեզերքի բարեփիր-կենսաբեր կողմերի (արևելք, հարավ, հրկինք) անձնավորումներն համարված գերբնական էակների հաղթանակը նրա խավար – մահաշունչ կողմերի (արևմուտք, հյուսիս, ընդերք) անձնավորումների դեմ, կյանքի հաղթանակը մահվան դեմ, նոր տարվա հաղթանակը հին տարվա դեմ, ազատասեր-հայրենասեր դյուցազնի (այս դեպքում Տիգրան Երվանդյանի) հաղթանակը օտարերկրյա բռնակալի (այս դեպքում Աժդահակի) դեմ:

---

[9] *Xen., Kyrop., III, 1,1-14; III, 3,1-5; V,3,38 (Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, h.Ա, Եր., 1944, էջ 187-196):*

[10] *Մ. Չ ա մ չ յ ա ն ց, Հայոց պատմություն, h. Ա, Եր., 1985,էջ 187-196:*

[11] *Մ. Ա բ ե ղ յ ա ն, Երկեր, h. Ա, Եր., 1966, էջ 134-135:*

[12] *Նույնը, h. Գ, Եր., 1968, էջ 61:*

«Կյուրոպեդիայում» հիշատակված արքայազն Տիգրանի սոցիալական ֆունկցիաների մասին՝ որպես զինվորների դաստիարակի, կարող ենք վկայել ոչ միայն ամառոպի հին հայկական ասածու հետ նրա նույնացված լինելու հանգամանքը, այլև ուրիշ մի շարք իրողություններ: Ուշադրության են հատկապես Խորենացու վկայությունները Տիգրան Երվանդյանի ծավալած և ռազմական բնույթ կրած գործողությունների մասին, չնայած գտնում ենք, որ այստեղ իրենց արտացոլումն են գտել ոչ միայն Աքեմենյան Կյուրոսի ժամանակակից ու դաշնակից Տիգրանի, այլև Արտաշիսյան Տիգրան Մեծի իրագործած նվաճումները[13]: Պատմահայրը Տիգրան Երվանդյանի մասին գրում է. «… Սա ամենեցունց թագաւորացն մերոց հարառագոյն եւ խոհեմագոյն, եւ արանց այնոցիկ եւ ամենեցուն քաջ… Եւ զսահմանս մերոյ բնակութեանս ընդարձակեալ՝ ի հինսն մեր հասուցանէր յեզերս ծայրից բնակութեանն… Արանց կացեալ գլուխ եւ արութիւն ցուցեալ՝ զազգս մեր բարձրացոյց, եւ զընդ լծով կացեալսն՝ լծադիրս եւ հարկապահանջս կացոյց բազմաց… Հեծեալկամարտքն ի վերայ ուսոց ձիոց բերեալք, եւ պարսաւորքն սա հասարակ դիպողեղունք, եւ շերտաւորքն ի սուսեր եւ ի տէգ նիզակի վառեալք. մերկքն վահանօք եւ զգեստուք երկաթեօք պարածածկեալք: Որոց ի մի վայր հաւաքեալ բաւական էր տեսիլն միայն, եւ որ լի նոցայն պահպանակաց եւ զինուց փայլմունք եւ շալիւնք՝ զթշնամիսն արտաքսելոյ»[14]:

Ինչպես Տիգրան Երվանդյանի, այնպես էլ Արտաշիսյան Տիգրան Մեծի ունեցած ռազմական հաջողություններին և հայ զինվորների դաստիարակներն լինելուն համահունչ է նրանց կրած միևնույն անունը ևս, որը նույնպես պետք է քննարկման առարկա դառնա: Նրանց կրած *Տիգրան* անունը ծագումով իրանական է, բայց իրանցիների մեջ հազվադեպ կիրառություն գտած[15]: Ըստ Հ. Աճառյանի, այս անվան իրանական նախաձևը ունեցել է *tigrarana տեսքը՝ կազմված tigra «նետ» և rana «մարտնչող» բառերից, հետո արագաբանության օրենքով վերածվել է *tigrana –ն. որից էլ մեր *Տիգրան*-ը[16]: Մեր կարծիքով, անվան առաջին մասը ներկայացնում է ոչ թե իրան. tigra «նետ», այլ *tig // *tēg- (որից՝ հայ. *տէգ)* բառը: Այսպիսի ստուգաբանության հավաստիությունը հաստատվում է Տիգրան Երվանդյանի վերաբերյալ Մ. Խորենացու հաղորդած հետևյալ տեղեկություններով:

1.Աժդահակի երազում վիշապ սանձած դյուցազնը (Տիգրան Երվանդյանի երկնային համարժեքը) նրա հետ մենամարտում է նախ «ի *տէգ նիզակաց*»[17]:

2. Տիգրանի համար Խորենացին ասում է. «Բայց զօգտս զքաջ նահատակն իմ եւ *զնիզակաւորն*»[18]:

3. Ապա. «Եւ զի՞ երկայնեմ զբանս. քանզի ի լինել մարտին *նիզակաւ* օրինակ իմն որպէս զջուր հերձեալ զերկաթի ամուր հանդերձն՝ շամփրէ զԱժդահակ յընդարձակ *տէգ նիզակին*, եւ յամփոփել միւսանգամ զձեռնն արտաքս զկէս մասն թոքոցն հանդերձ *զինուն* ի դուրս բերէ»[19]:

Որ նիզակը կայծակի խորհրդանիշն էր համարվում և դասային – սրբազան նշանակություն էր ձեռք բերել, հանրահայտ է: Առաջինի սաթիվ հիշենք «կայծակ» պատասխանը պահանջող հետևյալ հանելուկը. «Սարին էկամ վազեվազ / Ջիդսն (նիզակ) թալիմ օխտը գազ»[20]: Երկրորդի սաթիվ ավելորդ չեմ համարում մեջ բերել Խ. Սամուելյանի հետևյալ առիթը. «Նա համարվում էր իշխանության խորհրդանիշ… Նիզակն ազատ ծնված յուրաքանչյուր քաղաքացու զենքն էր, ուստի և այն դնում էին զինվորի գերեզմանում: Նիզակը նաև պատերազմի խորհրդանիշ էր համարվում. հին հռոմեացիները, գաղղիացիները(գալլերը) ու սկանդինավները, պատերազմ հայտարարելիս՝ մի քանի նիզակներ էին նետում թշնամու երկրի սահմանագծի

[13] Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ա, Եր., 1966, էջ 138–139, Հայ ժողովրդի պատմություն, հ. I., ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1971, էջ 437, 891-892:
[14] Մովսիսի Խորենացւոյ…, Ա, իդ:
[15] Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Եր., 1972,էջ 335-336:
[16] Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ.Դ, Եր., 1979, էջ 638:
[17] Մովսիսի Խորենացւոյ…, Ա, իզ:
[18] Նույնը, Ա, իթ:
[19] Նույն տեղում:
[20] Ս. Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ, Եր., 1965,էջ 13:

վրայով: Նախապատմական Հայաստանում էլ ճիզակը պիրապետող ու համատարած զենք է եղել սկսած քարեդարյան ժամանակաշրջանից: Այդ են ապացուցում հնագիտական պեղածոների մեջ հանդիպող բազմաթիվ նիզակածայրերը»[21]:

Նիզակավոր են նաև քրիստոնյա զորավար սրբերը: Նրանցից հատկապես սուրբ Սարգիսը, մանավանդ ժողովրդական ավանդություններում, հանդես է բերում ընդհանար գծեր ինչպես Տիգրան Երվանդյանի առասպելաբանական, այնպես էլ պատմական նախատիպերի հետ: Ավանդություններից մեկի համաձայն, «ծովերավ զարդարված նիզակը ձեռին, յափնջին ուսին նա շրջում է ողջ Հայաստանով մեկ: Նրա ձիու պնչերից ամպեր են ցայտում և փաթիլ-փաթիլ ձյուն անում, ոտների տրոփյունից աշխարհք թնդում, *նիզակի* խաղացնելուց սաստիկ բուք բարձրանում»[22]: Ճիշտ է, հաճախ սուրբ Սարգիսը ժողովրդական հավատալիքներում և ավանդություններում իրեն դրսևորում է որպես հեթանոսական եղմի աստծու ժառանգորդ[23], բայց երբեմն էլ բացահայտում է իր ամպրոպային էությունը: Ի նկատի առնենք, որ ամպրոպի և եղմի աստվածությունների տիեզերական ֆունկցիաների միավորումը ռազմի աստծու կերպարում առասպելաբանական մտածողության յուրահատկություններից էր[24]: Օրինակ, հաճախ ^{d}IM գաղափարագրի տակ են սեպագրերում հանդես գալիս այնպիսի ամպրոպային աստվածություններ, ինչպիսիք են ուրարտական Թեյշեբան և աքքադական Ադադը, երբ “IM – ը ուղղակի «եղմ» է նշանակում[25]:

Սուրբ Սարգսի ամպրոպային էությունը ուրվագծվում է, օրինակ, հետևյալ ավանդության մեջ. «Երկու որբեր՝ քույր ու եղբայր (Սիմիկ և Սիմոն) ապրելիս են լինում մի գյուղում որի ջուրը կտրում է վիշապը: Ջուր ստանալու համար գյուղացիները ստիպված ամեն անգամ երկու մարդ էին զոհում վիշապին: Հերթը հասնում է որբերին: Սբ. Սարգիսը խղճալով, խլում է սրանց վիշապի երախից ու *նիզակով* սպանում է վիշապին»[26]: Սբ. Սարգիսն իր ամպրոպային էությանը առավել հստակ կերպով դրսևորամ է ժողովրդական ավանդություններից մեկի հետևյալ հատվածներում. «Սուրբ Սարգիսը մի ազրայիլ ադամարդ ա ըլել: Ղզլբաշի Ուշար թագավորը… հայերին սկսըմ ա կապել, տանջել, չըրչարել… Սուրբ Սարգիսն իր ընկերաանոց հետ հասնըմ ա Ուշարի ղոշունին (զորք), թյունդ կռիվ տալի… Սուրբ Սարգիսն ամպի պես կեռըմ (գոռում), կեծակի նման արաք-արաքըմ, քանդուքար ա անըմ թագավերի բեյլերն ու էնտեղ կապած, կշկռած հայերին ազատըմ»[27]: Բերված ավանդության մեջ Սուրբ Սարգսի կերպարը հնագույն առասպելաբանական և պատմական բնույթի կապեր է դրսևորում Տիգրան Երվանդյանի կերպարի հետ: Մի դեպքում Ղզլբաշի (Իրանի) Ուշար թագավորն է, որի անունը «վիշապ» է նշանակում, մյուս դեպքում Մարաստանի (Իրանում) թագավոր Աժդահակը, որի անունը ևս «ի մեր լեզու է վիշապ»[28]:

Մեր խորին համոզմամբ, Տիգրան Երվանդյանին բնորոշ վիշապասպանության և ամպրոպային էության առանձնյուններից էլ պետք է քննարկման առարկա դարձնել նրա *Երուանդեան* մակդիրը, որը իր հիմքում ունի հայոց վաղնջական ժամանակների ամպրոպի աստծու *Երուանդ* անունը: Հին մարդիկ առասպելաբանական մտածողությամբ իրենց իշխող առեմներին կամ նրանց հայանի ներկայացուցիչներին վերագրում էին աստվածային ծագում: Օրինակ, մեր Վահունի քրմապետական տոհմը ծագած էր համարվում Վահագն աստծուց[29], ինչ հույները Հերակլեսից էին սերած համարում Արգոսի, Մնսենայի, Սպարտայի արքայատոհմերին Հունաստանում և Լյուդիայի արքայատոհմը Փոքր Ասիայում, իսկ մակեդոնական ծագմամբ Սելևկյան աբքայա-

---

[21] *Խ. Ս ա մ ո ւ ե լ յ ա ն, Հին Հայաստանի կուլտուրան, հ.2, Եր., 1941, էջ 65:*
[22] *Մ. Ա բ ե ղ յ ա ն, նշվ. աշխ., հ. է, Եր., 1975, էջ 81, Ե. Լալայան, Երկեր, հ.1, Եր., 1983, էջ 271:*
[23] *Մ. Ա բ ե ղ յ ա ն, նույն տեղում, էջ 78-82:*
[24] *Նույնը, հ.Գ, էջ 48:*
[25] ***Н. А р у т ю н я н, Новые урартские надписи Кармир-Блура, Ер. 1966, стр. 30, В.Афанасьева, Адад, "Мифологический словарь", М., 1991, стр. 17.***
[26] *Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 188-189:*
[27] *Նույնը, էջ 366:*
[28] *Մովսիսի Խորենացւոյ…, Ա, է:*
[29] *Նույնը, Ա, լա:*

տոհմը իր աստվածային նախնին համարում էր Այդոնին[30]: Ուրեմն, արտառոց ոչինչ չկա այն բանում, որ մ.թ.ա. VI-IIIդդ. Հայաստանը կառավարած արքայական- սատրապական տոհմը և նրա ներկայացուցիչները կոչվել են *Երուանդեան*, *Երուանդունի // Արուանդունի*, *Երուանդական* (արամեատառ rwndqn)[31], իսկ նրանցից ոմանք ուղղակի կրել *Երուանդ* անունը (գահանունը):

Երուանդ//Արուանդ անվան իրանական ստուգաբանությունները հենվում են նրա և համապատասխան իրանական բառերի հնչյունական նմանության վրա, պատմական հիմնավորում չունեն, իրարամերժ են, ուստի և անընդունելի: Հայտնի ստուգաբանությունները հայկական այս անունը բխեցնում են կամ պահլավ. arvand (ավեստ. aurva, aurvant) «արագ, քաջ», կամ պարս. arvand «խղձ, փափուգ» , «շուք և փառավորություն», «փորձ» բառերից, կամ մարական *Rayavant (ավեստ. raēvant) «հարուստ, ճոխ» նախաձևից[32]: Մեր *Երուանդ//Արուանդ*-ի հունական համարժեքներն են *Օրոնտաս//Օրոնտէս*-ը և *Արոանդէս*-ը: Սրանցից առաջինը հույն հեղինակների կողմից գործածական ձևն է, իսկ երկրորդը հանդիպում է Նեմրութ լեռան (Կոմագենեում) արձանագրություններում և ավելի հարազատորեն է վերարտադրում անվան հայկական նախաձևը[33] (կոմագենացի արձանագրողը հավանաբար չի իմացել նրա հունական համարժեքի գոյությունը):

Հունական *Օրոնտաս//Օրոնտէս*-ը հայկական *Երուանդ //Արուանդ*-ի իսկական համարժեքն համարվել չի կարող: Գ. Ջահուկյանը հունականի համարժեքն համարում է հայկական *Հրանտ //Հրանդ //Հրատն* անձնանունը և մակեդոնական *Օրոնտաս*-ը (հմմտ. նաև լատինական Orontes–ը՝ ըստ Վիրգիլիոսի), ավելացնելով, որ «մակեդոնական անվան համար իրանական ծագում ենթադրելը դժվար է, մանավանդ որ -*տաս*-ը մակեդոնական սովորական ածանց է»[34]: Ի դեպ, հին հույները կարող էին հայկական *Երուանդ//Արուանդ-ի* համարժեքն համարել իրենց ծանոթ մակեդոնական *Օրոնտաս*-ը այնպես, ինչպես ռուսների համար **Никита** –ն «համարժեքն» է մեր *Մկրտիչ*-ի, **Борис**-ը *Բաղիշ*-ի, **Сема**–ն *Սենեքերիմ // Սենիկ*-ի և այլն: Ուրեմն, մենք հրաժարվելու ենք հայկական *Երուանդ //Արուանդ* անվան զուգահեռ օտար ձևերը որոնելիս հենվել նրա և վերոհիշյալ օտար բառերի ու անունների արտաքին հնչյունական նմանության վրա:

Ասվեց, որ Տիգրան Երվանդյանի *Երուանդեան* մականվան իմաստը որոնելիս ելակետ պետք է դարձնել վիպական այդ կերպարի առասպելաբանական նախատիպի ամպրոպային վիշապամարտիկ լինելու իրողությունը: Այսպիսի մոտեցման իրավացիությունը հաստատվում է *Երուանդ //Արուանդ* անվան իմաստային համարժեքի գոյությամբ: Խոսքը Արմավիրի հունարեն մի արձանագրությունից հայտնի Εβρόντης անվան մասին է: Արձանագրությունն այդպես է կոչում մ.թ.ա. III –IIդդ. սահմանագլխին թագավորած Երվանդ Վերջինին[35]: Այս անվան հիմքում դժվար չէ նկատել հունարեն βροντη «ամպրոպ» բառը, քանի որ արձանագրությունը, Հայաստանում գրված լինելով հանդերձ, հունարեն է և վերաբերում է հելլենիստական դարաշրջանին: Որպես հատուկ անուն հունարեն բառի գործածման օրինակ աչքիս է առասպելաբանական Բրոնտէս («Ամպրոպային») կիկլոպի անունը[36], իսկ որպես երկնքի և ամպրոպի Զևս աստծու հատկանիշ գործածված է հետևյալ բառակապակցություններում. Ζεύς βρόντησε

---

[30] *А. Зайцев, Гераклиды, "Мифологический словарь", стр. 149-150; Э. Бикерман, Государство Селевкидов, М., 1985,стр.236.*

[31] *А. Периханян, Арамейская надпись из Зангезура, Պատմա-բանասիրական հանդես, 1965, 4, էջ 108:*

[32] *Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ.2, Եր., 1944, էջ 145, А. Периханян, նշվ. աշխ., էջ 121:*

[33] *Գ. Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Եր., 1966, էջ 30:*

[34] *Գ. Ջահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 42:*

[35] *Հ. Մանանդյան, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Եր., 1946, էջ 27-28, 47-49:*

[36] *"Древнегреческо-русский словарь", т.I, М., 1958, стр. 308.*

(ըստ Հոմերոսի) և Ζεὺς βροντων (ըստ Արիստոփանեսի)։ Սրանց երկրորդ բաղադրիչների համար հմմտ. βρονταω «որոտալ» և «շանթեր արձակել, որոտալից խոսել»[37]:

Երվանդ Վերջինի Εβρόντης // «Ամպրոպային» կոչումը նրա *Երուանդ* անվան համարժեքն է, խոսում է վերջինիս «ամպրոպային» բնույթի մասին, որն հաստատվում է նաև այս Երվանդին վերագրված աչքերով շանթելու հավուտալիքի գոյությամբ: Այս առթիվ մեր պատմահայրը գրում է.«Բայց ասեն զԵրուանդայ՝ ըստ հմայից դժնեայ զդ ակսն հայեցուածով. վասն որոյ ընդ այգանալ աչալրջացն սովորութիւն ունել սպասաւորացն արքունի՝ վէմս որձաքարեայս ունել ընդդէմ Երուանդայ,եւ ի հայեցուածոցն դժնդթենէ ասեն պայթել որձաքար վիմացն: Բայց այս կամ ելիցի սուտ եւ առասպել, եւ կամ դիւակսն ինչ առ իւր ունել զօրութիւնս, զի այսպէս հայեցուածոցն անուամբ վնասեսցէ զորս կամի»[38]: Պարզ է, որ Երվանդունի թագավորական դինաստիայի այս վերջին ներկայացուցիչի կրած *Երուանդ* անունը եթե «ամպրոպային» բնույթ չունենար, ապա նրա կրողը չէր կոչվի նաև Εβρoντης և նրան չէր վերագրվի շանթարձակ աչքերով որձաքար պայթեցնելու ունակություն:

Ասվածները թույլ են տալիս պնդելու, որ Տիգրան Երվանդյանի *Երուանդեան* մակդիրի մեջ առկա *Երուանդ* անունը «ամպրոպային» բնույթ ունի: Նրա հիմքում հ.-ե. *per- «խփել» արմատն է, որից են ծագում նաև *հարոյ* «զարնել», «նետ արձակել» և *հարել* «եղջյուրով խփել» բառերը[39]: Այս երկրորդի առնչությամբ նիշենք,որ ամպրոպի աստծու սրբազան կենդանիներն էին համարվում նախ և առաջ եղջերուվորները՝ ցուլեր, նոխազներ, խոյեր (պատկերացվում էին նաև թևավոր), որոնք եղել են նրանց կենդանական նախատիպերը ևս: Հմմտ. հայկական հետևյալ հանելուկները.

1. «Ինքը էծ,/Մեջքը պեծ» (պատասխանը՝ «ամպ»),
2. «Կով մի ունիմ հանա-հանա, /Կռառշները մարխանա, / Կաթնաղբյուրեն ջուր կը խմա,/ Արյունծովեն ծեն կը հանա» («ամպ և որոտ»),
3. «Էն ի՞նչն ա ինչ / Կովը բռանչի ,/ Փորթը վախչի» («որոտ և կայծակ»),
4. «Գարմեր եզ մը ունիմ, /Պոլսկելով (թառաչել) խեւր (եռդ) մդնու գու» («կայծակ»)[40]:

Հայտնի է, որ ինչպես ամպրոպի աստվածները, այնպես էլ նրանց պաշտամունքի կենտրոնները կարող էին կրել այդ կենդանիների անվանումները պաբունակող անուններ:

Խեթական թագավոր Սուպպիլուլիումայի (1380-1340թթ. մ.թ.ա.) և Հայասայի ցեղապետ -արքա Խուկանայի միջև կնքված պայմանագրի վերջնամասում հիշատակված հայասական աստվածների շարքում կաւին ամպրոպի երեք աստվածներ: Դրանցից մեկը Առնիյա քաղաքում (^{uru}Ar-ni-ja) պաշտվող և ^{d}U գաղափարագրի տակ հանդես եկող աստվածն էր[41]: Ըստ երևույթին, նա ևս կոչվել է **Առնիյա:* Հմմտ. ուրարտական ռլիցառանի Առնի (^{D}Arni) աստվածը և նրա անվան հետ նույնածագում Առնա բնակավայրի (^{URU} Arna) անունը[42]: Իսկ «^{d}Arni աստվածությունը ունի հայկական ծագում (*առն* բառը բնութագրվում է որպես բնիկ հայկական բառ՝ ծագած հնդևրոպական *rsen- «արու» ձևից)»[43]: Այս նույն արմատից է ծագում նաև հայ. *առն* «տրու վայրի ոչխար» բառը՝ ազգակիցը հուն.- հոմեր.՝αρνειός «խոյ» և հին հնդկ. rṣabha «ցուլ» բառերի[44]: *Առն* «առտ վայրի ոչխալ, խոյ», «արու մարդ,տղամայտ» (տրեմն, նաև «արու աստվածություն», «առնական աստված») նշանակող բառն էլ ընկած է լինելու ինչպես հայասական քաղաքանվան, այնպես էլ ^{d}U գաղափարագրի տակ հանդես եկող տեղական ամպրոպի աստծու անվան հիմքում: Ի

---

[37] "Древнегреческо-русский словарь", т.I, М., 1958, стр. 308.

[38] *Մովսիսի Խորենացւոյ..., Բ, խբ:*

[39] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայերեն արմատական բառարան, h.Գ, Եր., 1977, էջ 52-55:*

[40] *Ս. Հ ա ր ո ւ թ ո ւ ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 11-12:*

[41] *В. Х а ч а т р я н, Восточные провинции хеттской империи (вопросы топонимики), Ер., 1971, стр.148 (KUB, XXVI,39,IV,29).*

[42] *Н. А р у т ю н я н, Биайнили (Урарту), Ер., 1970, стр.360.*

[43] *Ս. Հ մ ա յ ա կ յ ա ն, Վանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990, էջ 57-58:*

[44] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., h. 1, Եր., 1971, էջ 261:*

դեպ, Հայկական լեռնաշխարհի հնագույն մի շարք տեղանուններում առկա - ija տեռանվանակերտը, որը ծագում է հ.- ե. - ijo նախաձևից, գործածվել է նաև որպես անձնանվանակերտ: Հմմտ. հայաստական Սարիյա և Անիյա ցեղապետ արքաների անունները[45]: Սրա հետին ձևն է ներկայացնում հայ. *–ի* վերջածանցը՝ ստկւս ուրարտական Arni դիցանվան մեջ: *Երուանդ //Արուանդ* անվան հիմքում ընկած հ.-ե. *per- արմատից են սերում ոչ միայն *հարուլ* «խփել», «նետ արձակել» (նախապես նաև «նիզակահարել») և *հարել* «հղջերահարել» բառերը, այլև ազգակից լեզուներում ինչպես ամպրոպային երևույթներ նշող մի շարք բառեր, այնպես էլ ամպրոպի, երկնքի ու պատերազմի աստվածների հատկացված մի շարք դիցանուններ[46]: Այս շարքի մեջ իր տեղը պետք է զբաղեցնի նաև հայկական *Երուանդ //Արուանդ* -ը՝ ծագած հ.-ե.*pervnt - նախաձևից[47]:

Վերապատմելով վիպական Տիգրան Երվանդյանի պատմական առաջին նախատիպին՝ «Կյուրոպեդիայի» Տիգրան արքայորդուն, կարող ենք վստահ ասել, որ նա է եղել գինվորների դասապետը ոչ միայն համաձայն Մ. Խորենացու հաղորդած տեղեկությունների, այլև Քսենոփոնի վկայությունների: «Կյուրապեդիայում» կարդում ենք.

1. «...Արմենների թագավորի մեծ որդին՝ Տիգրանը, որը երբեմն Կյուրոսի որսի ընկերն էր եղել»[48]:
2. Կյուրոսն հարցնում է հայոց թագավորին, թե «ով է առաջնորդելու զորքը՝ որդի՞ն,թե ինքը: Եվ նրանք միասին ասացին. հայրը ասաց այսպես. «Ում որ դու կհրամայես», իսկ որդին՝ «Ես քեզանից չեմ բաժանվի, ո՜վ Կյուրոս...»[49]:
3. «Հետևյալ օրը եկավ ինքը՝ Տիգրանը, պատրաստ ճանապարհվելու և նրա հետ նաև ի մի հավաքված զորքը՝ չորս հազար ձիավոր, տասը հազար նետաձիգ և նույնչափ այլ թեթև վահանակիր[50]:
4. «Այնուհետև նա (Կյուրոսը- Ս. Պ.) բերեց Տիգրանին կնոջ զարդ և հրամայեց տալ (իր) կնոջը, որովհետև նա արիաբար մասնակցել էր պատերազմին ամուսնու հետ միասին»[51]:

Բերված հատվածներից երկրորդը և երրորդը մեկնաբանումների կարիք չեն զգում: Առաջին հատվածը չի պարզում, թե որտեղ կարող էին որսընկերներ դարձած լինել Կյուրոսը, որը պարսից թագաժառանգն էր, և հայոց թագաժառանգ Տիգրանը: Բնականաբար, այդ տեղը չէր կարող լինել ո՛չ Հայաստանը, ոչ էլ բուն Պարսկաստանը (Պարսք, Ֆարս): Կյուրոսն ու Տիգրանն որսընկերներ ու մտերիմներ դառնալ կարող էին միայն Մարաստանում, մարական արքունիքում, երբ որպես ենթակա թագավորությունների թագաժառանգներ գանվելիս են եղել պատանդության մեջ: Այստեղ էլ նրանք մար արքայորդիների և մար մեծամեծների զավակների հետ միասին, ընդունված սովորույթի համաձայն, զբաղվելու էին թե որսորդությամբ, թե զինավարժություններով, թե պատերազմական գործով: Վկան, Կյուրոսի զորավարական գործունեությունը: Չորրորդ հատվածից երևում է, որ Տիգրանի կինը ամուսնու հետ «արիաբար մասնակցել էր պատերազմին», որի համար էլ հատուկ

---

[45] *Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 331:*

[46] *Т. Г а м р е л и д з е, Вяч. И в а н о в, там же, т. II, стр. 615, 793; В. Топоров, Прусский язык, Словарь, I- К, М., 1980, стр 295; Л. Гиндин, К возможности реконструкции фракийского языка на материале греко- римских надписей, "Вестник древней истории", 1978, 3, стр.138; Е. Мелетинский, Фьергюн, "Мифы народов мира", т.2, М., 1988, стр. 573.*

[47] *Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն, Վահագնի երգի ակրոստիքոսների վերականգնման և վերծանման փորձ, Լրաբեր հասարակական գիտությունների, 1981, 4, էջ 83-85:*

[48] *Xen., K y r o p., III,1,7 (Հ. Սանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, էջ 401):*

[49] *Xen., K y r o p., III,1,42, (Հ. Սանանդյան, նշվ. աշխ., էջ 405)*

[50] *Xen., K y r o p., VIII,2,3 (Հ. Սանանդյան, նշվ. աշխ., էջ 406)*

[51] *Xen., K y r o p., VIII,4,24 (Հ. Սանանդյան, նշվ. աշխ., էջ 412)*

պարգևի էր արժանացել: Բնական է ենթադրելը, որ այդ ամենը ուղղակի կապ ուներ ոչ թե տիկնոջ, այլ նրա ամուսնու հասարակական ֆունկցիայի հետ: Տիկինը պատերազմին մասնակցելու իրավունք ուներ որպես զինվորների դասապետի կին:

Ուղղակի կապ պետք է գոյություն ունենա ոչ միայն հիշյալ անձանցից Տիգրանի (մի կողմից) և վիշապ սանձած դյուցազնի (մյուս կողմից) միջև, այլև Քսենոփոնի հիշատակած Սաբարիսի ու Էմբասի (մի կողմից) և սայրած ու ընձառյուծ սանձած դյուցազունների (մյուս կողմից) միջև: Ինչպես որ Տիգրանն էր համարվել երկրային մարմնավորումը զինվորների երկնային դասապետի՝ վիշապ հեծած դյուցազնի, այնպես էլ Սաբարիսն ու Էմբասն էին համարվելու երկրային մարմնավորումները քրմերի ու արտադրողների երկնային դասապետների՝ սայրած ու ընձառյուծ հեծած դյուցազունների:

Արքայազն Սաբարիսի սոցիալական ֆունկցիաների բացահայտման գործում ուղենիշ դեր կարող են կատարել Քսենոփոնի հետևյալ վկայությունները:

1. Հայոց թագավորը լսելով Կյուրոսի գլխավորած զորամասի Հայաստան ներխուժելու մասին, «ոչ միայն ուղարկեց ոմանց զանազան կողմեր հավաքելու իր ուժերը, այլև լեռներն ուղարկեց իր կրտսեր որդուն՝ Սաբարիսին, ու կանանց՝ իր և որդու, նաև աղջիկներին: Նրանց հետ միասին ուղարկեց նույնպես և զարդերն ու ամենաարժեքավոր կահկարասիքը, և տվեց նրանց ուղեկիցներ»[52]:
2. «Վերջ ի վերջո նրանց (Կյուրոսի զինվորների – Ս.Պ.) ձեռքն ընկան նաև թագավորի որդին, կանայք և աղջիկները ու նաև նրա հարստությունները, որ իրենց հետ տանում էին»[53]:
3. «Վերջ ի վերջո եկավ նրան (Կյուրոսին – Ս. Պ.) զինվորելու և արմենների թագավորի կինը դուստրերի ու կրտսեր որդու հետ ու բերեց իր հետ մյուս ընծաների հետ նաև ոսկի, որն առաջ Կյուրոսը չէր ուզում վերցնել: Կյուրոսը տեսնելով այդ, ասաց. «...դու, տիկին առ այդ իրողը, որ բերում ես, և գնա՛, ու այլևս մի՛ տա արմենների թագավորին, որ նա այդ գեանի մեջ թաղե: Դու ուղարկիր որդուդ (Սաբարիսին –Ս.Պ.) զորքի մեջ ու նրանցով ամենագեղեցիկ կերպով նրան զարդարիր»[54]:

Ինչպես տեսնում ենք, Սաբարիսն ուղղակի առնչություն է ունեցել այնպիսի գործերի հետ, ինչպիսիք էին արքայական կանանոցի պաշտպանությունը, գանձերի և թանկարժեք իրերի պահպանությունը և արքունի ամրոց-ապաստարանների հսկողությունը: Կանանոցի, գանձերի և թանկարժեք իրերի հետ միասին լեռներ հեռացող Սաբարիսը նպատակ է ունեցել դրանք հասցնել լեռնային ամրոցներ, որով էլ դրանք ապահովված կլինեին թշնամական ոտնձգություններից: Ըստ այսմ, կարելի է զուգահեռներ անցնել Սաբարիսի ֆունկցիաների և ուշ ժամանակների մարդպետի ֆունկցիաների միջև: Հայտնի է, որ Արշակունյաց դարաշրջանում մարդպետ կոչված գործակալի տնօրինության տակ էին գտնվում արքայական կանանոցի վերակացությունը և արքունի գանձերի, բերդերի ու կալվածքների վերահսկողությունը[55]: Ընդ որում, մարդպետների տնօրինությանը հանձնված այս ոլորտները նախապես գտնվելու էին քրմապետների տնօրինության տակ, որոնց ֆունկցիաները աշխարհի շատ երկրների նման՝ Հայաստանում ևս վաղնջական ժամանակներում շատ ավելի ընդգրկուն էին լինելու, քան հետագա դարաշրջաններում: Մարդպետի և քրմապետի ֆունկցիաների նախնական միասնության մասին են խոսում հետևյալ իրողությունները:

Հունահռոմեական աղբյուրներում հիշատակվում է հայկական *մարդ* անունով մի «ցեղ», որը ոչինչ ընդհանուր ունենալ չէր կարող իրանական փաչկատուն *մարդ* կամ *ամարդ* կոչված ցեղի հետ: Ն. Ադոնցի կարծիքով, մարդպետության գործակալությունը գլխավորած հայր մարդպետանեայք սերում էին հայկական մարդերից, որոնց անունն էլ կրում էին թե՛ գործակալը, թե՛ նրա գործակալությունը[56]: Սրանց բնակության շրջանի վերաբերյալ արտահայտվել են տարբեր և իրարամերժ կարծիքներ: Հ. Մանանդյանը

---

[52] *Xen., K y r o p., III 1,1-2, (Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 400)*
[53] *Xen., K y r o p., III, 1,4 (Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 400)*
[54] *Xen., K y r o p., III, 3,2-3, (Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 411-412)*
[55] *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, նշվ. աշխ., հ.Բ, մասն 2 Եր.,1957, էջ 329:*
[56] ***Н. А д о н ц, Армения в эпоху Юстиниана, Ер.,1971, стр. 417.***

վերջնականապես ճշտեց նրանց բնակության տարածքը, ցույց տալով, որ մարդերը նախապես չէին կարող բնակված լինել ո՛չ հետագա Մարդաստանում, ո՛չ հետագա Մարդուցայքում, ո՛չ էլ հետագա Մարդաղիում և որ նրանց բնակեցրած տարածքը գտնվում էր Հայկական Պար լեռնաշղթայի և Տարոնի միջև, ներառելով Արածանիի (Արևելյան Եփրատի) վերին հոսանքի ավազանը[57]: Հ. Մանանդյանի եզրակացությունը հենվում է Տակիտոսի այն հաղորդումների վրա, որոնք վերաբերում են Արտաշատում ձմեռած հռոմեական զորավար Կորբուլոնի կողմից «Արքայական պողոտայով» դեպի Տիգրանակերտ 59թ. ձեռնարկած արշավանքին: Հռոմեացի պատմիչը գրում է. «Իսկ երբ նա անցնում էր մարդերի սահմանների մոտով, որոնք ավոր էին ավազակային հարձակումների, իսկ ներխուժումներից պաշտպանված էին լեռներով, նրանք հարձակումներ գործեցին նրա վրա: Նրանց դեմ նետելով իբերներին, Կորբուլոնը ավերեց նրանց հողերը և թշնամու (մարդերի – Ս.Պ.) հանդգնության վրեժը լուծեց ուրիշի (իբերների –Ս.Պ.) արյունով»[58]: Որ խոսքը Հայկական Պարից մինչև Տարոն ձգված տարածքի մասին է, պարզ երևում է Տակիտոսի հաջորդ շարադրանքից: Նա գրում է.«Անցնելով ապա Տարոնցիների երկիրը, Կորբուլոնը խուսափեց անսպասելի վտանգից. նրա վրանի մոտ բռնվեց երևելի առնից ոմն զինված բարբարոս (հայ-Ս.Պ.)»[59]:

Մարդերի բնակեցրած այս տարածքի մեծ մասը կազմում էին հետագա Հարք և Բագրևանդ գավառները: Սրանցից առաջինը Մանավազյան նախարարական տոհմի սիրույթն էր, իսկ այս սահմն իրեն սերած էր համարում Հայկի քուրմ որդի Մանավազից[60]: Որ Հարքը ժամանակին քրմապատական գավառ է եղել, երևում է նաև նրանից, որ Խոսրով Կոտակի հրամանով Մանավազյան տոհմի բնաջնջումից հետո այն հանձնվեց Աղբիանոս եպիսկոպոսին, որը ևս քրմական ծագում ուներ[61]: Հիշյալ գավառներից երկրորդում՝ Բագրևանդում էին գտնվում համահայկական այնպիսի սրբավայրեր, ինչպիսիք էին սրբազան Նպատ լեռը, Արածանիի ակունքները և Բագավանն իր հայտնի սրբավայրերով: Այս գավառը ևս քրմապատական էր լինելու, որովհետև, ըստ Մ. Խորենացու, այստեղ էր թաղված Սաժան քրմապետը[62], իսկ ավելի ուշ վախճանվել էր Սահակ Պարթև կաթողիկոսը[63]: Վերջին իրողությունը վկայությունն է այն բանի,որ գավառը ժառանգական տիրույթն է եղել Լուսավորչի կաթողիկոսական տոհմի: Բայց մինչ այդ Բագրևանդը, Հարքի հետ միասին, պատկանելիս էր Աղբիանոսյան կաթողիկոսական սահմին, որովհետև սրա հիմնադիր վերոհիշյալ Աղբիանոս եպիսկոպոսը «կողմանցն Եփրատական գետոյն լինէր վերակացու»[64]: Խոսքը Արևելյան Եփրատի (Արածանի) վերնագավառների մասին է՝ Բագրևանդը ներառյալ: Վերջինս որպես Աղբիանոսին հատկացված գավառներից մեկը, հանվանե հիշատակված է Ագաթանգեղոսի երկի արաբերեն թարգմանությունում՝ եփրատամերձ մյուս (հանվանե չհիշատակված) գավառների հետ միասին[65]:

Հնում մարդերի կողմից բնակեցված, ուրեմն, նաև մարդպետների կողմից կառավարվող Բագրևանդ գավառի քրմապատական լինելու մասին է խոսում նրա անվան ստուգաբանությունը ևս: *Բագրևանդ* անվան ավելի հին ձևը լինելու էր

---

[57] Հ. Մանանդյան, Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտինգերյան քարտեզի, Եր., 1936,էջ107: Նույնի, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, էջ 337:

[58] Tac., Ann., XIV, 23:

[59] Նույնը, XIV,24:

[60] Մովսիսի Խորենացւոյ...,Ա, ժբ: Ս. Պետրոսյան, Հայկի նահապետ,զինվոր և քուրմ որդիները, ԳՄԻ գիտական աշխատությունների ժողովածու(երկու հատորով),2, Գյումրի,1996,էջ141-142:

[61] Փաւստոսի Բիւզանդացւոյ, Պատմութիւն Հայոց,Եր.,1987, Գ,դ: Н.Адонц, նշվ.աշխ.,էջ 312, 348:

[62] Մովսիսի Խորենացւոյ...,Բ, ծէ,Բ,կգ:

[63] Մովսիսի Խորենացւոյ..., Գ,կզ,Գ,կէ: Ղազարայ Փարպեցւոյ,Պատմութիւն Հայոց,Եր., 1982,Ա,ժը:

[64] Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց,Եր., 1983, ՃԻԱ, 845:

[65] Н.Адонц, նշվ.աշխ ., էջ 348:

**Բակրեւանդ- ը՝ Բագրեւանդ-ի* վերածված այս գավառի եանքանայտ սրբավայր Բագավանի անվան և ծագումով իրանական *բագ-* «աստված» բաղադրիչը սյուրունակոլ հայկական մյուս անունների ու բառերի ազդեցությամբ: Որ այս անունը նախապես ենչել է ոչ թե *a*-ով. այլ *կ*-ով, վկայում է նրա արաբական *Բ-աղրավանդ* առտալարձություն[66]: Հակառակ դեպքում կունենայինք արաբական **Բ-աջրավանդ* ձևը: Հմմա. *Գանձակ// Ջանզա, Գառնի //Ջառնա, Գուրգան // Ջուրգան* «Վիրք» և այլն[67]: **Բակրեւանդ* անունը հեշտությամբ արռեվում է **Բակ-բեւ-անդ* բաղադրիչների: Երրորդ բաղադրիչը տեղանվանակերտ վերջածանց է (եմմտ. *Հաբ-անդ, Մար-անդ, Վան-անդ* և այլն), առաջին բաղադրիչը՝ *բակ*-ը, ազգակիցն է իրանական *բագ//բագա* «աստված» բառի, նաև հին ենդկ. bhaga, ռուս. бог «աստված» և փռյուգ. Bagaios «Զևս» բառերի: Հայերեն *բագ-* բաղադրիչով բառերի այս արմատի իրանական ծագումը շեշտելով, Հ. Աճառյանն ավելացնում էր, «եթե հայերեն բառը բնիկ լիներ պիտի ունենար **բակ* ձևը»[68]: Հենց այս ձևով էլ արմատն առկա է **Բակրեւանդ // Բագրեւանդ* տեղանվան առաջին՝ ավելի հին, ձևում: **Բակ-րեւ-անդ* տեղանվան երկրորդ՝ *բեւ-* բաղադրիչի մեջ դժվար չէ տեսնել ե.-ե.*re*u*- արմատը, որից է սերում ինչպես հայերեն արեւ (>ա-րեւ), այնպես էլ հին ենդկերեն ravi «արև» բառերը[69]: Ուրեմն **Բակրեւանդ // Բագրեւանդ* նշանակումէ «Արև աստծու աեղ, Արև աստծո երկիր»: Իսկ մինչև ռազմական գծեր ձեռք բերելը արևի աստվածը դյումեզիլյան տեսության առաջին ֆունկցիայի (կրոնամոգական և իրավական ուղղվածություններով) կրողն ու գործադրողն էր, այսինքն՝ քուրմ աստված էր:

Քրմապետն ու մարդպետը իրենց ֆունկցիաների մեջ մեկ ուրիշ ընդհանրություն էլ են հանդես բերում: Թե՛ առաջինը, թե՛ երկրորդը ունեին իրենց անմիջական հրամանատարության տակ գտնված զինված ուժերը: Քրմական զինված ուժերի վերաբերյալ բազմաթիվ տեղեկություններ կան պահպանված Ագաթանգեղոսի և Հովհան Մամիկոնյանի երկերում: Իսկ մարդպետի գլխավորած զինված ուժերի վերաբերյալ ուշագրավ են «Զորանամակում» և Ղ. Փարպեցու երկում առկա տեղեկությունները: «Զորանամակի» վերջնամասում նախարարական զորամասերից առանձին, եիշատակվում են «զսպասաւորս դրանն արքունի՝ որ է ռսաանդ, որք ի պատերազմ ելանէին ընդ ա[ր]քայի եւ *մարդպետական որ է ներքինի պահապան ի վերայ թագուհոյն եւ գանձուց*»[70]: Ըստ Ղ. Փարպեցու, Աղվանք մեկնած Վարդան Մամիկոնյանի շուրջ համախմբվել էին ինչպես նախարարական շատ գնդեր, այնպես էլ «այլ կունդք ի զօրացն *Մարդպետական այրուձիոյ*»[71]: Անկասկած, Արշակունյաց թագավորության գոյության ժամանակաշրջանում մարդպետական գնդի հրամանատարը լինելու էր մարդպետն ինքը: Այս հանգամանքը հստակորեն բացահայտում են Փ. Բուզանդի հետևյալ տողերը. «Արշակունի թագաւորն Քուշանաց, որ նստէր ի Բաղխ քաղաքի, նա յարոյց տալ պատերազմ ընդ Սասանականին Շապհոյ եւ թագաւորին Պարսից: Եւ Շապուհ թագաւորն զամենայն զզօրսն Պարսից գումարեալ խաղացոյց տալ պատերազմ ընդ նմա, եւ զօրս միանգամ ածեալ էր զեբութիւն *յերկրէն Հայոց զամենայն այրեւձի* գումարեալ՝խաղացոյց ընդ ինքեան.եւ *զներքինին անգամ թագաւորին Հայոց Արշակայ* տանէր ընդ ինքեան ի գործ պատերազմին... Եւ Դրաստամատ գործեաց անեեարին քաջութիւն այնչափ կոտաւ եւս ի վերայ Շապեհոյ արքայի, եւ ուպրեցոյց զնա ի մահուանէ. եւ բազումս ի Քուշանաց անձի կոտորեաց, եւ զբազում զախոյանից զգլուխս բերէր զառաջեաւ»[72]: Կասկած լինել չի կարող, որ Շապուհի կողմից գումարված «յերկրէն Հայոց զամենայն այրեւձի»-ի կազմում լինելու էր նաև մարդպետական հեծելազունդը, որի գլուխ անցած էլ Դրաստամատ մարդպետը կաբողացել էր «բազումս ի Քուշանաց» կոտորել: Ասվածներից բխում է,որ

---

[66] *«Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», Եր.,1965,էջ 38:*
[67] *«Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», Եր.,1965,էջ 47-50:*
[68] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ.1, Եր., 1971, էջ 373:*
[69] *Նույնը, էջ 310-311:*
[70] *Н.А д о н ц , նշվ.աշխ., էջ 252:*
[71] *Ղազարայ Փարպեցւոյ..., Բ, լդ:*
[72] *Փաւստոսի Բիւզանդացւոյ..., Ե, է:*

արքայազն Սաքարիսի վերոհիշյալ «ուղեկիցները լինելու էին մարդկեռական գնդի հեծյալները, որոնք իրենց հրամանատարի՝ նույն Սաքարիսի, գլխավորությամբ անհաջող փորձ էին կատարել հեռանալու լեռները: Իր ֆունկցիաներով հեռազգա մարդկեռներին հիշեցնող արքայազն Սաքարիսը, ըստ այսմ, լինելու էր նաև հայոց քրմապետը, քրմերի դասապետը: Նա էլ համարվելու էր Աժդահակի երազի առյուծ հեծած ասավածային դյուցազնի երկրային կրկնորդը:

«Կյուրոպեդիայում» հանվանե հիշատակված երրորդ հայը Էմբասն է: Նրա եասարակական ֆունկցիաների պարզաբանման գործում կարևորվում է Քսենոփոնի այն եաղորդումը, որը վերաբերում է Կյուրոսի կողմից Բաբելոնի գրավմանը: «Կյուրոպեդիայում» կարդում ենք. «Նրանցից եետո,- ասաց Կյուրոսը,- թող Արտաբազոսը առաջնորդե պտրսից թեթև վահանակիրներին ու նետաձիգներին, ապա Անտամյուաս Մեդացին՝ մեդացիների հետևազորը, ապա Եմբասը՝ արմենների հետևազորը, ապա Արտուքասը՝ հյուրկաններին, ապա Թամբրադասը՝ սակերի հետևազորը և ապա Դամատասը՝ կադուսիներին»[73]: Էմբասի միայն հետևակազորի հրամանատարը լինելու եանգամանքը արդեն խոսում է նրա երկրի գլխավոր անձերը և արտադրողների (նյութական բարիքներ առեղծողների) դասապետը լինելու մասին: Հաջորդ դարերում ևս հայոց բանալի եետևակ զորամասերն համալրվում էին բացառապես ռամիկներով՝ գերազանցապես գյուղական համայնքի անդամներով[74]: Իսկ սրանց դասապետը երկրի գլխավոր անձեսն էր՝ հայոց հազարապետը: Հազարապետի և նրա գլխավորած գործակալության վերաբերյալ Փ. Բուզանդը գրում է, որ Արշակ II-ը գաե բարձրանալով «նորոգեցաւ զուարթացաւ աէրութիւնն թագաւորութեանն Հայաստան երկրին որպէս եւ զառաջինսն. մեծամեծքն յիւրաքանչիւր զահու, եւ զործակալքն յիւրաքանչիւր չափու: Եւ սկիզբն գործակալութեանն եազարապետութեանն աշխարհատեսն խնամակալութեանն, աշխարհաշէն աշխարեատած դեհկանութեան, շինականաշէն ազգն Գնունեաց՝ եազարապետան ամենայն երկրին»[75]: Ռամիկների՝ նյութական բարիքներ սաեղծողների և եետևակազորի ուղղակի կապը երբեմն կարող էր ընկալվել նաև որպես նույնություն (հմմտ. լատին pedes, որը նշանակում էր և՛ «հետևակ», և թե «ռամիկ»՝ պլեբեյ)[76]: Արքայազն Էմբասի արտադրողների՝ նյութական բարիքներ ստեղծողների դասապետը լինելու օգտին է խոսում իր կրած անունը ևս: Մեր կարծիքով, Էմբաս (Εμβας) անունը ծագումնաբանական աղդակի կապի մեջ է հայերեն հետևյալ բառերի եեա:

1.*Ամբոխ* (<ամբ- ոխ). նշանակում է «համօրէն խումբ ռամկին. ժողով խառնիճաղանջից. բազմութիւն մարդկան կամ զօրաց. ժողովուրդ»[77]: Այս բառն համարելով պարսկերենից փոխառյալ, Հ. Աճառյանը նաև նկատել է ասլիս, որ պարսկերեն anbōh բառի «բուն ծագումը անհայտ է»[78]: Ի դեպ, մեր բառի պարսկերենից փոխառյալ լինելու դեպքում կունենայինք ոչ թե *ամբոխ*, այլ *՚ամբոհ* (հմմտ. պարս. Andōh> հայ. *անդոհ* «մտատանջության հիվանդություն»)[79]:

2.*Համբ* (<հ-ամբ). «իւամբ»: Նոր հայկազյան բառարանի աված այս բացատրությունն Հ. Աճառյանն համարում է անստույգ՝ «խումբ»- ը առնելով հարցականի տակ[80], բայց միևնույն արմատը պարունակող նախորդ և հաջորդ բառերը ցույց են տալիս «խումբ» բացատրության ճշմարտացիությունը:

---

[73] Xen., Kyrop., V,3,38, (Ղ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, h.Ա, էջ 412):
[74] «Հայ ժողովրդի պատմություն», h.1, էջ 834:
[75] Փավստոսի Բիւզանդացւոյ…, Դ.,բ:
[76] И. Д в о р е ц к и й, Латинско- русский словарь, М. 1976, стр. 735.
[77] «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», h.Ա, Եր., 1979, էջ 56:
[78] Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայերեն արմատական բառարան, h. Ա, էջ 151:
[79] Նույնը, էջ 189:
[80] Նոր բառգիրք հայկազեան լեզուի, h.Բ, Եր.,1981,էջ 24,Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան,h.3, էջ 23:

3. *Ըմբակ* (<ըմբ-ակ) կամ *ըմբայ* (<ըմբ-այ) բառը Երեմիա Մեղրեցու բառարանում 'րևրվում է *եռակ* բառի բացատրությունը տալիս. *«Եռակ*. ըմբակ, Գ. ժողովանոցք»[81]: Չեռագրերում եանդիպում է նաև նախորդի եետ միացած. *«Եռակըմբայք*-երիս. ժողովանոցս»[82]: Սրա վերաբերյալ Հ.Ամալյանը անում է եետևյալ դիտողությունը. «Այս բառաեռդվածը աղճատված է նաև բազմաթիվ այլ ձեռագրերում... Հմմա. *Երիս*»[83]: Իսկ *«Երիս* – ժողովանոցս»[84]: Բերված բառերից անջատելով *–ս* և *-ք* եոգնակիակերտերը, կունենաք *եռակ // ըմբակ // ըմբայ // երի // ժողովանոց* գրեթե նույնիմաստ բառերը: Ընդ որում, սրանցից *եռակ*-ը և *երի*-ն կարող են նույնածագում լինել *երեք (գ*=«երեք») բառի եետ, որն ածանցման մեջ է մանում *երի*-(երիցս, երրորդ <երիր-որդ) և *եռ*-(եռաժանի, եռավանկ և այլն) ձևերով[85]: Այս դեպքում *երի* -ի և *եռակ*-ի նախնական իմաստը կարող էր լինել «երրորդ դասս» > «ժողովուրդ» > «ժալովտնոց»: Հմմա. վրաց. eri «ժողովուրդ» և «աշխարեազոր», որից eristhavi // *երիսթաւ* «մարդկանց գլուխ, գոռւգլուխ »[86]:

Ըստ երևույթին, Տիգրանի *Երուանդեան* կոչվելու պատճառով է, որ նա եամարվել է Երվանդ Սակավակյացի որդին *(Երուանդեան*–ը եասկացվել է որպես եայրանուն), իսկ վերջինս աեղ է գրավել Հայկակի (Միս Հայկակ) ու Տիգրանի միջև: Դա երևում է եետևյալից: Մար և եայ գաեակալների իշխած ժամանակաշրջանների եամապատասխանեցմամբ սաեղծված խորենացիական անվանացանկում որպես Աժդաեակ // Աստիագեսի ժամանակակից եանդես է գալիս Երվանդ Սակավակյացը (Երուանդ Սակաւակեաց)[87], երբ եաջորդ սր շարք գլուխների[88] շարադրանքից պարզվում է, որ Աժդաեակի ժամանակակիցը ոչ թե նա է եղել, այլ Տիգրանը: Վերջինս, ճիշտ է, *Երուանդեան* է կոչվում, բայց ոչ մի աեղ չի նշվում, որ նրա եայրը Երվանդն է եղել: Որ Տիգրանի եոր անունը *Երուանդ* չէր կարող լինել, կարելի է կռաեել նաև Քսենոփոնի եաղորդումներից: Նա «Կյուրոպեդիայում» բազմիցս եիշատակում է եայոց // արմենների թագավորին, բայց այդպես էլ անանուն է թողնում նրան: Եթե նա Երուանդ կոչված լիներ, ապա Քսենոփոնը ոչ մի դեպքում նրա անունը մոռացության չէր մատնի, որովեետև այդ անունը, իր Օրոնտաս // Օրոնտէս տարբերակ –եամարժեքով քաջ եայտնի էր թե՛ եին եույներին, թե՛ անձամբ իրեն՝ Քսենոփոնին: «Անաբասիս»-ում նա այդ անունով է եիշատակում մ.թ.ա.V-IVդդ. սաեմանագլխին Հայաստանի սատրապ եղած անձնավորությանը[89]:

Երվանդ Սակավակյացը որևէ առնչություն չէր կարող ունենալ մ.թ.ա. VIդ. պատկանող եիշյալ անձանց եետ, որովեետև նա լինելու էր Այրարատի Երվանդունիներից՝ ըստ երևույթին, այստեղ եաստատված առաջին Երվանդունի թագավորը: Նրա անձը այստեղ է ենթարկվել առասպելաբանման և ընդգրկվել եին եայկական առասպելների մեջ: Դա երևում է ինչպես նրա կերպարի առկայությունից «Վարդգես Մանուկի առասպելում», այնպես էլ նրա այստեղ աբգելափակված (և եավերժ կենդանի) լինելու առասպելի մասին եիշողությունից: Սրանցից առաջինի առթիվ, Վաղարշ թագավորի ծավալած շինարարական գործունեության առնչաթյամբ, Մ. Խորենացին գրում է. «Սա պատեաց պարսպաւ եւ զեզօր աւանն Վարդգէսի, որ ի վերայ Քասաղ գետոյ. զոբմէ յառասպելսն ասեն.

«Հատաած գնացեալ Վարդգէս մանուկն
Ի Տուեաց գաւառէն, գՔասաղ գետով,

---

[81] *Բառգիրք հայոց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ.Ամալյանի, Եր., 1975, էջ 90, ծան. 172:*

[82] *Նույնը, էջ 90:*

[83] *Բառգիրք եայոց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ.Ամալյանի, Եր., 1975, էջ 364, ծան. 172:*

[84] *Նույնը, էջ 94:*

[85] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Եր., 1973, էջ 40-50:*

[86] *Ստ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, Հայերեն բացատրական բառարան, հ. Ա, Եր., 1944, էջ 585:*

[87] *Մովսիսի Խորենացւոյ..., Ա,իբ:*

[88] *Նույնը, Ա, իգ-լա:*

[89] *Xen.,Anab., III,V,17; IV, III,3-4 (Քսենոփոն, Անաբասիս, Թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի, Եր., 1970, էջ 31, 89):*

Եկեալ նստաւ զԾրէշ բլրով,
ԶԱրաւիմեղ քաղաքաւ, զՔասաղ գետով,
Կռել կոփել զդուռնն Երուանդայ արքայի»:

Այս Երուանդ առաջինն է, Սակաւակեացն, որ ի Հայկազանց, զորայ զքոյրն կին առեալ Վարդգէսի՝ շինեաց զաւանս զայս»[90]:

Գալուստ Տեր- Մկրտչյանի հիշատակած մի քանի ձեռագիր մատյաններում կային Երվանդի ալեգելափակման առասպելի գոյությանն հաստատող վկայություն-ներ: Դրանցից մեկի համաձայն, «Ասեն քաջաց եւ վիշապաց տեարք են ի լերինս բարձունս եւ բնակութիւնք, եւ զԱղեկսանդր կապեալ ունին ի Հռոմ, եւ զԱրտաւանդ ի Մասիս, եւ *զԱրուանդ ի գետս եւ ի մառանս*»[91]: Ուրեմն, Երուանդ Սակավակյացը իր պատմական նախատիպն ունեցած, բայց առասպելաբանված այնպիսի մի կերպար է, ինչպիսիք են նաև ստասպելաբանական զրույցների գործող անձինք դարձած Ալեքսանդր Մակեդո-նացին և հայոց Արտաշես թագավորի որդի Արտավազդը: Ինչպես տեսանք, Երուանդ // Արուանդը արգելափակված էր համարվում ինչպես «ի գետս », այնպես էլ «ի մառանս» (երբեմն աղճատված ձևով՝ «ի մռայլս»)[92]: Մեր կարծիքով, սրանցից առաջինի՝ «ի գետս», մասին հիշատակությունը գալիս է արգելափակված գերբնական էակների մասին հնագույն ստասպելից, իսկ երկրորդի՝ «ի մառանս», հիշատակությունը սերտաճել է նրան հետագայում, կապ ունի Երվանդի *Սակաւակեաց* մականվան հետ և նրա հետ միասին արտացոլում է պատմական որոշակի իրողություն:

Նախ պատմական Երվանդ արքայի, ապա նրա *Սակաւակեաց* մականվան մասին: Այրարատում Երվանդունիները հաստատված լինել չէին կարող մ.թ.ա. IV դարի վերջից ավելի շուտ: Հայաստանի թագավորն այդ ժամանակ այն Արուանդեսն // Արուանդ //Երուանդն էր,[93] որը դիադոքոսների գահակալական պայքարի ժամանակ դուրս էր եկել Անտիգոնոսի դեմ, դաշնակցելով Եվմենեսի և Արիարաթես Կապադովկա-ցու հետ: Նրա օգնությունն էր դիմել վերջինս՝ Կապադովկիայի գահին հաստատվելու համար: Դիոդորոսի հաղորդման համաձայն, «Մի քանի ժամանակից հետո, երբ Եվմենեսը, Պերդիկկասը և նրանց համախոհները վախճանվել էին, իսկ Անտիգոնոսն ու Սելևկոսն այլ գործերով էին զբաղված՝ նա (Արիարաթեսը- Ս.Պ.), վերցնելով արմենների թագավոր Արդոատեսից (Արուանդեսից- Ս.Պ.) զորք՝ սպանեց մակեդո-նացիների զորավար Ամյունտասին, մակեդոնացիներին անհապաղ դուրս վարեց և տեր դարձավ իր հայրենի իշխանության»[94]: Հավանաբար, Անտիգոնոսի և Սելևկոսի վրեժխնդրությունից վախենալով և նրանց հնարավոր հարձակումից հեռու մնալու համար էլ այս Երվանդ արքան իր նստավայրը Վասպուրականից տեղափոխել էր Այրարատ, հաստատվել Արտաշատյան դաշտում, որտեղ Երվանդունիների կենտրոն դարձել էր Արմավիրը[95]:

Մ. Խորենացին, անուններ ստուգաբանելու իր բացահայտ հակումներով հանդերձ, Երվանդի *Սակաւակեաց* մականունը թողնում է առանց ստուգաբանության, առանց որևէ բացատրության: Նույն կերպ է վարվում նաև նրան կրկնող Մ. Կաղանկատ-վացին[96]: Առաջինը Հովհաննես Դրասխանակերտցին էր, որ Երվանդի այդ մականվան մեջ տեսել է հայերեն *սակաւ* բառը, գրելով. «Միս Հայկակ. բոց յետ սորա Երուանդ, ոյ *փոքր ինչ* ի նախապետութեան *կեցեալ*՝ծնանի զմեծն Տիգրան»[97]: Նույն *սակաւ* բառով են *Սակաւակեաց* –ը բացատրել նաև Մ. Չամչյանը («Իսկ Երուանդայ *ոչ երկարեալ*

---

[90] *Մովսիսի Խորենացւոյ..., Բ,կե:*

[91] *Պ. Հ ա ն ո ւ թ յ ա ն, Գալուստ Տեր-Մկրտչյանի նամակները Նիկողայոս Մառին, Մառը և հայա-գիտության հարցերը, Եր., 1968, էջ 257:*

[92] *Ղ. Ա լ ի շ ա ն, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 132:*

[93] *Ն. Ա դ ո ն ց, Հայաստանի պատմություն, Եր., 1972, էջ 323, Գ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 31, Հայ ժողովրդի պատմություն, հ.Ա, էջ 505:*

[94] *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ.Ա, էջ 97:*

[95] *Նույնի, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, էջ 15-19,20:*

[96] *Մ. Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի , Պատմութիւն Աղուանից աշխարհի, Ա,ժե:*

[97] *Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ պատմութիւն Հայոց, Եր, 1996, էջ 24:*

գկեանս իւր՝ մեռաւ»)[98] և հետագայի շատ պատմաբաններ[99]: Իրականում *սակաւ* բառն այստեղ գործ չունի. *Սակաւակեաց* նշանակում է «Սակաւաբնակ, Սակավում բնակվող»՝ ճիշտ այնպես, ինչպես *Միւնակեաց* նշանակում է «որ կեայ ի ուրդալ ատեղ. բնակեալ ի գլուխ սեան»[100]: Ուրեմն, Սակաւակեաց-ը կարող է նշանակել, «Սակավ փայլում բնակվող»: Իսկ եթե Արարատյան դաշտում Արմավիրն իբ նստավայրը դարձրած Երվանդը կոչվել է *Սակաւակեաց*, ապա **Սակաւ*-ը լինելու էր Արմավիրի շրջակայքի՝ Արագածոտն գավառի հին անունը: Որ սա իսկապես տեղանուն է եղել, ակնհայտ է նրանում առկա -*աւ* տեղանվանակերտ վերջածանցը: **Սակ - աւ* հմմտ. *Կճ-աւ, Զիր-աւ, Պարտ-աւ, Յուրա-աւ* և այլն[101]:

Մենք հակված ենք **Սակա* տեղանվան *սակ* արմատին վերագրելու «գինի» իմաստը և այն տեսնել նաև *սակարան* (<սակ- արան) բառի հետ: Վերջինիս իմաստը արսրզելու համար նախ անհրաժեշտ ենք գտնում մեջբերելու Հ. Աճառյանի կարծիքը, նրա կատարած դիտողություններով հանդերձ. «Երևի նշանակում է «մատովակների մառանը, պահարանները, բուֆեա…»: Թերևս կապ ունենա բառս *սակարան* «գինու մեծ գավաթ» …, բայց կարդա՛ *արկարան* և կամ ավելի լավ արար. «մատովակ» ծևի հետ: Վերջին դեպքում *սակարան* …ṣaqī- *արան* «աեղի մատովակաց»[102]: Հ. Աճառյանի ասված «տեղի մատովակաց» ստուգաբանությունը կասկածի տեղիք տալ չի կարող, որովհետև *սակարան* բառի մատենագրական երեք վկայություններն էլ վերաբերում են մատովակին, որն է «մատուցող ըմպելեաց …, վերակացու եւ մատակարար գինւոյ, բաժակատու, արբուցիչ, տակառապետ»[103]: Բայց թե *սակ* աբմատը արաբերենից փոխառյալ լինել չի կարող, որովհետև, ըստ Քսենոփոնի, այդ նույն արմատով կազմված անուն՝ Σακας , կրում էր Աստիագեսի մատովակը[104]: հավանաբար, դա Սակասի ոչ թե բուն անունն է (անձնանունը), այլ պաշտոնի անվանումը: Այս արմատով կազմված անվան գոյություն դեռևս մ.թ. ա. VII-VI դդ. Իրանում խոսում է բառի իրանական լեզուներից արաբերենին անցած լինելու մասին: Բացի հայերենից և արաբերենից այս արմատը առկա է նաև ուրիշ մի շարք, ընդ որում հնդեվրոպական, լեզուներում: Հմմտ. լատին. saccatum«վատորակ գինի», «խառնարդ ըմպելիք»,«պղտոր, վատահամ խմիչք», հին պրուս. sackis, «բույսերի ու պտուղների հյութ», ռուս. cok «հյութ, ավիշ, նյութի ջուր, քամուք», ալբան. gjak «արյուն» (առասպելաբանական մտածողությամբ «գինի» // «արյուն») և այլն:

Այսպիսով, *սակարան* նշանակում է «մառան, գինու պահեստ»: Նույնն է նշանակում նաև **Սակաւ*-ը: Այս առթիվ վերհիշենք. Երուանդ // Արուանդը կոչվում էր *Սակաւակեաց* և արգելափակված էր համարվում ոչ միայն «ի գևաս»,այլև *«ի մառանս»*: Թե ինչու Արմավիրի շրջակայքը՝ Արագածոտն գավառը կոչվել էր **Սակաւ* «մառան» դժվար չէ գուշակելը: Հնագույն ժամանակներից սկսած նա խաղողագործության և գինեգործության հայանի կենտրոն էր: Ընդ որում, դա հայանի էր նաև օտարներին, որոնք Աթարատյան դաշտի և Շիրակի հարակից շրջանները (Արագածոտնը լրիվ կամ մասամբ ներառյալ) կոչում էին *Շարաբխանէ*, այսինքն՝ «մառան, գինետուն» <պարս. Sarāb «գինի» և bane «տուն»: Այս անվանը հանդիպում ենք Առաքել Դավրիժեցու երկում: 1604թ. Շահ-Աբասի զինվորների ավերած հայկական գավառների թվում, Համզաչիմանի (Լոռիում) և Կարսի ու Կաղզվանի միջև, այնտեղ հիշատակված են «զՇարապխանէն, զՇիրակուան, զՁարիշատ»[105]:

Ասվածները հիմք են տալիս Երվանդ Սակավակյացին համարելու Այրարատում մ.թ.ա. IV դ. վերջին հաստատված առաջին Երվանդունի թագավորը և նրան

[98] *Մ. Չ ա մ չ յ ա ն ց, նշվ.աշխ.,հ. Ա, էջ 102:*
[99] *Հայ ժողովրդի պատմություն, հ.I, էջ 447:*
[100] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, էջ 716:*
[101] *Гр. К а п а н ц я н, Историко-лингвистические работы, т.II, Ер.,1975, стр.169-170.*
[102] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայերեն արմատական բառարան, հ.Դ, էջ 159-160:*
[103] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, էջ 216:*
[104] *Xen., К у r о р. ,I, 3,8-9; I,4,6 (Древнегреческо-русский словарь, т.II, М., 1958, стр. 1460).*
[105] *Ա. Դ ա վ ր ի ժ ե ց ի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1884, էջ 31-32:*

ռուս եանելու Տիգրան Երվանդյանի, Կյուրոսի և Աժդահակի ժամանակակիցների շարքից: Տիգրանի հայրը Հայկակն է՝ «Միւս Հայկակ» -ը, որը վրացերեն հին թարգմանության մեջ *Մյուս Հայկ* է կոչվում.[106] և, ըստ Խորենացու բերած արքայացանկի, եղել է մարաց Կւաքսարէս, այսինքն՝ Կիաքսար, թագավորի (624-585թթ. մ.թ.ա.) ժամանակակիցը: Նա, հավանաբար, *Հայկակ // Հայկ* կոչվել է Հայկ նահապետի նմանությամբ: Պատահական չէ, որ նրա հիմնադրած Երվանդունիների դինաստիան կոչվել է նաև Հայկազանց[107] կամ Հայկազնեան[108]: Նա էլ, որպես նոր թագավորական դինաստիայի հիմնադիր, Հայկի նման՝ իր որդիներին կրթել և դաստիարակել էր այնպես, ինչպես, ըստ հնամենի ավանդությունների, արել էր Հայկը: Այդ ավանդությունների համաձայն, Հայկի երեք որդիները՝ Արամանյակը, Խոռը և Մանավազը, հիմնադիրներն են եղել հայ հասարակության երեք սոցիալական դասերի. Արամանյակը՝ արտադրողների դասի, Խոռը զինվորական դասի, Մանավազը՝ քրմական դասի[109]: Այս Հայկակի որդիներից արտադրողների դասապետը եղել է Էմբասը, զինվորներինը՝ Տիգրանը, քրմերինը՝ Սաբարիսը:

ОБ ОБЩЕСТВЕННЫХ ФУНКЦИЯХ ТРЕХ АРМЯНСКИХ ЦАРЕВИЧЕЙ

Резюме *С. Петросян*

Как доказано Ж.Дюмезилем, идеология трехчленной классификации главных божеств у древних индоевропейцев отражает принцип трехчастного деления древнеиндоевропейского общества. В недрах этой идеологии зарождались и прототипы трех божественных лиц в древнеармянском мифе о сне мидийского царя Аждахака. В "Киропедии" Ксенофонта поименно упомянуты только три лица древнеармянского царства Ервандидов: царевичи Тигранес, Сабарис и военачальник пехоты Эмбас. Из рассказа Ксенофонта вытекает, что эти лица были наделены общественными функциями и считались предводителями трех основных социальных групп армянского общества первой половины VI в. до н. э.: Тигранес-предводитель сословия воинов, Сабарис-предводитель сословия жрецов и Эмбас-предводитель сословия производителей. Сопоставление их функций приводит к заключению, что в Ервандидской Армении был принят не только принцип трехчастного деления общества и трехчленной классификации главных богов, но и вытекавшее из них распределение главных должностей государства.

---

[106] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայոց անձնանունների բառարան, հ.Գ, Եր., 1946, էջ 35:*
[107] *Մովսիսի Խորենացւոյ..., Ա, լա, Բ, կե:*
[108] *Նոյնը, Ա, իգ:*
[109] *Ս.Պ ե տ ր ո ս յ ա ն, Հայկի հողագործ, զինվոր և քուրմ որդիները, էջ 139-142:*

Ամալյա ՍԱՐԳՍՅԱՆ

ԾԱՌԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՀԱՎԱՏԱԼԻՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հնագիտական և մատենագրական տվյալների հավաստմամբ՝ Հայկական լեռնաշխարհը վաղ անցյալում բավականին հարուստ է եղել անտառներով, և որոշ արժեքավոր փայտատեսակներ նույնիսկ արտահանվել են տարբեր երկրներ՝ հնագույն Միջագետք, Եգիպտոս, անգամ Հունաստան և այլուր:

Հայաստանի տարածքից հայտնաբերված մշակութային հուշարձանները վկայում են, որ փայտը մարդու կյանքում չափազանց մեծ դեր է կատարել, և, տակավին խոր հնադարից, մարդկանց գիտակցության մեջ որոշակի պատկերացումներ են ձևավորվել բուսական աշխարհի, մասնավորապես ծառերի նկատմամբ:

Բուսական աշխարհի պաշտամունքը, հիմքով կապվելով տոտեմիստական՝ ծառ-տոտեմ, ինչպես նաև անիմիստական՝ ծառ-ոգիների բնակատեղի, ծառ-ֆետիշ, ծառ-պտղաբերություն մարմնավորող պատկերացումների հետ, դիտվել է երկրագնդի տարբեր ցեղերի և ժողովուրդների մեջ՝ պարզունակ կամ զարգացած ձևերով:

Որոշ ուսումնասիրողների կարծիքով, բուսական աշխարհի պաշտամունքը պայմանավորվել է այն հանգամանքով, որ մարդկանց կյանքը, գոյությունը կախված է եղել անտառներից, դաշտերի բերքի ու կերի առատությունից[1], ծառերը մարդկանց զենքերի ու գործիքների, բնակարանի ու սննդի նյութ են տվել, իսկ կրակի հայտնագործումից հետո՝ նաև վառելափայտ[2], զանազան ծիսակատարությունների ժամանակ տարբեր բույսերի կիրառումը նպատակ է հետապնդել բացահայտելու և օգտագործելու դրանցում թաքնված զորեղ ուժերը[3] և այլն:

Հնդեվրոպական ժողովուրդների արիական ճյուղի հնագույն կյանքում ծառերի պաշտամունքի մեծ դերի վկայությունն է այն, որ իրանական «yazd» (աստված) տերմինն ըստ էության նշանակել է բարձր ծառ՝ հաճարենի կամ կաղնի[4], գերմանների հնագույն սրբավայրերը եղել են անտառները[5], դրուիդների մեջ «սրբավայր» նշանակող բառը նույնական է լատ. «nemus» («պուրակ» կամ «անտառուղի») բառի հետ[6]:

Այնուամենայնիվ, բուսական աշխարհի և հատկապես ծառերի պաշտամունքի հիմնական նախապայմանը, ըստ երևույթին, դրանց պտղաբերության անսովոր ուժն է եղել: Մեր նախնիների պատկերացումներում ծառն արմատացել է որպես պտղաբերության, առատության, գարնան զարթոնքի, մի խոսքով՝ կյանքի խորհրդանիշ, որն արձագանքներ է գտել տարբեր ծեսերում ու սովորույթներում[7]:

Հնագույն դարաշրջաններում հայոց մեջ բուսական աշխարհի, հատկապես ծառապաշտության մասին հիշատակելով, Մովսես Խորենացին նշել է, որ հնում Արմավիրում գտնվող սրբազան համարվող սոսի ծառերի տերևների սոսափյունով

---

[1] *Г. Г а д ж и е в, Культ природы и обряды, связанные с производственно - хозяйственной деятельностью у лезгин в прошлом.- Хозяйство, материальная культура и быт народов Дагестана в XIX-XXвв., Махачкала, 1977, стр 125:*

[2] *Д. З е л е н и н, Тотемы- деревья в сказаниях и обрядах европейских народов, М-Л., 1937, стр 20:*

[3] *В.П р о п п, Русские аграрные праздники. Л., 1963, стр. 66:*

[4] *Евг. К а г а р о в, Культ фетишей, растений и животных в древней Греции, ЖМНП, (այսու՝ Журнал Министерства народного просвещения), ч. 40, СПб, 1912, էջ 317(ըստ Ն.Յա.Մառի):*

[5] *Ջ. Ֆ ր ե զ ե ր, Ոսկե ճյուղը, Եր., 1989, էջ 135:*

[6] *Անդ, էջ 136:*

[7] *Ա. Ս ա ր գ ս յ ա ն, Ծառի և փայտամշակման հետ կապված ժողովրդական հավատալիքները հայոց մեջ (XIXդ. II կես- XXդ. սկիզբ).- Հայաստանի բնակչության հասարակական կենցաղի և հոգևոր մշակույթի պրոբլեմների ուսումնասիրությանը նվիրված գիտական նստաշրջան: Զեկուցումների թեզիսներ, Եր., 1985, էջ 47-49:*

հայոց աշխարհում գուշակություններ են արվել[8]: Ազգագրական նյութի համաձայն՝ ծառապաշտությունը հայոց մեջ այս կամ այն դրսևորումներով պահպանվել է ընդհուպ XIX-XX դդ., ընդ որում, հատկապես պաշտվել է վոշնի ծառը, որի պաշտամունքն ուղղակի համահայկական բնույթ է կրել՝ ժողովրդի մեջ անվանվելով «սուրբ ծառ», «խաչ ծառ», «դաղդղանի ծառ» (դրանից պատրաստված չար- խափան պահպանակ-դաղդղանի անունով)[9]: Այնուհետև՝ առավել պաշտվել է կաղնին, ընդ որում, հայոց մեջ ամենուրեք, համարյա յուրաքանչյուր սրբավայրի կամ ուխտատեղու մոտ եղել է անպայման մեկ կամ մի քանի սուրբ համարվող կաղնի ծառ[10]: Ուշագրավ է, որ կաղնու պաշտամունքը դիտվել է երկրագնդի տարբեր ժողովուրդների մեջ[11]: Երկրպագվել են նաև սոսին, բարդին, ուռենին, թխկին, թեղին, բոխենին, հաճարենին, գիհին, ընկուզենին, մասրենին, սալորենին, վայրի խնձորենին, տանձենին և այլն[12]:Հայոց մեջ հատկապես մեծ պաշտամունքի է արժանացել բարդի ծառը դեռևս հնագույն դարաշրջաններից: Այսպես, Ներսես Շնորհալու վկայությամբ, Սամոսատ քաղաքի հայ աղանդավորների՝ արևորդիների մեջ 12-րդ դ. պահպանվել էր բարդի ծառի հնավանդ պաշտամունքը[13]: Բարդի ծառի պաշտամունքի հեռավոր արձագանքները հայոց մեջ հասել են ընդհուպ **XIX-XX** դդ: Ներքին Բասենում հատկապես կանայք են պաշտել այդ ծառը: Աղջիկներն իրենց մազակալերից կապել են ծառի բնին՝ «բախտը բացվելու», կանայք՝ իրենց մեջքի գոտին՝ պտղավորվելու ակնկալիքով[14]: Ալեքսանդրապոլում (Կումայրի՝ Շիրակ) հիվանդություններից ապաքինվելու և երեխա ունենալու ակնկալիքով կանայք սուրբ համարվող բարդի ծառի շուրջը երեք անգամ պտտվել են և գունավոր թելեր ու լաթեր կախել դրանից[15]:

Ուշագրավ է, որ ծառերի պաշտամունքը դիտվել է Հայաստանի բոլոր պատմազգագրական մարզերում՝ Վասպուրականում, Մուշում (Տուրուբերան), Գողթան գավառում (Նախիջևան), Վարանդայում (Արցախ), Գանձակում (Ուտիք), Բորչալուի գավառում (Լոռի), Գեղարքունիքում, Սյունիքում և հայաշատ այլ վայրերում[16]: Միայն համշենահայերի մեջ «սուրբ ծառ» հասկացություն չի դիտվել, թեպետ նրանց մեջ էլ որոշակի հավատալիքներ են ձևավորվել այս կամ այն ծառատեսակի օգտակարության կամ վնասակարության մասին[17]:

Ազգագրական նյութի համաձայն՝ հայոց մեջ տարածված է եղել ոչ միայն «սուրբ»ծառերի, այլև «սրբազան պուրակների» պաշտամունքը: Հնագույն պուրակն այդ առումով տնկվել է Հայկի որդի Արամանյակի կողմից, մոտ երկու հազար տարի առաջ, Արաքս գետի ափին, ոչ հեռու այն վայրից, ուր հետագայում նրա որդի Արամայիսը կառուցել է Արմավիր քաղաքը՝ Հայաստանի առաջին և հնագույն մայրաքաղաքը[18]: Վասպուրականում նման բազմաթիվ պուրակներ են եղել[19], Մշո

---

[8] *Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1913, էջ 64: (Հմմտ. հնագույն Հունաստանում Դոդոնյան անտառի կաղնու սոսափյունով հին հույների արած գուշակությունների հետ. Ղևոնդ Ալիշան, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 420):*

[9] *Ա. Ս ա ր գ ս յ ա ն, Դաշտային ազգագրական նյութեր (այսու՝ ԴԱՆ)- 81, ա. I-IV (Տավուշ), ԴԱՆ-83, ա. I-VI (Լոռի), ԴԱՆ-86, ա. I-VI(Սյունիք):*

[10] *ԴԱՆ-81, ա. I-III, ԴԱՆ-83, ա. I, II, IV-VI, ԴԱՆ-86, ա. I-IV, VI:*

[11] *Ջ. Ֆ ր ե զ ե ր, նշվ.աշխ., էջ 193-196, Евг.Кагаров, նշվ. աշխ., էջ 322-333:*

[12] *ԴԱՆ-81, ա. I-IV, ԴԱՆ-83, ա. I, III-IV, VI, ԴԱՆ-86, ա. I-IV, VI:*

[13] *Н.Э м и н, Очерки религии и верований языческих армян, М., 1864, էջ 58, Ղևոնդ Ալիշան, նշվ. աշխ., էջ 102-103, Ս.Աոաքելյան, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, հ. 1, Եր., 1959, էջ 87:*

[14] *Գ.Հ ա կ ո բ յ ա ն, Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Եր., 1974, էջ 264:*

[15] *Կ.Մ ե ղ ր ո ւ յ ա ն, Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում.- Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսու՝ ՀԱԲ) պր. 6, Եր., 1974, էջ 235:*

[16] *Տե՛ս մասնավորապես Ազգագրական հանդեսի (այսու՝ ԱՀ) գրքերի բոլոր գրքերը:*

[17] *Յ. Մ ո ւ ր ա դ ե ա ն ց, Համշէնցի հայեր.- ԱՀ, գ. Զ, Թիֆլիս, 1900, էջ 118:*

[18] *Н.Э м и н, նշվ. աշխ., էջ 57:*

[19] *Ե. Լ ա լ ա յ ե ա ն, Վասպուրական, ԱՀ, գ. 25, Թիֆլիս, 1913, էջ 38-40:*

Հարք գավառում՝ երեք սրբազան և անձեռնմխելի անտառակ, Խնձնակունում՝ նորգենինեոի[20], Դերսիմում՝ Նակլս արաունների ենադարյան պուրակը սրբազան է համարվել[21] և այլն:

Որոշակի ծառատեսակների սրբացումը, պաշտումը, երկրպագումը, դրանց զոհաբերություններ անելը ինչպես հայոց, այնպես էլ այլ ժողովրդների մեջ որոշակի մեկնաբանություններ է ստացել: Ինչպես նշվեց, սրբազան համարվող ծառերի աերևների սոսափյունով գուշակություններ են արել, ըստ Ղևոնդ Ալիշանի՝ ծառերը պաշտվել են իրենց օգտակարության համար[22], նաև՝ հատկապես միայնակ, բարձունքներում և անմատչելի վայրերում աճած ծառերը և պուրակները, որոնք են համարվել հատկապես այն ծառերը, որոնց վրա արագիլները բույն են հյուսել: Ազգագրական նյութի համաձայն՝ հայոց, ինչպես նաև այլ ժողովուրդների մեջ սրբացվել և հատկապես պաշտվել են կայծակնահար ծառերը[23]: Քրիստոնեության առաջացման հետ ծառերի պաշտամունքի առումով բնապաշտական հավատալիքները վերաիմաստավորվում են, միաձուլվում են հեթանոսական և քրիստոնեական հավատալիքները, ծեսերն ու սովորույթները, ավանդություններում «սուրբ» ծառերը սկսում են կապվել Քրիստոսի և նրա առաքյալների հետ, ծառերի երկրպագումը պայմանավորվում է խաչի, խաչքարի, մատուռի, եկեղեցու մոտ գտնվելու հանգամանքով, այստեղից էլ, ըստ երևույթին, դրանց անվանումները՝ Կաղնի-խաչ, Խնձորախաչ և այլն: Այնուամենայնիվ, սրբավայրերից հեռու ընկած պաշտվող մենավոր ծառերը վկայություն են բնապաշտական այն հեռավոր արձագանքների, երբ ծառը պաշտվել է ինքնին՝ որպես պտղաբերության, արգասավորության, կյանքի խորհրդանիշ: Հեթանոսական և քրիստոնեական հավատալիքների սերտ միաձուլման վկայություն է նաև այն, որ հայ եկեղեցական կանոններում արգելվել է կտրել ծառը, եթե այն ինչ-որ մեկի մահվան մեջ մեղավոր է[24]:

Ուշագրավ է, որ ծառերի սրբացմանն ու երկրպագմանը զուգահեռ, հայոց մեջ սնահավատություններ են առաջացել որոշակի ծառերի վնասակարության, անհաջողություններ ու հիվանդություններ պատճառելու առումով: Հատկապես ընկուզենու վնասակարության մասին որոշակի հավատալիքներ են ձևավորվել Հայաստանի տարբեր պատմազգագրական մարզերում և հայարնակ տարբեր վայրերում՝ ընկուզենու ստվերում նստելը վտանգավոր է համարվել, ընկուզենի անկելը, նաև կտրելը՝ անհաջողություն, հիվանդություն, նույնիսկ մահ է գուժել: Հետաքրքիր է, որ նման սնահավատությունները նաև ռացիոնալ հատիկ ենթադրում են. ընկուզենին կլանում է թթվածինը և արտադրում ածխաթթու գազ: Ընդ որում, հատկապես ընկուզենու վնասակարության առումով որոշակի հավատալիքներ են ձևավորվել կովկասյան, միջինասիական և այլ ժողովուրդների մեջ:

Որոշակի ծառատեսակների վնասաբերության մտայնությունը պիտի է դեռևս հին Հունաստանում, որտեղ, օր.՝ կարմրածառը (կենի) համարվել է սառերկրյա աստվածներին նվիրված ծառ, այն հաճախ անկվել է գերեզմանների վրա և ըստ այդմ՝

---

[20] *Բ ե ն ս է, Բուլանըխ կամ Հարք գաւառ, ԱՀ, գ. Չ, Թիֆլիս, 1900, էջ 39:*

[21] *Գ. Հ ա լ ա ջ յ ա ն, Դերսիմի հայերի ազգագրությունը, մ. Ա,ՀԱԲ, պր. 5, Եր.,1973, էջ 138:*

[22] *Ղ. Ա լ ի շ ա ն, նշվ. աշխ., էջ 75:*

[23] *Ե. Լ ա լ ա յ ե ա ն, Վարանդա.- ԱՀ, գ. Բ, Թիֆլիս, 1897, էջ 203 (տես նաև՝ Ե. Լալայան, Երկեր, հ. 2, Եր., 1988, էջ 10-202), Վ.Բդոյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1972, էջ 486, Е.Вейденбаум, Священные рощи и деревья у кавказских народов, ИКОРГО (այսուհետ՝ Известия Кавказского отдела Российского географического общества),т. 5,1878, 3, էջ 161:*

[24] *Евг.К а г а р о в, նշվ. աշխ., էջ 317-318 (ըստ Ն.Մառի): Համեմատելի են նախադրությունն այլ ժողովուրդների, որոնցում նման դեպքերում «մեղավոր» ծառը կտրել են: Այսպես Հարավային Ասիայում, եթե մարդը ծառից ընկնելով մահացել է, նրա հարազատները որպես փոխհատուցում ծառը կտրել են և վերածել տաշեղների (տես՝ Э.Тэйлор, Первобытная культура, т. I,СПб, 1896, էջ 254-255), Հարավային Ամերիկայի հնդկացիները, եթե մարդը ծառից ընկնելով մահացել է, ապա հատուկ ծեսերով ու արարողություններով կտրել են ծառը, հունական դատարանը դատի է ենթարկել մարդու մահվան մեջ մեղավոր քարը կամ փայտի կտորը, և դրանք հրապարակայնորեն նետվել են երկրի սահմաններից դուրս (տե՛ս Ю.Липс, Происхождение вещей. Из истории культуры человечества, М., 1954, стр 361,* 362)

համարվել չարագուշակ ծառ[25]: Ըստ Թեոֆրաստի, հնարավոր է, որ Հունաստանում շատ տարածված գայլուկարոսի ծառը (կենու շատ նման) համարվել է դժբախտություն բերող, խորհուրդ չեն տվել այն տուն տանել: Այնտեղ, որտեղ աճում է այդ ծառը, դժվարությամբ են ծնվում և դժվար են մեռնում[26]:

Այնուամենայնիվ, պատմազգագրական նյութի հավաստմամբ, հայոց, ինչպես նաև այլ ժողովուրդների մեջ հիմնականում դիտվել է ծառերի սրբացում, երկրպագում, դրանց զոհաբերությունների մատուցում, դրանցից երկնչում, և, սակավին խոր հնադարից, որոշակի պատկերացումներ են ձևավորվել «սուրբ», սրբացված ծառերի անձեռնմխելիության սառումով, որի արձագանքները հայոց մեջ պահպանվել են ընդհուպ XIX-XXդդ.[27]: Բազմաթիվ ավանդություններ են պահպանվել նման ծառերի կտրման արգելքի առումով, ըստ որոնց՝ «սուրբ» ծառը կտրողը կամ թեկուզ դրանից մի ճյուղ կամ տերև պոկողը խստագույնս պատժվել է՝ կուրացել է, դիվահարվել, ձախորդությունների հանդիպել, հիվանդացել և նույնիսկ մահացել է, իսկ նրա սերունդը ոչնչացել է, ընդ որում՝ արգելվել է նույնիսկ թափված չոր ճյուղերը հավաքել որպես վառելափայտ[28]:

Ուշագրավ է, որ հայոց մեջ ծառ կտրողը որոշակի պատժի է արժանացել նաև օրենքով, և այն արտացոլում է գտել դատաստանագրքերում: Այսպես, ըստ Մխիթար Գոշի Դատաստանագրքի, ... սատանայի դրդմամբ ծառ կտրողին պետք էր դատել, և պատիժն այնպիսին է եղել՝ պետք է հաշվել, թե ծառը քանի տարի բերք չի տա, և այդ ամբողջ արժեքը գանձել կտրողից[29]: Ըստ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի, ... եթե մեկը կտրեր ուրիշին պատկանող պտղատու ծառը, ապա տուժողի այգում պետք է անկեր մի մատղաշ ծառ և խնամեր ու մշակեր այնքան, մինչև ծառը հասներ կտրածի տարիքին[30]: Ըստ ավանդության, Ծննդոց անտառից թեկուզ մի ծառ կտրողը Երվանդ արքայի հրամանով նետվել է հանցանաց խուց... և մեկ տարով զրկվել հաց ստանալու իրավունքից՝ «ծառը բնության համար նույնն է, ինչ մարդու համար հացը» մտայնությամբ[31]:

Այնուամենայնիվ, հայոց մեջ սուրբ համարվող ծառերից, հատկապես փոշնուց պահպանակ-գաղդղաններ, նաև՝ որոշակի առարկաներ են պատրաստվել (օր., արորի լուծը կամ գոնե սամիները), որոնք կոչված են եղել պահպանելու չար ուժերի, «չար աչքի» ազդեցությունից[32]: Ըստ երևույթին, «սուրբ» ծառեր կամ դրանցից ճյուղեր կտրելիս անցյալում արարողություններ, ծիսակատարություններ ու զոհաբերություններ են արվել, աղոթքներ ասվել, որոնք ժողովրդի հիշողության մեջ չեն պահպանվել[33]:

Ազգագրական նյութի հավաստմամբ՝ «սուրբ» ծառերի ու պուրակների անձեռնմխելիության գաղափարը դիտվել է երկրագնդի տարբեր ժողովուրդների մեջ՝ հիվանդությունների, ձախորդությունների, մահվան սպառնալիքով արգելվել է դրանք

---

25 *Ф е о ф р а с т, Исследование о растениях, пер. с древнегреческого, Л., 1951, стр 410:*

26 *Անդ, էջ 96:*

27 *Ա. Ս ա ր գ ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 48, ԴԱՆ-81, տ. I, III-IV, ԴԱՆ-83, տ. II, V-VI, ԴԱՆ-86, տ. I-III, V-VI:*

28 *Ե. Լ ա լ ա յ ե ա ն, Բորչալուի գաւառ.- ԱՀ, գ. 10, Թիֆլիս, 1903, էջ 186, Գանձակի գաւառ.- ԱՀ, գ. Զ, Թիֆլիս, 1900, էջ 335-337 (տես նաև՝ Ե. Լալայան, Երկեր, հ. 2, էջ 203-487), Վասպուրական.- ԱՀ, գ. 25, Թիֆլիս, 1913, էջ 38, 40, Վարանդա.- ԱՀ, գ. Բ, էջ 198; Բենսէ, Բուլանըխ կամ Հարք գաւառ.- ԱՀ, գ. Զ, էջ 39:*

29 *Հայկ Խաչատրյան, Սոսյաց անտառ, Եր., 1988, էջ 221:*

30 *Անդ, էջ 220:*

31 *Հայկ Խաչատրյան, Հայապատում, Եր., 1984, էջ 41:*

32 *ԴԱՆ-81, տ. I-IV, ԴԱՆ-83, տ. I-VI, ԴԱՆ-86, տ. I-VI:*

33 *ԴԱՆ-81, տ. I-IV, ԴԱՆ-83, տ. I-VI, ԴԱՆ-86, տ. I-VI: Հմմտ. Սշո աշխարհում, հատկապես ս. Կարապետի վանքի շուրջը հաճախ հանդիպող «լօշտակ անունով բոյս մը» ... ամենայն հիվանդությունների բուժիչ է, «որոյ արմատը մարդանման կը համրուեն... այս արմատը հանելու համար յատուկ աղօթք մը ունին. և թէ՝ երբ կը կտրեն իր միւս կտորներէն, ահագին ձայնով կը ճչայ. ուլ մը կամ հաւ մը կը կապեն այդ մարդարմատի, որպէս զի երբ ճչայ՝ այն ուլը կամ հաւը անոր ձայնին զոհ լինին. եթէ այդ հնարը չլինի, արմատ հանող մարդը պիտի մեռնի».- Գ. Սրուանձտեանց, Գրոց ու Բրոց եւ Դաւիթ կամ Մհերի դուռ, Կ. Պոլիս, 1874, էջ 32:*

կարել կամ դրանցից ճյուղեր ու աերևներ պոկել: Թե ինչ մեծ աեղ է արվել ծառերի պաշտամունքին, կարելի է դատել այն պաաժի դաժանությունից, որին գերմանների օրենքով ենթակա եղել ամեն ոք, ով կհամարձակվեր պոկել կանգուն ծառի կեղևը[34], ընդ որում, ըստ ժողովրդական հավատալիքների, դրանց կտրման դեպքում ոչ միայն կարողը կամ նրա սերունդն է պատժվել, այլ նաև կարող էին առաջանալ տարերային աղետներ՝ ամպրոպ, կարկուտ, ջրհեղեղ և այլն:

Կովկասյան որոշ ժողովուրդների մեջ արգելվել է նույնիսկ նման «սուրբ» պուրակներ մանելը, բացի առն օրերից կամ ավյալ սրբին նվիրված տոներից, անձեռնմխելի են համարվել նաև նման պուրակներում կամանատառներում գտնված կենդանիները, ինչպես նաև՝ այնտեղ ապաստանած հանցագործները[35], ըստ երևույթին այն մտայնությամբ, որ «սուրբ» պուրակներն իրենց անձեռնմխելիությունը հաղորդել են այդտեղ հովանավպություն փնտրող մարդկանց:

Այնուամենայնիվ, որոշակի առների ու արարողությունների ժամանակ կտրվել են սրբացված ծառերը զանազան ծիսակատարություններով՝ նախապես մոմեր վառելով, զոհեր մատուցելով (ծառը կտրելու ծիսական թույլտվություն):

Հայոց մեջ հնուց ի վեր, ըստ ժողովրդական հավատալիքների, «սուրբ» ծառերն օժտված են եղել որոշակի հատկություններով, մի կողմից՝ պտղաբերելու ունակություն հաղորդելու և բուժիչ, մյուս կողմից՝ չար ուժերի, «չար աչքի» ազդեցությունից, զանազան անհաջողություններից ու ձախորդություններից պահպանելու օժտվածությամբ դրանց ճյուղերի կամ դրանցից պատրաստված պահպանակ-հմայիլների օգնությամբ: Սրբազան ծառերի հետ կապված պտղաբերության պաշտամունքի արձագանքները պահպանվել են ընդհուպ XIX-XXդդ. Հայաստանի տարբեր պատմազգագրական մարզերում, որոնցում զանազան ծեսերով ու արարողություններով, հմայական միջոցներով աշխատել են ապահովել պտղաբերությունը: Այդ մտայնությամբ նման ծառերին ուխտ են գնացել, մատաղ արել, մոմ վառել, կանաչ-կարմիր թելեր կամ հագուստի որոշ մաս կապելայդ ծառերից[36]:

Պտղաբերելու ակնկալիքով, Հայաստանի որոշ շրջաններում ամուլ կանայք իրենց գոտիներն են կապել ծառի բնին կամ ծառի բնի և ճյուղերի միջև գոյացած անցքով երեք անգամ անցել են և կամ՝ ծառերի ճյուղերից ճոճք են կապել, ախկնիկ դրել մեջն ու օրորել[37] և այլն:

Պտղաբերության պաշտամունքի հետ սերտորեն կապված է հայոց մեջ ամենուրեք հարսանյաց ծիսակատարության ժամանակ հանդես եկող հարսանեկան ծառը (ուրց, ուռք, նուրծ, փոխինդ), որը երիտասարդ զույգերի պտղաբերության ծիսահմայական խորհուրդ է պարունակել:Հայաստանի տարբեր պատմազգագրական մարզերում ուշագրավ սովորույթ է դիտարկվել՝ ծառերի բերքատվությունը խթանելու նպատակով դիմել են շատ հետաքրքիր ծեսի՝ կացնով հարձակում են գործել պտուղ չավող ծառի վրա՝ կտրելու սպառնալիքով (հատկապես Մեծ Պասի Ավագ չորեքշաբթի օրը, Ամանորի գիշերը, Ծաղկազարդին)՝ անպտուղ ծառի պտղավորման ակնկալիքով[38]: Հայոց մեջ ամենուրեք դիտվող այս ծեսում պտղաբերության հետ առնչվող նույն մտայնությունն է դիտվել՝ ծիսահմայական եղանակներով ապահովելու ծառի պտղաբերությունը, խթանելու բերքատվությունը, ընդ որում, հայոց մեջ այնքան մեծ է եղել հավատն այդ առումով, որ նույնիսկ բազմաթիվ ավանդություններ են պահպանվել նման ծեսից հետո անպտուղ ծառերի պտղավորման մասին: Ուշագրավ է, որ այս սովորույթը դիտվել է

[34] *Ջ.Ֆ ր է զ ե ր, նշվ. աշխ., էջ 136:*

[35] *Е.В е й д е н б а у м, նշվ. աշխ., էջ 165-167, Кс.Главани, Описание Черкесии.- Сборник материалов для описании местностей и племен Кавказа (այս՝ СМОМПК), вып. 17, Тифлис, 1893, стр 157:*

[36] *ԴԱՆ-81, տ. I, III, ԴԱՆ-83, տ. I, III-IV, VI, ԴԱՆ-86, տ. I-IV, VI:*

[37] *Ե. Լ ա լ ա յ ա ն, Տղաբերքի սովորությունների զարգացումը հայոց մեջ.- Տեղեկագիր ՀՍԽՀ ԳԱ գիտության և արվեստի ինստիտուտի, Եր., 1931, թիվ 5, էջ 123, Նույնը, Բորչալուի գավառ.- ԱՀ, գ. 10, էջ 185:*

[38] *Ս. Լ ի ս ի ց յ ա ն, Զանգեզուրի հայերը, Եր., 1969, էջ 272; Ե. Լալայեան, Զանգեզուր.- ԱՀ, գ. Դ, թիվ 2, Թիֆլիս, 1898, էջ 110, Վարանդա.- ԱՀ, գ. Բ, էջ 243, Գանձակի գաւառ.- ԱՀ, գ. Զ, էջ 335, Յ.Մուրադեանց, Համշէնցի հայեր, էջ 157:*

նաև տարբեր էթնիկական հանրույթների մեջ՝ Կովկասում, եվրոպական շատ ժողովուրդների մեջ, Ճապոնիայում, մալայացիների մեջ և այլուր, նույն մտայնությամբ՝ ծիսա-հմայական տարբեր եղանակներով նպաստելու ծառերի պտղավորմանն ու բերքատվությանը: Ըստ ժողովրդական հավատալիքների, «սուրբ» ծառերն օժտված են եղել նաև զանազան հիվանդություններ բուժելու հատկությամբ, հավատք, որ հայոց մեջ դիտվել է ամենուրեք, ընդ որում, որոշ ծառերին վերագրվել է միայն մեկ, որոշակի հիվանդություն, մյուսներին՝ ամենայն հիվանդություններ բուժելու հատկություն[39]: Հետագայում, արդեն քրիստոնեական վերաիմաստավորմամբ, բուժիչ զորությունը հիմնականում վերագրվել է ավյալ սրբավայրին՝ «խաչ»-ին, թեպետ սրբավայրերի սերձակայքի ծառերը դարձյալ «սուրբ» և անձեռնմխելի են համարվել[40]:

Հայոց մեջ հավատք էր սահեղծվել նաև, որ «սուրբ» ծառերի միջոցով կարող են ձերբազատվել ամենատարբեր փորձություններից, նման ծառերին զոհաբերություններ անելով կարող են կանխվել աղետները (երաշտ, կարկտահարություն, հեղեղ, մորեխ և այլն), կարող են անձրև կամ արև հայցել և այլն: Ընդ որում, այն հավատով, որ նման ծառերն իրենց «սրբությունը» պահպանել են նաև չորանալուց հետո, պաշտվել են նույնիսկ տապալվածները, դրանց մոտ մոմ են վառել, աղոթել, բների փտած փոշին ջրի մեջ լուծելով խմեցրել են հիվանդներին՝ ապաքինման ակնկալիքով[41]:

Ծառերի պաշտամունքի վկայություն է այն երևույթը, որ դրանց աշխատել են պահպանել «չար աչքի», չար ուժերի ազդեցությունից, ուստի պտղատու ծառերին զանազան աչքահուլանքներ են կախել[42]:

Ծառերի պաշտամունքն արտահայտություն է գտել ժողովրդական որոշ տոներում Նավասարդ, Տյառնընդառաջ, Ծաղկազարդ, Համբարձում՝ կապված բնության զարթոնքի, պտղաբերության, սերմի, պտղի, բերքի և ընդհանրապես կյանքի գաղափարի հետ՝ հետագայում արդեն քրիստոնեական վերաիմաստավորմամբ: Այսպես, Տյառնընդառաջին, որը բնության զարթոնքի տոն է համարվել, ծխահմայական զանազան արարողություններով աշխատել են ապահովել բերքատվությունը, առատությունն ու հաջողությունը ողջ տարվա ընթացքում: Այդ նպատակով Տյառնընդառաջին վառվող խարույկի խանձողները, որոնց սրբազան զորություն է վերագրվել, դրվել են տան տարբեր մասերում, խարույկի մոխիրը ցարնանը շաղ են տվել արտերում, ջրի մեջ լուծելով խմեցրել են հիվանդներին և այլն[43]:

Ծաղկազարդի՝ բնության, գարնան զարթոնքին նվիրված սանսկատարության ծիսական արարողություններում ողջ հայոց աշխարհում խորհրդանշական ծառ է եղել ուռենին, ամենուրեք օրհնվել են ուռենու նորաբողբոջ ճյուղերը (միայն Կիլիկիայում եկեղեցի են գնացել ձիթենու ճյուղերով): Ուռենու օրհնված ճյուղերով զարդարել են տները, դրանք այրել են հացահատիկի շտեմարանի մեջ, կախել խնոցու վրա և այլն՝ առատության ակնկալիքով[44]: Եվ ընդհանրապես, հայոց մեջ ժողովրդական տարբեր տոնակատարությունները միշտապես ուղեկցվել են կանաչ ծառերով, ճյուղերով, ծաղիկներով, որոնք առատության, հաջողության, երջանկության խորհրդանիշներ են համարվել:

---

[39] *Ե. Լալայեան, Վասպուրական.- ԱՀ, գ. 25, էջ 287, Վարանդա.- ԱՀ, գ. Բ, էջ 201, Գանձակի գաւառ, էջ 354, Նոր-Բայազէտի գաւառ.- ԱՀ, գ. 17, թիվ 1, Թիֆլիս, 1908, էջ 124:*

[40] *ԴԱՆ-81, տ. I-IV, ԴԱՆ-83, տ. I-VI, ԴԱՆ-86, տ. I-VI:*

[41] *Ե. Լալայեան, Բորչալուի գաւառ.- ԱՀ, գ. 10, էջ 186, Գանձակի գաւառ.- ԱՀ, գ. Զ, էջ 336, Վարանդա.- ԱՀ, գ. Բ, էջ 174, ԴԱՆ-83, տ. I-IV, VI, ԴԱՆ-86, տ. I, III, VI:*

[42] *Ե. Լալայեան, Վասպուրական.- ԱՀ, գ. 26, Թիֆլիս, 1916, էջ 201, А..Исраелян, Армянские бусы-обереги XIX-нач. XXв.- ԱՀՊՊԹ, հ. 7, Եր. 1981, էջ 99, ԴԱՆ-83, տ. IV, VI, ԴԱՆ-86, տ. II, IV-VI.*

[43] *Գ. Սրուանձտեանց, Մանանա, Կ. Պոլիս, 1876, էջ 108-109, Ս. Լիսիցյան, Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ).- ՀԱԲ, պր. 12, Եր., 1981, էջ 70 (տես նաև՝ С. Лисициан, Армяне Нагорного Карабаха. Этнографический очерк, Ер., 1992), Վ. Բդոյան, նշվ. աշխ., էջ 487:*

[44] *Ե. Լալայեան, Զանգեզուր.- ԱՀ, գ. Դ, թիվ 2, էջ 109, Ջաւախք, ԱՀ, գ. Բ, Թիֆլիս, 1897, էջ 269 (տես նաև՝ Երկեր, հ. 1, Եր., 1983, էջ 33-412), Վարանդա.- ԱՀ, գ. Գ, թիվ 1, Թիֆլիս, 1898, էջ 344-345, Բորչալուի գաւառ.- ԱՀ, գ. 10, էջ 260:*

Հայկական լեռնաշխարհում բուսական աշխարհի, մասնավորապես ծառերի պաշտամունքն արտացոլում է գտել ժայռապատկերներում, ինչպես նաև մշակութային տարբեր շերտերից հայտնաբերված նյութական մշակույթի հուշարձաններում՝ Բիայնայի (Ուրարտու) տարածքից հայտնաբերված կնիքների, խեցեղենի, բրոնզե գոտիների, սաղավարտների, ռազմակառքերի և այլնի վրա՝ կենաց ծառերի պատկերներով, հիմնականում ոճավորված: Կենաց ծառերի պատկերներ են հանդիպում միջնադարյան ճարտարապետական հուշարձանների, խաչքարերի, գրակալների, եկեղեցական գորգերի ու կարպետների վրա, մանրանկարչության մեջ և այլուր՝ որպես կյանքի, պտղաբերության, առատության խորհրդանիշ:

Հայոց մեջ բուսականության պաշտամունքի հետ կապված սովորույթներն ու ծեսերը, անցնելով զարգացման երկարատև ուղի, դարերի ընթացքում որոշակիորեն վերափոխվելով ձևի ու բովանդակության առումով, քրիստոնեական ծիսակարգի ազդեցությամբ վերաիմաստավորվելով, այս կամ այն տարբերակներով պահպանվել են ընդհուպ XIX-XX դդ., մինչև մեր օրերը: Հայաստանի տարբեր պատմազգագրական մարզերում մինչ օրս էլ կարելի է հանդիպել խաչքարի, մատուռի, եկեղեցու շրջակայքում լաթերով ծածկված բազմաթիվ ծառեր, որոնց մոտ մոմ են վառում, աղոթում, դրանց զոհեր են մատուցում՝ հիվանդություններից ապաքինվելու, հացողության ակնկալիքով[45]: Ծառապաշտության վերապրուկ է նաև տարեմուտի տոնին տները կանաչ ծառերով զարդարելու սովորույթը, որը բազում տարբերակներով հանդիպում է աշխարհի տարբեր ժողովուրդների մեջ:

Եվ, ինչպես դեռևս հին հույներն էին կարծում, թե մարդիկ, որոնք ծառեր են խնամում, վայելում են Դրիադների՝ ծառերի հովանավոր նիմֆաների հատուկ հովանավորությունը[46], այսօր էլ բուսականության դերն ու նշանակությունը մարդկանց կյանքում ամենևին չի նվազել, և իզուր չէ ժողովրդի մեջ ասվում, որ եթե դու թեկուզ մեկ ծառ ես տնկել կյանքում, ապա կյանքդ իզուր չի անցել:

КУЛЬТ ДЕРЕВЬЕВ В СИСТЕМЕ АРМЯНСКИХ ВЕРОВАНИЙ

------Резюме ------ *------А. Саркисян ------*

С древних времен у армян сформировались определенные верования, относящиеся к растительному миру и, в частности, к деревьям. Дереву поклонялись, его почитали как символ плодородия, изобилия, весеннего пробуждения, символ жизни, что и нашло свое отражение в различных народных ритуалах и обычаях.

Эти ритуалы и обычаи, пройдя длинный путь развития, претерпев на протяжении веков различные трансформации формы и смысла, переосмысляясь под воздействием христианского вероисповедания, в той или иной вариации сохранились до наших дней.

В разных историко-этнографических регионах близ хачкаров, храмов и церквей и сегодня можно увидеть деревья, покрытые кусочками ткани, у которых ставят свечи, молятся, им приносят жертву во избавление от болезней и напастей, с надеждой на оплодотворение и всякую благость.

---

[45] *Ա.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 47-48, ԴԱՆ-81, տ. I-IV, ԴԱՆ-83, տ.I-VI, ԴԱՆ-86, տ. I-VI:*
[46] *Մ.Բոտվիննիկ, Մ.Կոգան և ուրիշն., Դիցաբանական բառարան, Եր, 1985, էջ 65-66:*

Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ, Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ,

ՀՈՎՀԱՆՆԵՍ – ՍՄԲԱՏԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ՇՈՒՐՋ

Անիի Բագրատունի շահնշահերի թագավորությունը XI դ. 20-ական թթ. բաժանվել էր երկու մասի և հայտնվել Բյուզանդիայի ծավալապաշտական քաղաքականության կիզակետում: Հովհաննես-Սմբատի և նրա կրտսեր եղբայր Աշոտի միջև ընթացող գահակալական պայքարն ավարտվել էր նրանով, որ հաշտարար միջնորդները «նստուցին զԱշոտ դրուց աշխարհին՝ թագաւոր ամենայն տանն Հայոց, եւ Յովհաննէս նստցի թագաւոր ի քաղաքն յԱնի»:[1] Հովհաննես-Սմբատին քաղաքամայր Անիի հետ միասին բաժին էր հասել նաև շահնշահական ոստան Շիրակը, ինչպես նաև՝ սեփականատիրական իրավունքը նրան հարող ինչ-որ տարածքների նկատմամբ: Դրանց վրա էլ իր ուշադրությունն էր բևեռել Բյուզանդիան: Ինչպես տեղեկանում ենք «Պատմութիւն Գեաարգել Ս. Նշանին գերահռչակ ուխտին Խուարածորոյ» երկից. «Թագաւորն Յունաց Վասիլ առաջի դնէ Յովհաննէս Հայոց թագաւորի… տալ ի ձեռս իշխանութեան նոցա զքաղաքն Անի հանդերձ նահանգաւքն Շիրակայ եւ Տիրակայ եւ Պաղակայ»:[2]

Որ «Շիրակայ նահանգը» մեր «Աշխարհացույցի» Շիրակ գավառն է՝ նրան հարող Աշոցքի և Արագածոտնի հյուսիսային մասի հետ միասին, կասկած լինել չի կարող: Իսկ թե ինչ են իրենցից ներկայացնում «Տիրակայ նահանգը» և «Պաղակայ նահանգը», հայտնի չէ: Սրանցից առաջինի վերաբերյալ Գ. Տեր-Մկրտչյանը գրում է. «Ալիշանի «Շիրակ» մենագրության մեջ և ոչ մի անգամ չէ հիշվում Տիրակ անուն: Առաջին և միակ անգամը այդ անունը պատահում է մեզ Խավարածորի Գեարգել Ս. Նշանի պատմության մեջ և այն Շիրակ անվան հետ միասին… Արևելյան Շիրակում, Ալեքսանդրապոլից դեպի արևելք, այժմ էլ կա մի գյուղ՝ Տիրակլար անվամբ, որ կարող է նրա Տիրակը անվան թուրքական ձևափոխությունը լինել»:[3] «Տիրակայ նահանգի» անունը Տիրակլար//Դիրաքլար գյուղի անվանն առնչելը անընդունելի է թեկուզև այն պատճառով, որ «Տիրակայ նահանգը» հարևանն էր «Շիրակայ նահանգի» (ուրեմն, նրա կազմում գտնվել չէր կարող), իսկ հիշյալ գյուղը (այժմյան Կառնուտը) գտնվում է հենց Շիրակում: Ինչպես հին, այնպես էլ միջնադարյան Հայաստանում *Տիրակ* և *Պաղակ* անուններով նահանգներ առհասարակ գոյություն չեն ունեցել: Բնական է մտածելը, որ գործ ունենք հիշյալ նահանգներին արված անձնանվանական ծագմամբ անվանումների հետ: Այսինքն, թե համապատասխան տարածքները կրում են իրենց իրական կամ անգո (վիպական-ավանդական) տիրակալների՝ Շիրակի, Տիրակի և Պաղակի անունները:

Շիրակ անունը կրած վիպական-ավանդական և իրական անձանց գոյությունը հաստատվում է հետևյալ տեղեկությունների միջոցով. 1.Վասպուրականի Թիմարի շրջանի Տիրամոր վանքի մասին պատմում էին, թե «այս վանքի տեղում եղել է *Շիրաք*, Ձիրաք և Միրաք չաստվածների կռատունը»[4]: 2.«Այս են քաղաքք եւ շինողք նոցին» երկում ասվում է. «*Շիրակ* արքա զՇիրակ շինեաց»[5]: 3.«Պատմութիւն Անւոյ» երկում Բագրատունյաց թագավորության և Անի քաղաքի հիմնադիրը կոչվում է *Շիրակ*[6]: 4. «Աշխարհացույցը» վկայում է, որ Մավրիկապոլիս քաղաքը Շիրակում նախապես *Շիրակաշատ* էր կոչվում[7] (հմմտ. Երուանդ և Երուանդաշատ, Արտաշէս և *Արտաշաշատ >Արտաշատ, Շամ//Սամոս և Շամշատ//Սամոսատ և այլն): 5.Առաքել Դավրիժեցին Գրիգոր Տաթևացու աշակերտ Հովհաննես վարդապետին թե՝ « Յով-

---

[1] *Մ. Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 10:*

[2] *Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1979, էջ 197, ծան. 3:*

[3] *Նույն տեղում:*

[4] *Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Եր., 1969, էջ 248:*

[5] *Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 4, Եր., 1948, էջ 163:*

[6] *Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նադր-շահին Պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 101:*

[7] *Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 110:*

հաննէս *Շիրաք* » է կոչում, թե՛ « Յոհաննէս, որ մակ անուն *Շիրակ* ասի »[8]: *6.*Նա հիշատակում է նաև Խոջա *Շիրաք* անունով մեկին (ի դեպ, Խոջա Սիրաքի հետ միասին)[9]:

Ինչպես Շիրակ անունը, այնպես էլ Տիրակ և Պաղակ անունները նախապես եղել են վիպական-ավանդական անձանց անուններ, որոնց իրական անձինք ընկալվելուն զուգընթաց այդ անունները տրվել են նաև իրական անձանց՝ մականունների և բուն անձնանունների ձևով: Վերջին երկու անունների առթիվ հիշենք, որ Տիրակ էր կոչվում Դվինի 555թ. ժողովի մասնակից Բագրևանդի եպիսկոպոսը[10], իսկ Պաղաք //Պողաե անձնանունն հայտնի է 1308թ. թվագրվող մի խաչքարի արձանագրությունից[11]:Ինչպես ցույց ենք տվել մեր մեկ այլ հոդվածում, բերված վկայություններից առաջիններում հիշատակված Շիրակ վիպական-ավանդական անձնավորությունը իր անվամբ անձնավորում է հացահատիկների ամբարման երևույթը և դրանով իսկ բացահայտում իր հալագործական բնույթը : Շիրակ //Շիրաքի ուղեկից Չիրաք չաստվածը իր անվամբ ուղղակիորեն առնչվում է հեթանոսական պաշտամունքին և ունի քրմական բնույթ: Նրանց հետ միասին եռյակ կազմած Սիրաքը, որի անունը ներկայացնում է փաղաքշական ձևը *Միհր // Մհեր* անվան, ունի զինվորական բնույթ[12]: Մեր կարծիքով, «Շիրակայ եւ Տիրակայ եւ Պաղակայ» նահանգներին իրենց անունները տված Շիրակը, Տիրակը և Պաղակը նույնպիսի մի եռյակ են կազմել, ինչպիսին կազմում էին վասպուրականյան Շիրաք, Չիրաք և Սիրաք չաստվածները, որի նման նա ևս ունի եռդեվրոպական միասնության շրջանը գսացող արմատներ: Ընդ որում, Շիթակը զուգահեռն է լինելու վասպուրականյան Շիրաքի, Տիթակը՝ Չիրաքի, իսկ Պաղակը՝ Սիրաքի:

Նախ «Տիրակայ նահանգի» և Տիրակի մասին: Հայտնի է, որ արաբական մատենագրության մեջ Շիրակ գավառի անունը հաճախ բերվում է ինչ-որ կցորդի հետ միասին '*Սիրաջ-Թայր*[13]: Արաբական տառադարձության յուրահատկություններից ելնելով, անվան երկրորդ բաղադրիչը կուրելի է կարդալ նաև *Թիր* կամ *Տիր* ձևով: Հ. Նալբանդյանը, ի նկատի առնելով առաջին՝ Սիրաջ-Թայր, ձևը, գրում է. «Շատ հավանական է, որ Շիրակ և Տայք գավառների մասին է ակնարկում »[14] : Բայց այս կարծիքը քիչ հավանական է, որովհետև Շիրակն ու Տայքը վարչատարածքային մեկ միավոր կազմել, կամ այդպիսին ընկալվել չէին կարող: Նրանք հարևան գավառներ չէին: Նրանց միջև ընկած էր ընդարձակ տարածք զբաղեցրած Վանանդ գավառը:

Մեր կարծիքով, Շիրակի հետ միասին մեկ ամբողջություն կիսված Թիրը կամ Տիրը նույն «Տիրակայ նահանգն» է՝ Տաշիր - Ձորագետի (Լոռու) թագավորության տարածքը, իսկ «Պաղակայ նահանգը » համապատասխանում է Վանանդի (Կարսի) թագավորության տարածքին: Այս դեպքում հասկանալի է դառնում, թե ինչու էր Վասիլ 2-րդ կայսրը Հովհաննես-Սմբատից պահանջում ոչ միայն «Շիրակայ նահանգը», այլև «Տիրակայ նահանգը» և «Պաղակայ նահանգը» : Բանն այն է, որ վերջին երկու թագավորությունների գահակալները իրենց ենթակա տարածքների ժառանգական սեփականատերերը չէին և թագավորներ էին համարվում իրենց շահնշահական ծագման պատճառով՝ լինելով ժառանգները Բագրատունի այս կամ այն շահնշահի: Գագիկ 1-ին շահնշահի (990-1020թթ.) և Վանանդի ու Տաշիր-Ձորագետի («Աղվանից») Բագրատունի գահակալների միջև գոյություն ունեցած այդպիսի փոխհարաբերությունների մասին է վկայում Մատթեոս Ուռհայեցու հետևյալ հաղորդումը. «Յայնմ ժամանակի նստաւ Աբաս ի Կարս թագաւորական իշխանութեամբ՝ հրամանաւ ազգապետին իւրոյ Գագկայ Հայոց արքային, եւ Գուրգէն՝ յԱղուանից աշխարհն, վասնզի յազգէ Հայոց

[8] *Պատմութիւն Առաքել Վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 441:*
[9] *Նույնը, էջ 440:*
[10] ***Н.А д о н ц , Армения в эпоху Юстиниана, Ер., 1971,стр.330.***
[11] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., հ. 4, էջ 218:*
[12] *Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն, Ծ. Պ ե տ ր ո ս յ ա ն, Չաստվածների մի եռյակի վիպական զուգահեռները և դրանց նախատիպերը, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ գիտական աշխատություններ, 2, Գյումրի, 1999, էջ 148-150: Տե՛ս նաև Ս. Պետրոսյան, Լ. Պետրոսյան, Եռյակ բնակավայրերի համակարգը հին Հայաստանում և Ռուսիայում, նույն աեղում, էջ 133-135:*
[13] *Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին (կազմեց Հ.Նալբանդյան), Եր., 1965, էջ 78:*
[14] *Նույնը, էջ 176, ծան. 217:*

քաղաքացն էին եւ կային ի հնազանդութիւն տանն Շիրակայ »[15]: Նույնպիսի փոխհարաբերությունների մասին է խոսում նաև Սմբատ Սպարապետի այն վկայությունը, որը վերաբերում է Հովհաննես-Սմբատի և Աշոտի միջև կայացած հաշտությամբ ստեղծված իրավիճակին: Նա գրում է. «յայնժամ նստաւ Աբաս ի Կարս թագաւորական իշխանութեամբ երամանաւ Յովհաննիսի եւ Աշոտայ, եւ Գեորգի՝ յաշխարհն Աղուանից. զի էին յազգէ թագաւորաց. եւ կային ի հնազանդութեան երկուց թագաւորացն Յովհաննիսի եւ Աշոտոյ»[16]: Ի դեպ, Տաշիր-Ձորագետի թագավորությունում («յաշխարհն Աղուանից») իշխած անձը Մատթեոս Ուռհայեցու երկում Գուրգեն, իսկ Սմբատ Սպարապետի երկում Գեորգի կոչվում է թյուրիմացաբար: Իրականում նա Գուրգեն Բագրատունու որդին էր՝ Դավիթ Անհողինը[17]: Արծարծվող հարցի առնչությամբ ուշադրության է արժանի նաև Մատթեոս Ուռհայեցու այն հաղորդումը, ըստ որի . «Ի թուականութեանս հայոց ՆՀ ելանէր Վասիլն յարեւելս անթիւ զօրօք եւ խնդրեաց ի թագաւորէն Հայոց զԱնի եւ զԿարս»[18]: Ինչպես Ռ. Մաթևոսյանն է շեշտում. «Այստեղ մեզ համար կարևորն այն է, որ Կարսի թագավորության հողերի գերագույն սեփականատերերն էին Բագրատունի ազգապետները (Հայոց թագավորները)»[19]:

«Շիրակայ նահանգին» իր անունը տված Շիրակը, ամենայն հավանականությամբ, ներկայացնում է վիպական-ավանդական զուգահեռը հեթանոս հայերի Տիր աստծո,որի անվան կրողն էլ է. *Շիրակ < Շիր-ակ*: Տիրը նախապես համարվել է արեգակնային լույսն անձնավորող մի աստվածություն, ուստի հելլենիստական դարաշրջանի Հայաստանում Ապոլոն-Հելիոսը նույնացված էր նրա, և ոչ թե Միհր աստծո հետ (ինչպես էր, օրինակ, Կոմագենեում)[20]: Մ. Խորենացու այն հաղորդումը, թե Վաղարշ արքան «մեհեան շինեալ յԱրմաւիր՝ անդրիս հաստատէ արեգական եւ լուսնի եւ իւրոց նախնեացն»[21] հասկանում են այնպես, թե Վաղարշակը Արմավիրում արձաններ է կանգնեցրել ի պատիվ Արեգակի (Ապոլոն, Տիր), Լուսնի (Անահիտ, Արտեմիս) և իր նախնիների[22]: Արևաստծու իր գերը Միհրին զիջելուց հետո Տիրը մնաց միայն եռգևոր լույս առաքող աստված՝ ուսման և ճարտարության աստված, քրմական գիտությունների հանրագիտակ, երազացույց և երազահան[23]: Դրա մասին է խոսում Տրդատ 3-րդին վերաբերող Ագաթանգեղոսի հետևյալ հաղորդումը.«Ապա ինքն իսկ թագաւորն խաղայր գայր ամենայն զօրօքն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքէ՝ երթալ յԱրտաշատ քաղաք, աւերել անդ զբագինս Անահական դիցն, եւ որ յԵրազամոյն տեղիսն անուանեալ կայր: Նախ դիպեալ ի ճանապարհի երազացոյց, երազահան պաշտաման Տրի դից, դպրի գիտութեան քրմաց, անուանեալ դիւան գրչի Որմզդի, ուսման ճարտարութեան մեհեան. նախ ի նա ձեռն արկեալ՝ այրեալ քանդեցին»[24]:

Տաշիր-Ձորագետը Տիր աստծու վիպական-ավանդական զուգահեռ Շիրակի տիրույթ կարող էր համարվել այն պատճառով, որ ժամանակին եռյակի մասեր կազմած, կամ այդպիսին համարված, Վանանդ, Տաշիր և Շիրակ գավառներից արևելյանը՝ Շիրակից արևելք գտնվողը, հենց Տաշիրն էր: Հեթանոս հայերի Տիր աստվածը նախապես անձնավորելով նաև արեգակնային լույսը, առասպելաբանական մտածողությամբ ըմբռնվելու էր արևելքի տիրակալ: Այդ արևելքը կարող էր լինել որևէ տարածքի, Հայոց աշխարհի, տիեզերքի արևելյան կողմը: Այդ նույն մտածողությամբ նրա վիպական -ավանդական զուգահեռ Շիրակը համարվել է եռյակ կազմած նիշյալ գավառներից արևելյանի՝ Տաշիրի, տիրակալը: Իսկ Տաշիրը միջուկն էր կազմում

---

[15] *Մ. Ո Ւ ռ հ ա յ ե ց ի, էջ 10:*
[16] *Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 6:*
[17] *Ռ. Մ ա թ և ո ս յ ա ն, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Եր.,1990, էջ 165, ծան. 14:*
[18] *Մ.Ո ւ ռ հ ա յ ե ց ի, էջ 49:*
[19] *Ռ. Մ ա թ և ո ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 164:*
[20] *Գ. Ս ա ր գ ս յ ա ն, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին. Եր.,1966, էջ 43-44:*
[21] *Մ. Խ ո ր ե ն ա ց ի, Պատմութիւն Հայոց, Բ, ը:*
[22] *Հայ ժողովրդի պատմություն, հ.1, Եր.,1971, էջ 577,665,675:*
[23] *Նույնը, էջ 904:*
[24] *Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, Պատմութիւն Հայոց. ԾԸ,778:*

Տաշիր - Ձորագետի թագավորության, որը իր ավանդական տիրակալի անվամբ էլ նոյնև է «Տիրակայ նահանգ»: Տիրտկը իր առասպելաբանական զուգահեռ Տիրի նման օժտված էր լինելու քրմական ֆունկցիաներով ևս, իսկ «Տիրակայ նահանգը» համարվելու էր քրմական տիրույթ:

Տաշիր-Ձորագետի թագավորության տարածքը ենում կազմում էր բուն Գուգարքը՝ Ստրաբոնի Γωγαρηνη-ն և «Աշխարհացույցի» արևելյան Գուգարքը[25]: Նրա տարածքի այս հին անվան հիմքում քրմական դասի անվանումներից մեկն է ընկած: *Գուգարք* **Գուգ-ար-ք* անվան վերջին բաղադրիչը *ք* հոգնակիակերտն է, երկրորդ բաղադրիչը կամ գործող անձի ցուցիչ է, կամ վերջածանց (հմմտ. *արդ-ար, կերպ-ար, մթ-ար, պալ-ար* և այլն)[26], իսկ *գուգ* արմատը, մեր կարծիքով, տարբերակն է *գոգել* «ասել» բառի *գոգ* արմատի: Վերջինիցս ունենք *գոգելով* «գոչելով» բառը: Սա հայերենի հնդեվրոպական միջուկին պատկանող բառերից է և ծագում է կրոնական-պաշտամունքային ծեսերից հաակացված հ.-ե. նախալեզվի այն նույն արմատից, որից են նաև խեթ. huek//huk «ուխտել, կախարդել», «աղերսել, թախանձել,պատմել» արմատը, եին հնդկ. vagat «աղոթող, զոհ խոստացող, զոհաբերություն անող» բառը, ավեստ. aog- «ծանուցանել,ասել, խոսել, հանդիսավոր կերպով հայտարարել» արմատը, հուն. εὔχομαι «աղոթել, ուխտել, խոստանալ, հայտարարել, ասել», εὐχη՛ «ուխտ,աղոթք, մաղթանք» բառերը[27]: Իմաստային զարգացման տեսանկյունից հմմտ. միևնույն արմատից ծագած բառերից լատին. orare «աստվածներին աղոթել, խոսել», բայց ռուս. орать «գոռալ, աղաղակել», խեթ. tugai- «աղոթել», բայց լատին. nugio «բառաչել» [28]:

Նախնական Գուգարքի քրմապատկան տարածք լինելը առթիվ արժե անդրադառնալ նաև Գուգարաց բդեշխության ստեղծման իրողությանը, որովհետև նրա գոյությունը ,կարծես թե, հակասում է վերն ասվածներին: Հայտնի է, որ բդեշխությունը որպես ռազմականացված վարչական միավոր համեմատաբար ուշ շրջանի երևույթ է: Գուգարաց և մյուս բդեշխների կառավարմանն հանձնված հողերը վաղ միջնադարում միայն մասամբ էին բդեշխական: Դրանց մեծ մասը կազմում էին նախարարական տիրույթները: Այսպիսի տարբերակումը Գուգարքում զուգադիպում էր անդի իշխող տոհմերի միջև գոյություն ունեցող ծագումնաբանական տարբերության հետ: Նրանցից հների նախահայրն համարվում էր Հայկազն Գուշարը, իսկ նորինը՝ բդեշխականինը, Աքեմենյան Դարեհ 3-րդի և Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակակից ոմն Միհրդատի սերունդներից մեկը: Ընդ որում, Արտաշես I-ինի ժամանակաշրջանից ավելի վաղ Գուգարաց բդեշխների առհմը հիմնադրված, իսկ Գուգարաց բդեշխությունը ստեղծված լինել չէին կարող: Ըստ Ստրաբոնի, միասնական Մեծ Հայքը կերտած Արտաշես I-ինն էր, որ նվաճելով Գուգարքը՝ այն ընդգրկել էր իր պետության մեջ[29]: Ենթադրվում է, որ խոսքը վերամիավորման մասին է[30]: Դրանից հետո միայն այստեղ կարող էր ստեղծվել ռազմականացված վարչական մի միավոր: Դա հաստատելու է գալիս մեր պատմահոր հետևյալ հաղորդումը: Հին Հայաստանի հյուսիսային այս ծայրամասի տարածքում իրականացրած վարչական վերափոխումները և համապատասխան պաշտոնյաների նշանակումը ավանդական Վաղարշակ Արքային վերագրելով, Մովսես Խորենացին գրում է. «Իսկ Գուշարայ, որ յորդւոցն Շարայի, ժառանգեաց զլեառն Մթին, որ է Կանգարք, եւ զկէս մասինն Ջաւախաց, զԿողբ, զԾոբ, զՁոր մինչեւ ցամուրն Հնարակերտ: Բայց զտէրաթիւնն Աշոցայ, եւ զսեպհականաթիւնն Տաշրաց կարգէ Վաղարշակ ի զավակացն Գուշարայ Հայկազնոյ: Իսկ ընդդէմ լերինն Կաւկասայ կողմնակալ հիւսիսոյ կարգէ զմեծ եւ զհզօր ազգն, եւ նտեապետութեանն անուն

---

[25] *S t r a b o, 11,14,4;11,14,5 (Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան), Եր.,1940,էջ 55, 57, Ս. Երեմյան, նշվ. աշխ.,էջ 48:*

[26] *Հայոց լեզվի պատմական քերականություն,հ.2, Եր.,1975, էջ 90, Հ.Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ.3, Եր., 1957, էջ 67:*

[27] *Հ.Ա ճ ա ռ յ ա ն, Հայերեն արմատական բառարան, հ.1, Եր., 1971,էջ 570 ,Т. Гамкрелидзе, В. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы,т.II, Тб; 1984, стр.803.*

[28] *Նույնը, հ.2, էջ 804:*

[29] *S t r a b o,11,14,5:*

[30] *Հայ ժողովրդի պատմություն, հ.1, էջ 530,532:*

կարդայ բդեաշխ Գուգարացւոց, որ էր լեալ ի զաւակէ Միհրդատայ, Դարեհի նախարարի…»[31]: Խորենացիական ժամանակագրությամբ այս ամենը տեղի է ունեցել մ.թ.ա. 2-րդ դ. երկրորդ կեսին[32]: Ս.իրդատի սերունդների տնօրինությանն հանձնված տարածքը, ինչպես տեսանք, ներառում էր սրայն «Աշխարհացույցի» Գուգարք աշխարհի հյուսիս-արևելյան մասը՝ հետագա Տփղիս (Թիֆլիս) քաղաքն ու շրջակայքը ներառյալ[33]: Պատմահոր հաղորդումից պարզվում է նաև, որ այստեղ նշանակված բարձրաստիճան պաշտոնյան կրում էր «կողմնակալ հիւսիսոյ» տիտղոսը, որի համարժեքն էր Արշակունյաց դարաշրջանի «բդեաշխ Գուգարացւոց»-ը: Այս նույն պաշտոնյան հետագայում կոչվում էր նաև «բդեշխ Վրաց»[34] կամ «Վրաց բդեշխ»[35]: Ասվածներից բխում է, որ «Գուգարաց բդեշխ»-ը եղել է մի այնպիսի նկարագրական անփոնում, ինչպիսին էին նաև «հիւսիսի կողմնակալ»-ը և «Վրաց բդեշխ»-ը: Իսկ դա նշանակում է, որ ինչպես ռազմավարչական այդ պաշտոնը, այնպես էլ այն սեփականացրած իշխանական տոհմը ծագումնաբանական տեսակետից ոչինչ ընդհանուր չունեն բուն Գուգարքի և այնտեղ իշխած բնիկ տոհմերի հետ: Վերջիններս ունենալու էին քրմական ծագում, իսկ նրանց տիրույթները ժամանակին կազմելու էին քրմապետական տարածք:

«Շիրակայ եւ Պաղակայ եւ Տիքակայ նահանգներ» նայակի երրորդ անդամի՝ «Պաղակայ նահանգի», և Վանանդի թագավորության նույնության մասին է նախ և առաջ խոսում հյուսիսային Վանանդի Պաղակացիս լճի անունը. *Պաղակացիս* <*պաղակ-ացի-ս//*պաղակ-ացի-ք*:Դա ներկայումս *Չըլդըր* կոչվող լիճն է՝ այս կողմերի ամենախոշոր լիճը[36]: Հակառակ ընդունված կարծիքների, այս լճի *Պաղակացիս* անունը չի կարող ծագած լինել ոչ հին տնատոլիական *պալա//բալա* ցեղի անունից[37], ոչ էլ պավլիկյան աղանդավորների *պայդակացիք* ունվանումից[38], որովհետև թե՛ առաջինների, թե՛ երկրորդների այս կողմերում բնակված լինելու մասին որևէ ավյալ գոյություն չունի: Լճին իրենց անունը տված պաղակացիք այդպես կարող էին կոչվել վիպականավանդական Պաղակի հետևորդները ու հհանորդները համարվելու պատճառով: Այսուհանդերձ, մենք այն կարծիքին ենք, որ թե՛ լճանվան, թե՛ նահանգի անվան հիմքում ընկած *պաղակ* բառը ունեցել է ավելի նախնական մի իմաստ և նշանակել է «փայլակ, կայծակ»: Սա իր կազմությամբ ածանցավոր բառ է՝ կազմված *պաղ*-արմատից *-ակ* վերջածանցով: Այս նույն արմատն առկա է նաև հետևյալ բառերում. *պաղապանծ* «լուսափայլ, մաքուր, լուսապանծ», *պաղպաջ* «փայլ, փայլյուն»[39], *պաղպաջել* «փայլել, փայլփլել, ցոլալ»[40], *պաղպաջուն* «փաղփղուն, փայլուն, պայծառ, պսպղուն»[41], *պաղպաղակ* (պաղ-պաղ-ակ) «սառնատեսակ քար, թափանցիկ փայլուն որպէս վանակն եւ բիւրեղ»[42]: *Պաղ* արմատը երրորդ տարբերակն է ներկայացնելու հնդեվրոպական նախալեզվի *spbel-//*pbel- «փայլել» արմատի, որի մյուս տարբերակներն են *փաղ*-ը և *փայլ*-ը[43]: Այս վերջինից է ծագում *փայլակ (ն)* «կայծակ» բառը[44]:

Պաղակացիս լճանվան[45] հիմքում ընկած *պաղակ* բառի նախապես «փայլակ, կայծակ» իմաստ ունենալու մասին է խոսում ոչ միայն այս լճանունի հնդեվրոպական ստուգաբանությունը, այլև նրա «ճերմակ ճակատով հզ» իմաստը[46]: Հայ իրականու-

---

[31] *Մ. Խ ո ր ե ն ա ց ի,…, Բ, ը:*
[32] *Գ. Ս ա ր գ ս յ ա ն, նշվ. աշխ.,էջ 34-35:*
[33] *Ս. Ե ր ե մ յ ա ն, նշվ. աշխ., էջ 77,87:*
[34] *Ղ. Փ ա ր պ ե ց ի, Պատմութիւն Հայոց, Բ, իլ, Գ, կր:*
[35] *Նույնը, Բ, լա:*
[36] *Ս. Ե ր ե մ յ ա ն, նշվ. աշխ., էջ 87:*
[37] *Гр. К а п а н ц я н, Историко –лингвистические работы к начальной истории армян, Ер.,1956, стр.128.*
[38] *Ս. Ե ր ե մ յ ա ն, նշվ. աշխ., էջ 87:*
[39] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Եր.,1979, էջ 13:*
[40] *Նույնը, էջ 14-15: Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2 Եր.,1981, էջ 590:*
[41] *Նույն տեղում:*
[42] *Նույն տեղում:*
[43] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., հ. 4, էջ 476:*
[44] *Նույն տեղում:*
[45] *Ա. Լ ա ս տ ի վ ե ր ա ց ի, Պատմութիւն, գլ.Բ:*
[46] *Ստ. Մ ա լ խ ա ս ե ա ն ց, Հայերէն բացատրական բառարան, հ.4, Եր.,1945, էջ 41:*

թյան մեջ հազարամյակներ գոյատևած ցուլ//եզի պաշտամունքի առթիվ Վ. Բդոյանը գրում է. «Ընտանի կենդանիներից ցուլը հիշատակվում է իբրև սրբազան անասուն, որի սպիտակը Հայաստանի յոթ մեհյանների առաջնակարգ զոհն էր համարվում: Ընտանի ցուլը հավատքի համաձայն կապվում էր ծովային առասպելական ցուլի հետ: Ենթադրվում էր, թե իբր ծովացուլը ընտանի կովից է ծնվել»[47] :

Հնդեվրոպական և առաջավորասիական այլ ավանդույթներում ցուլը համարվում էր ամպրոպի աստծու սրբազան կենդանին, իսկ ավելի վաղ ժամանակներում՝ նրա կենդանական զուգահեռ-մարմնավորումը: Բանն այն է, որ շատ ավելի վաղ ժամանակների առասպելաբանական մտածողությամբ «ամպրոպային էակները նախ պատկերացվում են որպես երկու լեռնանման երեշ կամ որպես վայրի մեծ կենդանիներ, որոնք կռվում են՝ գլուխ-գլխի և եղջյուր-եղջյուրի խփելով: Նրանց եղջյուրները կամ թրերն իրար հարվածելուց՝ փայլատակում է և որոտում... Այնուհետև նրանք ավելի որոշակիորեն ըմբռնվում են որպես արջառ (կով) կամ խոյ (այծ)»[48]: Իսկ որ նրանք ընկալվել են ինչպես երկնային, այնպես էլ երկրային-ընդերքային էակներ, ցույց են տալիս հետևյալ հանելուկները, որոնցից առաջինի և երկրորդի պատասխանը «կայծակ» է, իսկ երրորդինը՝ «ամպ և որոտ»:

1. «Էրգնքեն ընգավ, կեղինը մտավ»[49]:
2. «Գարմիր եզ մը ունիմ,
   Պոլըկելով (բառաչելով) խեղը (հող) մդնու գու (մտնել)»[50]:
3. «Կով մի ունիմ հանա-հանա,
   Կոտոշները մարխանա,
   Կաթնաղբյուրեն ջուր կը խմա,
   Արյունծովեն ծեն կը հանա»[51]:

Գետաբնակ կամ լճաբնակ//ծովաբնակ եղջերավոր ցլընական էակների՝ գետերի և լճերի ոգիների կամ աստվածությունների մասին նախնադարում ստեղծված առասպելաբանական պատկերացումները գոյատևել են հազարամյակներ շարունակ՝ հասնելով անգամ 20-րդ դ.: Այդպիսի մի աստվածություն է ունեցել նաև Եփրատ գետը: Հայտնի է, որ Մեծ Հայք ներխուժած հռոմեական զորքը օգավել էր Եփրատի ծանծաղուտից, ուստի «Բարեհաջող գետանցի համար Լուկուլոսը զոհաբերեց նաև Եփրատին մի ցուլ»[52]: Հայտնի է նաև , որ «Սասնա ծռերում» Մեծ Մհերի , ապա Սարա Մելիքի, վերջապես Դավթի զույգ ուղեկիցներից մեկը Բաթմանա Բուղան էր, որի անունը ուղղակի «Բաթմանի ցուլ» է նշանակում, իսկ Բաթմանը Սասնա ամենամեծ գետն է: Ընդ որում, «ցլային» անուն ունենալով հանդերձ, Բաթմանա Բուղան մարդակերպ է: Մեծամորի (Այղր, Ակնա) լճի համար էլ պատմում էին, թե «Այս լիճը լիքն է հրեղեն ձիերով, սպիտակ գոմեշներով, մարդաձկներով և ուրիշ կենդանիներով»[53]: Գ. Սրվանձտյանցի վկայությամբ, աեյլացի հայերն հավատում էին. «Թե Նազիկ և թե Խուլչու լճակներ ունին իրենց մեջ հրեղեն աղջիկ, ունին հրեղեն ձիեր, հրեղեն գոմեշներ, որոնցմե կը հղանան երբեմն գեղերու մատակներն ու կծանին ճեփ-ճերմակ ու անդալատ»[54]: Նույնիսկ հավատում էին, թե գոմեշները նախապես ջրային կենդանիներ են եղել և երբ Ալեքսանդր Մակեդոնացին ցամաքը նվաճելուց հետո ծովն էլ հարկի տակ է դնում՝ «ծովն իբրև հարկ իր հատակից սկսեց գոմեշներ նետել ռեպի ափ: Դրանից է,որ գոմեշները յավ լող գիտեն և սիրում են երկար մնալ ջրի մեջ»[55]: Եղջերավոր անասունների, մանավանդ ցուլի, և երկրային-ընդերքային ջրերի առասպելաբանական կապի վկաներն են նաև պեղումների միջոցով հայտնաբերված եղջերագավաթները (պտյակները),

---

[47] *Վ. Բ դ ո յ ա ն, Հայ ազգագրություն. համառոտ ուրվագիծ, Եր., 1974, էջ 207-208:*
[48] *Մ. Ա բ ե ղ յ ա ն, Երկեր, հ. Է, Եր.,1975, էջ 66:*
[49] *Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն, Հայ ժողովրդական հանելուկներ, Եր.,1965, էջ 13:*
[50] *Նույնը, էջ 12:*
[51] *Նույնը, էջ 11.*
[52] *Plut. Lucull. ,XXIV, Հ. Մանանդյան, Տիգրան Երկրորդը և Հռոմը, Եր., 1972, էջ 113:*
[53] *Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն, նշվ. աշխ.,էջ 79:*
[54] *Գ. Ս ր վ ա ն ձ տ յ ա ն ց, Երկեր, հ.1, Եր.,1978, էջ 395:*
[55] *Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն, նշվ. աշխ.,էջ 127:*

որոնցից ցլագլուխ հիշեցնողները ունեն նաև ալիքաձև գծեր[56]: Նախապես «Ջրերի զավակ» աստվածությանը ձոնված «վիշապ» կոթողներն իրենց վրա ունեն միևնույն առասպելաբանական կապը բացահայտող վկաներ՝ բերանից ջրի շիթեր արձակող ցուլի կամ գոմեշի գլխի պատկերներ: Իրանական համապատասխան աստվածությունը ևս երկբնույթ էր: Նա կոչվում էր Ապամ-նապատ («Ջրերի զավակ»), առնչվում էր Վոուրուկաշա լճին, բայց նաև երեղեն էր և անձնավորյալ կայծակ[57]: Հնդկական նույնանուն աստվածությունը, որը նաև «գեսալին» էր կոչվում և քաղցրահամ ջրեր պարգևում, ապրում էր բարձր տեղում, շրջապատված էր հստակ ջրերով և հանդերձավորված կայծակներով, կարող էր հանդես գալ և՛ ցուլի, և՛ ձիու կերպարանքով[58]:

Մեր կարծիքով, նման ջրային մի աստվածության անունն է, որ վերիմաստավորմամբ հանդես է գալիս Կարս քաղաքի «Վարդանի կամուրջի» անվան մեջ: Այսպես էր կոչվում Կարսագետի՝ (հին անվամբ *Ախուրեան*) ջրերի մեջ ցցված քարաժայռը: Նախ, ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ գետանվան *Ախուր*- բաղադրիչը բառացիորեն «ջրորդի» է նշանակում և ներկայացնում է անվանումներից մեկը հին հնդկական և հին իրանական Ապամ-նապատ («Ջրերի զավակ») աստվածության հայկական հնագույն զուգահեռի[59]: Այս, «Վարդանի կամուրջի» շուրջ պատմված առասպելները խառնում են «կամուրջին» իր անունը տված նախնական Վարդանի մասին որպես ջրային մի աստվածության (ոգու): Ե. Չարենցի «Երկիր Նաիրի» երկում կարդում ենք. «...Գետի մեջտեղը մնացած պարսպի այդ կտորն է ահա, որ կոչվում է հիմա *Վարդանի կամուրջ:* Կարծում են՝ կամուրջ է եղել և համոզված են, որ այդպիսի մի կամուրջ *Վարդան զորավարը* միայն կարող էր շինել, որովհետև այսօրվա միամիտ նաիրցին այն ամենը, որ մեծ է և զարմանալի, ինչ որ նաիրյան է ու հաղթական – վերագրում է Վարդան Մամիկոնյանին... Վիհի վրա է կանգնած այդ հսկա քարակույտը... Ու այդ անհուն, անհատակ վիհերում, որոնց մեջ ջուրն անգամ վարանում է իջնել - ապրում են ջրային գազաններ, պառավներ, մարդագլուխ գոմեշներ, ջրային հսկա մի օձ, որ կամուրջի «տերն» է, կամուրջի բարի ոգին և երկու ջրահարս»[60]: Ահա և նույն վայրի գիշերային ժամի նկարագրությունը. «*Կամուրջն է*. տեղացիք ասում են՝ *Վարդանի կամուրջ*: Ահա ջրերի միջից, վարը, երգում են պառավները. ե՞րգ է, թե ջրերի խշշոց: Ու հորդ, հեղհեղուկ խավարում շաղշաղում է վարը, ծփում է պսպղուն – օձը, կամարջի *բարի ոգին* : Եվ ահա խոնավ, խշշացող ջրերի միջից ելնում են, ահավոր բառաչում խռպոտ – *ջրային գոմեշները*.- ահ է, զազրելի զարմանք...» (ընդգծումները Չարենցինն են)[61]:

Որ «Վարդանի կամուրջին» իր անունը աված Վարդանը ոչինչ ընդհանուր չունի իրական Վարդան Մամիկոնյանի հետ և գալիս է հին հայերի առասպելաբանության ոլորտից, վկայում են հետևյալ հանգամանքները ևս: Նախ, կարսեցիների «Վարդանի կամուրջը» ոչ մի կամուրջ էլ չէ, իսկ որ նա «կամուրջ» է կոչվում կարող է վկայել մի բան. «Վիհի վրա կանգնած այդ հսկա քարակույտի» մասին գոյություն ունեցած նախնական առասպելաբանական պատկերացումներում նա դիտվել է որպես տիեզերական կամրջի երկրային ստարկայացում: Կամուրջը առասպելաբանական մտածողությամբ ընկալվում էր որպես Այս և Այն աշխարհները կամ տիեզերքի երեք հարկերը՝ ընդերքն ու երկիրը, երկիրն ու երկինքը, միմյանց կապող օղակ[62]: Այս, «կամուրջի» անվանադիր Վարդանի անունը ևս կարող է ստուգաբանորեն տարբեր լինել *Վարդան* անձնանունից: Ըստ երևույթին, այս *Վարդան*-ի հիմքում այն նույն *վարդ* < **վարդ* արմատն է, որ Գր. Ղափանցյանն առանձնացնում էր **վարդաւառ* բառի մեջ և

---

[56] *Բ. Առաքելյան, Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության, Եր.,1976, էջ 51:*
[57] *И. Брагинский, Апам – Напат, Мифологический словарь, М., 1991, стр. 51.*
[58] *Rgv., II, 35,6; II,35,13 (Ригведа, Мандалы I – IV, Издание подготовила Т.Елизаренкова, М.,1989, стр.278,279).*
[59] *Ս. Պետրոսյան, Ծ. Պետրոսյան, Լ. Պետրոսյան, «Ջրերի զավակի» պաշտամունքի արտացոլումը սեպագրային մի քանի տեղանուններում, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, I, Գյումրի, 1998, էջ 77-79:*
[60] *Ե. Չարենց, Ընտիր երկեր, Եր., 1955, էջ 301:*
[61] *Նույնը, էջ 304:*
[62] *В. Топоров, Мост, Мифы народов мира, т.II, М., 1988, стр. 177.*

նրան վերագրում «ջուր» իմաստը[63]: Նույն ենդեվրոպական արմատն ենք մենք տեսնում նաև հին հայերի առասպելաբանության ոլորտից եկող այնպիսի անունների հիմքում, ինչպիսիք են *Նաւարդ*-ը (<*նու* «նարս» և *վարդ* «ջուր») և *Վարդգէս Մանուկ*-ը[64]:

Վարդ <* *վարդ* բաղադրիչով առասպելաբանական անունների շարքը պետք է դասվեն նաև *Վարդեան* և *Վարդանասար* անունները: *Վարդեւան եզ* «սև ու սպիտակ պիսակներով եզ, որը ընտրում են վարդևորի ստնին մսոաղ անելս, ուսպի առանց աշխատացնելու պահում են մինչև այդ օրը...»[65]: Անկասկած, վարդեան եզը ժամանակին կենդանական մարմնավորումն ու նախատիպն է եղել վարդավառի տոնախմբության հովանավոր այն արական աստվածության, պիր կրել է նույն *Վարդեւան* անունը (այստեղից էլ համապատասխան անձնանունը) կամ այս անվան կրճատ *Վարդան* տարբերակը: Սրանցում առկա - *եւ* և - *ան* վերջածանցների համար հմմտ. մի կողմից *հեա- եւ -ակ, հոտ-եւ-ան, սեք-եւ-եք*, մյուսից՝ *կռ-ան, յար-ան, եօր-ան, օրր-ան* և այլն[66]: Վարդավառի հովանավոր այս աստվածությունը, ըստ այսմ, լինելու էր ամպրոպային-ջրային բնույթի՝ նախապես ցլակերպ, մի աստվածություն: Իսկ այդպիսի մի աստվածություն էր հնդիրանական Ապամ-նապատի հայկական հնագույն զուգահեռը: Նրանց զուգահեռ առասպելաբանական կերպարներ լինելու մասին են վկայում նաև նրանց շրջապատի կերպարները: Եթե «Վարդանի կամուրջի» անվանադիր ուսումնասիրության շրջապատը կազմողներից աչքի էին ընկնում «ջրային գոմեշները» և «ջրային հսկա մի օձ», ապա հին հնդկական Ապամ- նապատը հաճախ հիշատակվում է «Միտանի այծի» և «Անդունդի օձի» հետ միասին[67]:

Վարդ (<վարդ «ջուր») արմատով կազմված *Վարդեւան* և *Վարդան* դիցանուններին հարող *վարդանասար* բառը հիշատակում է Գրիգոր Մագիստրոսը, բյուզանդական բանակը Անիի դեմ եանած Սոնոմախ կայսեր զորավար Նիկոլաոսի ծաղրական նկարագիրն անելիս. «Լուաք թէ եկն պապն պաղակ, վարդանասարն պիսակ»[68]: Նախ, այստեղ հիշվող *պաղակ*- ի մասին: Բյուզանդացի զորավարին բնորոշող այս բառին սովորաբար վերագրում են «ցնդած ծերուկ» իմաստը, այն համարելով փոխառյալ հունարեն παλαίος«վաղեմի, ծերուկ, զառամյալ» բառից[69]: Բայց *պաղակ*-ը *պաղ* արմատով և -*ակ* վերջածանցով կազմված բնիկ հայերեն բառ է, որն այստեղ ևս գործածված է լինելու վերոհիշյալ «ճերմակ ճակատով եզ» իմաստով: Ընդ որում, ի նկատի առնենք, որ Մագիստրոսը միայն այս բառով չէ, որ «կենդանական» որակումներ է տալիս բյուզանդացի զորավարին: Նա Նիկոլաոսին կոչում է նաև «*գիշերայրու* բուլղարաց», «անժանի, անկեռիք *փիտ*», «անասռի շիկորակ *արջ*»: Այս շարքը լրացնելու է գալիս նաև *վարդանասար* բառը, որի *պիսակ* վերադիրը նշանակում է «պիսակ ունեցող, խայտուցավոր» («խայտ. ունօղն զխայտուց կամ զպիսուկ»)[70]:

Վարդանասար (<վարդան- *ասար*) բառի **ասար* բաղադրիչը ուղղակի կապի մեջ է լինելու հայ. *աար* «բուրդ», «բուրդ, կամ գեղմն, կամ գզաթ» բառի հետ[71]: Վերջինիս հնդեվրոպական արմատը «նշանակում էր նախապես «բուրդ», հետո «բուրդ ավող անասունը» և սրանից հետո էլ «ոչխար, արջառ, ինչք, սատցվածք, դրամ». հայերենը կանգնած է ամենահին նշանակության վրա»[72]: Որ հայերենում *աար*-ի արմատակից **ասար*-ը կարող էր նշանակել «տավար, խոշոր եղջերավոր անասուն», վկայում են

---

[63] *Գր. Ղ ա փ ա ն ց յ ա ն, Հայոց լեզվի պատմություն (Հին շրջան), Եր., 1961, էջ 152: Гр. Капанцян ,նշվ. աշխ., էջ 287-288:*

[64] *Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն, «Սարայի ցեղամիությունը» Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելքում (մ.թ.ա. VI-V դդ.), Լրաբեր հասարակական գիտությունների, 1979, թիվ 12, էջ 71-72: Ս. Պետրոսյան, Ծ, Պետրոսյան, Լ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 79:*

[65] *Ս. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, նշվ. աշխ., հ. 4, էջ 310:*

[66] *Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 2, էջ 85, 93:*

[67] *Ригведа, Мандалы I-IV, стр. 758.*

[68] *Գր. Մագիստրոսի թղթերը, Աղէքսանդրապօլ, 1910, էջ 234:*

[69] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայերեն արմատական բառարան, հ. 4, էջ 13:*

[70] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, էջ 649:*

[71] *Նույնը, էջ 333, Բառգիրք հայոց, (Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ամալյանի), Եր., 1975, էջ 35:*

[72] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., հ. I, էջ 282-283:*

ազգակից լեզուների նրան արմատակից հետևյալ բառերը. ավեստ. pasu «հոտ, արջառ, ոչխար», օսերեն fus // fys «ոչխար», լատին. pecus, pecoris «արջառ, պտճար, պախրե», լիտվ. pĕkus «արջառ», հրզ. fihu, գերմ. Vieh «արջառ» և այլն[73]: Վարդանասարի հետ միասին միևնույն առասպելաբանական պատկերացումների ոլորտից է գալիս ոչ միայն վարդեվան եզը, այլև վարդապայը: Սրա անվան առաջին բաղադրիչը նույն *վարդ* < **վառդ* «ջուր» բառն է, իսկ վերջինը՝ *պայ* բառը, որը նշանակում է «առասպելական մի էակ, որ մարդուց է հառաջանում և հրեների հետ է արածում»[74]: *Վարդա-պայ*-ը նշանակելու էր նաև «(առասպելական) եղջերու», որովհետև *վարդապայ-քար* // *վարդապայն քարը* նշանակում է «եղջերուաքար»[75]:

Հնդեվրոպական առասպելաբանության մեջ ռազմի աստվածների դերում նախապես հանդես էին գալիս հենց ամպրոպային բնույթի աստվածները, որոնց արձակած շանթերն էլ առասպելաբանական մտածողությամբ համարվում էին այդ ռազմիկ աստվածների արձակած նետերն ու նիզակները: Հմմա. *Նետ առ ի յաստուծոյ* «շանթ երկնառաք, կայծակ»[76], կամ *Ելք իբրեւ զփայլակն նետ նորա*[77], կամ «կայծակ» պատասխանը պահանջող հայկական հանելուկը. «Սարեմ էկւոմ վազեվազ,/Ջիդան (նիզակ) թալիմ օխտը գազ»[78]: Ըստ այսմ, նախապես «փայլակ, կայծակ» նշանակող *պաղակ* բառը կարող էր վերուցքվել ոչ միայն ամպրոպի և կայծակի կենդանական մարմնավորում ցուլին, այլև բնության այդ երևույթն անձնավորող աստվածությանը: Վերջինիս գոյության մասին է խոսում նյա ուշ շրջանի վերհուշն հանդիսացող Պաղակ իշխանը: «Պատմութիւն Տարօնոյ» երկում կարդում ենք, որ հայկական և պարսկական զորամասերի բախումներից մեկի ժամանակ Պալունյաց նախարարից հետապնդվող նրա հակառակորդ պարսիկ իշխանը հասնելով «ի տեղի մի դաշտաձեւ՝ պտկեալ, մինչդեռ զաւրքն հեռի էին եւ ոչ կարաց խաւսել կամ կռուել: Իսկ մի ոմն ի ծառայիցն ասէ. զի՞ պակեար. ո՛վ իշխան: Իսկ նա ասէ. Պաղակ իշխան տեսանեմ եւ չկարեմ գնալ: Բայց ոչ կարացին գիտել՝ զինչ էր բանն, եւ անդէն մեռաւ»[79]: Ո՞վ կարող էր լինել այս սարսափազդու Պաղակ իշխանը, որի տեսքից միայն սրտապատառ էր եղել պարսիկ զորականը: Պարզ է, որ նա լինելու էր մի գերբնական էակ, որը մարտադաշտի մոտերքում հայտնվել էր՝ օգնության փութալով իր հովանավորյալ առհմի (հմմտ. *Պաղ-ակ* և *Պալ-ունի*) ներկայացուցիչ հայ նախարարին: Մեր Պաղակի ամպրոպային ռազմիկ լինելու օգտին կարող է վկայել նաև նրա իգական զուգահեռ ու անվանակիցը՝ հունական Աթենաս *Պալլաս* դիցուհին: Շանթառաք Զևսի գլխից ծնված այս դիցուհին ոչ միայն իր ամպրոպային հոր շանթերի պահապանն էր, այլև օժտված էր բացահայտ ռազմական գծերով և համարվում էր արդարացի պատերազմի հովանավորը[80]:

Պաղակի և «Պաղակայ նահանգի» ռազմական բնույթի մասին են խոսում նաև հետևյալ փաստերը: Ուրարտական դարաշրջանում հյուսիսային Վանանդը հայտնի էր Iga//Iia անունով: Նա ներառում էր Պաղակացիս լճի շրջակայքը՝ ասել է թե՝ «Պաղակայ նահանգի» հենագույն միջուկը: Ցեղային այս երկիրը առաջատար դիրք ուներ Վանանդից մինչև Գուգարք (Ներառյալ) տարածված Էթիունի ցեղամիության մեջ: Սարդուրի II-ի արձանագրություններում իգացի Դիաուհինին կոչվում է Էթիունիի արքա[81]: Բնականաբար, ուրարտական զորքերի ներխուժումներին ենթակա Էթիունի ցեղամիության մեջ մտած երկրները ընդհանուր ցեղապետ-արքա կարող էին ճանաչել միայն շոշափելի ռազմական ուժեր ունեցող ցեղային երկրի ղեկավարին: Իսկ որ Իգա ցեղային երկիրը հենց այդպիսին էր, վկայում է այստեղ 35 բերդերի և 200 ամրացված

---

[73] *Նույն տեղում, Т. Гамкрелидзе, В. Иванов, նշվ. աշխ., հ. 2, էջ 577:*
[74] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ., հ.4, էջ 16: Ստ. Մալխասյանց, նշվ. աշխ., հ. 4, էջ 43:*
[75] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, էջ 792:*
[76] *Նույնը, հ. 2, էջ 413:*
[77] *Նույնը, հ. 2, էջ 928:*
[78] *Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 13:*
[79] *Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Եր., 1941, էջ 275:*
[80] ***А. Лосев, Афина, Мифологический словарь, стр 72-73.***
[81] ***Г. М е л и к и ш в и л и, Урартские клинообразные надписи, М., 1960, 155С, стр. 51-52, Գր. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Եր., 1940, էջ 178: Н. Арутюнян, Биайнили (Урарту), Ер., 1970, стр. 254-256, 408.***

բնակավայրերի («քաղաքների») գոյության ռիասար[82]: Արշակունյաց դարաշրջանում Վանանդի աերերը՝ Վանանդացի նախարարները, ազդեցիկ նախարարներից էին: Ըստ «Գահնամակի», նրանք ունեին երկու գահ՝ 14-րդը և 63-րդը[83]: «Զորանամակը» նրանց եիշատակում է «Հյուսիսային դռան» նախարարությունների շարքում՝ Մամիկոնյաններից անմիջապես եետո: Նրանք այնքան մարտիկներ (1000) էին արամադրում եայոց բանակին, որքան տրամադրում էին նաև Մամիկոնյանները, Բագրատունիները, Արծրունիները, Խոռխոռունիները, Ռշտունիները, Մոկացիները, Գարդմանացիները և Ապահունիները: Նրանց տրամադրած մարտիկների թիվն ավելին էր, քան եարևան մյուս նախարարությունների տրամադրածների թիվը (Կամսարականներինը՝ 600, Բասենացիներինը՝ 600, Տայեցիներինը՝ 600, Աշոցյաններինը՝ 500,Դիմաքսյաններինը 300,Սաեառունիներինը՝ 300, Աբեղյաններինը՝ 300, Վաըծավունիներինը՝ 200)[84]:

Հնագույն Վանանդի ռազմականացած երկիր լինելու եանգամանքը իր արտացոլումն է գտել նրա տարծքից եայտնի մի շարք տեղանունների մեջ: Դրանցից առավել ուշագրավներն են արարտական դաըաշրջանի Igarab և, եամեմատաբար ուշ վկայված, *Կարս // Կարուց բերդ// Ամուրն Կարուց // Ղարս, Կարուց գետ // Կարսագետ // Կարս – չայ // Ղարսաչայ* անունները: Սրանց բոլորի եիմքում, մեր կարծիքով, ե.- ե. * gųr- (>սեպագր. gar- , եայ. *կար-*) արմատն է՝ առկա նաև *կարշն և կարախ* բառերում: Ըստ Է. Աղայանի, եայ. *կարշն* «ուժ, զորություն» բառի եեա միասին միևնույն ե.-ե. արմատից են ծագում եուն. Οβριμος «եզոր, ուժեղ, զորավոր», ὑβρις «բռնություն», լատիշ. grnuts « խստություն, դաժանություն», գերմ. Krieg «կռիվ», հին իռլ. brig «ուժեղ, ուժեղություն» բառերը[85]: *Կարախ* –ը նշանակում է «քաջ, նաեատակ, ընտիր, կորովի»[86]: Այս բառում - *ախ*-ը վերջածանց է (եմմա. *ոսր-ախ, խր-ախ, եր-ախ*), իսկ արմատը նույնն է *կարշն* (<կւսր- շ-ն) բառի *կար-* արմատի եեա: Նոր եայկազյան բառարանում *կար* արմատին վերագրված են եետևյալ իմաստները. «կարողութիւն, զօրութիւն, ույժ» և «ենարաւորութիւն, հնարք, ձեռնեասն գոլ, բաւականութիւն»[87]: Բայց այստեղ աարբեր իմաստային բներ են ներկայացված, ուսաի եիշյալ իմաստներից առաջիններր պարունկող *կար* արմատր աարբեր է լինելու երկրորդ իմաստները պարունակող *կար* արմատից: Ընդ որում, երկու *կար* արմատներից առաջինը ոչ միայն ենչյունաբանական, այլև իմաստաբանական աեսանկյուններից նույնանում է *կարշն* և *կարախ* բառերի *կար* արմատի եեա, այսինքն՝ բնիկ եայկական է, իսկ *կար* արմատներից երկրորդր, իսկապես, կարող է իրանական ծագում ունենալ[88]:

Հնդեվրոպական այս նույն արմատը իր ավելի եին աեսքով է առկա սեպագրային Igarab աեղանվան մեջ: Ինչպես պարզվում է Արգիշտի I- ի «Խորխոռյան արեգրությունից», մինչև Diauehi// Տայք մանելը Ուրաբաուի այս բազավորը ճակաաամարա էր ավել Igarab եռվաի բանակի դեմ[89]: I-gar-ab աեղանվան –ab վերջավորությունը ներկայացնում է սեպագրային արաացոլումր Հայկական լեռնաշխարեի բազմաթիվ աեղանուններում առկա *-ա* աեղանվանակերտ վերջածանցի: Դրանցից են. *Կճաւ, Ջիրաւ, Որդնաւ// Վարդնաւ, Պարաաւ, Յուրաաւ*: Տեղանվան առաջին բաղադրիչը՝ I-*ն* , եթե ներգոյական եոլովի իմաստն արաաեայտող գրաբարյան *ի* նախդիրը չէ, ապա կարող է նրա եամարժեք *յ* նախդիրի նման կիրառված լինել կամ որպես նախածանց (եմմա. *յ-արկ, յ- անց, յ-անկարծ, յ-ապաղ*), կամ որպես սին աարր (եմմա. *յ-երկար, յ- արգասր*, «եարգելի, պատվական, սկիզբնի»)[90]: Այս դեպ-

---

[82] *Г. Меликишвили, նշվ. աշխ , 155 С, տող 52:*

[83] *Н. Адонц , նշվ. աշխ , էջ 249-250:*

[84] *Նույնը, էջ 251-252, 263:*

[85] *Է. Աղայան, Բառաքննական և սաուգաբանական եետազոտություններ, Եր.,1974,էջ 79-80:*

[86] *Հ. Աճառյան ,Հայերեն արմատական բառարան, ե.2 Եր.,1973, էջ 544, Բառգիրք հայոց,էջ160:*

[87] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Եր., 1979, էջ 1063:*

[88] *Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 542:*

[89] *Ն. Ենգիբարյան, IGARAB- HUBI երկիրը և ARDA քաղաքը, Լրաբեր եասարակական գիտությունների , 1975, թիվ 11, էջ 81,Н.Арутюнян, Топонимика Урарту, Ер.,1985, стр.33,85.*

[90] *Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 2, էջ 66-67:*

քում, տեղանվան gar- բաղադրիչը ներկայացնում է կապակցող մի օղակ հայերեն *կար* արմատի և նրա հնդեվրոպական նախաձև *gur-ի միջև: Ի դեպ, սա կարող է նույնպես ապացույց ծառայել այն բանի, որ ուրարտական դարաշրջանի հայերենում ձայնավորների ղլացման օրենքը դեռևս չէր գործում (հմմտ. Diauehi // Տայք):

Igarab եռվտի տեղադրությունը վերջնականապես ճշտված չէ: Ն.Հարությունյանը և Ն.Ենգիբարյանը այն տեղադրում են Ծորոխի հովտում կամ հարևան շրջաններում, Դիաուեխի ցեղամիության կազմում կամ նրա հարևանությամբ: Ավելի հավանական է նրա վանանդյան տեղադրությունը: Մեր կարծիքով, Igarab եռվիտը համապատասխանում է Կարսի և Պաղակացիս լճի միջև տարածված Երեւել դաշտին[91]: Ինչպես ասվեց, Igarab տեղանվան gar բաղադրիչի հետ ծագումնաբանորեն նույնական են *Կարուց բերդ//Կարս և Կարուց գետ//Կարսագետ* անունների *կար-* բաղադրիչները: Սրանցից *Կարուց բերդ* անվանումը պարունակում է «Կարերի բերդ» իմաստը, *Կարս*-ը նշանակում է «կարեր», իսկ *Կարուց գետ//Կարսագետ* գետանունը՝ «Կարերի գետ»: Պարզ է, որ *կարշն* և *կարախ* բառերի արմատը պարունակող *կար*-ը լինելու էր զինվորական դասի կրած անվանումներից մեկը, իսկ նրա անունով կոչված Կարսագետի ավազանը Կարս բերդաքաղաքով՝ նրան սրտականյալ տարածք: Իմաստի առումով կյունից հմմտ. հին Գուգարքի *Քաջատուն* և *Քաջաց քաղաք* տեղանունները:

Հայերեն *կար* արմատն սակս է նաև **կարեան* (<*կար-եան) բառի մեջ,որի նախնական իմաստներից մեկը եղել է «ավազակ»-ը: Երեմիա Մեղրեցու միջնադարյան բառարանում կարդում ենք . «*Իկարեանս* – յավազակս»[92]: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ նույնպիսի մի իմաստ է պարունակում նաև վերոհիշյալ Iga ցեղային երկրի ցեղապետ- արքա Qaपuri- ի (<qap-ur-ι) անունը: Ուրարտուի թագավոր Սարդուրի II-ի այս հակառակորդի անվան qap - արմատը նույնական է հայերեն *կապուտ* (<*կապ-ուտ) «կողոպուտ» և *կապտել* «կողոպտել,ավարել»[93] բառերի **կապ* արմատի հետ: Վերջիններս հուսալի ստուգաբանություն չունեն[94]: Ինչ վերաբերում է ցեղապետ- արքայի անվան –ur բաղադրիչին, ապա այն կա՛մ նույնն է *Պարույր* (<պար-ույր) և *Վրույր* (< վիր- ույր) անձնանունների – *ույր* բաղադրիչների հետ, կա՛մ նայերեն – *ուր* վերջածանցի հետ (հմմտ. *թափ-ուր,* թաքթաք-ուր, ւիշ-ուր և այլն)[95]:

Հին Վանանդի բնակչությունը իր ավազակաբարո ռազմիկի հակումներից չէր հրաժարվել անգամ վաղ միջնադարում: Ինչպես մեր պատմահայրն է վկայում, Արշակ 3-րդի և Խոսրով 4-րդի միաժամանակյա գահակալության տարիների խառնակ դրությունից օգտվելով «*ոմանք յազգէն Վանանդացւոց* ապստամբեցին ի Խոսրովայ. եւ ոչ յոք ապաւինեցան, այլ ամրացան ի մայրիս լերանց իւրեանց եւ յանձուկս Տայոց քարանց. *յեղուզակաբար* արշավանօք լիշխանաթիւն երկոցունց թագաւորացն Հայոց խռովէին զաշխարհս եւ անհանգիստ պահէին... *Քանզի Վանանդացիք զաւազակութեան գործ մեծ ցանկութեամբ գործէին, եւ որպէս ուղիղ իրք ախորժելի թուէին նոցա*[96]: Ահա և մեկ ուրիշ վկայություն, որը վերաբերում է Հայոց թագավոր Շապուհ պարսիկի հեռանալուց հետո, և վերջին Արշակունի Արտաշես 4-րդի գահակալմանը նախորդած ժամանակաշրջանում,Հայաստանում տիրող իրավիճակին: «Իսկ ի ձեռն քաջին եւ բարեբախտին Ներսեհի ճիճրակացւոյ զօրագլուխ եղեալ ժողովեալ նախարարացն Հայոց հանդերձ զօրօք իւրեանց *տան ընդ զնդին Պարսից պատերազմ. հարկանեն զզօրսն,* եւ սպանանէ Ապրսամ Սպանդունի զզօրագլուխն. եւ ինքեանք ցրուեալք, *տիրագլուխք անձնապահապետք յամենայն լերինս եւ յամուրս շրջէին. յորում համօրէն Վանանդացիք երեւեցան նախաասկեալք քաջութեամբ: Ուստի աղմկաւ եւ բազում խռովութեամբ մնացեալ աշխարհս մեր յանիշխանութեան ամս երիս, աւերեալ ամայանայր.* վասն որոյ պակասեալ լինէին հարկք արքունի, եւ *հատեալ ճանապարհք ռամկաց եւ ամենայն բարեկարգութիւն վրդովեալ ապականէր»*[97]:

---

[91] *Մ.Խ ո ր ե ն ա ց ի,..., Գ, խե:*
[92] *Բառգիրք հայոց, էջ 129:*
[93] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ, հ. 2, էջ 526, Բառգիրք հայոց, էջ 158:*
[94] *Հ. Ա ճ ա ռ յ ա ն, նշվ. աշխ, հ. 2, էջ 526-527:*
[95] *Հայոց լեզվի պատմական քերականություն, հ.2, էջ 90:*
[96] *Մ. Խ ո ր ե ն ա ց ի,..., Գ, խդ:*
[97] *Նույնը, Գ, ծզ:*

Ամփոփենք: «Շիրակայ եւ Տիրակայ եւ Պաղակայ» նահանգներր ընդգրկել են Հովհաննես-Սմբատի շիրակյան բան տիրույթը և նրան ենթակա Տաշիր-Ձորագետի ու Վանանդի թագավորությունների տարածքները: Դրանք այդպես են կոչվել վիպա-կան-առասպելաբանական կերպարներ հանդիսացած Շիրակի, Տիրակի և Պաղակի անուններով, որոնց առասպելաբանական նախատիպերը գալիս են մեր նախնիների հնդեվրոպական անցյալից: Վերջիններս ներկայացրել են որոշակի սոցիալական ֆունկցիաներով օժտված մի եռյակ: Համաձայն այդ ավանդույթի, Շիրակը ներկայա-ցուցիչն է համարվել արտադրողների (եղագործների և անասնապահների) դասի, Տի-րակը՝ քրմական դասի, իսկ Պաղակը՝ զինվորական դասի (հմմտ. նաև Շիրաք, Զիրաք և Միրաք չաստվածներից բաղկացած վասպուրականյան եռյակը): Ըստ այդմ, հերա-նոսական Հայաստանում Շիրակ գավառը («Շիրակայ նահանգ») համարվելու էր արտադրողների դասին, Տաշիր գավառը («Տիրակայ նահանգ»)՝ քրմական դասին, իսկ Վանանդը («Պաղակայ նահանգ»)՝ զինվորական դասին պատկանյալ տարածք:

ВОКРУГ ТРЕХЧАСТНОСТИ ЦАРСТВА ЙОВАННЭСА-СМБАТА

Резюме *С.Петросян, Л.Петросян*

Сопоставление образов трех "небогов" васпураканского района Тимар–Ширака, Зирака и Мирака, и трех эпонимов древнего Ширака, древнего Ташира и древнего Вананда, т.е. эпического Ширака, Тирака и Палака, приводит к заключению, что не только в Васпуракане, но также на северном Айрарате в древности был принят принцип трехчленной классификации богов, эпическими наследниками которых являются эпонимы "областей Ширака и Тирака и Палака".Так как Ширак-земледелец (ср. Васпураканский Ширак), Тирак-жрец (ср. Зирак), а Палак-воин (ср. Мирак), следовательно "область Ширака"-область производителей, "область Тирака" - область жрецов, а "область Палака" - область воинов.

В начале XI века под "областью Ширака" подразумевали Ани- Ширакское царство Йованнэса- Смбата Багратида, под "областью Тирака" вассальное Ташир – Дзорагетское царство Лорийских Багратидов, а под "областью Палака"-вассальное Ванандское царство Карсских Багратидов.

Սերգեյ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՈՃԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Շարադասության ազատությունը, որ բնորոշ է հայերենին և, մասնավորապես, նրա գրաբարյան վիճակին, այնուամենայնիվ բոլորովին էլ կամայական չէ, ինչպես թվում է առաջին հայացքից, և կարգավորվում է լեզվի բազմաթիվ ներքին օրինաչափություններով, տարաբնույթ լեզվական գործոններով: Վերջիններիս համակարգմամբ հնարավորություն է ընձեռնվում առանձնացնել և սահմանել նախադասության մեջ շարահյուսորեն հարաբերվող միավորների յուրաքանչյուր զույգի (որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ, ենթակա-ստորոգյալ, ստորոգյալ-խնդիր և այլն) փոխդասավորության մի քանի՝ *քերականական* (իմաստային, ձևաբանական և շարահյուսական հատկություններ), *տրամաբանական ընդգծման կամ առանձնացման*, և *թույլ կամ չեզոք դիրքերի* սկզբունքներ:

Ելնելով այն բանից, որ հին գրական լեզվում ենթակայի ուղիղ կամ սովորական շարադասության (քերականական սկզբունք) հատկությունները ավելի փաղ[1] մեր կողմից արդեն հանգամանորեն ներկայացվել են, կանգ կառնենք այն գործոնների բացահայտման վրա, որոնք, կարծում ենք, նպաստում են պատմական խոսքում ենթակայի տրամաբանական ընդգծմանը, նրա հաղորդակցական դերի ակտիվացմանը (առանձնացման սկզբունք), կամ հակառակը (չեզոք դիրքերի սկզբունք):

Նախադասության մեջ ենթական կարող է տրամաբանորեն ընդգծվել միանգամայն տարբեր պատճառներով: Ինչպիսին էլ լինեն սրանք, հետևանքը նույնն է՝ այդ դիրքերում ենթական ձեռք է բերում ենչերանգային ընդգծվածություն, վերածվում է նախադասությամբ հաղորդվող մտքի կենտրոնի: Այդ պատճառով էլ ենթակայի տրամաբանական ընդգծում ապահովող բոլոր դիրքային տարբերակները քննության են ենթարկվում որպես նրա շարադասության նույն՝ առանձնացման սկզբունքի արտահայտություններ:

Գրավոր խոսքում տրամաբանորեն ընդգծել նախադասության որևէ անդամը, մեծացնել նրա տեսակարար կշիռը արտահայտվող մտքի հաղորդման մեջ կարելի է հիմնականում նրա իմաստային բեռնվածության մեծացման ճանապարհով, ինչը ձեռք է բերվում իր սովորական (ուղիղ) դիրքից այդ անդամի տեղաշարժերի շնորհիվ: Այնուամենայնիվ ոչ բոլոր տեղաշարժերն են, որ կարող են հանգեցնել նախադասության անդամի տրամաբանական ընդգծմանը: Մյուս կողմից էլ քանի որ տարբեր կառուցվածքի նախադասություններում, տարբեր քերականական բնույթի գործոնների ազդեցությամբ միանգամայն տարբեր է ենթակայի շարադասության սովորական համարվող վիճակը, նշանակում է դրանցում չեն կարող միատեսակ լինել նաև տրամաբանական ընդգծմանը ծառայող նրա դիրքերը: Այդպես էլ կա. որոշ դեպքերում դրանք ստորոգյալի (P) համեմատությամբ ենթակայի (S) նախադաս վիճակներն են նրանց SP գծային հաջորդականություն ունեցող նախադասություններում, այլ դեպքերում՝ PS փոխդասավորության վիճակները:

Այսպես, դիմավոր բայի նշանակությամբ անորոշ կամ անցյալ դերբայ-ստորոգյալ և սեռականաձև կամ տրականաձև ենթակա ունեցող գրաբարյան կառույցները, փոքր բացառություններով, ունեն գլխավոր անդամների փոխդասավորության սովորական համարվող PS կարգ, որը եթե շրջվում է, ապա հիմնականում ենթակայի՝ նախադասության սկզբում ընդգծվելու անհրաժեշտությամբ թելադրված: Օրինակներ՝ «Ձեր *ծառայից* զմեր տէրանց ձերոց գրարձ կալեալ է»/Բուզ.,254/: Իւրոց *արարչին* յառաջագոյն պատուիրեալ էր նմա»/Եզն., 52/: «*Տրդատայ* բուռն հարեալ ի կինն» /ՄԽՊՀ,195/:

---

[1] *Ս.Հ ա յ ր ա պ ե տ յ ա ն, Ենթակայի, ստորոգյալի և ուղիղ խնդրի շարադասությունը գրաբարում, Հայոց լեզվի պատմության հարցեր, հ.2, Եր., 1985: Նույնի, Հայերենի անդեմ կառույցների շարադասության մի քանի հարցեր, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի Գիտական աշխատություններ, հ. I, Գյումրի, 1998, էջ 95-110:*

«Չարիմացին *Վարագվաղանայ* գիտացեալ զանհնարին ոխութիւն Վասակայ» /ՂՓՊՀ, 80 / և այլն:

Ի դեպ, թեք (սեռական-տրականաձև, հայցականաձև) ենթակաների տրամաբանական շեշտվածությունն ավելի ցայտուն է դառնում, երբ նման նախադասություններում գլխավոր անդամները ընդմիջվում են հեղինակային խոսքով: Վերջինս, որ հաճախ նաև ոիմավոր միակազմ կառույց է, ակնհայտորեն մեծացնում է նրանց բաժանող արտասանական դադարի ույժը՝ էապես նպաստելով նախադասության սկզբում ենթակայի առավել ընդգծմանը: Օրինակներ՝ «Յաշկապարկաց *առեն* ընակել յաւերակն »/Եզն., 69/: «Բայց զՄսզող առնն *ասէ նոյն պատմագիր* ի Պասքամա ումեմնէ ի Հայկայ թոռնէ լինել» /ՄԽՊՀ, 71/ և այլն:

Այդպես էլ՝ միսզիմի կամ պակասավոր բայ-սաորոգյալով կառույցներում գերազանցապես տրամաբանական շեշտն իր վրա վերցնելու նպաստակ ունի սովորաբար հետադաս ենթակայի (նաև թեք հոլովաձևով) ծզտամր առաջադասության, ինչպես, օրինակ՝ *«Դիւաց* է կերպարանս կերպարանս ցուցանել» /Եզն., 69/: *«Նմա* պարտ էր ստնել զերկինս և զերկիր» /Ն.ա., 82/ :*«Ինձ* պիտոյ է ի քէն մկրտել» (Ես պետք է մկրտվեմ քեզանից) /Մատթ.,Գ, 14/: *«Դեւ* զայր ի քեզ» /ՂՓՊՀ, 413/: «Բայց դեռ *բարեկամութիւն* էր ի մէջ թագաւորացն երկոցունց» /Բուզ., 76/:

Սովորաբար ենթական առանձնացվելով մղվում է նախադասության սկիզբը (SP), եթե իրեն հարադիր ունի *ինքն* անձնական դերանունը սպասարկու սաստկական նշանակությամբ; Օրինակներ՝« *Ինքն թագաւորն* հրամանի նորա անսայր» / Եղ., 88 /: *«Նա ինքն* ի վերայ ծովո եհմուն էարկ նմա » /Սաղմ.,ԻԳ, 2/: «Ինքն Տէր ուղիղ արասցէ զշաւիղս քո» /Առակ.,Դ,27/: Ընդ որում, շարադասական այս տարբերակում կիրառվում է նաև *ինքնին* բառը՝ հասուատող սաստկական նշանակությամբ.« *Ինքնին թագաւորն* ականատես լինէր իրացն յանդիմանաթեան» /Եղ.,20/: *«Տէր ինքնին* արասցէ զինարս մերում վիրկութեան» /Ն.ա.,138/: *«Դուք ինքնին* գիտէք ... ամենայն չայիս» /Ագաթ.,247/: Շատ հաճախ այդ նույն նպատակով անձնական դերանվան առաջին կամ երկրորդ դեմքով պրաահայտված ենթակային հարադրվում է նույն դերանվան՝ գրաբարում մակբայական արժեքով ընկալվող բացառական հոլովաձևը. *«Դու քեզէն* եկիր...» /Բազ.,265/: *« Մեք մեզէն* ողջ եմք դիցն օգնականութեամբ»/Եղ.,9/ և այլն: Ի դեպ, նույնիսկ սակավադեպ ինքնարույն զործածություններում, ինչպես իրավացիորեն նշում է Ա.Արրահամյանը[2], սրանցում հոլովի իմաստը չի զիտակցվում, սրանք սպասարկա բառեր են՝սաստկական նշանակությամբ, առանց հոլովական իմաստի դույզն-ինչ դրսևորման. « Ինձէն...զիմ վաստակս ապախա ոչ արարից /Ագաթ.,54/ և այլն:

Նույն SP շարադասական տարբերակում ենթակայի առաջադասությանը ոճական նպատակով ամրակայվում է նաև *անձն* բառի զործիական հոլովաձևի սպասալկու հարադրությամբ, որն օժտված է հավաստբեցնողի, հակադրվողի, կամ այլ դեմքերը բացառողի սաստկական իմաստով.*«Դուք անձամբ* զանձինս այրեալ ի ծառայութիւնս արկանէիք» /Եղ.,55/: Նկատենք որ անկախ գոյականական (ոչ սպասարկու) կիրառության դեպքում *անձն* բառով ենթական բոլորովին էլ աչքի չի ընկնում շարադասության նման կայունությամբ՝ «Ընտրունէին զեղխ և անսուրբ *անձինք* քաղցր ավսորժելավ զլուր այդպիսի բանից»/ՂՓՊՀ,414/: «Ի Տէր պարծեսցի *անձն* իմ» /Եղ.,177/ և այլն:

Առաջադաս ենթակայի իմաստային ընդգծումը հնարավոր է նաև *անգամ, իսկ, և ս, մ ի ա յ ն* և այլ եղանակավորող բառերով, որոնք, ենթակային հարադրվելիս, շնորհիվ իրենց բարձր հնչերանգի, նպաստում են նրա տրամաբանական ընդգծմանը և պահում այդպիսի ենթական նախադասության սկզբում: Օրինակներ՝ *«Տղայք անգամ* յայթոեն»/ՂՓՊՀ,419/: *«Նոքա ևս ...զ*օրանային ի սերն Քրիստոսի»/Եղ.,21/: *«Նաև արջք* օրհասականք...հզօրագոյնս կռուին»/Ն.ա.,8/: *«Ես և մարմին* իմ բնակեսցի յուսով»/Սաղմ.,ժԵ,9/ և այլն:

Ի դեպ, սպասարկու բառերի հարադրությամբ տրամաբանորեն ընդգծված ենթակաների առաջադասությունը, հզակի բացառություններով, կայուն է գրաբարի

---

[2] *Ա.Ա ր ր ա հ ա մ յ ա ն, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 76 :*

պատմողական նախադասության մեջ: Բացառությունները (PS) հիմնականում վերաբերում են այն դեպքերին, երբ ենթակայի ընդգծումը կատարվում է *և* շաղկապի սպասարկու գործածությամբ, ինչպես «Երկներ *և ծովն ծիրանի*» /ՄԽՊՀ, 85/: « Յանդիմանեն զնոսա *և պատերազմացն դէպք*» /Եզն.,107/: «Ժողովեցան *և նոքա* ի եովիտս» /Ա.Թագ.,ԺԵ,12/: Հարկ է նշել, որ *և* շաղկապի այսպիսի նշանակությունը իր դրսևորումն է գտնում հենց ենթակայի հետադասության պայմաններում: Գրաբարի նախադասության սկզբում դրված ենթակային նախադրված *և*-ը զուրկ է եղանակավորիչ արժեքից և գերազանցապես ընկալվում է իր բուն խոսքիմասային իմաստով («*Եւ դուք* ըստ նոցին օրինակի կատարէք» /Բուզ.,65/) կամ էլ լավագույն դեպքում դիտվում է իբրև գրաբարին այնքան բնորոշ հավելադրություն, որը ինչպես քերականական, այնպես էլ արտահայտչական տեսակետից սովորաբար խոսքում բոլորովին ավելորդ է[3]: Հմմտ.՝ «*Եւ եղբարք* նորա լուան զայս ամենայն» - «Լուան զայս ամենայն *և եղբարք* նորա »: «*Եւ ուստերք* ծնան նմա» - «Ծնան նմա *և ուստերք*» և այլն:

Շատ հաճախ ենթական սկզբնային դիրքում տրամաբանական շեշտվածություն է ստանում, եթե ընդմիջվում է ստորոգյալից *ուրեմն, թէ, եթէ, սակայն, թէպէտ* և այլ շաղկապների երանգավորիչ սպասարկու կիրառությամբ, ընդ որում դրանք անպայմանորեն պիտի հաջորդեն ենթակային, որովհետև նախորդելիս կորցնում են վերոհիշյալ իմաստը և գերազանցապես ընկալվում որպես շաղկապներ: Օրինակներ՝

«*Աստուածք մեր ուրեմն* եկեալ իջեալ են ի բանաս»/Եղ.,144/: «*Իմ* թէպէտև էր յառաջագոյն եոգացեալ զայսպիսի մեծ իկս» /ԴՓՊՀ,88/: Հմմա.՝ «*Դու ուրեմն* հարաւ ի քեզ» - « *Ուրեմն դու* հարաւ ի քեզ»:

Իր տրամաբանական ընդգծվածությամբ որոշակիորեն առանձնանում է սկզբնային դիրքի ենթական, եթե ստորոգյալի հետ նրա անմիջական կապը ընդմիջված է *ասէ, ասեն* միակազմ հեղինակային նախադասությամբ, Ինչպես՝ «*Այր, ասէ,* առ քաղցի խրում շրջեսցի...» / Եղ.,8/: «*Լուսին,ասեն,*ի ներքոյ է քան զարեգակն» /Եզն.,139/: Ավելացնենք նաև, որ հեղինակային խոսքի առաջացրած դադարը թեև հանգեցնում է գործողություն կատարող առարկայի իմաստային ընդգծմանը, սակայն չի արտեում ենթական շարահյուսական հարաբերությունների ոլորտից: Հար և նման դեպքերում ենթակայի արտահմանը խոչնդոտում է այն կարևոր հանգամանքը, որ ենթական նախադասության ստորոգումային հիմքի բաղադրիչն է, այն անդամը, որը ստորոգյալի հետ ունեցած ստորոգումային հարաբերությամբ արտահայտում է նախադասության բովանդակությունը: Այդ պատճառով ինչպես ենթական, այնպես էլ ստորոգյալը նախադասության կառուցվածքում երբեք չեն տրոհվում:

Ի դեպ, գլխավոր անդամների դիրքային ընդմիջմամբ առաջացած ենթակայի առավելագույնս ընդգծմանն է ծառայում գրաբար թարգմանական և ինքնուրույն գրականության լեզվում հաճախակի դրսևորում ունեցող լեզվա- ոճական մի երևույթ, որ մասնագիտական գրականության մեջ ստացել է «ավելադրությամբ շրջում» անվանումը[4]: Ոճական այս հնարքն օգտագործվում է նախադասության կազմում որևէ անդամը տրամաբանորեն ուժգին շեշտելու նպատակով և ենթադրում է նախադասության կառուցվածքի մասնակի փոփոխություններ: Մասնավորապես, ենթական ավելադրությամբ շրջման դեպքում մշտապես զբաղեցնում է նախադասության սկիզբը՝ համապատասխան դեմք և թիվ ունեցող *եմ* բայի հետադաս հարադրությամբ, որին հետևում է նախադասության մնացած մասը: Վերջինս ավելադիր խոսքին կապվում է *որ* հարաբերականի կամ *զի* շաղկապի միջոցով և սովորաբար աչքի չի ընկնում մյուս անդամների լրացուցիչ տեղափոխություններով: Ավելադրությամբ շրջման ոճական-արտահայտչական արժեքը լիովին ընկալելի է դառնում միևնույն շարահյուսական կառույցի երկու տարբերակների համեմատության միջոցով: Այսպես,«*Ես* հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց» և « *Ես եմ որ* հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց» նախադասություններում առկա է գլխավոր անդամների SP հաջորդականությունը: Սակայն եթե առաջինում սկզբնային ենթական ոճականորեն չեզոք է, և տրամաբանական շեշտը

---

[3] *Տե՛ս Վ. Առաքելյան, Գր. Նարեկացու լեզուն և ոճը, Եր., 1975, էջ 12:*

[4] *Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 538: Խ. Բադիկյան, Ժամանակակից հայերենի պարզ նախադասության շարադասությունը, Եր., 1976 և ուրիշներ:*

կրողը ստորոգյալն է, այս երկրորդում ենթական խսաիվ առանձնանում և մղվում է հաղորդման առաջին պլան, որպես նախադասությամբ հաղորդվող մտքի առանցքային միավոր՝ օժտվելով հատուկ արտահայտչականությամբ: Ընդ որում, այստեղ ենթակայի տրամաբանական ընդգծումը պիտի բացատրել ոչ միայն նրան հաջորդող *եմ* բայի առկայությամբ, այլև նախադասության ավելադիր և հիմնական հատվածներն սահմանազատող որոշակի դադարով, որի շնորհիվ ավելադիր հատվածը նախադասության ներքին, արտաբերության պլանում առանձնացվում և դրանով իսկ հակադրվում է հաջորդող հատվածին իր արտասանության ուժով՝ ձեռք բերելով ընդգծված արտահայտչականություն: Ավելադրությամբ շրջումը գրաբարի ոճական հարուստ հնարավորություններից է: Ա.Բագրատունին այն համարում է «գրաբարի վայելչություններից մեկը»[5]:

Օրինակներ՝ «*Դու ես որ* փառաւորեալդ ես ի վերայ ամենայն տիեզերաց» /Ագաթ.,179/: «*Վարդան է որ* մատնէ զքեզ թագաւորին Պարսից» /Բուզ.,198/: «*Տէր է որ* ուսուցանէ զիմաստութիւն և զհանճար» / Յովբ,ԻԲ,2/: «*Աստուածութիւն ևեթ է որ* մնշտնջենաւոր է» /Եզն.,71/: «*Ոչ ոք է որ* առնէ զբարի» /Սաղմ.,Ծբ,4/ և այլն:

Աներաժեշտ ենք համարում նշել, որ ներկայացվում են հիմնականում երկկազմ նախադասության այն շարադասական տարբերակները, որոնցում ենթակայի տրամաբանորեն ընդգծված լինելը , մեր կարծիքով, երկմտանքի տեղիք չի տալիս: Մինչդեռ կան դիրքեր, որոնցում դա սաաջին հայացքից ընկալելի չէ: Այդպիսին է, ասենք, նախադասության կազմում ենթակայի վերջնային դիրքը, երբ ստորոգյալն արտահայտված է առարկայական թույլ նշանակություն ունեցող բայով, ինչպես, օրինակ՝ Եղիշեի պատմության հետևյալ հատվածում է. «Բազում ծմերանց *հալեցան սառնամանիք, հեաս գարուն, եկին* նորեկ *ծիծռունք*, *աեսին* և *խնդացին* կենցաղասէր *մարդիկ*»/Եղ.,203/: Նման կառույցներում վերջադասությունը ենթակայի համար կարելի է ընդգծված լիճակ համարել, նկատի ունենալով այն, որ նախադասության տրամաբանական պրեդիկատը հաղորդվում է քերականական սուբյեկտով, և այս հանգամանքը պահանջում է, որ վերջադաս դիրքում ենթական իր վրա կրի տրամաբանական շեշտը:

Վերը շարադրվածից պարզ է դառնում, որ պատմողական խոսքում ենթակայի տրամաբանական ընդգծումը կարող է տեղի ունենալ ամենատարբեր պատճառներով: Սակայն ինչպիսի պատճառներ էլ հանգեցնեն դրան, այդ դիրքերում ենթակային բնորոշ է ներքերանգային առանձնացումն ու շեշտվածությունը: Դրանից ելնելով՝ ենթակայի բոլոր վերոհիշյալ դիրքային դրսեորումները մեր կողմից միավորվում և դիտվում են իբրև շարադասության միևնույն՝ առանձնացման կամ ընդգծման սկզբունքի դրսևորումներ:

Սակայն ոչ միշտ է, որ շարադասական շրջումը նպատակ է հետապնդում տրամաբանորեն շեշտել կամ ընդգծել ավյալ անդամը՝ այն դարձնելով նախադասության իմաստային ծանրության կենտրոնը, հաղորդվող մտքի հիմնական առարկան: Այն հաճախ կատարվում է նաև սահպողարոը, երբ իր սովորական դիրքից տվյալ անդամի հեռանալու պատճառը նույն այդ դիրքի օգտագործումն է մեկ այլ անդամի տրամաբանական ընդգծման նպատակով: Խոսքը վերաբերում է նախադասության անդամի շարադասության այսպես կոչված «չեզոք» դիրքերին, որպիսիք ունի նաև ենթական գրաբարի պատմողական նախադասության մեջ:

Տրամաբանորեն չեզոք է գործողության ընդգծման նպատակով նախադասության սկիզբ տարված ստորոգյալին հաջորդող ենթակայի դիրքը, օրինակներ՝ «*Անկան սատակեցան* ...ամենեքեան առ հասարակ *ազգն* անօրէն դառնացուցաց»/Ագաթ.,314/: «*Ի փախուստ դարձին նոքա* երեսաց ծերոց»/Յուդ.,ԺԴ,4/: «*Մոռացոյց ինձ Աստուած* զամենայն վիշտս իմ» /Ծննդ.,ԽԱ,51/: «*Աղաղակեցին որդիքն* Իսրայելի առ Տէր» /Դատ.,Գ,15/ և այլն:

Այդպիսին է նաև անփանական բաղադրյալ ստորոգյալի հանգույցին հաջորդող, ինչպես նաև նրա բաղադրիչներին ընդմիջվող ենթակայի դիրքը: Օրինակներ՝ «*Կենդանի է Աստուած* Իսրայելի» /Ա.Թագ.,ԻԵ,34/: «*Սաղմոսք էին* մշտնջենաւորք *մրմունջք*

---

[5] *Ա.Բ ա գ ր ա տ ու ն ի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 444:*

ի բերանս նոցա»/Եղ.,202/: «*Հեռի եղեն եղբարք* իմ»/Յովբ.,ԺԹ,13/: «*Չար ինչ Լին գազանք* բնութեամբ»/Եզն.,46/: «*Նա էր մայր* եկեղեցեացն»/Բուզ.,115/:

Եթե նման բազմաթիվ օրինակներում ենթակայի հետադասություն դեպքերը (նախադասությունը եզրափակող կիրառություններում) բնորոշվում են որպես տրամաբանորեն թույլ դիրքեր, ապա բաղադրյալ ստորոգյալի առաջադաս և ընդգծված հանգույցի և ստորոգելիի միջև ենթական բացարձակորեն չեզոք է, ինչպես՝ «*Էին խաշինք* նորա եօթն հազար *ոչխար*»/Յովբ.,Ա,3/: «*Էր Դաւիթ խելամուտ* ամենայն ճանապարհս իւր»/Ա.Թագ.,ԺԲ,4/: «*Եմ ես Ղազար*»/ՂՓՊՀ,412/:«*Էր սա այր* զարմանալի»/Բուզ.,58/ Այդպիսին է ենթակայի դիրքը նաև բայական բաղադրյալ ժամանակով արտահայտված պարզ ստորոգյալի առաջադաս օժանդակ բայի և դերբայի միջև՝«Եւ *էր Վարազվաղանս* այս *փեսայացեալ* իշխանին Սիւնեաց Վասակայ»/ՂՓՊՀ,79/ և այլն:

Տրամաբանորեն թույլ կամ չեզոք է նաև ենթակայի հետադաս դիրքը վերաբերականների շնորհիվ իմաստի սաստկացում ստացած և նախադասության սկիզբ տեղափոխված ստորոգյալից հետո, ինչպես՝ «Հաւատարմագոյն ևս լիցի քեզ երկրորդ տեսոր *գալուստն* նորա»/Եղ.,13/: «Թէ և քաջութ ևս էր *Զրուանն*»/Եզն.,91/: «Լցաւ իսկ *երկիր* աստուածապաշտութեամբ քով»/Ագաթ.,97/: Կամ երբ ստորոգյալը առաջադաս դիրք ունի գրաբարում խիստ գործածական՝ հոմանիշ (դիմավոր կամ անդեմ) բայաձևի սաստկական հավելադիր կիրառությամբ: Ձևով տարբեր, բայց նշանակությամբ մոտ բայերը, մի կապակցության մեջ միանալով, առաջ են բերում բայիմաստի խտացում, գործողությունը դառնում է ավելի ցայտուն, քուցվում իմաստի նրբերանգներով և մղվում է հաղորդվող մաքի առաջին պլան:

Օրինակներ՝ «*Ժողովեցան գումարեցան* առ նա *բնակիչք* յեռնակողմանն» /Յուդ..-Ա, 6/: «Ռսպ զքազաւորն *հպարտացուցեալ ամբարտաւանեցուցանէր* որոգայթադիր *թշնամին*»/Ագաթ.,142/ «*Նորոգեցաւ զուարթացաւ աշխարհին* թագաւորութեանն Հայաստան երկրին»/Բուզ.,103/: «*Զանցուցանելով զանցուցէ այր* նորա յետ աւուրցն»/Թիւք.,16/: «*Տապալեալ աւերեցան ամուրք* ապաստանի նոցա»/Եղ.,201/ և այլն:

Հարկ ենք համարում այս առիթով նաև ավելացնել, որ ենթական իր առաջադաս տոկոբական դիրքում է մնում, եթե բայական հավելադրությունը չունի բայ-ստորոգյալի իմաստը սաստկացնող նշանակություն, այլ գործածվում է իբրև զարդարանք: Օրինակ «*Որդիք* նորա ...*խնդրելով խնդրեսցեն*»/Ագաթ.,899/: «*Այն ամենայն* ի ծեռն այլոց *գրեալ գրեցաւ*»/Բուզ.,9/: Ինչպես կարելի է հեշտությամբ նկատել, վերջին դեպքում հավելադիր բայը ոչ թե հոմանիշ է ստորոգյալին, այլ վերջինիս կրկնությունն է դերբայական ձևով (շինել շինէին, աճելով աճէին,երկնչելով երկեաւ, պսակելով պսակեսջիք և այլն): Այնինչ հենց հոմանիշների հավելադրությունն է, որ ի զորու է լրացուցիչ իմաստային նրբերանգներ հաղորդելու գործողությանը՝ սաստկացնելով բայ- ստորոգյալի իմաստը: Այս դեպքում է, որ ենթական հետադասվում է ստորոգյալին՝ զբաղեցնելով տրամաբանորեն «չեզոք» դիրք:

Գրաբարում ստորոգյալը ուժեղ շեշտվածություն է ծեռք բերում *հաւելում* բայի հարադրությամբ և դրա շնորհիվ ծգվում է դեպի նախադասության սկիզբ՝ ենթական թողնելով տրամաբանորեն աննշանակ դիրքում: Այսպիսի կառույցները հաճախական են հանդիպում հատկապես Աստվածաշնչի լեզվում[6]: Օրինակներ՝ «Եւ *յաւելին որդիքն* Իսրայիլի *առնել* չար առաջի Տեառն»/Դատ.,Դ,1/: «Ոչ *յաւելին մեկնակազէնքն* ասորւոց *գալ* յերկիրն Իսրայիլի»/Դ.Թագ.,Զ,23/:«*Յաւել ևս լինել մարտ* հատուքեամբ *պատերազմի* ի մէջ Պարսից և Հայոց ընդ միմեանս»/Բուզ.,40/:

Տրամաբանորեն աննշան է ենթական նաև բաղադրյալ բայական ստորոգյալի բաղադրիչների միջև կամ նրանց հաջորդող դիրքում, եթե նման ստորոգյալի դիմավոր բաղադրիչը սկիզբ, ընթացք, վերջ կամ գործողության այլ առանձնահատկություններ արտահայտող բայ է, կամ էլ գործածվում է ցանկության, հարկադրվածության, մտադրության և այլ երանգավորիչ իմաստներով (իշխեմ, կամիմ, հաճիմ, հանդուրժեմ, փութամ, յօժարիմ, սկսանիմ և այլն):

---

[6] *Վ.Առաքելյան, Գրաբարի հատընտիր, Եր., 1946, էջ 25:*

Օրինակներ՝ «*Սկսաւ սպարապետն խօսել* միաբանութեամբ նախարարացն ընդ զօրսն»/Եղ.,100/: «*Փութացի Աստուած առնել* զնա»/Ծննդ..,ԽԱ,32/: «*Խոքենցու նա դառնալ* յերկիրն իւր»/Դ. Թագ..Զ.5/:«*Կարգեաց Դաւիթ* ի սկզբանէ *օրհնել* զՏէր»/Ն.տ.7/:

Այդպիսին է ենթական նաև գրաբարյան այն կառույցներում, որոնք սկսվում են *և եղև, և լինէր* խոսվելադիր բայերով: Ինչպես նկատել ենք, ստորոգյալն ընդգծող ու նախադասության սկիզբ ստանող ոճական այս հնարքը լայն կիրառություն ունի գրաբար թե՛ թարգմանական և թե՛ ինքնուրույն գրականության լեզվում: Օրինակներ *«Եւ եղև* իբրև *լուաւ Եղիսէ*...»/Դ. Թագ.,Է,8/: *«Եւ լինէր* իբրև *վարէր այր* Իսրայէլի»/Դ-ատ.,Զ,3/: *«Եւ եղև* իբրև *լուաւ* զայս ամենայն *թագաւորն* Յունաց»/Բուզ.,89/: *«Եւ եղև...խնդրեաց* իւր կին *կայսրն Դիոկղետիանոս*»/Ագաթ.,137/:

Ստորոգյալով արտահայտված գործողությունը կամ եղելությունն է մղվում ուշադրության կենտրոն , երբ նախադասությունը սկսվում է *ահա, ապա* բառերով, որոնք ստեղծում են անմիջապես գործողությանը հաղորդվելու պտեանջ՝ ստորոգյալը սովորաբար ձգելով դեպի իրենց և ենթական տանելով արամաբանորեն չեզոք հետադաս դիրք, ինչպես՝ *«Ապա ծունր դնէր Յակոբ ի* վերայ երկրին»/Բուզ.,34/: *«Ապա ժողովէր սպարապետն զօրավարն* Հայոց ...գազասախումբ բանակ»/Ն.տ.41/: *«Ահա հասեալ է բաժակն* պատուհասի»/Ագաթ.,513/: *«Ահա շրջեցան* զինն *շունք* բազումք»/Եղ.,168/: «Եւ *ահա* յանկարծակի *բացաւ համաատութիւն* երկնից»/ՂՓՊՀ,29/:

Հարկ է նշել, որ ենթական շրջված (տրամարանորեն չեզոք) դիրք ունի նաև այն կառույցների մեծ մասում, որոնք սկսվում են *իբրև, քանզի,* մասամբ *յորժամ, զի, եթէ, մինչև* շաղկապներով: Օրինակներ՝ «Եւ *իբրև եհաս նամակն* յարքունիս»/Եղ.,41/: *«Իբրև մտածէր ...քորեպիսկոպոսն* ...»/Բուզ.,60/: *«Քանզի անկեալ էր զօրավարն* Հայոց ի մեծ պատերազմին»/Եղ.,119/:*«Յորժամ եկեսցէ ժամանակ»*/Յովհ.,ԺԶ,9/և այլն:

Սովորաբար, երբ տրամարանորեն ընդգծվում և առաջին պլան են մղվում ոչ թե գործողությունը կամ այն կատարող առարկան, այլ գլխավորապես գործողության հանգամանքները՝ տեղը, ժամանակը, նպատակը, պատճառը կամ գործողության հետ կապ ունեցող առարկան, պատմողական խոսքում առկա է գլխավոր անդամների PS հաջորդականությունը, սրանեղ ենթական տրամաբանորեն չեզոք է: Օրինակներ՝ «*Միով զօտեաւ* ճշմարտութեան պնդեցին զմէջս *արք և կանայք*»/Եղ.,67/: «*Յամենայն զօրութենէ* քումմէ ծառայեցեր *դու* միամտութեամբ»/Ագաթ.,5/: «*Ի քուն* զբաղնուն *միտքն*»/Եզն.,123/ և այլն: Եթե սրանցում ենթակայի դիրքի չեզոք բնույթը կասկած չի հարուցում և բացատրվում է նախադասության սկզբում (ստորոգյալից առաջ) նրա լրացումների արամաբանական ընդգծման նպատակով ենթակայի սովորական շարադասության հարկադիր շրջմամբ, ապա այլ դեպքերում այն արդյունք է ստորոգյալի լրացման առաջադասության քերականական անհրաժեշտությամբ: Այսինքն ենթակայի չեզոք դիրքն այս դեպքում ունի քերականական հիմք: Օրինակներ *«Զայս* լսեն *թշնամիք* ճշմարտութեան»/Եզն.,51/: *«Զսա* պայազատէ նորին *որդի Արշակ*»/ՄԽՊՀ,103/: *«Զայս ամենայն*...առ ժամանակ մի...կատարեսցեն *ամենեքեան*»/Եղ.,53/: Ստորոգյալի լրացումների առաջսսլասությունը մեր կարծիքով սրանցում չունի ընդգծման նպատակ, այլ թելադրված է այդօրինակ լրացումների խոսքիմասային իմաստով , ինչպես նաև խոսքային իրադրությամբ:Ընդհակառակը, այսպիսի լրացումները առավել ընդգծված են այն դեպքում, երբ նախորդում են ստորոգյալին՝ իմենցից առաջ ունենալով ենթական. «Աստուած *զնա* չար արար»/Եզն.,110/ և այլն:

Բայց քանի որ ցուցական և հարակապես հարաբերական դերանունները, շնորհիվ իրենց խոսքիմասային յուրահատուկ իմաստի, զրավում են նախադասության սկիզբը, այդ իսկ պատճառով ենթակայի սկզբնային դիրքը այսպիսի կառույցներում սովորաբար փոխարինվում է ստորոգյալին անմիջապես նախորդող կամ հաջորդող դիրքերով:Սրանցից առաջինը քերականորեն նպատակահարմար չէ, որովհետև «քանդում է» ստորոգյալի միջուկի բաղադրիչների անմիջական կապը («Զոր դու շինեցեր»/Սաղմ.,Ժ,13/): Այդ է պատճառը, որ գրաբարի նման կառույցներում սովորաբար իշխողը ենթակայի հետադասությունն է, ինչը վերջինիս համար տրամաբանորեն չեզոք լինելով հանդերձ, քերականորեն ամենանպատակահարմարն է գլխավոր անդամների միջև իմաստային և շարահյուսական հարաբերությունների դրսևորման տեսակեաից, ինչպես օրինակ՝«Զայս ասէ *այր* ցեաւաաացեալս Աստու-

ծոյ»/Առակ,Ի,1/ և այլն: Ի դեպ, հար և նման դեպքերում ենթական ունի նվազագույն իմաստային բեռնվածություն, որը սակայն կարող է աճել, եթե ստորոգյալին հաջորդող նրա դիրքը համընկնում է նախադասության վերջի հետ, հատկապես, եթե առկա է դրան նպաստող սա այլ գործոն՝ գլխավոր անդամների ընդմիջվածությունը, ինչպես օրինակ՝ «Այս յետ այսորիկ լուր *լուավ* յերկրէն Հայաստանէ սքանչելի *եպիսկոպոսն Յակոբ*»/Բուզ.,48/ և այլն: Ավելացնենք նաև, որ սրանով լեզվում սահղծվում է նաև պատումի հանդարտ շարադրանքի ապավոյալություն, և այդ պատճառով էլ այսպիսի շարադասությունը պատմողական խոսքում ավելի բնորոշ է սկզբնային նախադասություններին /«Զայնու ժամանակաւ էր դուստր մի գեղեցիկ Անդովկայ ուրումն» և այլն/: Այսպիսի նախադասությունները սովորաբար չեն կապվում նախորդ խոսքի հետ, ավելին, իրենք են հիմնետ ծառայում հաղորդման հետագա ծավալման համար, քանի որ ենթակայով արտահայտված սաարկաներր նրանցում հանդես են գալիս կամ որպես «նոր», որի մասին մինչ այդ խոսք չի եղել, կամ որպես անորոշ առարկա, առարկա ընդհանրապես:

Մի քանի խոսքով անդրադառնանք նաև գրաբարի մեկ այլ ոճական յուրահատկությանը. խոսքը վերաբերում է առաջադաս հեղինակային խոսք-նախադասություններին, որոնցում ստորոգյալի իմաստային ընդգծման նպատակով շրջված է գլխավոր անդամների փոխդասավորության ավորական համարվող SP հաջորդականությունը, ինչպես՝«Յայնժամ *խօսեցաւ Սողոմոն* վասն ամնն...»/Գ Թագ.,Ը,53/: «Եւ *խօսեցան* ընդ նմա *մանկաիքն*...»/Ն.տ.ԺԲ.10/: *«Եւ պատասխանի զինուորն* Քրիստոսի...» /Եղ.,13/: «Հանգոյն դմին *ասէ Եւագարոս*...»/ՄԽՊՀ,124/: «*Ասեն* ցնա *փարիսեցիքն*...»/Յովհ.,Ը,13/: Շրջման արդյունքում հեղինակային խոսքի ենթական հայանվել է իր համար արամաբանորեն թույլ (ուրիշի խոսքին հարող) դիրքում: Ի դեպ նման դեպ-քերում շատ հաճախ առկա է նաև երկրորդ՝ հավելյալիր ասացողական բայ-ստորոգյալը, որը , հաջորդելով ենթակային, մի կողմից «վերականգնում է» ուրիշի խոսքի հետ հեղինակային խոսքի՝ ստորոգյալով կապվելու քերականական-արամաբանական նպատակահարմարությունը, մյուս կողմից՝ արամաբանորեն ավելի աննշանակ դարձնում միանգամից երկու ստորոգյալների արանքում հայանված ենթակին: Օրինակներ՝ «*Խօսել սկսաւ* թագաւորն և *ասէ*...»/Ագաթ.,68/: «Յայնմ ժամանակի *երաման ետ* հազարապետան և *ասէ*...»/Եղ.,134/:*«Պատասխանի ետ* նմա Յիսուս և *ասէ*...»/Մարկ., ԺԳ,2/: «Յայնժամ *խօսել սկսաւ* Լիկիանէս *և ասէ*...»/Ագաթ.,44/:«Աստուածապաշտան *գոչէ* մարգարէն և *ասէ*...»/Ն.ա.537/:

Այս առիթով անհրաժեշտ ենք համարում նաև ավելացնել, որ արդարացի համարել չի կարելի բնագրի հեղինակային խոսքում գլխավոր անդամների նմանատիպ շրջուն վիճակի՝ թարգմանիչների կողմից երբեմն-երբեմն կատարվող «ուղղումները»՝ արդի հայերենի հանգույն: Մինչդեռ միանգամայն ակնհայտ է, որ հին հայերենի շարահյուսական իրողության «արդիականացումը» նկատելիորեն խախտում է բնագրի և թարգմանության լեզվի պատմական հետահայաց հարաբերակցությունը՝ աղքատացնելով թարգմանությունըն այն իմաստով, որ զրկում է նրան ոճական-արտահայտչական արխայիկ գծերից:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ագաթ.,- Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914

Բուզ., - Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս,1912

Եզն, - Եզնկայ Կողբացւոյ Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914

Եղ., - Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան. 1957

ՂՓՊՀ – Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1907

ՄԽՊՀ - Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912

Խ. Գրքի /Աստուածաշունչ Մատեան Հնոց և Նորոց Կտակարանաց, Կ. Պոլիս, 1895/ հետևյալ համառոտագրությունները՝ Առակ.,/Առակք Սողոմոնի/, Դատ.,/Գիրք Դատաւորաց/, Ա Թագ.,

/Գիրք Առաջններորդ Թագաւորաց/, Դ Թագ.,/Գիրք Չորրորդ Թագաւորաց/. Ծննդ.,/Գիրք Ծննդոց/, Մատթ.,/Սրբոյ Ավետարանիս Յիսուսի Քրիստոսի ըստ Մատթէոսի/, Մարկ.,/Սրբոյ Ավեաարանի Յիսուսի Քրիսաոսի ըսա Մարկոսի/, Յովբ/ Գիրք Յովբայ/, Յովհ.,/ Սրբոյ Ավետարանիս Յիսուսի Քրիսաոսի ըստ Յովհաննու/. Յուդ.,/Գիրք Յուդիթայ/, Սաղմ.,/Գիրք Սաղմոսաց/:

О СТИЛИСТИЧЕСКИХ ВОЗМОЖНОСТЯХ ПОРЯДКА СЛОВ АРМЯНСКОГО ЯЗЫКА

Резюме *С.Айрапетян*

Представлены и исследованы словопорядковые факторы, способствующие логическому выделению и интонационному подчеркиванию подлежащего в повествовательной речи, те позиции, где, благодаря увеличению смысловой нагрузки, подлежащее становится доминантой передаваемой предложением мысли. Такие позиции систематизируются и рассматриваются как выражения словопорядкового принципа "выделения" подлежащего.

Отдельно исследуются также т.н. "слабые или нейтральные" позиции подлежащего в словопорядковой организации древнеармянского языка, в которых оно бывает логически незаметным и интонационно особо невыраженным.

Рассматриваются также характерные для древнеармянского "плеонастическая инверсия", и некоторые другие стиле-выразительные особенности порядка слов в повествовательных предложениях.

Վարդան ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԲԱՌԱՅԻՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Բառային անհատական նորաբանությունները, գործառական հիմնական ոլորտ ունենալով գերազանցապես գեղարվեստական խոսքը, լեզվի բառագանձի մի անբաժան և կարևոր մասն են կազմում: Դրանք առանձին և համգամանալի ուսումնասիրության են ենթարկվելու ոչ միայն գործածության, այլև կազմության առումով: Այս երկրորդ դեպքում ուշադրության կենտրոնում է գտնվելու այն հարցը, թե լեզվի բառակազմական եղանակներից որո՛նք ինչպիսի՛ ակտիվությամբ են դրսևորվում անհատական նորաբանությունների կազմության հարցում:

Խոսելով հայերենի բառակազմական օրինաչափությունների զարգացման միտումների մասին՝ Ս.Գ Աբրահամյանը նշում է, թե արդի փուլում բառապաշարի հարստացման գործում փոքր դեր են կատարում բառակազմական այնպիսի եղանակները, ինչպիսիք են կրկնավոր բարդությունները (խումբ-խումբ, ուշ-ուշ և այլն), *առ, ընդ* նախդիրներով, *ու* շաղկապով կապվող բաղադրիչներ ունեցող հարադիրները (մեկ առ մեկ, մերթ ընդ մերթ, աջ ու ձախ), կցական կոչվող բարդությունները (այսօր, կեսօր), բառի քերականական ձևերի վերածումն ինքնուրույն բառի (նորից, շուտով) և այլն[1]: Բառակազմական այս տիպերի հիմնական յուրահատկությունն այն է համարվում, որ դրանց «հիմքում ընկած է փոխանցումը»[2], այսինքն՝ համապատասխան լեզվական միավորները «ժամանակի ընթացքում, առանց բառակազմական յրացուցիչ բաղադրիչի, իմաստային ու շարահյուսական հիմքի վրա վերածվում են բառական մեկ միավորի՝ մեկ բառի»[3]: Բառապաշարի հարստացման այս եղանակը հեղինակը կոչում է *փոխանցումային եղանակ* և դրան հակադրում է *կաղապարային եղանակը:* Կաղապարային կազմություններ են դիտվում ա) համադրական բարդությունները, (բացի կցականներից), բ) կիսահարադրական ուարահիմք բարդությունները. օրինակ՝ *տուն-թանգարան, գրադարան-ընթերցարան, կիլովատ-ժամ* և այլն, գ) ածանցավոր բառերը: Այս կարգի բարդ բառերի համար յուրահատուկն այն է համարվում, որ այդպիսիք «ցանկացած պահին կարելի է կազմել արդեն իսկ առկա կաղապարով»[4]: Բառակազմական այս եղանակը, որ միշտ էլ ակտիվ է եղել հայերենում, գնալով «ավելի է ակտիվ դեր կատարում» [5]:

Մեր նոր շրջանի գեղարվեստական գրականության մեջ, հատկապես չափածոյում, կենտունակությամբ են հատկանշվում հատկապես իսկական բարդությունները, նկատելի ուժ են գրադեցնում ածանցումը, որոշ անվանական հարադիրներ, ինչպես նաև արմատի բառացումը և բառերի կրճատ ձևով գործածությունը:

Իսկական բարդությամբ անհատական նորաբանությունների ստեղծման հարցում գրողները, բանաստեղծները դիմում են տարբեր միջոցների: Ուսումնասիրվող նյութը հիմք է տալիս որպես այդպիսիք նշել հետևյալները: Շրջում են լեզվում գոյություն ունեցող բարդ բառերի բաղադրիչները, փոխում են գոյություն ունեցող բարդ բառի բաղադրիչներից մեկը, սովորաբար առաջին բաղադրիչը, ձգտում են իսկական բարդության կազմում ակտիվացնել հատուկ անունների գործածությունը, որպես առաջին բաղադրիչ են հանդես բերում այնպիսի բառեր, առանց որոնց էլ բառն օժտված է լինում նույն նշանակությամբ և այլն: Համառոտակի նշենք դրանցից յուրաքանչյուրի մասին:

Բարդ և ածանցավոր նորաբանություններ կան, որոնց բաղադրիչներից մեկն իր հերթին յուրօրինակ նորաբանություն է, բայց պոտենցիալ վիճակում: Այդպիսի

---

[1] *Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի բառակազմական օրինաչափությունների զարգացման միտումները, ՊԲՀ, 1981, 3:*

[2] *Նշվ. աշխ., էջ 33:*

[3] *Նույն տեղում :*

[4] *Նույն տեղում :*

[5] *Նույն աեղում :*

բառաստեղծումը մեր գեղարվեստական խոսքում վաղուց է հայտնի: «Գրաբարում,- գրում է Վ. Առաքելյանը,- *հանրահռչակ* բառ չկա, Նարեկացին կազմել է *հանրահռչակել* բայը, որից հետագայում առանձնացվել է *հանրահռչակ* նոր բառը և այժմ մեր գրական լեզվի շատ գործածական բառերից է»[6]: Նշված եղանակով ածականներ էլ կարող են կազմվել, բայց անհամեմատ շատ են բայերը: Բերենք մի քանի օրինակ՝ Ախ, Վարդապետ, գութ էր հայցում *Տխրալալուկ* ամբողջ մի ազգ Քո սևասուգ սուրբ բերանով (ՊՍ, հ.4, էջ 194): Սակայն սա հենց որ նուրբ *լեզվավորվեց*՝ վեր նայեց խաբված (ՀՇ, ՔՀ, հ.3, էջ 138): Ու բազմերախ, բազմառավոտյան անդունդը վայրի Սարդահեղեղով պղտոր ու փրփրուն *մարդաալիքվեց* (ՀՇ,ՀԴ, 300):

Լեզվում գոյություն ունեցող համադրական բարդությունների համեմատությամբ շրջված բաղադրիչներով նորաբանությունները իմաստային առումով միատեսակ չեն: Կան այնպիսիները, որոնք էապես չեն տարբերվում լեզվում գոյություն ունեցող համապատասխան բաղադրյալ ձևերից (մոլորաքայլ – քայլամոլոր, հերազանգուր - զանգրահեր): Ոճաարտահայտչական առումով ավելի կարևոր են այն շրջուն բաղադրիչներով նորաբանությունները, որոնք համապատասխան բառերից տարբերվում են իրենց իմաստով: Ունենք *սրտաարոփ* ձևի մակբայ (սրտաարոփ սպասել): Պ. Անակն ստեղծել է *արոփասիրտ* բառը, որ արտահայտի «սրտոփող, բաբախուն սրտով» իմաստ՝ որպես լրացում *մումիա* բառի: Դու մեր անքաղ, բայց և անխուռ, *արոփասիրտ* մի սուրբ մումիա (ՊՍ, հ.4, էջ 224):

Նորաբանություններ կան, որոնք առաջացել են այլ նորաբանության կամ գրական լեզվի համապատասխան բարդ բառի բաղադրիչներից մեկը հոմանիշ կամ նույնանիշ ձևով փոխարինելով: Այդ եղանակով երևան եկած նորաբանությունները սովորաբար օժտված են լինում իմաստային նրբերանգներով: Ա. Վշտունին կից տողերում գործածել է *արեգնաշող* և *արևաշող* ձևերը: Թրիալեթի, Սվանեթի սարերի պես *արեգնաշող*, Արևնախշով, արերաշով, *արևաշող* Սաքարթվելո (ԱՎ, 138): Շիրազը գործածել է *ոսկեմազ* և *ոսկեհեր*:

Հնձվորի պես ես ցալի և գերևի զվարթուն
Ոսկեմազերդ՝ արտերի հասկերի պես իմաստուն (ՀՇ, ԵՀ, 27):
Ծաղկում ես, խաղող՝ ողկույզ *ոսկեհեր* (ՀՇ, ԵՀ, 37):

Հայտնի է, որ բաղադրյալ կազմությունների հարցում հատուկ անունները առհասարակ մի առանձին ակտիվություն չեն ցուցաբերում: Բայց գեղարվեստական խոսքում իրողությունը մի քիչ այլ է: Որոշակի համատեքստի պահանջով ոչ սակավ դեպքերում հատուկ անունները ակնհայտ կենսունակություն են ցուցաբերում բարդ և ածանցավոր բառերի կազմության հարցում՝ երբեմն համահեղ գործածությամբ: Ահա համապատասխան մի քանի գործածություն Ե. Չարենցի ստեղծագործություններից, որոնք որևէ գեղարվեստական ստեղծագործության կամ նրա հեղինակի «բնորոշ գծերն են իր մեջ խտացնող բնութագրումներ են»[7]: Իմ տողերը վիշտ բերին ու՞մ - *Դանթեյան* իմ տողերը երգ (հ.2, էջ 162): *Սեդեսական* կիրք ու սեր՝ հեկզամետրով գրված… *Մելպոմենյան* տաճարի Կամարների տակ անմահ Այսօր քո աստղն է շողում (ԸՆ, 292):

Այլ բանաստեղծների ստեղծագործություններում էլ նկատվում են որոշ հատուկ անուններով կազմված բառեր (ՀՍ, 78, ԳՍ, 196), բայց դրանք պատկառելի տեղ ունեն Հ. Շիրազի ստեղծագործություններում: Ընդ որում, նա հատուկ անուններով ոչ միայն մակբայներ, ածականներ է կազմում, այլև՝ բայեր, որ մեր լեզվում առհասարակ ընդունված չէ: Չերկարացնելու համար բավարարվենք այդպիսի նորաբանություններից մի քանիսի թվարկումով՝ ավարայրվել (ՀՄ, 72), արարատվել (ՔՀ, հ.2, էջ 226), հունաստանվել (Երկ., հ.2, էջ 28), խայամվել (Յոթ., 131), մասիսվել (ՔՀ, հ.3, էջ 149, 315), մեհրուժանվել (Երկ., հ.2, էջ 210), շամիրամվել (ՔՀ, հ.3, էջ 56), վարդանվել (Յոթ., 39): Միայն «Հայոց դանթեական» պոեմում գործածված այդպիսի նորաբանությունների թիվը հասնում է երկու տասնյակի: Ահա դրանցից մի քանիսը՝ անդրանիկվել (57), կոմիտասվել (85), լենգթեմուրվել (84), չինգիզվել (84), դանթեակուռ (38), հիսուսադրուժ (Իմացեք, սակայն, ազգեր ու ցեղեր Հիսուսադրուժ), նարեկամոռաց

---

[6] Վ. Առաքելյան, Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը, Եր., 1975, էջ 53:
[7] Ա. Մարության, Եղիշե Չարենցի չափածոյի լեզուն և ոճը, Եր., 1979, էջ 125:

(Ու՞ր ես,- մռնչաց, նարեկամռունչ), բելասպան (Միֆ է բելասպան աղեղն էլ Հայկյան). հիստերվել (Ծվ դեռ հիալերված դժոխաշունը Հիշելով քուրքի խմած արյունը... 279):

Ուսումնասիրվող նյութի մեջ կան այնպիսի նորաբանություններ, որոնց իմաստը նույնանում է երկրորդ բաղադրիչի իմաստին: Էդ. Աղայանն այդպիսիները կոչում է նավելադրական բարդություններ[8]: Ահա այդպիսի մի քանի բառեր ծիախրխինջ (ՀԴ, 26), գութանախոփ (ՀԴ, 36), զազաներախ (ՀԴ, 142) և այլն:

Իսկական բարդությամբ նորաբանությունների առաջին բաղադրիչի արտահայտության հարցում անհատական բնույթի նկատելի առանձնահատկություններ ըստ էության չկան. այդ բաղադրիչը գերազանցապես եզակի ուղղական հոլովաձևն է: Հ. Շիրազի ստեղծագործություններում որոշ չափով չարաշահված է մեղ/ք/ գոյականի գրաբարյան եռզնակի հայցականի (մեղս) ձևը՝ մեղսաթուրք, մեղսացեղ, մեղսածով, մեղսախոտ, մեղսատենչ, մեղսափարիզ, (տե՛ս ՀԴ. էջեր 40, 146 և այլն): Նկատված է, որ հատկապես Պ. Սևակն առանձին հետաքրքրություն է ցուցաբերում բաղադրության առաջին բաղադրիչն անձնական դերանվան սեռական, տրական հոլովներով արտահայտելու հարցում՝ *քոյասիրահար, քոյապաշտ, մերաահպար* և այլն (Եվ քանի-քանի հայ երաժիշտներ՝ Քոյասիրահար ու քոյապաշտներ... Մեր տաղ ու պարի թովչանքն են ցրում (Անլո. զանգ., էջ 250): Պետք է նկատի ունենալ, որ այդպիսի գործածությունները մեր գեղարվեստական խոսքում վաղուց են տեղ ունեցել: Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի ստեղծագործություններում կան այսպիսի ձևեր՝ *Քեզպեսին* էի ես սրտով ուզում (ԽԱ, ԵԺ, հ.2, էջ 310): *Ձեզպես* մարդիցը բարերարություն ստանալը ծանր չի (ն.տ., 312): Ազգի գլխից *ձերպեսներով* եկավ անցավ այնքան փորձանք (ՄՆ, ԵԺ, հ.1, էջ 83): Քո ուսումը չէ կշտացնում Իմ, կամ *իմպեսների* փորը (ն.տ.) և այլն: Ամենայն հավանականությամբ այսպիսի ձևերը ժողովրդական կենդանի խոսքից են գալիս:

Անհատական նորաբանությունների առաջին բաղադրիչի խոսքամասային արտահայտության առումով ուշարժան իրողություններ են մասնավորապես *հազար, յոթ* թվականներով, *ինքը, ամեն* դերանուններով սկզբնաբաղադրիչ ունեցող կազմությունները: Նշված թվականները ժողովրդախոսակցական լեզվում հաճախ ոչ թե իրենց բուն իմաստով, այլ փոխաբերական նշանակությամբ են գործածվում: Հաճախ հենց այդ նշանակությամբ էլ հանդես են գալիս անհատական նորաբանությունների կազմում, որոնք հատկանշվում են որոշակի արտահայտչականությամբ. հազարաեռունչ (ԱՎ, ԸԵ, 59), հազարաքով (ՄԿ, 93), հազարազանձ (ՄԿ. 44), հազաբացավ (ՀՇԵ, հ.2, էջ 21), հազարադժոխք (ՀՇ, ՀԴ, 276), հազարաքև (ՄՄ,413), հազաբասմրակ (ՀՇԵ, հ.2, էջ 182), հազարատոք (ՌԴՌ, 17), յոթնադժոխք (ՀՇ, ՀԴ, 15), յոթնապոռնիկ (ՀՇ, ՀԴ, 204) և այլն: Նշենք նաև *ինքը* դերանունով նորաբանություններ՝ ...Թե չնա ուղի *ինքնախոյացման* (ԵՉ, 122): Որ բանն ավարավլի *ինքնահաշտությամբ* (ՊՍ, ԵԺ, հ.2, էջ 138): Եվ այդ ճշմարիտ *ինքնազանումի* ճանապարհով գնալ (ՌԴՌ, 124): Երբ մենք մեզ թաքցնում էինք *ինքնուրացման* մռայլ քղանցքի տակ (ՆԶ, ԱՍ, 197):

Մեր նոր շրջանի, հատկապես վերջին 4-5 տասնամյակների չափածոյում բավական աշխույժ գործածություն ունեն այնպիսի նորաբանություններ, որոնց մեջ գոյականի հետ որպես սկզբնաբաղադրիչ է հանդես գալիս *ամեն* դերանունը «ամենքի համար» նշանակությամբ (Ամենամեծ դու նահատակ, *Ամենահայր*... (ՊՍ,ԵԺ, հ.1, էջ 201), ինչպես նաև ածականի գերադրական աստիճանի ձևույթի նշանակությամբ (Դու կենդանի մարդ ես, *ամենամարդ* մարդը (ՊՍ,ԵԺ, հ.3, էջ 135): Այդպիսի մի քանի նորաբանություններ գործածված են նաև Հ. Շիրազի, Մ. Մարգարյանի ստեղծագործություններում: Հող ու արևի կիրքը վերցրեց, *Ամենաստեղծ* կիրքն *ամենամայր* (ՀՇԵ, հ.2, էջ 55): Ծվ գնում էինք, հուսալով բարին, Ընդառաջ հայոց *ամենասարին,* Անմռաց Սասնա լեռները դեպի... (ՀՇ, ՀԴ, էջ 168): Դու ամենաթանկ ու թարձր նվեր, Դու *ամենասիրտ, Դու ամենասեր* (ՄՄ, ՁՀ, 143): Ավելի վաղ այդպիսի գործածություններ նկատվում են Ե. Չարենցի, Ն. Զարյանի ստեղծագործություններում (*ամենապոեմ, ամենազազան*):

---

[8] *Է. Ա ղ ա յ ա ն, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984,էջ151:*

Գեղարվեստական խոսքում իսկական բարդության գործածության կապակցությամբ անհրաժեշտ է ուշադրության արժանացնել հետևյալ հանգամանքը: Հայանի է, որ հայերենի իսկական բարդության բաղադրիչները կապվում են ստորադասական հարաբերությամբ: Սակայն նկատվում է, որ գեղարվեստական խոսքում որոշակի միտում է ցուցաբերվում համադասական բաղադրիչներով իսկական բարդությունների գործածությունն ակտիվացնելու ուղղությամբ: Խոսքը միայն այնպիսի բարդությունների մասին չէ, որոնք առնչվում են կրկնությամբ (*ժանտաժանտ, սևասև, բազմաբազում* (ԵՉ, 194, 305, 248, 175): Խոսքը հատկապես վերաբերում է այնպիսի իսկական բարդությունների, որոնց բաղադրիչները տարբեր որակական ածականներով, երբեմն հականիշային իմաստով օժտված արմատով և ածականով են արտահայտվում*: Այդպիսի նորաբանությունների յուրաքանչյուր բաղադրիչով արտահայտված հասկացությունն առանձին է ուշադրություն արժանացվում, և ասես մեկ բառով միանգամից երկու հասկացություն է արտահայտվում: Այսպես՝ *սքանչագեղ* բառով արտահայտվում է և՛ «սքանչելի», և՛ «գեղեցիկ» հասկացությունը:

Նիբուն վրսեմափառ

Աստվածն է սքանչագեղ Շամիրամա...(ՆՁ, ԱԳ, 18):

Գեղարվեստական խոսքում այսպիսի իսկական բարդությունների ակտիվացումը կարելի է բացատրել ոճական, արտահայտչական հանգամանքով. բանաստեղծների նպատակն է առարկան, երևույթը միաժամանակ մեկից ավելի հատկանիշներով ներկայացնել, որից զգալի չափով շահում է խոսքը նաև սեղմության առումով: Նա անգամ զգաց, շոշափեց մտքով Ընթացքը նրա *հսկավիթխարի* (ԵՉ, 102): Արան յուր *թովչագեղ* կնոջն է սահմանել (ՆՁ, ԱԳ, 48): Ոչ Բահալին և ոչ Իշտար աստվածուհուն Այսքան գեղահրաշ կերպել չկարեցանք (ն.տ.): Դու շոյեցիր նրա *ճերմակածիգ* պաթանոցը (ԼԴԲ, 267): Քո նիզքն ավելի է դասնում *քնքշանուրբ* (ԼԴԲ, 275): Մենակ եմ, ինչպես *լքավեր* մի վանք (ՀԾԵ, 3, էջ 86): Գենոցիդն հայոց, ցեղասպանությունն այս *դժնազարհուր* (ՀՇ, ՀԴ, 259):

Գեղարվեստական խոսքում բառակերտումը չի կարող այս կամ այն չափով պայմանավորված չլինել արտալեզվական այնպիսի հանգամանքներով, ինչպիսիք են ժամանակի տիրապետող գաղափարախոսությունը, գրական ուղղությունն ու մթնոլորտը: 20-ական թվականներին ռուսական ֆուտուրիստները պահանջում էին, որ բանաստեղծն իրավունք ունենա «հարստացնել բառապաշարը քմահաճ բաղադրյալ բառերով», անսահման ատելություն ունենալ իրենից առաջ գոյություն ունեցող լեզվի նկատմամբ[9]: Կամայական բնույթի, անբովանդակ բառերի գործածության կոչ անելով՝ ֆուտուրիստներն այնպիսի բառեր էին ստեղծում, որոնք ռուսաց լեզվի բառաստեղծման ավանդույթների ակնհայտ խախտման դրսևորումներ էին[10]:

Բառաստեղծման հարցում նման վերաբերմունք դրսևորվեց նաև նույն շրջանի հայ պոեզիայում, հատկապես Ալազանի, Աբովի, Մ. Արմենի, մասամբ այլոց կողմից: Հեղափոխությունը գեղարվեստորեն ընկալվում էր որպես հրաբուխ, ահինիկան, երկաթը՝ որպես պաշտամունքի առարկա: Բանաստեղծական այդպիսի ըմբռնումն անհատական նորաբանությունների կերտման հարցում արտահայտվեց այդ հասկացությունների (հրաբուխ, երկաթ և այլն) անվանումներով նորանոր բառերի ստեղծմամբ: Ընդ որում այդպիսի բառերը գերազանցապես բարդության առաջին բաղադրիչում են հանդես գալիս: Ալազանի բանաստեղծությունների ժողովածուն («Հրաբխապոեզիա», 1923թ.) խորագրից սկսած հեղեղված է *հրաբուխ* սկզբնաբաղադրիչով նոր բառերով՝ հրաբխահարց (8), հրաբխալոգունգ, հրաբխամարտ (11, 13, 26),

* *Ուշագրավ է, որ եթե անհատական նորաբանությունների մեջ որակական ածականների բառակազմական դերն է ակտիվանում, համագործածական նորաբանությունների մեջ էլ՝ հարաբերական ածականներինը. գաղափարական-դասակարգչական, գիտական-կազմակերպչական, գրական-երաժշտական և այլն:*

[9] *Г. В и н о к у р, О языке художественной литературы, М., 1991, стр.328.*

[10] *Նշվ. աշխ., էջ 330:*

հրաբխահրամեր (11, 24), հրաբխագգեստ (2) հրաբխաբեմ (12, 13. 21. 26). հրաբխաջիղ (12), հրաբխասիրտ (12), հրաբխածարավ (13), հրաբխամույզ (27) և այլն:

Ձեզ համար կերգեմ
Հրաբխապոեզիա,
Հրաբխամարշ...(էջ 7):

Եթե Ալազանի բանաստեղծությունների ժողովածուի խորագրում «տիրակալը» *հրաբուխ*-ն է, Մ. Արմենի բանաստեղծությունների ժողովածուի խորագրում էլ *երկաթ*-ն է («Երկաթավսյլվող երկրի երգեր», 1927թ.): Մ. Արմենի. ժամանակի այլ բանաստեղծների ստեղծագործություններում լայնորեն գործածվում են *երկաթ* սկզբնաբաղադրիչով նորաբանություններ: Նշենք Մ. Արմենի ժողովածուից մի քանի գործածություններ: Ու կբարձրանան ջրանցքների ափերին *Երկաթավորված* գյուղերը մեր (էջ 18): Ու կանգնում են դեմս որոշակի, *Երկաթված* երկիրը մեր վաղվա գալիք (էջ 19): Կայտրկա իմ յուռ երկրի վրա Քաղաքների *երկաթաշունչ* աղալակը (էջ 20) և այլն:

Ուսումնասիրվող նյութի մեջ նկատելի են բառակազմական բնույթի զուգաձևություններ, որոնք ունեն տարբեր դրսևորումներ, ինչպիսիք են բաղադրյալ բառը որպես համադրական և վերլուծական բարդություն գործածվելը, բաղհյուսականից առաջացած կցական բարդության մեջ ու շաղկապի սղումը, բարդ բառի բաղադրիչները հոդակապով և անհոդակապ կապակցելը, իսկական բարդության առաջին բաղադրիչն անենչյունավոխ ձևով գործածելը և այլն: Նշենք համապատասխան մի քանի օրինակներ՝ ծափ հարել (ՀԹ, հ.1, էջ 560), քար-հալած (ՀՇ, Սխ, 23), արև-ծագ (ն.տ.), լույս-բաց (ՇԿ, 107), Լավ են երգում լուսբացին (ՇԿ, 241), սիր-երգ (ՀՀ, 51), կես-գիշերային (ՌՁՍ, 29) և այլն: Զուգաձևությունները երբեմն հանդես են գալիս նույն բանաստեղծի ստեղծագործություններում: Օրինակ՝ Վ. Տերյանը գործածում է և՛ *հուրհուր*, և՛ *հուր-հուր*, և՛ *չարախինդ*, և՛ չարխինդ ձևերը:

Սիրտըդ *հուրհուր* – վարդըդ վառման սլահիր վառ (հ.1, էջ 218):
Որքան հուրհր-սերհր, Պարզված *հուր-հուր* սրեր (էջ 216):
Եվ *չարխինդ* ճնշե եռըն իմ արյունռտ (հ.1, էջ 241):

Ե. Չարենցը գործածում է նաև *հրացայտ* ձևը (էջ 473), բայց ավելի հաճախ անհոդակապ *հրցայտ* ձևն է հանդես գալիս նրա չափածոյում (էջեր 316, 189, 190, 179): Ա. Վշտունին կից առղերում գործածել է բառի և՛ հոդակապավոր, և՛ անհոդակապ ձևը՝ Կոլխոզայի տափաստանում՝ *արևակաթ* ծառերի մեջ, *Արևկաթի* անթիվ կաթիլ ծառի գագաթ՝ ծառերի մեջ... (ԱՎ, 139):

Գեղարվեստական խոսքում բառակազմական առանձին եղանակ է հանդես գալիս ինքնուրույն գործածություն չունեցող արմատի բառացումը, ինչպես նաև բառերի կրճատված ձևով գործածությունը: Այսպես՝ մեր նոր գրական լեզվում գործածական չեն *թիռ* և *չարաքասա* ձևերը: Բայց առաջինը Ավ. Իսահակյանի, երկրորդը Հ. Շիրազի կողմից գործածության մեջ են դրվել:

Ու *թիռ* կուգան
Բարդ-բարդ ամպեր՝ հրով-ջրով
Լույս Մասիսի վեհ գագաթին (հ.2, էջ 195):
Նրան մեր հին օրերի բախտի հողմը *չարաքասա*
Ուզեց դեպի մահ քշել, որպես մի որբ առագաստ... (Հատ.,1949թ., էջ 158):

Առաջինն ինքնուրույն գործածություն չունեցող արմատ է, երկրորդը՝ *չարաքաստիկ* բառի կրճատված ձևը: Արմատի բառացման բազմաթիվ դեպքեր են նկատվում 20-րդ դարի չափածոյում: Թվարկենք դրանցից մի քանիսը՝ խեղ (ՀՇ, ՀԴ, 16), դրուժ (ԱԻ, հ.1, էջ 153), թարթ (ՀՇ, ՀԴ, 56), գոչ (ՀՇ, Հատ. (1949թ.), էջ 109), կուր (ԱԻ, հ.2, էջ 97), սասա (ԱԻ, հ.2, էջ 84), թինդ (ԵՉ, 186), եռ (ԵՉ, 59), ջեռ (ԵՉ, 410), հաչ (ՌՁ, 121), հաղթ (ԱՎ, 139), ծուփ (ԱՎ, 145), զարհուր (ՀՇ, Հաա., էջ 289, ՌԴՌ, էջ 36), վրդով (ՀՇ, ՀԴ,6), գայր (ՀՇ, ՀԴ, 21) և այլն:

Այն հանգամանքը, որ այդպիսի ձևերի գործածությանն առանձնակի կտրուկություն են տալիս նաև խոսքի այնպիսի մշակներ, ինչպիսիք են Ավ. Իսահակյանը, Ե. Չարենցը, Հ. Շիրազը, այն մասին է վկայում, որ արմատի բառացումը բանաստեղծական խոսքի կարևոր արտահայտչամիջոց է: Նշենք համապատասխան մի քանի գործածություններ: Չը լսում *սասաի*, ոչ էլ խրատի (ԱԻ, հ.2, էջ 82): Գնացեք,- ասաց.-

Ձեր երկրում *կեզ* Ապրեցեք ազատ, ապրաւսառով վես (ԵՉ, 199): Փողոցը *եռ* է ու չփոք է (ԵՉ, 59): Իրավ է *զայրդ*, հայրդ մեր զորաց (ՀՇ, ՀԴ, 21): Դու էլ հայանվիր,- ձայնեցի,- սուրը *խեղ*, Որպես մեծ վկւսն կեռւկենդանի (ՀՇ, ՀԴ, 16) և այլն:

Բստի կրճատ ձևով գործածությունն էլ կարևոր արտահայտչական դեր ունի չափածոյում: Սովորաբար են *վիթխարի, ճողկալի* ձևերը, բայց Ավ. Իսահակյանի, Հ. Շիրազի կողմից գործածված են դրանց կրճատ ձևերը: Սասունա սար՝ վես ու *վիթխար* (ԱԻ, հ.2, էջ 95): -Այս ինչ ես արել, բուրք *ամենանողկ*: Նզովվեն զահերն հայամերժ, Հունամերժ զահերն՝ այս *հավերժանողկ* (ՀՇ, ՀԴ, էջեր 197, 62): Այսպիսի կրճատ ձևեր են *միահեծ*, (Եվ ինչու՞ հավւսա գւսեին միահեծ (ՇԿ, 287, 49), *սրախող* ...մեր զոհերը սրախռղ (ՍԿ, 49), *բազմադար* (Բազմադար երկիրը մեր... (ԳՍ, 128) և այլն:

Համառոտագրություններ

ԱԻ - Ա. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ.1, 1973, հ.2, 1974:
ԱԾ - Ա. Ծատուրյան, Երկեր, 1948:
ԱՎ, ԵԺ - Ա. Վշտունի, Երկերի ժողովածու, 1948:
ԱՎ, ԸԵ - Ա. Վշտունի, Ընտիր երկեր, 1971:
ԳՍ - Գ. Սարյան, Երկեր, 1956:
ԵՉ - Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ.1, 1986, հ.2, 1986, հ.4, 1968:
ԼԴԲ - Լ. Դուրյան, Բերդ, 1983:
ՀԹ – Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ.1, 1950, հ.2, 1940;
ՀՀԵ - Հ. Հովհաննիսյան, Երկեր, 1959:
ՀՇԵ - Հ. Շիրազ, Երկեր, հ.1, 1981, հ.2, 1982, հ.3, 1984, հ.4, 1986:
ՀՇ, ԵՀ – Հ. Շիրազ, Երգ Հայաստանի, 1940:
ՀՇ, ՀԴ - Հ. Շիրազ, Հայոց դանթեական, 1990:
ՀՇ, Յոթ – Հ. Շիրազ, Յոթնապատում, 1977:
ՀՇ, ՔՀ – Հ. Շիրազ, Քնար Հայաստանի, հ.1, 1958, հ.2, 1964, հ.3, 1974:
ՀՍ – Հ. Սահյան, Հայաստանը երգերի մեջ, 1962:
ՄԱ - Մ. Արմեն, Երկաթավորված երկրի երգեր, 1927:
ՄՄ – Մ. Մարգարյան, Բանաստեղծություններ, 1978:
ՆԶ, ԱԳ - Ն. Զարյան, Արա Գեղեցիկ, 1956:
ՆԶ, ԱՍ – Ն. Զարյան, Արև ու սավեր, 1957:
ՇԿ – Շ. Կուրղինյան, Երկերի ժողովածու, 1947:
ՊՍ, ԵԺ – Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հ.1, 1972, հ.2, 1972, հ.3, 1973, հ.4, 1973:
ՌԴՌ – Ռ. Դավոյան, Ռեքվիեմ, 1969:
ՌԴ, ԸԵ - Ռ. Դավոյան, Ընտիր երկեր, 1987:
ՍԿ – Ս. Կապուտիկյան, Յոթ կայարաններ, 1966:
ՍՇ – Ս. Շահազիզ, Երկեր, 1947:
ՍՏՄ – Ս. Տարոնցի, Մեղրագետ, 1980:
ՎԴ, ԼԱ - Վ. Դավթյան, Լույս առավոտի, 1984:
ՎՆ, ԻԱ - Վ. Նորենց, Իմ աշխարհը, 1958:
ՎՏ – Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ.1, 1972, հ.2, 1973:

ОБРАЗОВАНИЕ ИНДИВИДУАЛЬНО-АВТОРСКИХ НЕОЛОГИЗМОВ. (на материале армянской поэзии XX в.)

Резюме

В. Мелконян

В деле образования индивидуально-авторских неологизмов в армянской поэзии нового периода особенную активность проявляют собственно сложные слова, аффиксация, а также некоторые аналитические композитумы. В отличие от литературного языка вообще, в поэтической речи большую роль играют самостоятельно не употребляющиеся корни (բիռ, շաչ, սաստ и т. д.), употребление сокращенных слов (չարաբաստ вместо չարաբաստիկ, ամենանողկ вместо ամենանողկալի и т. д.).

В статье также отмечается роль экстралингвистического фактора в образовании индивидуально-авторских неологизмов.

Աշոտ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՋԱՎԱԽՔԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԻՑ

Պատմական Հայաստանի Մեծ Հայքի թագավորության 15 նահանգներից (աշխարհներ) տասներեքերորդը՝ Գուգարքը, զբաղեցնում էր Հայկական լեռնաշխարհի հյուսիսային հատվածը: Այն արևելքից սահմանակից էր Ուտիք, արևմուտքից՝ Տայք, հարավից՝ Այրարատ նահանգներին, իսկ հյուսիսից՝ Իբերիային (Վիրք, Վրաստան): Նրա վարչական կենտրոնը Ցուրտավ քաղաքն էր: Գուգարքը Հայկական թագավորության չորս սահմանակալ բդեշխություններից մեկն էր և ժամանակ առ ժամանակ օգտվում էր որոշ ինքնուրույնությունից: Ըստ վրաց առանձին պատմաբանների, *Գուգարք* տերմինը վրացական ծագում ունի, և առաջացել է երկրամասը բնակեցնող գոգարների կամ գարգարների անունից: Սակայն հայկական աղբյուրները այդպիսի էթնոս չեն հիշատակում: Իսկ ինչ վերաբերում է գարգարացվոց երկրին, ապա այն, ըստ ակադեմիկոս Ս. Երեմյանի, կապ չունի Գուգարքի հետ[1]:

Գուգարքի հիմնական ինը գավառներն էին Ձորոփորը, Կոլբոփորը, Ծոբոփորը, Տաշիրը, Թռեղքը, Կանգարքը, Կղարջքը, Վերին Ջավախքը և Արտահանը[2]: Մինչև Հայաստանի առաջին բաժանումը (387թ.) նահանգն իր մեջ ընդգրկում էր նաև Շավշեթը, Ներքին Ջավախքը, Մանգլեացփորը, Քուիշափորը, Բողնոփորը, Խանցիխեն և Պարուարը[3]: 16 գավառների ընդհանուր տարածքը 16,5 հազ. քառ. կմ-ից ավելի էր:

Գուգարաց գավառներից Ջավախքը հիշատակվում է ութերորդը: Այս ընկած էր նահանգի կենտրոնական մասում և զբաղեցնում էր համանուն սարահարթի (Ախալքալաքի սարավանդ, Ջավախքի լեռնադաշտ) ու վերջինս շրջափակող լեռնակազմությունների տարածքը, հյուսիսից սահմանակցում է Թռեղքի (Թրիալեթ), արևելքից՝ Սոմխեթի ու Ջավախքի լեռներին (Կեչուտի, Աբուլ), իսկ հարավում՝ Ախալքալաքի սարավանդի շարունակությունը կազմող Աշոցքի սարահարթին[4]:

«Ջավախք» անվան մասին պատմագրության մեջ հայտնվել են տարբեր տեսակետներ: Ըստ վրաց «Քարթլիս Ցխովրեբայի» (Քարթլիի տարեգրությունը, նաև՝ Քարթլիի կյանքը) մատենագիր Լեոնտի Մրովելու՝ Կարի դաշտավայրը, Փոցխուլ գետի շրջատարածքը (պատմական Սամցխե գավառ. այժմ՝ Ախալցխա) և հարակից այլ հողեր ժառանգություն են հասել վրացիների նախահայր Քարթլոսի թոռանը՝ Ջավախոսին, Մցխեթոսի որդուն: Ջավախոսի անունից էլ երկրամասը կոչվել է Ջավախք, վրացերեն՝ Ջավախեթի: Սակայն այս «հիմնավորումն» իրավամբ համարելով առասպելական և խիստ պարզունակ, հետագայի ուսումնասիրողներից շատերը փորձել են գտնել ուրիշ բացատրություններ: Ոմանք, հաշվի առնելով Ջավախքում ցրտի անհեթեթու

---

[1] Ս. Ե ր ե մ յ ա ն, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 46:

[2] Նույն տեղում, էջ 110:

[3] Տաշիրը հիմնականում համապատասխանում էր Խորհրդային Հայաստանի Ստեփանավանի և Կալինինոյի (այժմ Տաշիր) շրջաններին, Թումանյանի շրջանի հարավային մասին, Կողբոփորը՝ Նոյեմբերյանի, Ձորոփորը՝ Թումանյանի մեծ մասին, Վերին Ջավախքը՝ Վրաստանի Հանրապետության Ախալքալաքի և Բոգդանովկայի (Նինոծմինդա), Թռեղքը՝ Ծալկայի, Մանգլեացփորը՝ Մանգլիս, Ծոբոփորը՝ Մառնեուլի, Բողնոփորը՝ Բոլնիսի շրջաններին: Հարավի Կղարջք, Արտահան, Շավշեթ և այլ գավառներ այժմ Թուրքիայի տարածքում են:

[4] Ջավախքի միջին բարձրությունը ծովի մակերևույթից 1800մ է: Ամենաբարձր գագաթն Աբուլն է՝ 3301մ.: Կլիման խստաշունչ է. ձմեռը՝ ցուրտ և երկարատև, ամառը՝ կարճատև ու զով (տարեկան միջին ջերմաստիճանը՝ 4-4,5 աստիճան): Գավառը հարուստ է լճերով՝ Փարվանա, Տաբածղուրի, Սաղամո, Խոզափին, Խանչալի, Մադաթափա և այլն: Լեռնադաշտը ծածկված է սևահողերով: Բացի հյուսիսային մասից, Ջավախքն անտառազուրկ է: Փարվանայից սկիզբ է առնում Կուրի աջակողմյան Թափարվան վտակը:

բարենպաստ կլիմայական պայմանները, նրա անունը կապում են վրացերեն *ջավի՝ գարի* բառի հետ: Ուրիշները ինարել են այդ տարածքում ջավախների էթնոս՝ ցեղ[5]:

Իրականում Ջավախք տեղանունը, ինչպես երևում է ուրարտական (Վանի թագավորության) արձանագրություններից, մ.թ. ա. 9-րդ դարի վերջից Հայկական լեռնաշխարհի հյուսիսում հիշատակվող Զաբախա կամ Զաբախյան երկրի անվան տասադարձված տարբերակն է՝ *Զաբախա-Զաբախա-Ջավախա-Ջավախք*[6]: Արգիշտի Ա-ի (մ.թ.ա. 786-764թթ.) թողած Խորխորյան արձանագրության մեջ՝ 785-784թթ. գրավված Դիաուխի կամ Դայա (Տայք), Տարիունի (Դարույնք՝ Բասեն) և այլ երկրների թվում նշվում է Զաբախսան: Վերջինս հիշատակվում է նաև ուրարտական հաջորդ մի քանի թագավորների թողած արձանագրություններում: Թեև Ջավախքի մասին մ.թ.ա. 8-րդ դարից ավելի վաղ հիշատակություններ չկան, սակայն, ուսումնասիրելով մինչուրարտական շրջանը, կարելի է ենթադրել, որ այն կամ վարչականորեն մաս է կազմել մ.թ.ա. 2-րդ հազարամյակում գոյություն ունեցած հայկական պետական կազմավորումներից մեկի, ամենայն հավանականությամբ Հայասայի և Էթիունիին, կամ էլ եղել է բավական ընդարձակ ինքնուրույն կազմավորում՝ ընդգրկելով հետագայի Գուգարք աշխարհի ամբողջ արևմտյան հատվածը: Ավելի հավանական է երկրորդ տեսակետը. պատահական չէ, որ Արգիշտիի վերահիշյալ արձանագրությունում Զաբախան հիշատակվում է իբրև գրավված երկիր: Նշանակում է՝ մինչև մ.թ.ա. 8-րդ դարի սկիզբը Ջավախքը եղել է ինքնիշխան ցեղապետություն և այդ ժամանակ որպես հայ էթնոսով բնակեցված տարածք, միավորվել է Վանի միասնական թագավորության մեջ՝ կազմելով նրա հյուսիս-արևմտյան ամենաընդարձակ ու սահմանամերձ նահանգը[7]:

Հետուրարտական՝ Երվանդունյաց Հայաստանի ժամանակաշրջանից (մ. թ. ա. 6-2-րդ դդ.) Ջավախքի մասին ուղղակի տեղեկություններ գրեթե չկան: Միայն կարելի է վկայակոչել առասպելախառն, բայց ուշագրավ երկու հիշատակություն՝ Մ. Խորենացու «Հայոց պատմությունից» և «Քարթլիս Ցխովրեբայից»: Պատմահայրը նշում է, որ Վաղարշակ Ա-ն «զկէս մասինն Ջավախաց» ժառանգություն է տալիս Շարայի ցեղից Գուշարին և նրան նահանգի վրա կարգում բդեշխ՝ Հայոց երկիրը հյուսիս-կովկասյան լեռնականներից պաշտպանելու համար[8]: Հավաքական ու կիսառասպելական կերպար Վաղարշակի այս ձեռնարկումը ուսումնասիրողներից շատերը վերագրում են մ.թ.ա. 3-րդ դարին: Ստացվում է, որ այդ ժամանակ Ջավախքը եղել է Երվանդունիների պետության կազմում և տրվել է Գուշարին, որի անվան հետ է կապվում Գուգարք տեղանունը՝ այսինքը, երկրամասը դադարել է ընդարձակ նահանգ լինելուց և մասն է նորաստեղծ Գուգարք սահմանակալ բդեշխության մեջ, ընդ որում, իր հերթին տրոհվելով երկու մասի՝ Ջավախք Վերին և Ջավախք Ներքին: Վերին Ջավախքը նույնանում է Խորենացու նշված «կես մասինն Ջավախաց» տարածքի հետ, քանի որ տրվել է հարևան Շարայի՝ Շիրակի գավառին: Ներքին Ջավախքը աղբյուրներում չի հիշատակվում: Սակայն եթե կար Վերինը, որը գավառի բարձրադիր հարավային և հյուսիսարևելյան մասն էր, նրա համեմատությամբ ցածրադիր արևմտյան և հյուսիսարևմտյան հատվածը, բնականաբար, պետք է կազմեր Ներքին Ջավախքը[9]:

---

[5] *13-14-րդ դդ. Պատմիչ Ստ. Օրբելյանն ընդհակառակը՝ երկրի անունից բխեցնում է բնակիչների՝ ջավախուրների անունը: Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմությունը, Եր., 1986, էջ 303:*

[6] *Հ. Կ ա ր ա գ ե ո զ յ ա ն, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, հ. I, գիրք 1, Եր. 1998, էջ 94, 132,195,203-204 և Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. Ա, Ուրարտական աղբյուրներ. Եր., 1981,էջ 58,67:*

[7] *Ս.Ե ր ե մ յ ա ն, Ուրարտու պետությունը, քարտեզ. Հայ ժողովրդի պատմություն, ՀՀ ԳԱԱ հրատ., հ. Ա,Եր. 1971:*

[8] *Մ. Խ ո ր ե ն ա ց ի, Պատմութիւն Հայոց. Վենետիկ, 1881, գիրք Բ, գլ.Ը, տե՛ս նաև Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 35:*

[9] *Վերին Ջավախքը, որն այժմ համընկնում է Ախալքալաքի և Նինոծմինդայի վարչական շրջանների հետ, զբաղեցրել է մոտ 2700 քառ. կմ տարածք, իսկ Ներքին Ջավախքը՝ ներկայիս Ասպինձայի՝ պատմական Ասպնջակի շրջանը և Արտահանի հյուսիսային մասը, կազմել է մոտ 1400քառ. կմ: Տե՛ս Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 78:*

Հատկանշական է, որ Խորենացու վերոհիշյալ վկայությունը մ.թ.ա. 3-րդ դարում Ջավախքի մասին ձևափոխված «վրացական» տարբերակով բերվում է «Քարթլիս Ցխովրեբայում», որի համաձայն, ինչպես վերը հիշատակվեց, այն բաժին է ընկել այս կամ անգամ Ջավախոսին: Բանն այն է, որ մ.թ.ա. 270-ական թթ. Մեծ Հայքի հյուսիսային հարևանությամբ կազմավորվել է Վրաց Փառնավազյան պետությունը (Իբերիա, Վիրք), որը, օգտվելով հայ Երվանդունիների հակառակորդ Սելևկյանների օժանդակությունից, հայոց երկրից գրավել և անջատել է Գուգարքն ու Ջավախքը, ինչպես և հարակից այլ շրջաններ: Այդ ժամանակ Ջավախքի կենտրոնը Ծունդա[10] ամրոցն էր, որը հայերը կոչում էին Քաջատուն կամ Քաջաց քաղաք: Վերը թվարկված տարածքները վրացիներից հետ վերցնելու մասին վկայում է նույն հեղինակ Ստրաբոնը: Նա գրում է, որ մ.թ.ա. 2-րդ դարում հայոց Արտաշես թագավորը (189-160), ի թիվս այլ հողերի, իբերներից գրավել (այն է՝ վերադարձրել է -Ա.Մ.) և իր երկրին է միացրել Գոգարենեն՝ Գուգարքը[11]: Նույն վկայությունը մեկ այլ խմբագրությամբ հանդիպում է նաև վրացական աղբյուրներում: Ըստ Լեոնտի Մրովելու, քարթվելները՝ վրացիները, Ջավախեթը գրավելու համար Արտաշեսի դեմ պայքարում դուրս են բերել օսերին[12], հայկական աղբյուրներում հիշատակվող ալաններին: Կնշանակի, հայ - ալանական պատերազմը, որի մասին պատմում է Մ. Խորենացին «Արտաշես և Սաթենիկ» հայտնի առասպելում, ընթացել է նաև Ջավախքի համար: Արտաշեսը կարողանում է ոչ միայն հետ վերադարձնել հայկական հողերը, այլև իրեն ենթարկել Վրաց փոքրիկ թագավորությունը: Փաստորեն այդ ժամանակ Գուգարքի բդեշխին է անցնում վրաց գահը: Զարմանալի չէ, որ հետագայի որոշ հեղինակների մոտ հանդիպում ենք «բդեշխ գուգարացոց և վրաց» արտահայտությանը:

Արտաշեսյանների և Արշակունիների ժամանակաշրջանում ևս Ջավախքի վերաբերյալ հիշատակությունները աղքատիկ են, և գավառի մասին պատկերացում կարելի է կազմել հիմնականում ամբողջ նահանգի՝ Գուգարքի միջոցով: Վերջինս մինչև Արշակունիների անկումը՝ 428թ., շարունակել է մնալ իբրև Մեծ Հայքի հյուսիսային պաշտպանական նահանգը և նրանից չի անջատվել նույնիսկ մ.թ. I դարի առաջին կեսին (1-52թթ.), երբ հայոց գահին, ի թիվս այլ օտարների, բարձրացել էին նաև վրացիներ:

Խնդրո առարկա գավառին վերաբերող ժլատ հիշատակումներից, թերևս ամենաարժեքավորը, որը նրա ժողովրդագրական վիճակի գողտրիկ վկայություն է, պատկանում է վրաց տարեգրի գրչին: Ըստ ավանդության, Հռիփսիմյան քրիստոնյա քարոզիչ քույրերից Նինոն՝ հայկական աղբյուրների Նունեն, Հայաստանից դիմում է անցնել Վրաստան և լինում է Ջավախքում, որտեղ Փարվանա լճի ափին հանդիպում է Մցխեթցի հովիվների և, նրանց հետ խոսելով հայերեն, կարողանում է պարզել Մցխեթ տանող ճանապարհը[13]: Այս նույն վկայությունը որոշակի պարզություն է մտցնում երկու կարևոր հարցերում: Նախ, որ Նունեն մինչև Վիրք անցնելը եղել է Հայաստանում, ծանոթացել հայերենին և, ի թիվս այլ քարոզիչների, այնտեղից քրիստոնեություն է տարածել վրաց աշխարհում[14]: Երկրորդ՝ Ջավախքի գործածական լեզուն հայերենն էր, այն հայտնի էր, այլապես Մցխեթից եկած հովիվների համար անհրաժեշտություն չէր լինի սովորելու հայոց լեզուն:

Արշակ Բ-ի օրոք (350-368) Գուգարաց նահանգն ապստամբում է և հարում վրաց թագավորին: Պապ թագավորի հրամանով Մուշեղ սպարապետը հետ է գրավում Գուգարքը, պատժում բդեշխին ու նրան օժանդակած իշխաններին և վերականգնում

---

[10] *Ծունդան հաճախ նույնացվել է այժմյան Ախալքալաքի Սուլդա գյուղի հետ: Ոմանք էլ այն տեղադրել են Կուրի ձորում՝ Նաքալաքև գյուղի տեղում:*

[11] *Ս տ ր ա բ ո ն, Օտար աղբյուրները հայերի մասին, հ.1, Եր. 1940, էջ 54-57: Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, էջ 196:*

[12] *Քարթլիս Ցխովրեբա (Քարթլիի տարեգրությունը), հ.1, Թբիլիսի, 1955, էջ 48-49 (վրացերեն):*

[13] *Նույն տեղում, էջ 85-86:*

[14] *Պատահական չէ, որ ըստ պատմագիրների, վրաց Միրիան (Միհրան) թագավորը 320-ական թթ. Հայոց Տրդատ Մեծի օրինակով և օժանդակությամբ է քրիստոնեական դարձի բերել վրաց ժողովրդին:*

հայ-վրացական սահմանը՝ Կուր գետը. «… զհին սահմանսն, որ յառաջուն էր լեալ յերկիրն Հայոց ընդ յերկիրն Վրաց, որ է ինքն մեծ գետն Կուր»[15]:

Ուշագրավ է, որ գտնվելով Գուգարքի կազմում, Ջավախքը 3-4-րդ դդ. պահպանում էր իր ներքին ինքնուրույնությունը: Այստեղ իշխում էին Վարժավունի[16] նախարարական տան ներկայացուցիչները: Արշակունյաց Հայաստանի կյանքում վերջիններս ունեցել են իրենց ուրույն տեղը: «Գահնամակում» Վարժավունիները 70 նախարարների թվում հիշատակվում են 20-րդը: Պատերազմում Հայաստանի 4 զորավարություններից Արևելյան ուղղության գործերի մեջ նրանք ունեցել են 200 զինվոր[17]:

387թ. Հայաստանի բաժանումից հետո Արշակունիների ազդեցությունը Գուգարքի և Ջավախքի վրա զգալիորեն թուլացավ, իսկ 428թ. հայոց թագավորության կործանումից հետո նրանք միացվեցին Սասանյան Իրանի տիրապետության տակ կազմավորված վրաց մարզպանությանը, ճիշտ այնպես, ինչպես նույն ժամանակ Արցախը կցվեց պարսկատեսչական մեկ այլ մարզի՝ Աղվանքին:

Ինչպես ամբողջ Հյուսիսային Հայաստանը, Ջավախքը ևս պարսկական լծի տակ մնաց մինչև 7-րդ դարը՝ արաբական արշավանքները: 7-րդ դարի հեղինակ Հովհան Մամիկոնյանի «Պատմություն Տարոնի» երկում, արաբական արշավանքների առիթով, նորից հանդիպում ենք Ջավախքի մասին հիշատակության: Պատմիչը վկայում է, որ արաբ զորավար Աբդռահիբը 7-րդ դ. կեսերին ասպատակել է Հայաստանի գավառները՝ Հարքը, Բասենը, Ջավախքը, անցել Վիրք, և ավարով վերադարձել Արաբիա[18]: Այստեղ հատկանշականն այն է, որ Ջավախքը թվարկվում է գավառների շարքում, իսկ հետո նոր միայն նշվում է Վիրքը: Նշանակում է՝ 7-րդ դ. 40-50-ական թթ.՝ արաբական առաջին արշավանքների շրջանում, այս գավառն արդեն ոչ թե Վիրքի, այլ Հայաստանի կազմում էր:

Ջավախքը արաբական տիրապետության տակ մնում է մինչև 9-րդ դ. վերջը, երբ Բագրատունյաց Սմբատ Ա-ն (890-914), Հովհաննես Դրասխանակերտցի պատմիչի վկայությամբ «երթեալ չուէ զկողմամբք Գուգարաց՝ և զայնս ևս ամրոցս իւրոյ աէրութեանն առեալ արկ յինքն գրավէր նուաճէր»[19]:

10-րդ դ. 70-80-ական թթ. Գուգարքի մեծ մասը մանում էր Լոռվա կամ Կյուրիկյան (նաև՝ Գուգարքի, Ձորագետի) թագավորության տարածքի մեջ: Վերին Ջավախքը, հավանաբար նրա հարավային մասը՝ Գոգշենը[20], որոշ ժամանակ դեռ մնում է Բագրատունիների ազդեցության տակ, իսկ Ներքին Ջավախքը 10-րդ դ. վերջին գրավում են հեռավոր եգորացող վրաց Բագրատունիները: 11-րդ դ. սկզբին նույն ճակատագրին է արժանանում նաև բուն Վերին Ջավախքը: Շատով վրաց թագավորները Ջավախքն ու նրան հարևան Սամցխեն[21] վերածվում են իրենց թագավորության հարավում ընկած ուժեղ պաշտպանական գավառների՝ կենտրոնախույս ուժերի, Բյուզանդական կայսրության, մի փոքր ավելի ուշ՝ սելջուկ-թուրքերի դեմ: Բագրատ Գ-ն 11-րդ դ. սկզբին կառուցապատում ու ամրացնում է գավառի բնակավայրերից մեկը և կոչում Նոր Քաղաք, վրացերեն՝ Ախալքալաք (ախալի՝ նոր, քալաքի՝ քաղաք): Բագրատ Դ-ն 1044-1047թթ. Լիպարիտ Օրբելյանի դեմ պատերազմի ժամանակ Թափարվան գետի և նրա ձախակողմյան Քառասունաղբյուր վտակի գոյացրած թերակղզու մասում կառուցում է Ախալքալաքի բերդը: Վրաստանից այստեղ են բերվում որոշ թվով վրացի վերաբնակիչներ:

---

[15] Փ. Բ ո ւ զ ա ն դ, Պատմություն Հայոց, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Եր., 1987, էջ 322:

[16] Ենթադրվում է, որ Վարժավունիների անունից է ծագել հետագայի Վարժիա քաղաքի (10-13-րդ դդ.) անունը (ներկայիս Ասպինձայի շրջանում):

[17] Ն. Ա դ ո ն ց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987, էջ 282,294, հմմտ. Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 424-425:

[18] Հովհան Մամիկոնյան, Տարոնի պատմություն, Եր.,էջ 114: Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, էջ 682:

[19] Յոհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 244:

[20] Այժմ Ախալքալաքի հարավում կա Գոգաշեն անունով գյուղ:

[21] Սամցխե կամ Մեսխեթ գավառը համապատասխանում է ներկայիս Ախալցխայի և Ադիգենի վարչական շրջաններին:

Վրաց տիրապետությունը երկար չի տևում: 1064թ. Հայաստանն ու Վրաստանը ենթարկվում են սելջուկյան ասպատակություններին: Այդ թվականին սուլթան Ալփ-Արսլանը «... և իջեալ բանակեցաւ ի գաւառն, որ կոչի Ջաւախս (Ջավախք - Ա.Մ.), - գրում է պատմիչ Մատթեոս Ուռհայեցին,- և պաաերազմաւ մեծաւ պատեաց զքաղաքն, որ կոչի Ալախի (Ախալ-քաղաք -Ա.Մ.) և ուժգին զօրութեամբն առաւ Ալախ քաղաքն. և առ հասարակ զամենայն քաղաքն սրով կոտորեաց՝ զայր և զկին՝ անողորմ և զամենայն քահանայսն և զկրօնաւորսն և զիշխանսն սրախողխող արարեալ. և լցաւ ամենայն քաղաքն արեամբ. և անհամար մանուկս և աղջկունս տարան ի Պարսիկս ի գերութիւն, և զանձս ոսկւոյ և արծաթոյ՝ ակունց և մարգարտացն որ ոչ էր թիւ»[22]: Նույն իրադարձության մասին հիշատակում է նաև Վարդան պատմիչը. Տուղրիլի եղբորորդին՝ Ալփ - Արսլանը «...եկն դարձեալ եւրիւր հազարաւ, եւ առ զնոր քաղաք. զոր Վիրք Ախալ - քաղաք ասեն»[23]: Պատմիչների այս վկայությունից երևում է, որ 11-րդ դարի կեսերին իբրև վարչական կենտրոն Ծունդային փոխարինած Ախալքալաքը սարսափելի կոտորածների ու բռնազաղթի հետևանքով կորցրել էր իր բնակչության զգալի մասը:

12-րդ դարի սկզբին վրաց Դավիթ Շինարարին (1089-1125) հաջողվում է սելջուկ-թուրքերից ետ գրավել Լոռին ու Ջավախքը: Սակայն ամբողջ 11-րդ դարի ընթացքում այն, ի թիվս այլ գավառների, ձեռքից ձեռք է անցնում: 1175թ. օգոստոսին Գանձակի սուլթան-աթաբեկ Ելդկուզի զորքերը ասպատակում են Ջավախքն ու Թռեղքը: Գեորգի Գ-ն (1156-1184) խուսափում է ճակատամարտից և չի կասեցնում սելջուկների գործողությունները[24]: Անին ու Շիրակը ավերելուց հետո Ելդկուզը «...ընդ նմին աւերէ զԱխալ քաղաք և զՋավախեթ և առժամայն դառնալով ի Դուին, սատակի ինքն և սուլտանն և այլ բազումք ի մեծամեծաց»[25]: Միայն XII դարի վերջին, Թամար թագուհու (1184-1213) պատմիչի վկայությամբ, սելջուկների նկատմամբ Զաքարե և Իվանե Զաքարյանների տարած հաղթանակներից հետո Վրաստանին է ենթարկվում Ջավախքից մինչև Սպեր ընկած տարածքը[26]:

Այս շրջանում շարունակվեցին քարթվելական (վրացական) էթնիկական նոր խմբերի ներթափանցումները Ջավախք, այնտեղ ուղղափառության՝ վրացադավանության տարածման դեպքերը, երևույթներ, որոնք վրաց Բագրատունիների ուժեղացման ժամանակաշրջանում (XIIդ. - XIIIդ. սկիզբ) եսականշական էին ոչ միայն Ախալքալաքի, այլև հայ- վրացական զինակցության շնորհիվ Վրաստանին անցած Հյուսիսային Հայաստանի մյուս գավառներին: Այսուհանդերձ, այդ գավառներից Լոռին, Սամցխե-Ախալցխան, Տաշիրը, Սևանի շրջակա գավառները, ինչպես և Ջավախքը շարունակում էին գերազանցապես մնալ հայաբնակ: Պատահական չէ, որ այդ տարածքները վրաց արքունիքը հանձնեց հայ Զաքարյաններին, որոնք Վրաստանի հովանավորության ներքո սաեղծեցին իրենց իշխանապետությունը:

Թամար թագուհու պատմիչը գրում է, որ Ջավախքում կուսակալներ էին Սարգիս Երկայնաբազուկ Թմոգվելին (Թմոգվեցի) և Շալվա Թորելին (Թորեցի): Առաջինը նստում էր Թմոգվի, հայկական՝ Թմուկ կամ Թմկա բերդում, որը գտնվում էր Կուրի ձորում, Ծունդա ավանից ոչ հեռու, իսկ երկրորդը՝ հավանաբար Թորեա գյուղում:

---

[22] *Մ ա տ թ է ո ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի, ժամանակագրություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի, Եր., 1991, էջ 158:*

[23] *«Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն Տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 136: Վարդան պատմիչի այդ վկայությունից հետևում է, որ հայերը քաղաքը կոչել են ոչ թե վրացական ձևով Ախալքալաք, այլ՝ Նոր քաղաք: Փաստորեն նույն միտքը կա նաև Ուռհայեցու մոտ, որը գործածվում է միայն Ախալ՝ նոր տեղանունը: Չպետք է մոռանալ, որ Ախալ և քաղաք բառակապակցության մեջ վերջին բառը միայն վրացերեն չէ. քալաքը նաև հայկական քաղաք բառն է:*

[24] *Հ. Մ ա ր գ ա ր յ ա ն, Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Եր., 1980, էջ 18-19:*

[25] *Մանր ժամանակագրություններ, հ.2, Եր., 1956, էջ 502, հմմտ.՝ Սա. Օրբելյան, ժամանակագրութիւն, Եր., 1942,էջ 18-19:*

[26] *Թամար թագուհու կյանքը, Վրացական պատմական գրականության հուշարձանները, հ.5, Թբիլիսի, 1985, էջ 37,46 (ռուսերեն):*

Այն, որ Ջավախքում եղել են երկու կուսակալներ՝ գավառապետեր, պատահական չէ: Նշանակում է շարունակում էր պահպանվել գավառի նախկին վարչական բաժանումը: Թորևցիները նույնպես ենթարկվում էին Թմկաբերդի Զաքարյաններին: Ախալքալաքը, որն օգավում էր քաղաքային ինքնավարությունից, ամբողջ գավառի վարչական ու անտեսական կարևորագույն կենտրոնն էր:

XIIIդ. 20-ական թվականների կեսերին Ջավախքը ենթարկվեց միջինասիական տիրակալ Ջալալեդդինին, իսկ 30-ականներին՝ մոնղոլների ասպատակություններին[27]: Սակայն մի քանի գավառներում, այդ թվում նաև Ջավախքում, Զաքարյանների ինքնավար վիճակը պահպանվեց: Շառ 1245թ. նոր վարչական բաժանման՝ մոնղոլների հսկողությամբ Ջավախքը թողնվեց Թորեցիներին: 1266թ. Թմկաբերդի տեր Սարգիս Ջաղեցին, օգտվելով վրաց թագավորների և մոնղոլների հակամարտությունից, կարողացավ հիմնադրել մի ընդարձակ իշխանություն՝ Տաշիրից մինչև Էրզրում, Սամցխեի աթաբեկություն անունով, որն իր մեջ ընդգրկեց նաև Ջավախքը: Մինչև XIVդ. սկիզբը, մոնղոլներին որոշ քանակությամբ հարկեր վճարելով, Հայաստանի հյուսիսում և հյուսիս-արևմուտքում կազմավորված, հիմնականում հայաբնակ այս իշխանությունն իր ինքնուրույնությունը պահպանեց մինչև 1535թ.՝ պայքար մղելով Քարթլիի, Լենկ-Թեմուրի, նրա հաջորդների՝ Թեմուրյանների, XVդ-ից՝ թուրքմենական կոյունլու ցեղերի դեմ: Ինչպես Բագրատունիների, Զաքարյանների, այնպես էլ վերջիններիս հաջորդներ Ջաղեցիների օրոք, հայ մշակութային կյանքը Ջավախքում զգալի վերելք ապրեց, որի պերճախոս վկայություններն են պահպանված բազմաթիվ հայկական ճարտարապետական կոթողները[28]:

XVդ. վերջից Ջավախքը հայտնվեց զանազան նվաճողների տեսադաշտում: 1484թ. պարսից Յաղուբ խանի զորքերը ավերեցին այն , կոտորեցին ու գերեվարեցին բնակչությանը, իսկ գավառը կրակի մատնեցին[29]: 1535թ. Իմերեթխալի ու Քարթլիի թագավորները համատեղ ջանքերով պարտության մատնեցին Սամցխեի աթաբեկի զորքերին և տիրեցին Ախալքալաքին ու Ախալցխային: Սակայն Սեֆյան Իրանի դեմ պատերազմների ընթացքում 1547թ. օսմանյան թուրքերը գրավեցին այդ քաղաքները: 1555թ. Ամասիայում կնքված պարսկա-թուրքական հաշտությամբ Ջավախքն անցնում էր Պարսկաստանին: Սակայն 1578թ. պատերազմը վերսկսվում է, թուրքերը նորից ներխուժում են Ջավախք և շուտով այն մտցնում նորաստեղծ Չլդըրի, հետագայում՝ Ախալցխայի նահանգի (Էյալեթ, վիլայեթ) մեջ՝ 1637թ. այն վերածելով ինքնուրույն գավառի՝ սանջակի:

Նվաճված տարածքներում օսմանցիներն անցկացնում են աշխարհագիր՝ անդի բնակչությանը հարկման ենթարկելու նպատակով: XVIդ. վերջին կազմված թուրքական հարկացուցակներից մեկն արժեքավոր տեղեկություններ է պարունակում Ախալքալաքի գավառի ժողովրդագրական իրավիճակի մասին: «Գյուրջիստանի վիլայեթի ընդարձակ դավթար» կոչվող այդ փաստաթղթում թվարկվում են գավառները՝ իրենց գյուղերով և նրանցում ապրող մարդկանց անվանացանկերով: Պարզվում է, որ Ախալքալաքի բնակավայրերի մեծ մասում բնակիչները քրիստոնյաներ էին և կրում էին հայկական ու վրացական կամ հայերի և վրացիների մեջ մեծ տարածում գտած անուններ: Հայկական կամ հայերի կողմից լայնորեն գործածվող անուններ հանդիպում ենք հետևյալ գյուղերում.

---

[27] *Վրաց ժամանակագրություն (1207-1318), թարգմանությունը հին վրացերենից Պ. Մուրադյանի, Եր., 1971, էջ 66,73:*

[28] *Ե. Լալայանը XIXդ. վերջին ականատես է եղել այդ ժամանակաշրջանին վերաբերող բազմաթիվ խաչքարերի (Ե. Լալայան, Երկեր, հ.1, Եր., 1983, էջ 55): Դրանց մի մասն ուսումնասիրվել է Ս. Կարապետյանի կողմից, (Ս. Կարապետյան, Ջավախքի խաչքարերը, Եր., 1995) Ծունդայում, Թմկաբերդում և այլուր հայանարերված XIV-XVդդ. հայերեն արձանագրություններ ունեցող խաչքարարի մասին աշխատություններ ունի նաև վրաց պատմաբան Լ. Դավլիանիձեն (տե՛ս Արտանուջի ամսագիր, Թբիլիսի, 1998, 7, էջ 19,58 (վրացերեն):*

[29] *Ս. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1902, էջ 62:*

Կսկիա	Ռուբեն,Ռուսեբ (Հովսեփ)
Օրջա	Հանես Իշխանի, նրա եղբայր Սարգիս, Սիմոն
Կոթելիա	Զաքար
Բարալեթ	Միաիչի (Մկրտչի) թոռ, նրա որդի Սարգիս
Կուրցխ	Սաաուրի (Սանսուր) որդի Սարգիս, Ավագ
Վաչիան	Քարոբ
Քարծեփ	Բայանդուր
Հոկամ	Մանվել Սարգսի
Քիլդա	Խաչատուր
Վերին և Ներքին Խոսսլիաներ	Միտիչ(Մկրաիչ)Տեր-Բելլի, Խոսիկ-Հուսիկ, Սահակ
Ջիգրաշեն	Զաքարի թոռ
Մեծ Սաջապիա	Հակոբ
Նաքալսքև	Հավաթեղ Կարապետի
Կորխ	Լոառոմ, նրա որդի Կիրակոս,Շահարա Մկլաիչի, Հանես Սարգսի, Կիրակոս Ասփա/ծա/տուրի
Գումրուրդո	Խարաբայի որդի Դավիթ, Մկրափչ՝ Ամիրխանի որդի, Յարալ Կիրակոսի, Շահկուլի որդի Աբրահամ, Սանուկ
Օլավերդ	Աբաս
Խուլգումու	Աալա/ծա/տուր, Արտաշես
Հեշտիա	Տեր-Հակոբ
Մեծ Խոբենյա և Չամդուրա	Գրիգոր, նրա եղբայր Մւաե, Սահակ Գրիգոյի, նրա եղբայր Սարգիս, Տեր-Հակոբ
Օրջա	Վուերամ, Սարգիս, Եղիազար
Զրեսկ	Շահմուրադ, Ռոտեի (Հովսեփ), Սիմոն, Սամսոն, Ասփս/ծա/սաւր
Ղաուբմա	Սարգիս
Բավրա	Բայանդուր
Թորիա	Առաքել,Բայանդուր, Ջանիբեկ Սարգսի, Մկրաիչ
Աբուլ	Եղիազար, Դավիթ, Սարգիս
Ախալքալաքի բերդ	Սուրադ, նրա եղբայր Զաղիկ
Փոքր Մուրջախեթ	Հանես Սարգսի
Փոքր Սամզարա	Դոլիկ Ասլա/ծա/տուրի
Ծունդա	Ջոջիկ Ջեանշեի,նրա եղբայր Սանուկ
Սուլդա	Շերմազան, նրա որդի Սիմոն
Էրինջա	որդի Եղիազարի, նրա եղբայթ Մանաս, Հակոբ
Խոզաբուն (Խոզափին)	Մւսնուկ Աալա/ծա/աուրի
Արագսփա	Սարգիս
Ափնիա	Արաս
Բեժանո	Խիմոն
Ալասաան	Արզումա
Լոմատուրցխ	Ալիրեկի որդի Ռոառոմ
Զակ	Եղիազւսր, Ռոտեփ-Հոսեփ
Բուռնաշեթ	Սարգիս և այլն:

Ուշագրավ է , որ կտն նաև բնակավայրեր, որոնց բնակչության ճնշող մեծամասնությունը հայեր են: Այսպես. նշանավոր *Թմուկ (Թմոգվի)* բերդաքաղաքն ըստ նույն աղբյուրի գերազանցապես հայաբնակ էր: Այնաեղ հանդիպում ենք հետևյալ անուններին. Սարգիս Առաքելի, Ռոստամ, Անանիայի որդի, նրա եղբայր Մկրտիչ, որդի Վարդանի, որդի Եղիգարի, Հովհաննես Բայանդուրի, Պապու Շիրինի, Բերիկ Փիրազիզի, նրա որդի Մկլաիչ, Մուրադ, Տեր-Հակոբ, Բերիկ Սուրադի, նրա եղբայր Մարգար, Սարգիս Մելիքի և այլն: Զուտ հայաբնակ էր Չլդրի գավառի Քենարբել գյուղը՝ Ծառուկի որդի, նրա եղբայր Ասփս/ծա/աուր, Մարգարի որդի, Ղուլիջանի որդի Ներսես (Ներսես), Միտիչի որդի, նրա եղբայր Սարգիս, Մուրադ Կարապետի, Մարտիրոս Ալանեսի, Հովհաննես Ամիրազիզի, նրա եղբայր Կարապետ, Խաչիկ Համբարձումի, Թու-

նիկ Ծառուկի, Խաչատուր Ալեքսանի, Սարգար, Պապու Մարգարի և այլք: Հայաշատ էին նաև նույն գավառի *Մեծ* և *Փոքր Կարծախ* գյուղերը՝ Նաղար Շահնազարի, Վարդան, Գրիգոր Սուքիասի, Ջհանշե Կիրակոսի, Մկրաիչի որդի, նրա եղբայր Վարձկլ, Բայանդուր, Խաչիկ Յարալի, որդի Սաեալի, որդի Անառնի, Յարազիզ Տեր-Հակոբի, Սարգիս, Ասլա/ծա/առւր, Դիարբեկ Սահալի, նրա եղրայր Ասլա/ծա/առւր և այլն[30]: Հատկանշական է , որ վերոհիշյալ անունների մեջ բազմիցս հիշատակվում է Տեր-Հակոբ անունը, խկ Խոսալիայում՝ Տեր-Բեկը, ինչը վկայում է տվյալ թնակավայրում հայ քահանայի, այն է՝ նաև հայկական ծխի ու եկեղեցու առկայության մասին:

Հետագա դարերում օսմանյան երկարատը ու դաժան տիրապետության ընթացքում խնդրո առարկա գավառը ևս զերծ չմնաց բնակչության բռնի մահմեդականացումից: Իսլամ ընդունեց հայության հատկապես այն հատվածը, որը վրաց գերիշխանության շրջանում դարձել էր քաղքեդոնական[31]: Իսլամացած այդ տարրերը արդեն 17-18-րդ դդ. եկվոր թուրքերի հետ Ախալցիխայում, Աղիգենում, ավելի քիչ՝ Ախալքալաքում հայանի էին ընդհանուր «մեսխեթցի»[32] աշխարհագրական անունով: Այսպես, ըստ վրաց հեղինակ Վախուշտ Բագրատիոնի, 18-րդ դ. 40-ական թթ. Ախալքալաքի գավառի Բարալեթ և Կոլիա հայտնի բնակավայրերի եիմնակւսն բնակիչները մեսխերն ու հայերն էին:[33] Թեև քրիստոնյաների համեմատությամբ մահմեդականները սակավաթիվ էին, սակայն օտար տիրապետության ավերիչ իրադարձությունները հող էին նախապատրաստում գավառի էթնիկական դիմախեղման համար: Հատկապես ծանր հետևանքներ ունեցավ 1730-ական թթ.կեսերին Նադիր խանի (հետագայում՝ շահ) արշավանքը: Հյուսիսային Հայաստանից գերված 6000 հայ բնակիչների նա բռնագաղթեցրեց Պարսկաստան: «... Եւ գերեցին զՆարինանու նահանգն, զՋաւախէթու, զՉլտրու, զՂայի Ղուլու, որք էին բովանդակ ի մեր ազգէ , - գրում է Աբրահամ Կրետացին,- Եւ քշեցին զայր ու զկին, զծեր և զաղայ և տարան ի Խորասան՝ թուով ՋՌ (6000) որպես և լսեմք»[34]: Այդուհանդերձ, ինչպես երևում է Ղուկաս Ինճիճյանի մի վկայությունից, 18-րդ դարի վերջին Ախալքալաքի գավառը շարունակում էր մնալ գերազանցապես հայարնակ երկրամաս: Միայն Ախալքալաք քաղաքում ապրում էին 600 ծուխ հայեր և վրացիներ[35]: Այսպիսի քաղաքական ու վարչաժողովրդագրական իրավիճակ էր Ջավախքում երբ Անդրկովկասի համար ակտիվ ռազմաքաղաքական գործունեություն ծավալեց Ռուսական կայսրությունը՛:

ИЗ ИСТОРИЧЕСКОГО ПРОШЛОГО ДЖАВАХКА

____*Резюме* ____ ____ *А. Мелконян*___

Джавахк-восьмой гавар исторической области Гугарк Великой Армении, с древнейших времен входил в состав первых государственных образований Армянского нагорья. Под названием "Забаха" этот гавар

---

[30] Գուրջիստանի վիլայեթի մեծ հարկացուցակը, գիրք 2, Թբ., 1941, էջ 191-243, 275-278 (վրաց.):

[31] Վրաստանում Հայաստանի անմիջական օժանդակությամբ քրիստոնեության տարածումից հետո վրաց եկեղեցին ընկավ հայ առաքելական եկեղեցու ազդեցության տակ՝ կազմելով նրա մի ճյուղը: Սակայն 607-608թթ. Վրաց կաթողիկոս Կյուրիոն Սկուարիեցին, քաղաքական նկատառումներով հասավ հայ-վրացական եկեղեցական պառակտմանը և նախընտրեց հունադավանությունը: Ջավախքի հայերը մնացին առաքելական եկեղեցու ենթակայության տակ և միավորվեցին գավառի Զրեսկ հոգևոր կենտրոնի (այժմ Զրես գյուղ) շուրջը: Վրաց Բագրատունիների հզորացման շրջանում վրացական եկեղեցին պարտադրեց Սամցխեի, Ջավախքի և պատմական Տայքի հայերի մի մասին ընդունելու քաղքեդոնականություն: 17-րդ դ. հեղինակ Հ. Կարնեցու վկայությամբ վերջիններս «ազգաւ և կրօնիւն վրացի (էին-Ա. Մ.), բայց հայի լեզուաւ խօսէին» (Մանր ժամանակագր., հ. Բ. Եր., 1956, էջ 554):

[32] Վրաց պատմաբաններն ու ներկայիս քաղաքական գործիչներն այդ անվանի մեջ էթնիկական իմաստ են դնում՝ փորձելով մեսխեթցիներին ներկայացնել իբրև զուտ վրացիներ:

[33] Քարթլիս Ցխովրեբա (Քարթլիի տարեգրությունը), հ. 4, Թբ., 1973, էջ 669-670 (վրացերեն):

[34] Աբրահամ Կրետացի, Պատմություն, Եր., 1973, էջ 67:

[35] Ղ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի.հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 124:

упоминается в клинописях царя Аргишти I в 785 г. д.н.э. Затем Гутарк и Джавахк остаются в составе Великой Армении в период правления Ервандидов, Арташесидов и Аршакидов. По сведениям грузинского средневекового историка Леонти Мровели, в начале IV века в Джавахке языком общения был армянский.

В период усиления грузинского царства Багратидов в числе других северных областей Армении этот регион переходит к Грузии, со второй половины XIII века – в состав княжества Самцхе-Саатабаго. В конце XVI века ахалкалакский гавар захватывают османцы. Турецкие налоговые реестры свидетельствуют, что в первый период османского господства как в Джавахке, так и в его соседних гаварах жители почти исключительно были христианами, в том числе армянами.

Ирина ДОЛЖЕНКО

ПРАВОСЛАВИЕ И ЦЕРКОВНОЕ ОБРАЗОВАНИЕ В ЭРИВАНСКОЙ ГУБЕРНИИ
(на примере Александропольского уезда)

Место и роль православной церкви в Эриванской губ. - неизученная страница в истории православия. Документальные источники, вводимые в научный оборот впервые, позволяют выявить различные направления ее деятельности, в том числе просветительское. Открытие школ, находившихся в ведении православного ведомства, играло определенную роль в повышении общего уровня культуры населения.

В Российской империи церковные школы появились в результате реформы духовного образования в 1808-1814 гг., однако до середины X1X в. численность этих школ и обучавшихся в них детей была невелика. На протяжении второй половины X1X в. отношение светских и религиозных властей к этим школам менялось. В 1860-е гг. они получили значительное развитие, число их достигло 18,5 тыс. Поворот к реакции после покушения на Александра II в апреле 1866г. коснулся в первую очередь образования: количество этих школ уменьшилось в четыре раза. Однако в 1880-е гг. позиция властей к ним опять претерпела изменения. В 1884 г. были изданы «Правила о церковноприходских школах», которые вводили стройную организацию системы образования на основе единой программы[1].

Появление при православных храмах Эриванской губ. церковных школ, основной целью которых являлось просвещение народа «верой и знанием», находилось в русле общероссийской политики развития церковного образования второй половины XIX в. Первая церковноприходская школа была открыта в 1862 (1864?) г. при православной церкви в с. Нижний Койласар Эриванского у., где проживало компактное ассирийское население, и долгие годы она была единственной в губернии школой подобного типа. Активный рост числа церковных школ начался с 1880-ых гг., в результате которого в начале XX в. в регионе действовало около 20 школ (в дальнейшем они стали называться училищами).

Церковные школы находились в ведении Грузинской епархии и непосредственно на местах подчинялись уездному наблюдателю церковных школ, назначаемому Епархиальным училищным советом из числа местных священнослужителей. Эти учебные заведения были двух категорий – церковноприходские школы и школы грамоты. В зависимости от срока обучения первые подразделялись на одноклассные школы с двухгодичным обучением (I и II отделения) и двухклассные с четырехгодичным (III и IV отделения). В отличие от них школы грамоты были одноклассными, что определяло меньший объем учебных программ. Разными были источники финансирования этих школ[2].

---

[1] *А.Ф е д о р о в, Церковноприходская школа в русской деревне в конце XIX - начале XX вв, - Православие и культура этноса, М., 2000, стр. 190.*

[2] *Церковноприходские школы содержались в основном за счет поступлений от Епархиального училищного совета и платы за обучение учащихся, а школы грамоты на деньги Общества восстановления православного христианства на*

В начале века в Александропольском у. действовало семь школ, из них три церковноприходские - в г. Александрополе (основана в 1880 г.), сс. Сисимадан и Алакилиса (в 1890-е гг.) и четыре школы грамоты - в сс. Баяндур (для девочек), Новоалександровка, Агин и Бугдашен (все в 1903 г.) Последние три школы просуществовали недолго: в конце 1900-х гг. в результате возвращения новообращенных армян в григорианство и католичество в этих селениях были закрыты православные приходы, а вместе с ними прекратили свое существование и школы. Среди церковноприходских школ Александропольская (с 1902г.) и Сисимаданская (с 1914 г.) были двухклассными.

Преподавание в школах велось на русском языке, что создавало немало трудностей для детей, слабо владеющих им. Тем не менее знание русского языка, придававшего человеку социальную значимость, являлось немаловажным фактором в привлечении в школы детей - выходцев из местных народов.

Церковным школам отводилась важная роль в деле религиозного воспитания подрастающего поколения и распространения православия среди представителей других вероисповеданий. Благодаря им пропаганда православия принимала регулярный, целенаправленный характер, а дети являлись благодатной средой, способной воспринимать православные обряды, запоминать молитвы и т.п. Знания, полученные в школе, они распространяли в своем окружении.

Религиозный характер образования определял и направленность обучения. Основным школьным предметом являлся Закон Божий. В зависимости от года обучения детей, определявшего уровень владения русским языком, уроки Закона Божьего заключались в заучивании молитв, заповедей, в знакомстве с содержанием Ветхого и Нового завета, с историей некоторых великих праздников. В числе предметов был церковно-славянский язык, его начинали преподавать во втором - третьем отделении. Уроки церковного пения, которому обучали «с голоса», состояли в разучивании религиозных песнопений.

Среди других школьных предметов были русский язык, чтение, арифметика, письмо, чистописание, рисование; во втором классе к этим предметам прибавлялись геометрия, история, география.

В школах уезда, где обучались греки, - Александропольской, Алакилисской и Сисимаданской был введен греческий язык (в течение всего периода обучения на него отводилось 4-5 часов в неделю).

Изучение родного языка одного из национальных меньшинств, проживавших в регионе, являлось особенностью церковного образования в Александропольском уезде. В других уездах губернии с компактным ассирийским или греческим населением родной язык в качестве школьного предмета не фигурировал.

Вероятно, преподавание греческого языка было введено в школах по настоянию общества православных греков г. Александрополя, а также при поддержке местного духовенства, среди которого было немало представителей греческой национальности. Сам настоятель Александропольского благочиния Григорий Василов, являвшийся одновременно заведующим гс-

Кавказе. Из церковных школ губернии лишь Александропольская содержалась на средства городской церкви св. Георгия, которая выделяла деньги на жалованье учителям, покупку книг, школьных пособий и т.д. Здание школы, построенное в 1901-1902 годы, также являлось церковной собственностью.

родской церковноприходской школы, был греком. Несмотря на то, что в 1900 г. наблюдатель церковных школ губернии посчитал изучение греческого языка «ненужным и излишним», преподавание его продолжалось.

По замыслу духовных властей, дети, получавшие образование в этих школах, должны были принимать участие в церковной службе, чтобы в будущем некоторые из них могли исполнять обязанности служителей православных храмов. «Дети близ солей и наиболее благонравные должны допускаться в алтарь для подавания ... кадила и выноса свеч, а наиболее успевшие к чтению часов (часослова - И.Д.), местопсалмия и даже (посланий - И.Д.) апостола; обладающие голосами должны петь на клиросах, составляя постоянный и правильно организованный хор, а также, по возможности, все дети должны общим хором выполнять некоторые богослужебные песнопения»[3]. Обычно этим правилам следовали в городских школах. Например, в Александропольском училище десять учеников участвовали в церковном хоре, столько же детей читали в церкви, а четверо прислуживали в алтаре[4].

Непременными обязанностями учащихся были ежедневная утренняя молитва в школе перед началом занятий, совершение таинств покаяния и причащения, а также регулярное посещение церкви в воскресные и праздничные дни в сопровождении заведующего школой и учителей. Однако в действительности учителя нередко уклонялись от посещения церкви вместе с воспитанниками, а священники отправляли богослужения «не благообразно и не по чину недостаточно истово и с произвольными сокращениями в молитвословиях и песнопениях»[5].

В 1900 г. епархиальные власти, обеспокоенные таким положением дел, выработали «Обращение к настоятелям приходских церквей, заведующим и учащим в церковных школах Грузинской епархии» за подписью экзарха, в котором выражалась тревога за падение авторитета церконоприходских школ прежде всего в плане «развития в детях разумного любовного отношения к святой церкви»[6].

Для усвоения идей православия, их понимания первостепенное значение имело знание учащимися русского языка. Все проповеди, поучения, внушения, само богослужение велись на русском языке, который дети плохо понимали. В то же время сами учителя и священники не знали местных языков. Языковые проблемы создавали значительные трудности и для учеников, и для учителей. В 1903 г. заведующий школою в с. Новоалександровка о. Иоанн (Лопухинов) докладывал начальству о результатах его занятий с армянскими детьми: «...прошедшую зиму изучали только порусски названия окружающих предметов, и речи не может идти о преподавании Закона Вожьего; пройдет еще немало времени, пока они будут понимать русскую речь». И далее: «Если бы я владел армянским языком, я мог бы с большим успехом знакомить их со священным писанием... К армянам необходим учитель из армян»[7].

---

[3] *Центральный государственный исторический архив Республики Армения (далее ЦГИА РА), ф. 19, оп. 1, д. 1435, л. 54об.-55.*

[4] *Там же, д. 181, л. 33.*

[5] *Там же, д. 1435, л. 54.*

[6] Там же, л. 55.

[7] *Там же, д. 1430, л. 100-100об.*

Для улучшения качественного преподавания предметов, особенно За Божьего, в 1900г. Епархиальным училищным советом было предложено ноучителям на первом году обучения знакомить детей с основами пр славного учения параллельно на двух языках - на русском и родном с чтобы на втором году обучения вести преподавание Закона Божьего уж русском языке «с необходимыми, впрочем, объяснениями на родном язы Это требование предполагало знание местных языков как священнослу телями православных приходов, являвшихся одновременно заведуюш школ и законоучителями, так и учителями.

Установка на привлечение образованных людей из местного населе знавших языки и обычаи народов края, принесла свои плоды. Уже в к XIX - начале XX в. среди трудящихся на религиозном поприще и просвещения значительную долю составляли уроженцы Закавказья – п ставители разных национальностей. Некоторые из них, получив начал образование в церковноприходских школах, продолжали обучение в Тиф ской духовной семинарии, Епархиальном училище, Эриванской учитель семинарии, Горийском духовном училище и др. и владели, кроме род русским, ассирийским, греческим или армянским языком, что помогало просветительской деятельности. Например, священник Политов, окорм ший православную паству в нескольких приходах уезда и преподававш Баяндурском земском училище, знал родной язык - греческий, а та русский, армянский и тюркский[9]. Личность учителя, пользующегося д рием и уважением местного населения, играла немаловажную роль в при чении в школы детей, что находит документальное подтверждение.В к учебного года проводились экзамены, по результатам которых учащ переводили на следующее отделение. Кроме этого, знания учащ регулярно проверялись уездным наблюдателем церковных школ Эриван губ. Свое заключение он излагал в отчетах, которые содержали интерес сведения о численности, национальном,социальном, конфессионально половозрастном составе учащихся[10].

В этническом отношении основной контингент учащихся православ школ уезда составляли греки, армяне и русские (последние являлись горо нами). Местонахождение школы определяло социальный состав учащи Естественно, в сельских школах учащиеся принадлежали к крестьянск сословию. Иным было положение в Александропольской городской шк где в 1900 г. из 53 детей основную часть составляли дети горожан - 35 или 66% (к сожалению, без указаний категорий населения). Следую группу составляли «солдатские дети»-15 чел., или 28,3%, что было обус лено военно-стратегическим значением Александрополя – местопребыва постоянного контингента войсковых подразделений. 3 ученика, или 5 были выходцами из духовного сословия[11]. В городской школе, в отличи сельских, соотношение учеников различных национальностей подверга сильным изменениям даже на протяжении нескольких лет. Так, в 1899/1

---

[8] *Там же, д. 1435, л. 28.*

[9] *Там же, д. 709, л. 13об., 28,70.*

[10] *Там же, д. 181, л. 1-30.*

[11] *Здесь и далее подсчеты произведены автором на основании документов из Ц РА, ф. 19, оп. 1, д. 181, л. 23-24об., 33-36.*

учебном году в Александропольской школе обучалось 53 человека, в том числе 40 армян (75,5%), 7 греков (13,2%) и 6 русских (11,3%).Однако уже в 1904 г. из 76 учащихся армян было всего 3 чел. (4%), русских же насчитывалось 54 чел. (74%), греков 19 (25%). Некоторое объяснение этому содержится в отчете о состоянии Александропольской школы. В нем отмечалось, что школа пользуется «большим сочувствием и доверием» со стороны местного населения, которые «охотно» посылают в нее своих детей для получения первоначального образования на русском языке. Однако после 1-2 лет учебы родители переводили их в другие учебные заведения, в которых школьные программы носили светский характер, что создавало больше возможностей для дальнейшего обучения. Постепенное увеличение греков среди учащихся (в 1917 г. их насчитывалось 40 чел.) явилось причиной того, что в этом же году городская церковно-приходская школа превратилась в греческое училище. В его судьбе активное участие принимал Исполнительный комитет эллинов Эриванской губ. Среди учеников православные составляли большинство. Представители других вероисповеданий, обычно это были григорианцы, должны были в обязательном порядке изучать основы православного учения и так же, как православные, регулярно посещать религиозные богослужения.

Представление о необходимости школьного образования постепенно распространялось среди всех слоев общества. В результате этого в 1890-1910-е гг. наблюдалось увеличение учащихся, в том числе и девочек. В Александропольской школе в 1904 г. они составляли 52%. Каждая церковная школа имела библиотеку. Первоначально количество книг ограничивалось одним-двумя десятками, однако со временем библиотечный фонд увеличился и в некоторых школах составил сотни книг. Библиотеки включали в себя не только учебники, но и произведения русских писателей, периодические издания. Непременной принадлежностью являлась религиозная литература, например, жития святых, журнал «Русский паломник» и др. В 1910-е годы с открытием сельскохозяйственных отделений при училищах появились книги по пчеловодству, садоводству, огородничеству. Можно предположить, что школьными библиотеками пользовались не только учащиеся, но и грамотные жители, то есть церковные школы являлись своеобразными культурными центрами[12].

Тяжело отразилась на школьном обучении первая мировая война. Многие учителя были мобилизованы.Средства на содержание школ были урезаны, в результате сократилось число церковноприходских школ. В 1917г. они были переданы в ведение Министерства народного просвещения.

Анализируя деятельность православных церковных школ на территории Александропольского уезда, можно выделить несколько моментов. С одной стороны, организация школ, где обучение велось на русском языке, являлось проявлением политики русификации, но с другой, благодаря им представители коренных народов получали начальное образование, в том числе знание русского языка, приобщались к русской культуре и в целом повышали свой культурный уровень.

---

[12] *Здесь и далее подсчеты произведены автором на основании документов из ЦГИА РА, ф. 19, оп. 1, д. 525, л. 95,97,99 ; д. 637, л. 6.*

Несмотря на небольшое число церковных школ, ограниченность учебных программ, они сыграли положительную роль в подготовке грамотных людей - выходцев из низших слоев общества, которые распространяли полученные знания среди представителей своего народа, пытались осознать особенности родного языка и культуры. Кроме этого, школы представляли собой определенный этап в подготовке будущих священнослужителей из представителей местных народов - проводников православия и православной культуры в Закавказье.

ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ
(Ալեքսանդրապոլի գավառի օրինակով)

-----*Ամփոփում* ------ ------*Ի. Դոլժենկո*-----

Ուղղափառ եկեղեցա XIX - XX դդ. սկզբներին կատարած լուսավորչական գործունեության արդյունքում եիշյալ տարածքում երևան եկան եկեղեցական դպրոցներ, որոնցում ուսացումր իրականացվում էր ռուսերեն լեզվով: Շնորհիվ այդ դպրոցների առկայության, աեղարնակ ժողովրդների շաա ներկայացուցիչներ ստանում էին ոչ միայն սկզբնակսն կրթություն, այլև ծանոթանում ու շփփում էին ուղղափառության և ուղղափառ մշակույթի հետ:

Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Մայիսյան ապստամբության թեման հայ պատմագրության ամենից շատ արծարծված հիմնախնդիրներից է: Ավելին, 1918-20թթ Հայաստանի Հանրապետության պատմությամբ հետաքրքրվողների համար այն ունեցել է առանցքային նշանակություն, քանի որ դրա հետ է կապվել Հայաստանի Հանրապետության անկումն ու խորհրդայնացումը:

Այսպես, խորհրդահայ պատմաբանները Հայաստանի խորհրդայնացումը համարում էին Անդրկովկասի հեղափոխական շարժման օրինաչափ արդյունք: Այս առումով կարևոր դեր էր հատկացվում մայիսյան ապստամբությանը, որպես Հայաստանի խորհրդայնացման առաջին փորձ: Դաշնակցական հեղինակներն իրենց հերթին հանրապետության անկումը պայմանավորում էին թուրք-բոլշևիկյան դաշինքով, հետևաբար մայիսյան ապստամբությունը համարում են դրսի ուժերի գործողությունների արդյունք: Երկու դեպքում էլ հարցին մոտեցել են գաղափարաքաղաքական առումով, զանց առնելով Հայաստանի Հանրապետությունում հաստատված քաղաքական համակարգի առանձնահատկությունները: Ըստ այդմ էլ մայիսյան ապստամբության դերը հայոց պատմության մեջ չափազանցվել է՝ մի կողմից դիտվելով որպես փառապանծ ապստամբություն, մյուս կողմից որպես դավաճանություն հայ ազգի շահերին: Այդ ապստամբության դերը հայոց պատմության մեջ հստակեցնելու նպատակով մեր առջև նպատակ ենք դրել, Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի ուսումնասիրությամբ բացահայտել մայիսյան ապստամբության պատճառները:

Հայաստանը պառլամենտական գերակայությամբ հանրապետություն էր: Կառավարությունը ենթակա էր պառլամենտին: Կառավարող դաշնակցական կուսակցությունը, չնայած որ մեծամասնություն էր կազմում պառլամենտում, սակայն հասարակական կազմակերպությունների և կուսակցական տեղական կոմիտեների միջոցով փորձում էր ստիպել կառավարությանը գործել հեղափոխական մեթոդներով: Այդ նպատակով 1919թ. սեպտեմբերին տեղի ունեցած դաշնակցության 9-րդ համագումարը որոշում է ստեղծել անկուսակցական միություններ՝ դաշնակցական կուսակցությունից դուրս մնացած մասսային հանրային գործին լծելու համար: Այդ միությունների ուղղություն ավագը պետք է լիներ դաշնակցական կուսակցությունը:[1] Սակայն ստեղծված անկուսակցական միությունները հնարավորություն տվեցին բոլշևիկներին լեգալ պայմաններում պրոպագանդել իրենց գաղափարները: Մասնավորապես, Ալեքսանդրապոլի գավառում, որտեղ բնակչությունը գտնվում էր առավել ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում, նշված միությունները ընկան բոլշևիկների ազդեցության տակ: Ալեքսանդրապոլում կոմունիստական կազմակերպությունները առաջացել էին դեռևս 1917թ, որի անդամների թիվը ավելանում էր Բաքվից և Թիֆլիզից եկած կոմունիստներով: Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները երկրի փրկությունը կապում էին Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման հետ: Մինչև 1919թ նրանք Ալեքսանդրապոլի քաղաքական կյանքում էական դեր չէին խաղում: 1919թ. տեղի ունեցած Քաղաքային Դումայի և պառլամենտական ընտրություններում բացարձակ մեծամասնություն էին ստացել դաշնակցականները: Բոլշևիկները, օգտվելով ստեղծված անկուսակցական միություններից, ակտիվ աշխատանք էին տանում բոլոր կազմակերպություններում[2]: Նրանք հատկապես մեծ ազդեցություն էին ձեռք բերել արհեստակցական միությունների մեջ[3]: Արդեն 1919թ. վերջերից արհմիությունները սկսում են գործադուլային պայքարը: 1919 թ. նոյեմբերի 21-ին Ալեքսանդրապոլի փոստ-հեռագրական ծառայողների արհմիության կենտկոմի նախագահին զգուշացվում է, որ եթե կառավարությունը չկատարի բանվորների

---

[1] *Ռ ո ւ բ ե ն , Հայ յեղափոխականի մը յիշատակարանը, Եր., 1990, էջ 226:*

[2] *ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, ֆ. 4033, ց. 4, գ. 32, թ. 3-5:*

[3] *ՀՀ ՀՔՓԿ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 133, թ. 2:*

պահանջը. գործադուլ կսկսվի[4]: Պետական ծառայողների արհեստակցական միության Կենտրոնական վարչությունը, ներկա քաղաքական պայմաններում գործադուլները չհամարելով աշխատավորների պահանջների իրագործման միջոց, փորձում է բանակցությունների միջոցով լուծել հարցը: Այդ բանակցությունների հետևանքով գործադուլի ժամկետը փոխվում է դեկտեմբերի 16-ին, բայց համաձայնությունը չի կայանում, և դեկտեմբերի 17-ին, այնուամենայնիվ, գործադուլը սկսվում է[5]: Արհեստակցական միության Կենտրոնական վարչությունը այս գործադուլի կապակցությամբ նախարարների խորհրդին հայտնում է, որ գործադուլը տեղի է ունեցել անկախ վարչության կամքի, հավանության և գիտության[6]: Այս փաստը վկայում է այն մասին, որ աբհմիության վերադաս մարմինները արդեն կորցրել էին իրենց ազդեցությունը մասսաների վրա: 1919-20թ.թ. մի շարք գործադուլներ են տեղի ունենում երկաթուղային արանապորստում, սակայն այն ավելի սուր կերպարանք է առնում Ալեքսանդրապոլում 1920թ. հունվարին: Բոլշևիկները աշխատավորությանը պայքարի են հանում սպեկուլյացիայի դեմ, որի հանդեպ վերջիններս շատ զգայուն էին[7]: Բոլշևիկները այս դեպքերը օգտագործում են արհմիություններից դաշնակցականներին դուրս մղելու համար: 1920թ. մարտի վերջին տեղի է ունենում արհմիությունների կոնֆերանսը, որտեղ բոլշևիկները ակտիվ մասնակցություն են ցուցաբերում և ըստ էության ղեկավարում այն:

Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպությունը զգալի աշխատանք է տանում գյուղացիության մեջ: Ալեքսանդրապոլի բոլշևիկներին հաջողվում է գավառի մի շարք գյուղերում կազմակերպել կուսակցական բջիջներ[8]: Գյուղում տարված աշխատանքի շնորհիվ հաջողվում է բոլշևիկների ազդեցության տակ գցել Շիրակի գյուղացիական միությանը,որը կազմվել էր 1919թ. մարտի 30-ին[9]: Այն գոյատևում է մինչև 1919թ. վերջերը, մինչև Զեմստվոյի ընտրությունները: Այսպիսով մինչև 1920թ. սկզբները բոլշևիկները իրենց ազդեցության տակ էին գցել ստեղծված անկուսակցական միությունները: Փաստորեն չկարողանալով կատարել իրենց առջև դրված խնդիրները՝ ստեղծված միությունները հեղինակազրկում են իշխանության մարմիններին, խորացնում երկիշխանությունը և շատ շուտով դուրս գալիս նաև դաշնակցական կուսակցության հսկողությունից: Ահա այս պայմաններում կառավարությունը, ճիշտ չգնահատելով երկրի ներքաղաքական վիճակը, որոշում է կազմակերպել մայիսմեկյան տոնակատարություններ՝ դաշնակցության դրոշի տակ: Սակայն նշված պայմաններում մայիսմեկյան տոնակատարությունը վերածվում է հակակառավարական միջոցառման: Ժողովրդական կուսակցության օրգան «Ժողովուրդը» իրավամբ գրում է. «Պետք է ասել, որ բոլոր իրադարձություններից և ներքաղաքական մոմենտում մայիսի մեկը Հայաստանում կամ չպետք է տոնվեր, կամ եթե տոնվում էր, ոչ այդպիսի ձևով, որովհետև այդ օրը շնորհիվ դաշնակցականների անհեռատեսության, թույլատրվում էին բոլշևիկների բազմաթիվ հակապետական քայլեր, երբ փաստորեն մայիսի մեկը յարձավ, ինչպես պետք էր սպասել կոմունիստների ագիտացիայի օր»[10]:Մասնավորապես, Ալեքսանդրապոլում քաղաքային իշխանություններին և դաշնակցության տեղական կոմիտեին ընդհանրապես չի հաջողվում նախաձեռնությունը իրենց ձեռքը պահել, և հենց սկզբից այն անցնում է բոլշևիկների ձեռքը, որոնք էլ կարողանում են իրենց հետևից տանել մասսաներին՝ մայիսմեկյան տոնակատարությունը վերածելով հակակառավարական ցույցի, ապա և ապստամբության: Բայց մյուս կողմից էլ մայիսյան ապստամբությունը, նախօրոք պատրաստված չլինելով, դատապարտված էր պարտության: Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, աշխատանք տա-

---

[4] *Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Եր., 1960, էջ 274-275:*

[5] *Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում,Եր., 1932,էջ 86:*

[6] *Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում ,Եր., 1932,էջ88:*

[7] *Տե՛ս, «Շիրակի աշխատավոր», թ. 57, Ալեքսանդրապոլ, 1919:*

[8] *Վ. Միքայելյան, Հայաստանի գյուղացիությունը սովետական իշխանության համար մղված պայքարի ժամանակաշրջանում, /1917-20թթ/, Եր., 1960, էջ 111:*

[9] *ՀՀ ՀՔՓԿ, ֆ. 4033, ց. 4, գ. 127, թ. 152:*

[10] *Տե՛ս «Ժողովուրդ», թ. 79, Եր., 1920:*

նելով երկրի ներսում, այնուամենայնիվ, իշխանության գրավման խնդիրը կապում էր դրսի ուժերի (Խորհրդային Ռուսաստանի) օգնության հետ: Հայաստանի կոմունիստական կուսակցությունը մայիսի մեկին խորհրդային իշխանության հաստատման խնդիր որ առջև չէր դրել և պատրաստ չէր դեպքերի նման զարգացմանը: Դեռևս 1920թ. հունվարին Երևանում տեղի ունեցած ՌԿԲԿ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների գաղտնի կոնֆերանսը թեզիսներ էր ընդունել այն մասին, որ կարմիր բանակի մերձեցման և հարևան հանրապետություններում հեղաշրջում լինելու դեպքում պետք է առաջադրել Հայաստանի խորհրդայնացման խնդիրը[11]: Այդ կարծիքին էին նաև Ալեքսանդրապոլի բոլշևիկները: Ինչ վերաբերում է 1920թ. հունվարյան կոնֆերանսի բանաձևին, ապա այն ևս խորհրդային իշխանության հաստատումը Հայաստանում կապում էր դրսի ուժերի օգնության հետ: Խորհրդահայ որոշ պատմաբաններ, հենվելով Ա. Կասյանի պնդման վրա, գտնում են, որ այդ բանաձևը Ալեքսանդրապոլի կոմունիստական կազմակերպության երկրորդ կոնֆերանսի բանաձևն է, և այն չի ընդունվել հունվարյան կոնֆերանսի կողմից[12]: Հետագայում մենք խորհրդահայ պատմագրության մեջ կհանդիպենք Հայաստանի կոմկուսի և Ալեքսանդրապոլի կոմիտեի այլ հակադրությունների ևս՝ մասնավորապես Ալեքսանդրապոլի Հեղկոմի գործունեության խնդրում: Սկզբունքային հարցերում, կարծում ենք, սխալ է հակադրել նրանց: Իրականում այդ բանաձևում իր արտահայտությունն էր գտել Հայաստանի Հանրապետության ներքաղաքական կյանքին հատուկ այնպիսի մի երևույթ, ինչպիսին բոլշևիկների կողմից դաշնակցական կուսակցության սահմանած անկուսակցական միությունների գրավումն էր[13]: Ինչ վերաբերում է այն մտքին, թե Հայաստանում չկա ազգային հարց, այլ կա միայն սոցիալական հարց, ապա դա ևս բխում է Հայաստանի ներքաղաքական կյանքից: Մայիսյան իրադարձությունները Ռուսաստանում հեղափոխական շարժման բաղկացուցիչ մասը չէին կազմում, և պայմանավորված չէին Ալեքսանդրապոլում բոլշևիկների սխալ գործունեությամբ, այլ, կարծում ենք, դրանք Հայաստանի Հանրապետության ներքաղաքական կյանքի ուղղակի հետևանքն էին: Ինչպես տեսանք, 1919թ վերջերից Հայաստանի երկու քաղաքական ուժեր փորձում էին հեղափոխական ճանապարհով երկիրն հանել ստեղծված ծանր վիճակից և ապահովել հայ ժողովրդի հետագա գոյությունը: Եթե դաշնակցական կուսակցությունը փորձում էր դրան հասնել՝ հենվելով անկախ պետականության գաղափարի վրա, ապա բոլշևիկները հարցի լուծումը կապում էին երկրի խորհրդայնացման հետ՝ առաջ քաշելով բնակչության սոցիալական վիճակի բարելավման և ֆիզիկական առողջության հարցերը: Ի դեպ ՀՀԴ-ի մեջ ևս կային ազգային ու սոցիալական հոսանքներ: Ի դեպ այս երկվությունը շատ ակնբախ էր: Ինչպես նշում է Ռ. Հովհաննիսյանը. «Եթե Հայաստանի Հանրապետությունը գոյատևեր, շատ հավանական է, որ Դաշնակցությունը պիտի բաժանվեր ընկերվարական և ոչ ընկերվարական մասերի կամ նույնիսկ՝ տարբեր կուսակցությունների»[14]: Պատահական չէր, որ շատ բոլշևիկներ նախկին դաշնակցականներ էին:Այս առումով հետաքրքրություն է ներկայացնում 1920թ դեկտեմբերի 2-ին ձախ դաշնակցականների հրապարակած կոչը, որտեղ նրանք գրում էին «...Աջ դաշնակցականները միշտ խաբում էին հայ աշխատավորությանը՝ սուտ խոսքերի և ամենազզվելի մաուզերիզմի միջոցով կապելով նրա բախտը եվրոպական ռեակցիոն շահամոլ և իմպերիալիստական ուժերի հետ: Ահա այս էր պատճառը, որ մեր երկիրը քայքայվեց, խսկ աշխատավորության տանջանքները կրկնապատկվեցին:Մենք միշտ ասել ենք և այժմ էլ ասում ենք, որ միջազգային իմպերիալիզմի և համաշխարհային ռեակցիայի մեջ չէ, որ հայ աշխատավորությունը պետք է փնտրի իր փրկությունը, այլ միջազգային սոցիալիզմի և համաշխարհային հեղափոխության մեջ, որի մարմնացումն է հեղափոխական բանվորա-

---

[11] ՀՀ ՀՔՓԿ ԿՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 6, թ. 5, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը, Եր., 1960, էջ 301-306:

[12] Ա. Մ ե լ ք ո ն յ ա ն, Մայիսյան ապստամբության հարցի շուրջ, Եր., 1967, էջ 31-33:

[13] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 1, թ. 1-6, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխությունը և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Եր., 1960, էջ 304-10:

14 Ա. Հ ա կ ո բ յ ա ն, ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովը, Եր., 1994, էջ , 25:

պյուղացիական Ռուսաստանը»[15]: Ինչպես տեսնում ենք, Հայաստանի բոլոր քաղաքական ուժերի հիմնական խնդիրը հայ ժողովրդի ֆիզիկական գոյատևման ապահովումն էր: Հայաստանի բնակչությունը զգում էր թուրքական վտանգի հանդեպ[16], իսկ Ալեքսանդրապոլի բնակչությունը բնականաբար, առավել զգայուն պետք է լիներ այս հարցում: Այստեղ բոլշևիկյան շարժումն ընկալվում էր որպես թուրքական վտանգի կանխում: Պատահական չէ, որ մայիսմեկյան ցույցը ապստամբության վերածելու գործում մեծ դեր է խաղում զորքը: Չնայած զինվորական իշխանություններին հաջողվում է մայիսի մեկին կանխել զորքի մասնակցությունը ցույցերին և հնարավոր անկարգություններին, բայց միտինգի քայքայիչ ազդեցությունը վերացնել հնարավոր չի լինում: Ալեքսանդրապոլի քաղաքային իշխանությունների՝ Մուսայելյանին ձերբակալելու ունեցող փորձից հետո, զինվորներն իրենց համաձայնությունն են հայտնում նրան: Զորքը չքայքայելու նպատակով նրանց են միանում սպաները՝ ստեղծելով այնպիսի տպավորություն, թե ամբողջ զորքը անցել է բոլշևիկների կողմը և պատճառ հանդիսանում ապստամբության՝ ղեկավարների վերածելով մայիսմեկյան ցույցերի ակտիվ մասնակիցներին: Հետևաբար Մուսայելյանն ինքն իր հերթին ենթարկվում է հոսանքին: Շարժման անսպասելիության և զորքի տրամադրության կտրուկ փոփոխության մասին է վկայում նշված ընկատառումներով ապստամբներին հարած, առաջին հեծելազորային գնդի հրամանատար Մելիք Շահնազարովը՝ Գամազովին ուղղված իր զեկույցում[17]: Հետևաբար, խոսել բոլշևիկների կազմակերպված ապստամբության մասին, ավելորդ է: Փաստորեն մայիսի երկուսից Ալեքսանդրապոլում առեղծվում է մի վիճակ, որին պատրաստ չէին ո՛չ իշխանությունները և ո՛չ էլ կոմունիստները: Դեպքերի նմանօրինակ ընթացքի վրա մեծ ազդեցություն են ունենում նաև Խորհրդային Ադրբեջանի, ապա և Խորհրդային Ռուսաստանի կարմիր բանակի Անդրկովկասի ներկայացուցչի վերջնագրերն ուղղված Հայաստանի Հանրապետությանը, որոնցում պահանջվում էին հայկական զորքերը հեռացնել Ղարաբաղից և չկատարելու դեպքում՝ սպառնում պատերազմով[18]: Այս հանգամանքը, ինչպես նաև ռուսների և թաթարների ակտիվ մասնակցությունը մայիսյան շարժումներին, առիթ են տալիս Հայաստանի կառավարությանը՝ շարժումները համարել արտաքին ուժերի, մասնավորապես Ռուսաստանի և Թուրքիայի կազմակերպած գործը[19]: Սակայն Ալեքսանդրապոլում տեղի ունեցած իրադարձությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք ընդհանրապես կազմակերպված չէին ո՛չ դրսից և ո՛չ էլ նույնիսկ ներսի ուժերի կողմից: Դրանք ունեին անկազմակերպ տարերային բնույթ, չնայած որ բանակի մեջ աշխատանք էր տարվում բոլշևիկների կողմից[20]: Նշված վերջնագրերը անուղղակիորեն են նպաստում մայիսյան դեպքերին, այնքանով որքանով Հայաստանի խորհրդայնացումը կապվում է հայ ժողովրդի ֆիզիկական գոյության ապահովության հետ[21]: Զորքի անցումը ապստամբների կողմը նպաստում է Հայաստանի կառավարության դիրքորոշումն այդ վերջնագրերի հանդեպ: 1920թ մայիսի երեքին պառլամենտի արտակարգ նիստում Արտաքին գործերի նախարար Հ. Օհանջանյանը ներկայացնում է Հայաստանի կառավարության պատասխանը, որտեղ ասվում էր,որ Հայաստանի կառավարությունը ոչ մի զիջման չի գնա և ամեն գնով կպաշտպանի իր անկախությունը[22]: Հայոց բանակը պատրաստ չէր կռվելու Ռուսաստանի դեմ: Դաշնակցության մարտական ուժերը կանոնավոր բանակի ստեղծման պայմաններում, դուրս էին գտնվում բանակի ղեկավարման գործից: Բարձր զինվորական հրամանատարությունը և սպայությունը արտահայտիչներն էին դաշնակցական այն կործիչների գաղափարների, որոնք գտնում էին, որ առանց Ռուսաստանի օգնության Հայաստանը չէր կարող ապահովել իր գոյությունը: Ընդհանուր ոչինչ

---

15 *ՀՀ ՀԶՓԿ, Ֆ.4047, ց.1, գ.185, թ.1-2:*
16 *Իրազեկ, Սռահիկ անցյալից, Բեյրութ, 1964, էջ 84:*
17 *ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ, ֆ. 4033, ց. 3, գ. 41, թ. 7:*
18 *ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ, ֆ. 4033, ց. 3, գ. 34, թ. 1-2:*
19 *Տե՛ս նույն տեղը:*
20 *ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 4, գ. 215, թ. 1-7:*
21 *ՀՀ ՀԶԿՊԱ .Ֆ 1022, ց. 2, գ.133, թ.3:*
22 *Հայաստանի պառլամենտի արտակարգ նիստը, Եր.,1920:*

չունենալով բոլշևիզմի հետ, նրանց չեզոքությունը նպաստավոր պայմաններ էին առեղծել բոլշևիզմի գաղափարների համար: Բոլշևիկյան գաղափարների նկատմամբ առավել զգայուն էին զինվորի շինել հագած գյուղացիները: Գտնվելով սոցիալ-անտեսական ծանր վիճակում և հոգնած անընդհատ պատերազմներից՝ նրանց համար ընկալելի էր միայն հացի և խաղաղության մասին լոզունգները: Գաղափարական առումով նրանք որևէ ընդհանրություն չունեին ո՛չ սպաների և ո՛չ էլ դաշնակցական խմբապետների հետ և իրենց վերաբերմունքը էին արտահայտում հիմնականում դասալքության միջոցով: Հատկապես Ալեքսանդրապոլի գավառում այն մեծ տոկոս էր կազմում: Բոլշևիկյան լոզունգները ընդունելով որպես տուն գնալու կոչ՝ նրանց մեծ մասը հայտնելով Մուսայելյանին իր հավատարմությանը, գնում է տուն: Հետագայում կտեսնենք, որ սրանք ինչքան անհուսալի էին կառավարության համար, նույնքան անհուսալի եղան բոլշևիկների համար: Ինչ վերաբերում է սպայությանը, ապա նրանք, թշնամաբար տրամադրված լինելով խմբապետիզմի նկատմամբ, կողմնակից էին կարգուկանոնի և նրանց անցնելը ապստամբների կողմը շատ բանով պայմանավորված էր բանակի միասնությունը չքայքայելու հետ:

Մայիսի մեկին ստացած վերջնագրերը ակնհայտորեն սրում են ներքաղաքական կյանքը Հայաստանում՝ արագացնելով նոր կառավարություն կազմելու խնդիրը: Մայիսի 4-ին տեղի է ունենում պառլամենտի դաշնակցական ֆրակցիայի արտակարգ նիստը, որտեղ որոշվում է անմիջապես ցրել պառլամենտը և հայտարարել կուսակցության դիկտատուրա: Մայիսի 5-ին պառլամենտը արձակուրդ է ուղարկվում, և կազմվում է նոր կառավարություն Համո Օհանջանյանի գլխավորությամբ, բացառապես կուսակցության բյուրոյի անդամներից: Համո Օհանջանյանի նոր կառավարությունը կարճ հայտարարություն է անում կառավարության քաղաքականության մասին և վստահության քվե խնդրում ֆրակցիայից[23]: Նոր կառավարությունը անմիջապես անցնում է կտրուկ միջոցների: Հայտարարվում է դաշնակցական կուսակցության բոլոր անդամների մոբիլիզացիա[24]: Պառլամենտի դաշնակցական ֆրակցիայի անդամների մեծամասնությունը երկու-երեքական հոգով, արտակարգ լիազորություններով գավառներն են գործուղվում: Այդ գիշերն իսկ կազմվում են երկու արտակարգ հանձնաժողովներ, որոնցից մեկը պետք է գնար Ալեքսանդրապոլ, իսկ երկրորդը՝ Կարս, զինվորական և քաղաքական բացարձակ լիազորություններով: Ըստ կառավարության այդ որոշման՝ հանձնաժողովի նախագահները, ելնելով իրավիճակից, իրենց կարող էին հայտարարել նահանգապետներ[25]: Մայիսի վեցի նիստում որոշվում է կտրուկ միջոցներ ձեռք առնել բոլշևիկների դեմ: Հանձնարարվում է ՆԳ նախարարին միջոցներ ձեռնարկել՝ ձերբակալելու Հայաստանի տարածքի վրա գտնվող բոլոր բոլշևիկներին, ինչպես նաև որոշվում է Հայաստանում հաստատել արտակարգ դատարաններ[26]: Եվ վերջապես մայիսի յոթին նախարարների խորհուրդը որոշում է, նկատի ունենալով պետության բացառիկ վիճակը, կարգեր հաստատել բանվորների և ծառայողների համար [27]:

Մինչ մայրաքաղաքում իշխանությունը որոշում էր դիմել կտրուկ միջոցների, Ալեքսանդրապոլում գնալով խորանում էր սկսված խռովությունը: Դաշնակցական Բյուրոյի՝ իշխանության գալուց հետո խմբապետների նկատմամբ թշնամաբար տրամադրված սպայությունը գնալով ծախսանում է և ավելի հակվում դեպի ապստամբները: Ինչ վերաբերվում է բարձր հրամանատարությանը, ապա վերջինս, մտահոգված զորքի քայքայման գործընթացով, մնում է զորքի հետ: Ի դեպ, թե կառավարությունը և թե Մուսայելյանը, նրանց առաջարկում էին մնալ զորքի հետ՝ այն չքայքայելու նպատակով: Եվ քանի որ զորքը անցել էր Մուսայելյանի կողմը, ըստ էության զորքի հետ էր բարձր հրամանատարությունը: Մայիսի իննին Համո Օհանջանյանը Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Կ. Բեկզադյանին հեռագրում է. «Ալեքսանդրապոլի կայազորը և Մուսայելյանի զրահագնացքը անցել են բոլշևիկների

[23] *Կ. Սասունի, Մայիսյան խռովությունները և թաթար ապստամբ շրջանները, Բեյրութ, 1968, էջ 52:*
[24] *ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 164, թ. 1:*
[25] *Կ. Սասունի, նշվ. աշխ., էջ 52:*
[26] *ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 164, թ. 2:*
[27] *ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 164, թ. 3:*

կողմը: Քաղաքացիական կռիվը անխուսափելի է: Դրությունը այնպես է, որ իշխանությունը կամ մեր ձեռքը պետք է մնա, կամ անցնի բոլշևիկներին: Ուրիշ ելք չկա»[28]:

Իր ներքին դեռևս մայիսի երեքին Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կոմիտեն դիմել էր Հայաստանի կոմիտեին, որտեղ ներկայացնելով իրավիճակը, պահանջել էր ապստամբության սանկցիա տալ[29]:Մայիսի հինգին Հայաստանի կոմիտեն ստանում է նույն բովանդակությամբ երկրորդ նամակը[30]: Եվ վերջապես մայիսի վեցին կամ յոթին Ավիսը մի երկտող է ուղարկում, որտեղ ասում էր. «Կամ մենք, կամ նրանք, այսպես է դրված հարցը»[31]: Այս հեռագրերը անելանելի վիճակի մեջ են գցում Հայաստանի կոմիտեին, որը զգում էր, որ ինքը կանգնած է սարերային, անկազմակերպ ապստամբության վտանգի առաջ[32]: Մայիսի վեցին Արմենկոմը Ալեքսանդրապոլ է ուղարկում իր ներկայացուցիչներ Դ. Տեր-Սիմոնյանին և Արա. Սելքոնյանին, նրանց տալով անհրաժեշտ լիազորություններ և միևնույն ժամանակ պարտավորեցնելով, որ «եթե չի կարելի կասեցնել ապստամբությունը, որն անհրաժեշտորեն պետք է անել, ապա միաժամանակ կապվել Ղարաքիլիսայի շրջանի, Դիլիջանի և հարակից շրջանների հետ»[33]: Մայիսի յոթին խորհրդակցություն է տեղի ունենում Դ. Սիմոնյանի և Արա. Սելքոնյանի մասնակցությամբ: Խորհրդակցությունը, բազմակողմանիորեն քննելով ստեղծված իրադրությունը, իշխանությունը գրավելու հետ կապված դժվարությունները, հանգում է այն եզրակացության, որ անհրաժեշտ է ապստամբել և գրավել իշխանությունը:[34] Ինչով էր պայմանավորված նման որոշման ընդունումը: Ստեղծված իրավիճակից երևում էր, որ քաղաքը հանձնվելու էր առանց կռվի: Ալեքսանդրապոլում փաստորեն տեղի էր ունեցել իշխանությունների փլուզում: Զորքից բացի քաղաքի բոլոր պաշտոնյաները իրենց հավատարմությունն էին հայտնել Մուսայելյանին: Մայիսի ութին ռազմահեղափոխական կոմիտեն կառավարություն է կազմում, որի նախագահ և զինվորական կոմիսար է նշանակվում Ս. Մուսայելյանը, արտգործկոմիսար՝ Ա. Նուրիջանյանը, ՆԳ կոմիսար՝ Արա. Սելքոնյանը[35]: Այնուհետև կատարվում են պատասխանատու աշխատողների նշանակումներ: Ստեղծված կառավարությունում գործի անցնելու համար բավական էր հավատարմություն հայտնել Մուսայելյանին: Ազատվում են բազմաթիվ պաշտոններ:[36] Բացի քաղաքացիական պաշտոններում նշանակումներ կատարելուց ՌՀԿ-ն դառնում է նաև ռազմական ուժերի ղեկավարությունը: Ապստամբ ուժերի գլխավոր հրամանատար է նշանակվում Ս. Մուսայելյանը: Առաջին հեծյալ գնդի հրամանատար Ա. Մելիք-Շահնազարյանը նշանակվում է գործող զորամասերի հրամանատար: Կազմակերպվում է նաև ռազմական կոմիսարների ինստիտուտ: Մայիսի ութին, ՌՀԿ-ն մշակում է գործողությունների նախնական պլան, ըստ որի Կարսը, Սարիղամիշը, Լոռին, Ղազախը և մյուս վայրերը պետք է ապստամբեին Հեղկոմից հրահանգ ստանալուց հետո: Այս ամենից հետո Մուսայելյանը վերջնագիր է ուղարկում Երևան՝ պահանջելով, որ կառավարությունը իրեն հանձնի իշխանությունը: ՌՀԿ-ի անունից հեռագրեր են արվում Կարս, Սարիղամիշ, Ղարաքիլիսա և ուրիշ վայրեր, որոնցով հայտարարվում էր, Հայաստանի խորհրդայնացումը և զինվորական ու քաղաքացիական իշխանություններին հրահանգվում էր ճանաչել նոր վարչակարգը: Իրենց ներքին ուղղական ՌՀԿ-ի անդամները քաղաքացիական և ռազմական իշխանություններից պահանջում էին ենթարկվել Ալեքսանդրապոլի Հեղկոմին[37]: Ինչ վերաբերում էր զինվորական իշխանություններին, ապա նրանց դիրքը մեզ արդեն հայտնի էր, այն է՝ մնալ բանակի հետ՝ այն չքայքայելու նպատակով: Զինվորները

[28] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 166, թ. 1:
[29] Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, Եր., 1930, էջ 162-165:
[30] Տես նույնը, էջ 165-167:
[31] Մայիսյան ապստամբությունը Հայաստանում.Եր.,1930, էջ 167:
[32] Տես նույնը, էջ 147-155:
[33] Ա. Մ ե լ ք ո ն յ ա ն, Մայիսյան ապստամբության հարցի շուրջ, Եր., 1967,էջ 65:
[34] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 257, թ. 5:
[35] Ս. Վ ր ա ց յ ա ն, Հայաստանի Հանրապետություն, ,Եր., 1995 ,էջ 413:
[36] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1022, ց, ց. 2, գ. 150, թ. 1:
[37] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 150, թ. 1:

հիմնականում ապստամբների կողմն էին, խսկ սպայությունը կռվել հանուն կառավարության չէր պատրաստվում: Հետևաբար բարձր հրամանատարությանը ոչինչ չէր մնում անել, քան ենթարկվել: Մայիսի սկզբին Ալեքսանդրապոլի կայազորի պետ գեն. Խաչատուրովը Մուսայելյանի վերջնագիրը քննարկելու համար զորամասերի հրամանատարների ժողով է գումարում: Զորամասերի հրամանատարները՝ հենվելով ույաների կարծիքի վրա, որոշում են մնալ զորամասերում, քանի որ հակառակ դեպքում կարգապահությունը խիստ կընկնի, և զինվորները կվերածվեն զինված հրոսակների՝ վտանգավոր լինելով խաղաղ բնակիչների համար[38]: Հեղկոմին ենթարկվելու որոշում է ընդունում նաև Կայսի կայազորի հրամանատարական կազմը: Այդ մասին ասվում է 1920թ. մայիսի 14-ին Փիլումովի՝ Երևանի բանակի հրամանատարին ուղղված հեռագրում[39]: Մայիսի սկզբի առավոտյան ՌՀԿ-ն վերջնագիր է ներկայացնում Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությանը՝ մինչև ժամը 4-ը առանց դիմադրության քաղաքն հանձնելու մասին[40]: Միևնույն ժամանակ հրապարակում է մի հայտարարություն, որի մեջ ասվում է, որ Ալեքսանդրապոլում հռչակվում է խորհրդային իշխանություն, և կոչ է անում երկրի ազգաբնակչությանը պահպանել հեղափոխական կարգուկանոն: Այնուհետև նույն հայտարարության մեջ շարադրված ութ կետերում Հեղկոմը սահմանում էր պատերազմական ժամանակաշրջանի մի շարք միջոցառումներ, պահանջում էր, որպեսզի սեփականատեր հիմնարկությունները առանց դիմադրության հանձնվեն խորհրդային իշխանությանը[41]: Քաղաքն առանց դիմադրության հանձնելու մասին քաղաքային վարչությանը ներկայացված վերջնագրի պատասխանին Հեղկոմը սպասում էր մինչև ժամը 4-ը՝ նախազգուշացնելով, որ հակառակ դեպքում կգործադրվի ռազմական ուժ[42]: Զինվորական իշխանությունների բռնած դիրքը քաղաքային իշխանություններին ստիպում է քաղաքն առանց կռվի հանձնել Ալեքսանդրապոլի Հեղկոմին: Մտնելով քաղաք՝ ապստամբները գրավում են փոստ-հեռագրատունը, բանկը և պետական մյուս հիմնարկները, բանտից ազատում քաղաքական բանտարկյալներին, գրավում պահեստներն ու մթերային կետերը, այդ թվում նաև՝ ամերիկացիների պահեստները[43]: Փաստորեն մայիսի 10-ին Ալեքսանդրապոլում հաստատվում է ապստամբների իշխանությունը: Տեղական իշխանության մարմինները առանց կռվի քաղաքն հանձնում են բոլշևիկներին: Հայաստանի Հանրապետության կառավարությունը փորձում էր հարցը լուծել բանակցությունների միջոցով[44]: Հարկ է նշել, որ ապստամբության ղեկավարները ևս, մասնավորապես, Ս. Մուսայելյանը, փորձեր էին անում բանակցությունների միջոցով հարցը լուծել: Նա ձգտում էր համոզել դաշնակցականներին, որ Հայաստանի ապագայի համար լավագույն ձևը խորհրդային կարգերի հաստատումն է, և որ Ռուսաստանի օգնությամբ միայն հայ ժողովուրդը կարող է գոյատևել[45]: Պատահական չէ, որ գրավելով իշխանությունը թե՛ Ալեքսանդրապոլում և թե՛ Կարսում նրանք իշխանության գլուխ թողեցին նախկին պաշտոնյաներին՝ նրանցից խոսք վերցնելով, որ կծառայեն Խորհրդային Հայաստանին: Նրանք համոզված էին, որ Հայաստանի փրկությունը Խորհրդային Ռուսաստանի հետ է կապված, և փորձում էին դա համոզել դաշնակցականներին: Այս առումով հետաքրքրություն է ներկայացնում Բ. Ղարիբջանյանի՝ 1920թ. մայիսի 31-ին մահապատժից առաջ արտասանած ճառը, որտեղ նա հիմնավորում է Հայաստանի

---

[38] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 4033, ց. 3, գ. 41, թ. 14:
[39] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 4033, ց. 3, գ. 21, թ. 1-2:
[40] Հ. Կ ա ր ա պ ե տ յ ա ն, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում. Եր., 1961, էջ 143:
[41] Տե՛ս նույնը:
[42] Տե՛ս նույնը:
[43] Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում, Փաստաթղթերի ժողովածու, Եր., 1932, էջ 286-287, Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Եր., 1960, էջ 319-321:,ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. , գ. 530, թ. 53, Հ. Կարապետյան, նշվ. աշխ., Եր., 1961, էջ 145:
[44] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 4033, ց. 3, գ. 7, թ. 1-3, ֆ. 4015, ց. 1, գ. 5, թ. 1-3, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց.1, գ. 772, թ.8-9:
[45] Տե՛ս նույնը:

իարհրդայնացման անհրաժեշտությունը «... այն բանի շնորհիվ, որ քաղաքական իրադրությունը շեշտակիորեն փոխվել է հօգուտ Սոցիալիստական Ռուսաստանի, ինձ լրջորեն զբաղեցնում էր հայկական հարցը; Ես համոզված եմ եղել, որ հանձին իշխող դաշնակցական կուսակցության, Հայաստանի կառավարության կողմնորոշումը դեպի իմպերիալիստական պետությունները կկործանի Հայաստանի բազմաչարչար աշխատավոր մասսաների մնացուկները:... Եվ ահա այն բանից հետո, երբ Ադրբեջանում մուսավաթ կուսակցության ավերակների վրա խորհրդային իշխանություն է, մեր կառավարության ապ միակողմանի քաղաքականությունն էլ ավելի արտահայտվեց: Ինչպես այժմ փաստերը հաստատում են, դա կհասցնի էլ ավելի ուժգին աղետի, եթե Հայաստանը չներգրավվի խորհրդային իշխանության շրջանակի մեջ: Միայն այս պայմանով հայ աշխատավոր մասսաների հովանավորությունը կստանձնի Ռուսաստանը»[46]: Բայց ի տարբերություն ադրբեջանցի կոմունիստների, նրանք չկարողացան համաձայնության հասնել կառավարող դաշնակցական կուսակցության հետ և չապահովելով Խորհրդային Ռուսաստանի աջակցությունը՝ փորձեցին պետական հեղաշրջում իրականացնել: Ռուսաստանը, պատրաստ չլինելով զենքի միջոցով խորհրդայնացնել Հայաստանը, փորձում էր դրան հասնել բանակցությունների միջոցով[47]: 1920թ. գարնանից կոմունիստական կուսակցության Կենտկոմը ՌՍՖՍՀ-ի և դաշնակցական Հայաստանի միջև հաշտության կնքելու քաղաքականություն էր վարում: Չնայած դրան՝ Հայաստանի կառավարությունը շարունակեց դաշնակիցներին հավատարիմ մնալու քաղաքականությունը, որով Ռուսաստանին ափսեց Թուրքիայի միջոցով հասնել Հայաստանի խորհրդայնացմանը: 1920թ. հունիսի 19-ին Չիչերինը Լեգրանին գրում էր, որ դաշնակցական պառլամենտի հետ վարվող բանակցությունները միայն կեղծ են «Այստեղ, բանակցությունները նրանց հետ անհույս են: Ամեն ինչի կարող ենք հասնել միայն Հայաստանում»[48]: Դաշնակիցներին հավատարիմ Հայաստանը մենակ մնաց ռուս-թուրքական դաշինքի դեմ, որի անմիջական արդյունքը եղավ թուրք-հայկական պատերազմը:

Կարծում ենք՝ մայիսյան ապստամբության հիմնապատճառներն էին. նախ՝ Հայաստանի կառավարության և կառավարող դաշնակցության միջև եղած հակասությունը, որը կառավարման համակարգում ստեղծել էր երկիշխանություն և թուլացրել դաշնակցական կուսակցությանը: Եվ երկրորդ, Հայաստանի կառավարության վարած արտաքին քաղաքականությունը, որը ռեալ չգնահատելով միջազգային հարաբերություններում տեղի ունեցած փոփոխությունները, վտանգի տակ դրեց Հայաստանի բնակչության ֆիզիկական գոյությունը :

ИЗ ИСТОРИИ МАЙСКОГО ВОССТАНИЯ

Резюме ***К. Алексанян***

Основными причинами, из-за которых началось Майское восстание в Александрополе в 1920 г., были, во-первых: противоречие, возникшее между правительством Армении и правящей партией дашнаков относительно методов правления привело к двоевластию в правящих кругах и ослаблению партии дашнаков. И во-вторых: внешняя политика, проводимая правительством республики, нереально оценившая изменения, происшедшие в международных отношениях, в частности, укрепление советской власти в России и ее распространение в Закавказье, подвергла опасности физическое существование населения Армении.

---

[46] *ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ, ֆ. 4015, ց. 1, գ. 5, թ. 1-4:*

[47] *Է. Զոհրաբյան, 1920թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր., 1997, էջ 16:*

[48] *Տես նույնը:*

Գրիգոր ԱՂԱՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐՈՒՄ-XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ
(ըստ Կարնո և Ախալցխայի նյութերի)

Հայ ավանդական աքեստագործության եևագույն ճյուղերից է զինագործությունը, որի արտադրանքի կարիքը միշտ էլ մեծ է եղել նույնիսկ այն ժամանակներում, երբ Հայաստանը պետականությունից կամ բանակից զուրկ էր:

Զինագործությունը երկաթագործական այն արհեստներից էր, որն ավելի վաղ անջատվեց դարբնությունից, քան մյուսները, ժամանակի ընթացքում ձեռք բերեց առանձնահատուկ ձեռագիր և միջնադարում բաժանվեց ենթաճյուղերի[1]: Այն ի սկզբանե արհեստավարժ, այսպես կոչված՝ «քաղաքային» արհեստ էր:

Հայ և օտար գրավոր աղբյուրների վկայությամբ Հայաստանի գրեթե բոլոր խոշոր արհեստագործական կենտրոններում և հայկական գաղթօջախներում (Վան, Կարին, Կարս, Երևան, Շուշի, Ախալցխա, Ախալքալաք, Ալեքսանդրապոլ, Նախիջևան, Թիֆլիս, Նոր Ջուղա,Կ.Պոլիս, Ղրիմ, Պողոլիե և այլն) կային մեծ թվով զինագործներ, որոնցից շատերը թուրքական, պարսկական և այլ երկրների պալատական (արքունի) արհեստավորներ էին[2], որոնց համբավը դուրս էր եկել այդ երկրների սահմաններից:

XVI-XVII դդ.,հրազենի մուտքն Արևելք խթանեց նաև նոր՝ հրաձգային զենքի արտադրությանը տեղերում:Հայ զինագործները շատ արագ եմացան այս բնագավառում՝դառնալով հիմնական արտադրողներ և, ինչու չէ. նաև մոդայի թելադրողներ (մինչև XIXդ-ի վերջերը հրացանները ու ատրճանակները ունեին նաև դեկորատիվ-գեղարվեստական արժեք՝շնորհիվ իրենց շքեղ զարդարանքի և պաճուճանքի): Հրաձգային զենքի մուտքը, բնականաբար, ծնեց նոր նեղ մասնագիտական ճյուղավորումներ հայ զինագործության մեջ՝ կամաց-կամաց դուրս մղելով պաշտպանական և այլ զինատեսակների արտադրությունը: XVIII դ. վերջին -XIXդ. սկզբին այս զբաղմունքը, փաստորեն, դադարեց գոյություն ունենալուց:

Հին ու միջնադարյան հայ զինագործությունը այս կամ այն չափով ուսումնասիրված է հայագիտության (հատկապես հնագիտության) մեջ[3]:

Դեռևս XIV դարում պետականությունը (Կիլիկիայի հայկական պետություն) կորցրած հայ ժողովուրդը չդադարեց զբաղվել արհեստագործության այնպիսի ճյուղերով, որոնք գոնե արտաքուստ պետականության գոյության կարիքն ունեին (ամրոցաշինություն, ռազմական մեխանիզմների արտադրություն, զինագործություն և այլն): Այս արհեստների մեջ առանձնակի տեղ ունի զինագործությունը, որի հմտությունները չմոռացվեցին, այլ որոշակի ազդեցությունների ներքո կրեցին նույնիսկ հեղաշրջիչ վերափոխություններ: XIXդ և XXդ. սկզբին ևս այս արհեստը գոյատևում էր և, հավաքագրած հենք, կարոտ է լուրջ ու համակողմանի պատմազգագրական ուսումնասիրության:

[1] *Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIIIդ.դ., հ I, Եր., 1958,էջ 142-143: Վ. Աբրահամյան, Արհեստները և համքարական կազմակերպությունները Հայաստանում IX-XIIIդ.դ., Եր., 1946, էջ 42-43:*

[2] *Э. Астваџатурян, История оружейного и серебряного производства на Кавказе в XII- начале XX в., Дагестан и Закавказье, ч 1,М., 1977,стр.5.*

[3] *С. Есаян, Оружие и военное дело древней Армении (III-Iтыс.до н.э), Ер., 1966. Բ. Առաքելյան,նշվ. աշխ.,էջ 142-153:*

Հայաստանի ազգագրության պետական թանգարանում աշխատելու տարիներին տողերիս հեղինակին բախտ է վիճակվել մասնակցելու սր շարք ազգագրական գիտարշավների, որոնց ընթացքում հավաքվել են բավականին հետաքրքիր նյութեր նաև զինագործության վերաբերյալ, թե՛ Հայաստանում և թե՛ նրա սահմաններից դուրս[4]:Հավաքված նյութերի արժեքը, մեր կարծիքով, մեծանում է նրանով,որ որպես բանասաց հանդես է եկել (գոնե մեզ համար) վերջին հայ պրոֆեսիոնալ. պապենական զինագործ-վարպետներից մեկը՝ ծագումով կարինցի Փաշիկ (Մկրտիչ) Հալոբի Չիֆթալարյանը(1900-1990թթ.), որը նույնիսկ կյանքի 9րդ տասնամյակում (Ախալցխայում) շարունակում էր պարապել իր զբաղմունքով[5]:

XIX դ.հայ զինագործությանը վերաբերյալ կցկտուր, բայց և արժեքավոր տեղեկություններ կան նաև դարի հայ պարբերական մամուլում[6], ռուսական տեղեկատու-վիճակագրական աղբյուրներում[7],հայ և օտար հետազոտողների աշխատություններում (այս բնագավառում մեծ ներդրում ունի Է. Աստվածատուրյանը, որը չափազանց արժեքավոր նյութեր է հավաքել ուսումնասիրվող ժամանակաշրջանի վերաբերյալ, որոնք աղբյուրագիտական անուրանալի արժեք են ձեռք բերել)[8], Հայաստանի և հատկապես Վրաստանի (հասքը փոխարքայության կենտրոն Թիֆլիսի մասին է) տարբեր արխիվներում[9] և այլն: Ավանդական զենքերի ոչ մեծ, բայց արժեքավոր հավաքածուներ կան ՀՊՊԹ-ում, ՀԱՊԹ-ում, ինչպես նաև որոշ նմուշներ Սանկտ Պետերբուրգի Պետական Էրմիտաժում, Մոսկվայի Ռուսաստանյան Դաշնության պատմության պետական թանգարանում, Արևելքի ժողովուրդների թանգարանում և մասնավոր հավաքածուներում:

Երկաթագործության ճյուղ լինելով հանդերձ, զինագործությունն իր մեջ ներառնում էր նաև մետաղումշակության հարակից արհեստների բազմաթիվ տարրեր (դարբնություն, փականագործություն, խառատություն, ոսկրագործություն, հյուսնություն, ձուլագործություն, պղնձագործություն, արծաթագործություն, ոսկնագործություն և այլն): Զենքը,լինի դա հրազեն, թե սառը զենք, նաև պերճանքի առարկա էր: Այստեղից էլ բխում էր արհեստի մեջ ոսկերչության, արծաթագործության, փորագրության, ոսկրագործության և այլ արհեստներին հատուկ տարրերի գոյությունը և անհրաժեշտությունը (պատահական չէր, որ Կովկասում զինագործներին հաճախ նույնացնում էին ոսկերիչ-արծաթագործների հետ)[10]: Եթե եվրոպական մուշկետները, արկեբուզները և գծավոր , փուլից լցվող այլ հրացանները աչքի չէին ընկնում արտաքին պաճուճանքի առատությամբ, ապա արևելյան հրազենը նաև գեղարվեստական գործ էր: Այստեղ, մեր կարծիքով, որոշակի դեր ունեցան տեղական սառը զենքի գեղազարդման ավանդները,որոնք սահուն փոխանցվեցին հրաձգային զենքի արտադրության ոլորտ: Արևելքում, կանոնավոր բանակների ձևավորման հետ միասին, սպառազինության մեջ մացվեցին առավել ուախկիտար զինատեսակները՝ եվրոպական տիպի անպաճույճ հրացաններ և խոցող, հատող զենքեր: Սակայն կենցաղային մակարդակում, հատկապես էլիտար խավերի մշակույթների մեջ (հայ և օտարազգի տեղական մեծատոհմիկներ, խաներ, բեկեր, փաշաներ և այլն) պահպանվեցին պաճուճազարդ զինատեսակները:

---

[4] *Գ. Ա ղ ա ն յ ա ն , [illegible] ազգագրական նյութեր, (ձեռագիր՝ ԴԱՆ), Տետրեր 1-2, Ախալցխա, 1986,1987:*

[5] *Նույն տեղում:*

[6] *Մ. Ե ղ ի ա զ ա ր ե ա ն ց, Արհեստների ճիւղերը Կարինում XIXդարի առաջին երեք տասնամեակում, «Մշակ», 1891,թիվ 65: Խ. Սառանկոզեան, Էրզրումի և Կարսի արհեստաւորների համայնական կարգերը, «Մշակ», 1891, թիվ 68:*

[7] ***Кавказский календарь на 1851год, Тифлис,1850;Тот же на 1866год,Тифлис 1865; Тот же на 1893год, Тифлис, 1892;Сборник материалов для описания местностей и племен Кавказа (СМОМПК), вып. 11,Тифлис,1891.***

[8] ***Վ. Աբրահամյան, Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում(18-20-րդ դարի սկիզբը), Եր., 1971:П. Гугушвили, Развитие помышленности в Грузии и Закавказе в XIX-XXвв., т.1, Тбилисл 1957; Э. Аствсцатурян, նշվ.աշխ.,հ.հ. I-II:***

[9] ***Э. А с т в а ц а т у р я н, նշվ.աշխ.,հ.1,էջ 12-13:***

[10] *Նույն տեղում,էջ5:*

Բնական է,որ առաջնության դափնին պետք է պսակպանեին մետաղամշակության (հատկապես՝ ոսկերչագործության և արծաթագործության) հարուստ ավանդույթներ ունեցող ժողովուրդները՝ հայերը, կովկասյան որոշ էթնոսներ (կուբաչիներ, լեզգիներ, լաքերը, աղըղներ և այլոք), որոնք էլ հենց դարձան զինագործության՝ միջնադարյան և նորույթային ձևերի եամաղյտողները: Որպես առավել ցայտուն օրինակ կարելի է բերել Կարինի զինագործությանը վերաբերվող նյութերը: Այսպես, Խ. Սառանկոզյանը[11] և Ս.Եղիազարյանցը[12] «Մշակ» թերթում հրապարակված իրենց հոդվածներում XIXդ. առաջին կեսին Կարինում հիշատակում են զինագործական հետևյալ ինքնուրույն արհեստները (ճյուղերը)՝ ղլճի (թուր և խանչալ շինող), չախմախչի (հրացանի զաբկանը շինող), լուլաճի (հրացանի փողը շինող), ղոնդախճի (հրացանի կոթը շինող), և բիչախճի (հասարակ դանակ շինող) Համարյա նույն պատկերն էր նաև Թիֆլիսի զինագործների պարտզայում[13]: Կար նաև մեկ արհեստ ևս թիվհնքճի (հրացանագործ), որը հրացանի բոլոր մասերը մեկտեղ հավաքողն էր[14]: Աշխատանքի այսպիսի բաժանումն, անշուշտ, խոսում է վերը բերված արհեստների ոչ միայն բարձր զարգացածության, այլև վերջնական արտադրանքի բարձր պահանջարկի մասին: Այս հանգամանքը հատուկ էր քաղաքային այն արհեստներին, որոնց ներսում ծնափուրվել էին նեղ մասնագիտացումներ և կոոպերացիա, երբ մեկը լրացնում էր մյուսին: Կարնո, Ախալցիխայի և Ալեքսանդրապոլի պարագայում ցայտուն արտահայտված է նաև հրազեն և սառը զենք արտադրողների տարանջատումը և արհեստների ինքնուրույն ճյուղերի առկայությունը: Թե՛ Խ.Մառանկոզյանը, թե՛ Ս.Եղիազարյանցը և թե՛ Վ. Սրբահամյանը չեն անդրադարձել ի սկզբանե զինագործներին (զոնե նախկին)՝ թոքմաճիներին (ծուլողներ), թոփչիներին (ոսքազնդիր ծուլողներ), թաշմաճիներին (օղազրահ սարքողներ), որոնք արդեն XIXդ. սկզբին վերապրոֆիլավորվել էին և դարձել կենցաղային իրեր պատրաստողներ (այս մասին մանրամասը կխոսվի ստորև):

Ախալցխայում, Կարսում և Ալեքսանդրապոլում հրազենի արտադրության բնագավառում այսպիսի նեղ մասնագիտացում և աշխատանքի բաժանում գրեթե չէր նկատվում, ինչպես՝ Կարինում: Հրացանագործն այստեղ արդեն բազմաբնույթ արհեստավոր էր և քիչ էր օգտվում հարակից արհեստների օժանդակությունից[15]:

Մի կարևոր հանգամանք ևս, որն ուղղակիորեն կապված էր զինագործության հետ: Դա զենքի վաճառականների գոյությունն էր հայկական մի շարք արհեստավորական քաղաքներում: Օրինակ, Թամփուշյանների ընտանիքը թե՛ Կարինում և թե՛ 1830թ. գաղթից հետո Ախալցխայում, ընդհուպ մինչև 1920-ական թթ. զբաղվում էր զենքերի (մարտական, սառը և որսորդական) և զինամթերքի (վառոդ, արճիճ, գնդակներ, աբեթ, մանրագնդակ, փամփուշտ, պարկուճ, կայծքար և այլն) առևտրով: Հետաքրքիրն այն է, որ վաճառահանվում էր ոչ միայն ներկրված, այլև տեղական վարպետների արտադրանքը[16]:

Կարնո, Կարսի, ինչպես նաև դրանց ուղղակի հետնորդները հանդիսացող Ախալցխայի և Ալեքսանդրապոլի զինագործներն իրենց առանձնակի տեղն ունեին նաև համքարային համակարգում: Հաճախ, ունենալով սեփական համքարությունը կամ էլ շատ դեպքերում միավորված լինելով երկաթագործների մեծ համքարությունների մեջ, սրանք, ի տարբերություն վերջինների, որպես հովանավոր սուրբ («փիր», «պատրոն») ունեին ոչ միայն Հոբելին, ինչպես պայտարները (նալբանդ), կամ Դավիթ Մարգարեին, ինչպես բուն դարբինները, այլև զուտ հայկական սուրբ՝ Հովհան Օձնեցուն: Այս երևույթը բավականին հետաքրքիր է, քանի որ բոլոր մյուս համքարների հովանավոր-սրբերը եբրայական կամ համաքրիստոնեական սրբեր են (Եղիա Մարգարե, Հոբել, Դավիթ Մարգարե, Հայր Հովսեփ և այլն), իսկ այս պարագայում գործ ունենք զուտ հայկական սրբի հետ: Կաթողիկոս Հովհաննես Գ

---

[11] *Խ. Մ ա ռ ա ն կ ո զ ե ա ն, նշվ. աշխ.:*

[12] *Ս. Ե ղ ի ա զ ա ր ե ա ն ց, նշվ. աշխ.:*

[13] *Э. А с т в а ц а т у р я н, նշվ.աշխ.,մասն I, էջ 138:*

[14] *Գ. Ա ղ ա ս յ ա ն, ԴԱՆ, Տետր I, Ախալցխա, 1986:*

[15] *Նույն տեղում:*

[16] *Նույն տեղում:*

Օձնեցին (717-728թթ.) հայ եկեղեցու ամենակարկառուն դեմքերից էր, որը հանդես եկավ որպես հայոց ավանդական ազգային եկեղեցու և միաբանության ջերմ պաշտպան, միևնույն ժամանակ հակաքաղկեդոնական էր և պավլիկյան աղանդավորականության դեմ անհաշտ պայքարի գաղափարախոս ու ջատագով («Ընդդեմ Պավլիկյանների»): Օձնեցին նաև հայ իրավագիտության նախակարապետներից էր,որը հավաքել և ի մի էր բերել «Կանոնագիրք Հայոց»-ը՝ սկսած Տիեզերական ժողովներից, Սահակ Պարթևից և Ազգային եկեղեցական ժողովներից, մինչև իր օրերը[17]: Արդարադատության «պատժող սուրը», ճշմարիտ հավատքի համար մղվող պայքարը, երկաթով (իմմ. զենքով) հերձվածողներին և հանցագործներին պատժելու, խարանելու հանգամանքներն ուղղակիորեն կապված էին զինագործության և զինագործ արհեստավորների անձի հետ, իսկ Հովհան Օձնեցին այս ամենի գաղափարախոսն ու մարմնավորողն էր: Պետք է նկատի ունենալ նաև միջնադարյան հայ համքարությունների զուգահեռ գործած կիսառազմականացված «Եղբարց քաջվորացների» պարազան[18]:

Արևելյան Հայաստանում ոչ այդպիսի խորությամբ, սակայն բավականին բարձր մակարդակով զինագործական ավանդույթներ էին պահպանվում նաև Երևանը (1724թ. թուրքական պաշարման ժամանակ երևանցի զինագործները վառոդի, զենքի և ռմբագնդերի հիմնական մատակարարներն էին քաղաքի հերոսական պաշտպանների համար)[19], Շուշին, Նախիջևանը, Օրդուբադը և Ագուլիսը (օրինակ Երևանում հիշատակվում են՝ 41, Շուշիում՝ 22 վարպետների անուններ)[20]:

XIXդ. հայ զինագործությունը կարելի է դիտարկել երկու տեսանկյունից՝

ա) արտադրանքի (զենքի) ֆունկցիոնալ-կիրառական,

բ) նյութի և տեխնիկա-տեխնոլոգիական առանձնահատկությունների առումներով:

Ֆունկցիոնալ-կիրառական առումով զենքերը կարելի է դասակարգել երեք խմբի.

ա) մարտական զենքեր,

բ) որսորդական զենքեր,

գ) դեկորատիվ զենքեր (որպես տարազի մաս կամ բնակարանի ներսույթի զարդաքանդ):

Ըստ նյութի և տեխնիկա-տեխնոլոգիական առանձնահատկությունների՝

ա) սառը զենք արտադրողներ՝ դլճի (թուր և դաշույն շինողներ), բիչախչիներ (հասարակ դանակ շինողներ).

բ) հրազենի մետաղյա մասեր պատրաստողներ կամ հավաքողներ՝ լուլաճի (հրացանի և ատրճանակի փող սարքողներ) և թիվենքճիներ (հրացանագործներ).

գ) հրազենի օժանդակ և ոչ մետաղյա մասեր պատրաստողներ՝ չախմախչիներ (հրացանի զարկանը շինողներ) և ղոնդախճիներ (հրացանի խզակոթ շինողներ).

դ) պաշտպանական զենք շինողներ՝ թաշմաճիներ (նուրբ երկաթե օղազրահներ շինողներ): Ի տարբերություն կովկասյան զինագործների, որոնք մինչև XIXդ. սկիզբը պահպանել էին սաղավարտների արտադրությունը (հատկապես ադրբեջանների և չերքեզների մեջ)[21],հայկական զինագործության մեջ դրանք բացակայում են.

ե) երկաթանային գործի վարպետներ և փամփշտագործներ՝ թոքմաճիներ (թնդանոթ ձուլողներ) և թոփչիներ (ռմբագնդեր և փամփշտի գնդակներ ձուլողներ):

Սառը զենք պատրաստողները (միջնադարում պետարարներ)[22] հնագույն ավանդական զբաղմունքի տերերն ու շարունակողն էին, որոնք պահպանել էին

---

[17] Հ ո վ հ ա ն ն ե ս Օ ձ ն ե ց ի, Երկեր, Եր., 1999, էջ 8:

[18] Լ. Խ ա չ ի կ յ ա ն, Երզնկայում 1280թ. կազմակերպված եղբայրությունը, ԳԱ Տեղեկագիր, 1951,12: Նույնի, Երզնկա քաղաքի «Եղբարց միաբանության» կանոնագիրքը, Եր., 1962:

[19] Ա ր բ ա հ ա մ Ե ր և ա ն ց ի, Պատմություն պատերազմացն 1721-1736թթ., Եր., 1938, էջ 12,15,18: Լեո , Հայոց պատմություն, հ III, գիրք II, Եր., 1973, էջ 154-155: Թ. Հակոբյան, Երևանի պատմություն (1500-1800 թթ.), Եր., 1972, էջ 67:

[20] Э. А с т в а ц а т у р я н, նշվ.աշխ., մասն 1, էջ 150:

[21] Кавказское оружие (буклет, составитель Э. Аствацатурян) Государственный Историческй музей.

արհեստի բոլոր հմտությունները, տեխնիկա-տեխնոլոգիական առանձնահատկությունները ու զեղազարդման հնարքները: Անին և Դվինը զինագործության նշանավոր կենտրոններ էին, և այստեղ արտադրվող թրերի, սուսերների, սրերի, նիզակների, սակրերի, մարտական կացինների, գուրզերի, դանակների և այլնի համբավը դուրս էր եկել Հայաստանի սահմաններից[23]: XI դարում անեցիների գաղթից հետո, Ղրիմում, Պոդոլիեում, Լվովում և այլուր հաստատված անեցի վարպետները բերեցին իրենց բարձրարվեստ զինագործական հմտությունները: Միջնադարյան և նոր շրջանի օտար հեղինակները ևս հիացմունքով են խոսում հայկական թրերի և դաշույնների անթերի պողպատյա շեղբերի, դրանց կոթերի (բռնակ) և պատյանների բարձրարվեստ զեղազարդման մասին: Ռուսական կայսրություն ներգաղթելուց հետո էլ կարինցի և կարսեցի զանազործներն իրենց նոր բնակավայրերում շարունակեցին զբաղվել ավանդական արհեստով: Նրանց արտադրանքը դիմացավ թե՛ բուն ռուսական՝ գործարանային, և թե՛ հյուսիսկովկասյան բավականին բարձրարվեստ սառը զենքի հետ շուկայական սուր մրցակցությանը (1870թ. իր հաշվետվությունում Թիֆլիսի նահանգապետը հիշատակում է Ախալցխայի 5 վարպետների անուններ, որոնք մեծ համբավ էին ձեռք բերել նույնիսկ արտասահմանում, որոնցից 2-ը սառը զենքի վարպետներ էին[24] կամ 1872թ. Ախալցխա այցելած Ռուսական կայսերական աշխարհագրական ընկերության ներկայացուցիչ Լ.Զագուրսկին ախալցխացի արծաթագործ և զինագործ վարպետների արտադրանքը համեմատում է բյուզանդական բարձրաճաշակ արվեստի հետ)[25]: Գրավոր և բանավոր մի շարք աղբյուրներ վկայում են, որ դաշունագործության որոշակի հմտություններ, դրանց զեղազարդման բազմաթիվ հնարանքներ՝ արծաթե բանվածք և դրա ընդելուզում կիսաթանկարժեք և կեղծ քարերով, լեզգի վարպետները սովորել են Կարինի և Ախալցխայի հայ զինագործներից[26]: Սառը զենք պատրաստողներից XIXդ. պահպանվել էին ղլճիները (թուր ու դաշույն պատրաստողներ) և բիչախչիները (դանակներ սուրքողներ), որոնց միջև կային մի շարք էական տարբերություններ: Առաջիններն մարտական և ինչ-որ չափով դեկորատիվ նշանակություն ունեցող զենքեր էին պատրաստում, որոնք այս կամ այն չափով զեղազարդված կամ պաճուճազարդված էին՝ ռուսական և եվրոպական թրեր և սուսերներ, արևելյան կիսակոր(կեռ) յաթաղաններ, կոզակային կամ հեծելազորային կարճ թրասուսերներ (шашка), որսորդական և զեղազարդ դաշույններ և այլն: Արևելյան դաշույնները, որոնք ռուսական մասնագիտական գրականության մեջ թյուրիմացաբար անվանվում են «կովկասյան» կամ «չերքեզական», առանձնակի տեղ ունեին այս համակարգում, քանի որ դրանք պատրաստող վարպետները հաակապես հմուտ էին և՛ երկաթագործության և՛ արծաթագործության բնագավառներում (Ախալցխայում և ողջ Կովկասում մեծ համբավ ուներ զինագործ Կոջոյանների ընտանիքը[27], իսկ Կարսում և Ալեքսանդրապոլում՝ Ղլչյանները): Ղլճիները բացի զենք պատրաստելուց, զբաղվում էին նաև դրանց վերանորոգմամբ (վնասված շեղբի զոդում, ջարդված կոթերի նորոգում), ինչպես նաև լրացուցիչ զեղազարդմամբ[28]: Մի կարևոր հանգամանք ևս՝ կապված ղլճիների հետ. դա արհեստի զուտ քաղաքային լինելն էր:

Բիչախչիները՝ հասարակ դանակներ և դրանց շեղբեր սարքողները, զբաղվում էին սոսկ կենցաղային կամ արհեստագործական գործիքների (մսագործի. կոշկակարի, կաշեգործի, ծխախոտագործի տարբեր չափերի և ձևերի դանակներ)

---

[22] *Բ. Առաքելյան, նշվ. աշխ, էջ 143: Վ. Աբրահամյանը սեհարարներ անվանում է ընդհանրապես բոլոր զինագործներին, նշվ. աշխ., էջ 146:*

[23] *Բ. Առաքելյան, նշվ. աշխ., 143-151:*

[24] *Э. Аствацатурян, նշվ. աշխ, մասն I, էջ 117:*

[25] *Л. Загурский, Поездка в Ахалцихский уезд в 1872г, Записки Кавказского отдела Императорского географического общества, кн.VIII,Тифлис, 1873, стр.24.*

[26] *Э. Аствацатурян, նշվ. աշխ, մասն I, էջ 7-8:*

[27] *Վ. Աբրահամյան, Հայ համքարությունները…, նկ 24: Կոջոյաններն աշխատում էին նույնիսկ Վլադիկավկազում և Կիսլովոդսկում (Э. Аствацатурян, նշվ. աշխ, մասն 2, էջ 156,164):*

[28] *ԴԱՆ, Տետր I, Ախալցխա, 1986-1987:*

խլերի պատրաստմամբ:Նրանք սարքում էին նաև անկոթ՝ բանչար հավաքելու դանակներ (շղբիկ, չխպլիկ)[29]: Դանակագործությունը սոսկ քաղաքային արհեստ չէր (Թիֆլիսում XIXդ. կեսերին կար նույնիսկ բիչախչիների համքարություն, որի անդամների 90% հայեր էին)[30] և դրանով զբաղվում էին նաև գյուղական դարբինները կամ դանակագործները (օրինակ. Ջավախքի Մեծ Կոնդուրա գյուղի բիչախչիները մինչև XXդ. կեսերը սպասարկում էին Նինոծմինդայի ողջ ենթաշրջանը)[31]:

Հրացանի մետաղյա հիմնական մասերի, ավելի ճիշտ երացանի և ատրճանակի փող պատրաստողները կոչվում էին լուլաճիներ: Այս արհեստն առավել մեծ տեխնիկա-տեխնոլոգիական հմտություններ պահանջող զինագործական ենթաճյուղ էր, և դրանցով զբաղվողների թիվը մեծ չէր: Հրացանափողն իր մեջ միավորում էր ոչ միայն դարբնի, այլև խառատի և ծուլագործի հմտությունները: Վերոհիշյալ արհեստը գոյատևեց մինչև XIXդ. կեսերը միայն Կարինում: Ախալցխայում և Ալեքսանդրապոլում արհեստը ներգրավվեց թիվենքչիների (հրացանագործներ) զբաղմունքի մեջ: Հարկ է նշել նաև, որ հրացանի և ատրճանակի փողը ոչ միայն սոսկական խողովակ էր, այլև՝ դեկորատիվ և գեղարվեստական իր:

Հրազենի օժանդակ և ոչ մետաղյա մասեր պատրաստողներից առանձնանում են ղոնդախչիներն ու չախմախչիները: Ղոնդախչիները պատրաստում էին հրացանի խզակոթը և հրացանափողի փայտե բունակը (ռուս.цевье): Հին կայծքարային հրացանների փայտե (սամշիդ տեսակի՝ հիմնականում Սարիղամիշի անտառներից բերված) խզակոթերը զարդարվում էին փորագրությամբ կամ ընդելուզվում ոսկորով (փղոսկր, եղնիկի ոսկոր և այլն), կամ արծաթե, պղնձյա նրբագեղ թիթեղներով: Փաստորեն, այս արհեստավորները նաև հմուտ արծաթագործներ, ոսկրագործներ և փորագրիչներ էին: Ղոնդախչիների արհեստը ևս չդիմացավ մրցակցությանը և դուրս մղվեց գործարանային ավելի էժան ու հարմար (հմա. թեքն) արտադրանքով: XIX դ. 70-ական թթ. Սկրաիչ (ավագ) Չիֆթալարյանի պատրաստած արծաթե գեղազարդված խզակոթով հրացանը նվեր էր մատուցվել Աբասթումանում հանգստացող Ալեքսանդր II ցարին, որին շատ էր դուր եկել նրբագեղ աշխատանքը և 100 ոսկի պարգև էր տվել շնորհաշատ վարպետին (հրացանը պահվում է Ս.Պետերբուրգի Պետական Էրմիտաժում)[32]: Ղոնդախչիների հետ կոոպերացված աշխատում էին հատուկ զարդարանք պատրաստող արծաթագործները, որոնք արտադրում էին՝ «թվանքի բիլազուկ» (փողը փայտե մասերին միացնող արծաթե ապարանջանաձև ամրակներ), խզակոթի և երացան փողի սևադապատ զարդեր և այլն[33]:

Կայծքարային, գծային, անիվավոր (ռուս. колесцовые) հրացանների ձգանը և ռաքը պատրաստող վարպետները հայտնի էին չախմախչի անվամբ: Որպես կայծքար օգտագործվում էր լեռնային ագաթի հատուկ տեսակ[34], շնիկր՝ հարվածող մրճիկը, պատրաստվում էր կամ լատունից (արույր) կամ էլ պղնձից: Իսկ որսորդական միափող կամ երկփող հրացանների մրճիկները երկաթյա էին: Փակաղակավոր հրացանների լայն տարածմանը հակառակ, XIX դ. վերջերից այս արհեստն սկսում է անկում ապրել, իսկ արհեստավորների մի մասը վերաորակավորվում են որպես զարկանի ասեղ (боиковая игла) պատրաստողներ[35]:

Պաշտպանական օղազրահներ՝ նուրբ շղթա-օղեր շինողները հայտնի էին թաշմաճի անվամբ, որոնք XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին վերաորակավորվել էին: Հիմքում զինագործական արհեստը, փաստորեն, վերափոխվել էր զուտ կենցաղային արտադրանք տվող երկաթագործական ճյուղի:

---

[29] *Սահակ վարդապետ Ամատունի,Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 513, 516: Գ. Աղանյան, ԴԱՆ,Տետր 2, Բոգդանովկա, Ծալկա, 1986,1987:*

[30] *Э. А с т в а ц а т у р я н, նշվ. աշխ, մասն 1, էջ 140:*

[31] *Գ. Ա ղ ա ն յ ա ն, ԴԱՆ, Տետր 1, Ախալցխա,1986:*

[32] *Նույն տեղում:*

[33] *Э. А с т в а ц а т у р я н, նշվ. աշխ,մասն 1, էջ 143: Գ. Աղանյան, ԴԱՆ, Տետր 1, Ախալցխա, 1986:*

[34] *Նույն տեղում:*

[35] *Նույն տեղում:*

Հատուկ հետաքրքրության առարկա են երեւանային գործի հետ կապված արհեստները՝ թրքմաճիներ (թնդանոթագործներ) և թոփչիներ (ռմբագնդեր և ընդհանրապես գնդակներ ձուլողներ), որոնք նս նույն ժամանակաշրջանում վերափոխվեցին և դարձան կենցաղային կամ այլ իրեր ձուլողներ (արույրից, բրոնզից, թուջից՝ հավանգներ, թեյնիկներ, զանգեր և այլն)[36]:

Զինագործության բազմաթիվ ճյուղերի անկումը և դրանց հետագա վերափոխումը շարունակվեց նաև հետագայում: XIXդ. վերջին XXդ. սկզբին զինագործների մեծ մասը դարձան որսորդական և քիչ չափով մարտական հրացեն կամ էլ կենցաղային մեխանիկական զանազան սարքեր (կարի մեքենա, կաթի զտիչ, մեխանիկական կալոիչ) վերանորոգողներ: Հարակից արհեստների՝ խառատության, փականագործության, գործիքաշինության բնագավառներում ձեռք բերված հմտությունները թույլ տվեցին զինագործներին արագ «կողմնորոշվել», նաև հարմարվել նոր իրասպայմաններին: Նրանցից քչերը շարունակեցին պարապել իրենց արհեստով և այդ բացառություններից էր Փ. Չիֆթալարյանը, որը 1943թ. մասնակցել և հաղթել է գեներալ Լոմաձեի կազմակերպած «Դաշույնների մրցույթին», ինչպես նաև արժեքավոր ներդրում է կատարել հրետանային սպառազինության կատարելագործման մեջ (փականակների և զարկանի ամրության ապահովման), որի համար ԽՍՀՄ հրետանու գլխավոր մարշալ Ն.Վորոնովի 1944թ. դեկտեմբերի 16-ի հրամանով խրախուսվել է 300 ռուբլի դրամական պարգևով[37]:

Տեխնիկա-տեխնոլոգիական հմտությունների, ինչպես նաև օգտագործվող գործիքների ու հարմարանքների տեսակետից զինագործությունը բազմաթիվ աղերսներ ուներ երկաթագործության տարբեր ճյուղերի հետ: Սակայն, ինչպես նշվեց վերևում, այս արհեստը պարունակում էր հարակից գրադմունքների բազմաթիվ տարրեր և, վերջապես, ուներ նաև իրեն հատուկ հմտություններ: Դարբնության հատուկ գործիքների ու հարմարանքների (հնոց, փուքս, գնդան, մամլակ, մուրճեր և այլն) կողքին զինագործներն իրենց ձեռքի տակ ունեին տարբեր չափերի, մինչև փոքր տրամաչափին (колибр) հասցնող բարակ ու հաստ շաղափ-ծակիչներ (յազմու-թուրք.,райбер-ռուս.), նետ (ծայրին արճիճ կապած ասեղնաձև գործիք), շուստովկա (կլոր, մինչև կեսը ճեղքով, ծայրն ուղղանկյուն շոտ եկող մասով, փայտե գործիք, որի մեջ խարտոց էր տեղադրված և նախատեսված էր հրացանի կամ ատրճանակի փողի ներսը խարտելու, կոկելու համար), շեշխանա-нарез (վեցանկյուն քթով, պտուտակով,ծայրը սուր գործիք, պտուտակի տեղը բացելու համար), ակոս (փորակ, нарез) հանելու հաստոց (շեշխանի տախտ), զսպանակները տեղը գցելու գործիք (յայ դայդալա), բիրդանկա ունքի հրացանի անցքերը բացելու հարմարանք (բերադա) և այլն[38]:

Ի տարբերություն դարբնի՝ սրանց առավել շատ էր անհրաժեշտ պողպատը և ,ընդհանրապես, կարծր ու դիմացկուն երկաթը: Սառը զենքի, ինչպես նաև հրազենի պատրաստման համար լայնորեն օգտագործվում էր մխելու (ջրելու) տեխնոլոգիան: Հայ զինագործներին զոնե լավ հայտնի էր դամասկյան պողպատի (փնջած պող-պատ- букетный дамаск) ստացման գաղտնիքները[39]:

Զինագործական արհեստանոցները ինչպես Կարինում, այնպես էլ Ախալցխայում, գտնվում էին դարրինների շարքում (օր. Ախալցխայում՝ «դամրճնոց չարսու», այժմ՝ Հ.Թումանյան փողոց կամ շուկային մոտ Мардегейская улица)[40]: Աքեեստունոցի ներսույթը շատ բանով նման էր դարբնոցին, սակայն հաշվի առնելով մետաղի սառը մշակման ավելի լայն կիրառումը, այստեղ առկա էին խառատային և փականագործական հաստոցներ ու հարմարանքներ:

---

[36] *СМОМПК, вып.11, стр121.*

[37] *Փաստաթղթերի բնօրինակները պահվում են ՀԱՊԹ փաստաթղթերի ֆոնդում, կրկնօրինակները՝ տողերիս հեղինակի անձնական արխիվում:*

[38] *Գ. Աղասյան, ԴԱՆ, Տետր 1-2: Հասաոցների մեծ մասը ցուցադրվում է Ախալցխայի զավառագիտական թանգարանում, իսկ մի փոքր հատվածը՝ ՀԱՊԹ-ում:*

[39] *Նույն տեղում:*

[40] *Э. Аствацатурян, նշվ. աշխ,մասն 1, էջ 151:*

Զինագործության վերաբերյալ մի հետաքրքիր դիտարկում ևս, որը խոսում է այս արհեստի յուրահատուկ բնույթի և տեղի մասին: Ի տարբերություն նույն ղտրբնության, այստեղ ավելի քիչ է ենթավարպետների ու աշակերտների թիվը, և զինագործները, առավել քան մյուս արհեստի ներկայացուցիչները հակված էին միայն իրենց որդիներին կամ էլ մոտ ազգականներին փոխանցելու իրենց հմտությունները: Նրանցից շատերը, որոնք զինեին կամ ահրասլետում էին այս չափազանց բարդ ու աշխատատար արհեստի գաղտնիքներին, չունենալով ժառանգներ, այդպես էլ չթողեցին արժանավոր հետևորդներ: Ախալցխայում արհեստի ուսուցումը տևում էր 5-7 տարի, Ալեքսանդրապոլում՝ 6-9 տարի և այլն[41]:

Ախալցիխայի, Կարսի և Ալեքսանդրապոլի զինագործները բավական հաջող մրցակցում էին նաև Տուլայի և Զլատոուստի եռչակավոր վարպետների հետ, իսկ Ղրիմի և 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմների ժամանակ, որ ժողովուրդի մեջ ավելի տարածված էին Տեր-Ղուկասովի և Լորիս-Մելիքովի կոհվներ անունով, ախալցիխացի և ալեքպոլցի զինագործները նորոգում ու կատարելագործում էրն ռուսական գործարանային հրացանները[42]: 1862 թ. ախալցխացի նշանավոր վարպետ Մահախի Գևորգը (Բուրունսուզյան) Լոնդոնի միջազգային ցուցահանդեսում ներկայացրել էր թուր և դաշույն, իսկ 1867թ. Փարիզում Մկրտիչ (ավագ) Չիֆթալարյանի հետ ներկայացրել էր թրատուսեր, արծաթյա բանվածքով ատրճանակ, ոբսորդակոտն դանակ և արծաթե ռանվածքով կարաբին, որոնք արժանացել էին բարձր պարգևի և այլն: Սահակի Գևորգի մի քանի աշխատանքներ («թուրքական» սրեր) պահվում են Էրմիտաժում (NN2824; 3956), Ռուսաստանի պատմության պետական թանգարանում (N 3041), ունեն համապատասխան արձանագրություններ ("Работалъ переселянин Магдесий Кеорк Пурунсузовъ" "1834") և կրում են Նիկոլայ II ցարի անձնական զինանշանը (վենզելը)[43]:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ զինագործությունը, լինելով երկաթագործությունից սերված արհեստների մի ուրույն խումբ, իր մեջ ներառնում էր հարակից արհեստների բազմաթիվ հմտություններ, լայնորեն տարածված էր և՛ Հայաստանում, և՛ նրա սահմաններից դուրս՝ հայաշատ բազմաթիվ քաղաքներում:

АРМЯНСКОЕ ОРУЖЕЙНОЕ ДЕЛО В XIX-НАЧАЛЕ XX ВЕКА (ПО МАТЕРИАЛАМ КАРИНА И АХАЛЦИХА)

Резюме *Г.Аганян*

В статье сделана попытка охарактеризовать армянское оружейное дело в XIX-началe XX века на примере Карина и Ахалциха как известных центров этого ремесла.Дана классификация отраслей и подотраслей данного ремесла,видов и типов оружия по технико-технологическим и прикладным характеристикам.

---

[41] *Э. А с т в а ц а т у р я н, նշվ. աշխ, մասն 1, էջ 149:*
[42] *Գ. Ա ղ ա ն յ ա ն, ԴԱՆ, Տետրեր 1,2:*
[43] *Э. А с т в а ц а т у р я н, նշվ. աշխ, մասն 2, էջ 65-67:*

Կարինե ԲԱՋԵՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Դարեր ի վեր ասեղնագործությունը եղել է հայ կնոջ ամենասիրած զբաղմունքներից մեկը,ուղեկցելով նրան ողջ կյանքի ընթացքում: Ինչպես ժողովրդական ստեղծագործությունն ընդհանրապես, այնպես էլ ասեղնագործությունը կապված էր ժողովրդի պատմության հետ, բազմաթիվ փոփոխություններ է ունեցել, կրել տարբեր ազդեցություններ, սակայն միշտ էլ կարողացել է անաղարտ պահել ու մեզ հասցնել բնիկ հայկականը, այն մաքուրը, որն ստեղծել է ժողովուրդը:

XIX դ. վերջին և հատկապես XX դ. առաջին քառորդում սոցիալ-անտեսական և քաղաքական մի շարք գործոնների բերումով, հայկական ասեղնագործությունը լուրջ և խոր փոփոխությունների ենթարկվեց:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանը նշանավոր էր նախ քաղաքական վարիվերումներով և դրա հետևանքով հայ ժողովրդի համար ստեղծված ծանր կացությամբ: Այդ տարիներից սկսած և մինչև XX դ. սկիզբը շարունակվող նախ համիդյան, ապա երիտթուրքական հայահալած քաղաքականությունն Արևմտյան Հայաստանում իր ողբերգական ավարտն ունեցավ 1915թ-ին, անջնջելի հետք թողնելով ողջ հայ ժողովրդի և նրա ստեղծած մշակույթի վրա: Հայ ժողովրդի մի հոծ զանգված արմատախիլ արվեց: Նրա հետ միասին իր բնիկ հայրենիքից անջատվեց նաև այդ ժողովրդի ստեղծած մշակույթը, ցրվելով ամբողջ աշխարհում, զարմանք ու հիացմունք առաջացնելով օտարերկրացիների շրջանում: Ճիշտ է, որտեղ էլ որ բնակություն են հաստատել հայերը, շարունակել են արարել, ստեղծագործել, սակայն դա արդեն ուրիշ որակ է, կազմված հայկական և օտար տարրերից:

XX դ. ամենախոշոր քաղաքական իրադարձություններից մեկը, որը բերեց նաև սոցիալ-անտեսական նշանակալի փոփոխություններ նախկին Ռուսական կայսրության ժողովուրդների կյանքում՝ Հոկտեմբերյան հեղաշրջումն ու խորհրդային կարգերի հաստատումն էր այնտեղ: Քաղաքական այս իրադարձություններն այնքան մեծ ազդեցություն գործեցին ժողովրդի վրա, որ վերջինս որոշ ժամանակահատված մոռացության մատնեց ավանդական կիրառական գեղազարդման արվեստը: Դա այնքան նկատելի էր, որ ահազանգեր հնչեցվեցին մամուլում՝ հարց բարձրացնելով վերականգնելու արվեստի որոշ ճյուղեր, այդ թվում նաև ասեղնագործությունն ու ժանեկագործությունը[1]: Ընդ որում, օրինակ էին բերվում արտասահմանյան երկրներում կազմակերպված արհեստանոցները, որոնք մեծ օգուտներ էին տալիս եվրոպացի և ամերիկացի միսիոներներին:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին հայկական ասեղնագործություն ներթափանցեցին որոշ օտարածին՝ եվրոպական և ռուսական երևույթներ, որոնք դրսևորվեցին հատկապես քաղաքային կենցաղում: Նման տիպի ասեղնագործությունները արդեն տարբերվում էին ոչ միայն զարդանախշերով, որոնք կարելի էր հեշտությամբ փոխառնել, այլև տեխնիկայով, գործածված նյութերի տեսակներով և գունային լուծումներով: Այս երևույթն ուներ իր նախապատմությունը:Նախ՝ դա քաղաքային կենցաղի արմատավորումն էր Հայաստանում: XIX դ. կեսերից քաղաքային կենցաղը խիստ աշխուժանում է և արդեն դարավերջին գավառական տիպի շատ քաղաքներ ստանում են ուրույն մշակութային դեմք: Դրանցում սկսում են գործել բազմաթիվ առևտրա-արդյունաբերական կենտրոններ, և որոշ քաղաքներ մասնագիտանում են ապրանքների առանձին տեսակների արտադրության մեջ: Երկրորդ նախապայմանը՝ օտարերկրյա քաղաքների հետ նորաստեղծ կապերի ամրապնդումն ու ինտենսիվացումն էր: Դրան հատկապես նպաստեց XIX դ. վերջին կառուցված երկաթուղին: Վերջինս աշխուժացրեց քաղաքների առևտրա-արդյունաբերական զարգացումը, սերտ կապ ստեղծելով ռուսական և եվրոպական քաղաքների հետ: Եվ երրորդ ու գլխավոր գործոնը՝ դպրոցների ծաղկումն էր ողջ

---

[1] *А. М а к а р ь я н, Кустарные производства армян-беженцев, "Армянский вестник", М., 1916,4.*

Հայաստանում: Բացված իգական, արական և խառը վարժարանները, գիմնազիաները և ուսումնարանները հիմնարար գիտելիքներ էին տալիս հայ մանուկներին, որոնք հետագայում իրենց կրթությունն էին շարունակում օտար ափերում:

Մեզ համար այս գործոնն այն նշանակությունն ունի, որ իգական վարժարաններում և գիմնազիաներում պարտադիր ուսուցանվում էր ձեռագործ՝ կարուձև, ասեղնագործություն, ժանեկագործություն, որոնց տիրապետելն անհրաժեշտ էր կրթված հայ օրիորդի ու տիկնոջ համար:

Ասեղնագործական արվեստի աշխուժացմանը նպաստեց նաև կանանցն ուղղված հանդեսների տպագրությունը[2]: XIXդ. վերջին և XXդ. սկզբին ասեղնագործող վարպետների, կանանց ու աղջիկների համար մի շարք քաղաքներում՝ Թիֆլիս, Ս.Պետերբուրգ, Կ.Պոլիս, Տրապիզոն, լույս են տեսնում ասեղնագործության ձեռնարկներ[3], որոնցում ներկայացված զարդանախշերն ու տարածներն օգտագործվում էին ասեղնագործ աշխատանքներում: Այս բոլորը միասին համախմբեցնում էին տեղական առանձնահատկությունները և պայմաններ առեղծում նոր տիպի ասեղնագործության առաջացման, որը հիշյալ ժամանակահատվածում գրեթե բոլոր քաղաքներում նման էր իրար, ինչ խոսք, պահպանելով հանդերձ ավանդականի հիմնական գծերը: Բացի այս ասենից, իր ազդեցությունն ունեցավ նաև XIX դ. երկրորդ կեսից հայոց կենցաղ մուտք գործած եվրոպական նորաձևությունը, որը մասամբ դուրս մղեց ավանդութային հագուստի համալիրը՝ նրա հետ միասին նաև ազգային տարազի ճոխ ասեղնագործությունը:

Քաղաքական և սոցիալ-տնտեսական վերը հիշված գործոնները հող նախապատրաստեցին օտարածին երևույթների արմատավորման և հայկական ժողովրդական ասեղնագործության ավանդութային տարրերի դուրսմղման համար: Այդ է պատճառը, որ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո ասեղնագործության բնույթը գրեթե հիմնովին փոխվեց:

Մինչև 1930-ական թթ. վերջերը Հայաստանում շատ քչերն էին շարունակում ասեղնագործել: Բացառություն էին կազմում արևմտահայ տեղահանության այն շրջանները ու քաղաքները, որոնք ունեին այդ արվեստի դարավոր ավանդույթներ: Ձեռարվեստին մեկեն զարկ արվեց 30-ական թթ. վերջերից և հատկապես 1940-60-ական թթ.: Այդ տարիներին ասեղնագործությունն ընդգրկել էր Հայաստանի բոլոր շրջանները, ինչպես քաղաքները, այնպես էլ գյուղերը և գրեթե բոլոր ընտանիքները: Ասեղնագործությունը հիմնական զբաղմունք էր դարձել անգամ արևելահայ տեղաբնակության այն շրջաններում[4], որոնցում ավանդական ասեղնագործությունը թույլ էր զարգացած և երկրորդական տեղ էր գրավում տնայնագործական մյուս արհեստների համեմատ: Այստեղ ասեղնագործ իրերը դարձան բնակարանի ներքին հարդարման պարտադիր տարրեր:

Հիշյալ երևույթը նորից բացատրվում է սոցիալ-անտեսական վերափոխություններով: Խորհրդային կարգերի հաստատումից հետո, երբ քայքայված անտեսության վերականգնումը դարձել էր գերագույն խնդիր, Հայաստանի բնակչությունը մոբիլիզացվել էր դրա իրականացմանը, և ավանդական արհեստներից շատերը մղվել էին հետին պլան: Բացի այդ, գաղափարախոսական նկատառումներից ելնելով, նախախորհրդային շատ երևույթներ համարվում էին իրենց դարն ապրած, քաղքենիական և նույնիսկ վնասակար նոր հասարակության համար: Հայոց կենցաղ էին մուտք գործում պարզ, անպաճույճ կահկարասին, հագուստը, սպասքը և այլն (հիմնականում հայրենական արտադրության գործարանային ապրանքներ), որոնք լրացուցիչ գեղազարդման կարիքը չունեին: Սրա արդյունքում դուրս մղվեցին ասեղնագործ շատ իրեր ու առարկաներ, որոնք նախկինում ավանդական բնակարանի զարդն էին կամ կենցաղային անհրաժեշտություն էին:

---

[2] *«Տարազ», Թիֆլիս, 1890-1919թթ., «Ծաղիկ կանանց հատուկ», Կ.Պոլիս, 1905-1907թթ.:*

[3] *Ա. Բ ր ի լ յ ա ն չ ի կ յ ա ն, Հայկական մոնոգրամներ և ծաղկագրեր ձեռագործի համար, Ս.Պետերբուրգ, 1892: «Տետր ասեղնագործության», գծագրեց և վիմագրեց Մ. Ոսկինար, Տրապիզոն, 1907 և այլն:*

[4] *Նկատի ունենք Խորհրդային Հայաստանի հյուսիս- արևելյան շրջանները և Լոռի-Գուգարքը:*

Անհրաժեշտ է փաստել նաև դպրոցների դերը: Ինչպես հայտնի է, խորհրդային իշխանությունը որդեգրեց բնակչության անգրագիտության վերացման կուրս: Այդ նպատակով մինչխորհրդային ուսումնական հաստատությունների փոխարեն բացվեցին լիկկայաններ, բանֆակներ և յոթնամյա դպրոցներ, որտեղ հիմնական ուշադրությունը դարձվում էր բնակչությանը քաղաքականապես կրթելուն և տարրական գիտելիքներով ապահովելուն, որի արդյունքում դպրոցներից համարյա հանվեցին ձեռարվեստին հատկացված ժամերը, որը նպաստեց ասեղնագործության և ժանեկագործության ժամանակավոր «մոռացությանը»: Բարեբախտաբար այս արատավոր գործընթացը երկար չշարունակվեց, այլ արձանագրվեց նոր հետաքրքրության աճ, որը կապված էր 1920-40-ական թթ. սփյուռքահայության զանգվածային ներգաղթի հետ: Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր պատմամշակութային մարզերը ներկայացնող հայրենադարձներն իրենց հետ Խորհրդային Հայաստան բերեցին իրենց ծննդավայրերի մշակույթը, այդ թվում նաև ասեղնագործությունն ու ժանեկագործությունը: Օտար ափերում ասեղի ու թելի «օգնությամբ» գոյություն ապահոված գաղթական հայուհին Խորհրդային Հայաստանում ստեղծագործելու բարենպաստ պայմաններ ստացավ՝ սեր արթնացնելով տեղի բնակչության մեջ:

Կարևոր է նաև նշել, որ 1930-ական թթ. կեսերից որոշակի դրական սոցիալ-տնտեսական տեղաշարժեր նկատվեցին Խորհրդային Հայաստանի կյանքում, որոնք ուղղակիորեն անդրադարձան բնակչության նյութական և հոգևոր առաջընթացի վրա: Այստեղ վճռական նշանակություն ունեցավ նաև գյուղի և քաղաքի միջև տարբերությունների համահարթեցման պաշտոնական քաղաքականությունն ու քաղաքային բնակչության տեսակարար կշռի ավելացումը: Դրա ամենանշանակալի հետևանքը գյուղական շրջաններում ավանդական գլխատներից նոր՝ քաղաքային տիպի (հյուրասենյակով, ճաշասենյակով, ննջարաններով և այլ նորույթներով) բնակարանին անցնելն էր: Նման տների ներսույթը պահանջում էր համապատասխան հարդարում, ուստի և կիրառության մեջ են մտնում կահույքի նոր՝ ժամանակակից տեսակներ (մահճակալներ պահարանների տարբեր տեսակներ, զարդասեղաններ), որոնք անհամատեղելի էին ավանդական գլխատան ներսույթին և պահանջում էին այլ՝ նորաձև հարդարում: Առաջանում էր բազմատեսակ ծածկոցների ու սփռոցների պահանջ, որոնք զարդարվում էին ձեռագործով:

Թվարկած քաղաքական և սոցիալ-տնտեսական բոլոր գործոնների հետևանքով Խորհրդային Հայաստանի ասեղնագործությունը դառնում էր մի ամբողջական՝ հիմքում ազգային, արտահայտման ձևերով ու եղանակներով համախորհրդային երևույթ:

Խորհրդային Հայաստանի ասեղնագործությունն, այսպիսով, ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք բնութագրական են հատկապես քննարկվող ժամանակահատվածի համար, և որոնցով այն տարբերվում է ավանդական ժողովրդական ասեղնագործությունից: Դա արտահայտվում է թե՛ ասեղնագործության համար գործածվող նյութերում ու գործիքներում, թե՛ զարդանախշերում: Որպեսզի ավելի դիտելի լինեն նման նորությունները ու տարբերությունները տարբեր ժամանակաշրջանների ասեղնագործական արվեստում, կփորձենք տալ դրանց համեմատական բնութագիրը:

Ի տարբերություն XIX դ.վերջի, խորհրդային շրջանում ասեղնագործության համար գործածում էին բացառապես մեքենայական արտադրության գործվածքներ, որոնք XX դ.սկզբից կենցաղից դուրս մղեցին տնայնագործական եղանակներով ստացված բամբակյա, բրդյա և մետաքսյա կտորները: Այս տեսականու մեջ էլ գերապատվությունը տրվում էր բամբակյա գործվածքներին: Վերջիններիս անվանումներն էլ որոշ չափով համապատասխանում են նրանց գործարանային տեսականուն և Հայաստանի բոլոր շրջաններում համընկնում են միմյանց: Թվարկենք դրանցից մի քանիսը. գոն, միտկալ, ամիրկա, պոլոտնո, բիազ (Նոյեմբերյանի, Իջևանի և Շամշադինի շրջաններ), փաթուսխա, բատիստ

(Լենինական, Ախալցխա)[5]: XX դ. սկզբին, հատկապես դեկորատիվ նշանակության իրերը՝ բարձերի, մութաքաների երեսները, սփռոցները, պատի զարդերը ասեղնագործում էին կարմիր, կանաչ, բալագույն և շագանակագույն մահուդի վրա, որոնք ավելի շքեղ տեսք էին տալիս իրերին[6]: Մետաքսյա գործվածքներն ավելի քիչ էին գործածվում, քանի որ շատ նուրբ էին և թույլ: Իսկ բրդյա գործվածքները օգտագործվում էին միայն վերոհիշյալների բացակայության դեպքում:

Խորհրդային շրջանում կենցաղամշակութային համահարթեցման գործընթացն ընդգրկել էր նաև ասեղնագործության համար օգտագործվող գործվածքների տեսականին՝ որը Հայաստանի բոլոր շրջաններում, քաղաքներում ու գյուղերում, համեմատաբար ունևոր և ոչ ունևոր ընտանիքներում միատեսակ էր: Այս երևույթը հատկապես ցայտուն դրսևորվեց Հայրենական պատերազմի և հետպատերազմյան տարիներին, երբ ամեն ինչ արտադրվում էր նախ բանակի, ապա նոր բնակչության համար: Գործվածքների սակավության և աղքատության պատճառով հաճախ գործածում էին մաշված, հին կտորներ, որոնց համեմատաբար բարվոք պահպանված մասերը միացնում էին իրար, լվանում, արդուկում և նոր միայն ասեղնագործում: Անգամ պատերազմական տարիների դաժան պայմաններն ու արդյունաբերական ապրանքների սակավությունը հետ չպահեցին հայ կանանց և աղջիկներին իրենց սիրած ձեռարվեստից:

Բոլոր տեսակի գործվածքներից առավել տարածվածն ու գործածականը սպիտակ բամբակյա կտորեղենն էր, չնայած հանդիպում են նաև այլ գույների կտորների վրա արված բանվածքներ: Այդպիսիք օգտագործվում էին երկու դեպքում. նախ, եթե այլ նյութ չէր լինում ձեռքի տակ և երկրորդ, երբ հատկապես գունավոր (գերազանցապես մուգ-միագույն) կտորներ էին ընտրվում ասեղնագործելու համար, որոնց վրա բաց գույներով արված զարդանախշերն առավել ննչեղություն էին ստանում գունային հակադրության արդյունքում:

Ավանդական հայկական ասեղնագործությունը կատարվել է տնայնագործական թելերով, որոնք սակայն XX դ.սկզբից դուրս մղվեցին ներմուծված գործարանային թելերի կողմից (սակավ բացառություններով հանդերձ): Դրանցից ամենամեծ տարածում ստացավ մուլինե կոչվող թելը՝ որն առավել հասանելի էր ու հարմար: Գործածում էին նաև կոճի թելը,որը օսլայազերծելու և ոլորքը փափկեցնելու համար նախօրոք քանդում ու եռացնում էին: Այսպիսի թելերով արված բանվածքն ավելի գեղեցիկ էր ստացվում: Անհրաժեշտության դեպքում գործածում էին նաև մետաքսյա ժապավեններից քանդված թելերը: Եթե ասեղնագործելու համար նախընտրվում էր սպիտակ գործվածքը, ապա թելերի գույները խիստ բազմազան էին՝ բոլոր հայտնի գույներն իրենց երանգներով ու նրբերանգներով:

Ասեղնագործելու պրոցեսում գործածվող կարևոր հարմարանք է քարգահը, որը նույնպես փոփոխություններ կրեց ուսումնասիրվող շրջանում: Դարեր շարունակ հայ ասեղնագործուհին օգտագործել է քառանկյունի քարգահներ, որոնք ամրացվում էին սեղանին, աթոռին կամ հատուկ պատվանդաններով դրվում գետնի վրա: XX դ. սկզբից մուտք են գործում փայտյա շրջանակներից կազմված քարգահները, որոնք մեծամասամբ կոչվում էին ռուսերեն տերմինով «պյալցը»: Սակայն հանդիպում են նաև տեղական, բարբառային ձևեր՝ «կըլկալ», «խախալ» (Իջևան, Նոյեմբերյան, Շամշադին), «կասնախ» (Ապարան)[7]: Ընդ որում, պետք է նշել, որ տարեց ասեղնագործուհիներից շատերը ավանդական տիպի քարգահներին տալիս էին «քյարգյահ» անվանումը, իսկ շրջանաձևերի մասին խոսելիս՝ ռուսական ձևը: Սա մեզ թույլ է տալիս ասել, որ շրջանաձև քարգահները ներմուծովի երևույթ են և հատուկ են ուսումնասիրվող ժամանակաշրջանին:

Միակ գործիքը, որը չի փոփոխվել դարեր շարունակ և շարունակում է նույն հաջողությամբ գործածվել՝ ասեղն է: Բացի այս հիմնական նյութերից և

---

[5] *Կ. Բ ա զ ե յ ա ն, Դաշտային ազգագրական նյութեր (հետայսու՝ ԴԱՆ), Տետրեր, 1979-1981,1983,1986թթ.:*

[6] *Այս երևույթը բնորոշ էր հատկապես քաղաքային կենցաղին:*

[7] *Կ. Բ ա զ ե յ ա ն,ԴԱՆ, Տետրեր, 1979-1981, 1985-1986թթ.:*

գործիքներից, ասեղնագործության ժամանակ անհրաժեշտ են փոքրիկ մկրատներ, պատճենահանող ու թափանցիկ թղթեր, որոնց մասին կխոսվի ստորև:

Հայկական ժողովրդական ասեղնագործությունը հարուստ ու բազմազան է իր կարատեսակներով և կատարողական եղանակներով: Հայ ասեղնագործուհուն հայտնի էին թե՛ համընդհանուր տարածում ունեցող կարատեսակները (ցողունակար, շարակար, շղթայակար, հասարակ թելքաշ, խաչկար և այլք), թե՛ բնիկ հայկական կարեր, որոնք հայտնի էին այն քաղաքների անունով,որտեղ ծագել էին (Վանի, Մարաշի, Այնթապի, Քիլիսի և այլն): Թվարկված կարերի համադրությամբ բանված հայ վարպետների աշխատանքները հիացրել են օտարներին՝ հաջողությամբ մրցակցելով եվրոպական շուկաների թանկարժեք ասեղնագործությունների հետ և բավարարելով գնորդների ճաշակը: Հայ վարպետների ոսկեթել, մետաքսաթել ասեղնագործ թանվածքները բազմիցս ցուցադրվել են համաշխարհային ցուցահանդեսներում և արժանացել մեդալների ու դիպլոմների[8]:

Ցավոք, հայկական ավանդական ասեղնագործությունը XIX դ. վերջերին ենթարկվեց մի շարք փոփոխությունների, որոնց մասին հանգամանալի խոսվեց վերը: XXդ. սկզբի ասեղնագործական արվեստի «ճգնաժամից» հետո հայկական ժողովրդական ասեղնագործության վերելքն այլ տեսք ընդունեց:

1930-ական թվականներից սկսած, ողջ Հայաստանում տարածում են ստանում մի շարք ասեղնագործական եղանակներ, որոնք ավանդական ծեսարվեստին հայտնի չէին: Դրանք բերել էին հայրենադարձները, ինչպես նաև մասսայականացվում էին հատուկ տպագրված նկարների միջոցով, որոնք հրատարակվում էին պետության կողմից՝ ասեղնագործական արվեստի պրոպագանդման նպատակով կամ էլ տարածում էին անհատ վարպետներն ու նկարիչները:

Այդ ասեղնագործությունները Հայաստանի և հարակից հայաբնակ շրջաններում տարբեր ձևով էին անվանվում: Քաղաքներում ՝ Երևան, Լենինական, Մեղրի, Ախալցխա և դրանց հարակից շրջաններում, տարածված են այդ ասեղնագործությունների ռուսերեն, ներմուծված անունները. «ռիշելյե», «կորդոնե», «գլադյ», «կանվա»: Իսկ Հայաստանի ծայրամասային շրջաններում, որոնք քիչ թե շատ ներփակված էին մնացել,և ասեղնագործությունը տարածվել է միջնորդա-վորված ձևով, ստեղծվել էին զուտ տեղային տերմիններ. «կտրտովի», «լցնովի», որոնք հայտնի են և մեր կողմից կօգտագործվեն հետագա շարադրանքում[9]:

«Ռիշելյե», «կորդոնե» ասեղնագործությունը,ինչպես երևում է հենց անվանումից, ունի ֆրանսիական ծագում[10]: Ասեղնագործության այս տեսակը տարածվել 1930-ական թվականներից հետո (ինչը վկայում են նաև ռանսացները) ինչպես ողջ Հայաստանում, այնպես էլ ԽՍՀՄ գրեթե բոլոր հանրապետություններում՝ հիշատակված անունով[11]: Հայ վարպետուհիները դա կոչում էին կարտովի այն պատճառով, որ ըստ զարդանկարի պահանջի, որոշ հատվածներում գործվածքը կտրվում, հանվում է: Այդ կտրված մասերում նորից ասեղնագործվում են օդային բարակ միացումներ՝ սյունիկներ, աստղեր, խխունջներ, ոստայն, ցանց և այլն: Կտրտովի ասեղնագործությունը կատարվում է հարթակարի մի տեսակով, որը հայկական ավանդական ասեղնագործության մեջ հայտնի է օղակար անունով: Օղակարը,լինելով հայտնի ամենապարզ կարատեսակներից մեկը, կտրտովի ասեղնագործության մեջ նորովի ենչողություն է ստացել՝ շնորհիվ գործվածքի, թելի, ասեղնակարերի նոր համադրության և զարդանախշերի նոր համալիրների, որոնք էլ այս ասեղնագործությունը տարբերում են ավանդականից:

Խորհրդային Հայաստանում տարածված ասեղնագործության մյուս տեսակը, որը հայտնի է «գլադյ» ռուսերեն անունով, իր հայերեն համարժեքը՝ «լցնովի», ստացել է դարձյալ ըստ կատարման եղանակի:Սա «լիցք» կոչվող հարթակարի

---

[8] *"Иллюстрированное описание Всемирной промышленной выставки в Париже 1867г",СПб, 1869, стр. 30; там же, 1870,стр. 111.*

[9] *Նույն տերմինը օգտագործվել է նաև Մ.Դավթյանի կողմից իր ասեղնագործության ձեռնարկում:*

[10] *Shefer et Klein,Cours de composition de corativc, Paris.*

[11] *Народы Кавказа, т.2, М.,1962, стр. 92.*

մի տեսակ է և նույնպես նորություն չէ հայկական ասեղնագործության համար: Հարթակարն իր տարատեսակներով (ուռուցիկ, եամրովի, լիցք) ամենահին կարատեսակներից է և լայն տարածում ունի հայոց մեջ վաղնջական շրջանից: Պահպանված հնագույն ասեղնագործության նմուշները կատարված են հենց այս կարատեսակներով[11]: Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում լիցք հարթակարով ասեղնագործության համար ուրույն զարդանախշեր և սյուժեներ են ստեղծվում, որոնք նոր հնչերանգ են ձեռք բերում և բնութագրական են հատկապես 1940-ական ու հետագա տարիների համար:

Ընդհանրապես լցնովի ասեղնագործությունն արվում է երկու ձևով՝ միակողմանի, երբ լցվում է գործվածքի միայն ճիշտ կողմը, իսկ հակառակ կողմում երևում են կարի ահերը և երկկողմանի՝ երբ բանվածքը արվում է այնպես, որ երկու երեսից էլ դիտելի լինի: Խորհրդային շրջանի հայ ասեղնագործության մեջ առավել գործածական է երկկողմանի հարթակարը, որն ավելի հեշտ և արագ է արվում՝ չնայած թելի մեծ ծախսին: Լիցքի համար գործածվում էին տարբեր գույների՝ սպիտակի գերակշռությամբ, բամբակյա և մետաքսյա գործվածքներ, մուլինե թելն իր ամենատարբեր գույներով և երբերանգներով, իսկ կտրտովին արվում էր միայն սպիտակ բամբակյա գործվածքի վրա և սպիտակ կոճի թելով:

Ուսումնասիրվող շրջանում զարդանախշը գործվածքի վրա անցկացնելու մի քանի եղանակներ էին կիրառվում: Ավանդականի հետ զուգահեռ՝ հայ ասեղնագործուհիները հորինել էին բնօրինակի պատճենահանման պարզ ու մատչելի մի եղանակ, որը լայն տարածում ստացավ 1940-50-ական թթ.: Այդ տարիներին, պատճենահանող թղթի պակասության պայմաններում զարդանախշը կրկնօրինակելու համար գործածվում էր ալյումինե գդալ կամ ափսե: Ասեղնագործվելիք գործվածքը փռվում էր բնօրինակի վրա և շփվում նախապես յուղոտած ալյումինե առարկայով, որի արդյունքում զարդանախի հատվածները, որոնք բնականաբար ավելի կոշտ էին և ուռուցիկ, սևանում էին՝ առանձնալով պահանջվող պատկերը: Դրանից հետո զարդանկարները շուլալով կտրում էին, նոր միայն սկսում ասեղնագործել[13]:

Խորհրդային շրջանում լայն տարածում ստացած ասեղնագործության հաջորդ տեսակը «կանվան» է: Սա փաստորեն նույն խաչկարն է, որն այդպես է կոչվել «կանվա» տեսակի գործվածքի պատճառով: Վերջինս հատուկ խաչկար ասեղնագործության համար արտադրված խիստ ցանցկեն կտոր է: Խաչկարը պահանջում է թելերի խիստ հաշիվ, ուստի օգտագործում էին հիշատակված կանվան կամ այնպիսի գործվածք, որի թելերը կարելի էր հեշտությամբ հաշվել: Հակառակ պարագայում գործվածքի թելերը երկու ուղղությամբ քաշում-հանում էին և ստացված վանդակների հաշվով ասեղնագործում: Խաչկարը ևս հնագույն կարատեսակ է և հայկական ժողովրդական ասեղնագործության մեջ ավանդաբար գործածվել է Վասպուրականում՝ տարազի համալիրի գեղազարդման, Բարձր Հայքում, Ջավախքում և Շիրակում՝ տան ներքին հարդարման իրերի համար[14]: Հայկական ասեղնագործության մեջ հայտնի է խաչկարի երեք տեսակ՝ կիսախաչկար, երբ քառակուսու մեջ միայն մի թեք կամ ուղիղ գիծ է անցնում, հասարակ կամ թաք խաչկար և կրկնակի կամ ջուխտ խաչկար, երբ թեք և ուղիղ խաչերը համընկնում են: Ըստ երևույթին խաչկարի այս տեսակները ներկայացնում են կարի զարգացման փուլերը: Եթե ավանդական հայկական ասեղնագործության մեջ գերակշռում էին կիսախաչկարն ու հասարակ խաչկարը, ապա այս շրջանում առավելապես գործածվում են կրկնակի և հասարակ խաչկարերը[15]:

Հատկանշական է, որ ի տարբերություն կարպետի և լցնովի ասեղնագործությունների, որոնք նոր ժամանակներում բացի զարդանախշերից կրեցին նաև տեխնիկական փոփոխություններ, խաչկարը միայն զարդանախշերով ու

[12] *Խ. Դ ա ս ե լ յ ա ն, Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության, Եր., 1981:*
[13] *Կ. Բ ա զ ե յ ա ն, ԴԱՆ, Տետրեր, 1979-1982թթ.:*
[14] *Ս. Դ ա վ թ յ ա ն, Հայկական ասեղնագործություն, Եր., 1972:*
[15] *Կրկնակի խաչկարը տարածված էր միայն զմյուռնիահայության շրջանում և հայտնի էր «Զմյուռնիայի կար» անվամբ:*

զարդահամալիրներով է տարբերվում ավանդականից (եթե հաշվի չառնենք գործվածքներն ու թելերը): Խաչկարի համար գործածել են հիմնականում մուլինե և բրդյա թելեր: Մուլինե թելերով ասեղնագործել են փոքրածավալ իրերը, իսկ մեծածավալ դեկորատիվ աշխատանքները արել են բրդյա թելերով և կոպիտ գործվածքների (այդ թվում նաև վուշե պարկերի) վրա: Խաչկար ասեղնագործության համար տպագրվում և տարածվում էին զարդանախշերի օրինակներ:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում լայն կիրառություն է ստանում XIX դ. վերջի քաղաքային ասեղնագործությանը բնորոշ վերադիր կամ ծվենապատման ասեղնագործությունը, որը հայտնի էր «ապլիկացիա» օտար անվամբ: Դրա համար գործածում էին հնամաշ գործվածքներից մնացած ծվեններ, որոնք, հարմարեցնելով զարդանախշերի տեղերում, ստանում էին գեղեցիկ պատկերներ: Այս եղանակով ասեղնագործում էին գերազանցապես պատի զարդերը:

Խորհրդային շրջանի հետաքրքիր նորամուծություններից է նաև կարի մեքենայով ասեղնագործությունը, որը լայն տարածում էր առացել հատկապես քաղաքներում: Ուշագրավ է, որ մեքենակարված աշխատանքները հաճախ չէին զիջում ձեռագործ ասեղնագործությանը: Կարի մեքենայով արվում էին լիցք և կտրտովի ասեղնագործություններ: Այս եղանակն ավելի արագ էր, ուստի դրանով գործվում էին աշխատատար և շատ ժամանակ խլող մեծածավալ իրերը՝ առավելապես անկողնու սպիտակեղենը, սփռոցները և այլն:

Ինչպես երևում է վերը շարադրվածից, Խորհրդային Հայաստանում գերակշռում էին նոր, իրենց հիմքում ոչ ազգային, ավանդական ժողովրդական ասեղնագործական եղանակներից տարբերվող բանվածքները: Սակայն դա չի նշանակում, որ ավանդութայինն ամբողջությամբ մոռացվել էր: Ավանդական խաչկարով, հարթակարով, Վանի, Այնթապի կարերով շարունակում էին ասեղնագործել հին վարպետուհիները, որոնք տուրք տալով անգամ նորաձևությանը, չհրաժարվեցին իրենց տատերից ու մայրերից ժառանգած արվեստից: Ցավոք, նրանց գործը շարունակող չեղավ, և հնուց եկող ավանդական հայկական ասեղնագործությունն աստիճանաբար մոռացվեց: Այսօր արդեն մատների վրա կարելի է հաշվել այն ասեղնագործուհիներին, որոնք հիշում և գործում են բնիկ հայկական ասեղնակարերով: Մի բան, որ չի կարելի ասել հայկական ասեղնագործ ժանյակի մասին:

Չնայած ասեղնակարերի համեմատաբար նեղ տեսականուն, ասեղնագործ իրերի ու առարկաների բազմազանությունը զարմանք է հարուցում: 1950-ական թթ. հետո, երբ բնակչության կենցաղային պայմանները բարելավվեցին, երբ հնարավորություն ընձեռվեց գնել ցանկացած տեսքի գործվածք ու թել, ասեղնագործությունը հասավ իր զարգացման գագաթնակետին: Ասեղնագործական արվեստի վարկն այնքան բարձրացավ, որ երկրորդ պլան մղվեցին հայկական կիրառական գեղարվեստի այնպիսի հնագույն ու դարավոր ճյուղեր, ինչպիսիք էին գորգագործությունն ու կարպետագործությունը: Եվ դա այն շրջաններում, որոնք ի վերուստ համարվում ու եղել են գորգագործական կենտրոններ (Իջևան, Շամշադին, Նոյեմբերյան)[16]:

Ամենատարբեր չափերի ծածկոցները զարդարում էին զգեստապահարանների ու սպասքապահարանների դարակները, բուֆետները, կարի մեքենաները, անկողինները, բարձերը, ռադիոընդունիչները, դաշնամուրները (ընդ որում, կային հատուկ ծածկոցներ սեղանների վրա գցելու համար): Ասեղնագործում էին էլեկտրական լամպերի համար հատուկ ծածկոցներ՝ «աբաժուրներ», որոնք լարերի վրա անցկացնելով՝ հարմարեցնում էին լամպին: Բացի ծածկոցներից ասեղնագործվում էին նաև փոքրիկ տակդիրներ՝ բաժակների, ծաղկամանների, դեկորատիվ տարբեր իրերի տակը և վրան գցելու համար: Ասեղնագործությամբ զարդարվում էին սեղանի և զարդասեղանների սփռոցները, վարագույրները, բարձերի, թիկնաբարձերի (մութաքա), աթոռի բարձիկների երեսները, սրբիչները, անձեռոցիկները:

Ասեղնագործված իրերի մեջ առանձնահատուկ տեղ են գրավում ասեղնագործ պատի զարդերը, որոնք կախվում էին պատերին և հայտնի էին «դարոշկա»

---

16 *Կ. Բ ա գ ե յ ա ն, ԴԱՆ, Տետրեր, 1979-1981թթ.:*

(Հայաստանի հյուսիս-արևելք), «պալուսկա» (առավելապես արևմայան շրջաններ) անուններով: Դրանք փակցվում էին ինչպես պառերի, այնպես էլ գորգերի և կարպետների վրա: Վերջիններս զարդարվում էին հատկապես կտրովի ասեղնագործություններով: Պառերին կամ գորգերին փակցնելուց առաջ, բանվածքի տակից ամրացվում էր գունավոր կտոր կամ թուղթ, որպեսզի ասեղնագործությունն ավելի ցայտուն երևա: Համեմատաբար փոքր չափերի աշխատանքները (հիմնականում լիցքով ու խաչկարով ասեղնագործված) ամրացնում էին որևէ հարթ ու պինդ առարկայի՝ սավարաթղթի, բարակ տախտակի վրա, երբեմն՝ ապակեպատում, նոր կախում էին պատից: Պատի զարդերի թվին կարելի է դասել նաև ասեղնագործ գորգերն ու կարպետները, որոնք որոշակի փոփոխություններ էին կրել այս ժամանակաշրջանում: Գորգերն ասեղնագործվում էին միայն խաչկարով կամ նրա տարատեսակներով, գերազանցապես արդեն հիշատակված վուշե պարկերի վրա՝ բրդյա թելերով: Այս իրերը,եթե արվում էին գորգանախշերով կամ կարպետանախշերով, անպայման կրկնում էին տվյալ շրջանի գորգերի ու կարպետների զարդանախշերն ու ամբողջական զարդա-հորինվածքները. օրինակ՝ «դեղնաքյունքը» Իջևանի շրջանում, վեցանկյուն-շեղանկյուն հորինվածքով կարպետները՝ Շիրակում, Ջավախքում[17]: Սակայն լայն տարածում էին ստանում նաև թեմատիկսյուժետային աշխատանքները, որոնց կանդրադառնանք ավելի ուշ: Հետաքրքիր է, որ ասեղնագործ գորգերը նույնպես շատ բարձր են գնահատվել և ժողովրդի մեջ ընդունվել են որպես գորգերի ու կարպետների համարժեքներ: Օրինակ, Ախտաքալաքի Սուլդա գյուղում խաչկար ասեղնագործությամբ կարպետներին անվանում էին ձեռագործ կարպետ, իսկ սովորական կարպետներին՝ կանվա (խաչկար ասեղնագործություն), նույնացնելով խաչկար ասեղնագործությունն ու կարպետը[18]:

Թվարկված ասեղնագործ առարկաների շարքը կարելի է լրացնել նաև փոքրիկ կենցաղային իրերով՝ ճկարի շրջանակներ, սանրի (սնդրաման-Իջևանի շրջան), կոճակի, խոզանակի, մկրատի գրպանիկներ, քաշլինակներ ու հատուկ դրանց համար ծրարներ, լրագրերի համար սապրակներ, ասեղի բարձիկներ, կժի բերանի խցաններ և այլն: Միաժամանակ ասեղնագործվում էր անկողնու սպիտակեղենն ամբողջությամբ, հատկապես, եթե այն նախատեսված էր օժիտի համար:

Բացի հիշատակված կենցաղային ու բնակարանների հարդարմանը նշանակված իրերից, խորհրդային շրջանում ևս շարունակում են ասեղնագործել ներքնազգեստներն ու վերնազգեստները: Զարդարում էին նորածնի սպիտակեղենը՝ գլխարկը, շապիկը, երեսաշորը, մետնոցը, բարձի երեսը, սավանը և այլն, փոքրիկ աղջիկների ու տղաների հագուստի կուրծքը, օձիքը, հատուկ աղջկա-օրիորդի հագուստի թեզանիքները, փեշերը, օձիքը, կուրծքը և այլն:

Ասեղնագործ իրերի ողջ ճոխությունն ու բազմազանությունն արտահայտվում էր առավելապես օժիտի համալիրում: Դեռ հնուց ընդունված կարգ էր, որ օժիտը պատրաստում էր ապագա հարսնացուն իր ձեռքով, նախքան ամուսնանալը, և ասեղնագործական իրերը դրա պարտադիր մասն էին կազմում[19]: Օժիտի համալիրում ընդգրկված կարված, հյուսված, ասեղնագործված իրերը վկայում էին աղջկա շնորքի, վարպետության ու ճաշակի մասին, որը շատ բարձր էր գնահատվում հարսնացու ընտրելիս: Հաճախ օժիտը պատրաստելուն աղջկան օգնում էին մերձավոր հարազատները՝ մայրը, ավագ քույրը, տատիկը, ընկերուհին և այլոք: Օժիտի զարդն էին կազմում հարսնացուի ձեռքով կարված և ասեղնագործված շապիկներն ու գիշերանոցները, կրծկալները, վարտիքները (փոխաններ), կարճ վերնազգեստ-կաֆտանները, ինչպես նաև բաբուճները, քաշկինակները, հարսի, փեսայի բոխչաները (Շիրակ-Ջավախք) հաճախ՝ անվանատառերով:

Խորհրդային Հայաստանի հյուսիս-արևելյան շրջաններում, աղջիկ ուզելուց, նրա տանն իր ձեռագործների յուրօրինակ ցուցահանդես էր բացվում: Իսկ հարսանիքի ժամանակ տան՝ ներսույթին ավելի տոնական տեսք տալու համար.

---

[17] Կ. Բ ա զ ե յ ա ն, ԴԱՆ, Տետրեր, 1979, էջ 34:
[18] Նույն տեղում, 1982, էջ 61:
[19] Է. Կ ա ր պ ե տ յ ա ն, Օժիտը հայոց մեջ, Եր.,1978, էջ 11,113:

սեփական ասեղնագործ ռանվածքներից բացի, եուրևաններից ու բարեկամներից փոխարինարար խնդրում էին ուրիշները և փակցնում պատերին: Ասեղնագործ իրերն այնչափ սիրատալիր էին օժիտում, որ շատերը, իրենք չկորողանալով, կամ ասեղնագործելու շնորք չունենալով, պատվիրում էին դրանք եատուկ վարպետների:

Երկրորդ աշխարհամարտի և հետպատերազմական ծանր տարիներին շատ կանայք ասեղնագործության միջոցով էին կերակրում իրենց ընտանիքները: Նման վարպետ ասեղնագործուհիները, որոնք եայտնի էին իրենց քաղաքներում ու գյուղերում, աշխատում էին ինչպես պատվերով, այնպես էլ ուղղակի վաճառքի եամար: Եթե պատվիրատուն տալիս էր գործվածքը, թելը, ապա վերցվում էր միայն աշխատանքի գինը, եթե ոչ՝ ասեղնագործական իրերը շատ թանկ էին գնաեատվում: Դրամով վաճառքը կատարվում էր եիմնականում քաղաքներում, իսկ գյուղերում եաճախ պարզ ապրանքափոխանակություն էր կատարվում: Հայաստանի եյուսիս-արևելյան շրջաններում նման վարպետներն իրենց աշխատանքները վաճառում էին նաև ադրբեջանցիներին, կամ փոխանակում մթերքների՝ ցորենի, կարտոֆիլի եետ: Օրինակ՝ կորտովի եղանակով գործված մեկ բարձի ծածկոցի եամար տալիս էին մեկ փութ ցորեն[20]:

Ասեղնագործությունն այնպիսի խորը արմատներ էր արձակել եայ ժողովրդի կենցաղում, որ դրա շուրջ ստեղծվել են բազմաթիվ սովորույթներ, եավատալիքներ և ուղեկցվել ծիսական արարողություններով: Դրանց մի մասն ուղղակի արտաեայտում են ժողովրդի վերաբերմունքը ասեղնագործողի և ասեղնագործության նկատմամբ, մի մասն ունի խիստ արտաեայտված սնոտիա-պաշտական բնույթ, մյուսը՝ կապված է ժողովրդական եավատալիքների եետ, գալիս է դեռևս վաղնջական շրջանից, սակայն իր արտաեայտման ուրույն ձևը ստացել է քրիստոնեական եավատալիքների ձևով: Պետք է նշել, որ խորհրդային տարիներին եավատալիքների եետ կապված սովորությունների ու ծիսական արարողությունների մեծ մասը մոռացության էր մատնվել: Մնացած դեպքերում դրանք սատվերապես պահպանվել ու կիրառվում էին մեծաեասակների կողմից: Սակայն ժողովրդի եարգալից վերաբերմունքն ասեղնագործության և այն կատարող վարպետների եանդեպ չէր փոխվում: Դա եատկապես արտաեայտվում էր այն բարեմաղթություններում, որ արվում էր նոր գործ սկսելուց առաջ, աշխատանքն ավարտելուց, ասեղնագործողին աշխատելիս եանդիպելուց և այլն: Օրինակ. ձեռագործն սկսելուց առաջ ասում էին. «Տեր Աստված,դու եաջողես,գործը լավ գա», նոր գործ սկսող վարպետաին բարեմաղթում էին.«Աստված շնորեավոր անի», «Բարով բանեցնես, քող ուրախություն լինի» և այլն[21]: Առավել շատ բարեմաղթանքների և օրենանքի էին արժանանում օժիտի ասեղնագործություն ձեռնարկողները:

Պաեպանվել էին որոշակի սովորույթներ ու արարողություններ՝ կապված «չար աչքի» և դրանով «օժտված» անձանց եետ: Նման մարդկանց եանդիպելու, կամ տուն մանելու դեպքում ձգտում էին աշխատանքը թաքցնել, որ «աչքով չտան»: Նրա գնալուց եետո, երբ գործն առաջ չէր գնում, անիծում էին «չար աչքի» տիրոջը. «Աչքդ փերա րլի (աչքդ դուրս գա)», «Քո աչքը վեր ընկնի», «Ոտդ կոտրի» և այլն: Այնուամենայնիվ, նրա գնալուց եետո եեանից աղ էին գցում կրակի մեջ, ձախ ուսի վրայով երեք անգամ թքում եա, իրենց կծմթում կամ վերջապես աղոթել էին տալիս, թե իրենց և թև ձեռագործը[22]:

Խորհրդային շրջանում շարունակում էին պաեպանվել նաև որոշ արգելքներ՝ կապված ասեղնագործության եետ: Խիստ արգելվում էր օրինակ երեքշաբթի, եինգշաբթի և շաբաթ երեկոյան (չորեքմուտին, ուրբաթմուտին և կիրակմուտին), ասեղնագործել կամ որևէ այլ գործ անել: Ասեղնգործելը կամ ասեղ գործածելն արգելվում էր կարմրուկով եիվանդ երեխայի մորը՝ մինչև երեխայի ապաքինվելը: Նման արգելք կիրառվում էր նաև ապրիլ ամսին նշվող «եավկուտի տոնին»:

---

[20] *Կ. Բ ա զ ե յ ա ն, ԴԱՆ, Տետրեր, 1981, էջ 12,56:*
[21] *Նույն տեղում, էջ 31-32, 53:*
[22] *Նույն տեղում, էջ 22, 32, 54: Տետր, 1985, էջ 20:*

Գտնում էին, որ արգելքը խախտողը հավկուրություն կստանա: Վերոհիշյալ արգելքները շատ խիստ էին կիրառվում հատկապես հղի կանանց և հիվանդների նկատմամբ: Դա բացատրում էին նրանով, որ ծննդաբերությունը դժվար կլինի, իսկ հիվանդը չի լավանա: Նման արգելք Ջավախքում կիրառվում էր հղի կնոջ նկատմամբ մայիսի վեցին և հայտնի էր «Ծռատոն» անվամբ: Այդ օրն արգելվում էր գործ անել և հատկապես սուր-կտրող առարկաներ գործածել, պատճառաբանելով, թե երեխան «կծռվի», արատավոր կծնվի և այլն: Եթե անգամ պատահում էր, որ անգիտակցաբար գործ էին անում, ապա նույն օրը երեկոյան ինքը՝ մայրը կամ սկեսուրը ցորեն կամ գարի էին ցանում դրսում, ասելով. «Ծուռ ու շիտակ հավասար բուսնի», որ երեխան չծռվի և բնական արատով չծնվի[23]:

Պատերազմական տարիներին լայն տարածում ստացավ եկեղեցուն և սրբատեղերին ասեղնագործ իրեր նվիրաբերելու սովորույթը: Եթե մինչխորհրդային շրջանում նման նվիրաբերությունները արվում էին հիվանդի առողջացման, պանդուխտի վերադարձի, գործերի հաջողության ակնկալիքով, ապա պատերազմի տարիներին դրանք ունեին մեկ հիմնական նպատակ. ծնողները խնդրում էին որդու, քույրերը՝ եղբայրների, կանայք՝ ամուսինների հաջողությունն ու կենդանի վերադարձը ճակատից:

Այս բոլոր սովորույթները, որոնք հարատևեցին մինչև 1960-ական թթ., հետզհետե մարեցին և իսպառ վերացան 1970-80-ական թթ.: Եթե որոշ մեծահասակներ անգամ շարունակում էին հետևել դրանց, ապա երիտասարդ հարսներն ու աղջիկները բոլորովին հեռու էին դրանցից:

Ժամանակի ոգին և պահանջները հստակորեն ցայտուն արտահայտվեցին զարդանախշերում: Հայկական ժողովրդական ասեղնագործության ավանդական զարդամոտիվները ու զարդահորինվածքները գրեթե լիովին վերափոխվեցին խորհրդային տարիներին: Ինչպես նախկինում, այժմ նույնպես, տարածված էին բուսական, երկրաչափական զարդանախշերն ու կենդանական և մարդկային պատկերները, սակայն դրանք ստացել էին նոր որակ ու հնչողություն:

Բուսական զարդանախշերը հնուց ի վեր շատ սիրված ու տարածված էին ասեղնագործական արվեստում և գերակշռող՝ մյուսների համեմատությամբ: Սրանք խիստ բազմազան են, բազմաբնույթ և հանդիպում են ինչպես ոճավորված, այնպես էլ ռեալիստորեն[24]:Ներկայացվող ժամանակահատվածում ևս դիտելի է այս օրինաչափությունը՝ ձգտումը առավել ռեալիզմի, որը սակայն, կապված տեխնիկական հմտությունների հետ, որոշ դեպքերում անցնում է ոճավորման: Երբեմն բուսական զարդանախշը այնպիսի ձևափոխություններ է կրում, որ հաճախ դժվար է դառնում կողմնորոշվելը՝ դա ծաղիկ է, թե ինչ որ անորոշ պատկեր: Այս երևույթն առանձնապես բնորոշ է կորբառովի ասեղնագործությանը: Խորհրդային շրջանի ասեղնագործության մեջ հանդիպում են բուսանախշերի բոլոր տարատեսակները: Ամենատարածվածն ու սիրվածը ծաղկանախշերն են: Այս շրջանում առավելապես ռեալիստորեն և բնական գույներով են պատկերվել վարդը, կակաչը, վարդակակաչը, մանուշակը, մեխակը, եիրիկը, երեքնուկը, անմոռուկը, երիցուկը և այլն: Ասեղնագործ բանվածքներում ծաղիկները պատկերվում են ինչպես առանձին, որպես հիմնական մոտիվ, այնպես էլ այլ զարդանախշերի հետ միասին, լրացնելով դրանք և զարդարելով ողջ հորինվածքը: Հաճախ ծաղիկները կրկնվում են՝ անընդհատ շարունակելով իրար կամ փունջ են կազմում: Ծաղիկներից անբաժան են կոկոնների ու բողբոջների պատկերները:

Խաչկար ասեղնագործության մեջ գերադասությունը տրվում է աստղածաղկին՝ հիմնականում ութթևանի: Այն սովորաբար ընդունվում էր որպես հորինվածքի կենտրոն, որի շուրջը ասեղնագործվում էին այլ՝ երկրաչափական զարդանախշեր կամ վերցվում էր շրջանակի մեջ, լրացվելով մի քանի զարդագոտիներով:

Ինչպես ավանդական ասեղնագործության մեջ, այս ժամանակահատվածում ևս կենաց ծառը կազմում է հորինվածքի հիմնական զարդանախշը: Նրա

[23] *Կ. Բազեյան, ԴԱՆ, 1982, էջ 11-12:*
[24] *Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Եր., 1955, էջ 3:*

շուրջն են համախմբվում մյուս՝ առավելապես կենդանական պատկերները: Կենաց ծառը մենակ երբեք չի ասեղնագործվում: Այն միշտ շրջապատված է թռչունների կամ կենդանիների զույգերով, նրանց հետ միասին կազմում է մեկ ամբողջական պատկեր, արտահայտելով որոշակի խորհրդիմաստ: Բուսական զարդանախշերը սրանցով չեն սահմանափակվում: Դրանց թվում իրենց ուրույն տեղն ունեն նաև ամենաբազմազան տերևների, ցողունների, հասկերի ու պտուղների պատկերները:

Ի տարբերություն հայկական ավանդականի, այս ժամանակաշրջանում լայն տարածում է ստանում կենդանիների պատկերների ասեղնագործությունը: Դրանք ներկայացվում են խիստ ռեալիստորեն և հաճախ որոշակի կոմպոզիցիաներում: Ինչպես ավանդաբար,այժմ ևս, մեծ թիվ են կազմում թռչնանախշերը, այդ թվում նաև նոր, մեր ժողովրդական զարդարվեստին անծանոթ պատկերներ (թութակ, սիրամարգ և այլն): Սակայն սիրելի թռչունները (աղավնի, ծիծեռնակ, աքաղաղ) ավելի հաճախ են հանդիպում: Ոճավորված թռչնանախշերը հայտնի են «արունակ» հավաքական անվամբ: Եթե հիշյալ թռչնապատկերները ավանդաբար ասեղնագործվում էին զույգերով, ներկայացվելով ինչպես հիմնական, այնպես էլ լրացուցիչ զարդանախշ, ապա նորահայտ թռչունները պատկերվում էին առանձին: Հատկապես պատի զարդերում դրանք առանձնահատուկ վառ գույներով էին պատկերվում և խիստ ռեալիստորեն: Այդպիսի աշխատանքները արվում էին լիցք հարթակարով: Մնացած թռչնանախշերը գործվում էին բոլոր մյուս կարատեսակներով: Երբ թռչունները ներկայացվում էին որպես հիմնական կերպար, ապա նրանց հետ միասին հանդես են գալիս տարբեր առարկաներ՝ գրքեր, գավաթներ, ծառի ճյուղեր: Հաճախ ասեղնագործության մեջ կենտրոնական հորինվածքն առանձնացնող շրջանակն իրենց կտուցներով պահում են աղավնիները:

Կենդանիների մեջ ամենասիրվածը եղնիկի,եղջերուի կամ կխտարի մոտիվն է, որն առավել տարածված էր հյուսիս-արևելյան Հայաստանում: Սրանք ևս գերազանցապես պատկերվում էին պատի զարդերի վրա, որտեղ ներկայացվում էին զույգերով, ընտանիքով (ձագի հետ միասին)՝ կենաց ծառի աջ և ձախ կողմերում, բնության մեջ:

Խաչկար ասեղնագործության համար ապվող տեխնիկական ձևերի տարածումը, հալ ժողովրդական գարդարվեստ բերեց օտար և անծանոթ կենդանիների պատկերներ: Այդպիսիք են սալիսակ արջը, ծովախոզը, վագրը և այլն, որոնք ասեղնագործվում էին որոշակի զարդահորինվածքով և գործածվում որպես զարդ: Երբեմն հանդիպում են օձի պատկերներ, որոնք առանձին չեն ներկայացվում, այլ կազմում են ողջ հորինվածքի մի մասը:

Երկրաչափական զարդանախշերը, 1920-80-ական թթ. ասեղնագործության մեջ համեմատաբար սակավ կիրառելի են դառնում: Դրանք շարունակում են գործածվել միայն խաչկար ասեղնագործության մեջ և այն էլ՝ որոշակի իրերի՝ թիկնաբարձերի, ասեղի բարձերի, ասեղնագործ գորգերի և մինդարների ասեղնագործության ժամանակ: Ընդ որում, հաճախ դրանք կրկնում են տվյալ տարածքի գորգերի ու կարպետների նախշերը, կամ աստղաձայլի համաչափ բնդունված պատկերներով կազմված հորինվածքները: Մնացած դեպքերում դրանք ավանդական քառակուսի, եռանկյուն, շեղանկյուն, բազմանկյուն, ռոմբաձև և այլ պատկերներ են, որոնք նոր հորինվածքներով են ներկայանում և, բնականաբար, ուրույն արտահայտչականությամբ:

Ներկայացվող ժամանակաշրջանում լայն տարածում է ստանում նաև մարդկանց պատկերներով ասեղնագործությունը, որն ավանդական զարդարվեստում դարձյալ ընդունված չէր: Մարդիկ պատկերված են ամենաբազմազան ձևերով՝ տարբեր հասակի (երեխա, պատանի, երիտասարդ, հասուն, տարեց) և սեռի (կին, տղամարդ, աղջիկ, տղա) կերպարներով, մենակ, խմբով: Մարդկանց պատկերներով ասեղնագործությունները գերազանցապես սյուժետային աշխատանքներ են և դրսից ներմուծված: Այդ է պատճառը, որ կարելի է հանդիպել, ասենք, ռուսական ժողովրդական առնակատարությունների պատկերներով, ռուսական հռածխավ ու ռուս մուժիկների պատկերներով ասեղնագործություններ: Այդպիսիք լայն տարածում ստացան հատկապես Հայրենական պատերազմի

տարիներին: Այս շրջանում, ասեղնագործում էին պատի զարդեր ամուսնուն սպասող, կամ ամուսնուց նամակ ստացող կնոջ պատկերներով: Դրա մեկ այլ տարբերակն էր նամակաբեր աղավնու կերպարը,որը ևս այդ տարիների սիրված զարդանախշերից էր: Նույն ժամանակահատվածում հայտնվեցին նաև զինվորական համազգեստ հագած մարդկանց, հեծյալների պատկերներով բանվածքներ:

Պատերազմից հետո հայտնվում են հաղթանակին նվիրված աշխատանքներ՝ Կրեմլի, հրավառության, հայկական գերբի, որևէ տեսարժան վայրի պատկերներով և այլն: Այս տարիներին ասեղնագործ բանվածքներում կնոջ կերպարն այլ է: Կինը պատկերվում էր տանը աշխատելու և հանգստի պահերին, ծաղկեփնջով, ընտանի կենդանիներով շրջապատված, բնության մեջ:

1960-ական թթ. հետո ասեղնագործությունը դարձյալ անկում ապրեց, վերածվելով սոսկ ժամանցի: Ասեղնագործությամբ շարունակում էին զբաղվել միայն տարեց կանայք: Սակայն հին ասեղնագործության նմուշները մինչև այժմ էլ խնամքով պահպանվում են և գործածվում:

ВЫШИВКА СОВЕТСКОЙ АРМЕНИИ

------Резюме------ ***------К.Базеян------***

В статье представлена вышивка Советской Армении. Делается попытка рассмотреть те изменения, которые претерпело традиционное народное вышивальное исскуство в данный период. По возможности описаны те различия и новации, которые выявились в материалах, технике, орнаменте вышивания, а также в сфере прекладного применения вышитых изделий.

Դերենիկ Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՀՀ ԱՐԴԻ ՏԵՂԱՆՎԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ

Անվանաբանությունը (օնոմաստիկա), ըստ այդմ՝ տեղանվանաբանությունը (տոպոնոմիկա) գիտական միջանկյալ բնագավառ է, ընկած աշխարհագրության, ազգաբանության ու լեզվաբանության հանգույցում և նյութը (հումքը) ստուգաբանելիս հավասարապես օգտվում է այդ երեքի էլ մեկնաբանական-վերլուծաբանական մեթոդներից: Սույն հանգամանքը հուշում է, որ հատկապես տեղանուններ (տոպոնիմներ), նաև անձնանուններ (անտրոպոնիմներ) կերտելիս (ընտրելիս կամ վերանվանելիս) գործնականում պետք է առաջնորդվել պատմա-էթնո-մշակութային ատաղձով պայմանավորված անվանաբանության տեսությամբ:

Սույն գիտական բանաձևումը, սակայն, իրական կյանքում եթե ինչ-որ չափով գործում էլ է, ապա միայն ենթագիտակցաբար: Ահա ինչու անվանումներ ընտրելիս և վերանվանելիս (տվյալ դեպքում խոսքը վերաբերում է տեղանուններին), մասնավորապես մեր ժամանակներում, հիմնականում առաջնորդվել ու առաջնորդվում են այսօրյա, մեծ մասամբ պատեհապաշտ պատկերացումներով, կազմավորված ընթացիկ գաղափարախոսությամբ, ավանդույթի վերածված հոգեբանությամբ[1]:

Դառնալով բուն խնդրին, հարկ է նշել այն հանրահայտ պարագան, որ Հայաստանի տեղանունները (բնակավայրերի, ջրավազանների, հողահանդակների և այլն) դարերի ընթացքում, օտարների տիրապետության հետևանքով, հայաթափվել, այսպես ասած, «մահմեդականացվել» (պարսկա-թրքացվել) էին[2]: Դա կատարվել էր մի քանի կերպ. հայ տեղանունը կամ պարզապես թարգմանվել էր, ասենք, թուրքերեն (Ծաղկաձորը՝ Դարաչիչակ, Գետաշենը՝ Չայքենդ, Քարհատը՝ Դաշքեսան) կամ փոխարինվել անհայիր անվամբ (Հանքաշատը՝ Քեշիքենդ, Շահկերտը՝ Ղազանչի, Ավետարանոցը՝ Չանախչի, Խաչակապը՝ Ղուշչի, Բերձորը՝ Լաչին) և կամ աննմանաչելիորեն աղավաղվել (Օձունը՝ Ուզունլար, Տավուշը՝ Թոուզ, Արագածը՝ Ալագյազ, Տողը՝ Տուղի, Բանանցը՝ Բայան, Ծովատեղը՝ Ջվալիդ, Գանձակը՝ Գյանջա, Եղեգիսը՝ Ալայազ, Քարվաճառը՝ Քյալբաջար, Աղավնաձորը՝ Այնազոր, Ահնիձորը՝ Ահնիզոր): Վերջին աղավաղումները, ըստ երևույթին, արվում էին այն պատճառով, որ թուրքերենին խորթ էին այնպիսի հնչյուններ, ինչպիսիք են *ծ*-ն, *ձ*-ն, *ճ*-ն և այլն:

Վերոհիշյալ բնույթի տեղանունները շատ են, սակայն զավեշտի են հասնում հայ տեղանուններին թուրքերեն *Ղարա* ու *Մոլլա* նախդիրներով կամայականորեն նորաթուխ անվանումներ կցնելը: Եվ այսպես, շուրջ 90 գյուղանուն (121 *Ղարա*-ով տեղանունից), որոնցից 17-ը՝ Ղարաքիլիսա, նաև՝ 4 Աղքիլիսա, 5 Ղզըլքիլիսա: Որտեղ սևքար շինության, հատկապես եկեղեցու են հանդիպել, անկախ ամեն ինչից, պիտակավորել են *Ղարա*-ով, սպիտակաքարը՝ *Աղ*-ով, կարմրաքարը՝ *Ղզըլ*-ով: Սակայն 13 *Մոլլա*-ով ձևերը (Մոլլա Բայազետ, Մոլլա Գյոքչա, Մոլլա Դուրսուն, Մոլլա Էյուբլու, Մոլլաղշլաղ, Մոլլա Մուսա և այլն), որոնք մեծ մասամբ հայաբնակ գյուղերի անուններ են, դժվար է բացատրել: Նույնը կարելի է ասել Ալի (9) և Բաշ (16) նախդիրների մասին, որոնցով ուղեկցվում են զուտ

---

[1] *Սույն հոդվածի քննարկման ատաղձ են ծառայել խորհրդային շրջանում հրատարակված ՀԽՍՀ վարչատերիտորիալ բաժանման տեղեկատու գրքերը, որոնք թվագրված են 1948, 1955, 1964, 1971, 1976, 1988 թթ. և ՀՀ վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքը՝ 4, XII, 1995թ., ինչպես նաև դաշտային ազգագրական նյութերը՝ գրառված Արցախում, 1968, 1969, 1970, 1987 թթ. գիտարշավների ընթացքում:*

[2] *Տե՛ս Ա. Ա ս լ ա ն յ ա ն, Հ.Գ ր գ ե ա ր յ ա ն, Հայկական ՍՍՀ աշխարհագրական անունների համառոտ բառարան, Եր., 1981:*

հայաբնակ գյուղերի անունները (Ալիբեքլու, Ալիլու, Ալիխան, Ալիղըլխ, Ալիղուլիշեն, Ալիքուչակ ու Բաշաբարան, Բաշ Գյառնի, Բաշգյուղ, Բաշնալու, Բաշքենդ և այլն)[3]:

Մեր պապերն էլ ոչ հեռու անցյալում (Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո) վերաբնակվելով ՀՀ տարածքում, գարմանալիորեն գրեթե ամբողջությամբ պահպանել էին այդ օտարացված տեղանունները (ասենք, Վահագնիի փոխարեն՝ Շահալի) և կամ նոր բնակավայրը վկայանվանել իրենց նախկին բնօրրանի անվամբ (օր. Գավառի փոխարեն՝ Նոր Բայազետ):

Այս ամենի հանրագումարում 1940-ական թթ. վերջերին Խորհրդային Հայաստանի 1130 բնակավայրի անվանումներից 434-ը թուրքերեն էր (մասամբ՝ պարսկերեն), 603-ը՝ հայերեն, որից 25-ը՝ նորաստեղծ ավան (խորհանտեսությունների, երկաթգծային կայարանների ու այլնի առընթեր),20-ը՝ ռուսերեն, շատ քիչ՝ քրդերեն ու հունարեն[4]:

Խորհրդային շրջանում, մասնավորապես մեծ բանաստեղծ Հովհ. Շիրազի հայտնի պոեմից (1942թ.) հետո[5], տեղի ունեցավ բնակավայրերի անվանումների զանգվածային հայացում, որը հաճախ զուգորդվում էր այդ ժամանակի գաղափարախոսությանը հատուկ ցուցադրական զունազարդմամբ (օր.՝ Լուսավան-Լուսակերտ, Այգեշատ-Այգավան և այլն): Սրա ցայտուն լուսաբանումն են ժամանակի վարչատարածքային բաժանման այբբենական կարգով կազմված ցուցակից հանված համանուն ու նույնարմատ բնակավայրերի անփոխումների վիճակագրական տվյալները: Այսպես, *այգ*-ով՝ 13, *ազատ*-ով՝ 17, *գեղ*-ով՝ 15, *լեռ*-ով՝ 15, *լուս*-ով՝ 11, *ծաղկ*-ով՝ 13, *մրգ*-ով՝ 6, *նոր*-ով՝ 27, *ոսկե*-ով՝ 7, *ջրա*-ով՝ 10, *սար*-ով՝ 11, *սովետ*-ով՝ 5, *վարգ*-ով՝ 13, *քար*-ով՝ 9 և այլն[6]:

Այնուհետև, տեղանունները միայն *Ա* տառով հետևյալ պատկերն են տալիս. աբ-ով՝ 4, Ագարակ՝ 10, *ազատ*-ով՝ 17, *ազիզ*-ով՝ 11, *աթա*-ով՝ 7, *ալա*-ով՝ 27, *ալի*-ով՝ 19, *ալ*-ով՝ 20, *ախ*-ով՝ 37, *ակ*-ով՝ 23, *ահ*-ով՝ 8, *աղ*-ով՝ 120, *ամ*-ով՝ 24, *այգ*-ով՝ 18, *այ*-ով՝ 43, *ան*-ով՝ 24, *աշ*-ով՝ 18, *աչ*-ով՝ 9, *ապ*-ով՝ 10, *առ*-ով՝ 14, *աս*-ով՝ 12, *ավ*-ով՝ 18, *ար*-ով՝ 223: Չծանրաբեռնելու համար չեմ շարունակում հաջորդ տեղանունների *(Բ-Ֆ)* վիճակագրությունը: Ուշագրավն այն է, որ 820 տեղանունից ոչ հայեցի է շուրջ 300-ը[7]:

Իսկ ահա անհատի պաշտամունքի դեմ մղվող պայքարի եռրթական փուլում կրկին վերանվանվեցին նաև նախկինում վերանվանված մի շարք բնակավայրեր՝ Միկոյան վերանվանված Քեշիշքենդը դարձվեց Եղեգնաձոր, Անաստասավան վերանվանված Դարդալուն դարձվեց Այգեզարդ,վերականգնվեցին Շավարշավան վերանվանված Կոթին ու Դանուշավան վերանվանված Այգեհատը (դարձ ի շրջանս յուր) :

Այդ ժամանակներում արվեց նաև մի արատոց «նորարարություն» Հանրապետությունում գանվող Վայոց ձոր պատմական գավառանունը դարձվեց Հայոց ձոր (որը նույնպես պատմական գավառանուն է, բայց Արևմտահայաստանում է Վանա լճին առընթեր) այն լռելյայն պատճառաբանությամբ, որ կայել չէ, որ խորհրդային երկրում լինի լացակումած *վայ* -ով սկսվող տեղանուն:

Բնակավայրերի վերանվանումներում երբեմն հասնում էին չափազանցության: Այսպես՝ Հովհ. Թումանյանի 100-ամյա հոբելյանի առիթով Լոռիու երեք, հարևան շրջանի մեկ տեղանուն վերանվանվեց *Թումանյան* (Ալավերդու շրջանը, Դսեղ գյուղը, Չաղի ձոր ավանը՝ նույն շրջանում, Քոլագերան երկաթուղային ավանը՝ Գուգարքի շրջանում և սովխոզին կից ավան՝ Նոյեմբերյանի շրջանում): Հիշում եմ ակադեմիկոս Գրիգոր Ղա-

---

[3] *Անդ (տե՛ս Բառարան-ի համապատասխան անվանացանկերը):*

[4] *Տե՛ս Հայկական ՍՍՌ վարչա-տերիտորիալ բաժանումը (հայ., ռուս.), (առ 1 հունվարի 1948թ.), առաջին հրատ., Եր., 1948, էջ 55-86:*

[5] *Հ ո վ հ. Շ ի ր ա զ. Մեր գյուղերի անունները . – Երկեր, հ.2, Եր., 1982, էջ 248:*

[6] *Տե՛ս Հայկական ՍՍՀ վարչա-տերիտորիալ բաժանումը (հայ.,ռուս), (առ 1 օգոստոսի 1988 թ.), 6-րդ հրատ., Եր., 1988, էջ 61-71:*

[7] *Տե՛ս Ա.Ա ս լ ա ն յ ա ն, Հ. Գ ր գ ե ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 9-36: Զարմանալի է, որ Խաչ-ով 27 տեղանունից միայն 8-ն է վերանվանվել (էջ 88):*

փանցյանի զայրույթը (որ անվանումների եռմուռ ստագարանող էր) հավանաբար հինավուրց *Դսեղը Թումանյան* վերանվանելու կապակցությամբ, «եթե Թումանյանը գլուխը բարձրացներ, ի՛նքը կբողոքեր դրա դեմ»:

Վերջին տասնամյակում շարունակվեց տեղանվանափոխության գործընթացը՝ հիմք ընդունելով պատմական անվանումները վերականգնելու սկզբունքը, որն ինչ-որ չափով կիրառվում էր նաև նախորդ փուլում: Բայց այդ գործընթացում էլ եղան մի շարք, երբեմն ցավալի վրիպումներ, որոնք անարդարացի է թաքցնել: Այսպես, փոխանակ վերականգնելու *Կույբիշև* վերանվանված գյուղի *Ջարխեչ* անունը, այն անվանվեց *Հաղարծին*, մինչդեռ վերջինս միջնադարյան հայտնի հոգևոր ճարտարապետական հուշարձանի անունն է, որը գյուղից բավական հեռու է: Այս օրինակը եզակի չէ ու միասին ունի վարակիչ դառնալու. նույն կերպ էլ վիճարկվում է Ալավերդի քաղաքի վերանվանումը՝ քննարկվում է *Սանահին*, նաև *Լալվար* և այլ տարբերակներ, մինչդեռ քաղաքի հայեցի բուն անունը *Մսնես* է[8]: Դեռ ավելին: Ազգային ժողովում նորերս որոշ հավակնոտ պատգամավորներ (Հր. Հակոբյան և ուրիշներ) ձայներ են հնչեցնում Գավառ քաղաքը վերանվանելու *Քյավառ* կամ վերականգնելու *Նոր Բայազետ* անունը: Անտես թե ուր կարող է հասցնել անգիտությունը՝ այն բանի չըմբռնումը, որ *Քյավառ*-ը բարբառային դարձած *Գավառ* պատմական տեղանվանման բըքառային ձևն է, իսկ *Բայազետ*-ը Օսմանյան տիրակալի անվամբ է կոչված:

Տակավին ընթանում են խորհրդային ժամանակներից եկող, որպես, այսպես ասած, ցուցադրական գունազարդման արգասիք, բնակավայրերի նույնարմատ ու նույնանուն անվանումների բազմազանեցմանը միտված գործընթացները՝ պատմական հիմամբ: Համոզիչ լինելու համար բերում ենք Հայաստանի Հանրապետության օրենքի ցանկի հիմամբ հաշվարկված բնակավայրերի կրկնվող անվանումներն ըստ մարզերի[9]:

Արագածոտնի մարզ- 121 բանակավայր, որից Ագարակ՝ 2, Արագած՝ 2 (նաև՝ Արագածոտն), Գեղաձոր-Գեղարոտ-Գեղադիր, Երրորդ առվխոզի գյուղ (երևի արդեն փոխվել է), Լեռնապար-Լեռնարոտ, Լուսագյուղ-Լուսակն, *Ծաղկա*-ով՝ 3 գյուղ , Ձորա-գլուխ- Ձորագյուղ, *Ներքին*-ով՝ 2, *Նոր*-ով՝ 5 (ընդ որում, Նորաշեն՝ 2), *Ոսկե*-ով՝ 3, Վար-դենիս-Վարդենուտ-Վարդաբլուր, *Վերին*-ով՝ 3: Ընդամենը՝ 33:

Արարատի մարզ- 98 բնակավայր, որից *Ագատ*-ով՝ 2, *Այգե*-ով՝ 4, Արարատ՝ 2, *Արև*-ով՝ 2, *Գետ*- ով՝ 2, *Դաշտ* –ով՝ 2, *Լանջ*-ով՝ 3, *Լուս* -ով՝ 2, *Հովիտ*-ով՝ 2, *Մրգա*-ով՝ 3, *Նոր* -ով՝ 7, *Ջրա*-ով՝ 2, *Մխ* –ով՝ 2, *Վարդ*-ով՝ 2, *Վերին*-ով՝ 2, *Ուրց* –ով՝ 2: Ընդամենը՝ 41:

Արմավիրի մարզ - 98 բնակավայր, որից *Ակնա*-ով՝ 2, *Այգե*-ով՝ 3, Արաքս՝ 2, Արմավիր՝ 2, *Արև*-ով՝ 3, Բաղրամյան՝ 2, *Լեռնա*-ով՝ 2, *Ծաղկ*-ով՝ 2, *Հայկա*-ով՝ 2, *Մրգա*-ով՝ 2, *Նոր*-ով՝ 6, Շահումյան՝ 2, *Շեն*-ով՝ 2, *Ջրա*-ով՝ 3: Ընդամենը՝ 35:

Գեղարքունիքի մարզ- 98 բնակավայր, որից *Արծվա*-ով՝ 2, *Գեղա*-ով՝ 5, *Լիճ*-ով՝ 4, *Ծաղկ*-ով՝ 2, *Ծով*-ով՝ 4, *Ձորա*-ով՝ 2, *Ներքին*-ով՝ 2, *Նորա*-ով՝ 4, *Վարդ*-ով՝ 2, *Վերին*-ով՝ 2: Ընդամենը՝ 29:

Լոռու մարզ- 127 բանակավայր, որից Արջուտ՝ 2, *Արև*-ով՝ 2, *Լեռնա*-ով՝ 4, *Ծաղկա*-ով 2, *Կաթնա*-ով՝ 3, *Ձորա*-ով՝ 3, *Մեծ*-ով՝ 3, *Նոր*-ով՝ 2, *Սար*-ով՝ 3, *Վահագն*-ով՝ 2, Փամբակ՝ 2, *Քար*-ով՝ 4: Ընդամենը՝ 32:

Կոտայքի մարզ- 69 բնակավայր, որից *Գեղա*-ով՝ 3, *Ձոր*-ով՝ 3, *Նոր*-ով՝ 4, *Ջր*-ով՝ 3: Ընդամենը՝ 13:

Շիրակի մարզ- 131 բնակավայր, որից *Ախուր*-ով՝ 2, Աղին՝ 2, *Անի*-ով՝ 2, *Արև*-ով՝ 2, *Գետ*-ով՝ 2, *Լեռն*-ով՝ 3, *Լուսա*-ով՝ 2, *Կարմրա*-ով՝ 2, *Կրա*-ով՝ 2, *Հայկա*-ով՝ 3, *Հովիտ*-ով՝ 3,

---

[8] Առաջ են քաշվում նաև այլ տարբերակներ (տե՛ս, Գ.Սարոյանի «Ժամանակն է անվանափոխել» հոդվածը. – «Հայաստանի Հանրապետություն» լրագիր, 31.03.1998), որոնք բանազրոսիկ են, ուստի՝ անընդունելի:

[9] Տես Հավելված 2, Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքի (ցանկ ՀՀ համայնքների և բնակավայրերի), Եր., 1995թ.:

հայաբնակ գյուղերի անունները (Ալիբեքլու, Ալիլու, Ալիխան, Ալիդողլի, Ալիդուլիշեն, Ալիքուչակ ու Բաշարաբան, Բաշ Գյառնի, Բաշգյուղ, Բաշնալու, Բաշքենդ և այլն)[3]:

Մեր պապերն էլ ոչ հեռու անցյալում (Արևմտյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո) վերաբնակվելով ՀՀ տարածքում, գարմանալիորեն գրեթե ամբողջությամբ պահպանել էին այդ օտարացված տեղանունները (ասենք, Վաղարշապատի փոխարեն՝ Շահալի) և կամ նոր բնակավայրը վերանվանել իրենց նախկին բնօրրանի անվամբ (օր. Գավառի փոխարեն՝ Նոր Բայազետ):

Այս ամենի հանրագումարում 1940-ական թթ. վերջերին Խորհրդային Հայաստանի 1130 բնակավայրի անվանումներից 434-ը թուրքերեն էր (մասամբ՝ պարսկերեն), 603-ը՝ հայերեն, որից 25-ը՝ նորաստեղծ ավան (խորհրդանշանություններին, երկսեռագծային կայսրաններին ու այլոց առընթեր),20-ը՝ ռուսերեն, շատ քիչ՝ քրդերեն ու հունարեն[4]:

Խորհրդային շրջանում, մասնավորապես մեծ բանաստեղծ Հովհ. Շիրազի հայտնի պոեմից (1942թ.) հետո[5], տեղի ունեցավ բնակավայրերի անվանումների զանգվածային հայացում, որը հաճախ զուգորդվում էր այդ ժամանակի գաղափարախոսությանը հատուկ ցուցադրական գունազարդմամբ (օր.՝ Լուսավան-Լուսակերտ, Այգեշատ-Այգավան և այլն): Սրա ցայտուն լուսաբանումն են ժամանակի վարչատարածքային բաժանման այբբենական կարգով կազմված ցուցակից հանված համանուն ու նույնարմատ բնակավայրերի անվանումների վիճակագրական տվյալները: Այսպես, *այգ*-ով՝ 13, *ազատ*-ով՝ 17, *գեղ*-ով՝ 15, *լեռ*-ով՝ 15, *լույս*-ով՝ 11, *ծաղկ*-ով՝ 13, *մրգ*-ով՝ 6, *նոր*-ով՝ 27, *ոսկե*-ով՝ 7, *ջրա*-ով՝ 10, *սար*-ով՝ 11, *տավուշ*-ով՝ 5, *վարդ*-ով՝ 13, *քար*-ով՝ 9 և այլն[6]:

Այնուհետև, տեղանունները միայն *Ա* տառով հետևյալ պատկերն են տալիս. աբ-ով՝ 4, Ագարակ՝ 10, *ազատ*-ով՝ 17, *ազիզ*-ով՝ 11, *աթա*-ով՝ 7, *ալա*-ով՝ 27, *ալի*-ով՝ 19, *ալ*-ով՝ 20, *ախ*-ով՝ 37, *ակ*-ով՝23, *ահ*-ով՝ 8, *աղ*-ով՝ 120, *աճ*-ով՝24, *այգ*-ով՝ 18, *այ*-ով՝ 43, *ան*-ով՝ 24, *աշ*-ով՝ 18, *աչ*-ով՝ 9, *ապ*-ով՝ 10, *առ*-ով՝ 14, *աս*-ով՝ 12, *ավ*-ով՝ 18, *ար*-ով՝ 223: Չծանրաբեռնելու համար չեմ շարունակում հաջորդ անվանումների *(Բ-Ֆ)* վիճակագրությունը: Ուշագրավն այն է, որ 820 անվանումից ոչ հայեցի է շուրջ 300-ը[7]:

Իսկ աեն անեատի պոշտամունքի դեմ մղված պայքարի հերթական փուլում կրկին վերանվանվեցին նաև նախկինում վերանվանված մի շարք բնակավայրեր՝ Միկոյան վերանվանված Քեշիշքենդը դարձվեց Եղեգնաձոր, Անաստասավան վերանվանված Դարղալուն դարձվեց Այգեզարդ,վերականգնվեցին Շավարշավան վերանվանված Կոթին ու Դանուշավան վերանվանված Այգեհատը (դարձ ի շրջանս յուր) :

Այդ ժամանակներում արվեց նաև մի արտառոց «նորարարություն» Հանրապետությունում գտնվող Վայոց ձոր պատմական գավառանունը դարձվեց Հայոց ձոր (որը նույնպես պատմական գավառանուն է, բայց Արևմտահայաստանում է Վանա լճին առընթեր) այն լոելյայն պատճառաբանությամբ, որ վայել չէ, որ խորհրդային երկրում լինի լացակումած *վայ* -ով սկսվող անվանում:

Բնակավայրերի վերանվանումներում երբեմն հասնում էին չափազանցության: Այսպես՝ Հովհ. Թումանյանի 100-ամյա հոբելյանի առիթով Լոռվա երեք, հարևան շրջանի մեկ անվանում վերանվանվեց *Թումանյան* (Ալավերդու շրջանը, Դսեղ գյուղը, Ձաղի ձոր ավանը՝ նույն շրջանում, Քոլագերան երկաթուղային ավանը՝ Գուգարքի շրջանում և սովխոզին կից ավան՝ Նոյեմբերյանի շրջանում): Հիշում եմ ակադեմիկոս Գրիգոր Ղա-

---

[3] *Անդ (տե՛ս Բառարան-ի համապատասխան անվանացանկերը):*

[4] *Տե՛ս Հայկական ՍՍՌ վարչա-տերիտորիալ բաժանումը (հայ., ռուս.), (առ 1 հունվարի 1948թ.), առաջին հրատ., Եր., 1948, էջ 55-86:*

[5] *Հ ո վ հ. Շ ի ր ա զ, Մեր գյուղերի անունները . – Երկեր, հ.2, Եր., 1982, էջ 248:*

[6] *Տե՛ս Հայկական ՍՍՀ վարչա-տերիտորիալ բաժանումը (հայ.,ռուս), (առ 1 օգոստոսի 1988թ.), 6-րդ հրատ., Եր., 1988, էջ 61-71:*

[7] *Տե՛ս Ա.Ա ս լ ա ն յ ա ն, Հ. Գ ր գ ե ա ր յ ա ն, նշվ. աշխ., էջ 9-36: Զարմանալի է, որ Խաչ-ով 27 տեղանունից միայն 8-ն է վերանվանվել (էջ 88):*

փանցյանի զայրույթը (որ անդամությունների հմուտ սառուզարանով էր) հատկապես հինավուրց *Դսեղը Թումանյան* վերանվանելու կապակցությամբ, «եթե Թումանյանը գլուխը բարձրացներ, ի՛նքը կբողոքեր դրա դեմ»:

Վերջին տասնամյակում շարունակվեց ստեղանվանափոխության գործընթացը՝ հիմք ընդունելով պատմական անվանումները վերականգնելու սկզբունքը, որն ինչ-որ չափով կիրառվում էր նաև նախորդ փուլում: Բայց սույն գործընթացում էլ եղան մի շարք, երբեմն ցավալի վրիպումներ, որոնք հնարավոր է բազմանալ: Այսպես, փոխանակ վերականգնելու *Կույրիչև* վերանվանված գյուղի *Ջարխեչ* անունը, այն անվանվեց *Հաղարծին*, մինչդեռ վերջինս միջնադարյան հայտնի խոշոր ճարտարապետական հուշարձանի անունն է, որը գյուղից բավական հեռու է: Սույն օրինակը եզակի չէ ու միտում ունի վարակիչ դառնալու. նույն կերպ էլ վիճարկվում է Ալավերդի քաղաքի վերանվանումը՝ քննարկվում է *Սանահին*, նաև *Լալվար* և այլ տարբերակներ, մինչդեռ քաղաքի հայեցի բուն անունը *Մանես* է[8]: Դեռ ավելին: Ազգային ժողովում նորերս որոշ եավակնոտ պատգամավորներ (Հր. Հակոբյան և ուրիշներ) ձայներ են հնչեցնում Գավառ քաղաքը վերանվանելու *Քյավառ* կամ վերականգնելու *Նոր Բայազետ* անունը: Ահա թե ուր կարող է հասցնել անգիտությունը այն բանի չըմբռնումը, որ *Քյավառ*-ը բարբառային դարձած *Գավառ* պատմական տեղանվանման թրքահունչ ձևն է, իսկ *Բայազետ-ը* Օսմանյան տիրակալի անվամբ է կոչված:

Տակավին ընթանում են խորհրդային ժամանակներից եկող, որպես, այսպես ասած, ցուցադրական զանազարդման արգասիք, բնակավայրերի նույնարմատ ու նույնանուն անվանումների բազմազանեցմանը միտված գործընթացները պատմական հիմամբ: Համոզիչ լինելու համար բերում ենք Հայաստանի Հանրապետության օրենքի ցանկի հիմամբ հաշվարկած բնակավայրերի կրկնվող անվանումներն ըստ մարզերի[9]:

Արագածոտնի մարզ- 121 բանակավայր, որից Ագարակ՝ 2, Արագած՝ 2 (նաև՝ Արագածոտն), Գեղաձոր-Գեղարոտ-Գեղադիր, Երրորդ ավխոզի գյուղ (հրևի արդեն փոխվել է), Լեռնապար-Լեռնարոտ, Լուսագյուղ-Լուսակն, *Ծաղկա*-ով՝ 3 գյուղ , Ձորա-գլուխ- Ձորագյուղ, *Ներքին*-ով՝ 2, *Նոր*-ով՝ 5 (ընդ որում, Նորաշեն՝ 2), *Ոսկե*-ով՝ 3, Վար-դենիս-Վարդենուտ-Վարդաբլուր, *Վերին*-ով՝ 3: Ընդամենը՝ 33:

Արարատի մարզ- 98 բնակավայր, որից *Ազատ*-ով՝ 2, *Այգե*-ով՝ 4, Արարատ՝ 2, *Արև*-ով՝ 2, *Գետ*- ով՝ 2, *Դաշտ* –ով՝ 2, *Լանջ*-ով՝ 3, *Լուս* –ով՝ 2, *Հովիտ*-ով՝ 2, *Մրգա*-ով՝ 3, *Նոր* -ով՝ 7, *Ջրա*-ով՝ 2, *Սիս* –ով՝ 2, *Վարդ*-ով՝ 2, *Վերին*-ով՝ 2, *Ուրց* –ով՝ 2: Ընդամենը՝ 41:

Արմավիրի մարզ - 98 բնակավայր, որից *Ակնա*-ով՝ 2, *Այգե*-ով՝ 3, Արաքս՝ 2, Արմավիր՝ 2, *Արև*-ով՝ 3, Բաղրամյան՝ 2, *Լեռնա*-ով՝ 2, *Ծաղկ*-ով՝ 2, *Հայկա*-ով՝ 2, *Մրգա*-ով՝ 2, *Նոր*-ով՝ 6, Շահումյան՝ 2, *Շեն*-ով՝ 2, *Ջրա*-ով՝ 3: Ընդամենը՝ 35:

Գեղարքունիքի մարզ- 98 բնակավայր, որից *Արծվա*-ով՝ 2, *Գեղա*-ով՝ 5, *Լիճ*-ով՝ 4, *Ծաղկ*-ով՝ 2, *Ծով*-ով՝ 4, *Ձորա*-ով՝ 2, *Ներքին*-ով՝ 2, *Նորա*-ով՝ 4, *Վարդ*-ով՝ 2, *Վերին*-ով՝ 2: Ընդամենը՝ 29:

Լոռու մարզ- 127 բանկավայր, որից Արջուտ՝ 2, *Արև*-ով՝ 2, *Լեռնա*-ով՝ 4, *Ծաղկա*-ով՝ 2, *Կաթնա*-ով՝ 3, *Ձորա*-ով՝ 3, *Մեծ*-ով՝ 3, *Նոր*-ով՝ 2, *Սար*-ով՝ 3, *Վահագն*-ով՝ 2, Փամբակ՝ 2, *Քար*-ով՝ 4: Ընդամենը՝ 32:

Կոտայքի մարզ- 69 բնակավայր, որից *Գեղա*-ով՝ 3, *Ձոր*-ով՝ 3, *Նոր*-ով՝ 4, *Ջր*-ով՝ 3: Ընդամենը՝ 13:

Շիրակի մարզ- 131 բնակավայր, որից *Ախուր*-ով՝ 2, Աղին՝ 2, *Անի*-ով՝ 2, *Արև*-ով՝ 2, *Գետ*-ով՝ 2, *Լեռն*-ով՝ 3, *Լուսա*-ով՝ 2, *Կարմրա*-ով՝ 2, *Կրա*-ով՝ 2, *Հայկա*-ով՝ 3, *Հովիտ*-ով՝ 3,

---

[8] *Առաջ են քաշվում նաև այլ տարբերակներ (տե՛ս, Գ.Սարոյանի «Ժամանակն է անվանափոխել» հոդվածը. – «Հայաստանի Հանրապետություն» լրագիր, 31.03.1998), որոնք բոնազբոսիկ են, ուստի՝ անընդունելի:*

[9] *Տես Հավելված 2, Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքի (ցանկ ՀՀ համայնքների և բնակավայրերի), Եր.,1995թ.:*

Ձորու-ով՝ 2, *Մեծ*-ով՝ 3, *Մեղրա*- ով՝ 2, Սուսայելյան՝ 2, Շիրակ՝ 3 (մարզի անվան հետ), Ջաջուռ՝ 2, *Ջրա*-ով՝ 3, *Սարա*-ով՝ 5, *Վարդա*-ով՝ 2, *Փոքր*-ով՝ 4: Ընդամենը՝ 52:

Սյունիքի մարզ- 135 բնակտվայր, որից *Ներքին*-ով՝ 3, *Նոր*-ով՝ 2, Որոտաս՝ 2, Սյունիք 2 (մարզի անվան հետ), *Վերին*-ով՝ 4, *Տանձա*-ով՝ 2: Ընդամենը՝ 15:

Վայոց ձորի մարզ- 55 բնակտվայր, որից *Արաա*-ով՝ 2: Ընդամենը՝ 2:

Տավուշի մարզ- 65 բնակտվայր, ոբից *Այգե*-ով՝ 2, *Լուսա*-ով՝ 2, Ծաղկավան՝ 2, *Ոսկե*-ով՝ 2, *Վերին*–ով՝ 2: Ընդամենը՝ 10:

Այսպիսով, 1990-ական թթ. կեսերին համանուն ու նույնարմատ բնակավայրերի թիվը 262-ն է: Այսինքն՝ նախորդի համեմատ կրճատվել է շուրջ կեսով՝ 271, ընդ որում, 1940-ականների 869-ի դիմաց 1990-ականներին կար 997 բնակավայր:

Ուշագրավ է, որ ըստ մարզերի, բնակավայրերի համանուն ու նույնարմատ անվանումները հետևյալ պատկերն են ներկայացնում. Արագածոտնի մարզի 121 բնակտվայրից նշված հատկանիշներով որակվածները 33-ն են, Արարատի մարզի 98-ից՝ 41-ը (գրեթե կեսը), Արմավիրի մարզի 98-ից՝ 35-ը, Գեղարքունիքի մարզի 98-ից՝ 29-ը, Լոռու մարզի 127-ից՝ 32-ը, Կոտայքի մարզի 69-ից՝ 13-ը,Շիրակի մարզի 131-ից՝ 52-ը, Սյունիքի մարզի 135-ից՝ 15-ը, Վայոց ձորի մարզի 55-ից՝ 2-ը,Տավուշի մարզի 65-ից՝ 10-ը:

Ամենից ցավալին, սակայն, ՀՀ երկրորդ քաղաքի անգթորեն չարչրկված վերանվանումն է: Եթե բծախնդրորեն դիտարկելու լինենք, ապա կնկատենք, որ քաղաքն իր գոյության վաղեմի ժամանակներից ցայժմ կրել է շուրջ ութ անուն՝ *Կումայրի, Գյումրի, Կիմրի, Ալեքսանդրապոլ, Ալեքպոլ, Լենինական, Կումայրի, Գյումրի*: Շատ չէ՞ արդյոք մի բնակավայրի համար:

Եվ ահա այս տեղանվանային մղձավանջից ազատվելու համար, Հայաստանի երրորդ Հանրապետության կայացմամբ վերջապես ընձեռվեց հնարավորություն՝ տընօրինելու գործերը մեր ուզած ձևով: Սպասվում էր, որ որոշակի հանգամանքների բերումով պաշտանապես անցյալ տարիներին՝ *Ալեքսանդրապոլ*, մեր դարասկզբներին՝ *Լենինական* մկրտված տեղանունները վերջապես տեղը կզիջեն պատմականորեն հայանի բուն հայաշունչ-հայահունչ *Կումայրի* տեղանվանը, որպես էլ սկզբնապես արվել էր՝ շնորհիվ ժամանակի խելամիտ քաղաքապետ Կ. Համբարձումյանի ջանքերի: Բայց վերջին հաշվով հաղթեց գավառային մասայնությունը և այդ ամենահայեցի քաղաքը վերանվանվեց թրքաշունչ-թրքահունչ *Գյումրի* անվամբ:

Ի դեպ, 2000թ. Անկարայում թուրքերեն հրատարակված Արևելյան Թուրքիայի վարչատարածքային քարտեզում (Türkei, Ost. Euro-Ladekarte, 1.800,000), որի մեջ առնվել է նաև ՀՀ-ն, գրված է՝ *Qümri (Qümrü)*, այսինքն՝ վերստին հավաստվել է *Գյումրի*-ի թուրքերենին հարազատ լինելը: Հարկ է նշել, որ թուրքերենին բնորոշ է բառամիջի ձայնավորները, ավյալ դեպքում՝ *ու*-ն ումլաուտով հնչելը, «փափկեցնելը»՝ *ü*, որի հետևանքով միշտ ստացվում է *յու*: Այդպես է, *Գյումրիից* բացի, նաև հումահունչ բոլոր տեղանուններում. Գավառը՝ *Քյավառ*. Փարաքարը՝ *Փարաքյար*, Կուրինը՝ *Գյուրուն* և այլն:

Այս պարսպում որպես աորրական ճշմարտություն, վաղուց ի վեր հայանի է հայագետներին սակայն, ցավոք, նրանց հետ գրեթե հաշվի չեն նստում, չեն իարերդակցում այն պատկան մարմինները, որոնք անօրինում են օրենսդրական ակտերի հորինումը: Դա կրկին անգամ դրսևորվեց Ազգային ժողովում, որտեղ վերջերս բուռն վեճերի առարկա հանդիսացած Մայիսի 1-ի և Մարտի 8-ի սան օրեր հայտարարելու հարցի քննարկումը, որը խիստ քաղաքականացվեց, ինչպես սովորաբար արվում է ավյալ աայանում՝ առանց պատմամշակութային լուրջ անդրադարձների (գոնե նման խնդիրներ արծարծելիս):

Բուն մասնագետները, սակայն, չեն կարող անտարբեր անցնել նման խեղաթյուրումների կողքով, որպիսիներից է վերը քննարկված *Կումայրի-Գյումրին*, և չանցան: Հարկ է նշել կումայրեցի ազգագրագետ Կսալ Սեղրոսյանի՝ գիտականի ազնիվ մղումներով գրված, ճիշտ է, լրագրային, բայց մասնագրական աղբյուրների վկայություններով հույժ հագեցած ծանրակշիռ հայլվածները: Դրանցից առաջինը տպագրվել է «Կումայրի»

լրագրում (4 հունիսի 1991թ.), «Կումայրի բնակավայրի անվան պատմությունից» վերտառությամբ, որով ուղղունվում է *Լենինականի* վերանվանումը *Կումայրի*: Շատ չանցած (շուրջ հինգ ամիս) նա վերստին հանդես է գալիս, այս անգամ «Ազգ» օրաթերթի լրագրում (19 նոյեմբերի 1991թ.) «Պատմական ճիշտը հաղթանակի՞» խոսուն խորագրով հոդվածով, որով իրավացիորեն վիճարկում է տվյալ խնդրի այդ կերպ լուծման օրինականությունը՝ հենված տեղանվանագործական վերապրուկային մտայնությամբ սրսկված, պատմամշակութային լոռքային մոտեցումը բացառած որոշման վրա[10]:

Ահա ինչու հարկ է, որ վերականգնվի «Կումայրին», և դա պետք է դառնա քաղաքի ուղղախոհ մտավորականների սլատվի ու արժանապատվության խնդիր՝ համագործակցած տեղի իշխանությունների հետ:

Տարիներ առաջ՝ 1982-ին, փորձել եմ փոքր-ինչ (մեկ հնչյունի) շտկմամբ եայաշունչ-բիայնաշունչ դարձնել հայոց նորագույն պատմության ազատամարտի բնօրրան *Սարդարապատ* տեղանունը՝ *Սարդար*-ը դարձնելով *Սարդուր*՝ *Սարդուրապատ* (ի դեպ, ժամանակին իրավացիորեն տեղանվան *բադ* մասնիկը փոխարինվել է *պատ*-ով, որով, սակայն, այն լիովին չի ձերբազատվել պարսկաշունչ լինելուց), բայց հաջողության չեմ հասել: Հուսով եմ, որ հետամուտ լինելու դեպքում հնարավոր է համոզել պատկան մարմիններին՝ անելու այդ չնչին փոքր, բայց էական շտկումը:

Առհասարակ տեղանունների վերաճշգրտումը տակավին շարունակական գործընթաց է հատկապես անհարկի կրկնություններից, զուգադրումից խուսափելու և, մանավանդ, բուն հայեցի սլատմական տեղանունները հնարավորինս վերականգնելու ու այդ հիմամբ նորերը հորինելու առումով: Դրա հնարավորությունն ընձեռում են մեր գրավոր աղբյուրները և բանավոր ավանդապատումները, որոնցից խելամտորեն օգտվելը մեծապես կնպաստի տեղանվանակերտմանը[11]:

Վերջապես, կցանկանայի անդրադառնալ թերևս անուղղակիորեն բուն խնդրին առնչվող մի հարցի ևս: Դա հետևյալն է: Թյուրիմացություն է առկա նաև մի այլ խնդրում: Վերը նշված նոր վարչատարածքային բաժանմամբ (1995թ.) Լոռվա մարզի մեջ է առնվել նաև նախկին Ստեփանավանի շրջանը, որն առավելապես հարում է Շիրակի մարզին թե՛ բնակլիմայական պայմաններով, թե՛ տնտեսամշակութային յուրահատկություններով (ամենակարևորը՝ բնակիչները մեծամասամբ արևմտահայոց սերունդներն են), մինչդեռ բուն լոռեցիներն ընդհանուր առմամբ արևելահայեր են, բացառյալ Տաշիրի նախկին շրջանի կաթոլիկները, որոնք տակավին զգացվող կենցաղավարական յուրահատկություններ են դրսևորում: Նույն կերպ էլ սխալմունք է, ըստ իս, Ճամբարակի (Կրասնոսելսկի) նախկին շրջանը Գեղարքունիքի մարզին կցելը, քանի որ դրա բնակչությունը (բացառյալ ռուս հնադավանների), որպես վաղեմի արևելահայեր (դարձյալ բացառյալ Մարտունի գյուղինը), ունեն հենց միայն Տավուշի մաքզի բոլոր հատկանիշները, մինչդեռ Գեղարքունիքի մարզի բնակիչներն արևմտահայոց սերունդներ են՝ միայն իրենց հատուկ անահամշակութային ախտով[12]:

Առհասարակ Հայաստանի նախկին վարչատարածքային շրջանները հանպատրաստից վարչատարածքային մարզերի մեջ ընդգրկելն արվեց խիստ հապճեպորեն, որն առկա սոցիալ-տնտեսական պայմաններում վերջին հաշվով հանգեցրեց մեծ անհարմարությունների: Ահա ինչու, վերջերս Խորհրդարանում օրակարգի հարց է դարձել մարզերի

[10] *Ուշագրավ է նաև Գ. Մկրտչյանի արձագանքը (տե՛ս հոդվածը՝ ... Եվ կոչեցին քաղաք Գյումրի.- «Ազգ»,31 XII 1992), որով նույնպես վիճարկվում է նման հարցերը հանրաքվեով լուծելու օրինականությունը, մանավանդ որ կասկածելի է եղել դրա անաչառությունը:*

[11] *Այս առթիվ տես. Հ. Խաչատրյան, Վերստին Հայաստանի տեղանունների մասին, «Հայաստանի Հանրապետություն», 20-21. VI. 1997թ.:*

[12] *Այլ նկատառումներով այս առիթով տարակուսանքներ են հայտնել ուրիշ հեղինակներ ևս (տես օր. Ա. Զիրոյան, Հանրապետության վարչատարածքային բաժանման որոշ մոտեցումների մասին., «Հայաստանի Հանրապետություն», 29. IV. 1998):*

ներկա կարգավիճակի վերանայումը (Լ.Վալեսյան), որը (եւսանք) կարվի առավել մածված՝ խնդրո առարկայի հանուր պարամեարերի եաշվառմամբ, մասնագեանների խորհրդատվությամբ, մի քան, որը չըր արվել նախկինում (Գ. Ավագյան):

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СОВРЕМЕННОЙ ТОПОНИМКИ РА

Резюме ***Д. С. Вардумян***

Общеизвестно, что топонимы Армении в течении веков в результате господства чужестранцев были заменены мусульманскими – персидскими и тюркскими названиями. В советский период, в частности, после известной поэмы Ов. Шираза («Названия наших сел»,1942) началась массовая реарменизация названий населенных пунктов, и процесс этот продолжается по сей день, в результате чего, однако, имеют место повторы топонимов, особенно новообразованных, а также неточности иного порядка.

Досаднее всего, тем не менее,представляется намученный вопрос переименования второго города РА: ожидалось, что возникшие в результате исторического конформизма, *Александраполь*, а затем и *Ленинакан* должны были уступить место наполненному армянским духом и звучанием *Кумайри*. Между тем возобладало провинциальное мышление, и город, согласно «референдуму», был переименован в *Гюмри*. Следует стереть это клеймо с облика города и восстановить древнее название *Кумайри*.

Համլետ ՍԱՐԳՍՅԱՆ, Արաաշես ԲՈՅԱՋՅԱՆ

ԳՅՈՒՄՐՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՄԱՆ ՓՈՐՁ (1990-2000թթ.)

Վերջին տարիներին Գյումրու բնակչության աշխատանքային ռեսուրսների էթնո և անտեսաաշխարհագրական ամբողջական հետազոտություն չի կատարվել: Մինչդեռ բնակչության աշխատանքային ռեսուրսների, սոցիալ-մասնագիտական կազմի, կենսապահովման ձևերի ուսումնասիրությունը ոչ միայն ճանաչողական, այլև գիտագործնական կարևոր նշանակություն ունի:

Խորհրդային տարիներին Հայաստանի աշխատանքային ռեսուրսներ անվանատակ հասկացվում էր բնակչության՝ 16-59 տարեկան աշխատունակ տարիքի տղամարդիկ և 16-54 տարեկան կանայք, իսկ Հայաստանի հանրապետությունում՝ 16-63 տարեկան տղամարդիկ և 16-58 տարեկան կանայք, չհաշված ցելեկային ուսուցման մեջ ընդգրկված երիտասարդությունը և հաշմանդամներին: Աշխատունակ տարիքի սանդղակի բարձրացումը ներկայումս հանրապետության պետական այրերը բացատրում են կյանքի միջին բարձր անողությամբ: Վիճակագրության նախարարության 2000թ. պաշտոնական տվյալներով, կանանց համար կյանքի սպասելի անողությունը 78 տարի է, իսկ տղամարդկանց համար՝ 72[1], այն դեպքում, երբ ՄԱԿ-ի 1995թ. «Մարդկային զարգացման զեկույց»-ում Հայաստանի բնակչության կյանքի սպասելի անողությունը 71.2 տարի է, ընդ որում տղամարդկանց համար՝ 67.9, իսկ կանանց՝ 74.4 տարի[2]: Մեր կարծիքով վերջին տվյալներն իրականությանը ավելի մոտ են:

Գյումրու աշխատանքային ռեսուրսների կազմավորման միջուկը 19-20-րդ դարերում Արևմտյան Հայաստանից՝ հիմնականում Էրզրումի նահանգից և Կարսի մարզից գաղթած արհեստավորներն ու առևտրականներն էին: Իսկ խորհրդային տարիներին քաղաքի աշխատանքային ռեսուրսների կազմը փոփոխության ենթարկվեց գերազանցապես Լենինականի գավառի և Ջավախքի գյուղական բնակավայրերից գաղթած բնակչության, ինչպես նաև հայրենադարձության հաշվին:

Սպիտակի երկրաշարժը և 90-ական թվականների սկզբներից Հայաստանի հանրապետությունում իրականացվող սոցիալ-տնտեսական տեղաշարժերը կտրուկ փոփոխության ենթարկեցին Գյումրու աշխատանքային ռեսուրսների կազմը և զբաղվածության բնույթը: 1990-2000թթ. Գյումրու աշխատանքային ռեսուրսների կառուցվածքի և զբաղվածության վրա ազդող գործոնները բազմազան ու տարաբնույթ են: Դրանցից կարելի է առանձնացնել ժողովրդագրականը, սոցիալ-տնտեսականը, քաղաքականը, բնաաշխարհագրականը և այլն:

Մինչև այժմ լավին ճշտված չէ, թե Սպիտակի երկրաշարժից աշխատունակ տարիքի որքան մարդ է զոհվել: Աշխարհագետ Խ. Ավետիսյանը գրում է. «Գյումրի քաղաքում զոհվել է 10286 մարդ, սակայն քաղսովետի նախագահ Կ. Համբարձումյանի հետ զրույցի ժամանակ պարզվել է, որ մինչև 1989թ. հուլիսի 1-ը զոհերի ընդհանուր թիվը եղել է 13101 մարդ»[3]: Սպիտակի երկրաշարժից զոհված աշխատունակ բնակչության թվի ճշգրտումը հետագա ուսումնասիրությանը թողնելով՝ քննության առնենք Գյումրու բնակչության տարիքային կազմի փոփոխությունը 1982-2000թթ:

---

[1] *Շիրակի մարզի վիճակագրության տվյալներ, 2000թ:*

[2] *ՄԱԿ-ի Հայաստանի գրասենյակի Մարդկային զարգացման զեկույց, Եր, 1995, էջ 10:*

[3] *Խ. Ա վ ե տ ի ս յ ա ն, Սպիտակի երկրաշարժի գոտու բնակչության միգրացիայի վերլուծությունը, Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 2000, էջ124 :*

Աղ. 1. Գյումրու մշտական բնակչության տարիքային խմբերի փոփոխության շարժը 1982-2000թթ.

բնակչության տարիքային խմբերը	1982թ[4]		2000թ[5]	
	հազ. մարդ	ընդհ. բնակչության տոկոսը	հազ. մարդ	ընդհանուր բնակչության տոկոսը
մինչաշխատունակ 0-15 տարեկան	56.2	24.5	51.7	24.4
աշխատունակ 16-54 տարեկան	136.3	64.5	129	60.9
կենսաթոշակառու 55 տարեկանից բարձր	22.3	11.0	30.9	14.7
ընդամենը	214.8	100	211.6	100

Աղյուսակից երևում է, որ Գյումրիում 1982թ. կենսաթոշակառուները կազմում էին բնակչության ընդհանուր թվի 11%-ը, իսկ 2000թ՝ 14.7%-ը, սակայն բնակչության առկա թվի դեպքում՝ 22.5%-ը[6]: Համեմատելու համար նշենք, որ զարգացած երկրներում (Անգլիա , Շվեդիա, ԱՄՆ և այլն) կենսաթոշակառուները կազմում են բնակչության ընդհանուր թվի 16%-ից ավելին, ինչը խոսում է բնակչության «ծերացման» նախադրյալների առկայության մասին[7]: Մեր հանրապետությունում 2000թ. հունվարի 1-ի դրությամբ ունենք աշխատունակ տարիքից ցածր՝27%, աշխատունակ տարիքի՝ 62% և աշխատունակ տարիքից բարձր՝11% բնակիչ[8]: Մեր կարծիքով, եթե զարգացած երկրներում բնակչության ծերացման գործընթացը ժողովրդագրական բնականոն զարգացման հետևանք է, ապա Հայաստանում, մասնավորապես Գյումրիում բնակչության ծերացման նման միտումները պայմանավորված են աշխատունակ բնակչության զանգվածային արտագաղթով: Մեր հաշվարկներով, վերջին տասը տարիների ընթացքում Գյումրիում արտագաղթողների թիվը հասնում է մոտ 90 հազարի, որից 72.6 հազարը աշխատունակ տարիքի են[9]:

Ինչպես ասվեց վերևում, աշխատանքային ռեսուրսները կազմում են բնակչության աշխատունակ մասը: Գյումրու 2000թ. աշխատանքային ռեսուրսների կառուցվածքը ներկայացված է հետևյալ աղյուսակում:

Աղ. 2. Գյումրու առկա բնակչության աշխատանքային ռեսուրսների կառուցվածքը 2000թ վերջերին

	բնակչության թիվը	
	(հազ. մարդ)	(տոկոսներով)
Գյումրու առկա բնակչությունը	138	100
քաղաքում առկա աշխատունակ բնակչության թիվը	65.6	47.5
այդ թվում՝		
տնտեսության մեջ	16.2	24.6
գործազուրկներ	29.0	44.2
անհատ ձեռներեցներ	1.4	2.1
գործարարներ	2.6	3.9
ուսանողներ	4.5	6.8
և այլք	11.9	18.4

Աղյուսակից երևում է, որ աշխատունակ բնակչության մոտ կեսը գործազուրկներ են, տնտեսության տարբեր ոլորտներում ներգրավված է առկա բնակչության ընդամենը 14.5%-ը: Գյումրու զբաղվածության տարածքային կենտրոնի ավյալներով 2000թ. նոյեմբերին հաշվառման էին կանգնած մոտ 29 հազ. աշխատանք փնտրող

---

[4] *Հ. Գ ա ր ր ի ե լ յ ա ն, Լենինական, Եր., 1984, էջ 39:*

[5] *Շիրակի մարզային վիճակագրության տվյալներ, 2000թ:*

[6] *ՇՊՄԺ IVհանրապետական գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի 2000. էջ 49:*

[7] *С.К а р а п е т я н, Р. О в с е п я н, Региональные особенности социально-демографического развития Армянской ССР, Ер., 1984, стр.61.*

[8] *ՀՀ Վիճակագրական վարչության տեղեկագիր, Եր., 1999:*

[9] *Ա. Բ ո յ ա ջ յ ա ն, Դաշտային էթնոաշխարհագրական նյութեր, (հեղինակի՝ ԴԷՆ) թերթ I:*

անձիք, նրանցից 21388 կամ 69.2% կանայք էին: Գործազուրկի կարգավիճակ ունեին 26862 մարդ, գործազուրկ կանանց 55%-ը 25-35 տարեկան էին:

Որոշ հեղինակներ տարբերում են գործազրկության լինգ տեսակ. դրանք են՝ ֆրիկցիոն կամ շփումնային, կառուցվածքային, ինստիտուցիոնալ, փուլային և կամավոր[10]: Կառուցվածքային և շփումնային գործազրկության միջև տարբերությունը կայանում է նրանում, որ կառուցվածքային խմբին պատկանող գործազուրկը պարտադիր որևէ մասնագիտական վերապատրաստում պետք է անցնի: 2000թ. ընթացքում աշխատանքի տեղավորված 524 գյումրեցիներից միայն քանն է մասնակցել մասնագիտական դասընթացների[11]: Ինստիտուցիոնալ և փուլային գործազրկությունը բնորոշ է այն երկրներին, որտեղ տիրում է սոցիալ-անտեսական և քաղաքական ճգնաժամ[12]: Ինստիտուցիոնալ և փուլային գործազրկության պայմաններում իշխանությունների, տեղի և արտասահմանյան հասարակական բարեգործական կազմակերպությունների կողմից հատկացվող դրամական ու նյութական միջոցները ուղղվում են բնակչության սոցիալապես անապահով խավին: Մեր կարծիքով, նպաստների հատկացումը գործազուրկների որոշ մասին հետ պահում աշխատանք փնտրելուց: Պաշտոնական վիճակագրության տվյալների համաձայն 1996թ. գործազուրկների միայն 20% է աշխատանք փնտրել: Հետևաբար գործազուրկներին, սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական նպաստների հատկացումը հիմնախնդիրների լուծում չէ, ավելին, այն սրում ու վատթարացնում առկա սոցիալ-անտեսական իրավիճակը: Գյումրու զբաղվածության տարածքային կենտրոնի տվյալներով 2000թ.սկզբից մինչև նոյեմբեր գործազուրկի կարգավիճակ ունեցող 26.8 հազ. մարդուց նպաստառուների թիվը 431 է, որից դրամական նպաստ են ստացել 422-ը՝ մեկ գործազուրկի հաշվով միջինը 3500 դրամ: Ճիշտ է, դրամական նպաստի հատկացումը թերևս արդարացված է կարճատև ժամանակահատվածի համար, սակայն ոչ ավելին, քանի որ աշխատունակ բնակչությունը, գտնվելով ինստիտուցիոնալ և փուլային գործազրկության մեջ ու «Փարոս» ծրագրում, զբաղվածության կենտրոնից և այլ կազմակերպություններից ստանալով դրամական տարբեր տեսակի նպաստներ, բացառված չէ, որ հայտնվի կամավոր գործազուրկների խմբում: Յուրաքանչյուր երկրում գործազուրկների մեծ թիվը զգալի վնաս է հասցնում ոչ միայն բնակչության կենսամակարդակին, այլև պետությունից լրացուցիչ ծախսեր են պահանջվում սոցիալական սրությունը մեղմելու համար: Աղյուսակ 3-ում ներկայացնում ենք Գյումրու աշխատունակ բնակչության և գործազուրկների թվի փոփոխության շարժընթացը 1992-2000թթ. Աղյուսակից երևում է, որ 1992թ. աշխատունակ բնակչության թիվը 120 հազ. է, իսկ գործազուրկների թիվը չորս հազար: Հետագա տարիներին Հայաստանի Հանրապետությունում իրականացվող սոցիալ-անտեսական վերափոխումները, ձեռնարկությունների մասնավորեցումը, էներգետիկ ճգնաժամը, արտադրատնտեսական կապերի խզումը Հանրապետության և նախկին միութենական ձեռնարկությունների միջև, շրջափակումը, բռնագաղթի միգրացիա ... կարուկ թանկացումը հանգեցրեցին այն բանին, որ 2000թ քաղաքի աշխատունակ բնակչության թիվը աստիճանաբար նվազեց ու հասավ 65.6 հազարի իսկ գործազուրկների թիվն աճեց 7.2 անգամ:

1992-2000թթ. Գյումրու աշխատունակ բնակչության և գործազրկության շարժը կարելի բաժանել երեք փուլի.

Առաջին փուլն ընդգրկում է 1992-94թթ., երբ աշխատունակ բնակչության թիվը նվազել է 49 հազարով, իսկ գործազուրկների թիվն ավելացել է 9 հազարով: Աշխատունակ բնակչության թվի նվազումը և գործազուրկների թվի աճը բացատրվում է Հանրապետության էներգետիկ ճգնաժամով, արդյունաբերաարտադրական ձեռնարկությունների միջև գոյություն ունեցող կապերի խզումով ու պատերազմական իրադրությամբ:

Երկրորդ փուլն ընդգրկում է 1995-97թթ, երբ աշխատունակ բնակչության թիվը նվազել է 11.4 հազարով, իսկ գործազուրկների թիվն ավելացել է 24 հազարով: Այս փուլում աշխատունակ բնակչության թվի նվազումը և գործազուրկների թվի կտրուկ աճը հիմ-

---

[10] *А. Н и к и ф о р о в, Рынок труда: занятность и безработица, М., 1991, стр. 26.*

[11] *Գյումրու զբաղվածության տարածքային կենտրոնի տվյալներ:*

[12] *А. Н и к и ф о р о в, նշվ. աշխ., էջ 28:*

նականում բացատրվում է քաղաքի արդյունաբերաարտադրական ձեռնարկությունների սեփականաշնորհման գործընթացով: Օրինակ, Գյումրու երուշակեղենի կոմբինատում մինչև Սպիտակի երկրաշարժը աշխատողների թիվը 177 էր, 1996թ.՝ մինչև ձեռնարկության մասնավորեցումը՝ 77 , իսկ արդեն 2000թ. երուշակեղենի կոմբինատում աշխատում էր ընդամենը 13 մարդ, ընդ որում վեցը ինժեներատեխնիկական աշխատողներ էին[13]: Նույնը կարելի է ասել Գյումրու գրեթե բոլոր արդյունաբերական ձեռնարկությունների մասին, որտեղ մասնավորեցումից հետո աշխատողների թիվը կտրուկ նվազել է:

Երրորդ փուլում՝ 1998-2000թթ, աշխատունակ բնակչության թիվը նվազել է 2 հազարով, իսկ գործազուրկների թիվը՝ 8 հազարով: Ինչպես երկրորդ, այնպես էլ երրորդ փուլում, աշխատունակ բնակչության թվի նվազումը պայմանավորված է մասամբ արդյունաբերաարտադրական ձեռնարկությունների սեփականաշնորհմամբ, իսկ գործազուրկների թվի որոշակի նվազումն արդյունք էր 1997թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված զբաղվածության մասին նոր օրենքի, որն ավելի դժվարացրեց գործազուրկի կարգավիճակ ստանալը:

Աղյուսակ 3. Գյումրու աշխատունակ բնակչության և գործազուրկների թվի փոփոխությունը 1992-2000թթ.

տարեթվեր	աշխատունակ բնակչության թիվը (հազ. մարդ)	գործազուրկների թիվը (հազ. մարդ)	գործազ.ռիվը տոկոսներով[14]		աշխատանքի տեղավորված գործազուրկների թիվը	
			1	2	նույնը մարդ	%
1992	129	4	3.3	1.9	270	0.2
1993	100.5	9.5	9.4	4.5	343	0.3
1994	80.0	13	16.2	6.2	280	0.3
1995	76.5	23	30.0	10.9	112	0.1
1996	72.1	29	40.2	19.0	18	0.02
1997	68.6	37	53.9	17.5	49	0.07
1998	67.6	25	39.9	11.8	200	0.3
1999	66.7	29	47.7	13.7	500	0.8
2000	65.6	29	53.6	13.7	619	1.1

Գյումրու բնակչության զբաղվածության, աշխատատեղերի պակասի և գործազրկության հիմնախնդիրների սրությունը ցայտուն դրսևորվում է սատնում, երբ վերլուծության ենք ենթարկում աշխատուժի առաջարկի տվյալները: Ասենք, որ Շիրակի մարզային վիճակագրությունում գրանցված ձեռնարկություններում զբաղվածների թիվը չի համապատասխանում իրականությանը: Նախ, որ մեկ անձը կարող է աշխատել մեկից ավելի ձեռնարկություններում, մասնավորապես, դրանց թվին կարելի է դասել անհատ ձեռներեցներին, որոնք հիմնականում զբաղված են գյուղատնտեսական մթերքների, թեթև արդյունաբերական և այլ ապրանքների առք ու վաճառքով, ինչպես նաև մտավորականներին ու առողջապահության ոլորտի աշխատողներին: Շիրակի մարզային տեղապետվագրության հիմնադրամի տվյալներով Գյումրիում անհատ ձեռներեցների թիվը 2000թ. անցնում է 1,4 հազարից:

Հիմնվելով Շիրակի մարզային վիճակագրության տվյալների վրա՝ աղյուսակ 4-ում ներկայացնում ենք զբաղվածության թվի բաշխումն ըստ անտեսության ճյուղերի:

Աղյուսակից երևում է, որ տնտեսության մեջ զբաղվածների 32.6%-ը արդյունաբերական համակարգում է աշխատում, ընդ որում վերջին 13 տարիների ընթացքում արդյունաբերության մեջ աշխատողների թիվը նվազել է 8.7 անգամ: Ներկայումս այդ

---

[13] Ա. Բ ո յ ա ջ յ ա ն, ԴԷՆ, թերթ 2:

[14] *Առաջին սյունակում գործազուրկների տոկոսը հանված է Գյումրու տվյալ աշխատունակ բնակչության թվից իսկ երկրորդում՝ մշտական բնակչության թվից:*

համակարգում զբաղված է Գյումրու առկա բնակչության 3.7% խակ ընդհանուր բնակչության՝ 2.7%-ը: Համեմատելու համար նշենք, որ այդ թիվը 1987թ. մոտ 23% էր[15]:

Աղ. 4. Զբաղվածության թվի բաշխումը Շիրակի մարզում 2000թ. ապրիլին

		զբաղված ների թիվը	արդյունաբերության մեջ	շինարարության մեջ	առևտրի հաս.սնունդի մեջ	առողջ. ֆիզկ. սոց. ոլորտ	կրթության ոլորտ	մշակույթի ոլորտ	կառավարման ոլորտ
1	ք.Գյումրի	16039	5230	1793	85	2766	4869	1602	294
2	ք.Արթիկ	4144	496	914	175	344	1402	224	247
3	Ախուրյան	3277	607	53	19	379	1840	139	207
4	Ամասիա	754	32	-	53	8	452	76	82
5	Աշոցք	1001	9	-	-	85	566	94	217
6	Անի,Արթիկ	1999	526	216	9	184	804	11	115
	ընդամենը	27214	6900	2976	341	3766	9933	2146	1162

Աշխատատեղերի թվի կտրուկ նվազումը Գյումրու արդյունաբերական համալիրում, պայմանավորված էր ոչ միայն Սպիտակի երկրաշարժով, այլև նորանկախ Հայաստանի Հանրապետության իշխանությունների որդեգրած՝ տնտեսության զարգացման կապիտալիստական կամ շուկայական կացութաձևով: Մեր ուսումնասիրություններով պարզվել է, որ արդյունաբերությունում զբաղվածների 80%-ից ավելին տղամարդիկ են, որոնց ճնշող մեծամասնությունը 40 տարեկանից բարձր է[16]: Ինչպես արդյունաբերությունում, նույնպես էլ կրթական համակարգում իրավիճակը բարվոք չէ: Ճիշտ է, ներկայումս, ըստ վիճակագրական տվյալների, մանկավարժների թիվը գրեթե երկու անգամ ավելի է ներկայացված քան նախաաղետային շրջանի համեմատությամբ, սա անշուշտ, հետևանք է այն բանի, որ մանկավարժների զգալի մասը դասավանդում է մեկից ավելի կրթօջախներում: Գյումրու և ոչ միայն կրթական համակարգի առջև այսօր առաջնահերթ ենք համարում ոչ միայն կրթելու, դպրոցաշինության հիմնախնդիրները, այլև տղամարդ մանկավարժներով դպրոցի համալրումը: Քաղաքի մանկավարժների մոտ 80%-ը կանայք են[17]:

Տնտեսության մեջ զբաղվածների տեղաշարժերի ուսումնասիրությունը աշխատանքային ռեսուրսների պոտենցիալի գնահատման կարևոր օղակներից է:

Աղյուսակ 5-ից երևում է, որ այդ շարժը 2000թ. ընթացքում ինտենսիվ բնույթ է կրել հատկապես արդյունաբերական ու շինարարական համալիրներում: Եթե առաջինում աշխատատեղերի շարժի հետևանքը եղել է բացասական է (-913աշխատատեղ), ապա երկրորդում այն դրական է (+934աշխատատեղ): Շինարարությունում աշխատողների թվի ավելացումը բացատրվում է այդ բնագավառում աշխատանքների ակտիվացմամբ, ինչը հանգեցրել է աշխատատեղերի պահանջի մեծացմանը:

Աղ.5. Շիրակի մարզում աշխատողների և աշխատատեղերի շարժը 2000թ.

	աշխատողների թիվը	աշխատանքի տեղավորվածների թիվը	աշխատանքից ազատվածների թիվը	աշխատատեղերի շարժի փոփոխությունը
ընդամենը	25705	2585	3498	-913
արդյունաբերության	8430	382	1802	-1420
շինարարությունում	2042	1772	838	+934
առողջապահության	3723	273	273	0
կրթություն	10269	56	327	-271
կառավարման ապարատ	1241	26	105	-79

---

[15] Վ. Ա գ ա տ յ ա ն, Լենինական,Եր., 1988, էջ 56:
[16] Ա. Բ ո յ ա ջ յ ա ն, ԴԷՆ, թերթ 2:
[17] Նույն տեղում:

Ի մի բերելով Գյումրու բնակչության 1990-2000թթ. աշխատանքային ռեսուրսների կառուցվածքի ուսումնասիրությունը, կարելի է եզրակացնել, որ ներկայումս նոր աշխատատեղերի ստեղծումը և զբաղվածության արդյունավետ կազմակերպումը անհետաձգելի ու հրատապ խնդիր է քաղաքում, ինչպես նաև ամբողջ մարզում: Բարձիթողի վիճակը կարող է հանգեցնել նրան, որ մոտակա տարիների ընթացքում քաղաքի առկա բնակչության թիվը նվազի ևս մեկ երրորդով:

ОПЫТ АНАЛИЗА ТРУДОВЫХ РЕСУРСОВ И ЗАНЯТНОСТИ НАСЕЛЕНИЯ г. ГЮМРИ В 1990-2000гг.

Резюме

Г.Саргсян, А. Бояджян

Сделана попытка проанализировать динамику изменения трудовых ресурсов и занятости населения города Гюмри в 1990-2000гг. Геополитическая ситуация и экономические реформы привели к тому, что к 2000г. более половины трудоспособного населения-безработные, а 12.5% заняты в разных хозяйственных сферах. В связи с массовой эмиграцией 1992-2000гг. численность трудоспособного населения сократилось до 63.4тыс. челожек, а число безработных выросло на 25 тысяч. Как в промышленности, так и в образовании социально-экономическая ситуация неустойчива. Неопределенность в вопросах развития городской экономики может привести к тому, что в будущем численность населения сократится на одну треть. Сегодня самая главная задача-определение путей развития городской экономики, создание рабочих мест и рациональное использование трудовых ресурсов.

Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Կարինե ՍԱՀԱԿՅԱՆ

ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Հայ վիմագիր չափածո ստեղծագործություններն ու գերեզմանաքարերի մակագրությունները ժողովրդի գեղարվեստական մտածողության ու աշխարհատեսության քարեղեն վկայություններ են, որ ամփոփում են մաքրկային հույզեր, ապրումներ, չապրած օրերի ափսոսանք:

Բացառապես անդրադարձել ենք կյանքից հեռացած անձանց հիշատակն անմահացնելու նպատակով հորինված վիմագիր ստեղծագործություններին: Քննել ենք նրանց հորինվածքի ուրույն գծերը, գաղափարական ուղղվածությունն ու թեմատիկայի բազմազանությունը: Հայ քարագործ վարպետների ճարտար ձեռումը փորագրված հիշատակագրումները, գեղարվեստական արժանիքից բացի, նաև ժողովրդի կյանքի, կենցաղի վկայագրեր են: Այսպես՝ Գյումրու Լփն գերեզմանոցներում տարածված են անձի զբաղմունքին առնչվող պատկերաքանդակները (զինագործի, դարբնի գործիքների պատկերումով): Արտահայտելով անհատի զբաղմունքը, նախասիրությունները, երկրային ու երկնային պատկերացումները՝ գրառված տապանագրերն ունեն պատմական լուրջ սկզբնաղբյուրի արժեք:

Գերեզմանաքարերի ավանդական մակագրությունները կառուցվածքով տարբերվում են նորօրյա գրառումներից, թեև վերջիններիս մեջ պահպանվում են ավանդական հորինվածքի բնորոշ գծերը: Հորինվածքի ավանդական ձևին հատուկ է բանաձևային սահմանումը՝

Ասա հանգչի խափանմամբ Մարիամ Ավիրեանց (ծնեալ 1783 վախճ 1831թթ.):

Աստ ռանգչին ոսկերք Վարդիթեր Թոփչեանցի, Ով հանդիպի տա ողորմի:

Կամ՝ Այս է առապանն հանգուցյալ Գարեգին Ոզոմյանի:
Ասա հանգչի Բեթղեհեմ՝ կինն Հակոբի:
Անրախա Ալմաստն եմ, կինն Եղիայի...:

Մի բառով ու մի բնութշումով /անրախտ Ալմաստն եմ/ ասես բացվում է աշխարհից հեռացածի ճակատագիրը: Կենսագրական իրողությունները խտանում են իբրև ապրած կյանքի գեղարվեստական բնութագրում: Բնորոշ են հին գերեզմանոցից գրի առած հետևյալ տապանագրերը.

Ժողովրդի դարդերի թարգման
Կույր աշուղ
Համբարձում Աղամեան (Համրո) 1867-1904:

Կամ՝ Ծաղիկ հասակս մահը շուտ խլեց,
Ջիվան հասակիս նա չխնայեց,
Գինով Ափեն եմ՝ զոհ դաժան մահվան,
Աիրելի ամուսին, Հմայակ Պողոսյան:

Վկայաբերվող նմուշները թույլ են տալիս ընդհանրացնելու, որ հին տապանագրերում գերիշխում են կառուցվածքի ավանդական բաղադրատարրերը, կենսագրական պատումի ժանրը ներառում է ննջեցյալի կյանքի ընդունմանյոն պահերը: Ի տարբերություն հին տապանագրերի՝ նորօրյա վիմագիր ստեղծագործությունները հորինված են գերազանցապես երկու եղանակով. մի մասի մեջ քնարական հերոսը կյանքին հրաժեշտ ավող անձն է, մյուս մասում՝ նորահայտ հորինողը (առավել հաճախ պատումը ներկայացվում է մահրիմ հարազատի անունից): Մակագրությունները միշտ չէ որ հորինված են վարպետ գրչով, բայց շատերը ակնուկ քնարի հուզիչ օրինակներ են.

«Մենք քար արցունքով կրծքերս ենք ծեծում,
ՈՒ չենք հասկանում մի՞թե դու չկաս,
Դու, որ երգ էիր աշխույժ ու կրակ,
Ինչպես ես մնում սառը հողի տակ,
Դու կյանք, դու երազ, մեր անուշ Մոսսան»:

Բովանդակային առումով գերեզմանաքարերի մակագրությունները յուրօրինակ ստույց են կյանքից անժամանակ հեռացողների և ապրողների միջև: Դրանք խորհրդածություններ են կյանքի ու մահվան, այս ու այն աշխարհների մասին և հաճախ ունեն բարոյախրատական քարոզի, բախտի դեմ արտունջի ու բողոքի շեշտադրում («Աստ. ո՞վ Աստված, եթե խիղճ ունես, ի՞նչ ճակատագիր դու տվեցիր մեզ»):

Կյանքը դեպի իր ամբողջականությունն է ընթանում հավետ կորուստների միջով. հետաղետյան շրջանում գրառված վիմագիր բանաստեղծության ներքին անձնական կենսագրության պատումը դառնում է որպես կորստաշատ սերնդի ողբերգություն.

«Չենք դողանջի էլ այս կյանքում,
Մենք դարձանք հուշ, պատրանք. երազ
Համբառնեցինք ի դուռ Աստված
Ու այդպես էլ չհասկացած.
Թե ով պոկեց մեր լեզվակը,
Որ մենք դարձանք համր զանգ...»

Գոյի խորհուրդը, կյանքի բարդ ստեղծվածների և «երազ կյանքի» հակադրությունն ու իմաստափիլիսոփումը գոյաբանական խնդիրներն են, որոնք մշտապես հուզում են անձին: Վիմագրություններում աշխարհը ներկայացվում է ներքին կենսափորձի, ապրած կյանքի ոսպնյակով: Այս պարագայում տապանագրերը հոգու կենսագրություններ են, ամփոփում են բախտ ու ճակատագիր: Գրված են ավաղի ու ափսոսանքի ժանրով, դառն հարցերի ու ինչուների մորմոքով («Եվ ով է ասում՝ բալիկս չկա»):

Կամ՝ «Թողաք, հրեշտակներ, Ձեր անից կարոտ,
Ինձ անհույս թողեցիք, ցմահ եմ լալու,
Սեղմում եմ սրտիս քարերն արյունոտ,
Անցած օրերն, ափսոս, էլ ետ չեն գալու»:

Տապանագրերում հաճախ ուրվագծվում է աշխարհից հեռացածի գեղագիտական իդեալը, փայփայած կյանքի երազը («Կյանք իմ, դու թվացել ես ինձ...» կամ «Երազներիս ճամփան շատ էր երկար, ապրածս ոտնաքայլ է միայն....»): Կարելի է նկատել, որ երազը պատկերային հյուսվածքի համակարգում ընկալվում է խորհրդանշական բովանդակությամբ: Վիմագրային արվեստում նմանօրինակ սիմվոլիկ իմաստավորում են ստանում նաև հող, քուն, *ծաղկած* գարուն, ծաղիկ հասակ արտահայտությունները:

« Դու հող ես դառնում ,
Ուրեմն կյանքս ես հողին կտամ,
Լսում ես, բալիկ, մինչև ես էլ գամ,
Ու մենք սուրբ հողում իրար միանանք»:

Աշխարհը անդադրում ընթացք է, անէացման ու ծննդյան, հատնումի և գտնումի, նորագոյացումների ու կերպափոխումների, նյութի հավերժական շրջապտույտի ընթացք: Եվ այս ընթացքի մեջ յուրօրինակ խորհուրդ ունեն այն բանաստեղծական մտորումները կամ հանպատրաստից հորինումները, որոնք հեղինակի մահից հետո դարձել են տապանագիր նրա շիրմին: Օր.՝ Անահիտ Հարությունյանի բանաստեղծության տողերը.

«Մենությունդ կողպել դեռ ապրել ես ուզում,
Բառը թողած անտեր ցավից փախած աղջիկ»:

Տապանագրային արվեստում կյանքն հաստատվում է իբրև երազ ու տեսիլ. անընդհատ նորոգվող կյանքը մի աստղաչափ հեռու է սառը հողը գրկած երբեմնի երազողից.

«Թվում է՝ լուռ ես մահ ու մոռացում,
Եվ մի՞թե իրոք դա երազ չէ լսենք,
Թողնելով այսքան, այսքան հիացում,
Դաշնության գնալ խանավ հողի հետ»:

(Շմավոն Թորոսյանի բանաստեղծությունը՝ դաջված իր տապանաքարին):

Մեծ ընդգրկումով տիեզերքի երկվության խորհուրդը, երկու աշխարհների՝ անցողիկի և հավիտենականի գաղափարը, երկնային կատարելության և երկրային ան-

կատարության միջև եղած եակատությանը պայմանավորում են վիմագիր ստեղծագործությունների բովանդակային ուղղվածությունը:

Հաճախ վիմագրերում յուրօրինակ խորհրդապաշտ զրույց-երկխոսություն է սկսվում կյանքից հեռացածի և հարազատների միջև.

«Իսկ մնացածը զավակներս՝
մնացածը անպատասխան մեր լռությունն է»:

Նույն գերեզմանի եզրաքարին փորագրված է ապրող որդիների պատասխան ցանկությունը.

«Հայր իմ կանցնեն տարիներ,
Ու մենք դարձած կատնկներ,
Երամներով եկող կգանք
Գերեզմանիդ սրբազան»:

Կյանքի ունայնության փիլիսոփայության դեմ հերոսը կերպավորվում է իր թողած արժեքների իմաստավորման ձգտումով, ի շարս այդ արժեքների սերն է, բարությունը, արժանահիշատակ գործը: Լույսի թագավորությունից հեռացողը ցանկանում է իր պատգամ-պատվիրանը թողնել զավակներին, երբեմն դիմում է անցորդ-անցավորին՝ նրանց, ովքեր գալության դժվարին ճանապարհին իրականացնելու են կյանքի դաշնության իր երազանքը.

«Իմ հայրական խրատս է Ձեզ,
Որ միշտ կյանքում լինեք բարի,
Բարի մարդը, ուր է լինի չի մոռացվի,
Միշտ կհիշվի»:

Եվ ապա զավակների երդումը.

«Անուշ ննջիր, քաղցր հայրիկ,
Կյանքը դառն է առանց քեզ»:

Քննվող վիմագիր ստեղծագործություններից շատերը բարոյախրատական խորհուրդ-պատգամներ են կարելի է առանձնացնել այն տողերը, որոնք թանձրային արժեք ունեն և պայմանավորում են հորինվածքի յուրահատկությունը. «Ո՞վ անցավոր..., Ո՞վ անգութ մահ... »,«Հիշի՛ր, անցո՛րդ /ես իմ տանն եմ, բայց դու հյուր ես աշխարհում/», «Անցորդ, կանգ առ, մի անցիր...», «Անցորդ, մոլս պես եփշիր... Խոնարհիր գլուխդ, անցորդ իմ բարի...»,«Կարեկից անցորդ, թե զիս հարցնես...» և այլն:

Հետպատերազմյան շրջանի գրառումներից շատերը սկսվում են «Երկրաշարժը սաւնս քանդեց», «Ախ, երկրաշարժ, ինչ արեցիր», «Երկրաշարժը կյանքս խլեց» և այլ տողերով:

Տապանագրերում ամեն ինչ պտտվում է հիշատակի շուրջը, որը զրահ է ժամանակի ու մոռացության դեմ: Պարզ, անպաճույճ, բառ ու բանով հորինված վիմագիր մակագրությունները հուզիչ են ժողովրդական մտածողության տարրերով.

«Գնա, արի, ընծի պես,
Ես էլ մարդ եմ քեզի պես,
Դու չես էղնի ընծի պես,
Բայց ես կեղնիմ քեզի պես»:

Կիրառված են նաև միջնադարյան բանաստեղծությանը բնորոշ ճարտասանական դիմումների յուրահատուկ ոճերը. «Ախ, դու դաժան բախտ...», «Ով դու կարեկից...», «ով դու գերեզման, ինչու չես բացվում» և այլն:

Երբեմն գրական որևէ հայտնի ստեղծագործություն (գերազանցապես Ավ. Իսահակյանի կամ Հ. Շիրազի բանաստեղծություններից) հարմարեցվում է աշխարհից հեռացողի կյանքին և կամ բռնացի յուրացվում է: Բերենք բնորոշ օրինակ.

«Ախ, ինչ իմանար մայրս այն օրին,
Եվ ինչ գիտենար իմ միակը մանուկ,
Որ դեռ օրորքում իմ սրտի թևին,
Ասված կապել էր մի սև թիլազուկ»:

«Սև թիլազուկ» պատկեր-մետաֆորը ծանրանում է ոչ միայն տողերի, այլև հերոսի ճակատագրի վրա: Կյանքն ու մահը, լույսն ու խավարը որպես հավերժի դրսևորումներ, վիմագրություններում ստանում են ամենատարբեր պատկեր-մետաֆորների կամ պատկեր-սիմվոլների արժեքավորում, ինչի շնորհիվ լեզվական ապաղձն ու հիմնագաղափարը համաձուլվում են տարբերակային բազմաթիվ մակագրություններում:

Նկատելի է, որ վիմագրությունները ու սիմվոլները անբաժանելի են տապանաքարային արվեստում և որոշակիորեն լրացնում են միմյանց: Հետաղետյան շրջանում տապանագրային արվեստը առանձնանում է նշանասիմվոլային ոճով. գերիշխում է ժամացույցի, կոտրած ծաղկի, խաչի և շրջանի սիմվոլիկան, որոնք շատ հաճախ լրացվում են գեղարվեստական մակագրություններով: Կոտրված ծաղիկը՝ որպես բեկված կյանքի սիմվոլ, ունի նաև ծիսական մաքրության խորհուրդ և առնչվում է մայր հողին: Այս սիմվոլիկան առավելապես հանդիպում է կյանքից անժամանակ հեռացած կանանց մահարձանների կամ տապանաքարերի վրա: «Իմ ճակատին այս էր գրված, որ թառամեմ դեռ չծաղկած»:

Տապանագրային արվեստում ժամացույցի գերակա սիմվոլը խորհրդանշում է աղետի ժամանակը, ժողովրդի հայեցողությամբ՝ աշխարհից հեռացողի հոգու կանգնելու պահը: Ըստ ժողովրդական պատկերացման՝ խաչի սիմվոլիկան կարող է արտահայտել խաչված գերեզմանին արժանի լինելու գաղափարը, խաչը բարեխոս է հանգուցյալի հոգու և Աստծո միջև: Ավանդական հորինվածքի տապանագրերից մի նմուշ.

«Կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց»:

Տապանագրերում հաճախադեպ հանդիպող շրջանի սիմվոլիկան տարողունակ իմաստ ունի. մի դեպքում այն կարող է լինել ննջեցյալի ապրած ժամանակի և տարածության սահմանագծում, մյուս դեպքում՝ արտահայտում է հավերժի գաղափար, ընթացք անվերջ ժամանակի մեջ:

Այսպիսով՝ գերեզմանաքարերի գեղարվեստական մակագրությունները, լրացնելով տապանաքարի սիմվոլիկան, համամարդկային խորհուրդ ունեն, կյանք-մահ հակադրությունը հաստատում է աշխարհի հավերժական ընթացքը, երևույթների առնչությունն ու փոխադարձ ներթափանցումը: Դրանք նաև գրական ինքնատիպ ժառանգություն են, որի արժեքը ժողովրդի պատմության, ազգային ինքնաճանաչման, գոյափիլիսոփայության լուսաբանման մեջ է:

О ХУДОЖЕСТВЕННЫХ НАДПИСЯХ НАДГРОБНЫХ КАМНЕЙ

Резюме ***Р. Оганнесян, К. Саакян***

Армянские наскальные поэтические произведения и надгробные надписи - это каменнные свидетельства художественного мышления и мировозрения народа. В статье исследуются особенные черты композиции надгробных камней их идейная направленность и тематическое многообразие.

Современные записи большей частью сохранили характерные черты традиционных композиций. Эпитафии сочинены двумя способами: в одной части лирический герой- это личность прощающаяся с жизнью, в другой – новоявленный сочинитель. Это размышления о жизни и смерти, а иногда они имеют акцентировку на нравоучительную проповедь, социальный протест.

Эпитафия- литературное самобытное наследие ее ценность состоит в освещении различных сторон истории армянского народа и философии выживания.

Հասմիկ ԱՓԻՆՅԱՆ

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ԵՐԳԻ ԺԱՆՐԸ ՇԻՐԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԱՐՎԵՍՏՈՒՄ

Օրորը հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործության հնագույն և կենսունակ երգատեսակներից է՝ բազմազան ու հարուստ թե՛ բանաստեղծական և թե՛ երաժշտական բովանդակությամբ: Հայաստանի ազգագրական տարբեր շրջաններում ձայնագրված նանիկ, լուրիկ, հայրուր, դարդոր, օրոր, այեր, լայլայ, նեննի և այլնայլ անվանումներով հանդիպող երգերը այդ ժանրի տարածվածության և կենսունակության վկայություններն են:

Հայ բանագետները, երաժշտագետ-ֆոլկլորագետներն իրենց աշխատություններում տարբեր առիթներով հաճախ են անդրադարձել օրորոցայիններին, հատկանշել բանաստեղծական մտքի հարությունն ու երաժշտական ձևակառուցողական ինքնատիպությունը, բնութագրել դրանք որպես ներազդող և առինքնող ստեղծագործություններ, կարևորել այդ երգերի համակողմանի ուսումնասիրման անհրաժեշտությունը:

Հոդվածում օրորոցային ժանրին հատուկ ոճական որոշ առանձնահատկություններ և տարատեսակ դրսևորումներ դիտարկվում են միևնույն երգի այլ տարբերակների համեմատության հիմքով:

Հետազոտության համար ընտրվել է Շիրակի մարզի քաղաքներում և գյուղերում գրառված նյութը: Շիրակի «նանիկներ»-ի մեր հավաքածուում ընդգրկված են տարբեր երաժշտագետ-բանահավաքների ինչպես հրատարակված, այնպես էլ ձեռագիր արխիվային գրառումներ*: Վերլուծվել է օրորոցային երգի շուրջ 50 նմուշ: Հավաքած նյութը դիտարկվում է որպես Շիրակի ժողովրդական երգարվեստի բաղկացուցիչ հատված՝ երաժշտաբանաստեղծական մտածողության հարուստ ու բազմաբնույթ դրսևորմամբ:

Կոմիտասն օրորներն արժեքավորում էր որպես կտնանց հեղինակություն՝ նրանց հետ կապելով ազգային ժողովրդական երաժշտության պահպանման և փոխանցման խնդիրը: Ստկայն աղամարդկանց կատարումներից ձայնագրված նանիկները նույնպես հետաքրքիր օրինակներ են և դիտարկման համար արժեքավոր նյութ: Մի դեպքում դա հիշողությամբ արձանագրված հնավանդ երգի վերարտադրություն է, մեկ այլ պարագայում՝ սեփական երաժշտամտածողության մեջ օրորի ժանրում հորինվածքային ձև: Օրորը հայ ժողովրդական երգարվեստի՝ ազգային առումով ամենաբնութագրական և ամբողջականության տեսակետից ամենաբարդ ստեղծագործություններից է:

Այստեղ առավել քան որևէ այլ երգատեսակում ակնառու են ժանրի ներսում տեղի ունեցող փոփոխություններ, ստորինանական զարգացման գծեր, ժանրային ներթափանցումներ:

Տարբեր երգատեսակների սերտ առնչություններն ու աղերսները օրորոցային երգերում առաջին հերթին կապվում են թեմատիկ բովանդակության սահմանների ընդլայնման հետ: Պրոֆ. Մ.Բրուտյանը այս երգերում այլ թեմաների արծարծումը բացատրում է երկու կերպ.«Երեխային օրորելիս անային բազմազան ձայներից ազատ կինը ընկնում է հիշողությունների գիրկն ու երգով արտահայտում իրեն հուզող զգացմունքները, կամ՝ երգի միջոցով նա կրած տառապանքների ու անցքերի,կորցրած հարազատների համար ատելության և վրեժխնդրության երդեր է բորբոքում, փոխանցում սերունդներին ողբերգական անցյալը, արթնացնում փոքրիկի սրտում հերոսական ոգի, ազգային արժանապատվության զգացում: Չէ՞ որ օրորները մանկական երաժշտական առաջին ապավորություններն են.»[1]: Թեմատիկ բովանդակության սահմանների ընդլայնումն, անշուշտ, հանգեցնում է

---

* *Դիտարկվող երգերի ամբողջական ցանկը տե՛ս հավելվածում:*

[1] *Մ. Բ ր ու տ յ ա ն, Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն,Եր.,1983,էջ 341:*

երաժշտամտածողության ոլորտում ձայնակարգի, կշռույթաեևլևէջային դարձվածքների. մեղեդիակառուցման սկզբունքների փոփոխության: Սրանցում ավանդական բանաստեղծական տեքստը նույնությամբ կամ հապավված, երբեմն նաև խառնկցված այլ մոտիվների հետ, հանդես է գալիս տարբեր տիպի երգերում և մեղեդային սեկվենաբանությունից անկախ, շատ դեպքերում ապահովում ավյալ երգի ժանրային պատկանելությունը: Պատահում է նաև, որ օրորին բնորոշ կրկնակը հավելվելով երգի տողերին, ստեղծում է օրորի կեղծ ապավորություն: Այստեղ կրկնակը միմիայն հանգավորող նշանակություն ունի: Նման երգերը չեն համապատասխանում ժանրի օրինաչափություններին և դուրս են մեր հետաքրքրության սահմաններից:

Ձայնագրման տեղից և գրառման ժամանակից անկախ՝ հավաքածուն կազմող բոլոր օրորները ծավալվում են հայ ժողովրդական երաժշտության ձայնակարգերում, տերցիային և կվարտային հիմքով էոլական մինորների գերակշռությամբ[2]:

Օրորները տիպաբանական կառուցվածքով բաժանվում են երկու մեծ խմբի՝ մի քանի ենթատիպերով: Յուրաքանչյուր ենթատիպի մեջ խմբավորված երգերը բնորոշվում են երաժշտաբանաստեղծական մտածողության և ոճական հատկանիշների ընդհանրությամբ՝ գեղջկական, քաղաքային, աշուղական, երբեմն նաև տարբեր ոճերի համադրմամբ: Խմբավորման հարցում առաջնորդվել ենք երաժշտագետ Մ.Աղայանի առաջադրած տարբերակմամբ՝ տարբերակելով Ա խմբում «օրոր կամ նանիկ» և Բ խմբում՝ «օրորոցի երգ» հասկացությունները:[3]

Ա խմբում միավորված երգերը կոչվում են նաև պախրատուր օրորներ, նիմնականում զուտ կենցաղային գործառությամբ՝ երեխային թմրեցնելու, հանգստացնելու և քնեցնելու անհրաժեշտությամբ պայմանավորված հորինվածքներ են: Ստեղծվում են բացառապես տանը՝ ներփակ միջավայրում, հանպատրաստից, խիստ անհատական են, չունեն «ունկնդիրների լայն շրջանակ», ինչն էլ բացատրում է յուրաքանչյուր օրորի՝ սակավաթիվ տարբերակներ ունենալու պատճառը: Բովանդակության հիմնական մոտիվը մանկան գովքն է՝ բանաստեղծական բնագրին հատուկ պարզությամբ և անմիջականությամբ.

Նանիկ,նանի, շիմշաթ երես,
Նանիկ արու,վարդիս թերն ես ..

(ԿԱԹ-ի ֆոնդ,1984 թ.,1/10)

Այս երգերին մի առանձին հմայք են տալիս գեղեցիկ համեմատությունները, չափազանցությունները.

Աղա բալեն իմ փաշեն է,
Էս տան տանը թո աղեն է...

(ԿԱԹ-ի ֆոնդ,նույն տեղում)

կամ՝

Լուսնակը քէ խաղցնի,
Արևը քէ տաքցնի,
Վերինը գայ քեզ սրտ առ...

(Սպ.Մելիքյան.Շիրակի նանիկ,թ.120)

Սակավ չեն այն նմուշները, որտեղ սյուժետային տարրը գրեթե բացակայում է, և մաքի բանաստեղծական ասելիքը փոխարինվում է երաժշտական, արտահայտչությամբ: Նման երգերի մեղեդիածավալման համար, ինչպես կարելի է տեսնել ներքևում բերված օրինակից, հիմք է դառնում օրորի առ-կրկնակի բառալազմի կրկնությունը՝ լուրի-լուրի, նանի-նանի, օրոր-օրոր , այեր-այեր և այլն.

Այեր էնիմ...
Այեր էնիմ, բալա ջան,
Նանիկ էնիմ, բալա ջան,
Օր, օրորիմ բալա ջան.

---

[2] *Դիտարկված 50 օրինակներից 23-ը՝ ծավալվում են տերցիայային հիմքով, 8-ը՝ կվարտային, 4-ը՝ կվինտային, 4-ը՝ փոյուգիական մինորներում, 1-ը դիխորդային, 6-ը՝ իոնական տերցիային հիմքով մաժորում, 4-ը՝ հարմոնիկ ձայնակարգերի ոլորտներում:*

[3] *Մ. Ա ղ ա յ ա ն ,Մի ակնարկ ժողովրդական օրորների մասին, Եր., 1948:*

Դարդ եմ էրի ղոզյուն-ղոզյուն,
Բալա ջան, օրոր, օրոր,
Սիրտս ի էղիր զունդ-զունդ արուն,
Դարդար էրա, բալա ջան. օֆ...

АЗЕР

ԱՅԵՐ

(ԿԱԹ-ի ֆոնդ, 1985թ., ժԵՅ. 45)



Ա խմբում միավորված երգերն ուշագրավ են երաժշտական կատարյալ կոմպոզիցիոն առանձնահատկություններով: Հատկանշական տարրը՝ իմպրովիզացիան է, որը և պայմանավորում է երաժշտական բառապաշարի հարստությունը և բազմատեսակությունը: Երգերը թե՛ փոքր և թե՛ մեծ ծավալի են: Գրեթե բոլորին հատուկ է հիմնատող-կրկնակ, կամ երգ-տուն-կրկներգ երկմասանի կառուցվածքը: Դիտարկվող օրորները առանձնանում են երաժշտական կառուցվածքի ամբողջականությամբ և հնէջային հարստությամբ:

Ձայնակարգի տրամաբանական զարգացման փառ արտահայտություն են օրորներում հաճախ հանդիպող շեղումներն ու մոդուլյացիաները: Այս առիթով ուշադրության է արժանի ստորև ներկայացվող երկու երգերի համեմատությունը:

Դրանցից առաջինը քաղված է Սպ.Մելիքյանի և Ան.Տեր-Ղևոնդյանի «Շիրակի երգեր» ժողովածուից, որը երաժշտագետ Մ.Աղայանի բնորոշմամբ՝ «երաժշտական բնույթով և տեքստի բառրստային կառմությամբ շատ մոտ, բայն Շիրակի շրջանի հայկական հնագույն երգերից մեկն է»[4]: Երգը գրառված է Ղափրլի գյուղում (այժմ՝ Գուսանագյուղ):

Երկրորդ երգը նախորդից 60 տարի հետո ձայնագրել է պրոֆ. Մ.Բրուտյանը 1976թ. Արթիկի շրջանի Հոռոմ գյուղում[5]: Երկուսում էլ բանաստեղծական տեքստի հիմքը միևնույն բանահյուսական մոտիվն է սարատեսակ մեկնաբանությամբ: Սպ. Մելիքյանի գրառած «Շիրակի նանայի»-ի բանաստեղծական կառուցվածքն ավելի խտակ է : Երգն ունի երեք տուն, տունը՝ չորս տող, ընդ որում յուրաքանչյուր տան առաջին տողը կրկնակի դեր է կատարում: Առաջին և երկրորդ տներում ստացվում է հետևյալը. 1 (տող կրկնակ)+3(տան տող), իսկ երրորդ տան մեջ տող-կրկնակը եա է տարված չորրորդ տող, այսինքն կատարվում է տան 3 տողերից հետո: Սա ամենևին չի խախտում երգի ո՛չ բանաստեղծական և ո՛չ էլ մեղեդային կառուցվածքը: Ձևակառուցողական կարևոր գործոն է վանկաչափական հատկանիշը: Երգում յուրաքանչյուր տան տող կազմված է 7 վանկից (2+3+2): Մ. Բրուտյանի գրառած տարբերակում թե՛ բանաստեղծական և թե՛ մեղեդային կողմերն իմպրովիզացիոն տարրերի առկայության հետևանքով ավելի ազատ մեկնաբանություն են ստացել: Բանաստեղծական տեքստը ունի 2 տուն, տունը՝ 5 տող: Հենց տողանոց տներում չի պահպանված հավասար վանկերի քանակը (I տող՝ 4 վանկ, II-ը՝ 9վանկ, III-ը՝ 10, իսկ IV և V տողերը՝ ութական վանկեր): Խախտված է նաև կրկնակի պարբերական

[4] *Մ. Ա ղ ա յ ա ն, նշվ. աշխ., էջ 8:*

[5] *Տե՛ս Եր. Կոնսերվատորիայի ՀԺԵՄԿ –ի ֆոնդ, Արթիկի գիտարշավ, 1976, թ. 124:*

սաղակրկնությունը: Ներկայացնում ենք երգի բանաստեղծական բնագրերը երկու բանահավաքների՝ Սպ. Մելիքյանի և Մ. Բրուտյանի գրառմամբ.

Սպ. Մելիքյանի գրառումը

Նանիկ, գառնուկ ջան. նանիկ,
Գոզնոց բոկերս օրորոց,
Ծառի թփերը ծածկոց,
Մանդր բիերը ժիպբոց:

Լուրիկ, գառնուկ ջան. լուրիկ,
Լուսնակը քե խաղցնի,
Արևը քե տաքցնի,
Վերինը գա քե ծիծ տա:

Ծառի տակը քուն դնեմ,
Մառը փրեդ եով էնե,
Ծառի ճղքեն կապ դնեմ,
Նանիկ, գառնուկ ջան, նանիկ:

Մ. Բրուտյանի գրառումը.

Նանիկ, նանիկ.
Իմ անուշ բալիկ, նանիկ արա,
Անուշ քուն դնեմ, իմ անուշ բալա,
Գոզնոց բոկս քեզ ճոճ առի,
Ծառի բուփը քեզ շոր արի:

Նանիկ, իմ բալիկ,
Հարավ քամին գա, կօրոռե,
Ծառի բուփը քեզ կծածկե.
Վիրունին գուբա քեզ ծիծ կուտա,
Նանիկ,իմ բալիկ:

Տարբերությունները առկա են նաև մեղեդային շարադրանքում: Առաջինն ավելի կառացիկ է, մեղեդային զարգացման խսսակ արամաբանությամբ:, Բանաստեղծական կանոնափիր տաղաչափությունը կարևոր դեր է կատարում երաժշտական ձևակառուցման խնդրում: Կշռայթաելևէջային համամասնությունն այստեղ փոքր ինչ խախտված է.

$$a + a_1 + b$$
3ա + 3տ+ 4տ

ՆԱՆԻԿ

Սպ.. Մելիքյան. Ան.Տ-Ղևոնդյան. Շիրակի Երգեր, էջ58



Երկու երգերում ընդհանուր է ձայնակարգի զարգացման տրամաբանությունը: Երկրորդ երգն ավելի ծավալուն է: Իմպրովիզացիոն տարրի գերակշռության պատճառով որոշ հատվածներ ընդլայնված են, հարստացված զարդելևէջային տարրերով, ինչի հետևանքով տեղի է ունեցել նաև կառուցվածքի խախտում: Փոփոխված են նաև մետրը և չափը. I երգում չափը 5/8 է, իսկ II երգում՝ 5/4:

$$a + b + c$$
7տ + 6ա + 8տ

Երկու երգերն էլ նախնական փուլում ծավալվում են տերցիային հիմքով էոլական մինորում, գրեթե նմանատիպ ինտոնացիոն դարձվածքներով: Մոդուլյացիոն անցումը կատարվում է սահուն, աստիճանական վարընթաց շարժմամբ: Զուգորդված են տերցիային հիմքով էոլական և կվարտային օժանդակ հենակետով փռյուգիական մինորները: Ակնհայտ երկրորդ երգն առաջինի տարբերակն է: Երգի այս տարբերակը, հավանաբար, կարող էր ի հայտ գալ բանավոր փոխանցման ճանապարհով և կամ ստեղծվել ժողովրդական երաժշտական բառապաշարում առկա ինտոնացիոն տարրերի, տիպական դարձվածքների տեղային առանձնահատկությունների հիմքի վրա:Սրանց առկայությամբ, անգամ, այս խմբի օրորները թվով շատ են, իսկ յուրաքանչյուր օրորի տարբերակների թիվը՝ համեմատաբար քիչ:

ՆԱՆԻԿ

Եր. Կ,ՀԺՍՍԿ-ի ֆոնդ
Արխիվ 76, թ. 124



Բ խմբի օրորոցային երգերում գլխավոր կիրառական գործառույթը թեև արտաքուստ մնում է, սակայն կորցնում է իր առաջնային նշանակությունը: Գրեթե բոլոր երգերում պահվում է օրորին եառուկ կրկներգը կամ կրկնակը՝ եզանակավոլաղ, նրանգավորող նշանակությամբ:

Սրանք սերտորեն աղերսվում են եայ ժողովրդական երաժշտական ստեղծագործության այլ ժանրերին՝ պարերգերին, լացերին, պատմական, եայրենասիրական, աշուղական երգերին: Միևնույն եղգի մեծ թվով տարբերակներ եանդիպում են եաճախ 2-րդ տիպի օրորոցայիններում: Դիտարկենք մի քանի օրինակ. «Շիրակի երգեր» ժողովածուի «Նանիկ բալաս» երգում (թիվ 92) վերջին չորս տակտը, որ օրորոցային երգի կրկնակն է, պտրզապես եավելվել է պարերգին: Փաստորեն սա թ.91 երգի փոփոխակն է[6]:

Ա.Բրուտյանի գրառած «Առավոտուն թունդիր մուխ»[7] երգի մեկ այլ տարբերակի եանդիպում ենք «Շիրակի երգեր» ժողովածուում, (թիվ 98): Այս նույն երգը ձայնագրել է նաև Կոմիտասը (Ազգագրական ժողովածու,հ.1,թ. 112 «Լորիկ»): Այն Կոմիտասի և Ա.Բրուտյանի ձայնագրությունների եեա եատվածաբար գետեղված է Կարապետ Սաեակյանց-Գրիգորյանցի «Վանցու երգը» խարագրով ժողովածում (էջ 141): Նույն այս երգը ինառնացխոն կապեր, նաև ներքին նմանություններ ունի «Շիրակի երգեր» ժողովածուի «Նանա բալիկ» (թիվ 37) երգի եեա: Ի դեպ, սրա մեկ այլ տարբերակ մենք գրի ենք առել 1982թ. Մարաւնիում, կոմպոզիտոր Խ. Սարաիրոսյանի ղեկավարությամբ[8]: Համեմատենք վերջին երկու տարբերակը.

---

[6] *Սպ. Մ ե լ ի ք յ ա ն, Ան. Տ ե ր –Ղ և ո ն դ յ ա ն, Շիրակի երգեր, Թիֆլիս, 1917, էջ 40:*
[7] *Ա. Բ ր ո ւ տ յ ա ն, Ռամկական մրմունջներ, Եր.,1981, էջ 36:*
[8] *Տես, Եր. Կ,ՀԺԵՄԿ-ի ֆոնդ, Մարաւնու գիտարշավ, 1982, թ. 47:*

ՆԱՆԱ ԲԱԼԻԿ

Մ.Պ.Մելիքյան,Ա.Ն.,Տեր-Ղևոնդյան, Շիրակի երգեր բ. 37



ՆԱՆԻԿ

ԵրԿ. ՀԺԵՍԿ-ի ֆոնդ, Մարտունի 1982. բ 47



Սպ. Մելիքյանի գրառման համեմատությամբ բանաստեղծական տեքստը քիչ փոփոխված է: Երկու երգերում էլ նկատելի են կշռույթաևլևէջային դարձվածքների ընդհանրություններ, որոնց շնորհիվ սրանք ընկալվում են որպես նույն երգի զանազան տարբերակներ:

Կան նաև զգալի տարբերություններ. այսպես՝ «Նանա բալիկս» երգը ծավալվում է կվարտային օժանդակ հենակետով էոլական մինորում, իսկ Մարտունիի տարբերակը տերցիային օժանդակ հենակետով փռյուգիական մինորում: Ինտոնացիոն կազմի տարբերակված փոփոխությունը, լադային հենքերի տարբերությունը, սակայն, չեն ազդում երգերի ընդհանուր կառուցվածքի, տրամադրության արտահայտության վրա:

Մեղեդային շարահյուսվածքով հետաքրքրական նմուշ է մեր գրառած «Սուրիկի օրորը: Տեղին է վերհիշել այս երգի առիթով պրոֆ. Մ.Բրուտյանի բնութագրական մի արտահայտությունը. «Երգ-օրորների մեղեդիները գեղեցիկ են շնորհիվ նրանց զարդարուն ռիթմի, ոլորուն ինտոնացիոն պատկերների, օգտագործված երաժշտական զարդարանքների: Այդ ամենի զուգորդումը ստեղծում է «հնչյունային ասեղնագործության» պատրանք, հարուստ ու պատկերավոր լեզու»[9]: Սպ.Մելիքյանի գրառած նանիկը[10] մեր ձայնագրության հետ ընդհանրություններ ունի միայն բանաստեղծական բնագրի մեջ: Տաղաչափական որոշ գծեր էլ հիշեցնում են կապը աշուղական երգերի հետ[11]: Սրանք բանաստեղծական նույն տեքստի միանգամայն տարբեր մեղեդիական մեկնաբանություններ են և ժողովրդական գեղարվեստական ճկուն մտածողության ապացույցներ:

«Բաղա նանիկ» երգը աշուղական ոգով ինքնատիպ հորինվածք է[12] և ասերգային-արտասանական տարրերով, ևլևէջային դարձվածքների նմանությամբ շատ մոտ է աշուղ Շահենի «Էլինար» պոեմի օրորոցային երգին: Նմանատիպ հորինվածքով երգերը Շիրակում մեծ տարածում ունեն, պատկառելի թիվ են կազմում և այս տարածաշրջանին բնորոշ աշուղական մտածողության ախյական արտահայտությունն են:

Գյումրիում ձայնագրված երգերի մյուս խմբի համար հատուկ է քաղաքային երգերին բնորոշ դարձվածքների գործածումը: Ձևի տեսակետից սրանց բնորոշ է կառուցվածքային ամբողջականություն, երբեմն, օկտավային կառուցվածք ունեցող լադերի ընդգրկում: Այս երգերից շատերը կոմպոզիտորական ստեղծագործությունների ազդեցությամբ հորինվածքներ են: Մեր գրառած «Դե, քնիր, անուշ բալիկս» երգում պարզորոշ նկատելի են կոմպոզիտոր Երվանդ Սահառունու «Օրորոցային»-ի ևլևէջները: Ժողովրդականացված երգի տիպական օրինակ է «Կույր կռունկներ» օրորոցայինը, որն Ավետիք Ահարոնյանի խոսքերով գրված Դանիել Ղազարյանի «Նազեի օրոր» երգի փոփոխակն է: Սա Ս..Տիգրանյանի «Սև աչերեն», ժողովրդական «Սիրեցի յարս տարան», «Լուսնակ գիշեր» և մի խումբ այլ երգեր Ալեքսանդրապոլի երաժշտության ինտոնացիոն բառարանի տիպական նմուշներ են և հետագա առանձին ուսումնասիրության անհրաժեշտություն ունեն:

Հետաքրքիր փոփոխակներով է երգվում քաղաքային ժողովրդական երգարվեստին բնորոշ ստեղծագործություններից մեկը՝ «Արի իմ սոխակ» օրորոցայինը, որի տարբերակները ձայնագրվել են նաև Գյումրիում մեր կողմից: Ի դեպ, մեր գրառած տարբերակներն իրենց մեղեդիակազմությամբ ավելի մոտ են բնագրին՝ Բեթհովենի «Շոտլանդական երգեր» շարքից «Բոլորից քնքուշը Ջեննին էր» երգին:

Երբեմն քաղաքային միջավայրում առանձին երգեր և մեղեդիներ՝ որոշակի արարողությունների ժամանակ պարտադիր կարգով հնչելու սովորույթով պայմանավորված աստիճանաբար ձեռք են բերում ծիսականության հատկանիշներ: Նկատի ունենք օրորի ժանրով հորինված լացերգերը: Այսպես, վերոնշյալ «Կույր կռունկներ» և «Բալա նանիկ» երգերը հուղարկավորության ծեսերին հայտնի են նաև գործիքային տարբերակով հնչող կատարումներով:

---

[9] *Մ. Բ ր ու տ յ ա ն, նշվ. աշխ.,էջ 245:*
[10] *Սպ. Մ ե լ ի ք յ ա ն, Հայ ժողովրդական երգեր և պարեր, Եր., 1952, 2,էջ 40:*
[11] *Տե՛ս ԿԱԹ ԺԵՖ, Մեղրաշեն, 1996,2/26:*
[12] *Տե՛ս ՇՀՀԿ ժողովրդական երաժշտության ֆոնդ, Գյումրի, 1997, 5/21:*

Շիրակում ձայնագրված օրորները երաժշտական լեզվի առանձնահատկություններով ու ոճական հատկանիշներով խիստ բազմազան և թեմատիկ առումով բազմաբնույթ ստեղծագործություններ են: Ժանրային տարբերակումը և բարդ համադրությունները ժողովրդական գեղարվեստական մտածողության արգասիք են: Չնայած վերը դիտարկված երգերը ձայնագրված են նույն տարածաշրջանում, և առանձին ենթախմբերում միավորված երգերին հատուկ են ընդհանուր հատկանիշներ, այնուամենայնիվ դրանք աչքի են ընկնում երաժշտական, բառբառային և ոճական խայտաբղետությամբ:

ЖАНР КОЛЫБЕЛЬНОЙ ПЕСНИ В НАРОДНОМ ПЕСНЕТВОРЧЕСТВЕ ШИРАКСКОГО РЕГИОНА

Резюме

А. Апинян

В армянском народном музыкальном твочестве по глубине мысли, непосредственности высказывания и мелодической выразительности особое место занимают колыбельные песни. Древнейшие эти песни в разных регионах имеют разные названия: орор, наник, лурик, hайрур, ненни и т.п. Колыбельные песни, записанные в ширакском регионе отличаются многообразием тематики, чем и обусловлено богатое разнообразие музыкальных текстов. На основе сравнительного анализа различных вариантов записанных колыбельных рассматриваются некоторые особенности и характерные черты музыкального языка колыбельных, взаимосвязь принципов мелодического развития и формообразования.

ՀԱՎԵԼՎԱԾ I

	Երգի վերնագիրը	Գրառողը	Նոտագրողը	Գրառման ժամանակը և վայրը	Երգ ասողը	Ձայնագրության պահպանման տեղը	Տեղեկություններ երգերի հրատ. վերաբերյալ
1.	Առավոտուն բունդիր մոտս	Ա.Բրուտյան	Հայկ. ձայնանիշերից եվր. վերածեց Մ.Բրուտյանը				«Ռ.Ը.», էջ 36
2.	Նանիկ բալա	Սպ. Մելիքյան		1914թ., Բաշգյուղ	Զարո և Վարդույկ		«Շ Ե.» էջ 40, թիվ 92
3.	Նանա, բալիկս	Սպ. Մելիքյան		1914թ., Բաշ-Շորագյալ	Շահեն Շիրակունի		«Շ.Ե.» էջ 44, թիվ 97
4.	Բլխերու լոռիկ	Սպ. Մելիքյան		1914թ., Մահմուդջուղ	Սելբոնյան Խանում		«Շ Ե.» էջ 45, թիվ 98
5.	Նանիկ	Սպ. Մելիքյան		1914թ., Ղափըլի	Ներսիսյան Արաքսի		«Շ Ե.» էջ 58, թիվ120
6.	Քնիր, իմ բալիկ	Հ.Էլոյան	Խ.Մսրլյան	1957թ., Լենինական	Խուրդայան Աննա	Եր. Կ., ՀԺԵՄԿ-ի ֆոնդ, թիվ 7	
7.	Նանիկ, արի	Ս.Մանուկյան	Ա.Փահլևանյան	1970թ., Հովիտ	Վարդանյան Վերգուշ	Եր. Կ., ՀԺԵՄԿ-ի ֆոնդ, Ախուրյան 70, թիվ 49	
8.	Աստվածածնի օրորը	Մ.Մանուկյան	Ջ.Ասատրյան	1974թ., Հոռոմ	Գրիգորյան Բուրաստան	Եր. Կ., ՀԺԵՄԿ-ի ֆոնդ, Արթիկ 74, թիվ 12	
9.	Նանիկ	Մ.Մանուկյան	Ա.Փահլևանյան	1975թ., Ղուկասյան	Սուրադյան Ռիմա	Եր. Կ., ՀԺԵՄԿ-ի ֆոնդ, Ղուկասյան 75, թիվ 58	
10.	Նանա	Ս.Բրուտյան	Ա.Փահլևանյան	1976թ., Հառիճ	Հովհաննիսյան Մանիկ	Եր. Կ., ՀԺԵՄԿ-ի ֆոնդ, Արթիկ 76, թիվ 110	
11.	Լուրիկ	Ս.Բրուտյան	Ա.Փահլևանյան	1976թ., Լեռնալերտ	Դավթյան Հայաստան	Եր. Կ., ՀԺԵՄԿ-ի ֆոնդ, Արթիկ 76, թիվ 124	
12.	Նանիկ	Ս.Բրուտյան	Ա.Փահլևանյան	1976թ., Լեռնակերտ	Ասատրյան Վիկտոր	Եր. Կ., ՀԺԵՄԿ-ի ֆոնդ, Արթիկ 76, թիվ 156	
13.	Օրոր	Ս.Բրուտյան	Ա.Փահլևանյան	1976թ., Հառիճ	Սանոյան Հայկանուշ	Եր. Կ., ՀԺԵՄԿ-ի ֆոնդ, Արթիկ 76, թիվ 336	
14.	Քարավանն անցավ	Ս.Բրուտյան	Ա.Փահլևանյան	1976թ., Արթիկ	Դարբինյան Նարիկո	Եր. Կ., ՀԺԵՄԿ-ի ֆոնդ, Արթիկ 76, թիվ 372	
15.	Նանիկ	Մ.Բրուտյան	Ա.Փահլևանյան	1976թ., Լեռնակերտ	Ավդալյան Ժենյա	Եր. Կ., ՀԺԵՄԿ-ի ֆոնդ, Արթիկ 76, թիվ 421	
16.	Օրոր	Ս.Բրուտյան	Ա.Փահլևանյան	1976թ., Հայրաքար	Հովհաննիսյան Աստղիկ	Եր. Կ., ՀԺԵՄԿ-ի ֆոնդ, Արթիկ 76	ՀՊԺԵ էջ 98
17.	Նանիկ	Հ.Ափինյան	Հ.Ափինյան	1930թ., Լենինական	Սանուկյան Ազնիվ	ԿԱԹ-ի եփ., Լենինական, թիվ 1	

18	Օրոր	Խ. Մարտիրոսյան	Հ. Ափինյան	1981թ., Բագրավան	Մանուկյան Պայծառ	Եր. Կ., ՀԺԵՄԿ-ի փոնդ. Մարալիկ 81, թիվ 118
19.	Լույ-լայ	Խ. Մարտիրոսյան	Հ. Ափինյան	1982թ., Ախուրյան	Մելիքյան Ազնիվ	Եր. Կ., ՀԺԵՄԿ-ի փոնդ. Ախուրյան 82, թիվ 172
20.	Հայրուն	Խ. Մարտիրոսյան	Հ. Ափինյան	1982թ., Ախուրյան	Գասպարյան Գյուլի	Եր. Կ., ՀԺԵՄԿ-ի փոնդ. Ախուրյան 82, թիվ 15
21.	Երբ իմ ախպար	Հ. Ափինյան	Հ. Ափինյան	1983թ. Լենինական	Մկրտչյան Սերոժ	ԿԱԹ-ի Եֆ, 1983թ. 2/28
22.	Օրորոցի երգ	Հ. Ափինյան	Հ. Ափինյան	1983թ. Լենինական	Շաքոյան Աղասի	ԿԱԹ-ի Եֆ, 1983թ., 2/8
23.	Նանիկ	Հ. Ափինյան	Հ. Ափինյան	1983թ. Լենինական	Մշեցյան Եվգինե	ԿԱԹ-ի Եֆ, 1983թ. 4/20
24	Օրոր	Հ. Ափինյան	Հ. Ափինյան	1983թ. Լենինական	Իգիթյան Սողոմոն	ԿԱԹ-ի Եֆ 1983թ. 3/18
25.	Նանիկ	Հ. Ափինյան	Հ. Ափինյան	1984թ. Լենինական	Նիկողոսյան Սաթենիկ	ԿԱԹ-ի Եֆ, 1984թ. 2/10
26.	Ուր ուր	Հ. Ափինյան	Հ. Ափինյան	1984թ. Լենինական	Հարությունյան Մարուսիկ	ԿԱԹ-ի Եֆ, 1984թ., 2/45
27.	Օրոր	Հ. Ափինյան	Հ. Ափինյան	1984թ. Լենինական	Բոլաջյան Հայկուշ	ԿԱԹ-ի Եֆ, 1984թ., 2/13
28	Կույր կռունկները	Հ. Ափինյան	Հ. Ափինյան	1984թ. Լենինական	Սարգսյան Սոֆյա	ԿԱԹ-ի Եֆ, 1984թ., 1/20
29.	Ալեր	Հ. Ափինյան	Հ. Ափինյան	1984թ. Լենինական	Մշեցյան Եվգինե	ԿԱԹ-ի Եֆ, 1984թ., 4/21
30.	Նանիկ	Հ. Ափինյան	Հ. Ափինյան	1985թ. Լենինական	Խաչատրյան Սիրանուշ	ԿԱԹ-ի Եֆ, 1985թ. 2/45
31.	Ալեր	Հ. Ափինյան	Հ. Ափինյան	1985թ. Լենինական	Ավետիսյան Վարսենիկ	ԿԱԹ-ի Եֆ, 1985թ., 4/5
32	Նանիկ	Հ. Ափինյան	Հ. Ափինյան	1985թ., Լենինական	Ղալաչյան Աստղիկ	ԿԱԹ-ի Եֆ 1985թ. 2/16
33.	Նանիկ	Հ. Ափինյան	Հ. Ափինյան	1986թ. Լենինական	Թովմասյան Օֆելյա	ԿԱԹ-ի Եֆ, 1986թ. 3/16
34.	Նանիկ	Խ. Մարտիրոսյան	Խ. Մարտիրոսյան	1986թ., Բանդիվան	Բաղալյան Լուսիկ	Եր. Կ., ՀԺԵՄԿ-ի փոնդ. Ամասիա 86 թիվ 6
35.	Ալիկի օրորը	Հ. Ափինյան	Հ. Ափինյան	1989թ., Լենինական		ԿԱԹ-ի Եֆ, 1989թ., 1/3
36	Քնիր մանկիկ	Հ. Ափինյան	Հ. Ափինյան	1991թ., Գյումրի	Կարապետյան Վարդ	ԿԱԹ-ի Եֆ, 1991թ., 2/4
37.	Նանա բալա	Հ. Ափինյան	Հ. Ափինյան	1996թ., Գյումրի	Ղազարյան Արամ	ԿԱԹ-ի Եֆ, 1996թ., 1/10
38	Օրորոցային	Ն. Եղոյան	Ն. Եղոյան	1997թ., Գյումրի	Հարությունյան Անժիկ	ՇՀՀԿ-ի Ե. փոնդ. 1997թ., 1/8
39	Սուրիկի օրորը	Հ. Ափինյան	Հ. Ափինյան	1997թ., Մեղրաշեն	Պետրոսյան Դուշիկ	ՇՀՀԿ-ի Ե. փոնդ. 1997թ., 5/21
40	Նանա, բալիկս	Հ. Ափինյան	Հ. Ափինյան	1997թ., Գյումրի	Մինասյան Պետրոս	ՇՀՀԿ-ի Ե. փոնդ. 1997թ., 1/4
41.	Նանիկ	Հ. Ափինյան	Հ. Ափինյան	1997թ., Գյումրի	Պետրոսյան Աստղիկ	ՇՀՀԿ-ի Ե. փոնդ. 1997թ., 2/10

42.	Արի իմ սոխակ	Հ. Ափինյան	Հ. Ափինյան	1998թ., Գյումրի	Հակոբյան Վազգեն	ՇՀՀԿ-ի Ե.ֆոնդ, 1997թ., 1/7	
43.	Նանիկ	Հ. Ափինյան	Հ. Ափինյան	1998թ., Գյումրի	Քյուսպեքյան Զվարթ	ՇՀՀԿ-ի Ե.ֆոնդ, 1998թ., 3/10	
44.	Նանիկ ենեմ	Ա. Բաղդասարյան	Հ. Ափինյան	1998թ., Հառիճ	Սողոյան Կատարինե	ԳԱԱ ԱԻ ԺԵՍՈՒԲ, Ապրիլ 98, թիվ 14	
45.	Նանա	Ա. Բաղդասարյան	Հ. Ափինյան	1998թ., Հառիճ	Հարությունյան Հայկուշ	ԳԱԱ ԱԻ ԺԵՍՈՒԲ, Ապրիլ 98, թիվ 15	
46.	Օրոր	Հ. Ափինյան	Հ. Ափինյան	1999թ., Երազգավորս	Պողոսյան Լուսյա	ՇՀՀԿ-ի Ե.ֆոնդ, Երազգավորս 99թ., 1/5	
47.	Նանիկ	Հ. Ափինյան	Հ. Ափինյան	2000թ., Վարդաքար	Նզորյան Նաստյա	ՇՀՀԿ-ի Ե.ֆոնդ, Վարդաքար 2000թ., 1/7	

Համառոտագրություններ

ԳԱԱ ԱԻ ԺԵՍՈՒԲ - Գիտությունների Ազգային Ակադեմիա, Արվեստաբանության ինստիտուտ, Ժողովրդական երաժշտական ստեղծագործության ուսումնասիրությունների բաժին
Եր. Կ. ՀԺԵՍԿ - Երևանի պետական կոնսերվատորիա, Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործության կաբինետ
ԿԱ[illegible] - Գյումրու Կումայրի պետական պատմաճարտարապետական արգելոց-թանգարան
ՇՀՀԿ – Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
«ՇԵ» - Սպիրիդոն Մելիքյան, Անուշավան Տեր-Ղևոնդյան, Շիրակի երգեր, Թիֆլիս, 1917թ.
«ՌՄ» - Արշակ Բրուտյան, Ռամկական մրմունջներ, Երևան 1983թ
ՀՊԺԵ - Մարգարիտ Բրուտյան, Ալինա Փահլևանյան, Հայրենական մեծ պատերազմը հայ ժողովրդական և գուսանական երգերում, Երևան 1995թ.

Նվարդ ԵՂՈՅԱՆ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ՋՐԱՌԱՏ ԳՅՈՒՂՈՒՄ

Ջրառատ գյուղը գտնվում է նախկին Ախուրյանի շրջանի հարավ-արևելքում, Գյումեյ (Արևոտ), Գյալանղայա (Հարսնասար) սարերի ստորոտում: Գյուղի հին անունն է Չրախլի[1]: 1820-1827թթ. հիմնադրված գյուղի բնակչության մասը հիմնականում Կարսից, Էրզրումից (Կարինից), Բուլանըխից, Խնուսից, Մանազկերտից գաղթածներն են[2]: 1952թ-ին Չրախլի են տեղափոխվում նախկին Խանվալի գյուղի բնակիչները, որոնք Մուշից տեղահանվածներն են, և տեղի ազգագրական նկարագրին ավելանում է Մշո բանահյուսությունը:

Գյուղի երաժշտական բանահյուսության մասին ճշգրիտ տեղեկություններ ունենք սկսած 1950-1960թթ-ից[3]:Տեղի գեղջկական երգին նոր շունչ ու կյանք հաղորդեց տեղացիների ջանքերով հիմնադրված և ազգագրական փառատոնների բազմակի մասնակից «Ծաղկասար» երգի և պարի խումբը, որի մենակատարների՝ Լ. Ոսկանյանի (վոկալ, պար), Կամսար Սարգսյանի (պարկապզուկ) ջանքերով պահպանվել և հաջորդ սերունդներին են փոխանցվել լուսավոր առնական խաղիկները, առնական կամային պարեղանակները:

Առաջին անգամ գյուղն արժանացել է երաժշտագետ ազգագրագետների ուշադրությանը 1970թ-ին, երբ ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտարշավի մասնակիցները, հունձինս խմբի ղեկավար՝ բանասիրության դոկտոր Ս.Հարությունյանի և երաժշտագետ Հ.Էլոյանի, բացահայտեցին Ջրառատի երաժշտական գանձարանը: Հավաքված նմուշները քիչ՝ սակայն խոստումնալից էին (1 երգ և 4 գործիքային նվագ): Հաջորդ ձայնագրությունը կատարվել է 1972թ-ին Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործության կաբինետում՝ պրոֆեսոր Մ.Բրուտյանի և արվեստագիտության թեկնածու Մ.Մանուկյանի կողմից (13 նվագ): Երկու դեպքում էլ ձայնագրվել է պարկապզուկ նվագող և երգեր եռինող Կամսար Սարգսյանը:

25 տարվա ընդմիջումից հետո Ջրառատը հյուրընկալեց Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտարշավի մասնակիցներին (1997թ – Ն.Եղոյան, Հ.Սանուկյան, 1998թ – Ն.Եղոյան, Հ.Ափինյան):

Գյուղն ունի 300 ծուխ, 1200-ից ավելի բնակիչ: Ընդհանուր տնտեսական ծանր վիճակը իր կնիքն է թողել ինչպես բոլոր գյուղերի, այնպես էլ Ջրառատի կյանքի, կենցաղի, գյուղացու հոգեբանության վրա:

Վերջին գիտարշավների ժամանակ գյուղում գրառվել է 38 երգ և գործիքային նվագ: Երգասացները 15-78 տարեկաններ են: Տարեց երգասացները, ինչպես նախկինում, հաճույքով պատմում և «ասելով» երգում են դրվագներ «Ասլի և Քյարամ», «Աշուղ Ղարիբ» սիրավեպերից, Սայաթ-Նովայի և Ջիվանու երգերից (4 նմուշ): Երգերի ժանրային շրջանակը ընդգրկում է. քնարական (11 նմուշ), ծիսական (5 նմուշ – 3 հարսանեկան, 1 վարդավառի, 1 համբարձման), օրոր (1 նմուշ), պարերգ (13 նմուշ), աշուղական (4 նմուշ), խառնված (1 նմուշ), գործիքային նվագ (3 նմուշ): Ձայնագրված

---

[1] *Չրաղ (պարսկ.) - ճրագ, կանթեղ: Ս.Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, հ.4, Եր.,1945:*

[2] *Լ.Վ ա ր դ ա ն յ ա ն,Հ.Ս ա ր գ ս յ ա ն, Շիրակի՝ 1926-1927թթ. գաղթականության որոշ հարցեր, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ Գիտական աշխատություններ, Գյումրի, 1999, էջ 211:*

[3] *Գեղջկական և աշուղական երաժշտության ձայնագրման և տպագրման գործով Շիրակում XIX-րդ դարի II-րդ կեսին զբաղվել են շնորհաշատ մանկավարժներ Ա.Բրուտյանը և Աղ.Մխիթարյանցը: Ցավոք, նրանց հրատարակած ժողովածուներում (1898թ. –Ա.Բրուտյան «Ձայնագրյալ ժողովրդական երգեր, պարերգեր և պարեղանակներ», 1900թ. - Աղ.Մխիթարյանց «Տաղեր և խաղեր», 1901թ. - «Փշրանք Շիրակի ամբարներից») հստակ տեղեկություններ չկան երգասացների, ձայնագրման վայրի, ժամանակի և երգի հայրենիքի մասին, և հետևաբար, անհնար է համոզված ասել, թե Չրախլիում կատարվե՞լ են ձայնագրություններ թե ոչ, և ինչպիսի՞ն է եղել դարերի սահմանագծին գեղջկական երգը գյուղում:*

նմուշներում կան ռադիոհեռուստատեսային հաղորդումների ազդեցությունը կրող երգեր, ինչպես օրինակ Ավո Մանուկյանի (32 տարեկան) հեղինակած «Ղարարադ» երգը: Սակայն պահպանվել և գրառվել են նաև նմուշներ, որոնք գալիս են տարիների խորքից: Նույն երգի տարբերակների համեմատական վերլուծությունը թույլ կտա պատասխանելու ազգաերաժշտագիտության ոլորտներից մեկի՝ քննական համեմատական վերլուծության կարևորագույն խնդիր հանդիսացող երաժշտական ինտոնացյան բառարանի և ինքնահատուկ երաժշտական բարբառների տեղային առանձնահատկությունների ուսումնասիրության առաջադրած խնդիրներից որոշին: Ինչպես նշում է աշուղական և ժողովրդական երգերի գիտակ Գ.Լևոնյանը. «Տվյալ ազգաբանական զանգվածի երաժշտական ընդունակությանը կան ծանրույթը ճանաչելու համար ամենից առաջ պետք է մոտենալ նրա ժողովրդական երգերին, սրանք ավելի ինքնուրույն և հարազատ են, քան աշուղական ու հոգևոր-եկեղեցական երգերը»[4]:

Պարերգեր. Գեղջկական երաժշտության մեջ սրանք հայտնի են *խաղիկ, խանա, մանի, գյոնդ* անուններով: Ժանրային առանձնահատկություններով ավելի կենսունակ են, մատչելի հիշելու, վերարտադրելու համար: Այս նմուշները գրառված բանահյուսական նյութում առավել մեծաքանակ են. «Ղայթանա բուլկի», «Հե՜յ, ամպերով արի», «Ցոլակի», «Բաառլա», «Մարալի պես ման կուգա», «Դույնի-դույնի», «Լեզինե», «Նլա երթիկ, խոա թափի», «Գյուլը», «Խոտր կապե, հանդ կերթու», «Արփաչայի գյոլերը»[5], «Յար, Նավզիկե, Նազդարե», «Ռընդա»[6]: Երգասացները միջնակարգ կրթությամբ պատանիներ և երիտասարդներ են: Նշված երգերից առաջին 5 նմուշի տարբերակներին հանդիպում ենք դարասկզբին հրատարակված Ա.Բրուտյանի «Ռամկական մրմունջներ»[7] և Ս.Մելիքյանի, Ան.Տեր-Ղևոնդյանի «Շիրակի երգեր»[8] ժողովա-ծուներում: 1914թ-ին Ս.Մելիքյանը «Էլլու յար» (Ղայթանա բուլկի)[9] երգը ձայնագրել է Ղազարապատում, «Ցոլակով, փսբդ ջաս, սպփ»(Ցոլակի) Բուշ-Շորագյալում՝ աղջիկներից: Իսկ «Բառոլա, ջան բառոլա» (Բաառլա), «Մարալ, մարալ» (Մարալի պես) երգերը և «Շիրակի գեօվքնդ» (Դույնի-դույնի) նվագը Սմանվերդիում (Լուսաղբյուրում) գրի է առել աղջիկներից, գործիքային նվագը՝ Սամսոն Թաշչյանից: «Դույնի-դույնի» երգի մեղեդային տարբերակ է Ա.Բրուտյանի «Ռամկական մրմունջներ»-ի «Էրևան բաղ եմ աքել»[Հանդումը մնաց յարս] երգը: Ասվածը ակնառու դարձնելու համար ներկայացնում ենք մեղեդիական տեքստի 3 նմուշները՝(նոտային օր 1)



Օրինակում տարբեր են երգային կրկնակների[10] խոսքերը, երաժշտական մետրերը, կատարման եղանակները, սակայն մեղեդիների ընդհանրությունները թույլ են տալիս ենթադրել դրանց՝ նույն ազգային գոտու (ամենայն հավանականությամբ Ղարսի, Էրզրումի) բանահյուսության նմուշներ լինելու մասին: Վերը նշված մյուս երգերի համեմատական վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ մերօրյա տարբերակներում փոփոխված են մեղեդիական ավարտները, փոքր ինչ ընդլայնված է

[4] *Գ.Լ և ո ն յ ա ն, Երկեր, Եր.,1963, էջ 268:*
[5] *Երգասացներն են Սուքիասյան Արմենը (ծնվ. 1982 թ.), Պետրոսյան Արեւիկը (ծնվ.1979թ.):*
[6] *Երգասացն է Համբարյան Աշիկը (ծնվ. 1956 թ.):*
[7] *Ա.Բ ր ո ւ տ յ ա ն , Ռամկական մրմունջներ, խմբ. Մ.Բրուտյան, Եր.,1985:*
[8] *Թիֆլիս, 1917:*
[9] *Կոր փակագծերում տալիս ենք մեր ձայնագրած նմուշների անունները:*
[10] *Դիտարկված են կրկնակները, քանի որ մեծամասամբ պարերգերը ճանաչվում են նրանցով:*

ձայնածավալը: Որոշ նմուշների գյուղական տեքստերի փոփոխման միջոցով երգերը տեղայնացված են, ինչպես «Մարալ, մարալ» երգում է

Գյալանդսյեն նազ չունի,
Խալխը գիտե, դարդ չունի,
Ծաղկասարի ծառները,
Ստասադ կտրին գառները:

Կրակով լի, կենսուրախ զռեարներ են «Լեզինե», «Ելս երբիկ, իտտ քաիի», «Գյուլո», «Խոտը կապե, եանդ կերթա», «Յար նավզիկե, նազդարե», «Ռրնդա» երգերը, որոնք թեև ունեն փոքր ձայնածավալ, սկսվելով մեղեդու դիմող ենչյունից ալիքավոր շարժումով, ճկուն կշռույթով, նրբաճաշակ զարդարանքներով և սաըբերակումներով ողջ եյուսվածքին եաղորդում են լուսավոր-առնական, կամային ուժակւսն գծեր: «Յար նավզիկե, նազդարե», «Ռընդա» երգերը կատարվում են 2 լեզվով՝ քրդերեն և եայերեն: Ըստ երգասացի եաղորդած տեղեկությունների,ինքը դրանք սովորել է դրկից քրդերից, որոնք կարճ ժամանակով եկել են գյուղ՝ աշխատելու: Հորինվածքային առանձնաեատկություններով առանձնանում է մինոր (բարձր յոթերորդ աստիճանով) լադում ծավալվող « Արփաչայի գյոլերը» պարերգը: Նախերգ-կրկներգ ձևով եղած գրակւսն տեքստին, որը, ի դեպ, պարերգի ժանրում եազվադեպ է եանդիպում եամադրված երաժշտական բաղադրիչը ունի վարիացիոն ձևվսգոյացում[11], կրկներգի եատվածում եռամասայնության դրսևորմամբ:Ներկայացնում ենք երգի մեղեդին: (նռտային օր. 2)



Ժողովրդի եեղինակւսծ այս նմուշը վերարտադրում է սլտըերգերի եղանակների եյուսվածքի ծավալման գործընթացը, որը ժամանակին այնքան պատկերավոր նկարագրել է Կոմիտաս Վարդապետը[12]:

Ծիսական երգեր. Այս ժանրից եիմնականում կիրառության մեջ մնացել են վարդավառի, եամբարձման, եարսանեկան երգերը: Գրառված նմուշներն են. «Վարդևորի»[13], «Վիճակի երգը»[14], «Այսօրվա ուրախության պատճառը», «Հլա նայեք այս երկուսին»[15], «Սեղանի շուրջ նստած»[16]: Յավոք, ավանդական ծիսակարգը գյուղում պաեպանված չէ, և նշված նմուշները ավելի շատ պարային բնույթի են, ունեն աղերսներ այլ ժանրերի եետ: «Վարդևորի երգը» թեև կատարվում է վարդավառի առնին, սակայն բովանդակությամբ, բնույթով, եիշեցնում է աշխատանքային, քնարական, պարերգերի ժանրերը:

Արտը ցորեն ցանեցի,
Վարդը ելավ վարդլտրի կիրակուն:
Դաշտս եեար ցանեցի,
Ես չեմ էրթա սարը շոգուն, կրակուն:

---

[11] *Տառային արտաեայտությամբ $AA_1A_2A_3A_4A_3$..*
[12] *Կ ո մ ի տ ա ս, Հոդվածներ և ուսումնասիրություններ. Եր.,1941, էջ 17:*
[13] *Երգասացն է Մանուկյան Արթուրը (ծնվ. 1969թ.):*
[14] *Երգասացն է Մարտիրոսյան Միսակը (ծնվ. 1932թ.):*
[15] *Երգասացն է Մարաիրոսյան Վիոլետան (ծնվ. 1954թ.):*
[16] *Երգասացն է Համբարյան Աշիկը (ծնվ. 1956թ.):*

Սերօրյա հարսանեկան հանդեսը ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում ենթարկվել է փոխակերպության: Սակայն այսօր էլ գեղջկական պարերգերը, գովքերը, կատակերգերը հարսանեկան ուրախության անբաժան մասն են կազմում: Այդպիսի նմուշներ են «Հյա նայեք այս երկուսին», «Այսօրվա ուրախության պատճառը», «Սեղանի շուրջ նստած» երգերը: Պահպանելով ժանրին բնորոշ համեմատություններով հարուստ պատկերավոր խոսքը, երաժշտական բաղադրիչը իր մեղեդիական թարմությամբ զարդոլորուն սարքերով ունի հանդիսավոր ·լավատեսական երանգ: Ի տարբերություն նախկինում տարածված հարսանեկան երգերի, այս նմուշներում, որպես հանդեսի գլխավոր գործող անձ «ծաղիկներից» հետո հիշատակվում են քավորը, թամադան:

Բաժակը ավեք քավորին,
Ուրախության գլխավորին:
***
Ես քավորից երաման առա,
Եվ ձեզ համար երգիչ դառա: («Հյա նայեք այս երկասին»)
***
Եկեք մենք պար բռնենք,
Ուրախ ծափ տանք ու պարենք,
Թամադա ջան, թամադա,
Կենացդ խմենք: («Այսօրվա ուրախության»)
***
Սեղանի շուրջ նստող ազնիվ թամադա,
Խմե, ուրախացի, օրենք, ադաթ ա,
Տան տիրոջ գավերի գինին տոստ ա ... («Սեղանի շուրջ նստած»)

Քնարական երգեր. Քնարական երգերը ներկայացված են թեմատիկ բազմազանությամբ: Դրանք սիրված էակին նվիրված «Լուսաբացին արևից առաջ»[17], «Սարերի ջան, դեն գնացեք», «Համ գյուղ, համ վարդ, համ նարգիզ»[18], «Խորոտիկ յար»[19], «Վայ լե, լե», հայրենիքի կարոտով լի «Յորեն իմ ցանել իմ», «Լսիր, եղբայր», «Խոսեք Արտաշատ, Դվին», որդուն խրատող «Իմ բալիկ», ծնողին ուղղված «Սրախ սերը», սոցիալական բողոքով «Աղաչանքս լսեք» երգերն են: Այս ժանրի նմուշներում գերակշռում է քնարական ձևը, և մեղեդին մեծամասամբ ծավալվում է իոնական և էոլական ձայնեղանակներում: Միջնավարտներում գրական տողի յուրաքանչյուր վանկի հաճախ հատկացվում են չափական մեկ միավորի արժեքով արտահայտիչ ոլորումներ:

Ժամանակի շունչն իր վրա կրող «Իմ բալիկ» երգը, ծավալվելով էոլական երանգավորմամբ լոկրիական լադում, սկսվում է դիմող ենչյունից: Աստիճանաբար ընդլայնելով ձայնածավալի վերին սահմանը, եղանակի ծավալման հանգուցային կետում շեշտվում է «բախտիդ ծառը» բառակապակցությունը, դրանով ընդգծելով ծնողի համար իր զավակի ապագա բախտավորության կարևորությունը:

Բանաստեղծական բարձր ապրումներ են ամփոփված «էրկրի» կարոտն արտահայտող «Լսիր, եղբայր», «Յորեն իմ ցանել իմ» «Խոսեք Արտաշատ, Դվին» երգերի պատկերավոր խոսքերում.

Լսիր, եղբայր, խոսքն իմ սրտի,
Ինձ տանջող ցավը իմացիր:
Քառսուն աղբյուր կը թխե,
Քիչն ասեմ, դու շատն իմացիր:

Այն էրկիրն է, Մուշ խնուցվոր,
Կցանի ի՞նչ սեխ մեղրավոր:
Էրկրիս մասին պատմեմ անխոս,
Ասեմ լավն ու վատն իմացիր:

Այս նմուշը բանաստեղծական տեքստի դուբեյթին բնորոշ (4-4,8) ատղաչափական կառուցվածքով, գաղավարական ուղղվածությամբ և վերջին քառյակում հեղինակին ակնարկումով. «...Մովսես պապը, հայրիկն երգչի...» մոտ է աշուղական երգերին:

Օրոր. Քաղցրահնչյուն «Նանիկը» եղավ գյուղում ձայնագրված միակ օրորոցայինը, գրառված 1952 թ-ին Խանվալիից Վերին Սանթաշ տեղափոխված, այնուհետև Ջրառատում հաստատված բնիկ մշեցի Աթմանուշ մայրիկից: Լինելով Սերոբ փաշի ֆիդային

---

[17] *Երգասացն է Մարտիրոսյան Ալֆին (ծնվ. 1952թ.):*
[18] *Երգասացը Արմանուշ մայրիկն է:*
[19] *Երգասացներն են Մուքիասյան Արմենը, Պետրոսյան Արևիկը*

աղջկա դուստրը, նա պահել էր իր հիշողության մեջ պնսատռիկներ Մշո բանահյուսությունից և եղանակավորված մաառւցեց մաղթանք-խրատներով լի երգը:

Գործիքային նվագ. Այսօր Շիրակում քիչ են այն գյուղերը, որոնցում սրահպանվում են ազգային գործիքային երաժշտության ավանդույթները: Ջրառատում ցայսօր իր ուրույն տեղն ունի սերնդից սերունդ փոխանցված պարկապզուկ գործիքը: Այն առաջին անգամ գյուղ է բերել Կտմսար Սարգսյանը (ծն.1906թ.), որի կատարումները, ինչպես վերը ասվեց, ամփոփված են 1970-72թթ-ի ձայնագրություններում: Գյուղում սիրված, բոլոր ուրախությունների և խանդիսությունների պարտադիր մասնակից պարկապզուկահարը իր երգացանկում ուներ ինչպես Շիրակում լայն տարածում ունեցող պարեր ու մեղեդիներ՝ «Քոչարի», «Թաք տրնգի», «Կլոր սլար», «Վեր վերի», «Գյոնդ», «Կալոսի պոկեն», աշուղական երգերի գործիքային տարբերակներ՝ Մահուրի Գևորգի «Ծնվա, եկա աշխարե», այնպես էլ մուղամներ՝ «Ոչխարի կանչ» (Դ-ռ), «Մեղեդի իմաստով», և իր հեղինակած երգերը: Երգիծական, քննադատական շունչով «Գյումրի քաղաք» երգը՝ գրված աշուղական երգերին բնորոշ ատղաչավութքյամբ, միակ ձայնագրված և պահպանված օրինակն է:

Գյուղում գործիքային երաժշտության ավանդույթները շարունակում են նրա որդին՝ Համլետ Սարգսյանը (ծն.1942թ.) և թոռը՝ Արթուր Սարգսյանը (ծն.1969թ.): Գյուղացիներն իրենց սեփականությունն են համարում «Գսպո», «Քեչա» և «Ութ համար» պարեղտնակները, որոնք կատարվում են հաջորդաբար, որպես շարք և ունեն համայնքի միասնական անդրդվելի կամքն արտահայտող՝ ոտքերի ինքնահատուկ խրոխտ շարժումներ: (նոտային օր.3)



Այսպիսին է Ջրառատի այսօրվա երաժշտական բանահյուսությունը: Այն խոր, եարգալից վերաբերմունքը, որ տածում է ջրառատցին իր ազգային արժեքների նկատմամբ, հույս է ներշնչում ապագայի հանդեպ:

МУЗЫКАЛЬНЫЙ ФОЛЬКЛОР НАШИХ ДНЕЙ СЕЛА ДЖРАРАТ

Резюме *Н.Егоян*

Одним из важнейших вопросов в этномузыкологии является исследование национального музыкально-интонационного словаря и специфических музыкальных диалектов. С этой целью нами проводятся этнографические работы и записываются бытующие песни, инструментальные наигрыши. На основе записей, сделанных в 1997-1998гг. в селе Джрарат (собиратели Н.Егоян, А.Апинян), мы показываем этномузыкологическую картину села. Записано 38 песен и инструментальных наигрышей. Из них песен: 11-лирических,13-танцевальных, 3-свадебных,1-вардаварская, 1-воскресенская, 1-колыбельная, 4-ашугских, 1-авторская и 3 инструментальных наигрыша.

Лиза АКОПЯН

ХАРАКТЕРИСТИКА ПОДРОСТКОВ В СТРЕССОВОЙ СИТУАЦИИ

(На основе данных Спитакского землетрясения 1988г.)

Катастрофические последствия Спитакского землетрясения 7 декабря 1988г. привели к существенной деформации самого способа жизни тысяч людей и к целому ряду деформаций в их психологии. Имеется ввиду хронический стресс, депрессия, возрастание конфликтности и распространение неконструктивных способов преодоления жизненных трудностей, потеря жизненной перспективы, агрессивность одних и пассивность других.

К этому же, как указывают исследователи последствий влияния катастроф Ю. А. Александровский[1], Ю. И. Дерюгин[2], М. И. Бобнева[3], А. В.Варанелис[4], С. И. Яковенко[5] и др., можно добавить перенапряжение всех физических и моральных сил при стремлении удовлетворить хотя бы минимальные потребности, потерю надежды на действенную помощь государства или международных благотворительных организаций.

Если использовать теорию стресса для анализа состояния потерпевших как единого социального организма, то легко можно заметить, что от состояния тревоги и перенапряжения всех адаптационных механизмов, он перешел к состоянию изнеможения (усталости), дистресса. Наиболее уязвимыми оказались в силу целого ряда обстоятельств подростки и старшие школьники, поскольку они в отличии от детей младшего школьного возраста хорошо понимают тяжесть ситуации. Но они еще не могут принимать правильные самостоятельные решения, т.к. еще зависят от взрослых.

Если определять конкретные возрастные границы и возрастные особенности подростков, то эти границы весьма условны. Аналпз психолого-педагогической литературы показывает, что эти границы в патогенозе часто не совпадают в разных социально-экономических условиях жизни личности.

В зарубежной психологии, на наш взгляд, наиболее интересной является возрастная периодизация американского психолога Э. Эрнксона[6]. Его философско-методологические позиции представляют собой развитие основных

---

[1] Ю. А л е к с а н д р о в с к и й, Социально-стрессовые растройства.- Обозрение психиатрии и медицинской психологии им. В. М. Бехтерева, 1992, 2, стр. 5- 10.

[2] Ю. Д е р ю г и н, Некоторые психологические проблемы ликвидации последствий землетрясения в Армении, Психологический журнал, 1989, т.10, 4,стр 129-134.

[3] М. Б о б н е в а, Дети Чернобыля – программа и проблемы. Сб. Науч. тр. М, 1992, стр. 9 –23.

[4] А. В а р а н е л и с, Усиление симптомов "позиции жертвы" у подростков чернобыльской зоны при проведении лечебно – рекреоционных мероприятий (социально – психологическая реабилитация населения, пострадавшего от экологических и техногенных катастроф). Мат. науч. конф.; Гомель, 27-28 июня 1994г. ,Минск, 1994, стр. 16.

[5] С.Я к о в е н к о, Факторы социально – психологической адаптации учащихся , эвакуированных из зоны аварии на ЧАЭС . Тес. 11 Всесоюз. конф. "Актуальные вопросы радиационной медецины" М, 1989, стр. 121-122.

[6] E. E r i k s o n, Childhood and Society. 2nd. , New York, 1982.

положений теории психоанализа З. Фрейда. Однако Э. Эриксон в значительной мере отошел от упрощенного биологизма пансексуализма З. Фрейда. Армянский психолог А. Налчаджян[7] очень высоко оценивает теорию Э. Эриксона о ситуациях формировании личности человека от рождения до старости. «Теория Эриксона по своему охвату весьма обширна так как включает в себя течение всей жизни со дня рождения и до смерти человека. Кроме того Э. Эриксон не ограничивается изучением только одной стороны развития личности (образцом такого одностороннего подхода является точка зрения З. Фрейда относительно различных периодов психо-полового развития личности). Он занимается изучением более широкого круга психологических явлений, его теория более содержательна и поучительна, и, кроме того, она нашла более широкое применение в психологии и педагогики развитых стран мира>>.

По мнению Э. Эриксона, развитие человека состоит из трех взаимосвязанных процессов: соматического развития, которое изучает биология; развития личного «Я», что изучает психология, и социального развития, которое изучается социальными науками.

Главный закон развития - «эпигенетический принцип», согласно которому на каждом новом этапе развития возникают новые явления и качества, которых не было на предыдущих этапах развития. Переход к новой фазе развития происходит в форме «нормативного кризиса», который отражает диалектические трудности взросления. Переход к новой форме развития возможен только на основе решения главного противоречия, характерного предыдущей фазе. Если .эти противоречия не были преодолены, это неминуемо проявится позднее. Э. Эриксон разделяет весь жизненный цикл человека на восемь фаз, каждая из которых несет свои специфические задачи, которые могут решаться позитивно или негативно в экстраполяции на весь процесс развития личности. Подростковый возраст совпадает с четвертой фазой -фазой школьного возраста, в которой главным новообразованием является чувство самосознания и эффективности, способности достигать поставленные цели. Важнейшими ценностями становятся эффективность и компетентность. При негативном варианте развития у ребенка появляется чувство неполноценности, которое сначала возникает из осознания своей некомпетентности, неуспешности в решении конкретных задач, чаще всего связанных с обучением, а потом распространяется на личность в целом.

Именно с такими негативными последствиями сталкиваются, когда у подростков, которые проживают в зоне катастрофы, резко падает успеваемость, а потом снижается самооценка, а следствием этого является и снижение мотивации достижения таких целей, как получение образования и овладение профессиями, требующими высокой квалификации; исчезают также жизненные планы на долгую перспективу.

По результатам обследований детей и подростков, перенесших землетрясение, у многих обследованных наблюдались потеря аппетита, нарушение контактности. При этом у пострадавших подростков была обнаружена регрессия - возвращение на более низкий уровень развития: уход в сферу освоенного стереотипного. Так как землетрясение произошло в период обострения межнациональных отношений, были зафиксированы также случаи, когда дети испытывали страх при виде солдат и танков.

Отмечалось «заражение» образами разрушающихся домов, придавленных людей, трупов в тех случаях, когда подростки в действительности не наблюдали столь ужасных событий. Так, по наблюдениям психологов, у «ереванских» подростков явления невротизации, навязчивых образов связаны с тем, что во

---

[7] *А. Налчаджян, Основы психологии (на арм. языке), Ер., 1997.*

многих семьях проживали родственники, приехавшие из зон эпицентра землетрясения, которых эмоционально заражали окружающих. Взрослые оказывали вторичное действие на детей своими эмоциональными переживаниями, связанными с потрясением и возникшими социально-психологическими проблемами. Наблюдалось цепное, невротизирующее всех, взаимодействие.

Дети - особый контингент населения, который требует специальной помощи в ситуации массовых катастроф. Они особенно нуждаются в помощи, т.к. в силу трагических обстоятельств лишаются родительского попечительства.

По данным экспресс-диагностики, проведенной специалистами из Москвы, были выделены фазы, отражающие состояние пострадавших детей.

Первая-вторая неделя после катастрофы. В этот период просматриваются аффективно-шоковые реакции на стресс. Выявляются две формы реакций. Типичной формой аномального поведения на первой стадии аффективно-шоковой реакции является резкое двигательное возбуждение. Дети всех возрастов (дошкольный, младший, средний и старший школьный) в этом случае проявляют внешне сходное возбуждение: быстро ходят или бегают без видимой цели, размахивают руками, издают некоммуникативные звуки, что-то выкрикивают, восклицают, смеются, возбужденно, без смысла, толкают друг друга и отвлекаются, становятся агрессивными, начинают драться, по незначительному поводу начинают горько плакать и др. Они вот-вот упадут от перевозбуждения и усталости, но при этом не могут организовать себя и успокоиться. Такая аномалия среди подростков встречается довольно часто.

Второй, типичной, но менее распространенной формой аномального поведения является ступор. Это реакция на стресс, которая проявляется в форме оцепенения. Ребенок, находящийся в ступоре, сидит или стоит неподвижно, ссутулившись, скорчившись, взгляд устремлен в «никуда».

Четвертая- пятая недели после катастрофы. Наблюдение детей через месяц после катастрофы позволило выявить у большинства астенический синдром - это вторая стадия аффективно-шоковой реакции. Явно наблюдались вялость, желание полежать в кровати, расстройство сна, потеря аппетита, раздражительность. Нередко среди детей вспыхивали драки. Некоторые падали в обморок при головокружительном для них движении веток высоких деревьев. Отмечались и истерические реакции. Ступорозные аномалии по прошествии указанного времени среди обследованных детей уже не встречались.

Проведенная психологами работа позволила установить характер эмоциональных нарушений у детей Спитакское землетрясение создало условия для развития разнообразных страхов у детей: угрозы жизни, смерти, диффузный страх опасности. Особое место занимает сейсмофобия -распространенное переживание страха перед возможным землетрясением и прошедшего землетрясения. Дети говорят о картинах разрушающихся домов, трупах, крови, о преследующих их звуковых образах, душераздирающих предсмертных криках о помощи. Эти образы особенно ярко возникают, как только их начинает одолевать сон. Ребенок в ужасе вскакивает. При этом появляются головная боль, головокружение, чувство тошноты. Подражательность и внушаемость - возрастные характеристики детства, однако под влиянием стресса эти феномены резко усиливаются, и дети испытывают массовый страх перед темнотой,«опасным человеком».

По данным исследований психологов, у подростков, переживших катастрофы, прослеживаются как непатологические, так патологические изменения личности. К первым относятся психогении, которые проявляются во временном эмоциональном напряжении, психомоторных отклонениях, в которых личность еще сохраняет способность критической самооценки и целенаправленной деятельности и поэтому может корректировать свое поведение. Исследования, проведенные в Гюмри, Спитаке, Ванадзоре, Ахуряне, показывают, что подростки, пережившие катастрофу, показывают достаточно тревожную картину непато-

логических отклонений в своем поведении. Для них характерны эмоциональная нестабильность, тревожность, пессимизм в оценке жизненной перспективы, сомнения в необходимости получения образования, создания семьи и рождения детей. Среди «детей катастроф» чаще возникают стрессы, фрустрации, конфликты, кризисы, которые могут вызывать соматические заболевания. Так, по данным белорусских исследователей, дети переживших аварию на Чернобыльской АЭС, накопили такие негативные эмоции, как горе, угнетенность, обида, страх, тревога за будущее своих близких, друзей, себя, отчаянье, бессилье и т.п.

Как показал анализ исследований, касающихся проблем адаптации людей, переживших катастрофы, вопросы психолого-педагогической адаптации детей рассмотрены недостаточно широко.

Последствия стихийных бедствий-землетрясения в Спитаке, социальные взрывы, связанные с развалом СССР и становлением нового независимого государства Армения - оказали и продолжают оказывать большое влияние на психологическое состояние людей. Особенно ярко проявляются эти последствия у подростков, когда общая атмосфера нестабильности, воспоминаний, впечатлений от рассказов близких, семейная память о погибших, экономические трудности накладываются на психологические проблемы взросления, становления моральных принципов и определения жизненных ориентацией.

Наше исследование, проводимое в СШ № 6, 10, 11 г. Гюмри с 1997 по 1999 гг. охватывало около 200 школьников-подростков.

Прежде всего, необходимо подчеркнуть и особо выделить то обстоятельство, что подростки, переживающие последствия катастрофы - землетрясения 1988 г. - оказались еще и в зоне социальной катастрофы, обусловленной развалом СССР и самоопределением Армении как независимого государства.

Проводимая диагностика подростков (анкетирование, интервьюирование, сочинения на заданную тему, анализ данных о семейном и материальном положении) составила следующую картину. Среди учащихся У-УШ классов имеются подростки: а) которые непосредственно были свидетелями землетрясения; б)которые потеряли родных и близких в этой катастрофе; в) подростки, которые знают о катастрофе от родных и друзей и живут в атмосфере воспоминаний о катастрофе.

Диагностика одновременно показала, что в эмоциональной сфере большинства семей (84 %) продолжает присутствовать ощущение страха, неуверенности и беззащитности, обусловленные воспоминаниями о стихийном бедствии, человеческими и материальными потерями. Как следствие стресса у учащихся-подростков наблюдается заторможенность реакции, апатия, рассеянное внимание, немотивированные проявления агрессивности, капризность и т.п. Особенно девочки боятся оставаться в одиночестве, боятся темноты, громких звуков, ярких вспышек света. Естественно, при подобном психическом состоянии возникают большие проблемы с учебой, а неудачи в школе влекут за собой усугубление и без того критического состояния большинства семей.

В сложившихся условиях традиционно «первая помощь» ребенку, оказавшемуся в зоне переживания последствий природной катастрофы, должна быть оказана в семье, его родными и близкими. Однако на сегодняшний день семьи, оказавшиеся в зоне природной катастрофы, попали следом в зону социально-экономической катастрофы.

Анализ анкетирования показал, что характерными проблемами семей г. Гюмри 90-х гг. стали: а)безработица одного или обоих родителей; б) неполные семьи (отсутствие, как правило, отца); в)условно неполные семьи (когда, как правило, отец находится вне семьи на заработках); г)потеря родственных связен (из-за непосредственной утраты родни, из-за переселения многих семей за пределы города, республики вследствие стихийного бедствия).

В качестве примера можно привести данные о составе семьи только одно-

го класса(г. Гюмри, СШ N 41, 8 «Б» кл. руководитель Вардеванян А.) ,которые являются типичными для многих семей, проживающих в зоне последствий землетрясения.

Анализ данных показывает, что из 25 учащихся четверо остались без отцов, у троих отцы работают в России. Большая часть родителей занимается мелкой торговлей, которая не приносит стабильного дохода. Матери, как правило, не работают. Только 2 семьи находятся в нормальных условиях

Как видно из проблем, испытываемых среднестатистической семьей г. Гюмри, во многих случаях семья объективно не в состоянии защитить своего ребенка от нестабильности, которая в свою очередь порождает чувство страха и неуверенности в себе. В создавшейся ситуации именно школа, которая занимает значительное место в жизни ребенка, должна прийти на помощь. Благоприятная атмосфера в классе, в школе в целом, могут способствовать стабилизации психического состояния ребенка, его нормальному поведению, а специальная педагогическая организация классного и школьного климата способна формировать необходимые условия для преодоления трудностей психологического характера.

ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՍՏՐԵՍԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ
(Սպիտակի երկրաշարժի տվյալների հիման վրա)

Ամփոփում — *Լ.Հակոբյան*

Սոցիալ – հոգեբանական տեսանկյունից դիտարկվում է դեռահասությունը, որպես խոցելի խումբ, ներկայացվում են այն փոփոխությունները, որոնք ստկա են երկրաշարժ ապրած և բնական ու սոցիալական աղետի գոտում բնակվող դեռահասների հոգեվիճակում, վարքում, մոտիվացիոն, արժեքային կողմնորոշումների համակարգում, սոցիալական հարաբերություններում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայանի պատճառներով սոցիալ – տնտեսական, բարոյահոգեբանական ծանր կացության մեջ հայտնված ընտանիքը նկատելիորեն կորցրել է դեռահասության հակասությունների հաղթահարման ներուժը, դիտարկվող խնդիրների արդյունավետ լուծման հնարավորությունները ուղղակիորեն կապվում են դպրոցում հոգեբանամանկավարժական հատուկ մթնոլորտի ստեղծման անհրաժեշտության հետ:

Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԷՐԻԱԽԻ-ՇԻՐԱԿԸ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Արդի հայ պատմագրության մեջ Շիրակի տարածքում ուրարտական սեպագիր արձանագրություններով վկայված մի քանի իշխանությունների տեղադրության հարցում էական տարակարծություններ չկան: «Այդ երկրները» թվով վեցն են, որոնցից Կալխասենին «համակցվում է» ներկայիս Արթիկի շրջանի, Ալսաւխինենին՝ Ախուրյանի արևմտյան ափի, Անիշտեգային Արաքսի հյուսիսային ափի տարածքները, Կուրիանեն նույնացվում է այժմյան Անիի շրջանի, Գուլուտախեն՝ Ախուրյանի արևմտյան ափի հետ[1]: Միաժամանակ հայ և այլազգի պատմաբանները, հիմնվելով Խորխոռյան և Սարդուրյան տարեգրությունների ընձեռած փաստերի վրա, Պատմական Շիրակը առաջնահերթորեն նույնացնում են Էրիախի կոչվող երկրի կամ իշխանության հետ[2]: Այս հարցում վճռորոշ նշանակություն է ունեցել, մասնավորաբար, Արգիշտի Ա (մ.թ.ա. 786-764թթ.) ուրարտական թագավորի արշավանքներից մեկի արձանագրությունը (մ.թ.ա. 775թ.)՝ թողնված Գյումրուց 8կմ դեպի հյուսիս-արևմուտք գտնվող Մարմաշեն գյուղից ոչ հեռու՝ Ախուրյան (Արփաչայ) գետի ձախ ափին: Այդ արձանագրության մեջ հիշատակվում է Էրիախի երկիրը, որ ընկած է Կատարզա, Գուլուտախի և Ուիտերուխի երկրների միջև, Աբելիանիից (Աբելյանք-Ա.Հ.) ոչ հեռու, Էթիունիի հարևանությամբ: Բոլոր հետազոտողներն այն կարծիքին են, որ այդ տարածքը ամենից ավելի համապատասխանում է ներկայիս Գյումրու և նրա շրջակայքի հետ[3]:

Առաջին պատմական տեղեկությունը, որ Էրիախի-Շիրակի մասին տալիս են ուրարտական սեպագիր աղբյուրները, թվագրվում է մ.թ.ա. 785թ.-ով: Խոսքը վերաբերում է Արգիշտի Ա-ի մի արձանագրությանը, որը պատմում է Էթիունի ցեղամիության դեմ նրա պատժիչ արշավանքի մասին: Այդ արձանագրությունը խնդրո առարկայի տեսակետից կարևոր ենք համարում մի քանի առումներով: Նախ դրանում վկայելով, որ գրավել է Լուշա, Կատարզա, Էրիախի, Գուլուտախի, Ուիտերուխի երկրները և հասել մինչև Աբունի երկիրը, Արգիշտի Ա-ն գրավված երկրների անունների հաջորդական թվարկմամբ[4] ածել է ուրարտական զորքերի շարժի ուղին, որոնք Ճոբոխի ավազանով շարժվել են դեպի հյուսիս-արևելք, ապա Լուշա և Կատարզա երկրներով հասել Չլդըր լճի հարավային ափերին, որտեղից էլ մուտք են գործել Էրիախի-Շիրակի տարածք (Դրանից հետո նոր միայն Ախուրյանի ձախ ափով իջել են հարավ, մինչև այդ գետի՝ Արաքսին միախառնվելու տեղը, ապա անցնելով Արաքսը, ուղղություն են վերցրել դեպի հարավ-արևմուտք և ներխուժել Արաքսի աջ ափին գտնվող Ուիտերուխի երկիրը): Երկրորդ. եթե Լուշա, Կատարզա, Ուիտերուխի երկրները ուրարտացիներին հայտնի էին դեռևս Մենուա Ա-ի (մ.թ.ա.810-786թթ.) ժամանակներից, ապա Էրիախիի մասին առաջին անգամ հիշատակվում է ավելի

---

[1] *Այդ մասին տե՛ս Ս. Հմայակյան. Շիրակը Լուշա-Կատարզա-Վիտերուխե դաշնության կազմում, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը հանրապետական առաջին գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1994, էջ 22:*

[2] ***Տե՛ս Н. Арутюнян, Топономика Урарту, Ер., 1985; Б. Пиотровский, Ванское царство (Урарту), М., 1959 և ուրիշներ:***

[3] *Հ Գ ա բ ր ի ե լ յ ա ն, Լենինական, Եր., 1984, էջ 7:*

[4] ***Н. А р у т ю н я н, Биайнили (Урарту), Военно-политическая история и вопросы топономики, Ер., 1970, стр.189-191.***

ուշ, միայն Արգիշտի Ա-ի սույն արշավանքի հետ կապված: Երրորդ, որ պակաս կարևոր չէ, հիշյալ արձանագրությունում Էրիախիին նշվում է որպես Արգիշտիի կողմից գրավված երկիր, ի թիվս Լուշայի, Կատարզայի և այլոց: Հետևաբար կարելի է ենթադրել, որ ամենայն հավանականությամբ, մ.թ.ա. 8-րդ դարի սկզբներին Էրիախի-Շիրակն ունեցել է ինքնուրույն ցեղապետության կարգավիճակ:

Ենթադրվում է, որ Արգիշտի Ա-ի վերոհիշյալ արշավանքը լիավին չի ծառայել իր նպատակին, որովհետև հենց նույն՝ մ.թ.ա. 785թ.-ին նա մի նոր արշավանք է ձեռնարկել հյուսիսային շրջանների (դրանց թվում նաև Էրիախիի) դեմ: Տալով Արգիշտի Ա-ի՝ դեպի հյուսիսային շրջաններ կատարած նոր արշավանքի երթուղու համառոտ նկարագրությունը, Ն. Հարությունյանը հագում է այն եզրակացության, որ «ուրարտական զորքերը մարտերով անցել են մի քանի հարյուր կիլոմետր և այդպիսով ապահովել են Ռւբարտու-Բիայնիլիի տիրապետությունը հյուսիսի և հյուսիս-արևմուտքի մի շարք երկրների վրա»[5]: Այսինքն Արգիշտի Ա-ի երկրորդ արշավանքը դեպի հյուսիս այս անգամ լիովին ծառայել է գրավված տարածքները հնազանդեցնելու նրա նպատակին: Այս մասին է խոսում նաև հիշատակությունը այն հսկայական ավարի և գերիների, որոնց մասին վկայված է արձանագրության մեջ (Չնայած Գյումրուց ոչ հեռու, այժմյան Սարմաշենի մոտ թողնված վիմագիր այս արձանագրության մեջ չի նշված արքայի հայրանունը, սակայն, հետազոտողների կարծիքով՝ կասկած չի հարուցում, որ դա վերաբերում է Արգիշտի Ա-ին, որովհետև մյուս Արգիշտին հյուսիսային տարածքների գրավմամբ չի զբաղվել):

Դրանից հետո շուրջ տասնմեկ տարի վերոհիշյալ հյուսիսային երկրները և դրանց մեջ նաև Էրիախին, զերծ մնաց ուրարտական նոր արշավանքներից և նույնիսկ փորձեր էր անում վերականգնելու իր ինքնիշխանությունը: Դրա պատճառն այն էր, որ, ինչպես նշում է Ն. Հարությունյանը, Արգիշտի Ա-ն այդ շրջանում ամբողջովին զբաղված էր իր հսկայածավալ տերության հարավ-արևելքի խնդիրներով, որոնք լուծելուց հետո «կրկին զբաղվում է հյուսիսային երկրների նվաճմամբ»[6]:Ըստ Խորխոռյան տարեգրության 13-րդ տարվա (մ.թ.ա. 774թ.) տվյալների, այս անգամ նա գրավում է Էրիախին և Կատարզան՝ հասնելով մինչև Իշկիգուլու երկիրը[7]:Դրանից հետո դեպի Էրիախի Արգիշտի Ա-ի նոր արշավանքների մասին մեզ ոչինչ հայտնի չէ: Մնում է ենթադրել, որ մինչև իր մահը նա այլևս դրա էական անհրաժեշտություն չի ունեցել:

Մ.թ.ա. 763թ.-ին ուրարտական գահն անցնում է Արգիշտի Ա-ի որդուն՝ Սարդուրի Բ-ին (մ.թ.ա. 763-735թթ.): Վերջինս թեև մ. թ. ա. 751-750թթ.-ին որոշ քայլեր ձեռնարկում է իր պետության սահմանները ընդլայնելու ծայրագույն հյուսիսում և հյուսիս-արևմուտքում՝ նվաճելով Աբեյանին (Աբեղյանք), Կուլխան (Կոլխիդա), Խուշանին: Արդեն հաջորդ տարում՝ մոտավորապես մ.թ.ա. 749թ.-ին ամենայն հավանականությամբ նկատի ունենալով, որ խաղաղ գոյության ավելի քան երկու տասնյակ տարիները թուլացրել են Ուրարտուի դիրքերը Էրիախիում, Սարդուրի Բ-ն վերագրավում է այն[8] իր արշավանքը նկարագրելով հետևյալ կերպ.« Արշավեցի Էրիախի, մեկ օրվա ընթացքում Էրիախի երկիրը ես գրավեցի: Հայրերի ու պապերի կառուցած ամբարները տաճարի, որտեղ և իր (արքայի) հարստությունն էր հավաքված (պահված) ... : Խալդյան ահրական հրամանով ես տաճարի 150 ամբարները գրավեցի, մարդ, կին գերի տարա, ավարը քշեցի տարա: Քաղաքները այրեցի, երկիրն ավերեցի ...»[9]: Ըստ Սարդուրյան տարեգրության՝ դեպի Էրիախի Սարդուրի Բ-ն կատարել է 8 (կամ 6) արշավանքներ, որոնցից միայն 4-ի նկարագրություն-

---

[5] *Նույն տեղում, էջ 197:*

[6] ***Н. А р у т ю н я н, Биайнили (Урарту) ..., Ер., 1970, стр. 233.***

[7] ***Տե՛ս նույնի. Хорхорская летопись Аргишти 1-го, ЭВ 7, 1953, УКН, текст 127.***

[8] ***Սարդուրյան տարեգրության իրադարձությունների ժամանակագրական կարգի մասին տե՛ս Г. Меликишвили, Наири-Урарту, стр.223-230:***

[9] ***Ս. Հ մ ա յ ա ն յ ա ն, Էրիախեն Ասավածապետություն, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը հանրապետական երկրորդ գիտաժողովի թեզիսներ, Գյումրի, 1996, էջ 12-13:***

ներն են հասել մեզ: Այդքանն էլ բավական է եզրակացնելու համար, որ երկրի հյուսիսում ուրարտական տիրապետությունը շարունակում էր մնալ բավականին անհաստատ, և նույնիսկ Սարդուրիի դաժանագույն պատժամիջոցները, բնակչության մեծաթիվ գերեվարումները, հսկայական ավարն ու թալանը «չեն կարողանում վերջնականորեն հնազանդեցնել Էրիախին, և որ այդ երկրի համար ուրարտացիները դեռևս շատ կատաղի կռիվներ պիտի վարեին»[10]: Հավանաբար Սարդուրի Բ-ի երկրորդ արշավանքը դեպի Էրիախի տեղի է ունեցել 749-747թթ.-ի արանքում, երրորդը՝ մ.թ.ա. 745թ.-ին կամ գուցե մի փոքր ուշ: Սրանց հետևանքը եղավ այն, որ Էրիախին ամբողջությամբ մացվեց Վանի թագավորության կազմի մեջ, հետևաբար ուրարտական իշխանության ամրապնդման նպատակով երկրում կառուցվեցին ամրություններ, թողնվեցին կայազորներ: Այնուամենայնիվ ամբողջովին և վերջնականապես իրեն ենթարկել Էրիախին Սարդուրի Բ-ին չհաջողվեց: Այդ է վկայում նաև Սարդուրիի հաջորդ և վերջին արշավանքը դեպի Էրիախի մ.թ.ա. 8-րդ դարի 40-ական թվականների ավարտին: Հարավում Ասորեստանի հետ մղվող պատերազմներից անընդհատ թուլացող Ուրարտուի համար անչափ կարևոր էր չկորցնել իր զավթած հյուսիսային երկրները և դրանք ամեն կերպ պահել իր գերիշխանության տակ: Ասորեստանին անցած հարավային տարածքների կորուստը Սարդուրի Բ-ն փոխարինեց դեպի հյուսիսային երկրներ մի քանի պատիժ արշավանքներով[11]: Ի դեպ, այս վերջին արշավանքի ռազմավարը իր հսկայական չափերով «զիջում է միայն Խորխոռյան տարեգրության երկրորդ տարվա (մ.թ.ա. 785թ.) և Սարդուրյան տարեգրության մ.թ.ա. 751-750թթ. ավյալներին, իսկ ինչ վերաբերում է հյուսիսային շրջաններից (նաև Էրիախից-Ա.Հ.) քշված անասունների գլխաքանակին, ապա այն իր նախադեպը չունի ամբողջ ուրարտական տարեգրության մեջ»[12]:

Սարդուրի Բ-ի գահակալության վերջին տարիների ռազմական իրադարձությունները լուսաբանող տարեգրության հատվածները չեն հասել մինչև մեր օրերը: Հետևաբար անհնար է որոշակի պատկերացում ունենալ այս թագավորի օրոք Էրիախի կատարված նոր արշավանքների մասին: Ուրարտական ավելի ուշ շրջանի աղբյուրներում Էրիախի (Պատմական Շիրակի) վերաբերյալ նոր տեղեկություններ չեն հանդիպում:

ЭРИАХИ-ШИРАК В УРАРТСКИХ КЛИНОПИСЯХ

Резюме *А. Айрапетян*

Эриахи (исторический Ширак) в урартских источниках впервые упоминается в клинописи об одном из карательных походов Аргишти I в Этиуни (785г. до н. э.), которая позволяет также предположить о существовании в это время Эриахи-Ширака как самостоятельного племенного объединения. После этого в течение долгого времены Аргишти I занимался в основном усмирением южных территорий своего огромного государства Урарту, и Эриахи был повторно завоеван им лишь в 774г. до н.э..

Дошедшие до нас описанния четырех из многочисленных походов его наследника Сардури II в Эриахи свидетельствуют об ожесточенных войнах, безжалостних мерах наказаний, многочисленных пленениях и расхищениях огромного масштаба, которым периодически подвергалась эта чрезвычайно важная для Урарту северная страна до 40-ых гг.VIIIв. до н.э..

---

[10] *Н. А р у т ю н я н, Биайнили (Урарту) ..., Ер.,1970, стр.258.*

[11] *Г. М е л и к и ш в и л и, Урартские клинообразные надписи, М., 1960, стр. 304.*

[12] *Н. А р у т ю н я н, Земледелие и скотоводство Урарту, Ер., 1964, стр. 194.*

Արշավիր ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑԻՆ ՇԱՀ ԱԲԱՍ I-Ի ԵՎ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արդի ժամանակահատվածում խիստ կարևորվում է հայ-իրանական հարաբերությունների զարգացման ու ամրապնդման անհրաժեշտությունը: Իրանը մեր տարածաշրջանի այն երկրներից է, որի պատմությունը սերտորեն շաղկապված է Հայաստանի պատմության հետ:

Հայ-իրանական հարաբերությունների ուսումնասիրման գործում անգնահատելի ծառայություններ է մատուցում Առաքել Դավրիժեցու «Պատմությունը», որն իր առանձնահատուկ տեղն ունի XVII դ. հայ պատմագրության մեջ: Այն մի ճշգրիտ վավերագրություն է, որտեղ ճշմարտախոս պատմիչը նկարագրում է իր ապրած կարևորագույն պատմական անցքերն ու եղելությունները:

Դավրիժեցին իր աշխատության մեջ զգալի տեղ է հատկացնում Սայր Աթոռի և պարսից արքունիքի փոխհարաբերությունների նկարագրմանը: Հայրենասեր պատմիչը դառնությամբ է նշում, թե ինչպես են ակարանում քրիստոնյա ժողովուրդները, փոխարենը Արևելքում եզորանում են պարսիկները, իսկ Արևմուտքում՝ թուրքերը: Նա մեղադրանքի սուր խոսքեր է ուղղում աշխարհիկ և հոգևոր այն առաջնորդների հասցեին, ովքեր կամովին հպատակվում են Շահ Աբասին (1587-1629) և լքում հայրենիքը: Արտագաղթը պատմիչն համարում է մեծագույն չարիք[1]:

Դավրիժեցու «Պատմության» մեջ ուշագրավ ավյալներ են պտեպանված Դավիթ ու Մելիքսեթ կաթողիկոսների մասին, որոնք մայր աթոռը ղեկավարում էին ժամանակի թելադրության ու իրենց կառողությունների համաձայն. «Յետ սորա եկած կաթուղիկոս Սուրբ Էջմիածնի տէր Դաւիթ, եւ սա հա ի նոյն գեղջէն Էջմիածնի, իբրեւ էառ սա զկաթուղիկոսութիւնն,վաթէր ըստ բերման ժամանակին եւ ըստ իւրում կայփ, որ եւ յամս ինչ վարեաց, բայց միաչդեռ էր կենդանի եւ յիշխանութեան կաթուղիկոսութեան, ձեռնադրեաց ինքն միւս եա կաթուղիկոս, որում անուն էր Մելիքսէթ, որ էր գաւառն Գառնոյ,ի գեղջէն որ ասի Աղջոց Վանք. զսա ձեռնադրեաց այնու յոսով, որպէս զի լիցի ինքեան օգնական, իսկ նա եղեւ խռչընդակն եւ հակառակ նմա որպէս եւ զկնի պատմութիւնքն ցուցանեն»:[2]Աքդյունքում, Մայր Աթոռի պարտքերն ավելանալով հասան հիսուն հազար դուրուշի: Այդ գումարն անհնարին էր վճարել և կաթողիկոսները սահիզված կամ թաքնվում էին, կամ էլ գանվում փախուստի մեջ: Ականատեսների վկայությամբ, նրանց կյանքը դարձել էր անտանելի և երկու կաթողիկոսները ստիպված էին խնդրելու Սրապիոն վարդապետին վճարելու այդ պարտքերը, փոխարենը խոստանում էին նրան բազմեցնել կաթողիկոսական աթոռին: Վերջինս, որ մեծահարուստ ու հավատացյալ անձնավորություն էր, եկավ ոչ թե կաթողիկոս դառնալու, այլ Սայթ Աթոռը փրկելու: Ամենուր ժողովուրդը ափրով ու երճվանքով էր դիմավորում նրան: 1603 թ. օգոստոսի 14-ին նրան ձեռնադրեցին Ամենայն հայոց կաթողիկոս և Սրապիոն վարդապետն ընդունեց Գրիգոր անունն ի պատիվ Լուսավորչի:[3] Էջմիածինն այսպիսի վիճակում էր, երբ Շահ Աբաս I-ը պատրաստություններ էր տեսնում Հայաստան արշավելու:

Դավիթ և Մելիքսեթ կաթողիկոսները, յուրաքանչյուրն իր հերթին, շտապեցին շահի մոտ, նպատակ ունենալով պահպանել կաթողիկոսի իրենց կարգավիճակը: Նրանք հավաստի տեղեկություններ ունեին, որ շահը նպատակադրվել էր մտնել Հայաստան ու օսմանցիներին վտարել Անդրկովկասից: Միևնույն ժամանակ, այս քայլով հայոց կաթողիկոսները նպատակ էին հետապնդում ժողովրդին ազատել օսմանյան լծից: Շահ Աբասը սիրով ընդունեց նրանց և երբ իրեն հատուկ խորաթափանցությամբ համոզվեց, որ հայերի ցանկությունները համընկնում են իր քաղաքական շահերին, ձեռնամուխ եղավ արշավանքի իրականացմանը: Սկսելով արշավանքը, պարսիկները արագորեն գրավեցին Թավրիզը: Թուրքերը նահանջելով ապաստանեցին Նախիջևանում և շրջակա հայկական գյուղերի ավերման պլաններ էին մշակում: Շահ Աբասը զորք ուղարկեց Նախիջևանի գավառի բնակչության անվտանգությունը ապահովելու համար, որից հետո թուրքերը սահիպված նահանջեցին Երևան:

Այդ տագնապալից օրերին օսմանցիները ձերբակալեցին Գրիգոր կաթողիկոսին և պահանջեցին վերադարձնել կաթողիկոսարանի պարտքերը: Վերջինիս մի կերպ հաջողվեց փրկվել: Այն ժամանակ, երբ Շահ Աբասը հաղթական կերպով մտավ Երևան, Գրիգոր

---

[1] *Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 6:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում, էջ 13:*

կաթողիկոսն ընծաներով ընդառաջ գնաց նրան: Շահը չընդունեց նրան, և կաթողիկոսը ճարահատյալ մեկնեց Ջուղա:

Առաքել Դավրիժեցին նշում է, թե ինչպես չարիքներ մտորելու մեջ հանճարեղ Շահ Աբասը, իր մոտ կանչելով Դավիթ և Մելիքսեթ կաթողիկոսներին, ասաց. «Սովորութիւն է թագաւորաց եւ կարգ, նաեւ յայտնի է ձեզ, թե որպէս երկիրս յառաջն օամանցւոց էր, եւ այժմ մեր եղեւ. սոյնպէս եւ ամենայն ինչք եւ սաացուածք նոցա՝ որ անտէր մնացել են, պարտի լինել արքունական, այսինքն միրիմալի(պետական ունեցվածք-Ա.Գ.)»[4]: Փաստորեն, շահը պահանջում էր, որ հայերն իրեն վերադարձնեն թուրքերի հարստությունները՝ իրենց պարտքերի դիմաց: Հուսահատված կաթողիկոսները ստիպված էին համաձայնվել շահի պայմաններին: Մինչև անգամ Ջուղայում պարսիկները ծերրակալեցին Գրիգոր (Սրապիոն) կաթողիկոսին և պահանջեցին հանձնել թաքցված գանձերը: Այդ պատվավոր մարդուն անարգեցին և ենթարկեցին անլուր չարչարանքների և կաթողիկոսը ճարահատյալ հանձնեց այդ գանձերն ու ազատվեց նրանց ձեռքից: Դավրիժեցին վկայում է, որ թախիծը սրտում, տրտմալի հոգով նա գնաց Վան, ապա Ամիդ, որտեղ էլ 1606թ. ապրիլի 23-ին վախճանվեց[5]:

Լինելով հեռատես քաղաքական-ռազմական գործիչ՝ Շահ Աբասն անընդհատ մտածում էր այնպիսի միջոցառումներ իրականացնելու մասին, որ բռնագաղթի ենթարկված հայերը երբևիցե ցանկություն չունենան վերադառնալու Հայաստան: Այդ նպատակով նա անընդհատ հանդիպում էր հայ հասարակության տարբեր շրջանակների ներկայացուցիչներին, լսում նրանց ցանկությունները և նոր մտորում իր հետագա անելիքները: Սովորության համաձայն՝ շահը ծպտվելով շրջում էր փողոցիցփողոց և ծանոթանում ժողովրդի հոգսերին ու նրանց հուզող խնդիրներին: Ամենուր նա փառաբանում էր շահի արդարամտությունը և խաղաղասիրությունը: Նա շեշտում էր այն հանգամանքը, որ շահն անչափ հոգատար է իրեն հպատակ հայերի նկատմամբ, բայց չգիտես ինչու հայերը ձգտում են վերադառնալ իրենց հայրենիքը: Շահն ասում էր, որ ինքը. «...առնուել խնամակալ է ազգին հայոց, որ զամենայն զգործ եւ զրանս նոցա ըստ կամաց նոցա կատարէ. եւ ընդէր ազգն հայոց ոչ են ջերմագոյն եւ յօժարկալ ի յաշխարհս Ասպահանայ. զի շէն աշխարհ է եւ ի չէլի է. իսկ յաշխարհն Հայոց Սահրաա է եւ բերան թշնամոյ, եւ հանուպազ աւար եւ գերութիւն»:[6] Նման գործելակերպով շահը ձգտում էր սիրաշահել իրանահայության լայն խավերին, նրանց պահել Իրանում և ապահովել իր երկրի բարգավաճումը: Միևնույն ժամանակ շահը քաջ գիտակցում էր, որ հայ եկեղեցին դարեր շարունակ եղել է հայ ժողովրդի միակ պաավարը և փոխարինել է պետականությանը: Նա տեղյակ էր, որ հայերը առանձնահատուկ պաշտամունք ունեն նշանավոր սրբատեղերի և հատկապես Մայր Աթոռի նկատմամբ, ուստի շահին խորհուրդ տրվեց, թե, եթե ուզում ես հայությանը պահել քո երկրում, ապա պետք է Սպահան բերվի Սբ.Գրիգոր Լուսավորչի Աջը և կառուցվի Նոր Էջմիածին. «Արդ օձն դարանակալ եւ խորամանկ թշնամին կենաց, եւ հոգւոց, եւ հաւատոց քրիստոնէից, որ յար հանապազ ի տարակուսի կայր վասն ազգին Հայոց. արդ ի նոցանէ լսեաւ զառոյգ լուծումն տարակուսացն»:[7] Եվ Շահ Աբասը հաստատապես որոշեց Մայր տաճարը քանդել և քարերը բերելով Իրան մի նոր Սբ.Էջմիածին կառուցել: Սպահանում այդ նպատակի համար նույնիսկ առանձին տարածք հատկացվեց: Հայ վաճառականության վերնախավին շահը փորձում էր համոզել, որ այս քայլը բխում է հայերի շահերից, սակայն նպատակը հայոց հոգևոր կենտրոնի ավերումն էր: Սրանք իրենց հերթին, հասկանալով շահի թաքուն մտադրության վտանգը և փորձելով ինչ որ կերպ կանխել այդ չարագործությունը, համոզում էին շահին ավելորդ ծախսեր չանել, քանզի Իրանում էլ առատ են քարը և մյուս շինանյութերը: Բարեբախտաբար, Շահ Աբասի վրացական անհաջող արշավանքը խափանեց այդ երեշավոր մտահղացման իրականացումը:

Նման քայլերով Շահ Աբասը նախադրյալներ էր ստեղծում մի կողմից թուլացնելու Մայր Աթոռի ազդեցությունը, իսկ մյուս կողմից՝ Հայաստանի ավերման ու թուլանի հաշվին շենացնելու Պարսկաստանը: Այդ օրհասական ժամանակաշրջանում երկրում կրկին սկիզբ առան երկու կաթողիկոսների հակառությունները: Դավիթ կաթողիկոսը գտնվում էր Սպահանում, իսկ Մելիքսեթը՝ Էջմիածնում: Վերջինս բնով չէր հոգում կաթողիկոսարանի կարիքները և ինչպես նշում է Դավրիժեցին՝ ապրում էր «...մեղկ ու լայն կյանքով»:[8] Նա փաստորեն Դավիթ կաթողիկոսին հեռացրել էր կաթողիկոսական իշխանությունից և ձգտում էր միանձնյա ղեկավարել Մայր Աթոռը: Սակայն հայ եպիսկոպոսները, դժգոհ Մելիքսեթի գործողություններից, առաջարկեցին Դավիթին վերադառնալ և գրավել կաթողիկոսական աթոռը: Շահ Աբասը նույնպես համամիտ էր այդ մտքին և հրամայեց Մելիքսեթ կաթողիկոսին ենթարկել կտտանքների, որոնց ժամանակ նրան պարտադրեցին նույնիսկ ուտել իր բսկ թևերից կարված

---

[4] *Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, էջ 28:*
[5] *Նույն տեղում, էջ 29:*
[6] *Նույ տեղում, էջ 199:*
[7] *Նույն տեղում ,էջ 200:*
[8] *Նույն տեղում, 29:*

միսը: Միայն Ամիրգունա խանի միջամտությամբ կաթողիկոսն ազատվեց անխուսափելի մահից: Կատարած երեք հանցանքների համար շահը տուգանեց Մելիքսեթին երեք հարյուր թումանով: Նախ, որ նա թույլ էր տվել ֆռանկներին (իմա. կաթոլիկներին) տանել սրբուհի կույս Հռիփսիմեի նշխարները, որի համար մինչև անգամ կաշառք էր ստացել: Երկրորդ, որ աքսորից վերադարձել էր առանց իր թույլտվության և գիտության ու վարում էր կաթողիկոսական իշխանությունը: Երրորդ, որ Սպահանում առանց շահի համաձայնության իրականացրել էր կաթողիկոսի պարտականությունները: Մելիքսեթը խնդրեց տուգանքի վճարումը երկարաձգել երեք տարով, որին շահը համաձայնություն տվեց: Մելիքսեթին վերադարձվեց կաթողիկոսական գահը, և տուգանքի վճարման ծանր բեռը փասաորեն ընկավ Մայր Աթոռի ուսերին: Գնալով պարտքն ավելանում էր և հասավ վեց հարյուր թումանի: Տեսնելով, որ ի վիճակի չէ այն վճարելու, Մելիքսեթ կաթողիկոսն ուղիներ սկսեց փնտրել պաշտոնից հրաժարվելու համար: Նա Սահակ անունով եպիսկոպոսին, որն իր եղբորորդին էր, հապշտապ ձեռնադրեց կաթողիկոս, իսկ ինքը դիմեց փախուստի: Դավրիժեցին վկայում է, որ նա անցել է օսմանցիների երկիրը, ապա Իլով (Լվով-Ա.Գ.) քաղաքը, որտեղ և մահացել է:[9]

Իսկ մինչ այդ Դավիթ կաթողիկոսը շահից թույլտվություն է խնդրում Սպահան մեկնելու համար և ստանում է նրա համաձայնությունը: Շահը նույնիսկ նրան նվիրում է մի գյուղ՝ ապրուստը հոգալու համար: Հետագայում Սահակ կաթողիկոսը նույնպես, չընդունվելով ջուղայեցիների կողմից և ի վիճակի չլինելով վճարել պարտքերը, դիմում է փախուստի:

Նկարագրված իրադարձություններին ականատես և ականջալուր պատմիչը քաջ գիտակցել է Շահ Աբասի քաղաքականության էությունը՝ կապված հայ առևտրական դասի և հոգևոր վերնախավի հետ: Դավրիժեցին խիստ կարևորել է հայ եկեղեցու դերն ու նշանակությունը: Ամենևին պատահական չէ, որ Լեոն գրում է.«Դավրիժեցին մի հավատացյալ վանական է, լցված վառ սիրով դեպի հայրենի աշխարհը, դեպի ազգային մտավոր-կուլտուրական սպացվածքը ներկայացնող եկեղեցին: Այդ սերը նրան դարձնում է երկարաբան, ուշադիր դեպի բոլոր մանրամասնությունները, դեպի ամեն մի հանգամանք, որ եարազատ ժողովրդի նահատակության փասան էր ցոլացնում»:[10]

АРАКЕЛ ДАВРИЖЕЦИ О ВЗАИМООТНОШЕНИЯХ ШАХА АББАСА И АРМЯНСКИХ КАТОЛИКОСОВ

Резюме *А.Гаспарян*

В сообщении сделана попытка анализа взаимоотношений Шаха Аббаса и армянских католикосов на основе свидетельств Аракела Даврижеци.Отмечено четкое представление историка о роли и значении св. Эчмиадзина, об антиармянской сути политики Шаха Аббаса.Труд Аракела Даврижеци может рассматриватъся как достоверный источник по истории армяно-иранских взаимоотношений XVII в.

---

[9] *Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, էջ 228:*

[10] *Լ և ո , Երկեր, հ. 3, Եր., 1973, էջ 349:*

Արթուր ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ «ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՆՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ԽՄԲԱԿԸ ԵՎ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

XX դ.սկզբին Ալեքսանդրապոլը դարձել էր հայ ազատագրական շարժման կենտրոններից մեկը։ Քաղաքում և գավառում գործում էին բազմաթիվ ազատագրական և հայրենասիրական խմբակներ,որոնց գործունեությունը կրում էր կազմակերպված և համակարգված բնույթ: Այդ խմբակների մեջ իր ուրույն էթնիկական կազմով և գործունեության յուրահատուկ մեթոդներով առանձնանում էր «Ճշմարտություն որոնողների ընկերություն» կոչվող խմբակը,որն ստեղծվել էր 1898թ. Գևորգյան ճեմարանի շրջանավարտ Սարգիս Պողոսյանի և Ռիղլիարի ճեմարանի շրջանավարտ, հունադավան հայ Գեորգի Գյուրջիևի կողմից[1]:

Խմբակում ընդգրկված էին Ալեքսանդրապոլում բնակվող այլազգիներ՝ ռուսներ, ուկրաինացիներ, լեհեր, հույներ, ասորիներ[2]:Խայտաբղետ էր նաև խմբակի սոցիալական կառուցվածքը: Այստեղ կային ազնվականներ, քաղքենիներ, եկեղեցականներ, զինվորականներ, ուսուցիչներ,արհեստավորներ,բանվորներ,որոնք համախմբվել էին «ունիվերսալ համամարդկային ճշմարտություն» գտնելու գաղափարի շուրջ և իրենց անվանում էին «Էզոթերիկ քրիստոնյաներ»[3]: Անչափ մեծ էր խմբակի անդամների հետաքրքրությունը հնագիտության նկատմամբ: Սարգիս Պողոսյանի անմիջական ղեկավարությամբ անցկացվում էին հնագիտական ուսումնասիրություններ, որոնք ներառնում էին հնագիտական և ազգագրական արշավախմբերի կազմակերպում, հնագույն հայկական ձեռագրերի ու վիմագրերի հավաքում և վերծանություն, գիտական բանավեճերի անցկացում, Հայ առաքելական եկեղեցու պատմության ուսումնասիրություն, հայագիտական այլընտրանքային համակարգի ձևավորում[4]: «Ճշմարտություն որոնողների ընկերությունն» արդեն մեծ համբավ ուներ թե՛ քաղաքում և թե՛ գավառում: Նրա աշխատանքներին անդամագրված էին տասնյակ թղթակից-անդամներ Կարսից, Մարիղամիշից, Վաղարշապատից և Թիֆլիսից[5]:

Հայտնի է, որ խմբակի կազմակերպած դասախոսություններին իրենց ակտիվ մասնակցությունն են ցուցաբերել Սերգեյ Մերկուրովը, Ավետիք Իսահակյանը,Գրիգոր Խալաթյանցը, Թորոս Թորամանյանը, Գարեգին Խաժակը և այլոք[6]: Մինչև 1903թ. խմբակը ձեռնարկել է 2 գիտական արշավախումբ դեպի Իրան և Թուրքիա,նպատակ հետազոտելով հայտնաբերել նախաեկեղեցական հայ քրիստոնեական համայնքների մասին գրավոր վկայություններ, հիշատակություններ: Խմբակի անդամներին առանձնապես հետաքրքրում էին Առաջավոր Ասիայի անմատչելի վայրերում դեռևս պահպանված նեստորական (ասորական) և սուֆիական միաբանությունները,որոնք տիրապետում էին հարուստ գրապահոցների: Իր հիմնական՝ կրոնափիլիսոփայական գործունեությանը զուգահեռ, «Ճշմարտություն որոնողների ընկերությունը» վարում էր նաև զգալի գիտահանրամատչելի գործունեություն: Խմբակի անդամները մասնակցում էին ամենօրյա աշուղական մեջլիսներին, քաղաքային ակումբներում անցկացվող բարեգործական միջոցառումներին, հեռու չէին մնում հասարակական-մշակութային անցուդարձից:

Խմբակի անդամների համար բնավ էլ խորթ չէին հայերի այն ազատագրական մղումները, որոնք այդ օրերին համակել էին համարյա բոլորին: Ս.Կուկունյանի արշավանքից սկսած՝ Ալեքսանդրապոլը դարձել էր ազատագրական շարժման կարևորագույն հենակետ: Այստեղ էին կազմակերպվում, զինավարժեցվում և դեպի Արևմտահայաստան ուղարկվում հայդուկային խմբեր: Այստեղից էր իրականացվում նաև այդ խմբերի համար անհրաժեշտ զենքի և զինամթերքի հայթայթումն ու առաքումը: Հայտնի էին բազմաթիվ ալեքպոլցի խիզախներ, որոնք՝ վտանգի ենթարկելով իրենց կյանքը, տեղի ռուսական զինապահեստներից զենք էին ձեռք բերում և հասցնում Երկիր: Նրանց մեջ աչքի էին ընկնում Տուրրախը (Հարություն Կիրակոսյան), Ջալլադը (Երվանդ Բարերյան) և Պադվալի Վաղոն (Վաղարշակ

[1] *В. К р а в е ч е н к о, Вестник русского мистицизма, М., 1997, стр. 242.*
[2] *Г. Г у р д ж и е в, Встречи с замечательными людьми, Минск, 1999, стр. 231.*
[3] *К. Н о т т, Учение Гурджиева, М., 1995, стр. 84.*
[4] *Г. Г у р д ж и е в, նշվ. աշխ., էջ 180:*
[5] *В. К р а в ч е н к о, նշվ. աշխ., էջ 244:*
[6] *С. М е р к у р о в, Записки скульптора, М., 1953, стр. 147.*

Սիմոնյան), որոնց ջանքերի շնորհիվ 1900-1903թթ. անխափան գործում էր Երկրի հայդուկների զենքի մատակարարման Ալեքսանդրապոլ-Կարս-Բասեն-Խնուս-Սասուն երթուղին[7]:

1903թ. ռուսական իշխանությունները կտրուկ փոխարինեցին իրենց վերաբերմունքը հայ ազատագրական շարժման նկատմամբ՝ անցնելով դրա բացահայտ հետապնդմանը և ճնշմանը: Հունիսի 12-ի հայտնի հրովարտակից հետո, գոլիցինյան պատժամիջոցները ուղղորդվեցին ազատագրական շարժման մասնակիցների դեմ: 1903թ. սեպտեմբերին գլխովին ոչնչացվեց ռուս-թուրքական սահմանն անցնելու փորձ կատարող Խանի (Բարսեղ Թիրաքյան) «Կայծակ» հեծելախումբը, որից հետո ռուսական սահմանապահները կարգադրություն ստացան փակել սահմանը իրենց երկրայլներին օգնության շտապող արևելահայերի առջև: Երկրում գործող հայդուկական խմբերի համար ստեղծվեց օրհասական վիճակ: Լիովին խզվեց նրանց և արևելահայության միջև կապը: Հայ ազատագրական շարժումը և մասնավորապես, Սասունում գործող ապստամբական ուժերը հայտնվեցին ոչնչացման իրական վտանգի առջև: Հուսահատ այդ իրադրության մեջ հայտնված Շարժման ղեկավարության համար պարզ դարձավ, որ հարկավոր է հրաժարվել Երկիր ներթափանցելու ավանդական, լեգալ միջոցներից, անցնել մի նոր, ավելի արդյունավետ մարտավարության և հնարավորին չափ արագորեն վերականգնել օպերատիվ կապը Արևմտահայաստանի հետ: Ընտրվում էին այդ կապի նոր տարբերակներ: Այդ ուղղությամբ առանձնապես եռանդուն էր գործում ՀՅԴ Ալեքսանդրապոլի կոմիտեն՝ Տարագրի (Մարտին Շաքիրյան), Զազայանի (Գարեգին Խաժակ) և Եղիշե Թոփչյանի գլխավորությամբ[8]: Ահա հենց նրանց էլ 1903թ. նոյեմբերին, Սասունի հայդուկների հետ կապը վերականգնելու առաջարկությամբ դիմեց «Ճշմարտություն որոնողների ընկերություն» խմբակի ղեկավար Ս.Պողոսյանը[9]:

Պողոսյանի տարբերակն աչքի էր ընկնում իր անսովորությամբ: Դրա էությունը կայանում էր հետևյալում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռուսական կայսրությունում ապրող մյուս ազգությունների ներկայացուցիչներին առաջվա նման անարգել թույլատրվում էր անարգել անցնել ռուս-թուրքական սահմանը, իսկ խմբակի անդամների մեծ մասը այլազգիներ էին, առաջարկվում էր նրանցից կազմավորել երկու խումբ, որոնք ծպտված կմեկնեին Թուրքահայաստան: Գործողության հաջողությունն ապահովելու նպատակով խմբերը մեկնելու էին տրամագծորեն հակառակ երթուղիներով: Թե՛ ցարական և թե՛ թուրքական իշխանությունների ուշադրությունը շեղելու և կասկած չհարուցելու նպատակով, խմբերից յուրաքանչյուրի համար գործարկվելու էր ուրույն առասպել: Առաջին խումբը, որի կազմի մեջ մանելու էին ինքը՝ Ս.Պողոսյանը և հունահայ (ռում) Գ. Գյուրջիևը, քողարկվելու էր որպես թափառաշրջիկ դերվիշական «Մեվլևիի» միաբանության անդամների խումբ, քանզի այդ միաբանությունը մեծ հեղինակություն էր վայելում ոչ միայն Թուրքիայում, այլև բոլոր մահմեդական երկրներում և օգտվում էր անարգել շրջագայելու արտոնությունից[10]: Երկրորդ խումբը ուղևորվելու էր որպես միջազգային հնէաբանական արշավախումբ, որը ցանկանում էր ուսումնասիրել Աղիաբենեի հուշարձանները: Խմբի կազմի մեջ մտնում էին ռուս Յու.Լյուբովեցկին, ուկրաինացի Պ.Կարպենկոն և ասորի Ա.Եղովը: Առաջին խումբն ընթանալու էր Ալեքսանդրապոլ-Կաղզվան-Մուշ-Մծբին երթուղով, քանի որ, որպես ճանապարհորդության նպատակ էր հայտարարված Կորդուքում և Հյուսիսային Միջագետքում միջին դարերում գործած սուֆիական «Սարմունգյան եղբայրներ» կոչվող միաբանության մասին վկայությունների հայտնաբերումը[11]: Երկրորդ խումբը ճանապարհվելու էր Ալեքսանդրապոլ - Նախիջևան - Սալմաստ - Ադիաբենե երթուղով[12]:

Հայ ազատագրական շարժման պատմության մեջ այս փաստն ուշագրավ է արդեն նրանով, որ հայերի կողքին դաշնակ շարունակ ապրող այլազգիների ներկայացուցիչներն էին հայտնում հայերի ազատագրական պայքարին աջակցելու իրենց պատրաստակամությունը: «Ճշմարտություն որոնողների» խմբակի առաջարկությունը քննարկելու նպատակով ՀՅԴ Ալեք-Պոլի կոմիտեն 1904թ. ապրիլին հրավիրեց հատուկ Զինվորական խորհուրդ, որին մասնակցում էին ազատագրական շարժման այնպիսի հայտնի գործիչներ, ինչպիսիք էին Սիմոն Զավարյանը, Արամ Մանուկյանը,Գայլ Վահանը (Սիմաս Տոլպաշյան) և Կայծակը (Վաղարշակ Բաղդասարյան)[13]: Խորհրդակցությունը լիովին հավանություն տվեց Պողոսյանի տարբերակին: Միևնույն ժամանակ,շեղման նպատակով, որոշվեց Երկիր

---

[7] Հ. Տ ա ս ն ա պ ե տ ե ա ն, ՀՅԴ իր կազմութենէն մինչեւ Ժ ընդհանուր ժողով, Աթէնք, 1988, էջեր 236,245:

[8] Նույն տեղում, էջ 63:

[9] Г. Г у р д ж и е в, նշվ. աշխ.,էջ 210:

[10] Дж. Б е н н е т, Свидетель или история поиска, М., 1999, стр. 37.

[11] Г. Г у р д ж и е в, նշվ. աշխ., էջ 95:

[12] Նույն տեղում, էջ 232:

[13] Հ. Տ ա ս ն ա պ ե տ ե ա ն, նշվ. աշխ., էջ 188:

ուղարկել ևս մի խումբ,որը նույնպես ծպտյալ կարգավիճակով պետք է ուղարկվեր դեպի Վասպուրական: Խմբի կազմի մեջ մանում էին Կոմսը (Վահան Փափազյան) և Իշխանը (Նիկոլ Պողոսյան)[14]: Խմբերը ճանապարհ ընկան 1904թ. ապրիլին: Պողոսյանի խումբը Սասուն հասավ երկու ամիս անց, Անդրանիկին հասցնելով Կենտրոնի հանձնարարական նամակները, հրահանգները և զենք գնելու համար դրամ: Դրանից հետո Ս.Պողոսյանը և Գ.Գյուրջիևը մեկնում են Մշրին և աեղի վարդապետի մոտ երկու ամիս հյուրընկալվելուց հետո անցնում Ջմյուռնիա, փայլուն կերպով կատարելով իրենց առաքելությունը[15]: Հաջողության է հասնում նաև Կոմսի խումբը[16]:

Այսպիսով, «Ճշմարտություն որոնողների» խմբակի առաջարկած մարտավարական նորամուծության շնորհիվ ոչ միայն հաջողվում է վերականգնել Կենտրոնի և Սասունի ապստամբների միջև կապը, այլև հայ ազատագրական շարժումը դուրս բերել այն ճգնաժամային վիճակից, որի մեջ նա հայտնվել էր 1903-1904թթ.:

АЛЕКСАНДРОПОЛЬСКОЕ "ОБЩЕСТВО ИСКАТЕЛЕЙ ИСТИНЫ" И АРМЯНСКОЕ ОСВОБОДИТЕЛЬНОЕ ДВИЖЕНИЕ

Резюме *А. Никогосян*

В середине 1903 г. царские власти резко ухудшили свое отношение к армянскому освободительному движению и стали препятствовать проходу повстанческих отрядов в Турцию.В этой ситуации свою помощь в деле восстановления оперативной связи между революционным Центром и сасунскими повстанцами, предложило действующее в Александрополе "Общество Искателей Истины". В апреле 1904 г. члены общества С.Погосян и Г.Гурджиев успешно прошли в Сасун и восстановили связь с повстанцами, оказав, тем самым, неоценимую услугу армянскому освободительному движению.

[14] *Նույն տեղում, էջ 241:*
[15] *Г. Г у р д ж и е в, նշվ. աշխ., էջեր 105-107 :*
[16] *Դ. Տ ա ն ա պ ե տ ե ա ն, նշվ. աշխ., էջ 241:*

Համլիկ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա. ՏԻԳՐԱՆՅԱՆԻ «ՔՅՈՐՕՂԼԻ» ԱՆԱՎԱՐՏ ՕՊԵՐԱՆ

Արմեն Տիգրանյանի ստեղծագործությունն իր մեջ ներառել է հայ ազգային օպերային արվեստի կայացման բարդ գործընթացի կարևոր քայլեր: «Անուշ» օպերայի բեմահաստատումը 1912-1935 թթ.ընթացքում՝ դրա խոսուն վկայությունն է: Սակայն պետք է նշել, որ առայսօր տակավին լուսաբանված ու գիտական քննության առնված չէ կոմպոզիտորի ամբողջական ժառանգությունը, և որոշ արխիվային նյութեր ասպարեզ են բերում ստեղծագործական նոր շերտեր,լույս սփռելով նրա կենսագրության սակավոտ էջերին:

1930-ական թվականներին Ա.Տիգրանյանի գործունեությանն անդրադարձող գրեթե բոլոր ուսումնասիրություններում կարևորվում են «Անուշ» օպերայի նոր՝ բիմական տարբերակի ստեղծման և Մոսկվայում հայ արվեստի տասնօրյակին ներկայացվելիք օպերայի վերախմբագրման աշխատանքները: Մինչդեռ, համաձայն մի շարք արխիվային նյութերի, 1936 թվականին կոմպոզիտորը սկսել է «Քյորօղլի» օպերայի ստեղծման աշխատանքները: Նշենք, որ այս մասին համառոտ ակնարկված է կոմպոզիտորի կյանքին նվիրված միակ գրքույկում[1]: Սակայն որոշ ժամանակ անց այդ գործը մնում է անավարտ: Ավելին, կոմպոզիտորը միտումնավոր դադարեցրել է աշխատանքը այդ ուղղությամբ:

Արխիվային նյութերի[2] քննությունը ցույց է տալիս, որ «Քյորօղլի» օպերան Ա.Տիգրանյանը սկսել է գրել ՀՍԽՀ ժողկոմխորհրդի խորհրդին կից Արվեստի վարչության պատվերով՝ 1936 թվականին: Օպերայի բեմելը նախատեսվել է 1938-ին և հատուկ ուշադրության է արժանացել Հայաստանի օպերային թատրոնի տնօրինության կողմից[3]:

Առանձին գրառումներ հավաստում են, որ կոմպոզիտորը մեծ հետաքրքրությամբ և ոգեշնչումով է սկսել այս աշխատանքը, որի հետագա ընթացքը լուսաբանող նյութերը, սակայն, խիստ ամբողջական են: Մի քանիսում ուղղակի հիշատակված է, որ մինչև 1939թ. կոմպոզիտորը հետևողաբար աշխատել է ստեղծագործության վրա: Այսպես, Վարդգես Տայանին ուղղված նամակում նա գրել է. «Քյորօղլուց բավական բան գրել եմ : Լիբրետոն ամբողջությամբ ձեռքիս տակ է»[4]:

1937թ. Հայաստանի պետական օպերայի տնօրինությանը ներկայացրած հայտարարագրում, դժգոհելով Երևանում իրեն հատկացնելիք բնակարանի ուշացնելուց, նա նշել է.«Մինչև այսօր էլ Յերևան գնալ գալով չես հնարավորություն չունեցա «Քյորօղլի» օպերայի վրա աշխատելու և ժամկետին հասցնելու: Այս երևույթը նույնպես անդրադառնում է թե՛ իմ նյութականի և թե՛ բարոյականի վրա, հետաձգելով «Քյորօղլի» օպերայի բեմադրությունը»[5]:

Բացատրագրերից մեկում կոմպոզիտորն ուղղակի նշել է, որ որոշ ընդհատումներից հետո, 1939թ. նա վստահորեն ավարտելու է օպերան[6]: Սակայն այլ գրառման մեջ ներկայանում է բոլորովին այլ իրավիճակ, որը թույլ է տալիս եզրակացնելու, որ օպերայի հետագա ճակատագրում վճռորոշ դեր է խաղացել լիբրետոյի հեղինակի՝ Վահան Տեր-Առաքելյանի անձնական գործոնը: Կոմիտասի նշանավոր սանի՝ կոմիտասյան համերգների մեներգիչ, Պետերբուրգում ուսանած և տեղի Մարիինյան թատրոնի երգիչ, ռազմական-քաղաքական գործիչ, առաջին աշխարհամարտի, Սարդարապատի ճակատամարտի հերոս, Կարսի ռազմաճակատի շտաբի պետ, բազմաթիվ մարտական շքանշանների արժանացած գնդապետ, հմուտ լրագրող, թարգմանիչ, բանաստեղծ Վահան Տեր-Առաքելյանը 1936թ. աշնանը ձերբակալվել է Թիֆլիսում և 1937 թվականին աքսորվել Կոմիի հանրապետության Ուխտա քաղաքի քաղբանտարկյալների ճամբար[7]:

Ա.Տիգրանյանի արխիվում «Քյորօղլի» օպերայի լիբրետոյի համառոտ բովանդակության մեջ կատարված է հետևյալ գրառումը.««Քյորօղլի» լիբրետոն հիմնականում կազմել է Վ.Տեր-Առաքելյանը, որը գտնվում է նրա կնոջ մոտ:Այդ լիբրետոն նա գրեց Հայ արվեստի

---

[1] *Ռ.Ա թ ա յ ա ն, Մ.Մ ու ր ա դ յ ա ն, Ա.Տիգրանյան, Եր., 1955, էջ126:*

[2] *ԳԱԹ, Ա. Տիգրանյանի ֆոնդ (այսուհետ՝ Տ Ֆ.): Ֆոնդի նյութերը սիրով տրամադրել են ԳԱԹ-ի տնօրեն Հ. Բախչինյանը և ԵՊԿ-ի պրոֆեսոր Ա. Բուդաղյանը:*

[3] *ԳԱԹ, Տ Ֆ, 259:*

[4] *ԳԱԹ, Նամակ Վ. Տայանին, Թիֆլիս, 25 հոկտեմբերի 1936թ.:*

[5] *ԳԱԹ, Տ Ֆ, 279:*

[6] *ԳԱԹ, Տ Ֆ, 401:*

[7] *Տե՛ս. Խ. Խ ա ֆ ա ր յ ա ն, Վ. Տեր-Առաքելյան, Եր.,1998, էջ 14:*

վարչության պատվերով, որի հիման վրա ինձ հետ պայմանավորվեց նույն վարչությունը, ռռահսգի ես օպերա գրեմ:Սակայն հանգամանքների դասավորության պատճառով մի ժամանակ առաջարկվեց ինձ բարեփոխել նույն լիբրետոն և ներկայացնել:Ես ակամա ձեռնարկեցի, մասնությունն ունենալով հետագայում, որ բերևս կհաջողվի օգտագործել իսկական Վահանի լիբրետոն»[8]:

Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանում «Քյորօղլի» օպերայի նոտային ձեռագրերը թվագրված են 1936-ով: Ամենայն հավանականությամբ, կոմպոզիտորը դադարեցրել է աշխատանքը՝ հուսալով, որ Վ.Տեր-Առաքելյանի բանտարկությունը ժամանակավոր է, և նրա վերադարձից հետո իրենց միացյալ աշխատանքը ավարտին կհասցվի: 1941թ. գարնանը նշանավոր հայ գործիչը վախճանվել է հեռավոր Ռիխասայում: Այդժամ Ա.Տիգրանյանը վերջնականապես դադարեցրել է աշխատանքը և օպերայի լիբրետոյի ձեռագիրը հանձնել Վ.Տեր-Առաքելյանի կնոջը: Վերոհիշյալ գրառումը ավարտվում է հետևյալ տողերով. «Հիշատակում եմ, որ այս ձևով կազմած «Քյորօղլի» լիբրետոն սեփական գործ չեմ համարում թեկուզ զանազան փոփոխությունների ենթարկված իմ կողմից: Սույն աշխատանքը չեմ վերջացրել, ընդամենը երկու անար է: Վ.Տեր-Առաքելյանի լիբրետոն, որ ինձ էր ավել (հինգ անտր) երաժարակելու համար, սույն թվի գարնանը Մ.Ֆ.Տիգրանյան-Տեր-Սարաիրոսյանի միջոցով հանձնեցի Վ.Տեր-Առաքելյանի կնոջը: 1941թ. նոյեմբեր, Թիֆլիս»:

1930-ական թթ. իրականության համատեքստ քաղաքականացման պայմաններում, ըևականարար, Ա.Տիգրանյանը կատարված անարդարությունններին ընդդիմանալ անկարող էր: Քաջ գիտակցելով այդ, նա մի շարք արհեստածին պատճառներ է գտնում աներաժեշտ ժամանակ շահելու համար: Այդ են ապացուցում վերը հիշատակված հայտարարությունը՝ Երևանում իրեն բնակարան հատկացնելու մասին, ինչպես նաև երկու այլ ուշագրավ գրություն:

Ինչպես նշեցինք, պետական օպերայի տնօրինությունը մեծապես շահագրգռված է եղել գոնե 1938թ. բեմադրելու օպերան: Ավելին, Ա.Տիգրանյանին տրվել է համապատասխան հոնարար՝ օպերան ավարտելու համար: Մեր ձեռքի տակ է յուրօրինակ մի բացատրագիր, որը Ա.Տիգրանյանը ներկայացրել է պետական օպերայի տնօրինությանը՝ անտարակույս՝ ի պատասխան գործը ավարտված տեսնելու մասին վերջինիս հերթական հարցապնդումներին: Ամենայն հավանականությամբ (ինչը դժվար չէ կռահել փաստաթղթի ենթատեքստից), կոմպոզիտորին մեղադրել են սահմանագործության ավարտի ձգձգման համար, որի երևույթական պատճառներից մեկը համարել են նաև այն, որ արդեն 1937թ. Ադրբեջանում բեմադրվել էր Ու.Հաջիբեկովի համանուն օպերան:

Ներկայացնենք բացատրագրի բնօրինակը. [9]

А. Тигранян, Объяснительная записка к опере и либретто "Короглы"

На протяжении многих веков Короглы живет в народе, как исторический народный герой.Он воспевается народом подобно Давиду Сасунскому, как защитник угнетенных масс и ярый непримиримый враг поработителей ханов, беков (князей).

В уста народного героя Короглы, народом же вложено то мировоззрение, которое вытекало нз политических и социальных условиий, окружающих в то время порабащенные массы.

Короглы воспевается и до сих пор народами Закавказья и вне его.Каждый народ считает Короглы героем, вышедшим из своей среды, однако, совершенно без националистических тенденций, в чем и великая ценность эпоса Короглы(...)

Какой же национальности принадлежал на самом деле Короглы?.Этот вопрос нас для оперы мало иитересует.Это дело-историков и исследователей.

Эпоху Короглы в опере взято XII-XIV века, т.е.- до появления огнестрельных оружий.К тому есть предпосылка в одном из вариантов сказа о Короглы, где он говорит:"после того, как появились эти оружия, рыцарство теряет свое значение, ибо врага своего можешь разить, не вступая с ним в бой лицом к лицу".Говорят, что появление этих оружий совпало с последними годами его жизни.

В опере он является борцом за свободу/как и в сказах/, окружающий себя людьми различных национальностей: из армян, азербайджанцев, иранцев, курдов и др..(...)

Отвечая на вопрос о существовании в Азербайджанской Республике оперы того же названия, я заявляю следующее:

---

[8] *ԳԱԹ, Տ Ֆ, 183:*

[9] *ԳԱԹ, Տ Ֆ, 401:*

Исходя из этнографических данных, принимая во внимание эмоциональные моменты данного народа и подойдя к фольклорным вопросам вплотную, я нохожу сюжет Короглы не толко близким к армянским массам, но и стопроцентно родным.Об этом свидетельствуют собранные из наших деревень более 30-ти вариантов сказа Короглы, которые сейчас переданы для издания.

За исключением общности идеи, все остальное в моей опере, как-то: ход действий, эпоха, развертывающиеся события, экспозиция и развязка, совершенно отличны от азербайджанской оперы того же названия. В защиту себя приведу аналогичный пример: так называемые оперетки-Асли Кярам, Лейли Меджнун, Ашуг Гариб и др. шли и на армянской сцене и на азербайджанской, в разных вариантах и посещались одинакого любовно.(...)

Приведенные аргументы дают мне право уверенно работать над этой оперой, начатой в 1936году, а в последствии прерванной по другим причинам.

А.Тигранян 1939г. 8 январь

Պետական օպերայի անօրենի 1939թ. հունիսի 26-ի մի գրությունից պարզվում է, որ կոմպոզիտորն ինքը, այլևս չհանդուրժելով օպերայի հետագա ձգձգումները, առաջարկել է «Քյորօղլի» օպերան փոխարինել «Լոռեցի Սաքո» բալետով և առացել է դրա վերաբերյալ համաձայնագիր[10]:

Իսկ 1941թ. Վ.Տեր-Առաքելյանի մահից հետո կոմպոզիտորը վերջնականապես հրաժարվել է օպերայի ստեղծման հետագա աշխատանքներից, մեր համոզմամբ՝ անհանդուրժելի համարելով իր կողմից Վ.Տեր-Առաքելյանի լիբրետոյի վերախմբագրումը, որը նրա կարծիքով՝ կաղավերեր վաղամեռիկ հեղինակի վեհ հիշատակը: ԵՎ մարդկային բարձրագույն արժանիքներին հավատարիմ՝ Ա.Տիգրանյանը վերջնականորեն դադարեցնելով արժեքավոր ու անչափ հետաքրքիր այդ ստեղծագործության վրա տարվող աշխատանքները, 1940 թվականից ձեռնամուխ եղավ նոր՝ «Դավիթ Բեկ» օպերայի ստեղծմանը:

Ինչպես ներկայացված էր անավարտ օպերային առնչվող բացատրագրում, հեղինակները նախատեսնում էին ստեղծել ժողովրդական-հերոսական յուրօրինակ մի փիպերգություն, որը մի նոր՝ բեմական ասպիճանի էր հասցնելու ժողովրդական և աշուղական արվեստի մնայուն արժեքներ: Դրա խոսուն վկայությունն են «Քյորօղլի» օպերայի լիբրետոյի պլանը՝ կազմված 1935թ. Թիֆլիսում Վ.Տեր-Առաքելյանի կողմից[11] և Ա.Տիգրանյանի գրչին պատկանող շուրջ 20 ուրվագիր պատառիկներ:

Լիբրետոյի պահպանված պլանից ակներև է դառնում որ, «Քյորօղլի» օպերայի ֆաբուլան հյուսված է էպոսի տարբերակներից մեկի հիման վրա: Բովանդակությունն ընդգրկում է Ռուշանի՝ Քյորօղլի վերանվանվելու պատումը, Չամլիբել ամրոցում հաստատվելը, իբրև հայոց Բագրատ իշխանի որդի՝ Արմեն իշխան, Նուրեդդին խանի պալատ այցելելը և հետո նրա դստերը՝ Նիգարին առևանգելը, Ղռաթ ձին քաշալ Համզային տանելը և իբրև աշուղ, ծպտված՝ խանի պալատում ժողովրդի հսկա բազմության հետ սարած ինչպես հաղթանակը: Լիբրետոյի մեծագույն արժեքը աշուղական պատումների և դրանց ոգուն խխա հարազատ հեղինակային տարբերակների միահյուսումն է[12] :Հորինվածքի բազմապլան, հագեցված բովանդակությունը, կուռ միասնականությունը, դրամատուրգիական պաաշաճ հանգուցալուծումները, Վ. Տեր-Առաքելյանի՝ օպերային երգչի, բանահավաքի, բանաստեղծի, գրականագետի, քննադատի մեծագույն հայրենասերի ստվածա-

---

[10] *ԳԱԹ, Տ Ֆ ,259:*

[11] *ԳԱԹ, Վ. Տեր-Առաքելյանի ֆոնդ, 644:*

[12] *.Նույն տեղում՝*

Առաջին գործողության չորրորդ պատկերում Քյորօղլին երգում է.

Բազեն արծվից վորս չի տանի,
Թեկուզ խիզախ այդ փորձն անի,
Թույլն ուժեղի գերին է միշտ,
Աչքերում լաց, սրտումը վիշտ (ԳԱԹ, Վ.Տեր-Առաքելյանի ֆոնդ, 644, էջ13):

Իններորդ պատկերում գյուղացիները այսպես են դիմում Քյորօղլուն.

Տար մեզ կռվի, տար մեզ մահվան,
Սատաղ լինենք քո քաջ անվան,
Լավ է մեռնենք, զենքեր առած,
Քան թե ապրենք, ստրուկ դառած:
Տար մեզ կռվի, տար մեզ մահվան,
Ջան՝ արյունոտ զալիք որվան (ԳԱԹ, Վ.Տեր-Առաքելյանի ֆոնդ, 644, էջ 30):

շնորհ տաղանդի արգասիքն էին: Անառարկելի, Ա.Տիգրանյանի երաժշտությունը կդառնար այսպիսի լիբրետոյին համարժեք դրսևորում:

Կոմպոզիտորի մտահղացմամբ՝ օպերան սկսվելու էր մեծակերտ նախերգանքով, մեծ սիմֆոնիկ նվագախմբի և քառաձայն երգչախմբի կատարմամբ: Պարտիտուրից պահպանված ընդամենը մեկ թերթից ակներև է օպերայի երաժշտական դրամատուրգիայում գլխավոր հերոսի մեղեդի-խորհրդանիշի (իմա՝ լայտթեմայի) առկայությունը: Դղյձև փոխաջին խմբի նվագամասում ժողովրդական հանրահայտ «Քյորօղլի» երգի մեղեդին է, որն, ի դեպ, այդ տարիներին արժեքավորվել էր նաև Ա.Խաչատրյանի ստեղծագործական տեսադաշտում՝ «Պեպո» կինոնկարի եզրափակիչ կադրերում: Վերջինիս բնորոշ է հիպոդորիական-էոլական լադի յուրահատուկ դրսևորումը՝ սարին քառալարի օկտավա վեր տեղաշարժով, որի շնորհիվ մաժորից կատարվում է անսպասելի մինոր եզրահանգում: Ձեռագիր էսքիզներից մեկում նույն մեղեդին ներդաշնակված է նորովի: Վերջինիս իմիտացված անցկացումը առաջին պատկերի նվագամասում, որը Ռուշանի և Բին Ամիլի երկխոսության տեսարանն է, վերջնահաստատում է այն որպես լայտթեմա: Նշենք, որ այս տեսարանը ձեռագրերում միակն է, որտեղ ներկայացված է Ռուշանի երաժշտական կերպարը՝ աշուղական ասերգի վեհ պաթոսին ու հանկարծարանության խիստ հարազատ: Ինտոնացիային բնորոշ են թե՛ հայ աշուղական և թե՛ հայ եռգևոր (աղյալին) երգարվեստից եկող միևնույն քառալարի փոփոխականների հարևանությունը, ազատ ծավալվող հարաշարերը և այլն: Պահպանվել է նաև Նուրեդդին խանի քայլերգը, հաստատելով սխալիկ պարսկական կոլորիտ ստեղծելու Ա.Տիգրանյանի մեծ վարպետությունը: Լիբրետոյի պլանն ընդգրկում է չորս գործողություն, ինը պատկեր: Կոմպոզիտորը եղանակավորել է ընդամենը մեկ պատկեր: Առհասարակ, ողջ ձեռագիր նյութը, որտեղ կան նաև ժողովրդական երգերի գրառումներ, կոմպոզիտորի տքնաջան որոնումների ու մանրազնին աշխատանքի խոսուն արտահայտությունն է:

Ամփոփելով՝ նշենք հետևյալը. արխիվային նյութը բացահայտում է կոմպոզիտորի՝ ստեղծագործական որոնումների ինքնատիպ շերտի՝ ժողովրդա-աշուղական երգարվեստի ազգային արժեքների վերաիմաստավորման, «Քյորօղլի» էպոսի ավելի քան երեսուն տարբերակների հիման վրա իրեն հատուկ հմտությամբ (դեռևս «Անուշում» լավագույնս դրսևորված) անհատական ուղույն ու անկրկնելի ոճը:

Օպերայի լիբրետոն, մեր համոզմամբ, գիտական արժեք է ներկայացնում նաև «Քյորօղլի» էպոսի բանասիրական ուսումնասիրման համար՝ ներառելով հարուստ բանահյուսական նյութ:

НЕОКОНЧЕННАЯ ОПЕРА "КЕР- ОГЛЫ" А. ТИГРАНЯНА

Резюме *А. Степанян*

В архиве выдающегося армянского композитора, одного из основоположников армянской национальной оперы А.Тиграняна существуют интересные материалы относительно неоконченной народно-героической оперы "Кер-Оглы" (МЛИ им. Ег. Чаренца). Либретто и более 20 нотных эскизов оперы свидетельствуют о новом и интересном - народно-ашугском стилевом пласте в творчестве композитора. Исследование архивных материалов показывает, что основной причиной приостановления работ над оперой послужили арест, затем скоропостижная смерть в 1937г. в ухтинском лагере политзаключенных либреттиста оперы, певца, ученика Комитаса, солиста петербургского Мариинского театра, видного военного деятеля, публициста, поэта и переводчика Вагана Тер-Аракеляна.

Эвелина МАТЕВОСЯН

ВОЗДЕЙСТВИЕ АРМЯНСКОЙ НАЦИОНАЛЬНОЙ ДЕЙСТВИТЕЛЬНОСТИ НА МИРОВОЗЗРЕНИЕ Ю.КАРАБЧИЕВСКОГО

Творчество Ю.Карабчиевского - явление неординарное в современной русской литературе. Инженер-ремонтник по профессии занял в русской прозе достойное место литературного критика и очеркиста. Лаконичный и предельно точный стиль Карабчиевского-прозаика определен воздействием технического образования. Раскрывая актуальные проблемы современного литературоведения и откликаясь на глобальные вопросы эпохи, Карабчиевский своим творчеством подтверждает неординарный синтез литературного мышления и скрупулезной точности механики.

Очерковая проза Ю.Карабчиевского неординарно отражает литературные познания и мировоззренческие концепции писателя. Здесь наиболее полно воплощены позиции писателя в отношении тех или иных вопросов человеческого бытия. Немаловажное место в художественном творчестве Ю.Карабчиевского отведено национальному вопросу, нашедшему своеобразное решение в армянской прозе писателя. Обращение к инонациональной теме подводит писателя к раскрытию новых аспектов в сфере национального мышления и образа жизни.

Очерк "Тоска по Армении", как результат командировки Карабчиевского-инженера, был написан в 1978 году. Однако, вышедшее за рамки путевого очерка армянское произведение писателя было опубликовано в журнале "Литературная Армения" лишь в 1988 году, в эпоху гласности, когда национальный вопрос (и многие другие проблемы) стал достоянием всего общества.[1]

Армянская проза Ю. Карабчиевского раскрывает не только аспект восприятия автором инонационального мира жизни, но и проблему осмысления и переоценки собственных национальных и глобальных концепций. Многогранность познавательного процесса предопределяет разноплановый характер воздействия на мировоззрение. Необходимо отметить, что в данном процессе доминирует мотив сравнения судеб еврейского и армянского народов. Сравнивая еврейскую и армянскую действительности, Карабчиевский отмечает удивительную стойкость национального духа как ведущий фактор жизненной установки наций, переживших геноцид. Проблема геноцида намечена в очерке в плане подтемы, и лишь в заключении она представлена как ведущий аспект познания армянских и переоценке собственных национальных реалий.

Тема геноцида в очерке развита в неординарном архитектурном ракурсе. Карабчиевский описывает памятник жертвам геноцида не как достопримечательность столицы Армении, а как гениальное архитектурное воспроизведение событий. Возвеличивая значение архитектурного ансамбля Цицернакаберд, автор пишет о своем негативном отношении к памятникам вообще. По мнению писателя, памятники не представляют историю, а навязывают свою трактовку событий, являясь насилием над свободой оценок и мнений. В описании Карабчиевским памятников намечается злая ирония и сарказм. Он видит в памятниках не каменное воплощение оригинала, а лишь пародию, маску, как в случае с памятником Таманяну. "Хитрая рожа буфетчика Рафика, - пишет Карабчиевский, - вот подлинное лицо рукотворного бессмертия!" Или же памятники приводят писателя в замешательство, наводят страх, и он сравнивает себя с пушкинским Евгением из "Медного всадника"[2].

Цицернакаберд Карабчиевский причислил к исключениям, так как это не только архитектурное воспроизведение событий, но и воплощение всепоглощающей скорби. Воздействие памятника на писателя возрастает по мере осознания чужой и собственной боли. Именно здесь он приходит к выводу, что не древность

---

[1] *Ю. К а р а б ч и е в с к и й ,Тоска по Армении,"Литературная Армения",1988, 7, стр. 57-88; 8, стр. 65-91.*

[2] *Там же, стр. 89.*

и многовековая культура сближают евреев и армян, а белые пятна истории. Писатель раскрывает всю близость судеб многострадальных наций и особо отмечает связь современных поколений. "Естественная близость и понимание и взаимное утешение все потерявших, но оставленных богом жить для какой-то Ему лишь ведомой цели. Это близость и родственность Иова – Иову, это притяжение сироты к сироте",- пишет Карабчиевский.[3]

И далее, продолжая традицию А.Битова, писатель раскрывает тему с общечеловеческих позиций. Трагедия не только в том, что исстреблены две трети обоих наций, но еще и в том, что одна нация может возненавидеть и истребить другую, и от этого никто не застрахован. Беззащитность одних и безнаказанность других предопределяют, по мнению Карабчиевского, первый шаг к человеконенавистничеству в целом. Однако, эта концепция усугубляется личностными воззрениями автора, что приводит к рассмотрению проблемы с сугубо национальных позиций. Данный аспект раскрытия темы обусловил не только глубочайшее восприятие армянского мира жизни, но и переосмысление собственных национальных концепций, ранее не нашедших столь основательного изучения.

На теории параллелизации судеб еврейского и армянского народов возрастает одна из ведущих тем очерка – проблема национальности автора. В инонациональной среде эта проблема обстряется и получает неординарное решение. В России это "вопрос обязательный к написанию и запрещенный к пронзне-сению"[4], что объясняется господствуюшей позицией россиян. В Армении же эта проблема поставлена просто и естественно: здесь Карабчиевский находит понима-нпе и поддержку. Подобное отношение вызывает в писателе самые разные чувства: уверенность, легкость в общении и, самое главное, благодарность. Имен-но благодарность лежит в основе восприятия писателем инонационального мира, где подтверждается его русскоязычное мышление и выявляется подсознательное национальное начало. Карабчиевский пишет: "Надо было приехать в Армению, чтобы почувствовать себя настоящим русским, и не хуже, и не беднее от того, что еврей, а наоборот богаче и шире...- это останется и утвердится как главная моя благодарность армянам"[5].

Осознав собственную национальную субстанцию и выявив в ней сходные аспекты с армянским национальным менталитетом, Карабчиевский отмечает и существенную разницу в ракурсе самоутверждения наций. "Где бы ты ни был, кричи - я армянин!"[6] – эта фраза В.Сарояна определяет основу армянского национального мышления и в корне противоречит еврейскому и русскому менталитету. Самооценка армян наполнена гордостью, мужеством. Тот же отзыв в устах русского или еврея приобретает пародийное значение. Примечательно, что Карабчиевский проводит параллели в двуплановой сфере: русской и еврейской. В результате он выделяет некий сплав двунациональной основы собственного мышления. И далее в ракурсе концепции сплава рассмотрен вопрос связи языка и национальности. Тема языка явилась своеобразным лейтмотивом очерка, как тема камня в армянской прозе В.Гроссмана.

Карабчиевский глубоко и многогранно изучает сферу языкового феномена армянского менталитета. Вслед за Мандельштамом писатель выделяет аспект соотношения звуковой оболочки и лексического значения слова. Эпитеты, данные писателем языку, восходят к армянским стихам Мандельштама. "Плотный, насыщенный, физически ощутимый"[7] - пишет Карабчиевский о языке и далее продолжает битовскую "игру в слова". Однако, эта игра носит не развлекательный, а познавательный характер. Писатель часто прибегает к дословному переводу, чтобы максимально точно воспроизвести суть оригинала. Например, он поясняет, что матнакаш это следы от пальцев. Столь неординарный ракурс раскрытия проблемы на основе языковых данных приводит писателя к выявлению аспекта самовыражения армянского национального мышления.

---

[3] *Ю. К а р а б ч и е в с к и й.,указ. соч."Литературная Армения", 8, стр.90.*
[4] *Там же, 7, стр. 63.*
[5] *Там же,7, стр. 64.*
[6] *Там же, стр. 80.*
[7] *Там же, стр. 76.*

Проблема языка рассмотрена так же в ракурсе русской речи армян. Вопрос армянского акцента, отмеченного В.Гроссманом и А.Битовым, затронут и в очерке Карабчиевского. Автор в письменной форме передает все казусы русской речи армян. При этом он не просто воспроизводит исковерканные фразы, а передает особенности национального мышления в иноязычной речи. Фраза "соединяю телевизор"[8] приписывается одному из героев очерка, который дословно переводит с армянского: «միացնել հեռուստացույցը». В результате слово "включаю" заменено словом "соединяю", что противоречит лексико-граматическим нормам русского языка. На ряде подобных примеров Карабчиевский выводит аспект взаимозависимости языка и национального мышления.

Язык и национальность - на каком уровне они взаимосвязаны, где намечаются общие грани? Эти вопросы возникают у писателя при выявлении воздействия армянского национального характера на языковую сферу деятельности. И далее проблема рассмотрена в ракурсе связи языка и национального мышления в общем.

Данная проблема раскрыта с сугубо индивидуалистических позиций, так как Карабчиевский не знал идиш. Писатель исследует связь собственного языкового мышления и национальности и в результате приходит к определенным выводам относительно понятия "родной язык". Карабчиевский подвергает скрупулезному анализу все свои языковые данные и возможные варианты. Он отмечает какое-то несовершенство, неопределенность в его языковом мышлении, которое не воспроизводит его национальный характер. Родной же язык отражает самые тонкие нюансы национального менталитета. Незнание родного языка не исключает его теплоту и наполненность, тогда как неродной язык, независимо от степени владения, холоден и недоступен. В результате автор приходит к выводу, что в русском языке он "задыхается", а в родном он "безжизненен". А мыслит он на русском потому, что другого не знает, ибо такова его судьба и судьба его нации. И далее писатель выводит ведущий аспект связи языка и национальности: "Любим мы свой язык не за то-то и то-то и даже не за то, что он единственный, а за то, что боль его - наша боль, кровь его – наша кровь и судьба его - наша судьба".[9]

На первый взгляд данная концепция ставит Карабчиевского в безвыходное положение, где языковое мышление не соответствует национальному менталитету. Однако, писатель выдвигает еще одну теорию, которая опирается на его литературное творчество. Исследуя феномен связи национальности и иноязычного творчества таких писателей как Кафка, Конрад, Пастернак, Мандельштам, Карабчиевский приходит к выводу, что "отечество писателя – его язык".[10] С данной точки зрения он пытается рассмотреть творчество В.Сарояна. Но англоязычное творчество В.Сарояна выходит за рамки данной теории, ибо в центре его творчества стоит не английский и не американский, а именно армянский национальный тип, также как в русской прозе Бабеля ("Одесские рассказы") раскрыт еврейский национальный характер.

Все эти размышления подводят автора к проблеме связи собственных национальных и языковых концепций. И если Карабчиевский мыслит и пишет на русском и считает себя представителем русской культуры, то как же связаны его творчество и национальность. Эта связь, по мнению писателя, находится на подсознательном уровне, и, в результате, его творчество обретает своеобразную двуплановую основу. Уникальность этой концепции объясняет творческий поиск и неординарное самовыражение писателя. Это космополитизм не только творчества, но и эстетических взглядов писателя, утверждающего, "что в творчестве, как и в природе, только двойственность приносит плоды"[11].

В ракурсе теории двойственности Карабчиевский раскрывает так же аспект отношения к родине. Армянская национальная действительность, где обострена проблематика территориальных и исторических ценностей, приводит автора к мысли о значимости данных понятий. Ранее писатель не затрагивал дан-

---

[8] *Ю. Карабчиевский, Указ. соч.,"Литературная Армения", 7, стр. 77.*

[9] *Там же, стр. 70.*

[10] *Там же, стр. 80.*

[11] *Там же, стр. 72.*

ного вопроса, так как с российской точки зрения он не сталкивался с проблемой территории, ее "было больше, чем надо".[12] В призме же еврейского мировоззрения проблема не возникала за отсутствием понятия родная земля. В результате, сравнивая данный аспект армянского менталитета с собственными национальными воззрениями, Карабчиевский постигает феномен родины. В данном процессе определяющим для писателя является чувство, как и у Г.Матевосяна. Связь армянского писателя с судьбой своей нации подводит автора к осознанию собственной концепции родины, которая сводится не только к любви, но и, как это ни парадоксально, к тоске. "Нет Армении, как нет и России. Есть любовь к Армении и тоска по Армении, как есть любовь и тоска по России... Любовь к родине и тоска по родине – это и есть сама родина. Не предметы, на которые направлены чувства, а сами чувства – любовь и тоска", - заключает Карабчиевский.[13] Эта концепция, лежащая в основе мировоззрения Г.Матевосяна, открывает писателю не только аспект инонационального характера, но и основу собственного отношения к феномену родины.

Данная концепция родины и поднятый круг вопросов, подводит писателя к осознанию значимости собственных национальных ценностей. Таким образом, армянская проза писателя, по мере раскрытия аспектов инонационального мира жизни, приводит к постижению Карабчиевским собственных национальных реалий и ценностей.

Однако, армянская тема не только определяет национальную проблематику очерка, но и подводит автора к вопросам глобального характера, таким как одиночество, влияние денег на человеческую натуру, взаимоотношения гостя и хозяина.

Тема гостеприимства, рассмотренная в ракурсе кавказских традиций армянского быта, расширена до психологической проблемы вне национальных рамок. Карабчиевский пишет, что кормить входящего простонародный обычай, в то же время он отмечает, что это-выражение доброжелательства, приглашение к раскованности. Писатель тонко раскрывает психологию бедного и богатого хозяина и незванного гостя. Здесь самые банальные фразы не просто иронизируют, а гротескно высмеивают пороки человеческого общества, восходящие к проблеме денежной зависимости человеческой натуры.

В очерке Карабчиевский не раз затрагивал тему тлетворного влияния денег на человека, независимо от времени и места жительства. С определенной долей юмора и иронии писатель задает вопрос: иметь или не иметь автомобиль – "эту вожделенную шинель советского быта".[14] Тем самым автор зло высмеивает денежную обусловленность современной действительности, где все блага жизни зависят "от наличия жалкой тридцатки"[15].

Своеобразно развит в очерке мотив одиночества. Писатель отмечает, что стремление к одиночеству – это не пессимизм, а попытка оценить величие окружающего мира, осознать свое место в нем. Такая возможность была дана писателю в Армении, где одиночество было предопределено языковым барьером инонациональной действительности.

Мотив одиночества определяет также интимный аспект армянской прозы Карабчиевского. Столь личностный подход к теме объясняется жанром книги и личностью автора, совмещающего профессии инженера и прозаика. Фактически очерк – это прозаический отчет о командировке Карабчиевского -механика, в итоге в нем наглядно проявляется инженерная тематика. Здесь писатель с точностью механика определяет ту или иную категорию человеческого бытия. В этом плане интересны параллели, проведенные Карабчиевским между человеческим обществом и технологией приборов. Он сравнивает предпринимателей с шестеренкой, которая вращается против заданного направления и тем самым калечит весь механизм. Или же сравнивается движение электронов с движением человеческой жизни, где нет пути обратно, нет возможности бунта, все идет в заранее определенном направлении.

---

[12] *Ю. Карабчиевский, Указ.соч.,"Литературная Армения", 7, стр. 75.*
[13] *Там же, 8, стр. 91.*
[14] *Там же, стр. 77.*
[15] *Там же, стр. 77.*

Наряду с инженерной тематикой в очерке проявляются литературоведческие взгляды Карабчиевского. Здесь писатель упоминает более тридцати имен русских и зарубежных писателей, творчеству каждого из которых он дает свою оценку. Персонажи очерка сравниваются с известными литературными героями: Олег-Длинные ноги, Сергей-Сусанин. При этом Карабчиевский не боится наслоения литературных традиций и утрирования собственных творческих концепций. На этом широком литературном фоне вырисовывается неординарный стиль писателя- инженера и критика.

Интересны в этом плане методы художественного воспроизведения событий в очерке. Карабчиевский утрирует диалоги с героями очерка, в то же время свои мысли записывает в вопросно-ответной форме. В очерке также наблюдается хронологическое смещение событий. Писатель раздвигает временные рамки повествования и описывает последующие события в настоящем времени. Карабчиевский заранее знает, где и как его встретят и как он проведет время. Данный прием не только делает повествование живым и занимательным, но и подчеркивает достаточное знакомство его с объектом.

Столь своеобразный стиль армянской прозы Карабчиевского является воплощением мировоззрения человека многопланового и в своих творческих и национально-ценностных пристрастиях.

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՅՈՒ.ԿԱՐԱԲՉԻԵՎՍԿՈՒ ԱՇԽԱՐՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՎՐԱ

----- *Ամփոփում* ----- ----- *Է. Մաթևոսյան* -----

Հաղորդման մեջ ներկայացված է հայ իրականության ազդեցությունը ռուս գրող Յու.Կարաբչիևսկու գեղագիտական և աշխարհայեցողական ընկալումների վրա: Քննվում են գրողի մոտեցումները հայ և հրեա ժողովուրդների ճակատագրերի նմանության հարցում՝ հատկապես ցեղասպանության հետ կապված, որը նրա կողմից դիտվում է նաև որպես համամարդկային հիմնախնդիր: Նշվում է, հատկապես, այլազգի գրողի՝ հայոց ազգային կերպի և լեզվամտածողության իրողությունների ըմբռնման և ճանաչման կարողությունը, ինչը թույլ է տալիս նրան հանգելու ոչ միայն սեփական ազգային արժեքների ճշմարտացի ընկալման, այլև համամարդկային հիմնախնդիրների վերարժեքավորման:

Լիլիա ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԻՐԱԿՈՒՄ

Հայ ականավոր հայագետ և մանկավարժ Ստ. Լիսիցյանն իր բեղմնավոր և բազմաբնույթ գործունեության ընթացքում բազմիցս անդրադարձել է Շիրակի հետազոտմանը: 1920-1930-ական թթ. նրա իրականացրած հավաքչական աշխատանքները նպատակ ունեին ուսումնասիրելու մեր ժողովրդի ավանդական նիստուկացի փոփոխությունները խորհրդային կարգերի հաստատման առաջին տարիներին, ինչպես նաև «շապաշողականությամբ» հետազոտելու 1915թ. Մեծ եղեռնից փրկված գաղթականներին: Այդ տարիներին Ստ.Լիսիցյանն ազգագրական նյութի հավաքումն ու գրանցումն անհետաձգելի ու առաջնահերթ խնդիր էր համարում:

1922-1928թթ., լինելով Թիֆլիսի Պատմա-հնագիտական ինստիտուտի աշխատակից և մասնագիտորեն ուսումնասիրելով հայ ժողովրդական տունն ու նրա առանձնահատկությունները տարբեր պատմաազգագրական շրջաններում, Ստ. Լիսիցյանը հարուստ ու բազմաբնույթ նյութեր հավաքեց Վանի, Խարբերդի, Բուլանըխի, Ռ-շտունիքի և այլ շրջանների գաղթականներից: Բարձր Հայքի ժողովրդական տունն ուսումնասիրելու նպատակով, նա 1925թ. ամռանը վերը նշված ինստիտուտի կողմից գործուղվել է Լենինական: Այստեղ՝ նախկին Ալեքսանդրապոլի գավառում և հարևան Ջավախքում, Էրզրումի, Բասենի և Արևմտյան Հայաստանի այլ շրջանների գաղթականներից նա նյութեր հավաքեց Բարձր Հայքի բնակչության նիստուկացի և գյուղական տների վերաբերյալ: Դրա արդյունքը հանդիսացավ Ստ.Լիսիցյանի լավագույն աշխատանքներից մեկը՝ Բարձր Հայքի տներին նվիրված ուսումնասիրությունը:[1] Այստեղ ներկայացված են (նաև հատակագծով) այդ շրջանի ժողովրդական տան համալիրը (տուն, գոմ կամ, ախոռ, դրսի օդա), նրա առանձնահատկությունները: Հատկանշական է, որ Բարձր Հայքի նյութի վերլուծությունը գիտնականներին շատ կարևոր եզրահանգումների բերեց: Հայ ազգագրության մեջ Ստ. Լիսիցյանն առաջինն էր, որ հիմնավորեց գյուղական տան ճարտարապետական կառուցվածքի և հայոց պաշտամունքային կառույցների ու եկեղեցական ճարտարապետության ծագումնաբանական ընդհանրությունները:

Իր գիտական և գործնական աշխատանքներում Ստ. Լիսիցյանը չէր սահմանափակվում միայն ազգագրական նյութերի վերլուծությամբ, այլև փնտրում էր ուրիշ աղբյուրներ ևս: Այս տեսակետից ուշագրավ է նրա արխիվում պահվող 1926-1927թթ. «Ցուցակ Լենինականի գավառի բնիկ ամեկահայերի» գլխագրով վիճակագրական բնույթի մի փաստաթուղթ, որտեղ աղյուսակների տեսքով ներկայացված են գաղթականների ծագման շրջանը կամ բնակավայրը (նախկին անվանումներով), ծխերի և շնչերի թիվը:[2] Այդ տարիներին՝ 1925-1928թթ. Ստ.Լիսիցյանը Հայաստանի Կենտրոնական գավառագիտական բյուրոյի քարտուղար-նախագահն էր և նշված «ցուցակը» ստացվել էր նրա պատվերով Հայաստանի հողագործության ժողկոմատից: Այդ արժեքավոր փաստաթղթի մանրամասն վերլուծությունը ներկայացվեց Շիրակի հետազոտություններին նվիրված նախորդ՝ 1998թ. նստաշրջանում:[3]

Ղեկավարելով Հայաստանի Կենտրոնական գավառագիտական բյուրոն, Ստ. Լիսիցյանն ակտիվ գործունեություն էր ծավալում գավառագիտական բոլոր ճյուղերը զարգացնելու համար: Տեղերում գավառագիտական թանգարաններ հիմնադրելու տարիներին նա անձամբ այցելում էր Հայաստանի տարբեր շրջաններ, ծանոթանում պայմաններին, կազմակերպում և ղեկավարում թանգարանաշինական աշխատանք-

---

[1] С. Л и с и ц и а н., Крестьянское жилище Высокой Армении, Известия Кавказского Историко-Археологического института в Тифлисе, т. 4, Тифлис, 1926, с. 55-70.

[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 428, ց. 4, գ. 328:

[3] Լ. Վ ա ր դ ա ն յ ա ն, Հ. Ս ա ր գ ս յ ա ն, Շիրակի՝ 1926-1927թթ. գաղթականության որոշ հարցեր (Ստ. Լիսիցյանի արխիվային նյութի), Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի Գիտական աշխատություններ, հ. 2, Գյումրի, 1999, էջ 202-217:

ները: Մի շարք քաղաքներում նրա ջանքերով սաեղծվեցին գավառագիտական թանգարաններ, որոնցից, մասնավորապես Լենինականինը, ամենախոշորն ու նշանակալիցն էր այն ժամանակների նմանատիպ հաստատությունների շարքում: Հետագայում էլ Սա. Լիսիցյանը միշա հետաքրքրվում էր նրա վիճակով և գործունեությամբ: Այսպես 1936թ. նրա ղեկավարած Լենինական-Ախալքալաք գիտարշավը Լենինական հասնելուն պես, առաջին հերթին այցելեց տեղի թանգարան, «թե՛ ընդհանուր ծանոթանալու, և թե՛ երկու մոզայիկ պատկերներ դիտելու համար, որ մտադրություն կա տեղափոխելու Երևանի Կերպարվեստի թանգարանը»[4]: Ստ. Լիսիցյանի ուշադրության կենտրոնում էր մասնավորապես «Գավառագիտական կոմպլեքսային ցուցադրության սկզբունքների կիրառումն ու լիարժեք օգտագործումը»:

Գիտնականի արխիվում պահպանվել է մի ուշագրավ անտիպ փաստաթուղթ՝ 1938թ. ՀԱԽՀ Արվեստի Գործերի վարչությանն ուղղված նրա դիմումը Լենինականի «տեղական թանգարանային շենքին և ցուցադրված իրերի կացությանը մոտիկից ծանոթանալուց հետո»: Անհանգստացած լինելով շենքի՝ նախկին Փրկչի եկեղեցու «երկրաշարժից[5] և գանգակատան դինամիտային պայթեցումից» առաջացած վթարային վիճակից, Ստ. Լիսիցյանն իր դիմումով միջնորդում էր՝ թանգարանին շտապ նոր գետնադարաններ հատկացնել (տե՛ս հավելված)[6]:

1920-1930-ական թթ. պետության կողմից կյանքի և եկեղեցու նկատմամբ դրսևորված քաղաքականության, հակակրոնական ուժեղ պայքարի, եկեղեցիների և վանքերի ավերման ու ոչնչացման տարիներին, կարևորագույն խնդիր էր դրանցում պահվող գույքից առանձնացնելու պատմամշակութային արժեք ներկայացնող նմուշները և դրանք կորստից փրկելու գործը: Սա. Լիսիցյանը, թե՛ իր նախաձեռնությամբ, թե՛ Կուլտուրայի պատմության ինստիտուտի կողմից լիազորված լինելով, տարբեր տեղերից, մասնավորապես Շիրակի գյուղերից և Հառիճի վանքի գույքից (1934թ.), ինչպես նաև Լենինականի մզկիթից (1932թ.) բազմաթիվ նմուշներ տեղափոխեց Մայր թանգարան: Հառիճավանքի թանգարանային արժեք ունեցող ժողովածուն կազմված էր XIX դ. սկզբների եկեղեցական սպասքի նմուշներից, (բուրվառ, կանթեղ, խաչի պատվանդան, եկեղեցական սփռոց, ծածկոցներ, վարագույրներ և այլն):[7] Վերջինների մեջ աչքի է ընկնում 1814թ. մի փոքր (56 x 64 սմ) քառանկյունաձև ասեղնագործ վարագույրի երկու սյուների վրա հենված կամարի տակ Յոթվերաց Աստվածածնի պատկերը՝ կարմիր ծաղկավոր զգեստով և կապույտ ծածկոցով: Ասեղնագործ մակագրությամբ այս նմուշը մաշված վիճակում Ստ.Լիսիցյանի միջոցով հասցվել էր Մայր թանգարան:

1934թ. Ստ. Լիսիցյանը նույն նպատակով գործուղվել է Լենինականի և Արթիկի շրջաններ: Նրան տրված մանդատները հաստատում են վերացված եկեղեցիների գույքից թանգարանային արժեք ունեցող իրերի ընտրման, ստացման և տեղափոխման լիազորությունները: Այս արժեքավոր ժողովածուն նա հավաքել էր Նորաշեն, Մ. Արըխլուի (Մ. Մանթաշ), Մաչիթլի (Նոր Կյանք), Եգանլար (Արևշատ), և այլ գյուղերից:[8] Հարկ է նշել, որ հետագայում՝ 1941թ. հուլիսի 29-ին, այդ նյութերը, ըստ գույքամատյանի գրանցման, հանձնվել են Լենինականի թանգարանին:

Հայ ժողովրդի ազգային արժեքները կորստից փրկելու հարցում մեծապես նպաստեցին Ստ. Լիսիցյանի դաշտային հավաքչական աշխատանքները: 1928թ. նոյեմբերի 1-ից ստանձնելով ՀՊՊԹ ազգագրության բաժնի վարիչի պարտականությունները, նա սկսեց «գիտարշավների օգնությամբ գավառե գավառ կենցաղային իրերի սիստեմատիկ հավաքման և ազգագրական նյութերի գրանցման» գործը:[9] Ստ.

---

[4] *Սա.Լ ի ս ի ց յ ա ն, Օրագիր ազգագրական գիտարշավի, 1936, Ախալքալաքի շրջան, ՀՊՊԹ ազգագրության բաժնի գրավոր աղբյուրների ֆոնդ, գ. 119, տետր 1, թ. 4 (հետայսու՝ Օրագիր Ախալքալաքի գիտարշավի):*

[5] *Խոսքը վերաբերում է Լենինականի 1926թ. երկրաշարժին.*

[6] *ՀՊՊԹ-ի արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 50, թ. 3:*

[7] *ՀՊՊԹ-ի ազգագրության բաժնի հին գույքամատյան, հ. Գ., հմվ. թիվ 2761-2774:*

[8] *Նույն տեղում, հմվ. թիվ 2782-2798:*

[9] *ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 428, ց. 4, գ. 308, թ. 3:*

Լիսիցյանի կողմից կազմակերպված 1936-1937թթ. գիտարշավը նպատակ ուներ նյութեր հավաքել Լենինականի, Ախալքալաքի և Ախալցխայի շրջաններում, որտեղ շուրջ մեկ դար առաջ հաստատվել էին Բարձր Հայքից և, մասնավորապես, Կարին քաղաքից ու գավառից հեռացած հայերը: Երկու փուլով նախատեսված այս գիտարշավի նպատակն էր «ժողովել ազգագրական էքսպոնատներ Կարնո գավառից տեղափոխված գաղթականների մեջ: Ա[յ]ս ժողովածուն ապագայում պիտի լրացվի Շիրակում ձեռք բերված նյութերով: Գիտարշավը հույս ունի Բարձր Հայքի կենցաղը բնորոշող նյութեր գրառել Շիրակից ավելի հետամնաց Ախալքալաքի և Ախալցխայի շրջաններում».[10] իսկ հաջորդ՝ 1937թ. այն լրացնել Լենինականի, Արթիկի, Ամասիայի ազգագրական նյութերով: Այսպիսով, 1936թ. ամռանը, Ստ. Լիսիցյանի ղեկավարությամբ, (մասնակիցներ՝ ՀՊՊԱԾ ազգագրության բաժնի աշխատակիցներ Ժենյա Գյուզալյան, Սուրեն Սահառունի, լուսանկարիչ Ղևոնդ Ղուկասյան) գիտարշավը, ուղևորությունը սկսելով Լենինականից, մեկնեց Ջավախքի շրջան: Գիտարշավն առանձին նշանակություն էր տալիս արհեստների ուսումնասիրությանը: Դրա արդյունքն եղավ այն, որ նրա մասնակիցները կարողացան նյութեր հավաքել ոսկերչության, գինագործության և նրանց առնչությունների, ինչպես նաև կավագործության, ձեռագործության, այդ թվում գորգերի կարպ, դայթան գործելու, էյրամագործության, մազմանության, մաս-փափուկ կարելու, ծխամորճ պատրաստելու և այլ արհեստների վերաբերյալ: Այս ամենի հետ, խումբը կարողացավ ձեռք բերել ոսկերչության, գինագործության, մսագործության գործիքների հավաքածուներ, որոնցով, Ստ.Լիսիցյանի գնահատմամբ, «կարելի է գաղափար կազմել Հայաստանի քաղաքային հին արդյունաբերության մասին»: Ցավոք, Կարնո հայերի ծրագրված ուսումնասիրության շարունակությունը Լենինականի, Արթիկի և Ամասիայի շրջաններում հաջորդ տարիներին չիրականացվեց: Այսօր դժվար է գտնել դրա ստույգ պատասխանը՝ ֆինանսական միջոցների բացակայությունը, կազմակերպական կամ այլ բնույթի հարցերը, թե այդ տարիներին սկսված բռնությունների ծանր մթնոլորտը ազգագրական դաշտային հետազոտությունների դադարեցման պատճառ դարձավ[11]: Մնում է ափսոսալ, որ Ստ.Լիսիցյանի նախաձեռնած՝ Բարձր Հայքի (Շիրակի և Ջավախքի) հայերի ամփոփիչ ուսումնասիրությունն անավարտ մնաց:

Իր երկարամյա և բազմակողմանի գործունեության ընթացքում վաստակաշատ հայագետ և մանկավարժ Ստ.Լիսիցյանը գիտության և մանկավարժության նվաճումները պրոպագանդելու նպատակով Երևանում և շրջաններում բազմաթիվ դասախոսություններ էր կարդում հայ ժողովրդի պատմության, աշխարհագրության, մանկավարժության վերաբերյալ: Հայաստանի մի շարք քաղաքներում՝Լենինական, Նոր Բայազետ, Մեղրի, Դիլիջան և այլն) նա ակտիվորեն նախաձեռնում և մասնակցում էր նաև ուսուցիչների համար կազմակերպվող մեթոդական դասընթացներին: Նման մի դասընթաց տեղի է ունեցել Լենինականում, 1925- 1926թթ., ինչի մասին վկայում է գիտնականի արխիվում պահվող իմքակային լուսանկարը:

Հավելված*

ՀԽՍՀ-Ի ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հրավիրված լինելով Լենինական, մասնակցելու տեղական թանգարանի աշխատանքների պլանի մշակմանը, առիթ ունեցա մոտիկից ծանոթանալու թանգարանային շենքին և ցուցադրված իրերի կացությանը: Պարզվեց, որ շենքը, նախկին Փրկչի եկեղեցին, իր ներկա վիճակով չի կարող ապահովել հավաքած էքսպոնատների, նամանավանդ, նկարների ժողովածուի անվտանգ պահպանումը փչացումից:

Երկրաշարժից և գանգակատան դինամիտային պայթյունից առաջացել են պատերի մեջ լայն ճեղքեր, մանավանդ գմբեթի մեջ, որի տակ զետեղված է նկարչական բաժինը: Այդ ճեղքերով քամուց ներս է թափանցում ոչ միայն փոշին, այլև ձյունը,

---

10 *Օրագիր Ախալքալաքի գիտարշավի, Տետր 1, թ. 1-1 շրջ:*

11 *Նշենք, որ Ախալքալաքի գիտարշավի՝ Երևան վերադառնալու օրը՝ 1936թ. օգոստոսի 20-ին, բաժնի աշխատակից Սուրեն Սահառունին կալանավորվեց և այդ պատճառով հաջորդ օրը հրամանով ազատվեց աշխատանքից:*

* *ՀՊՊԹ-ի արխիվ, ֆ.1, ց. 1, գ. 50, թ. 3- 1038թ.:*

անձրևի ժամանակ կտուրը կաթում է, խոնավ առաստաղից թափվում է ավազը. շենքում ավելի ցուրտ է, քան դրսում՝ փողոցում:

Աչքի առաջ ունենալով այս ամենը, մեր խորհրդակցությունը գտավ, որ այլևս անհնարին է պահել այդ շենքում իրերը, մանավանդ նկարները, որոնց մեծ մասը Երևանի Կերպարվեստի Կենտրոնական թանգարանից են հանձնված Լենինականի թանգարանին, որ նկարները և խոնավությունից ու բարեխառնության տատանումներից փչացող իրերը պետք է տեղափոխել մի ապահով վայր, իսկ թանգարանը փակել հաճախորդների համար, քանի որ շենքին կործանում է սպառնում: Թանգարանի վարիչ ընկ. Լ. Եղիազարյանի հետ ներկայանալով քաղգործկոմի նախագահին, դրինք այդ որոշումը նրա հաստատմանը և նրա համաձայնությունը ստանալով, փետրվարի 16-ից թանգարանը պիտի փակվեր: Նախապես խոստանում էր մինչև հատուկ թանգարանային շենքի կառուցման խնդրի լուծումը մի այլ, ժամանակավոր զետեղարան հատկացնել, ենթադրվում էր որևէ նորակառույց դպրոցներից մեկում:

Հարկ եմ համարում հաղորդել Ձեզ այն մասին և աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ թանգարանում կենտրոնացած է մեծ և շատ բարձրարժեք ժողովածու. Սուրենյանի, Աղաջանյանի, Բաշինջաղյանի և այլ հայ և օտարազգի նկարիչների գործերի, խնդրել, որ Դուք Ձեր կողմից միջնորդեք Լենինականի քաղխորհրդի նախագահության առջև, արագացնելու նոր զետեղարանի հատկացումը թանգարանին:

Պետ. պատմական թանգարանի
ազգագրական բաժնի վարիչ Ստ.Լիսիցյան

НАУЧНЫЕ ИЗЫСКАНИЯ СТЕПАНА ЛИСИЦИАНА В ШИРАКЕ

Резюме *Л. Варданян*

Научные изыскания известного армянского этнографа и педагога Ст.Лисициана в Шираке были связаны с разными сферами его многогранной деятельности. В 1920-30-ые годы, возглавляя Центральное бюро краеведения Армении, а затем этнографический отдел Государственного исторического музея, ученый развернул широкую и активную организационно-собнрательскую и научно-исследовательскую работу.

В Ленинакане и в Джавахке им был собран обширный этнографический материал от беженцев из Басена, Эрзрума и др. областей Зап. Армении о быте армян Карина, послуживший основой для его работы "Крестьянские жилища Высокой Армении" (1926). Позже для сбора музейных экспонатов и записи материалов среди каринских армян, выходцев из Высокой Армении, было намечено в два этапа (1936 и 1937гг) обследование данного региона, однако удалось осуществить лишь джавахскую часть. К сожалению, намеченная в 1937г. экспедиция в Ленинакан в силу ряда причин не состоялась. Усилиями С. Лисициана из ряда закрытых сельских церквей Ширака, а также из монастыря Арич были доставлены в Гос. исторический музей собрания церковной утвари, представляющие музейную ценность (1934). Благодаря деятельности С. Лисициана в Ленинакане был организован краеведческий музей. О его состоянии в 1938г. свидетельствует впервые публикуемый документ из архива ученого.

Նաիրա ԿԻԼԻՉՅԱՆ

ՋԵՅԲԵԿԻ ՊԱՐԸ. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ ժողովրդական պարարվեստի ուսումնասիրության ընթացքում տարբեր առումներով հաճախ են հանդիպում պարերի անվանումներ, որոնք տարածված են եղել Հայաստանում 20-րդ դարի սկզբներին, իսկ պարային մշակույթի հետագա շրջանների նյութերում չեն հիշատակվում: Դրանցից է Ջեյբեկի, Ջեյբեկ կամ Ձերագի, Ջեյպակի անվանված պարը, որը տարածված է եղել Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին: 1930-ական թթ. պարը արևմտահայ գաղթականներից գրանցել են Սրբուհի Լիսիցյանը և Վահրամ Արխաանկեսյանը: Սրբուհի Լիսիցյանը Ջեյբեկի պարը բեմադրել է Երևանի Պարարվեստի ուսումնարանում, իսկ Վահրամ Արխաանկեսյանը՝ Հայաստանի առաջին ազգագրական պարի պետական անսամբլում[1]:

Պարի անվանումը ծագում է Արևմտյան Անատոլիայի լեռնարնակ քոչվոր ցեղերից, որոնք հավաքով սուսերի մահմեդականներ են, շամանականության ուժեղ վերապրուկներով: Ժամանակի ընթացքում ուծացվել են՝ ձուլվելով տարածաշրջանի այլ ժողովուրդներին:

Ըստ գրանցումների՝ Ջեյբեկին եղել է հարսանիքին կատարվող մնջախաղ-կատակերգական բնույթի զուգապար: Պարել են երկու տղամարդ, մեկը գլխին կանացի գլխաշոր գցելով, ստանձնել է հարսի, մյուսը՝ փեսայի դեր: Փեսան հարսին տվել է զանազան նվերներ և դրանց դիմաց առացել հարսի հետ պարելու համաձայնություն:

Ըստ Ալիրիդոն Մելիքյանի գրանցած պարեղանակի՝ պարի երաժշտական չափը 9/8 է[2]: Նա Ձերագի կոչված պարի երաժշտական տեքստին տալիս է փոքրիկ բացատրություն, որը նման է նիշյալ սյուժեին: Համադրելով Վարդ Բդոյանի հրատարակած Շապին Գարահիսարի «Փորսուղ կառնավալ» խաղի նկարագրությունը, առավել որոշակի է դառնում պարի մնջախաղային հատվածը[3]: Խաղին հիմնականում մասնակցել են միջին տարիքի տղամարդիկ: Փորսուղի, Դատավորի, Արապի և Բժշկի կերպարների կողքին կան նաև Ջեյպակի (այդպես է գրված) և Հարսի կերպարները:

Խաղն ընդունված է եղել կատարել թուրքերեն, որպեսզի խաղի բառերն ու բովանդակությունը հասկանալի լինեին իշխանության կողմից Բարեկենդանի օրերին թաղում նշանակված թուրքական շրջիկ պահակախմբերին, և խաղը չդիտվեր իբրև հակապետական գործողություն:

Հարսի դեր խաղացողն եղել է կնոջ հագուստով տղամարդ, գլխին թասլա, որից կախված էր լինում մի շարք ոսկի, մեջքին՝ արծաթե գոտի, դեմքը ծածկված գլխաշորով, իսկ մատներին՝ մետաղե զիլեր, մատնոցներ, որոնք պարելիս դնում են բութ և միջին մատներին ու պարի եղանակին համապատասխան՝ ռակտով իրար խփում: Իսկ Ջեյպակի դերակատարն եղել է սև բեխերով ու փոքր մորուքով, հագել է կարմիր շորեր: Մինչև կուրծքը փաթաթած շալե գոտու մեջ խրված է եղել դաշույն, գլխին ծոպավոր թաշկինակով եզերապատված գլխարկ, դեմքին՝ կարմիր դիմակ և ձեռքին՝ երկար նիզակ:

Խաղը սովորաբար սկսվում էր խմբական կլոր պարով: Հետո խմբի անդամներն առանձին-առանձին պատմում էին անհավատալի պատմություններ, արտասանում ոտանավորներ, իրար առաջարկում հանելուկներ, դրանց տալով յուրօրինակ մեկնություններ, և առաջանում էր ծիծաղ ու զվարճություն: Այդ զվարճալի պատմություններից ոգևորված՝ Ջեյպակը հրամայում էր կանացիազգեստ մարդուն պարել: Երաժիշտները, լսելով հրամանը, նվագում էին պարեղանակ: Փորսուղը, հմայվելով կնոջ գրավիչ պարով, մոտենում էր նրան և առաջարկում միասին փախչել: Կինը, պատճառաբանելով Փորսուղի ծերությունը, հրաժարվում էր: Մեծամեծ նվերներ խոստանալով Փորսուղն այնուամենայնիվ սաանում էր կնոջ համաձայնությունը և այն պահին, երբ Ջեյպակն ինչ-որ վեճի էր բռնվում Արապի հետ, ձեռքից բռնած առևանգում էր նրան: Ջեյպակը, նկատելով կատարվածը, հարձակվում է փախչող զույգի վրա և դաշույնով վիրավորում Փորսուղին: Դատավորը դատում էր Ջեյպակին, որից հետո բոլորը հաշտվում էին: Խաղն ինչպես սկսվել էր կլոր պարով, այնպես էլ ավարտվում էր:

Ջեյբեկի պարային և երաժշտական տեքստերն ամբողջանում են պատկերագրությամբ: Դրանցից են Ն. Զարզարյանի «Ջեյպակը Փորսուղ կառնավալ խաղի մեջ» նկարը և 19-րդ դարի վերջի արևմտահայ նկարիչ, քանդակագործ Երվանդ Ոսկանի զեյբեկներին

---

[1] Հայկական պարեր. 1935., ձեռագիր նյութեր Սրբուհի Լիսիցյանի. Սրբ.Լիսիցյանի արխիվ. ՀԱԻ:
[2] Ա. Մ ե լ ի ք յ ա ն. Հայ ժողովրդական երգեր ու պարեր. Եր.,1949 , էջ 171:
[3] Վ. Բ դ ո յ ա ն. Հայ ժողովրդական խաղեր, հ.1, Եր., 1963, էջ 108- 111:

նվիրված քանդակների շարքը. «Զեյբեկ տղամարդը պարելիս», «Զեյբեկ կնոջ պարը», «Զեյբեկի թրով պարը» և մի շարք լուսանկարներ[4]:

Զեյբեկի պարի մասին գրում են նաև հույն և թուրք հեղինակները: Հույն պարագետները այն անվանում են Զեյբեկիկո: Կատյա Սավրամին, որը Լիսբոնի պարի գրանցման համակարգով գրանցել է Զեյբեկի պարը, նույնպես նշում է, որ այն կապվում է փոքրասիական մի ցեղի անվանման հետ, որը 20-րդ դ. սկզբներին Հունաստան է գաղթել Թուրքիայից[5]: Ներկայումս Զեյբեկիկոն Հունաստանի ամենատարածված պարերից է: Ծիսական բնույթի, դանդաղ ու արտահայտիչ շարժումներ ունեցող մենապար է, պարում են միայն տղամարդիկ: Պարի երաժշտական չափը 9/8 է:

Պարագետ Ալկիս Ռաֆտիսը նույնպես նշում է, որ Զեյբեկիկոն մենապար է, իր սկզբնական, գյուղական ձևով կռնավորային բնույթի, ազատ, իմպրովիզացիոն շարժումներով[6] :

Մեկ ուրիշ հույն հեղինակ (Վասո Տիրովոլա) այդ պարի օրինակով ներկայացնում է քաղաքային պարային ֆոլկլորի զարգացման ընթացքը Հունաստանում, Զեյբեկիկոն համարելով քաղաքային միջավայրում ամենատարածվածներից մեկը, որը պարում են մեկ կամ երկու տղամարդ՝ ձեռքերը վեր բարձրացրած, մատները չրխկացնելով, բուզուկի երաժշտական գործիքի նվագակցությամբ[7]: Մի թուրք պարագետ նշում է Թուրքիայի էգեյան տարածաշրջանում Զեյբեկի պարի առկայությունն այսօր, վերլուծում է բեմական մեկնաբանությունների մեջ եղած տարբերությունները և հավաստում, որ դա մենապար է՝ համաչափ, շեշտված, արտահայտիչ շարժումներով:

Այսպիսով, համադրելով բոլոր տվյալները 20-րդ դ. սկզբներին հայկական ժողովրդական և բեմական պարարվեստում տեղ գտած Զեյբեկի պարի մասին, ի մի ենք բերում պարի երաժշտությունը, սյուժեն և հագուստը:

Արդյունքում, պարզում ենք, որ հայ ժողովրդական պարային մշակույթում վերը նշված ժամանակահատվածում գոյատևած Զեյբեկի խաղ պարը ֆոլկլորային պարի հետաքրքիր նմուշներից է, որի ինքնատիպ մեկնաբանությունը տեղ է ունեցել միայն հայկական մշակույթում, իսկ ուրիշ ազգերի մոտ այդ պարի առայժմ պահպանված ձևերը այլ բնույթ ունեն: Ցավոք, Զեյբեկի պարի հայկական տարբերակը պահպանվել է միայն գրառումներում, և կենդանի գոյատևման մասին շատ քիչ տվյալներ կան:

ТАНЕЦ ЗЕЙБЕКА: МЕЖКУЛЬТУРНЫЕ СВЯЗИ

Резюме ***Н.Киличян***

Во время исследования армянских народных плясок в разных источниках часто встречаются названия танцев, которые были популярны в Армении в начале XX в. Один из них-танец Зейбека. В 1930-ых годах у беженцев из Западной Армении его записывали этнограф-танцевед Србуи Лисициан и Ваграм Аристакесян.

Сопоставляя все собранные данные мы дополнили общую композицию танца: музыка, сюжет и костюм. Танец Зейбека и сейчас очень популярен в Греции и Турции, но армянская версия уникальна в своем роде и нигде больше не встречается, поэтому она считается одной из интереснейших примеров армянского фольклорного танца.

---

4 *Թ ե ո դ ի կ, Ամենուն տարեցույց. Կ.Պոլիս, 1915 , էջ 273- 288:*

5 ***K.S a v r a m i*, *The Two Diverse Version of the Dance "Zeimbekiko" in Dance Studies, vol. 16, Jersey, 1992, p.57-103.***

6 ***A. R a f t i s*, *The World of Greek Dance, Athens, 1987, p. 21-24.***

7 ***V. T y r o v o l a*, *Dynamic Aspects of the Evolutionary Process of the Popular Urban Culture: The Case of the Dance "Zeibekiko" Nafplion, 1992.***

Թամար ԶԱՔԱՐՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻԻ ՆԵՐԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ
(ըստ 1980-1990-ական թթ. էթնոսոցիոլոգիական հետազոտությունների)

Ներընտանեկան և ազգակցական հարաբերությունները, հարյուրամյակներ շարունակ կայուն ձևով պահպանելով կառուցվածքային առանձնահատկությունները, այժմ են ընկնում իրենց ավանդական համախմբվածությամբ, նեղ տնտեսական կապերով, գաղափարական միասնությամբ և ազգային համերաշխությամբ: Այն իր անմիջական ազդեցությունն է թողել ոչ միայն ընտանիքի ձևի և կառուցվածքի վրա, այլ նպաստել է բացահայտելու նրա գործելակերպը տվյալ ժամանակաշրջանում:

Տարբեր սերունդների, ամուսինների, քույրերի և եղբայրների, ինչպես նաև մոտ և հեռու ազգականների միջև եղած կապերն ու փոխազդեցությունները կազմելով ներընտանեկան և ազգակցական փոխհարաբերությունները, դրսևորվում են առօրյա կյանքում օգտագործվող և ընտանիքում գերիշխող բազմաթիվ սովորույթների, վարքագծերի, սահմանված կարգերի, կարծիքների և հասկացողությունների ձևերով: Դրանց կիրառումն ու կատարումը ընտանիքի համար պարտադիր նշանակություն ունի: Այդ սովորույթները սերնդից սերունդ փոխանցվելով, ներկան կապում են անցյալի հետ և պահպանում են ընտանիքի կայունությունը:

1980-1990-ական թթ. Գյումրի քաղաքում անցկացված էթնոսոցիոլոգիական հետազոտությունների հարցաթերթիկում ներկայացված էր հարցերի մի խումբ, կապված ընտանիքի կառուցվածքի, ներքին փոխհարաբերությունների, սերնդափոխի, աշխատանքի բաժանման, ազգակիցների մեջ եղած կապերի և այցելությունների ու դյսպապատճառների հետ: Աշխատանքում ներկայացված է հարցերի միայն մի փոքր խումբ:

Հանրապետությունում տեղի ունեցած քաղաքական կառուցվածքի փոփոխությունը, 1988թ. աղետալի երկրաշարժը, Լեռնային Ղարաբաղի խնդիրը, առկա շակայական հարաբերությունները, արտագնա աշխատանքը և արտագաղթը իրենց անմիջական ազդեցությունն են թողել Գյումրիի ավանդական ընտանիքի կառուցվածքի վրա: Ըստ հարցումների*, եթե 1980-ական թթ. բարդ ընտանիքները կազմում էին 38% (պարզը 55%, ոչ լիարժեքը՝ 17%), ապա 1990-ականներին համեմատաբար այն 21% է (պարզը՝ 43%, ոչ լիարժեքը 36%): Հետաքրքիր է, որ Շիրակի գյուղերում դրանք կազմում էին 48%: Ընտանիքի կառուցվածքի այս կտրուկ փոփոխությունը նախ և առաջ բացատրվում է երկրաշարժի աղետալի հետևանքներով, որի պատճառով էլ մեծացավ ոչ լիարժեք ընտանիքների թիվը:

Գյումրիի բնակչությունը, որ միշտ առանձնացել է ավանդական սովորույթների պահպանողականությամբ, բարոյա-էթիկական կապերի առանձնահատկությամբ, ոչ միայն տոկունությամբ դիմակայեց դաժան փորձությանը, այլև ազգապահպանման փայլուն օրինակ ցուցաբերեց: Ծանր կորուստներ կրած ընտանիքների ողջ մնացած անդամների վերամիավորումը դարձավ պարտադիր երևույթ: Մոտ և հեռու ազգականները իրենց խնամքի տակ վերցրին հարազատների որբացած երեխաներին, քույրերին, ծերունիներին և ստեղծվեցին նոր, ոչ լիարժեք ընտանիքների ձևեր: Ազգականներին օգնության ձեռք մեկնեցին ինչպես հանրապետությունում գանվող մոտ և հեռու, այնպես էլ արտերկրի հարազատները: Երկրաշարժից հետո ազգականների վարքը որպես բացառիկ երևույթ է գնահատել արտակարգ իրավիճակների հոգեբան-մասնագետ, գիտությունների դոկտոր, բժիշկ Ե.Կրասինը: «Իզվեստիա» թերթի դեկտեմբերի 22-ի համարում նա գրում է. «Գլխավորը, ինչից մենք վախենում էինք առաջին օրերին, դա խուճապն էր, փախուստը երկրաշարժի գոտուց: Ինչպես ցույց է

---

* *Աշխատանքը շարադրելիս հեղինակը օգտագործել է ՀԱԻ էթնոսոցիոլոգիայի բաժնի արխիվում պահվող 1980-1990-ական թթ. հետազոտությունների նյութերը*

ավել վործը, սովորաբար այդ ժամանակ մարդկանց համակում է միայն փախչելու ձգտումը: Այս դեպքում դա տեղի չունեցավ: Այդ հարցը խոր վերլուծության կարիք ունի: Հնարավոր է, որ իրենց ազդեցությունն ունեցան ազգային հոգեբանության առանձնահատկությունները, որոնք թույլ չտվեցին լքել հարազատներին նույնիսկ փլատակների տակ»:

Ներընտանեկան հարաբերությունները կարգավորելու գործում վճռորոշ դեր ունի տան գլխավորը: Տան ավագ տղամարդը, որը ընտանեկան հարցերը լուծելու ժամանակ որոշիչ ձայն ուներ և համարվում էր ընտանիքի գլխավորը, վերջին տասնամյակում, պահպանելով հեղինակությունը, որոշ չափով իր տեղը զիջել է ընտանիքի մյուս անդամներին: Այն ընտանիքներում, որտեղ շատ եկամուտ ստանում են աշխատող երեխաները կամ կինը, առաջ է եկել մի նոր երևույթ: Սովորույթի համաձայն ընտանիքի գլխավորը են համարում ավագ տղամարդուն (նրա բացակայության դեպքում՝ կնոջը) նրանց նկատմամբ հարգանքով են վերաբերվում, տեղեկացնում իրենց գործերից և խորհուրդ հարցնում, բայց հարցերի լուծման վերջնական որոշումը իրենք են կայացնում:

Գործազրկության և արտագնա աշխատանքների հետևանքով ընտանիքում մեծացել է նաև կնոջ դերը: Նա իր վրա է վերցրել ոչ միայն օջախի պահպանության, տնտեսության, երեխաների խնամքի և դաստիարակության հոգսերը, փաստորեն հանդես գալով որպես տան գլխավոր: Եթե 80- ական թթ. հարցվողների 65% « Ո՞վ է ընտանիքում որոշում կարևոր հարցերը», պատասխանել է՝ ամուսինը կամ հայրը, ապա 90- ականներին նույն պատասխանը կազմել է 47% : Ըստ 80- ական թթ. հարցումների արդյունքների, տան գլխավորի հետ ճաշի էին նստում հարցվողների 52%, 90-ականներին՝ 32%:

Ընտանիքի կայունության, կենսապահովման, երեխաների դաստիարակության և նոր սերնդանի խնամքի գործում կարևոր դեր ունեն ոչ միայն համատեղ ապրող հարազատները: Առանձնացած երիտասարդ ընտանիքները, պահպանելով սերտ հարաբերությունները, ինչպես ծնողների, այնպես էլ մոտ ազգականների (քույրեր, եղբայրներ) հետ, համագործակցում են, ցույց տալով թե՛ նյութական և թե՛ բարոյական աջակցություն: Ընտանիքը համախմբելու և ծնողների հետ ապրելու ցանկություն են հայտնել երիտասարդ ընտանիքների 48 %, մերժել են՝ 20 %, մնացածները դժվարացել են պատասխանել: Պարզելու համար, թե անհատը որքանով է հակված հարազատների հետ հարաբերությունների պահպանմանը և ինչ չափով է շփվում նրանց հետ, առաջադրվել է հետևյալ հարցը. « Ու՞մ եք ավելի հաճախ հյուր գնում»: Ի տարբերություն հանրապետության մյուս քաղաքների (միաժամանակ հարցում է կատարվել Վանաձոր, Արմավիր, Տաշիր, Եղեգնաձոր և Բյուրեղավան քաղաքներում), որտեղ հյուր են գնում հարցվողների 40-45%, Գյումրիում 80- ականներին այն կազմել է 65%, իսկ 90- ականներին՝ 54% : Այն հարցին, թե « ո՞ւմ առիթով եք այցելում ազգականներին», օգնելու նպատակով, 80 - ական թթ. պատասխանել է հարցվողների 31%, 90- ական թթ.՝45%, տոներին և ընտանեկան հանդեսներին մասնակցելու՝ 80- ական թթ. 49%, 90 - ական թթ.՝ 47 %, խորհրդակցելու 80- ական թթ.՝ 20%, 90- ական թթ՝14%: Աեռաարիքային խմբերի միջև պատասխանների տարբերությունը 5-6% է:

Ներկա, ճգնաժամային պայմաններում ընտանիքի ապրելունակության, նյութական և հոգևոր պահանջների բավարարվածության համար կարևոր գործոն է մոտ և հեռու ազգականների համագործակցությունն ու փոխօգնությունը: Ազգականների հետ համագործակցելու և նրանց հետ « գործ բացելու» ցանկություն են հայտնել 80- ական թթ. 24%, 90- ական թթ. 40%: Վարչական մարմինների հետ գործ ունենալիս հարազատների օգնությանն են դիմում 80- ականներին՝ 25%, 90- ական թթ 48 %:

Ընտանեա- ազգակցական հարաբերությունների և փոխօգնության կարևոր գործոն է նաև բնակության վայրի մոտ կամ հեռու գտնվելու հանգամանքը և անհատի զգացմունքային ու հոգեբանական հակվածությունը ավանդական սովորույթների պահպանման նկատմամբ:

Ծնունդի, հարսանիքի և այլ ընտանեկան ծիսակատարությունների ժամանակ ֆինանսական և բնամթերային մեծ օգնություն են ցույց տալիս ազգականները:

Մոտ և հեռու հարազատների հետ այցելու և մշտապես օգնություն ցույց տալու ցանկություն ու պատրաստակամություն է հայտնել հարցվողների 67%:

Այսպիսով, 1980-1990-ական թթ. Գյումրիում անցկացված էթնոսոցիոլոգիական ընտանեկան հետազոտության մի քանի հարցերի ուսումնասիրության արդյունքները ցույց տվեցին, որ անտեսության քայքայման, 1988թ. երկրաշարժի, արտագաղթի և արտագնա աշխատանքի հետևանքով ընտանիքի ավանդական կառուցվածքը լուրջ փոփոխությունների է ենթարկվել:

Ներընտանեկան և ազգակցական փոխհարաբերությունների որոշ տարրեր նոր երանգ են ստացել, փոխվել են ազգականների՝ միմյանց նկատմամբ ունեցած իրավունքներն ու պարտականությունները: Եթե ոչ հեռու անցյալում ընտանեկան սովորույթներն ու ավանդույթները բնորոշվում էին սրհամական ժառանգականությամբ, ապա այժմ դրանք անմիջականորեն կախված են ընտանիքի սոցիալական պաշտպանվածությունից: Այստեղ իր որոշիչ դերն ունի գյուղ- քաղաք-արտերկիր ազգակցական կապը և նրանցից ստացվող օգնությունը:

Այս բոլոր փոփոխություններով հանդերձ, Գյումրիում ընտանեա-ազգակցական հարաբերությունները աչքի են ընկնում անահական ամուր կապերով, ավանդական բարոյա-էթիկական սովորույթների պահպանմամբ:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ВНУТРИСЕМЕЙНЫХ И РОДСТВЕННЫХ ОТНОШЕНИЙ В г. ГЮМРИ

(По материалам этносоциологических исследований1980-1990 гг.)

Резюме *Т.Закарян*

В 1980-1990-ых гг. в Гюмри были проведены этносоциологические исследования с целью выявления структурных особенностей семьи, внутрисемейных отношений, родственных связей и т. д. Эта структура подверглась значительным изменениям вследствие землетрясения 1988г., а также новых политических и экономических отношений.Для имевшего традиционные обычаи населения г. Гюмри в нынешних условиях приобретают первостепенное значение сотрудничество и взаимопомощь близких и дальних родственников.

2000թ. հունվարի 25. Լույս տեսավ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» ժողովածու՝ 17 հրատարակչական մամուլ ծավալով: Կենտրոնի հանրույթը այն նվիրել էր ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի 40-ամյակին: Ժողովածուն բացվում է հանդեսի անդրանիկ հատորի վերաբերյալ մի խումբ անվանի հայագետների շնորհավորանքի ջերմ խոսքերով, ամենադրական կարծիքներով ու իրատեսական գնահատանքով, նաև հետագայի անկեղծ բարեմաղթություններով: Ակադեմիկոս Գ.Ջահուկյանը գրում է.«Անչափ ուրախ եմ, որ Գյումրիում սկսել է տպագրվել մի գիտական ամսագիր, որն իր հարուստ բովանդակությամբ և պատշաճ ձևավորումով պատիվ կբերի ցանկացած մայրաքաղաքային գիտահետազոտական օջախի: Շիրակի նորաստեղծ հայագիտական կենտրոնի համար սա իսկայական հաջողություն է»: «Ինձ մեծապես ուրախացնում է..., որ այն լույս է տեսնում իմ սիրելի Գյումրիում, որ այնքան կարոտ է գիտական և մշակութային կյանքի ու մտքի հարստացման» (ակադեմիկոս Լ.Հախվերդյան), «այս դըժվարին պայմաններում սա գիտական սխրանք է՝ ի նպաստ հայագիտության զարգացման» (պատմագիտության դոկտոր Ա. Քալանթարյան), «... որոշ հրապարակումներ հայադիտության բնագավառում բոլորովին նոր խոսք են, ցանկանում եմ տեսնել հաջորդ համարները ևս» (ակադեմիկոս Գ.Ղարիբջանյան): «Համոզված եմ,- գրում է բանասիրության դոկտոր Ա.Հարությունյանը,- այն կդառնա Շիրակի հայագիտական մտքի կազմակերպիչն ու նրա հասուն մակարդակի արտացոլման ճշմարիտ հայելին»:

Ժողովածուի 2-րդ հատորում տեղ են գտել ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի, Հնագիտության և ազգագրության, Արվեստի ինստիտուտների գիտաշխատողների (20), Երևանի պետական համալսարանի և Գյումրու մանկավարժական ինստիտուտի դասախոսների (4), նաև մեկ ֆրանսիացի գործընկերոջ դիտական հոդվածներ, հրապարակումներ և հաղորդումներ, որոնք գերազանցապես վերաբերում են Շիրակին և արծարծում են նրա հարուստ պատմության, հնագիտության, վիմագրության, մարդաբանության, բանահյուսության, ազգագրության, երաժշտական ու ճարտարապետական մշակույթի, էթնո-սոցիոլոգիական և այլ հիմնախնդիրներ: Հրապարակվել են հայերենագիտական, հուշագրական բնույթի, ինչպես նաև Մեծն Կոմիտասի ծննդյան 130-ամյակին նվիրված հոդվածներ և հաղորդումներ: Ժողովածուի 2-րդ հատորն ավարտվում է հրապարակված ողջ նյութի համառոտ անգլերեն ամփոփումով:

Հատորն իր ինքնատիպ կառուցվածքով և բովանդակությամբ կարևոր ներդրում կհանդիսանա շիրակագիտության բնագավառում, Շիրակը (և ոչ միայն) ուսումնասիրող հայագետները նրանում իրենց համար օգտակար ոչ քիչ նորություններ կըգտնեն: Հատորի հրատարակությունը կենտրոնն իրականացրել է իր աշխատակիցների նվիրատվություններով, մասամբ նաև՝ Արևելյան Եվրոպայի Կաթողիկե Հայոց առաջնորդ, Սբ. Ղազարի Հայկական Ակադեմիայի անդամ, Գերաշնորհ Հ. Ներսես արքեպիսկոպոս Տեր-Ներսեսյանի հովանավորությամբ:

2000թ. փետրվարի 14-ին ՇՀՀ Կենտրոնը և Երևանի պետ. կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղը համատեղ կազմակերպել էին Տեառնընդառաջի խորհրդանշական հանդիսություն: Ընթացքում ներկայացված որոշ սովորույթներ, արարողություններ արտացոլում էին ծեսի հետ կապված ժողովրդական պատկերացումները: Հանգիսության ժամանակ հնչած բանահյուսական կատարումներն ունեին ընդգծված ծիսական խորհուրդ: Կատարվեց նաև ծիսական խարույկի արարողություն՝ ավանդական երգ-երաժշտության ուղեկցությամբ: Հանդիսությանը մասնակցեցին բազմաթիվ հյուրեր, ուսանողներ, որոնք նաև կատարվածի գործուն մասնակիցներն էին;

2000 թ. մարտի 17-ին ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի նախաձեռնությամբ Գյումրիում կազմակերպվեց գիտական սեմինար, որտեղ «Մշակույթ և քաղաքակրթություն հասկացությունները արդի գիտության մեջ» զեկուցումով հանդես եկավ պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի դիտաշխատող, «Ոստան» էթնոմշակութաբանական հետազոտությունների կենտրոնի նախագահ Յու.Մկրտումյանը: Սեմինարը մեծ հետաքրքրություն էր առաջացրել Գյումրու գիտական հասարակության և ուսանողության շրջանում: Գիտական սեմինարի աշխատանքներին իրենց մասնակցությունը բերեցին նաև ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն պ.գ.դ. Ա. Քալանթարյանը, ԵՊՀ ազգագրության ամբիոնի վարիչ, պ.գ.թ. Հ.Խառատյանը, ազգաբաններ, պատմագիտության թեկնածուներ Կ.Մեղրոյանը, Ա.Թադևոսյանը և այլոք:

Ընտրված թեման չափազանց արդիական է հումանիտար գիտություններով և հատկապես պատմագիտությամբ զբաղվողների համար: Բանախոսը մշակութաբանության բնագավառում հայտնի հետազոտողներից է և քաջատեղյակ է քաղաքակրթական ու մշակութաբանական ժամանակակից տեսական հիմնախնդիրներին: Ներկայացնելով քաղաքակրթության մարքսիստական ֆորմացիոն տեսության համեմատությունը ժամանակակից մոտեցումների հետ, Յու.Մկրտումյանը մասնավորապես նշեց, որ այժմ անհրաժեշտ է գիտական ուսումնասիրություններ կատարելիս և տիպաբանական մոդելները մշակելիս հենվել քաղաքակրթական մոտեցումների վրա: Քաղաքակիթական մոդելի հիմքը մարդն է, որը կերտում է այն ի տարբերություն ֆորմացիաների, որտեղ գլխավորը նյութական զարգացման փուլերի հաջորդականությունն է:

Մրոի գիտությունը քաղաքակրթության ներսում առանձնացնում է հետևյալ շերտերը.
1. Մարդն ինտանիքում, նրա ընդունակությունները, կարողությունները, գիտելիքները, կամքը հատկանիշներ, որ հնարավորություն են տալիս ռոոծել և ստեղծագործել.
2. Արտադրության տեխնոլոգիական եղանակները, տեխնիկական հնարանքները.
3. Արտադրության տնտեսական եղանակը (սեփականության ձևերը, փոխանակում, բաշխում),
4. Սոցիալ-քաղաքական կարգը (սոցիալական հարաբերություններ, էթնիկ հարաբերություններ, քաղաքական և իրավական կապեր),
5. Հասարակական գիտակցություն (հոգևոր աշխարհ, գիտություն, կրթություն, բարոյականություն, գաղափարախոսություն և կրոն, մենթալիտետ),
6. Բնական և էթնոմշակութային միջավայրեր:
Այնուհետև բանախոսը տիպաբանեց քաղաքակրթություններն ու առանձնացրեց դրանց տարբերությունները.
1. Նեոլիթի քաղաքակրթություն-անցում արտադրող տնտեսաձևի,
2. Վաղ ստրկատիրական քաղաքակիթություն,
3. Անտիկ քաղաքակրթություն,
4. Վաղ ֆեոդալական քաղաքակրթություն,
5. Նախաինդուստրիալ քաղաքակրթություն,
6. Ինդուստրիալ քաղաքակրթություն,
7. 1970-ական թ.թ. հետինդուստրիալ քաղաքակրթություն;
Բացի վերը բերված տիպարանական համակարգից գոյություն ունի նաև այլ մոտեցում.
1. Քաղաքակրթության բնական տիպ-յուրացնող տնտեսաձև,
2. Արևելյան քաղաքակրթություն-որոշակի կենսաձև՝ խարիզմատիկ կոլեկտիվիզմ, պետությունն իշխում է հասարակության վրա, մշակութային զարգացումն ընթանում է դանդաղ,
3. Արևմտյան քաղաքակրթություն-արժեքների այն համակարգը, որին բնորոշ է շուկայական տնտեսության զարգացումը, ինդուստրիալ հասարակությունը, մարդու ազատությունն ու ինդիվիդուալիզմը:
Զեկուցումից հետո սկսվեց մտքերի աշխույժ փոխանակություն, որին մասնակցեցին Գյումրու մտավորականության և բուհական ուսանողության ներկայացուցիչներ:

2000թ. ապրիլի 23-ին ՇՀՀ կենտրոնը Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի հետ համատեղ, Արվեստների Ակադեմիայի դահլիճում կազմակերպել էր հանդիսություն, նվիրված Սբ. Զատիկի տոնին: Ներդաշնակ միասնության մեջ ներկայացվեց տոնի ծիսական ընդհանուր պատկերը՝ ժողովրդական հավատալիքներից, մինչև՝ քրիստոնեական սրբազան խորհուրդը: Զատկական ծվերի կոմպոզիցիաներով զարդարված դահլիճում հոգևոր խոսքով հանդես եկավ Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ, ծայրագույն վարդապետ Մ.Աջապահյանը, ապա հաջորդեցին Հարության աղերի և շարականների կատարումներ:
Տոնի ժողովրդական նկարագիրը ներկայացվեց ծիսական պարերով ու երգերով, ուտեստների և այլ հավատալիքների ներդաշնակ միասնականությամբ: Հանդիսությունը եզրափակվեց զատկական խաղերով: Հանդիսության ազգային ճշգրիտ նկարագրի ստեղծմանը աջակցել էր հմուտ ազգագրագետ Ժ.Խաչատրյանը:
Բացի ՇՀՀ կենտրոնի աշխատակիցներից և կոնսերվատորիայի ուսանողներից դահլիճում ներկա էին նաև քաղաքի այլ բուհերի և ուսումնական հաստատությունների սովորողներ, որոնց անմիջական մասնակցությունն ու բուռն արձագանքը համահունչ էր օրվա խորհրդին:
Հանդիսության բուն նպատակը ազգային հնավանդ տոնի կենսունակության հաստատումն էր:

Ապրիլի 28-ին Գյումրին մեծ շուքով նշեց հայ մեծանուն լեզվաբան, Հր. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի տնօրեն, գիտության վաստակավոր գործիչ, «Սբ. Մեսրոպ Մաշտոցի շքանշանի» ասպետ, բ.գ.դ. պրոֆեսոր, ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի ծննդյան 80 և գիտա - մանկավարժական գործունեության 55 ամյակը:

Մեծարանքի հանդիսությանը, որի կազմակերպիչը Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնն էր, մասնակցում էին Գյումրու և Շիրակի մարզի գիտության, մշակույթի, կրթության և այլ բնագավառների բազմաթիվ ներկայացուցիչներ, հոգևոր գործիչներ, անվանի հայագետների մի մեծ խումբ Երևանից՝ Գիտությունների ազգային ակադեմիայի փոխ-պրեզիդենտ Վ.Բարխուդարյանի գլխավորությամբ, Գյումրու բուհերի հարյուրավոր ուսանողներ, մեծաթիվ մտավորականներ:
Հանդիսությունը ներածական խոսքով բացեց ՇՀՀ կենտրոնի տնօրեն Ս.Հայրապետյանը: «Ինչքան էլ ելած է գյումրեցու սիրտը և հոգին՝ վիրավոր,- իր խոսքում նշեց նա,-սակայն դիտության ու մշակույթի նկատմամբ նրա սերն առաջվա նման անպակաս է, նվիրումը՝ անմնացորդ, և այդ սերն է, որ այստեղ է բերել այսքան մարդկանց՝ իրենց երախտիքի խոսքն ասելու մի անձնավորության, որի ողջ կյանքը անմնացորդ նվիրում է հայրենական գիտությանը, իսկ վաստակը այն համընդհանուր սերն ու հարգանքն է, որ արժանիորեն վայելում է այսօր հայագիտության մեծ երախտավորն ու անխոնջ մշակը»: Ապա նա անդրադարձավ այն ծանրակշիռ գիտական ձեռքբերումներին, որ ունի համաշխարհային ճանաչման արժանացած հայ լեզվաբանը ոչ միայն հայերենագիտության, այլև ընդհանուր լեզվաբանական արդի մի շարք հիմնախնդիրների լուծման մեջ: Վերջում բոլոր գյումրեցիների անունից, «իսկ Գյումրիում Ձեզ շատ-շատերն են սիրում, մաղթում եմ քաջառողջություն, որպեսզի Ձեր բարի սիրտը, ուսանելի աշխատասիրությունն ու աստծուց պարգևված տաղանդը նոր արժեքավոր և մնայուն երկասիրություններ պարգևեն մեզ»,—ասաց զեկուցողը:

Այնուհետև ելույթ ունեցան և մեծավաստակ լեզվաբանին ազնիվ գնահատանքի ու ջերմ մաղթանքի խոսքեր հղեցին ՀՀ ԳԱԱ փոխ-պրեզիդենտ Վ. Բարխուդարյանը, Գյումրու Մ.Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ս.Մելքոնյանը, Երևանի պետ. համալսարանի հայոց լեզվի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Լ.Եզեկյանը, ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան պրոֆեսոր Գ. Անանյանը, ՇՀՀ կենտրոնի գիտքարտուղար Հ. Խաչատրյանը, Շիրակի մարզպետարանի մշակույթի վարչության պետ Հ. Կիրակոսյանը, Երևանի կինոյի և թատրոնի ինստիտուտի Գյումրու մասնաճյուղի տնօրեն, թատերագետ Լ. Մութաֆյանը, «Պրոգրես» համալսարանի դասախոս Լ. Գինոսյանը, ԿՍՊ օտար լեզուների ամբիոնի դասախոս, բ. գ.դ. Ա. Հովհաննիսյանը, ԵՊՀ լեզվաբանության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Լ. Հովսեփյանը, «Ան. Շիրակացի» համալսարանի դասախոս Մ.Խաչատրյանը,Մատենադարանից՝ բանասիրության դոկտոր, պրոֆ. Հ. Ամալյանը և ուրիշներ: Ընթերցվեց նաև Արևելյան Եվրոպայի Կաթողիկե Հայոց եկեղեցու առաջնորդ Գերաշնորհ Հ. Ներսես արքեպիսկոպոս Տեր-Ներսեսյանի շնորհավորագիրը, որում վերջինս քաջառողջություն էր մաղթում իր մեծ բարեկամին՝ ընդգծելով «հարգարժան պրոֆեսորի, բազմահմուտ լեզվաբանի հսկա վաստակը գիտության անդաստանում» և ի նշան իր մեծագույն հարգանքի ու անկեղծ խոնարհումի՝ խնդրում էր ընդունել Սբ.Ղազարի Ակադեմիայի հուշամեդալը: Ելույթները ընդմիջվում էին համերգային գողտրիկ կատարումներով:

Հանդիսությունը եզրափակեց հոբելյարի ելույթը՝ համեմված նուրբ հումորով, հոգեպարար անկեղծությամբ, ջերմ զգացողություններով ու ազնիվ ինքնախոստովանանքով: «Ես սիրում եմ Գյումրին, առանձնակի սեր ու գորովանք եմ տածում գյումրեցիների նկատմամբ, այստեղ զգում եմ այն ջերմությունը, որ գրեթե ոչ մի տեղ այդպես չեմ զգում: Շատ եմ ուզում, որ Գյումրիում ծաղկի իսկական գիտությունը , անչափ ուրախ եմ, որ իմ շատ համեստ ներդրումն եմ ունեցել Գյումրիում մեր ակադեմիայի Հայագիտական կենտրոնի ստեղծման մեջ: Երազում եմ Գյումրին տեսնել վերաշինված և առաջվա նման գեղեցիկ, նաև որպես հայրենական գիտության խոշոր կենտրոն: Հեշտ է, երբ խոսում ես ուրիշի 80-ամյակի մասին, բայց երբ ինքդ ես արդեն այդքան, տեսնում ես, որ չափազանց լուրջ հասակ է, և ակամա զգում ես տարիների ծանրությունը: Չնայած ես երբեք չեմ մտածում այդ մասին, ճշմարիտն ասած՝ դրա ժամանակն էլ չունեմ, երբ քայլում եմ փողոցով, երբ աշխատում եմ բոլորովին մոռանում եմ, բայց երբ շքանշան են տալիս, ստիպված եմ լինում վերհիշել: Ի դեպ, գիտության մարդկանցից առաջինն եմ, որ արժանացա «Սբ. Մեսրոպ Մաշտոց» շքանշանին: Այն ինձ անչափ պարտավորեցնում է: Անկեղծորեն հուզված եմ այսպիսի ընդունելության համար, և խոսքս էլ ավելի շատ սրտի խոսք է, քան մտքի, թեև ինչքան ինքս ինձ գիտեմ՝ ավելի մտքի մարդ եմ»: Սիրելի գիտնականի խոսքը բազմիցս ընդհատվում էր դահլիճի ծափերով: «Ամենաիմաստուն մարդը նա է,- վերջում ասաց հոբելյարը,- ով երբեք չի մտածում մահվան մասին ու կյանքն ընդունում է այնպես, ինչպես կա», և անսալով դահլիճի խնդրանքին՝ իր խոսքն ավարտեց պատանեկության տարիներին իր գրած մի քանի գողտրիկ բանաստեղծությունների մատուցմամբ, որից ստորև ներկայացվում է մի կտոր.

Երբ հեռացա ես տնից,
Ճանապարհի մեղմ փոշում
Նայում էրն ինձ հեռվից
Մի պառավ մայր ու մի շուն:
Մայրս լալիս էր կամաց,
Շունը պոչն էր պտտում,
Այնպես ցուրտ էր իմ դիմաց,
Այնպես լուռ էր ու տրտում:
Կդառնա՞մ ես նորից հետ,
Կտեսնե՞մ իմ մորը ծեր,
Թե՞ կննջեմ առհավետ
Աղաչանքին անտարբեր:
Եվ շենի մոտ հեռավոր,
Ճանապարհի մեղմ փոշում
Ինձ կսպասեն առեավետ
Մի պառավ մայր ու մի շուն:

Համոզված ենք՝ հանդիսության մասնակիցները դեռ երկար կհիշեն գյումրիական այդ գարնանային երեկոն՝ լի ամենաջերմ զգացողություններով. վաստակաշատ գիտնականի ու մարդու հետ հաղորդվելու մեծ ու գեղեցիկ խորհուրդով:

2000 թվականը ՇՀՀ կենտրոնի գործունեության մեջ նշանավորվեց նաև մի շարք հետաքրքիր ու բովանդակալից գիտական բանավեճերի և սեմինարների անցկացումով. որոնց մասնակցեցին նաև Գյումրու և մայրաքաղաքի բազմաթիվ հայագետներ ԳԱԱ համակարգի ինստիտուտներից և բարձրագույն ուսումնական հաստատություններից: Դրանք թեմատիկ լայն ընդգրկում ունեին և գերազանցապես շոշափում էին Շիրակի ազգագրության, պատմության, հնագիտության, երաժշտական արվեստի, բանահյուսության ուշագրավ հարցեր:

Առանձնակի հետաքրքրությամբ լսվեցին և քննարկվեցին ԳԱԱ ՀԱԻ ավ. գիտաշխատող , սյ.գ.թ. Ժենյա Խաչատրյանի «Հայ պարային մշակույթը և ծեսը» (մարտ), Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի տնօրեն բ.գ.թ. Սերգեյ Հայրապետյանի «Մեծ եղեռնի պատմական դասերը» (ապրիլ), ՀԱԻ առաջատար գիտաշխատող, «Ռստամ» էթնոմշակութաբանական կենտրոնի նախագահ սյ.գ.թ. Յուրի Մկրտումյանի «Մշակույթ և քաղաքակրթություն հասկացությունները արդի գիտության մեջ» (ապրիլ), ՇՀՀ կենտրոնի ավ. գիտաշխատող պ.գ.թ. Սարգիս Պետրոսյանի «Տեղանվանաբանական տվյալներ Ուրարտուում հայ էթնոսի առկայության մասին» (մայիս), ավ. գիտաշխատող Կարինե Բազեյանի «Տնայնագործության և արհեստների տեսակարար կշիռը Շիրակի հայերի տնտեսական կենցաղում», գիտաշխատող Գրիգոր Աղանյանի «Ալեքսանդրապոլի համքարությունների առանձնահատկությունները» (հունիս), ավ. գիտաշխատող, հ.գ.թ. Կարինե Սահակյանի «Ժողովրդական պատկերացումների էթնո-հոգեբանական դրսևորումները եետաղետյան շրջանի երազներում» (հուլիս), գիտաշխատող Ռոզա Հովհաննիսյանի «Ժողովրդական խաղիկների նորօրյա գրառումներ Շիրակում» (օգոստոս), ավ: գիտաշխատող Համիկ Ափինյանի «Շիրակի ժողովրդական նվագարաններ» (սեպտեմբեր), գիտաշխատող Համիկ Ստեփանյանի «Հայ Առաքելական սուրբ

ենկեղեցու Մեծի Պահոց շրջանի ծիսական երաժշտության բնորոշիչները» (մայիս), «Շիրակի միջնադարյան երաժշտությունը ըստ պատմական աղբյուրների» (սեպտեմբեր), ավ. գիտաշխատող Համազասպ Խաչատրյանի «Բենիամինի անտիկ բնակավայրի առաջին տեղամասի մոնումենտալ կառույցի պորտալը» (հոկտեմբեր), գիտաշխատող Լարիսա Եգանյանի «Բենիամինի անտիկ ռամբարանադաշտի պեղումները» (հոկտեմբեր), գիտաշխատող Արտաշես Բոյաջյանի «Լենինականի սոցիալ-տնտեսական տարածքային նաամակերպումը 1920-60-ական թթ.» (դեկտեմբեր), Արաքս Մարգարյանի «Գեղարվեստական արականությունը որպես ազգագրական սկզբնաղբյուր» (դեկտեմբեր) և այլ գիտական հանգամանալի զեկուցումներն ու հաղորդումները:

2000 թ. նոյեմբերի 13-ին Գյումրու մանկավարժական ինստիտուտում անցկացվեցին Գյումրու քաղաքապետարանի, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի, ԳՄԻ սպորտային մանկավարժության և պատմության ամբիոնների համատեղ նախաձեռնած «Պատմական հիշողություն և ազգային գաղափարախոսություն» թեմայով գիտական ընթերցումները: Պատմական ճշմարտության վերականգնման, պատմության մեջ եղած բացթողումների վերացման անհրաժեշտությունը, հայրենիքին իրենց գործով ու կյանքով անձնուրաց ծառայած մարդկանց արժանին մատուցելու կարևորությունն էին պայմանավորել այս միջոցառման անցկացումը, որը նպատակ էր հետապնդում համեստ մի ներդրում ունենալ ազգային գաղափարախոսության ձևավորման գործում:

Գիտական ընթերցումներին նախորդել էին կազմակերպչական և գիտահավաքչական աշխատանքներ, որոնց նախաձեռնողը դարձավ ԳՄԻ սպորտային մանկավարժության ամրիոնի վարիչ, դոցենտ Ռ.Պապոյանը, որը երկար տարիներ զբաղվում է Գյումրու հետ սերտորեն առնչված մի շարք նշանավոր գործիչների մասին նյութերի հավաքմամբ: «Կումայրի» քաղաքային թերթի 2000թ. թիվ. 23-ում լույս տեսավ Ռ.Պապոյանի «Բաց նամակ Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանին» թղթակցությունը, որտեղ արժևորվում էր նշանավոր հայորդիներ Պաղվալի Վաղոյի (Վաղարշակ Մինասյան), Նիկոլայ Ղորղանովի, Հովհաննես Մազմանովի և Վահան Չերազի գործունեությունը՝ առաջարկվում հավերժացնել նրանց հիշատակը: Ռ.Պապոյանի հոդվածին արձագանքեցին նաև ծագումով գյումրեցի մի շարք նշանավոր մտավորականներ (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա.Համբարձումյանը, պրոֆեսորներ՝ Ֆ.Ղազարյանը, Է.Սահակյանը, Է.Էլբակյանը, և այլոք) և ԳՄԻ պատմության ամբիոնը: Քաղաքապետարանին կից ստեղծվեց «Հիշողություն» պատմամշակութային հանձնաժողով, որի անդամները ՀՀ թանգարաններում և արխիվներում գիտական պրպտումներ կատարեցին: Մասնագիտական օժանդակության խնդրանքով հանձնաժողովը դիմեց ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտին, ԵՊՀ համապատասխան ֆակուլտետներին, Հայաստանի ազգագրության պետական թանգարանին: Գյումրու քաղաքապետի հրամանով պատրաստվեցին հուշատախտակներ և գիտական ընթերցումների բացման օրը ամրացվեցին այն տների պատերին, որտեղ ապրել էին ազգային նշանավոր այս գործիչները:

Գիտական ընթերցումներում ողջույնի խոսքով հանդես եկան Գյումրու քաղաքապետ Վ.Ղուկասյանը և ԳՄԻ ռեկտոր պրոֆեսոր Հ.Հարությունյանը, որոնք կարևորեցին միջոցառման գիտական և հասարակական հնչեղությունը շեշտելով ազգային գաղափարախոսության ձևավորման գործում նմանատիպ միջոցառումների անհրաժեշտությունը: ԿՍՐ պատմության ամբիոնի վարիչ դոցենտ Ե. Վարդանյանն իր բացման խոսքում մասնավորապես նշեց, որ. «Արդի հայկական պետականության կայացումը տեղի է ունենում հասարակական-քաղաքական արժեքների և գաղափարների գերբարդ վերարժեքավորման պայմաններում: Խախտվել, է սերունդների պատմական հաջորդականությունը, կորսվում են ազգային ճշմարիտ արժեքները և տեղի է ունենում մեր ազգային հոգեկերտվածքին անհարիր ապակողմնորոշում, որն առաջին հերթին բացասաբար է անդրադառնում աճող սերնդի դաստիարակության վրա»:

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Հ.Ավետիսյանը «Ն.Ղորղանյանի ռազմաքաղաքական գործունեությունը» զեկուցման սկզբում բարձր գնահատեց «Հիշողություն» պատմամշակութային հանձնաժողովի նախաձեռնությունը, հատկապես ընդգծելով թեմայի ճիշտ ու ժամանակին ընտրությունը.« ...Մեր գյումրեցի գործընկերները ճիշտ են դրել հարցը, որովհետև առանց պատմական հիշողության չի կարող լինել ազգային գաղափարախոսություն, և այդ միասնությանը պետք է լինի, որպեսզի կարողանանք հասկանալ, թե որտեղից և ինչու ենք եկել, ուր և ինչու՞ ենք գնում»: Այնուհետև, անվանի պատմաբանը հանգամանալիորեն ներկայացրեց Ղորղանյանների ազգատոհմի պատմությունը, որն սկսվում է դեռևս XVIII դարի կեսերից, խոսեց ռուսական բանակում նրանց գրաված բարձր դիրքի, քաջության և ազգանվեր գործունեության մասին:

«Հայոց ազգային բանակը 1918-1920 թ.թ.» զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտաշխատող պ.գ.թ. Մ.Կարապետյանը, որն ընդհանուր գծերով բնութագրեց հայոց ազգային բանակի կայացումն ու հրամանատարական կազմի ձևավորումը, նշելով, որ «...մոտավոր հաշվարկներով, ՀՀ բանակում 1918-1920թթ. ծառայել են 20-ից ավելի գեներալներ, 60-ից ավելի գնդապետներ, 2000 սպաներ: Դրանք բոլորն էլ ռուսական զինվորական ուսումնարաններ, ակադեմիաներ ավարտած կադրեր էին և ունեին մարտական հարուստ փորձ»:

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի փոխտնօրեն, պ.գ.թ. Ա.Մելքոնյանն իր ելույթում անդրադարձավ հայոց ազգային խորհրդանիշերի, բանակի և պետականության պաշտամունքի խնդիրներին՝ հատկապես պատմական հիշողության և ազգային գաղափարախոսության տեսանկյուններից:

«Սկաուտապետ Վ.Չերազի որբախնամ գործունեությունը Ալեքսանդրապոլում» հաղորդմամբ հանդես եկավ ԳՄԻ սպորտային մանկավարժության ամբիոնի վարիչ, դոցենտ Ռ.Պապոյանը, որը ներկայացրեց հայ սկաուտական շարժման հիմնադիր Վ.Չերազի արգասաբեր աշխատանքը քաղաքի որբանոցներում: Հատկապես շեշտվեց նրա կողմից մանկավարժական և մարմնակրթական դաստիարակության առաջադեմ մեթոդների և

սկաուտական «բարձացիր-բարձրացրու» կարգախոսի արդյունավետ կիրառությունը:

Բանասիրության դոկտոր Հ.Հակոբջանյանը «Պաղվալի Վաղոն հայ ազատագրական շարժման գործիչ» թեմայով զեկուցման մեջ անդրադարձավ Վաղարշակ Մինասյանի սխրանքին և կարճատև կյանքի դրվագներին՝ մեջբերելով հատվածներ իր հեղինակած վեպից:

ԳՄԻ պատմության ամբիոնի դասախոս Ա.Նիկողոսյանը «Ալեքպոլը և հայ ազատագրական շարժումը XX դարի սկզբին» զեկուցման մեջ կանգ առավ հիշյալ ժամանակաշրջանում Ալեքսանդրապոլում ծևավորված ազատագրական և թեոտաֆիական խմբակների փոխգործունեության և դրանցում մեծ ավանդ ունեցող գործիչներ Գարեգին Խաժակի, Գեորգի Գյուրջիևի և այլոց ազգանվեր գործունեության վրա:

ԳՄԻ պատմության ամբիոնի դասախոս, ՇՀՀԿ գիտաշխատող Գ.Աղանյանն անդրադարձավ հայ նշանավոր զորասյետեր Դանիել և Պողոս Բեկ-Փիրումյանների կյանքի ալեքպոլյան շրջանի մանրամասներին և նորահայտ փաստերին:

Բանահավաք-ազգագրագետ, վաստակավոր ուսուցիչ Հ. Իկիլիկյանը ներկայացրեց տարիների ընթացքում իր կողմից հավաքված արժեքավոր նյութերը գնդապետ Հ. Սազմանովի կյանքի և ռազմական գործունեության վերաբերյալ:

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Հ.Ավետիսյանն առաջարկեց «Հիշողություն» պատմամշակութային հանձնաժողովին շարունակել նման գիտական ընթերցումների կազմակերպումը՝ դարձնելով դրանք ավանդական:

—◊—

2000թ նոյեմբերի 17-19-ին Գյումրիում՝ Արվեստների ինստիտուտի հյուրընկալ հարկի տակ գումարվեց «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական չորրորդ գիտաժողովը, որի կազմակերպիչը ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնն էր: Գիտաժողովի կազմակերպումը հովանավորել էին Շիրակի մարզպետարանը, Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի հոգևոր թեմի և Արևելյան Եվրոպայի Կաթողիկե Հայոց եկեղեցու առաջնորդարանները, մասնավոր ձեռնարկություններ և անհատ անձինք:

Արդեն ավանդական դարձած, երկու տարին մեկ գումարվող և հայագետների լայն շրջանում պատշաճ հեղինակություն ու բարի համբավ ունեցող այս մեծամասշտաբ հայագիտական ստուգատեսը ծնունդ առավ 1994թ. Շիրակի երկրագիտական թանգարանի երիտասարդ գիտաշխատողների անմիջական ջանքերով: Մասնակցեցին շուրջ 100 գիտնականներ և պատվավոր հյուրեր, իսկ ներկայացված 55 հաղորդումներում ամփոփված էին պատմական գավառին նվիրված հայագիտական նորագույն հետազոտությունների արդյունքները:

1996թ կայացած երկրորդ գիտաժողովն առավել ներկայացուցչական էր. 75 զեկուցումներով գիտական գնահատանքի արժանացան 1994-1996 թ. ընթացքում Շիրակի հին ու նոր պատմության, հնագիտության, ճարտարապետության ու արվեստների և հայագիտության այլ ոլորտներում Հայաստանում կատարված ուսումնասիրությունները: Բացահայտելով մարզում հայագիտական հետազոտությունների արդի մակարդակը, տեղի գիտական ներուժի իրական հնարավորությունները՝ այս գիտաժողովները նաև նպաստեցին 1997թ. աշնանը Գյումրիում ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի տեղծմանը, որն էլ ստանձնեց հաջորդ գիտաժողովների կազմակերպման պատասխանատվությունը:

ՇՊՄԺ հանրապետական երրորդ գիտաժողովը գումարվեց 1998թ. և ի մի բերեց հետաղետյան տասնամյակի ընթացքում Շիրակի հոգևոր և նյութական մշակույթի մասունքների ուսումնասիրությունների արդյունքները: Այն խիստ ներկայացուցչական էր (60-ից ավելի գիտական զեկուցումներ և բազմաթիվ հյուրեր) և ակնառու երևույթ ոչ միայն Գյումրու գիտական ու մշակութային կյանքում:

Չորրորդ հանրապետական գիտաժողովը (2000թ նոյեմբեր) կոչված էր հանրագումարելու Շիրակին վերաբերող՝ վերջին տարիների հայագիտական ձեռքբերումները մեր երկրում, ինչպես նաև հստակեցնելու նման հետազոտությունների հիմնական ուղղությունները 21-րդ դարաշեմին և նպաստելու գիտահետազոտական համալիր ծրագրի մշակմանը:

Կազմհանձնաժողովին, հաջողվեց լավագույնս նախապատրաստվել այդ կարևոր գիտական ստուգատեսին, մշակել և գիտաժողովի օրերին իրագործել ոչ սրայս գիտական, այլև ճանաչողական-մասսայական հետաքրքիր միջոցառումներ, լուծել մասնակիցների և հյուրերի սննդի և հանգստի բոլոր խնդիրները, ինչպես նաև նախապես հրատարակել գիտաժողովին ներկայացված աշխատանքների համահավաք ժողովածուն, ուր տեղ են գտել ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի, Հնագիտության և ազգագրության, Պատմության, Արվեստի, Արևելագիտության ինստի-տուտների, Երևանի պետական և ճարտարա-պետաշինարարական, Գյումրու «Պրոգրես» համալսարանների, Երևանի կինոյի և թատրոնի ինստիտուտի Գյումիրու մասնաճյուղի, Գյումրու մանկավարժական ինստիտուտի, Հայկական հուշարձանների համտիավաքի խմբագրության, Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի, Գյումրու «Կումայրի» տրդելոց-թանգարանի, Շիրակի երկիրագիտական թանգարանի գիտաշխատողների ավելի քան 50 զեկու-ցումների ամփոփ հիմնադրույթները:

ՇՊՄԺ հանրապետական չորրորդ գիտաժողովն բացեցին համանախագահներ՝ Շիրակի մարզպետ Ֆ.Փիրումյանը և Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի հոգևոր թեմի առաջնորդական տեղապահ, ծայրագույն վարդապետ Մ.Աջապահյանը, մասնակիցներին ողջունեցին և արգասավոր աշխատանք մաղթեցին ՀԱԻ տնօրեն, պատմագիտության դոկտոր Ա.Քալանթարյանը, ՇՀՀ կենտրոնի գիտքարտուղար Հ.Խաչատրյանը և ուրիշներ: Ասյա գիտաժողովը երեք օր աշխատեց մի քանի մասնաճյուղերով՝ զեկուցումների ունկնդրումն ու բուռն քննարկումները ընդմիջելով նաև մարզի տարածքում պատմական, հնագիտական, ազգագրական հուշարձանների (Մարմաշենի վանական համալիր, Բենիամինի անտիկ դամբարանադաշտ և այլն) այցելություններով:

եսեռեցու Մեծի Պահոց շրջանի ծիսական երաժշտության բնորոշիչները» (մայիս), «Շիրակի միջնադարյան երաժշտությունը ըստ պատմական աղբյուրների» (սեպտեմբեր), ավ. գիտաշխատող Համազասպ Խաչատրյանի «Բենիամինի անտիկ բնակավայրի առաջին տեղամասի մոնումենտալ կառույցի պորտալը» (հոկտեմբեր), գիտաշխատող Լարիսա Եգանյանի «Բենիամինի անտիկ դամբարանադաշտի պեղումները» (հոկտեմբեր), գիտաշխատող Արտաշես Բոյաջյանի «Լենինականի սոցիալ-տնտեսական տարածքային կազմակերպումը 1920-60-ական թթ.» (դեկտեմբեր), Արաքս Մարգարյանի «Գեղարվեստական գրականությունը որպես ազգագրական սկզբնաղբյուր» (դեկտեմբեր) և այլ գիտական հանգամանալի զեկուցումներն ու հաղորդումները:

2000 թ. նոյեմբերի 13-ին Գյումրու մանկավարժական ինստիտուտում անցկացվեցին Գյումրու քաղաքապետարանի, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի, ԳՄԻ սպորտային մանկավարժության և պատմության ամբիոնների համատեղ նախաձեռնած «Պատմական հիշողություն և ազգային գաղափարախոսություն» թեմայով գիտական ընթերցումները: Պատմական ճշմարտության վերականգնման, պատմության մեջ եղած բացթողումների վերացման անհրաժեշտությունը, հայրենիքին իրենց գործով ու կյանքով անձնուրաց ծառայած մարդկանց արժանին մատուցելու կարևորությունն էին պայմանավորել այս միջոցառման անցկացումը, որը նպատակ էր հետապնդում համեստ մի ներդրում ունենալ ազգային գաղափարախոսության ձևավորման գործում:

Գիտական ընթերցումներին նախորդել էին կազմակերպական և գիտահավաքչական աշխատանքներ, որոնց նախաձեռնողը դարձավ ԳՄԻ սպորտային մանկավարժության ամբիոնի վարիչ, դոցենտ Ռ.Պապոյանը, որը երկար տարիներ զբաղվում է Գյումրու հետ սերտորեն առնչված մի շարք նշանավոր գործիչների մասին նյութերի հավաքմամբ: «Կումայրի» քաղաքային թերթի 2000թ. թիվ 23-ում լույս տեսավ Ռ.Պապոյանի «Բաց նամակ Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանին» թղթակցությունը, որտեղ արժևորվում էր նշանավոր հայորդիներ Պաղվալի Վաղոյի (Վաղարշակ Մինասյան), Նիկոլայ Ղորղանովի, Հովհաննես Մազմանովի և Վահան Չերազի գործունեությունը՝ առաջարկվում հավերժացնել նրանց հիշատակը: Ռ.Պապոյանի հոդվածին արձագանքեցին նաև ծագումով գյումրեցի մի շարք նշանավոր մտավորականներ (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս.Համբարձումյանը, պրոֆեսորներ՝ Ֆ.Ղազարյանը, Է.Սահակյանը, Է.Էլբակյանը, և այլոք) և ԳՄԻ պատմության ամբիոնը: Քաղաքապետարանին կից ստեղծվեց «Հիշողություն» պատմամշակութային հանձնաժողով, որի անդամները ՀՀ թանգարաններում և արխիվներում գիտական պրպտումներ կատարեցին: Մասնագիտական օժանդակության խնդրանքով հանձնաժողովը դիմեց ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտին, ԵՊՀ համապատասխան ֆակուլտետներին, Հայաստանի ազգագրության պետական թանգարանին: Գյումրու քաղաքապետի հրամանով պատրաստվեցին հուշատախտակներ և գիտական ընթերցումների բացման օրը ամրացվեցին այն տների պատերին, որտեղ ապրել էին ազգային նշանավոր այս գործիչները:

Գիտական ընթերցումներում ողջույնի խոսքով հանդես եկան Գյումրու քաղաքապետ Վ.Ղուկասյանը և ԳՄԻ ռեկտոր պրոֆեսոր Հ.Հարությունյանը, որոնք կարևորեցին միջոցառման գիտական և հասարակական հնչեղությունը՝ շեշտելով ազգային գաղափարախոսության ձևավորման գործում նմանատիպ միջոցառումների անհրաժեշտությունը: ԳՄԻ պատմության ամբիոնի վարիչ դոցենտ Ե. Վարդանյանն իր բացման խոսքում մասնավորապես նշեց, որ. «Արդի հայկական պետականության կայացումը տեղի է ունենում հասարակական-քաղաքական արժեքների և գաղափարների գերբարդ վերարժեքավորման պայմաններում: Խախտվել է սերունդների պատմական հաջորդականությունը, կորսվում են ազգային ճշմարիտ արժեքները և տեղի է ունենում մեր ազգային հոգեկերտվածքին անհարիր ապակողմնորոշում, որն առաջին հերթին բացասաբար է անդրադառնում աճող սերնդի դաստիարակության վրա»:

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Հ.Ավետիսյանը «Ն.Ղորղանյանի ռազմաքաղաքական գործունեությունը» զեկուցման սկզբում բարձր գնահատեց «Հիշողություն» պատմամշակութային հանձնաժողովի նախաձեռնությունը, հատկապես ընդգծելով թեմայի ճիշտ ու ժամանակին ընտրությունը.« ...Մեր գյումրեցի գործընկերները ճիշտ են դրել հարցը, որովհետև առանց պատմական հիշողության չի կարող լինել ազգային գաղափարախոսություն, և այդ միասնությանը պետք է լինի, որպեսզի կարողանանք հասկանալ, թե որտեղից և ինչու ենք եկել, ուր և ինչու՞ ենք գնում»: Այնուհետև, անվանի պատմաբանը հանգամանալիորեն ներկայացրեց Ղորղանյանների ազգատոհմի պատմությունը, որն սկսվում է դեռևս XVIII դարի կեսերից, խոսեց ռուսական բանակում նրանց գրաված բարձր դիրքի, քաջության և ազգանվեր գործունեության մասին:

«Հայոց ազգային բանակը 1918-1920 թ.թ.» զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտաշխատող պ.գ.թ. Մ.Կարապետյանը, որն ընդհանուր գծերով բնութագրեց հայոց ազգային բանակի կայացումն ու հրամանատարական կազմի ձևավորումը, նշելով, որ «...մոտավոր հաշվարկներով, ՀՀ բանակում 1918-1920թթ. ծառայել են 20-ից ավելի գեներալներ, 60-ից ավելի գնդապետներ, 2000 սպաներ: Դրանք բոլորն էլ ռուսական զինվորական ուսումնարաններ, ակադեմիաներ ավարտած կադրեր էին և ունեին մարտական հարուստ փորձ»:

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի փոխտնօրեն, պ.գ.թ. Ա.Մելքոնյանն իր ելույթում անդրադարձավ հայոց ազգային խորհրդանիշերի, բանակի և պետականության պաշտամունքի խնդիրներին՝ հատկապես պատմական հիշողության և ազգային գաղափարախոսության տեսանկյուններից:

«Սկաուտապետ Վ.Չերազի որբախնամ գործունեությունը Ալեքսանդրապոլում» հաղորդմամբ հանդես եկավ ԳՄԻ սպորտային մանկավարժության ամբիոնի վարիչ, դոցենտ Ռ.Պապոյանը, որը ներկայացրեց հայ սկաուտական շարժման հիմնադիր Վ.Չերազի արգասաբեր աշխատանքը քաղաքի որբանոցներում: Հատկապես շեշտվեց նրա կողմից մանկավարժական և մարմնակրթական դաստիարակության առաջադեմ մեթոդների և

սկաուտական «բարձացիր-բարձրացրու» կարգախոսի արդյունավետ կիրառությունը:

Բանասիրության դոկտոր Հ.Հակոբջանյանը «Պաղվալի Վաղոն հայ ազատագրական շարժման գործիչ» թեմայով զեկուցման մեջ անդրադարձավ Վաղարշակ Մինասյանի սխրանքին և կարճատև կյանքի դրվագներին՝ մեջբերելով հատվածներ իր հեղինակած վեպից:

ԳՄԻ պատմության ամբիոնի դասախոս Ա.Նիկողոսյանը «Ալեքպոլը և հայ ազատագրական շարժումը XX դարի սկզբին» զեկուցման մեջ. կանգ առավ հիշյալ ժամանակաշրջանում Ալեքսանդրապոլում ձևավորված ազատագրական և թեոսոֆիական խմբակների փոխգործունեության և դրանցում մեծ ավանդ ունեցող գործիչներ Գարեգին Խաժակի, Գեորգի Գյուրջիևի և այլոց ազգանվեր գործունեության վրա:

ԳՄԻ պատմության ամբիոնի դասախոս, ՇՀՀԿ գիտաշխատող Գ.Ադանյանն անդրադարձավ հայ նշանավոր զորապետներ Դանիել և Պողոս Բեկ-Փիրումյանների կյանքի ալեքպոլյան շրջանի մանրամասներին և նորահայտ փաստերին:

Բանահավաք-ազգագրագետ, վաստակավոր ուսուցիչ Հ. Իկիլիկյանը ներկայացրեց տարիների ընթացքում իր կողմից հավաքված արժեքավոր նյութերը գնդապետ Հ. Մազմանովի կյանքի և ռազմական գործունեությունն վերաբերյալ:

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Հ.Ավետիսյանն առաջարկեց «Հիշողություն» պատմամշակութային հանձնաժողովին շարունակել նման գիտական ընթերցումների կազմակերպումը՝ դարձնելով դրանք ավանդական:

2000թ նոյեմբերի 17-19-ին Գյումրիում՝ Արվեստների ինստիտուտի հյուրընկալ հարկի տակ գումարվեց «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական չորրորդ գիտաժողովը, որի կազմակերպիչը ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնն էր:

Գիտաժողովի կազմակերպումը հովանավորել էին Շիրակի մարզպետարանը, Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի հոգևոր թեմի և Արևելյան Եվրոպայի Կաթողիկե Հայոց եկեղեցու առաջնորդարանները, մասնավոր ձեռնարկություններ և անհատ անձինք:

Արդեն ավանդական դարձած, երկու տարին մեկ գումարվող և հայագետների լայն շրջանում պատշաճ հեղինակություն ու բարի համբավ ունեցող այս մեծամասշտաբ հայագիտական ստուգատեսը ծնունդ առավ 1994թ. Շիրակի երկրագիտական թանգարանի երիտասարդ գիտաշխատողների անմիջական ջանքերով: Մասնակցեցին շուրջ 100 գիտնականներ և պատվավոր հյուրեր, իսկ ներկայացված 55 հաղորդումներում ամփոփված էրն պատմական գավառին նվիրված հայագիտական նորագույն հետազոտությունների արդյունքները:

1996թ կայացած երկիորդ գիտաժողովն առավել ներկայացուցչական էր. 75 զեկուցումներով գիտական գնահատանքի արժանացան 1994-1996 թ. ընթացքում Շիրակի հին ու նոր պատմության, հնագիտության, ճարտարապետության ու արվեստների և հայագիտության այլ ոլորտներում Հայաստանում կատարված ուսումնասիրությունները: Բացահայտելով մարզում հայագիտական հետազոտությունների արդի մակարդակը, տեղի գիտական ներուժի իրական հնարավորությունները՝ այս գիտաժողովները նաև նպաստեցին 1997թ. աշնանը Գյումրիում ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ստեղծմանը, որն էլ ստանձնեց հաջորդ գիտաժողովների կազմակերպման պատասխանատվությունը:

ՇՊՄԺ հանրապետական երրորդ գիտաժողովը գումարվեց 1998թ. և ի մի բերեց հետաղետյան տասնամյակի ընթացքում Շիրակի հոգևոր և նյութական մշակույթի մասունքների ուսումնասիրությունների արդյունքները: Այն խիստ ներկայացուցչական էր (60-ից ավելի գիտական զեկուցումներ և բազմաթիվ հյուրեր) և ակնառու երևույթ ոչ միայն Գյումրու գիտական ու մշակութային կյանքում:

Չորրորդ հանրապետական գիտաժողովը (2000թ նոյեմբեր) կոչված էր հանրագումարելու Շիրակին վերաբերող՝ վերջին տարիների հայագիտական ձեռքբերումները մեր երկրում, ինչպես նաև հստակեցնելու նման հետազոտությունների հիմնական ուղղությունները 21-րդ դարաշեմին և նպաստելու գիտահետազոտական համալիր ծրագրի մշակմանը:

Կազմհանձնաժողովին, եաջողվեց լավագույնս նախապատրաստվել այդ կարևոր գիտական ստուգատեսին, մշակել և գիտաժողովի օրերին իրագործել ոչ միայն գիտական, այլև ճանաչողական-մասսայական հետաքրքիր միջոցառումներ, լուծել մասնակիցների և հյուրերի սննդի և հանգստի բոլոր խնդիրները, ինչպես նաև նախապես հրատարակել գիտաժողովին ներ-կայացված աշխատանքների համահավաք ժողովածուն, ուր տեղ են գտել ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի, Հնագիտության և ազգագրության, Պատմության, Արվեստի, Արևելագիտության ինստի-տուտների, Երևանի պետական և ճարտարա-պետաշինարարական, Գյումրու «Պրոգրես» համալսարանների, Երևանի կինոյի և թատրոնի ինստիտուտի Գյումրու մասնաճյուղի, Գյումրու մանկավարժական ինստիտուտի, Հայկական հուշարձանների համահավաքի խմբագրության, ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի, Գյումրու «Կումայրի» արգելոց-թանգարանի, Շիրակի երկիագիտական թանգարանի գիտաշխատողների ավելի քան 50 զեկու-ցումների ամփոփ եիմնադրույթները:

ՇՊՄԺ հանրապետական չորրորդ գիտաժողովն բացեցին համանախագահներ՝ Շիրակի մարզպետ Ֆ.Փիրումյանը և Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի հոգևոր թեմի առաջնորդական տեղապահ, ծայրագույն վարդապետ Մ.Աջապահյանը, մասնակիցներին ողջունեցին և արգասավոր աշխատանք մաղթեցին ՀԱԻ տնօրեն, պատմագիտության դոկտոր Ա.Քալանթարյանը, ՇՀՀ կենտրոնի գիտքարտուղար Հ.Խաչատրյանը և ուրիշներ: Ապա գիտաժողովը երեք օր աշխատեց մի քանի մասնաճյուղերով՝ զեկուցումների ունկնդրումն ու բուռն քննարկումները ընդմիջելով նաև մարզի տարածքում պատմական, հնագիտական, ազգագրական հուշարձանների (Մարմաշենի վանական համալիր, Բենիամինի անտիկ դամբարանադաշտ և այլն) այցելություններով:

Գիտաժողովի շրջանակներում կայացավ նաև նրա մասնակիցների, Գյումրու մտավորականության ու ԶԼՄ-ներկայացուցիչների համատեղ «կլոր սեղան», որտեղ քննարկվեցին քաղաքում մշակույթի պահպանման, գիտության կազմակերպման, երիտասարդության առօրյայի, կյանքի ծանրագույն պայմաններով թելադրված արտագաղթի և այլ հարցեր: Գիտաժողովի հյուրերի և մասնակիցների մի մեծ խումբ հյուրընկալվեց Շիրակի մարզպետի կողմից, որը նրանց իրազեկեց մարզում և հատկապես Գյումրիում վերականգնողական աշխատանքների ընթացքի, գերխնդիրների ու հրատապ լուծում պահանջող բազմաբնույթ հարցերի մասին, ինչպես նաև ի մոտո տեղեկացավ գիտաժողովի արդյունքներին:

Գիտաժողովի վերջին լիագումար նիստում ամփոփվեց մասնաճյուղերի աշխատանքը, իրատեսական գնահատական տրվեց հանրապետությունում շիրակագիտության արգի վիճակին, այս բնագավառում Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, Երկագիտական թանգարանի և մյուս գիտական օջախների աշխատանքի արդյունքներին, ճշգրտվեց գիտաժողովի նիստերում ընթերցված զեկուցումներից այն ամենաարժեքավորների ցանկը, որոնք ծավալուն հոդվածների ձևով տպագրության երաշխավորվեցին ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» ժողովածուի երրորդ հատորում, նաև որոշվեց ՇՊՄԺ հանրապետական հինգերորդ գիտաժողովի անցկացման ժամկետը՝ հոկտեմբեր, 2002թ.:

SUMMARY

H. Msrian. LABOUR TOOLS OF THE LATE BRONZE AND IRON AGE OF NORTH -WEST ARMENIA. These mvcstigations give us the reason to think that at the end of the second century B.C. and at thc beginning of the first century B.C, agriculture, trade and cattle-breedmp werc dcveloped. These branches of cconomy were in close collaboration with each other. Thc developcd trade production led to the specialized manufacture of labour tools .

A great number of labour tools, including sickles, pitchforks, knives, hatchets, hammers, javelins, etc. were dup out of the monumcnts and tombstones belonging to thc Late Bronze and Iron Age in North-West Armenia). In the article, using the rcach material of Armenia, their parallcls in Trans-Caucasus, North Caucasus and Front Asia, regardmg the investigatcd period efforts of typology and classification of the labor tools arc made from the given rcgion of Armenia (Shirak, Kirovakan).

F. Ter-Martirosov. TIPOLOGICAL PILLARED- BUILDINGS ARMENIA IN AKHEMENYAN PERIOD. The architecture of Akhemcnyan state is mainly famous for the palaces in Iran, thc core of which is the quadratic-planned multtipillared halls called apadans. The monuments referring to thc Akhemenyan period m Armenia, Armavir, Erebuni, Drakhbanakert, Oshakan-also have pillared halls, which being built in differcnt m their plans and types.

The study of typographical of the pillared buildmgs in Iran and Armenia give reasons to supposc that the existing quanlity of columens of these buildings and their plase do not dircctly depend on thc size of the hall, moreower, they are to emphasize thc status of the building and its owner.

Apadans that appcared after the foundation of the king and are conneeted with the workship of the king. The study of the pillarcd monuments m the Armenia of Akhemenyan period helps us to undcrstand the character and pcculiarities of the cultural development not only of Armenia but the whole Akhemcnyan Empirc as wcll.

G.Kocharian. ARTASHES I THE RIGHTEOUS: CREATION OF POWERFUL STATEHOOD. This article analyzes the evidencc of the ancient and mcdieval sources concerning activities of the Armenian kmg Artashes I the Righteous. This ruler founded the Artaxiad dynasty of 200 years longevlty. The political environment, exposing motives and aetion purposes of this king went parallcl which was echocd like an imprint in Armenian history and culture. Due to Artashes I Armenia came to independence, the extentional completeness was conducted with urbanistic reorganization and cconomic revival of the country. At the samc time this kmg reconstructed complicated net of communications, as well as brought to standards the national culture. Thanks to this ruler the large political, economic and cultural framework by Tigran the Great had been founded.

H. Khachatrian. THE ARCHITECTURE OF ANCIENT BENIAMIN OF HELLENISTIC PERIOD (part II). At the middle uf the 1st century BC, as a result of fire, the settlcment (habitation, production constructions, the columnar hall) was fully destroyed. After a short break thc life in the scttlement was restored. New rise lasted till thc middle of the 1st century AD. It was cstablishd, on the materials of excavalion, that in the basis of palace and ordinary construction layout laid two various modules, which correspond(meet) to march of columns.

Thc comparison of the building layouts changes, construction techniques and architcctural details of different periods gives the rcpresentation of the principles of the dcvclopment of architecture and building technologies of antique Armenia.

Zh. Khachatrian. THE REFLECTION OF ACHAEMENID TRADITIONS IN HELLENISTIC AND LATE ANCIENT ARMENIA. Achaemenid state, created by Cyrus in the 6-th century B.C, was enlarged and became a waist empire in thc time of Cambes and Darius. Many countries of Ancient East as well as Atmenia were included into that cmpire. During 200 ycars of domination the cultures of peoples became interlaced, which brought to creation of "the united world", the united culturc and art. The article shows the longevity of the traditions in the spiritual and material culture of Armenia, during Hellenistic and ancient periods. That fact did not prevent the penetration of new Hellenistic culture.

L. Yeganian. THE TYPE OF BURIALS OF SHIRAK. The archacological study of ancient Shirak began in 1977 with the excavations of scttlement and necropolis of Shirakavan. During the last 10 year there have been excavated ancient burial grounds of Karmrakar (in 1987 and in 1992), Arapi (in 1989), Vardbagh (in 1989-1990) and Beniamin (from 1989 to 2000). There were excavated about 300 ground and jug burials, and the burials in stone boxes and sarcophagi. The result of the excavated necropolis, dating from the 1 st century B.C to the 4th - 5th centuries A.D, shows that the main types of burials are identical with the types of burials in ancient Armenia. At the same time there are burials dating the 1 st century B.C. to the 1 st century A.D. which are typical only of ancient Shirak. This burials are the ones with ritual sacrifices of dogs and horses, burials in the economic and domestic holes and etc.

S.Petrossian. ABOUT SOCIAL FUNCTIONS OF THREE-CLASS PRINCES PRINCIPLING ANCIENT ARMENIA. In ancient Armenia during the Yervandian rule there existed the principle of 3-class social division. In the depths of this ideology (concept) there lay the mythological prototypes of the 3 deities mentioned in ancient Armenian myth about the dream of Azhdahak, the king of Media.

Only 3 names belonging to the period of the rule of the Yervandian dynasty in ancient Armenia are mentioned in Xenophon's "Kyropaidia". These names are: Prince Tigranes. Prince Sabaris and Embas, the infantry-commander. It follows from Xenophon's description that different social functions were allotted to the leaders of the 3 basic social groups (classes): Tigranes was the leader of the warriors; Sabaris was the head of the priests; Embas was the class of producers (i.e. farmers and cattle-breeders).

A. Sarkissian. THE EXPRESSION OF TREE CULTS IN THE SYSTEM OF ARMENIAN BELIEFS. Since ancient times definite believe have been formed among the Armenians concerning plant world, privately the trees. A tree was worshipped, santified as a symbol of fertility, abundanee, spring awakening, as a symbol of life - which has heen reflected in different rituals and eustoms.

These rituals and customs have passed a long way of devclopement. Throughout centuries they have transformed both in form and meaning under the influence of Christian religion and have been preserved in different variations up to modern days.

Even nowadays, in different historical-ethnographieal regions of Armenia near cross stones, churches and chantries one can come across trees covered with tatters. People light candles, pray and make sacrifices in order to prevent illness, misfortune, hoping for fertility and luek.

S.Petrossian, L.Petrossian. THE THREE PARTS OF KINGDOM KINGS. Three social estates of Indo-European society had their patron gods. In the Timar province of Vaspoorakan there were heathenish gods: Shirak, Zirak, Mirak. Aeeording to the author's view-point, their characters image symbolige three social estate of Indo-European society and have their parallels in the Shirak, Tirak and Palak. So, the prototypc of Shirak was the patron god of producers estate in the "province of Shirak" (the fiture kingdom Ani-Shirak), the prototype of Tirak- of priests estate in the "province of Tirak" (the future Kingdom Tashir-Dzoraget), the prototype of Palak- the soldiers' estate in the "provinec of Palak" (the future kingdom Kars-Vanand).

S. Hairapetian. ON SOME SYNTACTIC FOSSIBILITIES OF ARMENIAN WORD ORDER. The main purpose of this paper is to study Old Armenian subject. Investigation, conducted in reported speech, is confined to logical emphasis of subject, determination of syntaetic environments, position in whicb the subject due to its semantic loading turns into a sentence. All these scntence position are brought into a systemic set and considered as means of "underlining" subject order.

Our next task is therefore to investigate the so-called "weak or neatral" sentence positions, where the subject is logically insignificant.

Is also tested "supplementary transmission" that is so characteristic to Old Armenian (grabar) and otber stylistic-expressive peculiarities of word order

V.Melkonian. THE FORMATION OF INDIVIDUAL AUTHOR'S NEOLOGISMS. Proper compounds and affixation display great activity in the process of formation of individual author's neologisms in the Armenian poetry of the XX [th] century. Some kinds of analytical compound words also play their part in this process.

Roots which can't be used on their own like բին, շաչ, սաստ etc. and abbreviation of some words like չարաբաստ instead of չարաբաստիկ, անհնանողկ instead of անհնանողկալի are more important and play greater part in poetry than in literary language in general.

The role of extralinguistic factor in the process of formation of individual author's neologisms is also mentioned in the article.

A. Melkonian. FROM THE HISTORY OF JAVAKHK. The history of Javakhk bas been one of the least investigated fields of the Armenian historiography.

Javakhk is the eighth *gavar* (region) of the historic province of Gugark of Great Armenia including the territory of the Akhalkalak and Ninotsmindza regions and from ancient times was a part of the first state formations of the Armenian highland.

In 785 B.C. it was mentioned in the form of *Zabakha* in the euneiform inscriptions of King Argishti. Then, during the reign of Ervandakan, Artashesyan and Arsakids Gugark and Javakhk remained in Great Armenia. According to the data of Georgian medieval historian Leonti Mroveli at the beginning of the 4th century Armenian was the language of communication in Javakhk. In the period of strengthening of the Georgian kingdom of the Bagraditds this region together with some otber northern regions of Armenia passed to Georgia and since the second half of the 13th century – to the principality of Samtskhe-Satahago. At the end of the 16th century the Akhalkalak gavar was captured by the Osmans. The Turkish tax-records show that at the first period of the Osman domination

in Javakhk, as well as in its neighbouring gavars, the population was absolutely Christian, including Armenians.

I. Dolgenko. ORTHODOXY AND THB CHURCH EDUCATION IN THE YEREVAN PROVINCE (illustrated on Alexandropol district). In the late XIX - early XX-th century the church schools with Russian training appeared in the region as a result of enlightened activity of the Orthodoxy.

Owing to these schools the representatives of the local nations acquired elementary education, as well as were accessed to Orthodoxy and Orthodox culture.

K.Alexanian. ON THE QUESTION OF THE MAY REVOLT. The main reasons, according to which the May Revolt in 1920 took place in Alexandrapol were as follows: 1.) the contradietion concerning the problem of control methods between the Armenian Government and the governing Daslmaktsutjun Party, which brought into existences of the two-power system in the ruling sphere and weakening of the Dashnaktsutjun party.

2.) the foreign policy led by the Government of the Armenian Republic, not having estimated realistically the changes that hade taken place in the international relations, particularly the strengthening of Soviet Power in Transcaucasia, endangered the physical existence of the inhabitants of Armenia.

G.Aghanian. ARMENIAN ARM-MAKING IN XIX AND THE BEGINNING OF XX CENTURIES (BASED NO KARIN'S AND ACHALTSICHA'S MATERIALS). In the article an attempt is made to classify the XIX-XX centuries Armenian arm-making according to its usage and technique-technological aspects.

As the main material the devolopment of arm-making in Karin and Achaltsicha is taken, where the differences between weapon and arm-cold-steel trades are clearly classified.

K.Bazeian. THE EMBROIDERY OF THE SOVIET ARMENIAN PERIOD. The article represents the embroidery of the Soviet Armenian period.The author tries to show the changes undergone during those years. All the differences found in the technique,ornaments and usage of those embroideries are described as widely as possible.

D.S. Vardumian. SOME PROBLEMS CONCERNING CONTEMPORARY TOPONYMS OF THE REPUBLIC OF ARMENIA. It is generaliy known that the toponyms of Armenia in the course of centuries under the reign of foreign conquest have heen changed into Moslem ones, i.e. hore Persian and Turkish names.

At Soviet times, particularly after publication of the famous poem of H. Shiraz (,The names of our villages, Yerevan, 1942) mass Armenization of toponyms took place, the process of which is being continued nowadays. Meanwhile, there were also unnecessary duplications of toponyms, especially of newly created ones, as well as some other inexactitudes.

The most disappointing fact is, however, the tortured renaming of the second town of RA. It was expected, that the town occasionally named Alexandrapol, afterwards Leninakan, would he changed into genuine Armenian sounding and saturated with Armenian spirit-historical Kumayri. Moreover, the provincial mentality prevailed and hy ,referendum the town was renamed into Gyumri with Turkish sounding and saturated with Turkish spirit. This stigma must he oblitcrated and the ancient name of Kumairy must he restored.

Some inexactitudes having appeared as a result of hurried administrative-territorial division of RA must he corrected. Such phenomenon has already heen a subject of discussion on a high level in the National Assembly.

H.Sarghissian,A.Boyajian. THE EXPERIENCE OF GYUMRI WORKING RESOURCES AND THE PEOPLE'S EMPLOYMENT FROM 1990-2000. The article touches the questions of forming the working resources, formulating the changes of population's structure, the problems of repopulation and the peculiarities of this process and the problem of optimization of the use of repopulation.

Half of the population of Gyumri is unemployed in 2000, only 12,5% of population is envolved in different hranches of economy. Because of emigration the numher of people who are able to work has decreased hy 62.400 people, and the numher of the unemployed has increased hy25.000. The situation is complicated in industry as weli as in the educational sysyem. The indefiniteness of the development of town's industry will call forth the further decreasing of the population hy 1/3 of it. So the establishment of new vacancies and resultative use of the employment is an urgent problem.

R.Hovhannisian, K.Sahakian. ABOUT ARTISTIC EFITAPHS ON GRAVESTONES. Armenian Lithographic rhymed works and epitaphs on gravestones are the striking iliustration of the people's artistic thought and world outlook.

We have examined the specific features of epitaphs, their ideological orientation and the variety of themes.

Modern records generally keep the typical features of traditional ideas. Epitaphs are invented in two ways: in one part the lyric caracter is a person taking his leave of life, in the other one he is an inventor. These are meditations on life and death, sometimes they lay stress on standarsds of morality and social protest.

Artistic epitaphs on gravestones are an original literary inheritance, the value of which is in the enlightenment of the different sides of philosophy and history of the Armenian people.

A.Apinian. THE CRADLE-SONGS GARSE OF SHIRAK'S NATIONAL (SONGART) MUSIC FOLK-ART.Among Armenian folk musical creation cradle-songs differ with the depth of mind and rich melodic exressiveness. In ethnographic different regions they have varrous names "oror nanik, larik, hajrur, nenny and etc".

Classification of cradle-songs has been done by groups with several subgroups on the base of comparative analysis of recorded cradle-songs on Shirak.

N.Eghoian. FOLK LORE MUSIC IN GERARAT VILLAGE. One of the most important questions of the ethnomusicology's great realm and comparative investigation is the examination of musical dictionary of intonation and specific musical slangs. For this reason Armenian Rescarch center of Shirak decided to collect ethnographic works, and record every day songs and instrumental folk-tunes. On the basis of the collection, made in 1997- 1998, we attempted' to show the general ethnomusical picture of this village.

During the March of (1997-98) 38 songs and instrumental folk-tunes werewritten down by N.Yeghoyan, H.Appinyan. The age of informants was from 15-78. The genre of circle is hroad: lyrical songs (1), dancing songs (13), wedding songs (3), vardavar (national custom) songs (1), lullabies (1), ashugh songs (4), self-made songs (1), instrumental folk-tunes (3). In the village bagpipes (executor, Sargsyan Kamsar) the national musieal instrument are kept. Though many songs of different genres were not written down, it's clear that there is a revival and observanee of national traditions.

L.Hakopian. THE CHARACTERISTICS TEEN-AGES IN STRESS SITUATION. In the given article there is analyzed the behaviour of teenagers under conditions of natural disasters, and also of social-economic crisis, pecularities of teenagers' counterraction with respect of stress unfavourable impact.

Looking upon teenagers as a vulnerable group from the social-psychological points of view the autbor presents the changes in imotional state, hehaviour, motivation, system of valuesand social relatioships of the teenagers having suffered from the earthquake and living in natural and social disaster zones.

According to the author the families whicb live under very had social-economic, moral and psychological conditions as a result of well-known factors have considerably lost their strength to overcome contradictions and difficulties with teenagers.

The article is valuable from the point of view of pedagogics as well as psychology.

A.Hairapetian. ERIAKHI-SHIRAK IN URARTU MANUSCRIPTS. Eriakhi (Historic Shirak) is first recorded in a euneiform manuscript (dating haek 785 BC) concerning to Argishti A. and his punitive expedition to Etiur. It also gives us a ground to suppose tbat Eriakhi-Shirak had a status of independent trihal state. Later, for a long period Argishti A. was husy with subjceting the south territories of its proprietorship and only in 774 BC Eriakh was again reoccupied hy him.

Four other manuscripts, dating to us, are striking illustrations of ferocious hattles, horrible punitive operations, great captivity and terrible plundering on this country till the end of 40th of the 8th century A. D.The above mentioned historic events took plase in the reign of Sarduri B.-the follower of Argishti A.

A.Gasparian. ARACKEL DAVRIZHETSI ABOUT THE MUTUAL RELATIONS BETWEEN SHAH AND THE ARMENIAN CATHOLICOSES. Arackel Davrizhetsi's "History" is considcred to be a truthful and memorable source in the sphere of researches in Armenian-Iranian relations. Being the witness of the epoch he has depicted, the patriot historian puts in the pillory those spiritual and workly leaders who voluntarily oheyed Shah Abhes and left the mother land.

A.Nikoghossian. ALEXSANDRAPOL CIRCLE "QUEST FOR TRUTH" AND ARMENIAN LIBERATION MOVEMENT. In the summer of 1903 the horder hetween Russia and Turkey was closed hy the Tzarist Government.The contact between the rehels in Sassoun and the East-Armenian Revolutionary Centre was lost. For the sake of the resumption of the contact two members of the "Quest For Truth", Sarghis Poghossian and George Gurdjieff,got to Moush in June,1904,carrying the instructions of the Revolutionary Centre.

H Stepanyan. "KYOROGLI" THE HAIF-WAY OFERA BY ARMEN TIGRANYAN. In the personal archives (Museum of art and literature) of the famous composer and founder of Armenian opera one can find interesting facts about popular national heroic half-way opera "Kyorogli".The plan of libretto and ahout 20 notesketches tell us ahout a new folk-stiyle in opera.The study these manuscripts give us

discover the reason why the opera has not been finished,because author of libretto, a singer of "The Marin Theatre" in Petersburg, a well-known military man, a poet and a translator Vahan Ter-Arakelyan was arrested in 1937 and soon in 1941 he died in the prison of political prisoners in Ukhta.

E.Matevosian. THE INFLUENCE OF ARMENIAN NATIONAL REALITY ON JU. KARABCHIEVSKY'S WORLD OUTLOOK. The present article discusses the problem of the influence of Armenian national world on Karabchievsky's aesthetical and ideological concepts. Comparing Jewish and Armenian history, the writer finds many similarities. Karabchievsky discovers his own national substance cognizing Armenian mentality and language thinking. As a result, the writer comprehends not only national values, but global problems as well.

L. Vardanian. STEPHAN LISITSIAN'S RESEARCH IN SHIRAK.The researches of the famous Armenian ethnographer and pedagogue St. D. Lisitsian in Shirak were related to different spheres of his many-sided activities. In 1920s and 1930s, while heading the Central Bureau of Regional Studies of Armenia and later the Ethnographic Department of the State Museum of History, the scientist developed an extensive and large-scale organizational and research work in collecting lore and ethnographic materials.

In Leninakan, as well in Javakhk, he collected vast ethnographic data on the mode of life of the Armenians of Karin from the refugees from Basen, Erzrum and other regions of Western Armenia. These materials served as a base for his work ,The Peasant Dwellings of Higher Armenian (1926). Later, in order to collect museum exhibits and write down ethnographic materials among the Karin Armenians originating from Higher Armenia, a two-stage research of Shirak and Javakhk regions was planned, in 1936 and 1937 respectively. However, only the Javakhk part of this project was realized, while the expedition to Leninakan planned for 1937 unfortunately didn't take place for a number of reasons.

By Lisitsian's efforts, collections of church plate of museum value were delivered to the State Museum of History from a number of closed rural churches in Shirak, in particular from Artik and from the monastery of Arich (1934). As a result of energetic activity of Stephan Lisitsian, a Regioanl Museum was organized in Leninakan. The following document from the scientist's archive, which is being published for the first time, gives information about the condition of this museum in 1938.

N.Kilichian. ZEYBEK DANCE: CULTURAL INTEGRATION. In researches of Armenian folk dances, different sources are revealing data about dances, popular in Armenia at the beginning of XX century. One of them is the Zeybek dance. In 1930-s Armenian ethnographer Srbuhi Lisitsyan and Vahram Aristakesyan have recorded Zeybek dance from West Armenian refugees.After the research we completed the general composition of the dance with the music, subject and costume.

Nowadays, that dance is very popular in Greece and Turkey, but has been forgotten in Armenia. This version of Zeybek has existed only in Armenia. So it is one of the unique examples of the Armenian folk culture.

T.Zakarian. SEVERAL ISSUES OF THE GYUMRI INTERFAMILY AND KIN RELATIONS: ON RESULTS OF ETHNOSOCIOLOGICAL SURVEYS IN 1980-90-IES. The ethno sociological surveys, conducted in Gyumri in 1980-900-ies, had an aim to clarify the family structural features, kin and other interrelations of family members. The family structure has significant transformations caused by the earthquake, new political and economic realities.

For the traditional inhabitants of Gyumri in current circumstances the forms of cooperation between close and far relatives have become more necessary.

Բովանդակություն

Հոդվածներ

Հրաչյա ՄՄՐՅԱՆ
Հյուսիս - արևմտյան Հայաստանի ուշ բրոնզի և երկաթի դարաշրջանների մետաղյա
արխատանքային գործիքներ 5
Ն. ՏԵՐ- ՄԱՐՏԻՐՈՍՈՎ
Հայաստանի Աքեմենյան ժամանակաշրջանի սյունազարդ կառույցների տիպաբանությունը(ռուս.)..... 15
Գայանե ՔՈՉԱՐՅԱՆ
Արտաշես Ա Բարին որպես եզոր պետականության կերտող 22
Համազասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Բենիամինի անտիկ դամբարանի հելլենիստական ժամանակաշրջանի
ճարտարապետությունը (մասն II) 28
Ժոռես ԽԱՉԱՏՐՅԱՆ
Աքեմենյան ավանդույթությունների արտացոլումը Հայաստանում հելլենիստական և ուշ անտիկ
շրջաններում (ռուս.) 37
Լարիսա ԵԳԱՆՅԱՆ
Շիրակի անտիկ թաղման ծեսը.. 46
Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ
Հայոց երեք արքայազունների հասարակական ֆունկցիաների մասին.. 57
Ամալյա ՍԱՐԳՍՅԱՆ
Ծառերի պաշտամունքի դրսևորումները հայոց հավատալիքային համակարգում........................ 73
Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ, Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ,
Հովհաննես – Սմբատի թագավորության երեք քաղաքամասերի շուրջ 80
Սերգեյ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Հայերենի շարադասության ոճական հնարավորությունների շուրջ 92
Վարդան ՄԵԼՔՈՆՅԱՆ
Բառային անհատական նորաբանությունների կազմությունը.. 100
Աշոտ ՄԵԼՔՈՆՅԱՆ
Ջավախքի պատմական անցյալից.. 106
Իրինա ԴՈԼԺԵՆԿՈ
Ունդափառությունն ու ելլենիստական կրթությունը Երևանի նահանգում (ռուս.)........................ 115
Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Մաշիսրոն ապառամբության պատմությունից 121
Գրիգոր ԱՂԱՆՅԱՆ
Հայկական զինագործությունը XIX դարում –XX դարի սկզբին 129
Կարինե ԲԱՂԵՅԱՆ
Խորհրդային Հայաստանի տնեղնագործությունը.. 137
Դերենիկ Ս. ՎԱՐԴՈՒՍՅԱՆ
ՀՀ արդի տեղանվանաբանության որոշ խնդիրներ 149
Համլետ ՍԱՐԳՍՅԱՆ, Արտաշես ԲՈՅԱՋՅԱՆ
Գյումրու աշխատանքային ռեսուրսների և բնակչության զբաղվածության
վերլուծման փորձ (1990-2000թթ.).. 155
Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Կարինե ՄԱՀԱԿՅԱՆ
Գերեզմանաքարերի գեղարվեստական մակագրությունների շուրջ.. 161
Հասմիկ ԱՓԻՆՅԱՆ
Օրորոցային երգի ժանրը Շիրակի ժողովրդական երգարվեստում 165
Նվարդ ԵՂՈՅԱՆ
Երաժշտական բանահյուսության արդի վիճակը Ջրառատ գյուղում 176
Լիզա ՀԱԿՈԲՅԱՆ
Դեռահասների բնութագիրը ստրեսային իրավիճակներում (ռուս.) 181

Հրապարակումներ և հաղորդումներ

Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Էրիսփի-Շիրակը ուրարտական արձանագրություններում.. 186
Արշավիր ԳԱՍՊԱՐՅԱՆ
Առաքել Դավրիժեցին Շահ Աբաս I-ի և Հայոց կաթողիկոսների փոխհարաբերությունների մասին...... 189
Արթուր ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Ալեքսանդրապոլի «Ճշմարտություն որոնողների ընկ.» խմբակը և հայ ազատագրական շարժումը 192
Հասմիկ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ա. Տիգրանյանի «Քյոր-Օղլի» անավարտ օպերան 195
Էվելինա ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Հայ ազգային իրականության ազդեցությունը Յու. Կարաքչինսկու աշխարհայեցողության վրա.......... 199
Լիլիա ՎԱՐԴԱՆՅԱՆ
Մանիան Լիսիցյանի ուսումնասիրությունները Շիրակում 204
Նաիրա ԿԻԼԻՉՅԱՆ
Ձկյրեկի սյուրը. մշակութային փոխառնչություններ.. 208
Թամար ՉԱՔԱՐՅԱՆ
Գյումրու ներընտանեկան և ազգակցական փոխհարաբերությունների մի քանի հարցեր 210
Գիտական լրատու 213
Ամփոփում (անգլերեն) 219

Содержание

Статьи

Грачья МСРЯН
Орудия труда эпохи поздней бронзы и железа северо-западной Армении 5
Феликс ТЕР- МАРТИРОСОВ
Типология колонных сооружений Армении Ахеменидского периода (на русском яз.) 15
Гаяне КОЧАРЯН
Арташес I (Благой) создатель мощной государственности 22
Амазасп ХАЧАТРЯН
Архитектура эллинистического периода античного Вениамина (часть II) 28
Жорес ХАЧАТРЯН
Отражение Ахеменидских традиций в эллинистическом и позднеантичном периодах (на русском яз.) 37
Лариса ЕГАНЯН
Формы захоронений античного Ширака 46
Саргис ПЕТОСЯН
Об общественных функциях трех армянских царевичей 57
Амалия САРКИСЯН
Культ деревьев в системе армянских верований 73
Саргис ПЕТРОСЯН, Лусине ПЕТРОСЯН
Вокруг трехчастности царства Йованнэса-Смбата 80
Серго АЙРАПЕТЯН
О стилических возможностях порядка слов армянского языка 92
Вардан МЕЛКОНЯН
Образование индивидуально-авторских неологизмов 100
Ашот МЕЛКОНЯН
Из исторического прошлого Джавахка 106
Ирина ДОЛЖЕНКО
Православие и церковное образование в Эриванской губернии (на русском яз.) 115
Карине АЛЕКСАНЯН
Из истории Майского восстания 121
Григор АГАНЯН
Армянское оружейное дело в XIX-начале XX века 129
Карине БАЗЕЯН
Вышивка Советской Армении 137
Дереник С. ВАРДУМЯН
Некоторые вопросы современной топонимики РА 149
Гамлет САРКИСЯН, Арташес БОЯДЖЯН
Опыт анализа трудовых ресурсов и занятости населения г. Гюмри в 1990-2000гг 155
Роза ОГАННИСЯН, Карине СААКЯН
О художественных надписях надгробных камней 161
Асмик АПИНЯН
Жанр колыбельной песни в народном песнетворчестве Ширакского региона 165
Нвард ЕГОЯН
Музыкальный фольклор наших дней села Джрарат 176
Лиза АКОПЯН
Характеристика подростков в стрессовой ситуации 181

Публикации и сообщения

Армен АЙРАПЕТЯН
Эриахи-Ширак в урартских клинообразных надписях 186
Аршавир ГАСПАРЯН
Аракел Даврижеци о взаимоотношениях шаха Аббаса и армянских католикосов 189
Артур НИКОГОСЯН
Александропольское "Общество искателей истины" и армянского освободительное движение 192
Асмик СТЕПАНЯН
Неоконченная опера "Кер- Оглы" А. Тиграняна 195
Эвелина МАТЕВОСЯН
Воздействие Армянской национальной действительности на мировоззрение Ю.Карабчиевского(на русском яз.) 199
Лилия ВАРДАНЯН
Научные изыскзния Степана Лисициана в Шираке 204
Наира КИЛИКЧЯН
Танец Зейбека: межкультурные связи. 208
Тамара ЗАКАРЯН
Некотые вопросы внутрисемейных и родственных отношений в г. Гюмри 210
Научная информация 213
Резюме (на английском) 219

Contents

Articles

Hratchia MSRIAN
Labor Tools of the Late Bronze and Iron Epoch of North- West Armenia 5
Felix TER- MARTIROSSOV
Tipological pillared -buildings Armenian in Akhemenyan period.(in Russian) 15
Gevorg KOCHARIAN
Artashes I the righteous: creation of powerful statehood 22
Hamazasp KHACATRIAN
The architecture of ancient beniamin of hellenistic period (part II) 28
Zhores KHACATRIAN
The reflection of achaemenid traditions in Hellenistic and late ancient Armenia (in Russian) 37
Larisa YEGANIAN
The type of burials of Shirak 46
Sargis PETROSIAN
About social functions of three princes of ancient Armenia 57
Amalia SARKISIAN
The expression of tree cilt in the system of Armenian beliefs 73
Sargis PETROSIAN, Lusine PETROSIAN
The three parts of kingdom kings 80
Sergei HAIRAPETIAN
On Some Syntactic Possibilites of Armenian Word order 92
Vardan MELKONIAN
Farmation of individual author's neologisms 100
Ashot MELKONIAN
From the history of Javakhk 106
Irina DOLGENKO
Orthodoxy and the church education in the Yerevan province (in Russian) 115
Karine ALECHSANIAN
On the guestion of the May Revolt 121
Grigor AGHANIAN
Armenian arm-making in XIX and the beginning of XX centuries 129
Karine BAZEIAN
The emroidery of the Soviet Armenia period 137
Deronic S. VARDUMIAN
Some problems on contemporary toponoms of the Republic of Armenia 149
Hamlet SARGSIAN, Artashes BOYAJIAN
The experience of Guymri working resources and the people's employment from 1990-2000 155
Roza HOVHANNISIAN, Karine SAHAKIAN
About artistic epitaphs on gravestones 161
Hasmik APINIAN
The cradle-song sgarse of Shirak's national (songart) music folk-art 165
Nvard YEGHOIAN
Folk lore music in Gerarat villige 176
Liza HAKOPIAN
The characteristics teen-ages in stress situation (in Russian) 181

Publications and Reports

Armen HAIRAPETIAN
Eriakhi-Shirak in Urartu manu-scripts 186
Arshavir GASPARIAN
Arackel Davrizhetsi about the mutual relation between shah I and the Armenian catholicoses 189
Artur NIKOGHOSIAN
Alexsandrapol circle "Quest for truth" and Armenian liberation movement 192
Hasmik STEPHANIAN
"Kyorogli" the haif-wayopera by Armen Tigranian 195
Evelina MATEVOSIAN
The influence of Armenian national reality on Ju.Karabechievsky's world outlook (in Russian) 199
Lilia VARDANIAN
Stephan Lisitsian's restatch in Susk 204
Naira KILICHIAN
Zeybek dance:cultural integration 208
Tamara ZAKARIAN
Several issues of the Gyumri interfamily and kin relations: on results of ethno sociological surveies in 1980-90-ies 210
Scientific information 213
Summari (in English) 219